Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Михаил Шолохов

ТИХИЙ ДОН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ ПЕРВЫЙ

Перевод А. Мазманяна

«СОВЕТАКАН ГРОХ»
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАН 1977

Միխայիլ Շոլոխով

ԽԱՂԱՂ ԴՈՆԸ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Թարգմանությունը Գ. Մազմանյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ — 1977

Р 2
Շ 77

Շ $\frac{70302\ (20)}{701\ (01)\ 77}$ 167. 77 «Տ»

Արորներով չի՛ հերկված հիանալի հողը մեր,
Մեր պերճ հողը ձիերի սմբակնե՛րով է հերկված,
Կազակների անհամար գլուխներով է ցանված,
Մեր խաղաղ Դոնը ջահել այրիներով է պճնված.
Մեր մայր Դոնը ծաղկունքով-որբերով է պաճուճված,
Խաղաղ Դոնը հոր ու մոր արցունքներով է լցված:

Օ՛յ, դու, մեր հեր ու մեր, խաղաղ մեր Դոն,
Օ՛յ, դու ինչո՞ւ, խաղաղ Դոն, պղտոր-պղտոր ես հոսում,
Ա՛խ, խաղաղ Դոնն ի՞նչ անի, պղտոր-պղտոր չհոսի,—
Խաղաղ Դոնիս հատակից պաղ աղբյուրներ են բխում,
Խաղաղ Դոնիս, իմ հունը ճերմակ ձուկն է պղտորում:

(Կազակական հինավուրց երգեր):

© «Սովետական գրող» հրատարակչություն,
թարգմանված է հայերեն, 1977.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Մելեխովի տուն ու տեղը խուտորի ծայրին է։ Գոմի դարբասը նայում է հյուսիս, Դոնի կողմը։ Ութ սաժեն գահավեժ մի կածան իջնում է կանաչավուն մամուռով պատած կավճաքարերի արանքով, և ահա ափը. սադաֆե ցաք ու ցրիվ խեցիներ, ափծեծ գլաքարերով պատած գորշ, ծուռումուռ եզերք, ու դենը—Դոնի հողմածուփ, բուռն հոսանքը՝ պղտոր լոհակներով։ Արևելյան կողմում, կալերի ցանկապատերի ետևում, որ հյուսված են կարմիր ուռից, ձգվում է հետմանական ճանապարհը, փռված են սպիտակագորշ օշինդրի, ձիու սմբակներով տրորված, թուխ, կենսալից եզան-լեզվի շերտերը, ճամփաբաժանում՝ մի մատուռ. հեռվում հոսուն մուժով շղարշված տափաստանը։ Հարավից՝ կավճոտ սարալանջ։ Արևմուտքից՝ փողոց, որ կտրում է հրապարակը, գնում դեպի գետառը։

Կազակ Պրակոֆի Մելեխովը վերջին թուրքական պատերազմից վերադարձավ խուտոր։ Թուրքի կողմերից նա իր համար մի կին բերեց, շալով փաթաթված, փոքրիկ մի կին։ Սա ծածկում էր դեմքը՝ հազվադեպ ցույց տալով թախծալի, երկչոտ աչքերը։ Մետաքսե շալից հեռավոր, անծանոթ բույրեր էին զգացվում, նրա երփներանգ նախշերը կանանց նախանձն էին շարժում։ Գերի թրքուհին խուսափում էր Պրակոֆիի հարազատներից, ու ծերունի Մելեխովը շուտով բաժանվեց որդուց։ Ջմոռանալով վիրավորանքը, նա այնուհետև մինչև մահը չէր գնում որդու տուն։

Պրակոֆին շուտով տուն ու տեղ դարձավ. ատաղձագործ-

ները փայտե տուն շինեցին, ինքն էլ անասունների համար տեղ սարքեց ու ցանկապատեց և աշնանամուտին օտարերկրացի կնկանը տարավ իր նոր տնտեսությունը։ Ինքն էլ նրա հետ իր ունեցվածքով սայլի ետևից քայլում էր խուտորի միջով. բոլորն էլ, մեծից մինչև փոքրը, դուրս էին թափվել փողոց։ Կազակները կամացուկ ծիծաղում էին մորուքների տակին, կանայք կչկչում, ձայն-ձայնի էին տալի, անլվա կազակ տղաների հորդան հա՜յ-հույ էր անում Պրակոֆիի ետևից. բայց նա, չեքմենը բաց արած, քայլում էր դանդաղ, ոնց որ վար անելիս լիներ, սև բոի մեջ սեղմում էր կնկա փափլիկ դաստակը, հպարտ էր պահում շեկլիկ, քյաքուլավոր գլուխը. միայն թշերն էին շարժվում և ուռչում, ու մեկ էլ միշտ անշարժ, ասես քարացած հոնքերի միջից դուրս էր տալիս քրտինքը։

Այնուհետև խուտորում նրան հազվադեպ էին տեսնում, խուտորի հրապարակում նա էլ չէր լինում։ Ապրում էր իր խրճիթում, խուտորից մի քիչ դենը, Դոնի մոտ, մլթոնի պես։ Խուտորում նրա մասին զարմանք բաներ էին ասում։ Արոտատեղում հորթեր արածացնող տղերքը պատմում էին, թե իբր տեսել են, որ երեկոներին, երբ աղոտում է վերջալույսը, Պրակոֆին կնոջը գրկած տանում էր մինչև Թաթարական կուրգանը։ Այնտեղ նստեցնում էր նրան կուրգանի կատարին, մեջքը դեմ անում դարեդար մաշված, ծակծկված մի քարի, նստում էր նրա կողքին. ու այսպես նրանք երկար նայում էին դեպի տափաստանը։ Նայում էին այնքան, մինչև որ մարում էր վերջալույսը, հետո էլ Պրակոֆին կնկանը փաթաթում էր կապայով ու էլի գրկած՝ տուն տանում։ Խուտորը շվարել էր՝ փնտրելով այդ տարօրինակ արարմունքների բացատրությունը, կանայք այնքան էին խոսում, որ իսկի բանը պարզելու ժամանակ էլ չունեին։ Զանազան բաներ էին ասում Պրակոֆիի կնկա մասին. ոմանք պնդում էին, թե այդ կնիկը մինչև հիմա չտեսնված գեղեցկություն ունի, ոմանք էլ՝ ընդհակառակը։ Ամեն բան պարզվեց, երբ կանանցից ամենահամարձակը՝ զինվորական Մավրան վազ տվեց Պրակոֆիի մոտ իբր թե թարմ թթխմոր ուզելու։ Պրակոֆին մտավ մառանը՝ թթխմոր բերելու, ու հենց այդ ժամանակ էլ Մավրան տեսավ, որ Պրակոֆիի

ձեռքն ընկած թրքուհին անպիտքներից էլ անպետք է...

Քիչ ժամանակ անց կաս-կարմիր կտրած Մավրան, գլխաշորը կողքի ընկած, ըլբլացնում էր նրբանցքում, կանանց բազմության առջև.

— Քա այդ Պրակոֆին, անուշիկներս, ի՞նչ լավ բան է դտել նրա մեջ, հը՞։ Կնիկն էլ կնիկ լինի, ասեմ հա՜, թե չէ, վա՜յ... Ոչ ո... ունի, ոչ փոր, խաղք է որ կա։ Մեր աղջիկները նրանից ավելի ջանով են։ Բարալիկ, ոնց որ բոռ, քաշես՝ մեջտեղից կկտրվի. աչքերը սև, մեծ-մեծ, մտիկ է տալի սատանի պես, մեղա՜ քեզ աստված։ Հա՜, ասես երեխա բերելու մոտ է, խալը վկա՜։

— Երեխա բերելո՜ւ-ո՜ւ,— զարմացան կանայք։

— Հո պստիկ չե՞մ, երեքն եմ մեծացրել։

— Բա երե՞սը ոնց է։

— Հա՜, երե՞սը։ Դեղին է։ Աչքերը մարած, երևի կյանքը քաղցր չէ օտար տեղում։ Հա՜, կնանիք, մեկ էլ... Պրակոֆիի շալվարն է հագնում։

— Վա՜յ, վա՜յ...— վախեցած ու միասին հոգոց հանեցին կանայք։

— Աչքովս տեսա. շալվարով էր, մենակ առանց լամպասի։ Ուրեմս Պրակոֆիի ամեն օրվանն է վրան քաշել։ Երկար շապիկ կա հագին, շապկի տակից էլ շալվարը՝ գուլպաների մեջ ճխտած։ Տեսա թե չէ՝ շունչս փորս ընկավ...

Խուտորում փսփսում էին, թե Պրակոֆիի կնիկը կախարդություն է անում։ Աստախովների հարսը (Աստախովներն ապրում էին խուտորի ծայրին, Պրակոֆիին մոտիկ) երդում-կրակ էր ուտում, թե հոգեգալուստի տոնի երկրորդ օրը, լուսածեգին տեսել էր, որ Պրակոֆիի կնիկը մազերը թափթփված, ինքը բորիկ, իրենց բակում կով էր կթում։ Այդ ժամանակներից կովի կուրծը չորացավ, դարձավ երեխայի բռնցքի չափ, կովը կաթից կտրվեց ու շուտով սատկեց։

Այն տարին անասունների չտեսնված կոտորած եղավ։ Դոնի կողքի արխաջում ավազոտ ցամաքաշերտը ամեն օր ծածկվում էր կովերի ու մատղաշ անասունների դիակներով։ Կոտորածը ձիերին էլ բռնեց։ Հալվում էին մոտիկ արոտում ման եկող ձիերի ջոկերը։

Եվ ահա նրբանցքներով ու փողոցներով մեկ սողաց սև լուրը...

Խուտորի ժողովից կազակներ եկան Պրակոֆիի մոտ։ Տանտերը դուրս ելավ, գլուխ տվեց։

— Է՛հ, բարի լինի ձեր գալը, ի՞նչ կա, պարոն ծերունիներ։

Բազմությունը մոտենալով տանը, սուս էր արել։

Վերջապես, խմած մի ալևոր առաջինը բղավեց.

— Բե՛ր այստեղ քո ջադուին։ Դա՛ տ պիտի անենք...

Պրակոֆին ներս թռավ տուն, բայց հաշտում հասան նրա ետևից։ Բարձրահասակ մի թնդանոթաձիգ, փողոցի կպցրած մականունով Լյուշնյան[1], Պրակոֆիի գլուխը խփում էր պատին, համոզում էր.

— Սո՛ւս արա, Ֆ՛յ, սո՛ւս արա... քեզ ձեռք չենք տա, ամա քո կնկանը պիտի թաղենք գետնի մեջ։ Ավելի լավ է նրան բնաջինջ անել, քանց ամբողջ խուտորը առանց անասունների մնա ու կորչի։ Իսկ դու ղալմաղալ մի՛ անի, թե չէ գլխովդ կզարկեմ ու կփլցնե՛մ պատը։

— Այդ շան քածին քարշ տուր բակը... — բղավեցին դրսից։ Մեկը, որ Պրակոֆիի հետ ծառայել էր նույն գընդում, թրքուհու մազերը փաթաթելով ձեռքին, մյուս ձեռքով սեղմելով ճիչերից պատռվող նրա բերանը, հաշտի միջով վազեվազ քարշ տվեց նրան ու գցեց ամբոխի ոտների տակ։ Բարակ մի վայնասուն ճեղքեց ահեղամռունչ ձայները։ Պրակոֆին դես ու դեն գցեց վեց կազակի ու գլխապատառ նետվելով սենյակը, պատից պոկեց թուրը։ Հրմշտելով միմյանց, կազակները դուրս թռան հաշտից։ Գլխի վերևում պտտելով փայլփլող, սվսվացող թուրը, Պրակոֆին տանից դուրս թռավ։ Ամբոխը ընկրկեց ու ցրիվ եկավ բակում։

Ամբարի մոտ Պրակոֆին հասավ ծանր վազող թնդանոթաձիգ Լյուշնյային ու ետևից թրով ճեղքեց նրա ձախ ուսը մինչև գոտին։ Կազակները, որ ցցեր էին պոկում ցանկապատից, կալի միջով ծլկեցին դեպի տափաստան։

Կես ժամից հետո սիրտ առած ամբոխը մոտեցավ բակին։ Երկու հետախույզ իրար սեղմելով՝ մտան հաշտը։ Խոհանոցի շեմքին գլուխն անհարմար կախ գցած, արնաշաղախ ընկած էր Պրակոֆիի կինը. սոսկալի տանջանքից դուրս ընկած ատամների արանքում երևում էր կծոտած լեզուն։ Պրակոֆին ցնցվող գլխով ու քարացած հայացքով ոչխարենու մուշտակի մեջ փաթաթում էր կարմիր-լորձոտ, ծվծվուն մի մսագունդ՝ ժամանակից առաջ ծնված երեխային։

Պրակոֆիի կինը մեռավ այդ նույն օրվա երեկոյան։ Տատը, Պրակոֆիի մայրը, խղճի գալով, վերցրեց օրապակաս մանուկին։

Սրան փաթաթեցին խաշած թեփով, ձիու կաթ էին տալիս, ու մի ամիս անց համոզվելով, որ թուխլիկ, թրքանման տղան ապրելու է, տարան եկեղեցի, մկրտեցին։ Նրան տվին պապի անունը՝ Պանտելեյ։ Պրակոֆին տաժանակրությունից վերադարձավ տասներկու տարուց հետո։ Խուզած, շիկակարմիր ու ալեխառն մորուքը և ռուսական հագուստը նրան դարձրել էին օտար, կազակի չնմանվող մի մարդ։ Նա վերցրեց որդուն և տունուտեղ եղավ։

Պանտելեյը մի թուխլիկ, ժիր տղա էր։ Դեմքով ու վայելուչ կերպարանքով նման էր մորը։

Պրակոֆին նրան ամուսնացրեց մի կազակուհու՝ Հարևանի դստեր հետ։

Այն ժամանակներից էլ թուրքական արյունը խաչաձևվեց կազակական արյան հետ։ Այստեղից էլ խուտորում երևան եկան սապատաքիթ, արտասովոր գեղեցիկ կազակները՝ Մելեխովները, իսկ փողոցի կպցրած մականունով՝ թուրքերը։

Թաղելով հորը, Պանտելեյը տարվեց տնտեսությամբ. նորոգեց տան ծածկը, մի կես դեսյատին պարապ հող միացրեց տնամերձ հողին, շինեց նոր մարագներ ու թիթեղե ծածկով մի ամբար։ Ցնտեսատիրոջ պատվերով թիթեղագործը թիթեղի կտորտանքներից երկու աքլոր սարքեց ու տնկեց ամբարի կտուրին։ Դրանք իրենց անհոգ տեսքով զարդարում էին Մելեխովի բակը, նրան էլ ինքնագոհության և ունևորության տեսք էին տալիս։

[1] Լյուշնյա — այլի վրա սարքվող աղեղնաձև տախտակ, որի ներքևի ծայրը ամրացվում է սանու ծայրին։ (Ս. Թ.)։

Իրար ետևից գլորելով տարիները, Պանտելեյ Պրակոֆ-
ևիչը դարձավ պնդակազմ մի մարդ, հաստացավ, մի քիչ
կուզիկացավ, բայց էլի՛ վայելչակազմ ծերունու տեսք ու-
ներ։ Պինդ ոսկորներով էր, կաղ (ջահել օրերում Ֆիարշավի
կայսերական ստուգատեսի ժամանակ կոտրել էր ձախ
ոտը), ձախ ականջին արծաթե կիսալուսնաձև գինդ էր կը-
րում, մինչև ծերությունը չէին գունափոխվում նրա սևաթույր
մորուքն ու մազերը, բարկանալիս ուշագնացության էր հաս-
նում և, ինչպես երևում է, դրանով էլ ժամանակից առաջ
պառավեցրեց երբեմնի գեղեցիկ, իսկ հիմա կնճիռների
ոստայնով պատած, չաղ կնկանը։

Նրա ավագ, արդեն ամուսնացած որդին, Պյոտրը, մորն
էր հիշեցնում. կարճահասակ էր, տափակ քթով, բաղեղի
նման առատորեն աճած, ցորնագույն մազերով, շագանա-
կագույն աչքերով. իսկ կրտսեր որդին, Գրիգորին, հորն էր
քաշել, հասակով կես գլխաչափ բարձր էր Պյոտրից, թեև
վեց տարով նրանից փոքր էր, հոր նման ուներ կախ ըն-
կած ուրուրի քիթ, կապտավուն, նշանման, վառվռուն աչ-
քեր մի քիչ շեղադիր ակնակապիճներում, այտոսկրների
սուր սալերը պիրկ պատած էին կինամոնագույն-կարմրա-
վուն մաշկով։ Գրիգորին էլ կորանում էր հոր պես, երկու-
սի ժպիտների մեջ անգամ մի ընդհանուր, գազանավարի
բան կար։

Դունյաշկան, հոր սիրելին՝ երկար ձեռներով ու խոշոր
աչքերով մի փոքրիկ աղջիկ, ու Պյոտրի կինը, Դարյան, իր
փոքրիկ երեխայով, — ահա և Մելեխովի ամբողջ ընտանիքը։

II

Լուսաբացի մոխրագույն երկնքում երևում էին հատու-
կենտ աստղերը։ Քամին սուրում էր ամպերի տակից։ Դոնի
վերևում ծառս լինելով, սահում էր մուժը, ու փովելով կավ-
ճասարի լանջերին, գորշ ու անգլուխ իժի նման սողում էր
դեպի զառիթափերը։ Դոնի ձախափնյա բլրակները, ավա-
զուտները, ճահճուտները, անանցանելի եղեգնուտները, ցո-
ղապատ անտառը շողշողում էին վառ, պաղ ցոլքերով։ Հո-
բիզոնի մշուշներում նեղվում էր արևը ու դեռ չէր ծագում։

Մելեխովների տանը առաջինը քնից պոկ եկավ Պան-
տելեյ Պրակոֆևիչը։ Ոտքի վրա կոճկելով խաչաձև նախ-
շած շապկի օձիքը, դուրս ելավ խրճիթից։ Կանաչազարդ
բակը պատած էր արծաթե ցողով։ Անասուններին բաց թո-
ղեց դեպի նրբանցք։ Դարյան միայն շապկով վազ տվեց
կովերը կթելու։ Ցողը գալիս, կաթիլների պես կպչում էր նրա
փափլիկ սրունքներին, ոտները մշուշային, ճխլտված հետք
թողին դալարախոտի վրա։

Պանտելեյ Պրակոֆևիչը նայեց, թե ոնց է շտկվում
Դարյայի ոտներից ճմլված կանաչ խոտը, ու գնաց օթախը։

Բաց պատուհանի գոգին թափթփված էին պարտեզի
թառամած բալենու դալուկ-վարդագույն ծաղկատերևները։
Գրիգորին քնած էր երեսի վրա, մի ձեռքը թարս տարածած։

— Գրի՛շկա, կգա՞ս ձուկ բռնելու։

— Հը՞ — կամացուկ հարցրեց Գրիգորին ու ոտները կա-
խեց մահճակալից։

— Գնանք մի քիչ ձուկ բռնենք. քանի վաղ է։

Գրիգորին, ֆսֆսալով կախոցից վերցրեց ու հագավ
ամեն օրվա շալվարը, ծայրերը դրեց բրդե սպիտակ գուլ-
պաների մեջ և երկար հագնում էր քոշերը՝ շտկելով ծռված
կրունկները։

— Բա մերս խայծ խաշե՞լ է,— խռպոտաձայն հարցրեց
նա՝ հոր ետևից դուրս գալով հաշտը։

— Խաշել է։ Գնա նավակի մոտ, ես հիմի կգամ։

Մերունին խաշած, հոտավետ հացահատիկը լցրեց շապ-
կի մեջ, խնամքով հավաքեց թափված հատիկները, ու ձախ
ոտից կաղալով, քայլեց դեպի վայրէջքը։ Գրիգորին փշա-
քաղված նստել էր նավակում։

— Ո՞ւր քշեմ։

— Դեպի սև զառիթափը... Փորձենք այն ծուռ քոթուկի
մոտ, ուր որ եղանք մի քանի օր առաջ։

Նավակը պոչով քերեց գետինը, նստեց ջրի մեջ, կտրը-
վեց ափից։ Հոսանքը այն տարավ ճոճելով, աշխատելով
շուռ տալ կողքի։ Գրիգորին առանց թիավարելու շարժում էր
թին։

— Թիավարի՛ր, էլի՛։

— Բա չհասնե՞նք մեջտեղը։

Կտրելով արագ հոսանքը, նավակը դնաց դեպի ձախ ափը։ Խուտորից լսվում էր ջրի վրա արձագանքվող աքլորականչը։ Ջրի երեսին իր կողով սև, շարժուն ջրափոս առաջացնելով, նավակը մոտեցավ մի հովտի։ Ափից մի հինգ սաժեն հեռավորությամբ երևում էին ջրասույզ ծփի ծառի վեր ցցված ճյուղերը։ Նրա շուրջը հորձանքը քշում էր փրփուրի պղտոր պղպջակները։

— Արձակիր կարթի թոկերը, ես է՛լ խայծ կդնեմ,— շշնջաց հայրը Գրիգորիին ու ձեռքը խոթեց գոլորշի արձակող մի փոքրիկ անոթի մեջ։

Հատիկները խշշալով թափվեցին ջրի երեսին՝ ասես մեկը կամացուկ շշնջաց՝ «շշի»։ Գրիգորին տոզած հատիկները շարեց կարթի կեռին, ժպտաց։

— Արի, ջա՛ն արի, մեծ ու փոքր ձուկ։

Կարթի թոկը, որ օղակ-օղակ ընկել էր ջրի մեջ, լարի պես պրկվեց ու էլի՛ թուլացավ, հենց որ սուզագնդիկը հասավ հատակին։ Գրիգորին ոտը պինդ դրեց կարթաձողի ծայրին ու, աշխատելով անշարժ մնալ, հանեց ծխախոտի քսակը։

— Բան չի դուրս գա, ապի... Լուսնյակը նվազում է։

— Լուցկի վերցրե՞լ ես։

— Հա՛։

— Տուր վառեմ։

Ծերուկը վառեց ծխախոտը, նայեց արևին, որ արտացոլվել էր ծուռ քոթուկի մյուս կողմում։

— Ծածան ձուկը,— նա զանազան եղանակով է շարժվում։ Մեկ էլ տեսար լուսնյակի նվազելու ժամանակ էլ բռնվեց։

— Երևում է, որ մանր ձուկը կտրում է խայծը,— հոգոց հանեց Գրիգորին։

Նավակի կողքին ճլմփալով ցայտեց ջուրը, ու ասես կարմիր պղնձից ձուլած երկու արշինանոց մի ծածան թառանչելով վեր ցատկեց՝ ծռված, փշոտ պոչով կրկնակի հետք առաջացնելով ջրի վրա։ Հատիկ-հատիկ կաթիլները ցողեցին նավակը։

— Հիմի կա՛ց,— Պանտելեյ Պրակոֆևիչը թևքով սրբեց թրջված մորուքը։

Ջրասույզ ծփի ծառի կողքից, հաստլիկ, մերկ ճյուղերի միջից միաժամանակ դուրս ցատկեցին երկու ծածան. երրորդը, որ ավելի փոքր էր, օդում գալարվելով, համառորեն թպրտում էր ղառիթափի մոտ։

Գրիգորին անհամբեր ծամծմում էր իր փաթաթած պապիրոսի թաց ծայրը։ Մի քիչ բարձրացել էր դեռ դժգույն արևը։ Պանտելեյ Պրակոֆևիչը սպառել էր ամբողջ խայծը, ու շրթունքները դժգոհությամբ իրար սեղմելով, բութ նայում էր կարթաձողի անշարժ ծայրին։

Գրիգորին բերանով դեն գցեց պապիրոսի մնացորդը, չարացած հետևեց դրա շեշտակի թռիչքին։ Նա մտքում հայհոյում էր հորը, որ սա իրեն վաղ էր արթնացրել, չէր թողել, որ քնից կշտանա։ Անոթի փորով ծխած թութունը վառած մազի հոտ էր առաջացրել նրա բերանում։ Կռացավ, որ երկու բռով ջուր վերցնի. այդ ժամանակ կարթաձողի ծայրը, որ ջրից կես արշին դուրս էր ցցվել, թույլ երերաց, դանդաղ սողաց ներքև։

— Քաշի՛ր, է-է՛,— շունչ առավ ծերունին։

Գրիգորին ցնցվելով քաշեց կարթաձողը, բայց դրա ծայրը ջրասույզ եղավ, կարթաձողը ծռվեց կունտի ձևով։ Ասես մեքենայի մի ահագին ուժ ներքև էր քաշում կարմիր ուռից շինած կարթաձողը։

— Պինդ պահիր, է-է՛,— տնքում էր ծերուկը՝ ափից դեն հրելով նավակը։

Գրիգորին ուժ էր անում կարթը բարձրացնելու և չէր կարողանում։ Ջոր չպոցով կտրվեց հաստ թոկը։ Գրիգորին օրորվեց՝ կորցնելով հավասարակշռությունը։

— Ա՛յ դու բուղա՛,— քրթմնջում էր Պանտելեյ Պրակոֆևիչը՝ չկարողանալով կեռիկի ծայրը հասցնել խայծին։

Անհանգիստ քրքջալով՝ Գրիգորին նոր թոկ կապեց ձողին, գցեց ջուրը։

Հազիվ էր սուզագնդիկը հասել հատակին, երբ ձողի ծայրը ծռվեց։

— Ըհը՛, նա է որ կա, գրողի տարածը...— մոմոաց Գրիգորին՝ հատակից դժվարությամբ կտրելով ձկանը, որ թպրտում էր արագահոս ջրի մեջ։

Կարթի թոկը սուր չթթոցով խազ քաշեց ջրի վրա, նրա

ետևից շեղ, կանաչավուն պատառի նման ելնում էր ջուրը։ Պանտելեյ Պրակոֆևիչը սպիներով պատած մատներով տնտղում էր շերեփաթիակի կոթը։

— Շուռ տուր դա ջրի վրա, պահիր, թե չէ կկտրի սղոցի պես։

— Հա՛, էլի՛։

Մի մեծ, դեղնակարմիր ծածան ելավ ջրի երեսը, փրփուր առաջացրեց և թեքելով բութ, լայնաճակատ գլուխը, էլի ընկավ ջրի խորքը։

— Սեղմում է, է՛, օ՛ֆ, ձեռքս փետացավ... Չէ՛, հլա կա՛ց։

— Լա՛վ բռնիր, Գրիշկա։

— Տո բռնե՛լ եմ, էլի՛։

— Տե՛ս, չթողնես, որ անցնի նավակի տակ... տե՛ս, հա՛-ա։

Շունչ առնելով, Գրիգորին կողքի ընկած ծածանը մոտեցրեց նավակին։ Մերուկը փորձեց շերեփաթիակով վերցնել, բայց ձուկը, վերջին ուժերը լարելով, նորից նետվեց ջրի խորքը։

— Բարձրացրո՛ւ դրա գլուխը։ Թո՛ղ քամի կուլ տա, կխեղոքանա։

Գրիգորին ուժ անելով, հոգնատանջ ծածանը կրկին քաշեց դեպի նավակը։ Բերանը լայն բանալով ու հորանջելով, ձուկն իր քիթը խփեց խորդուբորդ նավակողին ու կանգ առավ՝ փայլեցնելով երերուն, նարնջագույն-ոսկեհուր լողաթևերը։

— Կռիվ անելուց բեզարեցիր, հա՞,— բղավեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ նրան գցելով շերեփի վրա։

Նստեցին էլի մի կես ժամ։ Դադարեց ձկնակռիվը։

— Հավաքիր, Գրիշկա։ Երևի սա վերջինն էր, որ բռնեցինք, էլ չի լինի։

Պատրաստվեցին վերադառնալու։ Գրիգորին նավակը հեռացրեց ափից։ Անցան ճանապարհի կեսը։ Գրիգորին հոր դեմքից տեսնում էր, որ սա ուզում է մի բան ասել, բայց ծերունին լուռ նայում էր բլուրի տակ փռված խուտորի տներին։

— Հը՛, Գրիգորի, ա՛յ թե ինչ...— անվճռականորեն սկսեց նա՝ տնտղելով ոտների տակ դրված պարկի կապը,— ոնց որ տեսնում եմ, դու այդ Ակսինյա Աստախովայի հետ...

Գրիգորին թունդ կարմրեց, երեսը շուռ տվեց։ Շապկի օձիքը թաղվեց մկանոտ, արևավառ վզի մեջ, փայլեց ճերմակ շերտով։

— Մտի՛կ, ա՛յ տղա,— արդեն կոշտ տոնով շարունակեց ծերունին,— ես քեզ հետ ուրիշ կերպ կխոսեմ, հա՞-ա։ Ստեփանը մեր հարևանն է, ու ես թույլ չեմ տա, նրա կնկա հետ օյինբազություն անես։ Մեղք բան կլինի, ես առաջուց զգուշացնում եմ քեզ. որ տեսա, սաղ կտորդ ականջդ կթողնեմ։

Պանտելեյ Պրակոֆևիչը մատներն իրար սեղմելով՝ ահարկու բռունցք ցույց տվեց ու, կկոցելով ուռուցիկ աչքերը, նայում էր որդու կաս-կարմիր կտրած դեմքին։

— Դրանք բամբասանքներ են,— խուլ ձայնով, ասես ջրի տակից, մռմռաց Գրիգորին, ու հենց կապտավուն քթարմատի վրայով նայեց հորը։

— Ձենդ կտրի՛ր։

— Մարդիկ շատ բան կասեն...

— Սո՛ւս, շա՛ն որդի։

Գրիգորին ընկավ թիակին։ Նավակը գնում էր օրորվելով։ Հերարձակ պարում էր նրա ետևում վշշող ջուրը։

Մինչև նավակայան երկուսն էլ լուռ էին։ Արդեն մոտենալով եզերքին, հայրը հիշեցրեց.

— Մտի՛կ, հա՞-ա, չմոռանաս, թե չէ այսօրվանից ոչ մի անգամ երգ ու պարի չես գնա։ Ոտդ տնից դուրս չես դնի։ Պրծա՛վ։

Գրիգորին ձայն չհանեց։ Նավակը մոտեցնելով ափին, հարցրեց.

— Ձուկը տամ կնանո՞նց։

— Տար ծախիր առևտրականներին,— մեղմացավ ծերուկը,— թուքունի փող կգրստես։

Շրթունքները կծոտելով, Գրիգորին գնում էր հոր ետևից։ «Լա՛վ իմանաս, հերըս, որ եթե թոկերով է՛լ ոտքս կապեն, էլի՛ այսօր կգնամ երգ ու պարի»,— մտածում էր նա՝ շրջացած նայելով հոր պիրկ ծոծրակին։

Տանը Գրիգորին խնամքով մաքրեց ծածանների թեփու-

կին կպած ավազը, քիմուխտների միջով մի ճիպոտ անցկացրեց։

Դարբասի մոտ հանդիպեց իր վաղուցվա ընկեր, հասակակից Միտկա Կորշունովին։ Գալիս է Միտկան, խաղացնում է վահանակներով զարդարված գոտու ծայրը։ Նեղլիկ ակնախոռոչներից դեղնոտ փայլում են կլոր, մի քիչ լկտի աչքերը։ Սրանց բիբերը կատվի աչքերի բիբեր են, ուղղադիր են, դրանից էլ Միտկայի նայվածքը շարժուն է, անբոնելի։

— Ո՞ւր ես տանում ձուկը։

— Այսօր բոնեցինք։ Տանում եմ առևտրականներին։

— Մոխովնե՞ր, հը՞։

— Հենց նրանց։

Միտկան աչքով կշռեց ձուկը։

— Տասնհինգ ֆո՞ւնտ է։

— Կես ֆունտ էլ դիր վրեն։ Ձեռքի կշեռքով ես կշռել։

— Ես է՛լ գամ։ Բազար կանեմ։

— Գնա՛նք։

— Բա մաղարի՞չը։

— Կտեսնե՛նք, էլի։ Ջուր տեղը մի՛ դուրս տա։

Ժողովուրդը պատարագից դուրս եկած գնում էր փողոցներով։

Ճանապարհին իրար կողքի քայլում էին երեք եղբայր՝ Շամիլներ մականունով։

Մեծը, մի թևը կտրված Ալեքսեյը, քայլում էր մեջտեղից։ Համազգեստի պիրկ օձիքը ուղիղ էր պահում նրա ջլուտ վիզը, նոսր ու խուճուճ, սրածայր ու կարճլիկ մորուքը կտրիճություն էր արտահայտում, նա ջղայնորեն թարթում էր ձախ աչքը։ Վաղուց, հրաձգարանում Ալեքսեյի ձեռքում պայթել էր հրացանը, փակաղակի մի կտոր այլանդակել էր նրա թուշը։ Այն ժամանակից մի աչքը թարթում է տեղի թե անտեղի. կապտավուն մի սպի, ակոսելով թուշը, թաղվում է մազերի խուրձի մեջ։ Ձախ թևը կտրված է մինչև արմունկը, բայց Ալեքսեյը մի ձեռքով էլ է թութուն փաթաթում հմտորեն ու անվրեպ. թութունի տոպրակը սեղմում է կրծքի ուռուցիկ թմբին, ատամներով կտրում է թղթի անհրաժեշտ մի կտոր, ծռում է ակոսի ձևով, թութուն է լցնում ու մատների ճարպիկ շարժումով փաթաթում։ Մարդ դեռ աչք չի բացել, իսկ Ալեքսեյը թարթելով աչքը, արդեն ծամծմում է պատրաստի պապիրոսի ծայրը ու կրակ է խնդրում։

Թեկուզև թևը կտրված է, բայց խուտորում մուշտակովի մեջ առաջինն է։ Մուշտին էլ հո այնքան մեծ չի. այնպե՛ս, էլի, բողկի չափ կլինի. մի անգամ, վար անելիս, հերոստեց եզան վրա, մտրակն էլ կորցրել էր, մուշտիով պինդ զարկեց եզան, սա ընկավ ակոսի վրա, ականջներից արյուն գնաց, հետո էլ հազիվ խելքը գլուխն եկավ։ Մյուս եղբայրները՝ Մարտինը և Պրոխորը բոլորովին նման են Ալեքսեյին։ Նույնպես ցածրահասակ են, կաղնու հաստությամբ, միայն թե ամեն մեկն էլ երկու ձեռք ունի։

Գրիգորին բարև տվեց Շամիլներին, Միտկան անցավ՝ արագ շուռ տալով գլուխը։ Բարեկենդանին, մուշտակովի ժամանակ Ալյոշկա Շամիլը չէր խնայել Միտկայի մատաղ ատամները, թարս էր խփել, ու Միտկան երկու սեղանատամը բերանից գցել է երկաթե կրունկներից քերքրված, կապույտ սառույցի վրա։

Հասնելով նրանց, Ալեքսեյը մի հինգ անգամ իրար ետևից թարթեց աչքը։

— Դախիր ձկներդ, հը՞։

— Ա՛ռ։

— Ինչքա՞ն ես ուզում։

— Մի լուծ եզ, կնիկդ էլ վրեն։

Ալեքսեյն աչքերը կկոցելով, թափահարեց թևի չկտրված մասը։

— Ա՛մա թե սարսաղն ես, հա-ա՛... Օ՛հ-հո՛-հա՛, կընկա՞նս... իսկ քուռակ-մուռակը կվերցնե՞ս։

— Պահիր քեզ, թե չէ Շամիլները բնաջինջ կլինեն,— ատամները ցույց տալով՝ քրքջաց Գրիգորին։

Հրապարակում, եկեղեցու գավթի մոտ մարդիկ էին հավաքվել։ Բազմության մեջ եկեղեցու երեցփոխը մի սաղ էր բարձրացնում գլխից վեր ու բղավում՝ «Հիսուն կոպեկ։ Եղավ։ Ո՞վ ավելի կտա»։

Սաղը պտտում էր վիզը, արհամարհանքով կկոցում փիրուզափայլ աչքը։

Մարդկանց բոլորակում ալեզարդ, կուրծքը խաչերով ու

մեղալներով զարդարված մի ծերունի թափահարում էր ձեռքերը։

— Մեր Գրիշակա պապին թուրքի կովի մասին է դուրս տալի,— Միտկան ցույց տվեց աչքերով,— գնա՞նք լսենք։

— Մինչև լսենք, ձուկը կհոտի, կո՛ւզի։

— Որ ուզի, քաշը կավելանա, մեզ օգուտ է։

Հրապարակում, հրշեջ սոահից դենը, ուր շորանում են հրշեջ տակառներն իրենց կոտրատված քաշաններով, կանգնած է տալիս Մոխովների տան կտուրը։ Քայլելով սրահի կողքից, Գրիգորին թքեց ու բռնեց քիթը։ Մի տակառի ետևից, շալվարը կոճկելով, գոտին ատամներով բռնած դուրս եկավ մի ալևոր։

— Հը՛, զոռե՞լ էր,— խայթեց Միտկան։

Ալևորը կոճկեց վերջին կոճակը ու բերանից հանեց գոտին։

— Է՛, քեզ ի՞նչ։

— Այդտեղ քի՛թդ պիտի խոթեիր, մորո՛ւքդ, մորո՛ւքդ, որ պառավդ մի շաբաթ է՛լ չկարենար մաքրել։

— Ես քեզ քիթ ու մորո՛ւք ցույց կտամ, լրբի մեկը,— վիրավորվեց ալևորը։

Միտկան կանգ առավ, կկոցելով, ասես արևից պաշտպանելով կատվի իր աչքերը։

— Հլա տե՛ս, է՛, իի՛հ, քոսո՛տ։

— Ռա՛դ եղի, շա՛ն որդի։ Ի՞նչ ես կպել։ Թե չէ տեսնո՞ւմ ես այս գոտին։

Ծիծաղելով, Գրիգորին մոտեցավ Մոխովների տանը։ Քաղրիքը խիտ քանդակված է վայրի խաղողի ձևով։ Մուտքի սանդուղքի վրա՝ բծաշատ տարտամ ստվեր։

— Ա՛յ թե ոնց են ապրում մարդիկ, Միտրի...

— Հը՛մ, դռան կոթն է՛լ է ոսկեջրած։— Միտկան կիսով չափ բացեց պատշգամբի դուռը ու փոթկաց։— Այն պապին պետք էր ղրկել այստեղ...

— Ո՞վ է,— հարցրին պատշգամբից։

Գրիգորին վախվխելով առաջինը ներս մտավ։ Ձկան պոչը քսքսվում էր ներկած հատակին։

— Ո՞ւմ եք ուզում։

Գործած, ճոճվող բազկաթոռի վրա բազմել էր մի աղջիկ։ Ձեռքին՝ մի փոքրիկ ափսեով ելակ։ Գրիգորին լուռ նայում էր նրա վարդակարմիր, լիք շուրթերին, որոնք սեղմել էին հատապտուղը։ Աղջիկը, գլուխը թեքած, նայում էր եկվորներին։

Գրիգորին օգնության հասավ Միտկան։ Սա հազաց։

— Ձուկ չե՞ք առնի։

— Ձո՞ւկ։ Ես հիմա կասեմ։

Աղջիկը վեր կացավ ճոճվող բազկաթոռից, գնաց՝ քստքստացնելով բորիկ ոտներին հագած նախշուն տուֆլիները։ Արևը թափանցում էր նրա սպիտակ շրջազգեստի միջով, ու Միտկան տեսավ գիրուկ ոտների աղոտ ուրվագծերը և տակի շրջազգեստի լայն ծածանվող ժանյակը։ Նրան ապշեցրեց մերկ սրնքամսերի ատլասե սպիտակությունը, միայն կլորիկ կրունկների մաշկը կաթնա-դեղնավուն գույն ուներ։

Միտկան բոթեց Գրիգորիին։

— Տես, Գրիշկա, ա՛յ քեզ յուրկա՛... Ոնց որ շուշա լինի, տակից ամեն բան երևում է։

Աղջիկը դուրս եկավ միջանցքի դռնից, փափլիկ նստեց բազկաթոռին։

— Անցեք խոհանոց։

Թաթերի վրա քայլելով, Գրիգորին մտավ տուն։ Միտկան մի ոտի վրա կոթնած, աչքերը կկոցելով, նայում էր սպիտակ թելի նմանվող մազաբաժանին, որ աղջկա գլխի մազերը երկու ոսկեփայլ կիսաշրջանի էր բաժանել։ Աղջիկը շարաճճի, անհանգիստ աչքերով նայեց նրան։

— Դուք տեղացի՞ եք։

— Այստեղից եմ։

— Ո՞ւմ տղան եք։

— Կորշունովի։

— Իսկ ձեր անունն ի՞նչ է։

— Միտրի։

Աղջիկն ուշադիր զննեց եղունգների վարդագույն թեփուկը, արագ շարժումով ետ քաշեց ոտները։

— Ձեզանից ո՞վ է ձուկ որսում։

— Գրիգորին, իմ ընկերը։

— Իսկ դուք չե՞ք որսում։

— Ես էլ եմ որսում, երբ ուզենամ։

— Կարթերո՞վ։

— Կարթերով էլ ենք բռնում, այսինքն թոռերով։

— Ես է՛լ կուզենայի ձուկ որսալ,— ասաց աղջիկը փոքրինչ լռելուց հետո։

— Ի՞նչ կա որ, թե ցանկություն կա, գնա՛նք։

— Ի՞նչպես այդ բանը սարքենք։ Իսկապե՛ս, լո՞ւրջ, հա՞։

— Պետք է շատ շուտ վեր կենալ։

— Ես վեր կկենամ, միայն թե ինձ արթնացնել է հարկավոր։

— Արթնացնել կարելի է... բա հա՞յրդ։

— Հայրս ի՞նչ։

Միտկան ծիծաղեց։

— Բա որ ինձ գողի տեղ դնի՞... Հլա դեռ շներն էլ բաց կթողնի վրաս։

— Ա՛յ քեզ հիմարություն։ Ես մենակ քնում եմ անկյունի սենյակում։ Ահա, այդ լուսամուտը։— Աղջիկը մատով ցույց տվեց։— Եթե գաք ինձ իմաց տալու, ծեծեք լուսամուտը, ու ես վեր կկենամ։

Խոհանոցից լսվում էին Գրիգորիի երկչոտ ու խոհարարուհու հաստ, խռպոտ ձայները։

Միտկան տնտղելով կաղակական գոտու դժգույն, արծաթավուն վահանակը, լռում էր։

— Դուք ամուսնացա՞ծ եք,— հարցրեց աղջիկը՝ թաքցնելով ժպիտը։

— Ինչի՞ ես հարցնում։

— Հենց այնպես, հետաքրքիր է։

— Չէ՛, ազապ եմ։

Միտկան հանկարծակի կարմրեց, իսկ աղջիկը ժպիտը երեսին, տնտղելով հատակին թափված ջերմոցային ելակի ոստիկը, հարցրեց.

— Աղջիկները սիրո՞ւմ են ձեզ, Միտյա։

— Կան, որ սիրում են, կան, որ չեն սիրում։

— Ասա-ցե՛ք խըն-դր-ե՛մ... Իսկ ինչո՞ւ ձեր աչքերը ասես կատվի աչքեր լինեն։

— Կատվի՞... —Բոլորովին շշկլվեց Միտկան։

— Այո՛, հենց կատվի աչքեր։

— Երևի մորիցս է... Ես ի՛նչ մեղք ունեմ։

— Բա ինչո՞ւ ձեզ չեն պսակում, Մի՛տյա։

Միտկան ուշքի եկավ բոսկական շփոթությունից ու աղջկա խոսքերի մեջ թաքնված ծաղրանք զգալով, թարթում էր պեղնավուն աչքերը։

— Նշանածս հլա չի մեծացել։

Աղջիկը ղարմացած բարձրացրեց հոնքերը, կարմրեց ու վեր կացավ։

Դրսից, մուտքի սանդուղքից քայլեր լսվեցին։

Աղջկա կարճատև, ծիծաղը թաքցնող ժպիտը եղինջի նման դաղեց Միտկային։ Տանտերն ինքը, Սերգեյ Պլատոնովիչ Մոխովը, փափլիկ քստքստացնելով մեծ-մեծ, շեվրո կոշիկները, մի կողմ քաշվող Միտկայի կողքից ծանրաբարո անցկացրեց իր գեր մարմինը։

— Ինձ մո՞տ,— հարցրեց նա անցնելիս, առանց գլուխը շուռ տալու։

— Զո՛ւկ են բերել, հայրիկ։

Գրիգորին, դատարկ ձեռներով դուրս եկավ խոհանոցից։

III

Գրիգորին երգ ու պարից տուն եկավ առաջին աքլորականչերից հետո։ Հաշտում նա զգաց գայլուկի թթված շյուղերի հոտը և չորացած քաղցր բիանի բարկ բույրը։

Նա կամացուկ անցավ օթախը, հանվեց, խնամքով կախ տվեց տոնական, լամպասավոր շալվարը, խաչակնքեց, պառկեց։ Հատակի վրա — լուսնի ոսկեհուր շողքը՝ պատուհանի ապակեկալի խաչով հատված։ Մի անկյունում, ասեղնագործած քաթանե կտորների տակ՝ արծաթե սրբապատկերների դժգույն փայլը, մահճակալի ու կախոցի վերևում՝ անհանգստացած ճանճերի տաղտուկ բզզոցը։

Հենց քնելու վրա էր, բայց խոհանոցում լացեց եղբոր երեխան։

Օրորոցը սկսեց ճռճռալ չկպրած սայլի նման։ Դարյան քնկոտ ձայնով քրթմնջաց.

— Սո՛ւս, է՛, մունտռիկ երեխա։ Մարդ ոչ քուն ունի, ոչ հանգիստ։— Կամացուկ երգեց.

Պստիկ-ճստիկ
Ո՞ւր էիր դու,

Ախոռներում։
Ի՞նչ տեսար դու։
Մի ձի տեսա
Ոչխե թամբով...

Գրիգորին համաչափ, օրորող ճոճուոցի տակ քուն մրտնելիս հիշեց՝ «Հա՛, էգուց Պյոտրը ճամբար է գնալու։ Կմնա Դաշկան իր երեխայով... Ուրեմն առանց Պյոտրի ենք հունձ անելու»։

Գլուխը թաղեց տաք բարձի մեջ, ականջներում անդադար ծորում է ու ծորում՝

Ո՞ւր է քո ձին։
Դարբասի մոտ։
Դարբա՞ն ուր է։
Ջուրը տարավ։

Գրիգորին ցնցվեց ձիու զիլ խրխնջոցից։ Զայնից հասկացավ, որ դա Պյոտրի ռազմի նժույգն է։

Քնից ուժասպառ մատներով երկար կոճկեց շապիկը, էլի համարյա քուն մտավ երգի մեղմ օրորի տակ.

Սագերն ո՞ւր են,
Եղեգնուտում։
Բա նղե՞գը,
Աղչիկները
Դա հնձեցին։
Բա աղչիկնե՞րն,—
Ամուսնացան։
Բա կաղա՞կը,—
Կռիվ գնաց...

Քնից խոնջացած, Գրիգորին հասավ ախոռը, ձին դուրս բերեց նրբանցք։ Երեսին կպավ սարդի մի ոստայն ու խռուտ տվեց, անսպասելի փախավ քունը։

Դոնի վրա շեղակի ձգված է երերուն լուսնաշավիղը, որով ոչ ոք չի անցել։ Դոնի վերևում մուժ է, երկնքում՝ անթիվ ու անհամար աստղեր։ Ձին Գրիգորիի ետևից զգույշ փոխում է ոտները։ Դեպի ջուրը տանող վայրէջքը դժվար է։ Գետի կողմում կչկչում են բաղերը, ափի մոտ, ծանծաղուտից վեր թռավ ու ջրի վրա թափով շրմփաց մանր ձկներ որսող մի լոքո ձուկ։

Գրիգորին երկար կանգնել էր ջրի մոտ։ Եղերքում խոնավ ու քաղցրահամ բույր էր տարածված։ Ձիու շուրթերից մանրիկ կաթիլներ էին ընկնում։ Գրիգորիի սրտում թեթև, հաճելի դատարկություն է։ Նա իրեն լավ էր զգում, չկար մտքերի բեռ։ Վերադառնալիս նայեց դեպի արևելք, այնտեղ արդեն ցրվում էր կապտավուն կիսախավարը։

Ախոռի մոտ հանդիպեց մորը։

— Այդ դո՞ւ ես, Գրիշկա։

— Բա ո՞վ է։

— Ձի՞ն էիր ջրում։

— Ջրում էի,— դժկամ պատասխանում է Գրիգորին։

Գլուխն ու ուսերը ետ գցած, մայրը գոգնոցով տարթ է տանում վառելու, քստքստացնում է պառավական թորշոմած, բոբիկ ոտները։

— Գնայիր Աստախովներին զարթեցնելու։ Ստեփանը պետք է մեկնի մեր Պյոտրի հետ։

Գրիգորին սրթսրթում, ցնցվում է զովությունից։ Նրա մարմնով սուր սարսուռ է անցնում։ Նա վազեվազ բարձրանում է Աստախովների տան մուտքի սանդուղքի երեք աստիճանը։ Դուռը փակված չէ։ Խոհանոցում փռված կարպետի վրա քնած է Ստեփանը՝ կնոջ գլուխը թևատակին։

Նոսրացած մթության մեջ Գրիգորին տեսնում է Ակսինյայի շապիկը՝ ծնկներից վեր ընկած, անպարկեշտորեն փռված կաթնավուն — սպիտակ ոտները։ Գրիգորին նայում է մի վայրկյան, զգալով, թե ինչպես է չորանում բերանը, ու ասես թուշի դնդնգոցով լցվում, ուռչում է գլուխը։

Նա աչք է ածում գողի նման։ Օտարոտի, խռպոտ ձայնով ասում է.

— Է՛յ, ո՞վ կա այստեղ, վե՛ր կացեք։

Ակսինյան քնից վեր թռավ։

— Օ՛յ, ո՞վ է, ո՞վ։— Նրա մերկ թևը հապճեպ տընտղեց, շոշափեց ոտները՝ շապիկը քաշելով դրանց վրա։ Բարձի վրա մնաց քնի մեջ կաթած լորձունքի բիծը. պինդ է կնկա վաղորդյան քունը։

— Ե՛ս եմ։ Մերս ղրկեց ձեզ զարթեցնելու...

— Մենք հիմի վեր կկենանք... Այստեղ մտնել չի լինի...

Լվերի երեսից հատակին ենք քնում։ Ստեփա՜ն, վե՜ր կաց, լսո՞ւմ ես։

Գրիգորին Ակսինյայի ձայնից գլխի է ընկնում, որ վերջինս անհարմար է զգում. Գրիգորին շտապում է գնալ։

Խուտորից մի երեսուն հոգի կազակներ գնում էին մայիսյան ճամբարները։ Հավաքատեղին հրապարակն էր։ Ժամը յոթին դեպի հրապարակը շարժվեցին բրեզենտով պատած սայլերը, հետիոտն ու հեծյալ կազակները՝ մայիսյան պարուսինե վերնաշապիկներով, հանդերձանքով։

Մուտքի սանդուղքի վրա Պետրոն հապճեպ կարում էր կտրված սանձը։ Պանտելեյ Պրակոֆևիչը դես ու դեն էր քայլում Պետրոյի ձիու մոտ, ու տաշտակի մեջ վարսակ ածելով, երբեմնակի բղավում էր.

— Դունյա՜շկա, պաքսիմատը պի՞նդ ես տեղավորել, ճարպը աղե՞լ ես թե չէ։

Դունյաշկան կաս-կարմիր կտրած, բակի միջով ծիծեռնակի պես թռչում էր մեկ դեպի խոհանոց, մեկ դեպի խըրճիթ, ծիծաղելով պատասխանում էր հոր բղավոցներին.

— Դուք, հերոս, ձեր գործն արեք, իսկ ես աղբորս իրերն այնպես կտեղավորեմ, որ մինչև Չերկասկ չեն է՛լ շարժվի։

— Չկերա՞վ,— հարցրեց Պետրոն՝ թքոտելով ձյութալարը ու գլուխը շարժելով ձիու կողմը։

— Ծամում է, էլի՛,— զուսպ պատասխանեց հայրը, կոշտացած ձեռքով ստուգեց քրտնաքաշերը։ Մեկ էլ տեսար մի որևէ փշուր կամ ցողուն կպավ քրտնաքաշին ու մի քանի ժամում արյունոտելու չափ հարեց ձիու մեջքը։

— Կերավ-պրծավ թուխլիկս. ջրեցեք դրան, ապի։

— Գրիշկան կտանի Դոն։ Է՛յ, Գրիգորի, տա՛ր ձին։

Դոնի բարձր, նիհար, սպիտակափայլ ճակատով նժույգը գնաց կայտառ քայլերով։ Գրիգորին նրան դուրս տարավ բակի դռնից, ձախ ձեռքը հազիվ դիպցնելով ուսին՝ թռավ նրա վրա ու հենց տեղնուտեղը յորդա տվեց։ Զառիթափի մոտ Գրիգորին ուզում էր դանդաղեցնել վազքը, բայց ձին ընկավ, ապա արագացրեց վազքը ու քառատրոփով թռավ դեպի ներքև։ Իրանը ետ գցելով, համարյա պառկելով ձիու մեջքին, Գրիգորին տեսավ զառիթափից իջնող մի կին՝

դույլերը ուսին։ Շուտ եկավ կածանից ու, թռչող փոշուց առաջ անցնելով, մտավ ջուրը։

Վերևից շորորալով իջավ Ակսինյան, դեռ հեռվից բարձր ձայնով բղավեց.

— Է-է՛յ, կատաղած սատանա, քիչ էր մնում ձիու տակ գցեիր։ Սպասիր, հորը ասեմ, թե ոնց ես ձին քշում։

— Դեհ, դե՛հ, հարևանուհի, կարգին խոսիր։ Մարդուդ ուղարկում ես ճամբար, կարելի է ես պետք գամ ձեր տան գործերի համար։

— Էլ ո՞նց չէ, շա՜տ հարկավոր ես ինձ։

— Հունձը կսկսվի, հլա կխնդրես է՛լ,— ծիծաղեց Գրիգորին։

Ակսինյան կանգնեց լաստակի վրա, լծակից կախված դույլով ճարպկությամբ ջուր վերցրեց ու ծնկների միջև սեղմելով քամուց բարձրացող շրջազգեստը, նայեց Գրիգորիին։

— Հը՛, քո Ստեփանը գնո՞ւմ է,— հարցրեց Գրիգորին։

— Քե՞զ ինչ։

— Ա՛յ քեզ բան... Հարցնել չի՞ կարելի, ինչ է։

— Գնում է։ Հետո՞։

— Ուրեմս առանց մարդու ես մնում։

— Ուրեմս, այդպես է։

Ձին ջրից բարձրացրեց շրթունքները, լպստեց բերանում հավաքված ջուրը ու նայելով Դոնի մյուս կողմը՝ առջևի մի ոտը խփեց ջրին։ Ակսինյան լցրեց մյուս դույլը. լծակը դնելով ուսին, թեթև շորորալով, սկսեց բարձրանալ։ Գրիգորին ձին քշեց նրա ետևից։ Քամին քաշքշում էր Ակսինյայի շրջազգեստը, թուխ վզի վրա տնտղում բարակ, փափլիկ ծամերը։ Մազերի ճոխ հանգույցի վրա փայլում էր գունավոր մետաքսից ասեղնագործած թասակը. շրջազգեստի մեջ դրած վարդագույն շապիկը առանց փոթերի նստել էր ուղիղ մեջքին ու լիք ուսերին։ Բարձրանալով վերև, Ակսինյան կռանում էր դեպի առաջ, շապկի տակից պարզ երևում էր մեջքի երկայնակի փոսիկը։ Գրիգորին տեսնում էր շապկի քրտնակալած թևատակի թուխ բծերը, աչքերով հետևում յուրաքանչյուր շարժման։ Նա ուզում էր կրկին խոսել Ակսինյայի հետ։

— Երևի կարոտելու ես մարդուդ, հը՞։

Ակսինյան քայլելիս շուռ տվեց գլուխը, ժպտաց։

— Բա ո՞նց։ Ա՛յ, դու պսակվիր,— Ակսինյան շունչ էր առնում և ընդմիջումներով խոսում,— պսակվիր, հետո կիմանաս՝ կարոտում են սիրածին թե ոչ։

Գրիգորին առաջ քշեց ձին, հավասարվեց Ակսինյային ու նայեց նրա աչքերին։

— Հո կնանիք էլ կան, որ շատ են ուրախանում, երբ էրիկներն ուրիշ տեղ են գնում։ Մեր Դարյան Պյոտրի բացակայությամբ սկսում է հաստանալ։

Ակսինյան, որ շարժում էր ոտնգերը, արագ շնչում, մազերն ուղղելով՝ ասաց.

— Էրիկը տղրուկ չէ, ամա արյուն է քաշում։ Բա քե՛զ ե՞րբ ենք պսակելու։

— Չգիտեմ՝ ոնց է ուզում հերըս։ Երևի ծառայությունից հետո։

— Հլա ջահել ես, մի՛ պսակվի։

— Ի՞նչ կա որ։

— Հոգս ու ցավը շատ է։— Ակսինյան նայեց աչքերի տակից առանց շուրթերը բանալու թեթև ժպտաց։ Եվ այստեղ Գրիգորին առաջին անգամ նկատեց, որ նրա շուրթերը անպարկեշտորեն ագահ են ու փափլիկ։

Տնտղելով ձիու բաշը, Գրիգորին ասաց.

— Պսակվելու հավես չունեմ։ Մեկն ու մեկը առանց դրան էլ կսիրի։

— Գտել ես, հա՞։

— Գտնելս ո՞րն է... Հրես, դու ճամփա ես դնում Ստեփանին...

— Դու ինձ հետ խաղ չանես, հա՞-ա։

— Կզարկե՞ս։

— Ստեփանին մի խոսք ասեմ թե չէ...

— Ես քո Ստեփանին...

— Տե՛ս, քա՛ջ տղա, լաց կլինես։

— Մի վախեցնի, Ակսի՛նյա։

— Ես չեմ վախեցնում։ Դու աղջիկների հետ գործ ունեցիր։ Թող նրանք քեզ համար աղլուխներ կարեն, իսկ ինձ վրա աչք չդնես։

— Դիտմամբ պետք է աչք դնեմ։

— Հետո ի՞նչ որ։

Ակսինյան հաշտվողաբար ժպտաց ու շեղվեց կածանից՝ աշխատելով հեռանալ։ Գրիգորին շուռ տվեց ձին, փակեց նրա ճամփան։

— Թո՛ղ, Գրի՛շկա։

— Չե՛մ թողնի։

— Հիմարություն չանես, ես պետք է ճամփա գցեմ մարդուս։

Գրիգորին ժպտալով քշում էր ձին։ Ակսինյային քշում էր դեպի զառիթափը։

— Թո՛ղ է՛, սատանա, հրե՛ն, մարդիկ են երևում։ Որ տեսնեն, ի՞նչ կասեն։

Ակսինյան վախեցած նայեց դես ու դեն, անցավ խոժոռվելով ու առանց հետ նայելու։

Տան մուտքի սանդուղքի վրա Պետրոն հրաժեշտ էր տալիս հարազատներին։ Գրիգորին ձին էր թամբում։ Սուրը ձեռքով պահած՝ Պետրոն հապճեպ իջավ աստիճաններից։ Գրիգորիի ձեռքից վերցրեց սանձը։

Զգալով, որ ճանապարհվելու է, ձին անհանգիստ շարժում էր ոտները, փրփրոտում սանձի բերանոցը։ Ոտը դնելով ասպանդակին, թամքի դաշից բռնելով, Պետրոն ասաց հորը.

— Զալ եղները շատ չբանեցնես, կլղարեն, ապի։ Աշունը կգա, կծախենք։ Գրիգորիի համար էլ ձի պետք է ճարել։ Տափաստանի խոտը չծախես, հա՛-ա, դու էլ գիտես, թե հիմի մարգագետնում ինչ տեսակ խոտ է լինելու։

— Էհ, աստված քեզ հետ։ Բարի ճամփա,— խաչակնքելով ասաց ծերունին։

Պետրոն իր մարզված մարմինը վարժ շարժումով նետեց թամքի վրա, հետևից ուղղեց գոտու տակ ճխլտված շապկի ծալերը։ Ձին գնաց դեպի դարբասը։ Արևի տակ աղոտ փայլեց թրի կոթը, որ երերվում էր քայլերի թափին համապատասխան։

Դարյան երեխան գրկին գնաց Պետրոյի հետևից։ Մայրը բակի մեջտեղում կանգնած, թևքով սրբում էր աչքերը ու գոգնոցի ծայրով էլ կարմրած քիթը։

— Աղբե՛ր, հե՛յ, կարկանդակնե՛ր, կարկանդակները մոռացա՞ր... կարտոլով կարկանդակնե՞ր...

Դունյաշկան այծի նման վազ տվեց դեպի դարբասը։

— Ի՞նչ ես բղավում, սարսաղ,— հերստ գոչեց Գրիգորին։

— Կարկանդակները մնացին,— բակի դռանը հենվելով հեծկլտաց Դունյաշկան, ու արցունքները գլորվեցին մրոտած, վառ թշերի վրա, այնտեղից էլ՝ ամենօրյա կոֆտայի վրա։

Դարյան ձեռքի տակից դիտում էր ամուսնու սպիտակ, փոշիով շղարշվող շապիկը։ Պանտելեյ Պրակոֆևիչը ճոճելով դարբասի փտած սյունը, նայեց Գրիգորիին։

— Դարբասը կարգի կբերես, սյունը կթաղես անկյունում։— Ու մտածելով՝ ավելացրեց, կարծես նորություն էր հաղորդում.— Պետրոն գնա՛ց։

Գրիգորին ցանկապատի վրայով տեսնում էր, թե Ստեփանն ինչպես էր պատրաստվում մեկնելու։ Բրդե կանաչ շրջազգեստով զուգված Ակսինյան ձին մոտեցրեց ամուսնուն։ Ստեփանը ժպտալով նրան ինչ-որ բան էր ասում։ Նա առանց շտապելու, հանգիստ համբուրեց կնոջը ու երկար ժամանակ ձեռքը չէր վերցնում նրա ուսից։ Արևից ու աշխատանքից սևացած ձեռքը ասես ածխակտոր լիներ Ակսինյայի սպիտակ կոֆտայի վրա։ Ստեփանը կանգնել էր մեջքը դեպի Գրիգորին. ցանկապատի վրայից երևում էին նրա պիրկ, գեղեցիկ սափրված վիզը, լայն, մի փոքր կախ ընկած ուսերը և,— երբ կռանում էր դեպի կինը,— շեկ բեղի ոլորած ծայրը։

Ակսինյան ինչ-որ բանի համար ծիծաղում էր ու գլխով բացասական նշան անում։ Բարձր, սևաթույր նժույգը ճռճվեց, երբ ձիավորը ոտը դրեց ասպանդակին ու նստեց նրա վրա։ Ստեփանը ձին քշեց արագ քայլերով, նա այնպես էր նստել ձին, որ կարծես ձուլված էր թամքի վրա, իսկ Ակսինյան կողքից գնում էր ասպանդակը բռնած, ու վարից վեր շնավարի, սիրալիր ու ագահ նայում էր աչքերին։

Այսպես նրանք անցան հարևան խրճիթը ու ճամփան ծռելով՝ չքացան։

Գրիգորին նրան ուղեկցում էր երկար, անթարթ հայացքով։

IV

Իրիկնադեմին փոթորիկ բարձրացավ։ Խուտորի վրա մի թուխ ամպ էր կախվել։ Հողմից ալեկոծվելով, Դոնը լեռնացող, արագասլաց ալիքներ էր շպրտում դեպի ափերը։ Տնամերձ ծառաստաններից դենը, երկնքում փայլատակում էր կայծակը, որոտի դանդաղ ճայթյուններից դղրդում էր երկիրը։ Ամպի տակ թևատարած սավառնում էր ուրուրը, ագռավները կոնչալով հետապնդում էին նրան։ Սառնաշունչ ամպը գալիս էր արևմուտքից, Դոնի երկայնքով։ Մարգագետնից դենը ահեղորեն սկսին էր տալիս երկինքը, տափաստանը լռում էր սպասողական վիճակում։ Խուտորով մեկ շրխկում էին փակվող փեղկերը, իրիկվա ժամասացությունից շտապ, խաչակնքելով վերադառնում էին պառավները, հրապարակում գալարվում էր փոշու գորշ սյունը, և անձրևն արդեն իր առաջին հատիկներն էր ցանում գարնանային շոդից պապակած հողի վրա։

Դունյաշկան ծամերը թափահարելով, վազեվազ անցավ բակից, շրխկոցով փակեց հավանոցի դռնակը ու կանգնեց բակի մեջտեղում, ուռցնելով պնչերը՝ ոնց որ ձին արգելքի վրայից թռչելուց առաջ։ Փողոցում ճվճվում էին հրեխաները։ Հարևանի ութ տարեկան տղան, Միշկան, պտույտ էր գալի՝ պպզելով մի ոտի վրա. նրա գլխին ֆռռում էր հոր անչափ մեծ կարտուզը, որ իջնում էր մինչև տղայի աչքերը։ Նա սուր ձայնով ճվում էր.

Անձրև, անձրև, ճամփա տուր,
Ելնենք դաշտը ծաղկաբույր,
Որ աստծուն աղոթենք,
Քրիստոսին ծունր իջնենք։

Դունյաշկան նախանձով էր նայում Միշկայի բոբիկ, սպիներով խիտ ծածկված ոտներին, որոնք թունդ եռանդով դոփդոփում էին գետինը։ Դունյաշկան էլ էր ուզում մի քիչ պար գալ անձրևի տակ ու թրջել գլուխը, որ խիտ ու խուճուճ մազեր աճեին. ուզում էր, ոնց որ հրե՞ն, Միշկայի այն ընկերը, փոշոտ փողոցի եզրին ցից կանգնել է գլխի վրա, փշերին ընկնելու ռիսկով. բաց պատուհանից նայում էր մայ-

ը՝ բարկությամբ ճպճպացնելով շրթունքները։ Դունյաշկան հոգոց հանեց ու վազեց խրճիթ։ Սկսվեց հորդառատ ու անընդմեջ անձրևը։ Հենց կտուրի վրա ճայթեց որոտը, նրա բեկորները թռան Դոնից էլ դենը։

Հաշտում հայրն ու քրտնած Գրիշկան կից սենյակից դուրս էին քաշում կոլոլած ուռկանը։

— Բեր կոշտ թել և մախաթը, շո՛ւտ,— բղավեց Գրիգորին Դունյաշկայի վրա։

Խոհանոցում վառեցին լույսը։ Դարյան նստեց ուռկանը կարկատելու։ Պառավը երեխային օրորելով՝ մոթմոթում էր.

— Տո՛, քոփակ, էլի բան հնարեցի՞ր։ Պառկենք քնելու, նավթը գնալով թանկանում է, իսկ դու հա՛ վառում ես։ Ախր հիմի ինչ որս կարող է լինել։ Ո՞ր ջհաննամը պիտի գնաք։ Խեղդվելո՞ւ եք, ինչ է, մի տեսե՛ք դրսումը ինչ փոթորանք է։ Ո՞նց է շփշփում, տե՛ր Հիսուս Քրիստոս, Մարիամ աստվածածին...

Խոհանոցում մի վայրկյան կուրացուցիչ կապույտ լույս շողաց ու լռություն տիրեց. լսվեց, թե անձրևը ինչպես է չանգռում փեղկերը, ապա ճայթեց որոտը։ Դունյաշկան ճըչաց ու երեսնիվայր ընկավ ուռկանի վրա։ Դարյան ձեռքի կարճ շարժումներով խաչակնքում էր պատուհաններն ու դուռը։

Պառավը սարսափահար աչքերով նայում էր իր ոտների տակ փռված կատվին։

— Դույնկա, ռա՛դ արա սրան... երկնայի՛ն թագավոր, ներիր ի՛նձ, մեղավորիս։ Դույնկա, կատվին դեն գցիր բակը։ Փի՛շտ, սատանա։ Մահը քեզ...

Գրիգորին վար դցելով ուռկանի կոթը, ցնցվում էր անձայն քրքիջից։

— Հը՛, ի՞նչ եք վժվժում, է՞, սսկվեցե՛ք,— բղավեց Պանտելեյ Պրակոֆիևիչը։— Դեհ, շո՛ւտ կարեցեք, կնանիք։ Բա օր առաջ չէ՞ի ասել, որ մտիկ տաք թոռը։

— Ախր հիմի ի՞նչ ձուկ պիտի լինի որ,— էլի խոսք բացեց պառավը։

— Քո խելքի բանը չի, սո՛ւս։ Ցամաքալեզվի գլխին հենց էնպես լմտիկ ձկներ կրռնենք ո՞ր։ Ձուկը հիմի ջրի ղրաղն է

գալի, վախում է փոթորանքից։ Ջուրն էլ արդեն պղտորված կլինի։ Դունյա՛շկա, էլա մի վազի, տես՝ ոնց է գիտը։

Դունյաշկան դժկամորեն, կողքի քայլեց դեպի դուռը։

— Բա ո՞վ պիտի գնա որսալու։ Դարյան չի կարող, կմրսեցնի կուրծքը,— համառում էր պառավը։

— Ես ու Գրիշկան կերթանք, մյուս թոռով որսալու համար էլ կկանչենք Ակսինյային ու էլի կնանոնցից մեկն ու մեկին։

Շնչակտուր ներս վազեց Դունյաշկան։ Թարթիչներից կախվել ու դողում էին անձրևի կաթիլները։ Նամացած սևահոդի հոտ էր գալի նրանից։

— Գետը գոռոռում է, օ՛յ, վախենալու բա՛ն է։

— Կգա՞ս մեզ հետ ձուկ բռնելու։

— Էլ ո՞վ է գալու։

— Կնանոնցը կկանչենք։

— Կգա՛մ։

— Դեհ, կապադ գցի վրադ ու հա՛յդա Ակսինյայի մոտ։ Թե որ գալու է, թող ձեն տա Մալաշկա Ցրոլովային։

— Ա՛յ, նա չի մրսի,— ժպտաց Գրիգորին,— նրա վրա այնքան ճրագու կա, ինչքան որ մի չաղ խոզի վրա։

— Դու չոր խոտ վերցրու, Գրիշունկա,— խորհուրդ տվեց մայրը,— դոշիդ կդնես, թե չէ ջանդ կմրսեցնես։

— Գրիգորի, գնա խոտ վերցրու։ Պառավը դրուստ խոսք ասավ։

Քիչ հետո Դունյաշկան ներս բերեց կանանց։ Ակսինյան պատռտված կոֆտայով, որի վրա գոտու փոխարեն պարան էր կապել, ու տակի կապույտ շրջազգեստով ավելի կարճահասակ ու նիհար էր երևում։ Դարյայի հետ ծիծաղ ծիղաղի տալով, նա հանեց գլխաշորը, ավելի պինդ կծկեց մազերն, ու գլխաշորը կապելով, գլուխը ետ գցած, սառն նայեց Գրիգորիին։ Հաստլիկ Մալաշկան շեմքի մոտ կապում էր գուլպաները, խոպոտ ձայնով ասում.

— Պարկեր վերցրե՞լ եք։ Աստված վկա մենք այսօր շատ ձուկ կբռնենք։

Դուրս ելան բակ։ Կակղած գետնին հորդ անձրև էր թափվում, փրփրացնում արդեն գոյացած լճակները, ջուրը հեզեզվում, հոսում էր դեպի Դոնը։

Գրիգորին առջևից էր գնում։ Հայտնի չէ ինչու նա ուրախ տրամադրության մեջ էր։

— Ապի, այստեղ փոս կա, տե՛ս։

— Ամա՛ թե մութն է հա՛-ա։

— Ակսյուշա, իրարից բռնենք, իրար հետ մեռնենք,— խռպոտ քրքջում էր Մալաշկան։

— Մտիկ արա, Գրիգորի, Մայդաննիկովների նավակայանը չի՞։

— Հենց այդ է որ կա։

— Այստեղից էլ... սկսել...— հաղթահարելով ծեծիող քամին, բղավում է Պանտելեյ Պրակոֆեիչը։

— Չե՛մ լսում, ապի,— խռպոտ ասում է Մալաշկան։

— Սկսիր որսալ, աստուծով... Ես խոր տեղից կբռնեմ։ Ասում եմ խոր տեղից... Մալաշկա, խո՞ւլ ես, ինչ է, ո՞ւր ես քշում։ Ես խոր տեղից կբռնեմ... Գրիգորի, Գրի՛շկա, Ակսինյան թող ափից դեսը գա։

Դոնը մռնչում է, տնքում։ Քամին պատառ-պատառ է անում անձրևի թեք պաստառը։

Ոտներով հատակը շոշափելով, Գրիգորին մինչև գոտկատեղը մտավ ջրի մեջ։ Կպչուն պաղությունը սողաց մինչև կուրծքը, աքցանի պես սեղմեց սիրտը։ Ալիքները, ոնց որ մտրակ, խփում են հա՛ խփում երեսին, պինդ սեղմած աչքերին։ Ուռկանն ուռչում, գունդ է դառնում, քաշում է դեպի խորքը։ Ավազոտ հատակի վրայով սլկում են Գրիգորիի ոտները՝ բրդե գուլպաներով։ Քիչ է մնում ուռկանի կոթը պոկվի նրա ձեռքերից։ Հատակը խորանում է ու խորանում։ Անդունդ։ Ոտները կտրվում են գետնից։ Հոսանքը նրան ուժով տանում է գետի մեջտեղը, կլանում է։ Գրիգորին աջ թևի ուժեղ շարժումներով դեպի ափն է լողում։ Սև, ալեծուփ անդունդը վախեցնում է նրան. այդպես երբեք չէր եղել։ Նա ոտը ցնծությամբ դնում է երերուն հատակին։ Նրա ծնկին մի ձուկ է դիպչում։

— Խորունկ տեղից դենը կաց,— լսվում է հոր ձայնը թանձր մթության միջից։

Ուռկանը ծռվելով էլի՛ սողում է դեպի խորունկ տեղը, էլի՛ հոսանքը Գրիգորիի ոտների տակից պոկում է գետնը, և նա գլուխը վեր ցցած լողում է, բերանից դուրս թափում ջուրը։

— Ակսինյա, սա՞ղ ես։

— Հլա դեռ սաղ եմ։

— Ոնց որ թե անձրևը կտրվում է, հը՞։

— Մանրը կկտրվի, ամա խոշորը կկսվի։

— Կամաց խոսա։ Հերրս կլսի, կհերսոտի։

— Հա՛, էլի՛, իբր թե հորիցդ վախեցա՞ր...

Մի բոպե լուռ քաշում են ուռկանը։ Ջուրը ոնց որ կրպչուն խմոր լինի, գժվարացնում է ամեն մի շարժումը։

— Գրիշա, հրե՛ն ափին ասես քոթուկ կա։ Թողը գցենք դրա տակը։

Սարսափելի մի ցնցում գեն է շպրտում Գրիգորիին։ Դղրդալի շրմփոց, ասես զառիթափից մի ահագին կտոր պոկվեց ու փուլ եկավ ջրի մեջ։

— Ա՛-ա-ա-ա՛,— ինչ-որ մի տեղից, եղերքին մոտիկ ճչում է Ակսինյան։

Թունդ վախեցած Գրիգորին ջրի երեսն է ելնում, լողում է այդ կողմը։

— Ակսի՛նյա։

Քամի, ջրի ուժգին աղմուկ։

— Ակսի՛նյա,— վախից սառույց կտրած՝ բղավում է Գրիգորին։

— Է-հե՛յ, Գը-րի-գորի՛-ի,— հեռվից գալիս է հոր խուլ ձայնը։

Գրիգորին լողում է թափով։ Ոտների տակ՝ ինչ-որ կրպչուն մի բան. ձեռքով վերցրեց՝ ուռկանն էր։

— Գրի՛շա, ո՞ւրտեղ ես, է՛...— լսվում է Ակսինյայի լացակումած ձայնը։

— Բա ինչո՞ւ ձեն չես տալի, հը՞...— բարկացկոտ գոռում է Գրիգորին՝ չորեքթաթ դուրս գալով ափը։

Պզզելով ու դողդողալով, բաց են անում գնդաձև խճճված ուռկանը։ Պատռված ամպի տակից դուրս է գալի լուսինը։ Մարգագետնից դենը խուլ մռթմռթում է որոտը։ Գետնի վրա պսպղում են չներծծված ջրերը։ Անձրևի լվացած երկինքը հանդարտ է ու պայծառ։

Բաց անելով ուռկանը, Գրիգորին նայում է Ակսինյա-

յին։ Վերջինիս դեմքը կավճի պես դժգույն է, բայց կարմիր, մի փոքր շուռ եկած շուրթերն արդեն ծիծաղում են։

— Հենց որ ջուրն ինձ գցեց ափը,— շունչ առնելով պատմում է նա,—խելքս թռցրի։ Քիչ մնաց մեռնեի վախից։ Կարծում էի, թե դու խեղդվեցիր։

Նրանց ձեռքերն իրար են հպվում։ Ակսինյան փորձում է ձեռքը դնել Գրիգորիի թևքի մեջ։

— Ինչքա՜ն տաք է թևքիդ մեջ,— լալագին ասում է նա,— ես ուղղակի սառել եմ։ Ջանս ծակծկվում է։

— Ա՛յ թե ինչ տեղն է ճղել այդ անիծված լոքո ձուկը։

Գրիգորին ցույց է տալիս մեկուկես արշին լայնությամբ պատռվածքը ուռկանի մեջտեղում։

Ցամաքալեզվից վազեվազ գալիս է մեկը։ Գրիգորին տեսնում է, որ դա Դունյաշկան է։ Դեռ հեռվից բղավում է.

— Թելը քեզ մո՞տ է։

— Այստեղ է։

Դունյաշկան վազեվազ, հևիհև մոտ է գալիս։

— Դուք ինչո՞ւ եք նստել այստեղ։ Ապին ասավ, որ շուտ գնաք նրա մոտ։ Մենք մի պարկ ստեղծետ ենք բռնել։— Դունյաշկայի ձայնը չթաքցրած ցնծություն է արտահայտում։

Ակսինյան դողալուց ատամները չկշկացնելով՝ կարում է ուռկանի պատռվածքը։ Տաքանալու համար նրանք վազելով են գնում դեպի ցամաքալեզվակը։

Պանտելեյ Պրակոֆիևիչը թութուն է փաթաթում ճաքճքած ու ջրահեղձի մատների պես ուռած մատներով, վեր-վեր թուչելով՝ պարծենում է.

— Մի անգամ թոռը գցեցինք, դուրս եկավ ութ հատ, մյուս անգամ...— Նա կանգ է առնում, կպցնում ծխախոտը ու ոտով լուռ ցույց է տալիս պարկը։

Ակսինյան հետաքրքրությամբ նայում է պարկի մեջ։ Այնտեղից կրճտոց է լսվում. դեռ թպրտում են կենդանի ձկները։

— Բա դուք ինչո՞ւ կտրվեցիք մեզանից։

— Լոքոն ճղել էր թոռը։

— Կարեցի՞ք։

— Մի կերպ կպցրինք ճղված տեղերը...

— Դեհ, մինչև ծնկներս մտնենք ջուրը ու հետո տուն գընանք։ Սկսիր, Գրիշկա, ի՞նչ ես շշկլվել։

Գրիգորին ջուրն է մտնում փայտացած ոտներով։ Ակսինյան այնպես է դողում, որ Գրիգորին նրա դողը զգում է ուռկանի միջով։

— Մի՛ դողա։

— Չէի դողա, ամա հալ չկա։

— Արի՛, գիտես ինչ... արի դուրս գանք ջրից, ջհանամը գնա այս ձուկը։

Մի խոշոր ծածան ձուկ շփշփալով անցնում է ուռկանի վրայից։ Գրիգորին քայլերն արագացնելով, ծռում է ուռկանը, քաշում կոթից. Ակսինյան կռացած աճապարում է դեպի ափը։ Ավազի վրա շրշում է ետ վազող ջուրը, թպրտում է ձուկը։

— Գետառո՞վ ենք գնալու։

— Անտառով ավելի մոտիկ է։ Է՛յ, գալի՞ս եք թե ոնց։

— Գնացեք, կհասնենք։ Թոռը պիտի լվանանք։

Ակսինյան երեսը կնճռոտելով քամեց շրջազգեստը, շալակեց ձկներով լեցուն պարկը, համարյա վազեվազ, գնաց ցամաքաշերտով։ Գրիգորին ուռկանն էր տանում։ Անցան մի հարյուր սաժեն, Ակսինյան տնքաց.

— Էլ հալ չմնաց, ոտներս փետացել են։

— Հրես, անցյալ տարվա խոտի դեզը։ Գուցե կտաքանա՞ս։

— Բա ինչ։ Թե չէ մինչև տուն հասնես, կմեռնես։

Գրիգորին դեզի գլուխը շուռ տվեց կողքի, փոս բաց արեց։ Երկար պառկած խոտը տաք նեխահոտ արձակեց։

— Մտի՛ր մեջտեղը։ Այստեղ տաք է ոնց որ վառարանի վրա։

Ակսինյան պարկը գցելով՝ մինչև վիզը թաղվեց խոտի մեջ։

— Օ՜յ, ինչ լա՜վ է։

Ցրտից դողդողալով, Գրիգորին թիկնեց նրա կողքին։ Ակսինյայի թաց մազերից քնքուշ, հուզիչ բույր էր հոսում։ Նա պառկել էր գլուխը ետ գցած, համաչափ շնչում էր կիսաբաց բերանով։

— Քո մազերից փշախնձորի հոտ է գալիս։ Գիտե՛ս, դա

ճերմակ ծաղիկ է...— գլուխը մոտեցնելով շշնջաց Գրիգորին։

Ակսինյան լուռ էր։ Մշուշոտ ու հեռու էր նրա նայվածքը, ուղղված էր դեպի ոսկեպայծառ կիսալուսինը։

Գրիգորին, ձեռքը գրպանից հանելով, նրա գլուխը հանկարծակի քաշեց դեպի իրեն։ Ակսինյան կտրուկ կերպով պոկ եկավ, մի քիչ բարձրացավ տեղից։

— Թո՛ղ։

— Սո՛ւս արա։

— Թո՛ղ, թե չէ կբղավեմ։

— Կա՛ց, է՛, Ակսինյա...

— Պանտելե՛յ քեռի՛...

— Հը՛, ճամփեդ կորցրե՞լ ես,— բոլշևիկին մոտիկ տեղից, մլենու մացառուտից արձագանքեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Գրիգորին, ատամները սեղմելով, դուրս թռավ տեղից։

— Ինչո՞ւ ես բղավում, ճամփեդ կորցրել ես, հա՞,— մոտ գալով՝ էլի հարցրեց ծերուկը։

Ակսինյան կանգնել էր դեղի կողքին, ուղղում էր ծոծրակին ընկած գլխաշորը, նրանից գոլորշի էր բարձրանում։

— Ճամփես չեմ կորցրել, ամա քիչ մնաց սառչեի։

— Փիա՛, կնիկ ես, էլի՛, հրես խոտաղեզը։ Տաքացիր։

Ակսինյան ժպտաց, կռացավ պարկը վերցնելու։

V

Մինչև Սետրակով խուտորը,— ճամբարային հավաքի վայրը,— վաթսուն վերստ էր։ Պետրո Մելեխովը և Ստեփան Աստախովը մի բրիչկայով էին գնում։ Նրանց հետ էին էլի երեք կազակներ նույն խուտորից. Ֆեդոտ Բոդովսկովը,— ջահել, կալմիկանման ու չեչոտ մի կազակ, լեյբ-գվարդիայի[1] Ատամանյան գնդի երկրորդ հերթի զինվոր Խրիստանֆ Տոկինը, Խրիստոնյա մականունով, ու հրետանավոր Իվան Տամիլինը, որ մեկնելու էր Պերսիանովկա։ Հենց առաջին

1 Լեյբ-գվարդիա — զորամասեր, որոնք ապահովում են պետության բարձրագույն իշխանավորի անձնական պահպանությունը (ցարական Ռուսաստանում՝ ցարի պահպանությունը)։

կերը տալուց հետո բրիչկային լծեցին Խրիստոնյայի ցածրիկ ու Աստախովի սևաթույր ձին։ Մնացած երեք ձիերը թամբած գնում էին ետևից։ Բրիչկան քշում էր հաղթանդամ և, ինչպես բոլոր ատամանցիները, մասխարա Խրիստոնյան։ Մեջքը անիվի պես կորացրած, նստել էր նա առջևում, փակել լույսի ճանապարհը դեպի բուդկան, վախեցնում էր ձիերին իր դմբդմբան, բաս ձայնով։ Բրիչկայի մեջ, որի վրա նոր բրեզենտ էր քաշած, պառկել ու ծխում էին Պետրո Մելեխովը, Ստեփանը և հրետանավոր Տամիլինը։ Ֆեդոտ Բոդովսկովը քայլում էր ետևից. երևում էր, որ նրա համար ծանր չէր իր ծուռտիկ, կալմիկական ոտները խոթել ճանապարհի փոշու մեջ։

Խրիստոնյայի բրիչկան առջևից էր գնում։ Ետևից գնում էին էլի յոթ թե՝ ութ բրիչկաներ, որոնց կապված էին թամբած կամ չթամբած ձիեր։

Քրքիջը, աղաղակները, ծոր տվող երգերը, ձիերի փընչոցը, դատարկ ասպանդակների ճնկճնկոցը բռնել էին ճանապարհը։

Պետրոյի գլխի տակ դրված է պաքսիմատով լեցուն պարկը։ Պառկել է Պետրոն ու ոլորում է դեղին, երկար բեղերը։

— Ստեփա՛ն։

— Ի՞նչ։

— Ջոոը քո պինչ... Արի զինվորի երգ ղլենք։

— Շատ շոգ է։ Բուկս էլ չորացել է։

— Մոտիկ խուտորներում ոպանդոկ չկա, հույսդ կտրի...

— Է՛հ, սկսիր։ Ամա դու ուստա չե՞ս, է՛։ Օ՜, ձեր Գրիշկան ա՛մա մղմղացնում է, հա՞-ա։ Ձենը հո ձեն չի, արծաթի զրնգոց է։ Ես ու նա ո՞նց էինք կլկլացնում երգ ու պարի տեղում։

Ստեփանը ետ է գցում գլուխը, հազում-մաքրում է կոկորդը, սկսում ցածր, հնչեղ ձայնով.

Օ՜, ալ-ալման լուսածաղ,
Ինչքա՞ն դու շուտ բացվեցիր...

Տամիլինը կնկա պես ձեռքը դնում է թշին, երգում բարակ, լալկան ձայնով։ Պետրոն ժպտալով, բեղի ծայրը բե-

քանն առած, նայում է, թե լայնակուրծք հրետանավորի քունքերի վրա ինչպես են լարվածությունից կապտում չլերի կծիկները։

Ջահել մի կնիկ ուշ ժամին
Գնաց գետակը՝ ջրի...

Ստեփանը պառկել է գլուխը Խրիստոնյայի կողմը, շուռ է գալիս ձեռքին հենվելով. պիրկ, գեղեցիկ պարանոցը վարդի պես կարմրին է տալիս։

— Խրիստո՛նյա, օգնի՛ր, է՛։

Գլխի ընկավ մի տղա,
Նլավ, թամբեց իրեն ձին...

Ստեփանը լայն բացած իր աչքերի ժպտուն նայվածքը ուղղում է դեպի Պետրոն, ու վերջինս, բեղի ծայրը բերանից հանելով, իր ձայնը միացնում է երգին։

Խրիստոնյան անչափ փարթամ բեղ ու մորուքի մեջ կորած բերանը բանալով, բղավում է, ցնցում բուդկայի բրեզենտե ծածկոցը։

Թամբեց իրին սևուկ ձին,
Հասավ ջահել այն հարսին...

Խրիստոնյան իր ահագին, մերկ ոտնաթաթը կողքի է դնում, սպասում, որ Ստեփանը նորից սկսի երգը։ Վերջինս աչքերը գոցելով,— քրտնած դեմքը ստվերի մեջ,— եռանդով սկսում է երգը, մերթ ձայնը իջեցնում մինչև շշունջ, մերթ բարձրացնում մինչև մետաղի զրնգոցը։

Թո՛ղ մի ջրեմ, թո՛ղ, ա՛յ հարս,
Ջրեմ իմ ձին գետակում...

Ու Խրիստոնյան նորից իր բամբ ձայնով, որ ասես ահագանգ լինի, խլացնում է մյուս ձայները։ Երգին միանում են նաև հարևան բրիչկաներից լսվող ձայները։ Գոգոում են անիվները երկաթե հեցերով, փոշուց փոշտում են ձիերը, ճամփովը մեկ հեղվում է երգը ծորուն և հուժկու, ինչպես վաթարած ջուր։ Տափաստանի չորացող մի ճահճուտից, զարշնագույն, խանձված բոշխից վեր է թռչում ճերմակաթև

մի կիվիվ։ Նա ճռվողելով թռչում է դեպի հովիտը. գլուխը շուռ տված, զմրուխտե աչիկով նայում է սայլերի շղթային, որոնք սպիտակ ծածկոց ունեն, ձիերին, որոնք իրենց սմբակներով գանգրացնում են իր համար ախորժելի փոշին, ճանապարհի կողքից քայլող մարդկանց՝ սպիտակ, փոշոտված շապիկներով։ Կիվիվը ընկնում է հովիտը, սև կուրծքը խփում չորացող, գազանների ճխլտած խոտին, ու չի տեսնում, թե ճանապարհի վրա ինչ է կատարվում։ Իսկ ճանապարհին դարձյալ գոգոում են բրիչկաները, դարձյալ դրժկամորեն քայլում են թամքերի տակ քրտնած ձիերը. սպիտակ շապիկներ հագած կազակները իրենց բրիչկաներից արագ վազում են դեպի առջևի բրիչկան, խմբվում են դրա շուրջը, թուլանում ծիծաղից։

Ստեփանն ամբողջ հասակով մեկ կանգնել է բրիչկայի վրա, մի ձեռքով կառչել բուդկայի բրեզենտե ծածկոցին, մյուսը թափահարում է արագ, ու շուտասելուկով, կարկտի պես վրա է տալի.

Մի՛ նստիր դու իմ կողքին,
Մի՛ նստիր դու իմ կողքին,
Մարդիկ կասեն՝ սիրում ես ինձ,
Սիրում ես ինձ,
Մոտս ես գալի,
Սիրում ես ինձ,
Մոտս ես գալի,
Ես հասարակ տոհմից չեմ...

Տասնյակ կոշտ ձայներ հապճեպ վրա են տալի, ասես երգը փռում են ճամփի փոշու վրա՝

Ես հասարակ տոհմից չեմ,
Տոհմից չեմ,
Ես հին տոհմից,
Ես հին տոհմից եմ,
Ո՛չ հասարակ,
Իշխանորդուն եմ սիրում...

Թեոդոտ Բոդովնկովը սուլում է. ձիերը կքվում, նորից առաջ են նետվում. Պետրոն գլուխը բուդկայից հանելով, ծիծաղում է, թափահարում գլխարկը. Ստեփանը փայլունկուրացուցիչ քմծիծաղը դեմքին, շարաճճիորեն խաղացնում

է ուսերը. ճանապարհով մեկ շարժվում է փոշու մեզը։ Խրիստոնյան երկար շապկով, առանց գոտու, փրշոտ մազերով, քրտինքի մեջ կորած, պպզապար է գալի, պտտվում թափանիվի պես, հոնքերը կիտելով ու տնքալով՝ կազակապար է խաղում, ու փափլիկ, գորշ փոշու վրա մնում են նրա բոբիկ ոտների ահագին, անճոռնի հետքերը։

VI

Ավազոտ, լերկ ու մերկ կատարով ու լայնալանջ մի կուրգանի մոտ կանգ առան գիշերելու։

Արևմուտքից մի ամպ էր գալիս։ Նրա սև թևից անձրև էր տեղում։ Ձիերը շրեցին լճակից։ Ամբարտակի վրա քամուց կռանում էին մելամաղձիկ ուռիները։ Կայծակը ծռմռվելով անդրադառնում էր ջրի մեջ, որ ծածկված էր անշարժ կանաչով ու մանրիկ կոհակների թեփուկով։ Հողմը ժլատորեն փշրում էր անձրևի կաթիլները, ասես ողորմություն էր նետում երկրի սև ափերի մեջ։

Կապանները ոտներին գցած՝ ձիերին բաց թողին արածելու, երեք հոգու էլ պահակներ նշանակեցին։ Մնացածները կրակ էին վառում, կաթսաները կախում բրիչկաների առեղներից։

Խրիստոնյան կաշա էր եփում, խառնում գդալով ու պատմում շուրջը նստած կազակներին.

— ...Կուրգանը, ուրեմս, բարձր էր, ոնց որ այս կուրգանը։ Ես էլ ասում եմ ողորմած հոգի հորրս. «էհ, ո՞նց, ատամանը հո մեզ չի՞ վնասի, որ մենք, ուրեմս, առանց որևէ թույլտվության սկսենք քարուքանդ անել կուրգանը»։

— Ինչի՞ մասին է սա փշում,— հարցրեց ձիերի մոտից վերադարձած Ստեփանը։

— Պատմում եմ, թե ոնց էինք գանձ ման գալի ես ու ողորմած հոգի հորրս, երկնային արքայությո՛ւն նրան։

— Այդ ո՞րտեղ էիք ման գալի։

— Դա, աղբորս ասեմ, հենց Ֆեոֆանով ձորից դենն էր։ Հա՛, դու գիտես. է՛, Մերկուլով կուրգանն էր...

— Լավ, հետո՞...— Ստեփանը պպզեց, գլուխը դրեց ձեռքի վրա։ Շրթունքները ճպճպացնելով՝ երկար վառում էր ծխախոտը, ափի մեջ գլորում կրակի կտորը։

— Հա, ուրեմս, հորրս ասում է՝ «Խրիստիան, արի քանդենք Մերկուլով կուրգանը»։ Պապիցս նա լսել էր, թե դրա տակին գանձ է պահված։ Դեհ, գանձն էլ, ուրեմս, հո ամեն մարդու ձեռքը չի՞ ընկնի։ Հորրս աստծուն խոստանում էր՝ թե կտաս գանձը, մի լավ ժամ կշինեմ։ Մենք էլ որոշեցինք ման գալ ու գնացինք այնտեղ։ Դե՛հ, հողը ստանիցային էր, հակառակել կարող էր միայն ատամանը։ Իրիկունը տեղ հասնում։ Ապատեցինք մինչև մութն ընկնի, յաբուի ոտք, ուրեմս, կապեցինք, մենք էլ բահերը ձեռներս եկանք կուրգանի գլուխը։ Սկսեցինք քանդել հենց կարկաչից։ Երկու արշին փոս փորեցինք, հողն էլ քարոտ էր, ժամանակով պնդացած։ Ես կորա քրտնքի մեջ։ Հորրս հա՛ աղոթք է փրսփրսում, խսկ իմ փորը, աղբորս ասեմ, թունդ ղողռում է... Գիտե՛ք, էլի, թե ամառ ժամանակ, ուրեմս, ինչ է մեր կերած-խմածը. մածուն ու կվաս, էլի՛... Մեկ էլ տեսար բռնեց փորիցդ, աչքդ մթնեց — ու պրծա՛վ։ Ողորմածիկ հորրս, ողորմի իր հոգուն, ասում է. «Թո՛ւ,— ասում է,— ինչ մունտրուիկն ես եղել, Խրիստիան։ Ես աղոթք եմ ասում, իսկ դու չես կարողանում կերածդ պահես, շունչդ կտրվեց ինչ է։ Հա՛յդա,— ասում է,— իջիր կուրգանից, ես քո... թե չէ գլուխդ կթոցնեմ բահով։ Մունտրիկ, քո երեսից, գանձը կարող է գետնի տակն անցնել»։ Ես պառկեցի կուրգանի տակին, փորս հա ցավում է, ծակվում, իսկ ողորմած հոգի հորրս,— ամա՛ թե առողջ էր գրողի տարածը, հա՛-ա,— փորում է մենակ։ Փորում է, փորում, հասնում է մի սալքարի։ Կանչում է ինձ։ Ես էլ, ուրեմս, լոմը ճխտեցի դրա տակը, բարձրացրի սալը... կհավատա՞ք, աղբերտանցս ասեմ, լուսնյակ գիշեր էր, իսկ սալի տակին փայլում էր գանձը...

— Ամա թե փշում ես, հա՛-ա, Խրիստոնյա,— էլ չհամբերելով՝ ասաց Պետրոն, որ ժպտում էր ու տնտղում բեղը։

— Ո՞նց թե «փշում ես», տա՛զ արա դու էլ, է՛,— Խրիստոնյան վեր քաշեց լայն-լայն շալվարը ու նայեց ունկնդիրներին։— Չէ, ուրեմս, չեմ փշում։ Աստված վկա ասածս դրուստ է։

— Դեհ, կարճ կտրի, տեսնենք։

— Հա, աղբորս ասեմ, փայլում է ու փայլում։ Մտիկ եմ տալի, դա, ուրեմս, վառած ածուխ է, մի քառասուն արշին կլիներ։ Հերրս ասում է՝ «Մտիր, Խրիստիան, դուրս տուր այդ»։ Մտա։ Վեր էի գցում ու գցում այդ անպետք բանը, մինչև լույս հլա դեռ կար։ Առավոտյան, ուրեմս, մտիկ եմ անում՝ նա է, հենց նա է որ կա։

— Ո՞վ,— հետաքրքրվեց ձիու տապճակի վրա պառկած Տամիլինը։

— Ատամանը, էլ ո՞վ պիտի լիներ։ Գալիս է կառքով. «Հը՛, այս ո՞վ է թույլ տվել, այսպես, այնպես»։ Ձեն չենք հանում։ Նա, ուրեմս, մեզ հա՛փ, ու հա՛յդա դեպի ստանիցան։ Հերու չէ մեկել տարի կանչեցին Կամենսկայա, որ դատեն, հերրս էլ խելք արավ — մեռավ։ Թղթի միջին գրեցին, թե նա կենդանի չէ։

Խրիստոնյան կրակից վերցրեց գոլորշի արձակող կաշայով լիքը կաթսան, գնաց դեպի սայլը՝ գդալներ բերելու։

— Բա այդ ո՞նց բան է. հերրդ խոսք էր տվել ժամ շինել, ու չշինեց,— հարցրեց Ստեփանը՝ երբ Խրիստոնյան վերադարձավ գդալներով։

— Սարսաղ ես դու, Ստյոպա, ո՞նց, ուրեմս նա պետք է ածուխո՞վ շիներ։

— Որ խոսք էր տվել, ուրեմս պետք է շիներ։

— Ածուխի մասին իսկի խոսք է՛լ չէր եղել, իսկ գանձը...

Քրքիջից դողաց կրակը։ Խրիստոնյան գզգզված գլուխը բարձրացրեց կաթսայից ու չհասկանալով բանի էությունը, իր հաստ, դմբդմբալի ձայնով խլացրեց մնացածների ձայները։

VII

Ակսինյային Ստեփանի հետ ամուսնացրին, երբ նա տասնյոթ տարեկան էր։ Նրան բերին Դուբրովկա խուտորից. Դոնի մյուս կողմից, ավազոտ վայրերից։

Ամուսնանալուց մի տարի առաջ, աշնանը, նա վար էր անում տափաստանում, խուտորից մի ութ վերստ հեռու։ Գիշերը նրա հայրը՝ հիսուն տարեկան մի ծերունի, ձիու

ոտների կապով կապեց նրա ձեռները ու բռնաբարեց նրան։

— Կսպանեմ, եթե ծպտուն հանես, իսկ եթե լռես, քեզ համար կառնեմ մախմուր կոֆտա, գետրի ու կալոշ։ Այդպես էլ միտդ պահիր. կսպանեմ, եթե բան ասես...—խոստացավ հայրը աղջկան։

Գիշերը միմիայն պատառոտված շապկով Ակսինյան վազեվազ հասավ խուտոր։ Ընկնելով մոր ոտները, հեկեկանքներից խեղդվելով պատմում էր... Մայրը ու մեծ եղբայրը. որ Ատամանային գնդի զինվոր էր և հենց նոր էր վերադարձել ծառայությունից, ձիերը լծեցին բրիչկային, իրենց հետ նստեցրին Ակսինյային ու գնացին այնտեղ, հոր մոտ։ Ութ վերստ ճանապարհին եղբայրը քիչ մնաց ուժասպառ աներ ձիերը։ Հորը գտան քողտիկի մոտ։ Հարբած վիճակում նա քնել էր գետնին փռած կապայի վրա, կողքին ընկած էր օղու դատարկ մի շիշ։ Ակսինյայի աչքերի առաջ եղբայրը բրիչկայից անջատեց լծաձողը, ոտներով զարթնեցրեց քնած հորը, ինչ-որ կարճ հարց տվեց նրան ու երկաթած լծաձողով խփեց ծերուկի հենց քթարմատին։ Մոր հետ մեկ ու կես ժամ ծեծեցին նրան։ Միշտ խոնարհ, զառամյալ մայրը կատաղաբար քաշքշում էր ուշագնաց ամուսնու գլխի մազերը, եղբայրն էլ հարվածում էր ոտներով։ Ակսինյան գլուխը փաթաթած, լուռ պառկել էր բրիչկայի տակ ու դողում էր... Լուսաբացից առաջ ծերուկին տուն բերին։ Նա աղեկտուր գոռում էր, աչք ածում օթախովը մեկ՝ որոնելով թաքնված Ակսինյային։ Ծերուկի կտրված ականջից արյուն ու թարախ էր կաթում բարձի վրա։ Երեկոյան նա մեռավ։ Մարդկանց ասացին, թե նա հարբած ընկել էր սայլից ու մեռել։

Իսկ մի տարուց հետո զարդարուն բրիչկայով խնամախոսներ եկան Ակսինյային ուզելու։ Բարձրահասակ, պիրկ վզով ու վայելչակազմ Ստեփանը դուր եկավ հարսնացուին, հարսանիքը նշանակեցին աշնան ուտիսին։ Եկավ նախաձմեռային, ցուրտ և ուրախ սառցազրնգոցով մի օր, պսակեցին հարս ու փեսային. այդ ժամանակից էլ Ակսինյան ապրում էր Աստախովների տանը իբրև դեռահաս տնտեսուհի։ Կեսուրը, որը կանացի ինչ-որ դաժան հիվանդությունից կորացած, բոյով մի պառավ էր. քեֆից հետո հենց մյուս օրը

վաղ արթնացրեց Ակսինյային, տարավ խոհանոց ու անսպասակ մի տեղից մի այլ տեղ դնելով վառարանի մեջ ամաններ դնելու ակիշը, ասաց.

— Ա՛յ թե ինչ, անուշիկ հարսիկս, մենք քեզ քեֆ քաշելու և պառկելու համար չենք բերել։ Դնա կովերը կթիր, հետո էլ կանգնիր վառարանի առաջ՝ եփել-թափելու համար։ Ես պառավ եմ, տկարությունից չեմ կարենում մի գործ անեմ, իսկ տնտեսությունը դու վերցրու քո ձեռքը, դա քո վրա է ընկնում։

Հենց այդ օրն էլ Ստեփանը ամբարում դիտավորյալ կերպով ու սարսափելի ծեծեց իր դեռատի կնկանը։ Խփում էր նրա փորին, կրծքին, մեջքին, խփում էր այն հաշվով, որ մարդիկ չտեսնեն։ Այդ ժամանակից նա դես ու դեն էր ընկնում, ժամանակ էր անցկացնում թեթևաբարո կանանց հետ, համարյա ամեն գիշեր գնում էր տնից՝ Ակսինյային փակելով ամբարում կամ օթախում։

Մեկուկես տարի նա Ակսինյային չէր ներում վիրավորանքը, մինչև որ երեխա ծնվեց։ Դրանից հետո մեղմացավ, բայց փայփայանքների մեջ ժլատ էր ու առաջվա պես հազվադեպ էր գիշերում տանը։

Ակսինյան թաղվեց բազմաթիվ անասուններ ունեցող մեծ տնտեսության աշխատանքի մեջ։ Ստեփանը ծուլություն էր անում. քյաքուլը սանրելով, գնում էր ընկերների մոտ ծխելու, թուղթ խաղալու, դատարկաբանելու խուտորի նորությունների մասին, իսկ անասնանոցի մաքրելը ընկնում էր Ակսինյայի վրա, տնտեսության գործերը՝ նույնպես։ Կեսուրը նրան լավ չէր օգնում։ Մի քիչ դես-դեն ընկնելով, փռվում էր մահճակալի վրա, ու դժգույն, դեղնած շրթունքներն իրար սեղմելով, ցավից պլշած, սարսափահար աչքերը ուղղելով առաստաղին, տնքում էր, գունդ ու կծիկ լինում։ Այդպիսի բոպեներին առատ, գարշահոտ քրտինք էր դուրս գալիս նրա երեսին, որ բծավորված էր սև, այլանդակորեն խոշոր խալերով։ Աչքերի մեջ հավաքվում և հաճախ իրար ետևից կաթում էին արցունքները։ Ակսինյան թողնելով աշխատանքը, քաշվում էր մի որևէ անկյուն և ահով ու կարեկցությամբ նայում կեսուրի դեմքին։

Մեկուկես տարուց հետո պառավը մեռավ։ Առավոտյան Ակսինյայի ցավը բռնեց, իսկ կեսօրին, երեխայի աշխարհ գալուց մի ժամ առաջ կեսուրը մեռավ ոտի վրա, հին ախոռի դռան մոտ։ Տատմերը դուրս վազեց տնից, հարբած Ստեփանին նախազգուշացնելու, որ չգնա ծննդկանի մոտ, տեսավ Ակսինյայի կեսուրին, որ ընկել էր ոտներն իրեն քաշած։ Երեխայի ծնվելուց հետո Ակսինյան կապվեց ամուսնուն, բայց սիրո զգացմունք չէր տածում նրան, իր մեջ կար միայն կանացի դառն խղճահարություն և սոսկ ամուսնական սովորությունը կատարելու պատրաստակամություն։ Երեխան մեռավ դեռ մի տարեկան էլ չդարձած։ Սկսվեց հին կյանքը։ Ու երբ Գրիշկա Մելեխովը, խաղ անելով, կանգնեց Ակսինյայի ճանապարհին, վերջինս սարսափով տեսավ, որ գրավվում է այդ սև, փաղաքուշ տղայով։ Գրիշկան համառորեն, ցուլի հաստատակամությամբ հետևում էր նրան։ Ու հենց այդ համառությունն էլ սարսափելի էր Ակսինյայի համար։ Նա տեսնում էր, որ Գրիշկան չի վախենում Ստեփանից, ներքուստ զգում էր, որ Գրիշկան ձեռ չի քաշելու իրենից, ու մտքում այդ չցանկանալով, դիմադրում էր բոլոր ուժերով, նկատում էր, որ ինքը սկսել էր տոներին և լի օրերին խնամքով զուգվել, ու ինքն իրեն խաբելով, առիթ էր փնտրում ավելի հաճախ երևալ Գրիշկայի աչքին։ Ակսինյան ջերմություն ու հաճույք էր զգում, երբ Գրիշկայի սև աչքերը համառորեն ու մոլեգնաբար փաղաքշում էին իրեն։ Արշալույսին արթնանալով կովերը կթելու, Ակսինյան ժրպտում էր ու դեռ չգիտակցելով, թե ինչից է այդ, մտածում էր. «Այսօր մի ուրախալի բան կլինի։ Բայց ի՞նչ։ Գրիգորին... Գրիշան...» Այդ նոր, իրեն ամբողջովին համակած զգացումը վախեցնում էր նրան, և նա իր մտքերի մեջ քայլում էր խարխափելով, զգուշությամբ, ինչպես մարտին ծակոտկեն սառույցով պատած Դոնի վրայով։

Ստեփանին ճանապարհելով ճամբարները, որոշեց ինչքան կարելի է ուշ-ուշ հանդիպել Գրիշկային։ Ուրկանով ձուկ որսալուց հետո նրա մեջ այդ որոշումը էլ ավելի հաստատուն դարձավ։

VIII

Հոգեգալստից երկու օր առաջ խուտորցիները բաժանեցին մարգագետինը։ Բաժանմանը մասնակցելու համար գնացել էր Պանտելեյ Պրակոֆևիչը։ Այնտեղից վերադարձավ ճաշին, տնքալով հանեց քոշերը ու հաճույքամբ քորելով քայլելուց հոգնած ոտները, ասաց.

— Մեզ ընկավ Կարմիր զառիթափի մոտ եղած մասը։ Խոտը այնքան էլ հո լավ չի։ Վերևի ծայրը մինչև անտառն է հասնում, տեղ-տեղ իսկի բան էլ չի բուսնում։ Տեղ-տեղ էլ քոլ ու մոլ է։

— Բա ե՞րբ պիտի հնձենք,— հարցրեց Գրիգորին։

— Տոն օրերից մի օր։

— Դարյային պիտի տանե՞ք թե ոնց,— թթու դեմք ընդունեց պառավը։

Պանտելեյ Պրակոֆևիչը ձեռքով արավ,— այսինքն թե «ասկվիր, էլի»։

— Որ կարիք լինի, կտանենք։ Հա՛ց գցիր, է՛, ի՛նչ ես բերանդ բաց կանգնել։

Պառավը շրխկոցով բացեց վառարանի խուփը, այնտեղից դուրս քաշեց տաքացած շչին։ Ճաշելիս Պանտելեյ Պրակոֆևիչը երկար պատմում էր բաժանման և ժուլիկ-մուլիկ ատամանի մասին, որը քիչ էր մնում խաբեր բոլոր հավաքվածներին։

— Նա այն տարի էլ խառնակչություն գցեց,— մեջ մտավ Դարյան,— երբ կտրում էին հողամասերը, նա Մալաշկա Ֆրոլովային համոզում էր, թե պետք է վիճակ գցել։

— Վաղուցվա լիրբն է, էլի՛,— ծամելով վրա բերեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Ապի, բա ո՞վ պիտի փոցխի ու հավաքի,— երկչոտ հարցրեց Դունյաշան։

— Բա դու ինչացո՞ւ ես։

— Մենակ ես ո՞նց կարամ, ապի։

— Կկանչենք Ակսյուտկա Աստախովային։ Ստեփանը այս երկու օրս խնդրել էր, որ իր հունձն աննենք։ Պետք է հարգել։

Հետևյալ օրվա առավոտյան Միտկա Կորշունովը ճամբած, սպիտակատ մի ձիով մոտեցավ Մելեխովների բակին։ Անձրև էր կաթում։ Մեգ-մառախուղ էր կախվել խուտորի վրա։ Թամքի վրայից ծովելով, Միտկան բացեց բակի դուռը, մտավ բակը։ Տան մուտքի սանդուղքից պառավը ձայն տվեց նրան։

— Հը՛, գժի մեկը, ինչի՞ եկար,— հարցրեց նա ակնհայտ դժգոհությամբ։ Պառավը չէր սիրում հանդուգն ու կրովարար Միտկային։

— Ախր ի՞նչ ես ուզում ինձնից, Իլյինիչնա,— զարմացավ Միտկան, ձին կապելով բազրիքին։— Ես Գրիշկայի մոտ եմ եկել։ Ո՞րտեղ է նա։

— Քնել է չարդախի տակ։ Ա՛յ գլուխդ չմեռնի, այդ ի՞նչ է, ցավը բռնե՞լ է քեզ, հա՞։ Ուրեմս ոտով ման գալ չե՞ս կարենում։

— Ա՛յ մոքիր, ամեն բանի պոչից պիտի բռնե՞ս, հա,— նեղացավ Միտկան։ Շորորալով, շքեղ մտրակը շրխկալի խփելով լաքած կոշիկների ճիտքերին, նա գնաց մտավ չարդախի տակ։ Գրիգորին քնած էր քարշակից հանված սայլի վրա։ Միտկան ձախ աչքը կկոցած, ասես նշան բռնած, մտրակով բոթեց Գրիգորիին։

— Վե՛ր կաց, մուժիկ։

«Մուժիկը» Միտկայի համար ամենահայհոյական բառն էր։ Գրիգորին ձգվեց ղսպանակի նման։

— Հը՛, ի՞նչ կա։

— Հերի՛ք քնես, է՛է՛։

— Սարսաղություն մի՛ անի, Միտրի, թե չէ հերսս կգա...

— Վեր կաց, գործ կա։

— Ի՞նչ գործ։

Միտկան նստեց սայլի եզրաձողին, սկսեց մտրակով քերել կոշիկին կպած ցեխը ու ասաց.

— Ինձ համար, Գրիշկա, վիրավորական է...

— Ի՞նչը։

— Բա ո՞նց,— Միտկան մի լավ հայհոյանք թափեց,— նա, այդ հարյուրապետը[1] շատ է գոռոզանում։

Նա հուզվելով, ատամներն իրար սեղմելով, արագ-արագ

[1] Կազակական աստիճան, որ ցարական բանակի պորուչիկի աստիճանին է հավասար։

խոսում էր, ոտները դողում էին։ Գրիգորին բարձրացավ տեղից։

— Ի՞նչ հարյուրապետ։

Բռնելով նրա շապկի թևից, Միտկան արդեն ավելի մեղմ ասաց.

— Հիմի ձիդ թամքիր ու վազ տանք գետառ։ Ես նրան, ցո՛ւյց կտամ։ Ես նրան այդպես էլ ասացի. «Արի՛ փորձենք, ձերդ բարեծննդություն»։ «Բեր, ասում է, բոլոր ընկեր-բարեկամներիդ, ես բոլորիդ էլ կհաղթեմ, որովհետև իմ զամբիկի մերը Պետերբուրգում, սպայական ձիարշավի ժամանակ մրցանակներ էր ստանում»։ Իսկ ինձ համար նրա զամբիկն էլ, ինքն էլ-- հեչ. անիծվեն դրանք. չէ՛, ես չեմ թողնի, որ նա իմ հովատակից առաջ անցնի։

Գրիգորին հապճեպ հագնվեց, Միտկան կրնկակոխ հետևում էր նրան. զայրույթից կակազելով՝ պատմում էր.

— Հա, այդ հարյուրապետը հլուր է եկել վաճառական Մոխովի մոտ։ Կաց ասեմ՝ ոնց է նրա ազգանունը, կարծեմ Լիստնիցկի։ Այնպես էլ շախով է, լուրջ։ Ակնոց է դնում։ է, գլուխը քարը։ Ակնոց դնի թե ինչ, իսկ ես չեմ թողնի, որ իմ հովատակից առաջ անցնի։

Գրիգորին քմծիծաղ տալով, թամբեց բուծման համար թողնված, տարիքոտ մի մատակ ձի ու կալի դարբասից,— որպեսզի հայրը չտեսներ,— դուրս եկավ տափաստան։ Գնում էին սարի տակի գետառը։ Ձիերի սմբակները ճպճպացնելով ծամում էին ցեխը։ Գետառում չորացած մի բարդու մոտ ձիավորներ էին սպասում նրանց,— հարյուրապետ Լիստնիցկին իր նիհար, սիրունիկ զամբիկով և խուտորից մի յոթ հոգի ձիավոր տղերք։

— Ո՞րտեղից արշավենք,— գիմեց Միտկային հարյուրապետը՝ ուղղելով ակնոցը ու զմայլվելով Միտկայի ձիու կրծքի հուժկու մկաններով։

— Բարդուց մինչև Ցարի լճակը։

— Այդ ո՞րտեղ է Ցարի լճակը,— հարյուրապետը կարճատեսի նման կկոցեց աչքերը։

— Հրե՛ն, ձերդ բարեծննդություն, անտառի կողքին։

Ձիերը շարքով կանգնեցրին։ Հարյուրապետը գլխից վերև բարձրացրեց մտրակը։ Ուսադիրը ծուվեց ու թմբի պես ուռուցիկ տեսք ստացավ։

— Հենց որ ասեմ «երեք», բաց թողեք։ Դեհ, մեկ, երկու... երե՛ք։

Առաջինը պոկ եկավ հարյուրապետը՝ ընկնելով թամքին, ձեռքով գլխարկը բռնած։ Նա մի վայրկյան առաջ անցավ մնացածներից։ Միտկան շվարած, դժգույն դեմքով բարձրացավ ասպանդակների վրա. Գրիգորին թվում էր, թե նա գլխից վեր բարձրացրած մտրակով չափազանց դանդաղ է խփում ձիու գավակին։

Բարդուց մինչև Ցարի լճակը երեք վերստ է։ Կես ճանապարհին Միտկայի հովատակը սլաքի նման ձգվելով, հասավ հարյուրապետի զամբիկին։ Գրիգորին դժկամորեն էր արշավում։ Հենց սկզբից ետ մնալով, նա ընթանում էր թույլ քառատրոփով, հետաքրքրությամբ դիտում արշավողների հեռացող, օդակների բաժանված շղթան։

Ցարի լճակի կողքին կար գարնանային հեղեղի բերած ավազի մի բլրակ։ Նրա դեղին, ուղտի սապատը ծածկված էր նոսր, սրատերև սխտորասոխով։ Գրիգորին տեսավ, թե ինչպես մի շնչով բլրակը բարձրացան և մյուս կողմը թռան հարյուրապետը և Միտկան, նրանց ետևից մեկ-մեկ անցան մնացածները։ Երբ նա մոտեցավ լճակին, քրտնած ձիերն արդեն կանգնել էին խմբով, ձիերից իջած տղերքը շրջապատում էին հարյուրապետին։ Միտկայի դեմքը փայլում էր զուսպ ուրախությունից։ Նրա յուրաքանչյուր շարժումը ցնծություն էր արտահայտում։ Հակառակ սպասածի, Գրիգորին որևէ շփոթություն չնկատեց հարյուրապետի դեմքին. վերջինս մի ծառի թիկնած, պապիրոսը բերանին, ճկույթով ցույց էր տալիս ասես լողացրած իր զամբիկին և ասում էր.

— Ես դրանով հարյուր հիսուն վերստ վազք եմ կատարել։ Հենց երեկ եմ դրանով եկել կայարանից։ Եթե դա մի լավ հանգստացած լիներ, դու, Կորշունով, երբեք էլ ինձանից առաջ չէիր անցնի։

— Կարո՛ղ է պատահել,— մեծահոգություն էր անում Միտկան։

— Ամբողջ շրջանում սրա հովատակից ավելի կայտա-

ոը չկա,— նախանձելով ասաց պեպենոտ մի տղա, որ վերջինն էր տեղ հասել։

— Լա՛վ նժույգ է,— Միտկան հուզմունքից դողացող ձեռքով շմփացրեց հովատակի վզին ու բութ ժպտալով, նայեց Գրիգորին։

Նրանք երկուսով բաժանվեցին մյուսներից, գնացին լանջի տակից և ոչ թե փողոցով։ Հարյուրապետը սառնությամբ հրաժեշտ տվեց նրանց, երկու մատը տարավ գլխարկին ու երեսը շուռ տվեց։

Արդեն նրբանցքով բակին մոտենալիս Գրիգորին տեսավ դեպի իրենց քայլող Ակսինյային։ Վերջինս գալիս էր ճիպոտը ձեռքին. հենց որ տեսավ Գրիշկային, քաշ տարավ գլուխը։

— Ինչի՞ ամաչեցիր, թե՞ մենք տկլոր ենք գալի,— բղավեց Միտկան ու աչքով արավ։— Ախ՛, ի՛մ լալա, ծոցի՛ բալա։

Գրիգորին դեպի առաջ նայելով, համարյա անցավ Ակսինյայից և հանկարծ թունդ մտրակեց հանգիստ քայլող զամբիկին։ Սա կքվեց հետին ոտներին, ու քացի տալով, Ակսինյայի վրա ցեխ շպրտեց։

— Ի-ի-ի՜հ, գժի մեկը։

Կտրուկ շուռ գալով, տաքացած ձին քշելով Ակսինյայի վրա, Գրիգորին հարցրեց.

— Ինչի՞ բարև չես տալի, հը՞։

— Բարևի չարժես։

— Դրա համար էլ, ա՛յ, ծեփեցի. չհպարտանա՛ս։

— Թո՛ղ, է՛ — բղավեց Ակսինյան՝ ձիու մռութի առաջ թափահարելով ձեռները, — ինձ հովատակի տա՞կ ես գցում, թե ինչ։

— Սա զամբիկ է և ոչ թե հովատակ։

— Միևնույն է, թո՛ղ։

— Ինչի՞ ես հերսոտում, Ակսյուտկա։ Մի՞թե այն օրը գնտառում եղած բանի համար...

Գրիգորին նայեց նրա աչքերին։ Ակսինյան ուզում էր մի բան ասել, բայց իր սև աչքերի անկյուններից հանկարծ արցունքի կաթիլներ կախվեցին. տխուր դողացին շուրթերը։ Նա չղածգաբար փղձկալով, շշնջաց.

— Գե՛ռ քաշիր, Գրիգորի... Ես չեմ հերսոտում... Ես...— Ու գնաց։

Զարմացած Գրիգորին դարբասի մոտ հասավ Միտկային։

— Այսօր կգա՞ս երգ ու պարի,— հարցրեց Միտկան։

— Չէ՛։

— Ինչի՞ այդպես։ Թե՞ կանչեց գիշերելու։

Գրիգորին ձեռքով սրբեց ճակատն ու չպատասխանեց։

IX

Հոգեգալստի տոնից հետո խուտորում մնացին միայն դաշտերում ցրիվ եկած չոր քոնդարը, ճմռթված տերևների փոշին ու մեկ էլ կաղնու և հացենու կտրված ճյուղերի չոր սաղարթները, որ կպցրած էին դարբասների ու սանդուղքների կողքին։

Հոգեգալստից սկսվեց խոտհունձը։ Հենց առավոտից մարգագետինը զարդարվեց կանանց տոնական շրջազգեստներով, գունագեղ կարված գոգնոցներով, երփներանգ գլխաշորերով։ Ամբողջ խուտորը միանգամից դուրս էր եկել հնձի։ Գերանդավորներն ու փոցխողները հագնվել էին ասես տարեկան տոնի համար։ Դա հինավուրց սովորություն էր։ Դանից մինչև լաստենու հեռավոր մացառուտները աշխուժացել ու գերանդիների տակ տնքում էր ամայացող մարգագետինը։

Մելեխովները մի քիչ ուշացան։ Հնձի գնացին այն ժամանակ, երբ խուտորի համարյա կեսը արդեն մարգագետնումն էր։

— Շատ ես քնում, Պանտելեյ Պրակոֆևիչ,— ասում էին քրտնած հնձվորները։

— Մեղքն իմը չէ, կնանոնցն է,— քմծիծաղ էր տալի ծերուկը ու թարմ ուռից գործած ճիպոտով շտապեցնում եզներին։

— Բարով, հազար բարի, սանահեր։ է՛, ուշ ես գալի, աղբեր, ուշ ես գալի...— օրորեց գլուխը բարձրահասակ, ծղոտե գլխարկով մի կազակ, որը ճանապարհի մոտ ծեծում էր գերանդին։

— Խոտը հո չի՞ չորանա։

— Որ եզներդ վազացնես, կհասնես, կարող է և չորանա։ Քո բաժինը ո՞ւրտեղ է։

— Կարմիր զառիթափի մոտ։

— Դեհ, քշիր շալտիկներիդ, թե չէ այսօր չես հասնի։

Սայլի ետին մասում նստել էր Ակսինյան, ամբողջ դեմքը թաշկինակով ծածկել արևից։ Աչքերի համար թողած նեղ անցքից նա անտարբեր ու խիստ նայում էր իր դեմուդեմ նստած Գրիգորիին։ Դարյան, որ նույնպես փաթաթված էր լաչակով ու զուգված, սայլի կողատախտակների միջից ոտները կախած, երկար, երակապատ ստինքով կերակրում էր իր գրկում քուն մտնող երեխային։ Դունյաշկան ոստոստում էր սայլի եզրատախտակի վրա, երշանիկ աչքերով նայում մարգագետնին ու ճանապարհին հանդիպող մարդկանց։ Նրա ուրախ դեմքը, որ մի քիչ թխացել էր արևից ու քթարմատի մոտ պեպենոտել, կարծես թե ասում էր. «Ես ուրախ եմ և ինձ լավ եմ զգում, որովհետև անամպ երկնքով կապույտ շրջած օրը նույնպես ուրախ է և լավ, որովհետև հոգուս մեջ նույնպիսի կապույտ անդորրություն է ու մաքրություն։ Ես ուրախ եմ և ուրիշ ոչինչ չեմ ուզում»։ Պանտելեյ Պրակոֆևիչը, քաթանե շապկի թևքը քաշելով ձեռքի վրա, սրբում էր գլխարկի հովարի տակից հոսող քրտինքը։ Նրա կորացած մեջքին պինդ կպած շապկի վրա քրտնքի մթին բծեր էին երևում։ Արևը թափանցում էր ամպերի սպիտակ կարակուլի միջով, մշուշվող, բեկբեկուն ճառագայթների խուրձեր էր նետում Դոնի շրջակայքում բարձրացող հեռավոր, արծաթավուն բլուրների, տափաստանի, գետառի ու խուտորի վրա։

Օրը եփվում էր շոգ ու կրակից։ Հողմից ծվեն-ծվեն եղած ամպիկները սահում էին դանդաղ, չհասնելով Պանտելեյ Պրակոֆևիչի եզներին, որոնք քարշ էին գալիս ճանապարհով։ Նա ինքը դժվարությամբ էր բարձրացնում մտրակը, ասես տատանվելով էր թափահարում այն,— արդյոք խփի՞ եզների սուր գավակներին թե ոչ։ Եզներն ըստ երևույթին այդ հասկանալով, չէին արագացնում իրենց քայլերը, դանդաղորեն, խարխափելով էին փոխում փրշոտ ոտները, թափահարում պոչերը։ Գորշ-ոսկեհուր, նարնջագույն երանգավորումով մի պիծակ ֆոռում էր նրանց վերևում։

Խուտորի կալերի մոտ հնձած մարգագետինը դալուկ-կանաչավուն բծերով էր պատած. այնտեղ, ուր խոտը դեռ

չէին քաղել, քամին փոփոփացնում էր կանաչ, սևափայլ խոտե մետաքսը։

— Հրե՛ս մեր հողամասը,— Պանտելեյ Պրակոֆևիչը ցույց տվեց մտրակով։

— Անտառի՞ց պիտի սկսենք,— հարցրեց Գրիգորին։

— Այս ծերիցն է՛լ կարելի է։ Այստեղ ես բահով գլադելի[1] ձևի նշան եմ կարել։

Գրիգորին արձակեց բեզարած եզները։ Ծերուկն իր գինը փայլեցնելով, գնաց որոնելու նշանը — հողամասի եզրին կարած տեղը։

— Վերցրե՛ք գերանդիները,— շուտով գոչեց նա՝ ձեռքը թափահարելով։

Գրիգորին սայլն առաջ քաշեց՝ ճմրթելով խոտը։ Սայլը խոտի վրա ճռճռուն հետք թողեց։ Պանտելեյ Պրակոֆևիչը նայելով հեռավոր մի զանգակատան սպիտակ պատերին, խաչակնքեց, վերցրեց գերանդին։ Նրա սապատավոր քիթը պսպղում էր, ասես հենց նոր լաքած լիներ, թուխ այտերի փոսիկներում թեթև քրտինք էր դուրս տվել։ Նա ժպտաց՝ դեմքի միջից ցույց տալով անթիվ քանակությամբ սպիտակ, լորձնոտ, խիտ ատամները, ու տնարավ-բերեց գերանդին՝ կնճռոտ վիզը դարձնելով աջ կողմը։ Կտրված խոտի սաժենաչափ կիսաբոլորակը պառկեց նրա ոտների տակ։

Գրիգորին աչքերը կիսափակ՝ հնձելով գնում էր նրա ետևից, գերանդիով փռում խոտը։ Առջևում ցրիվ ծիածանի նման փայլում էին կնանոնց գոգնոցները, բայց նա աչքերով փնտրում էր մեկը,— սպիտակ, եզրազարդ գոգնոցը. նայում էր Ակսինյային, ու նորից հարմարվելով հոր քայլին, թափահարում էր գերանդին։

Նա անընդհատ մտածում էր Ակսինյայի մասին. աչքերը կիսախուփ, մտքում համբուրում էր նրան, որտեղից-որտեղ լեզվին եկած, ջերմ ու փաղաքուշ խոսքեր էր ասում նրան, հնարս թողնում էր այդ, քայլում մեկ, երկու, երեք հաշվելով, գլխի մեջ կցկտուր հուշեր էին պտտվում. «Նստել էինք թաց դեզի տակ... ճահճուտում ծղրտում էր մի միջատ... գետառի

[1] Գլադել — այսպես էր կոչվում եկեղեցական-սլավոնական այբուբենի «գիմ» («Գ») տառը։

վերևում լուսին էր... թփից հատ-հատ կաթիլներ էին ընկնում ջրափոսը, հենց այսպես — մեկ, երկու, երեք... լավ է, ա՛խ, շատ լավ է...»

Կայանի մոտ ծիծաղեցին, Գրիգորին նայեց այդ կողմը. Ակսինյան կռացավ, ինչ-որ բան ասաց սայլի տակ պառկած Դարյային, սա թափահարեց ձեռները,.ու էլի՛ երկուսն էլ ծիծաղեցին։ Դունյաշկան նստել էր առեղի վրա, բարալիկ ձայնով երգում էր։

«Կհասնեմ մինչև այն թփիկը, կծեծեմ գերանդին»,— մտածեց Գրիգորին ու զգաց, թե ինչպես գերանդին դիպավ ինչ-որ փափուկ բանի։ Կռացավ նայելու. ոտների տակից ծվծվոցով քարշ էր գալիս վայրի բադի մի ճուտ։ Մի փոքրիկ փոսի մոտ, ուր գտնվում էր բույնը, ընկել էր մի ուրիշ ճուտ, գերանդիով կտրվել, երկու կես էր եղել. մնացածները ծվծվոցով ցրիվ եկան խոտի մեջ։ Գրիգորին կտրված ճուտը գցեց բոի մեջ։ Դեղնավուն-դարչնագույն, միայն մոտ օրերում ձվից դուրս եկած այդ ճուտի խավոտ մարմնի մեջ դեռ կենդանի ջերմություն կար։ Տափակ, բաց կտուցի վրա կարմրին էր տալիս արյան պղպջակը, ուլունքանման աչքերը խորամանկորեն կկոցված էին, դեռևս տաք թաթիկները հազիվ դողում էին։

Գրիգորին սուր խղճահարության հանկարծակի զգացումով նայում էր ափի մեջ դրած անկենդան մսագնդիկին։

— Այդ ի՞նչ ես գտել, Գրիշունկա...

Հնձած լասերի վրա ցատկոտելով՝ վազում էր Դունյաշկան։ Նրա կրծքին թռչկոտում էին բարակ հյուսած ծամերը։ Գրիգորին երեսը կնճռոտելով՝ դեն գցեց բադի ճուտը, բարկությամբ շարունակեց քաղը։

Ճաշից հետո կնանիքը սկսեցին փոցխել։ Հնձած խոտը թոռոմում էր ու չորանում, բարկ ու թմրեցուցիչ բույր էր տարածում։ Ճաշը կարճատև էր։ Խոզի ճարպ ու կազակական խորակ՝ տանից տոպրակով բերած, քամած մածուն,— ահա՛ և ամբողջ ճաշը։

— Տուն գնալու կարիք չկա,— ճաշի ժամանակ ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը,— եզները թող աքաղեն անտառում, իսկ էգուց, հենց որ արևը չորացնի շաղը, կքաղենք մնացածը։

Մթնել էր, երբ դադարեցրին հունձը։ Ակսինյան փոցխեց մնացած լասերը, գնաց կայան, որ կաշա եփի։ Ամբողջ օրը նա շարությամբ ծաղրում էր Գրիգորիին, ատելություն արտահայտող աչքերով էր նայում նրան, ասես վրեժ էր առնում մեծ, անմոռանալի վիրավորանքի համար։ Գրիգորին թրթռված, գույնը գցած, եզները քշեց դեպի Դոն՝ ջրելու։ Հայրը, որ շարունակ հետևում էր նրան ու Ակսինյային, շարությամբ նայելով Գրիգորիին, ասաց.

— Իրիկվա հացդ կուտես, հետո էլ մտիկ կանես եզներին։ Տես, խոտի մեջ չթողնես։ Կվերցնես իմ կապան։

Դարյան երեխային պառկեցրեց սայլի տակ ու Դունյաշկայի հետ գնաց անտառ, ցախ բերելու։

Գետառի վերևում, սև, անհաս երկնքում, ծռված մի կողքին, սահում էր նվազած լուսինը։ Կրակի վրա թիփ-բորանի նման պար էին գալի թիթեռները։ Խարույկի մոտ, փռված քաթանե սուփրի վրա գցեցին իրիկնահացը։ Դաշտային մրոտած կաթսայի մեջ եփ էր գալիս կաշան։ Դարյան տակի յուրկայի փեշով սրբեց գդալները, կանչեց Գրիգորիին.

— Արի հաց ուտելու։

Գրիգորին կապան ուսերին գցած, դուրս եկավ մթության միջից, մոտեցավ կրակին։

— Հը՛, ինչի՞ ես այդպես թթվել,— ժպտաց Դարյան։

— Գոտկատեղս ծակում է, ոնց որ թե անձրև է գալու,— փորձեց կատակի տալ Գրիգորին։

— Նա չի ուզում եզներին հսկել, էն աստվածը,— ծրպտաց Դունյաշկան, նստեց եղբոր կողքին, խոսեց նրա հետ, բայց խոսակցությունը գլուխ չէր գալի։

Պանտելեյ Պրակոֆևիչը եռանդուն խպշտում էր կաշան, ատամների տակ կրճտացնում կիսաեփ կորեկաձավարը։ Ակսինյան ուտում էր գլուխը քաշ արած. դժկամ ժպտում Դարյայի հանաքների վրա։ Ներքուստ այրվել-փոթորվելուց թշերը շառագունել էին։

Գրիգորին առաջինը վեր կացավ, գնաց եզներին հրաբելու.

— Մտի՛կ արա, ուրիշի խոտը չուտեցնես եզներին,— նրա ետևից բղավեց հայրը ու երկար, խռխռալի հազաց,— կաշան ընկել էր խոշափորը։

Դունյաշկան ուրցնում էր թշերը, թուլանում ծիծաղից։ Կրակը մարելու վրա էր։ Մարմրող ցախը խանձված սաղարթի քաղցրավուն հոտ էր արձակում նստածների վրա։

Կեսգիշերին Գրիգորին գաղտագողի մոտեցավ կայանին, կանգ առավ տասը քայլ հեռավորությամբ։ Պանտելեյ Պրակոֆևիչը սայլին պառկած, ուժեղ խռմփոց էր հանում։ Մոխրի տակից սիրամարգի ոսկի աչքի նման նայում էր իրիկվանից չհանգցրած կրակը։

Սայլից կտրվեց գորշ, շորով փաթաթված մի կերպարանք և ծուռումուռ քայլելով, գնաց դեպի Գրիգորին։ Երկուերեք քայլի վրա կանգ առավ։ Ակսինյան։ Նա էր։ Թունդ, արագ-արագ զարկեց Գրիգորիի սիրտը. պպզելով, նա քայլեց առաջ. կապայի փեշը ետ գցելով, հլու, տենդավառ կնոջը սեղմեց իր կրծքին։ Վերջինիս ծնկները ծալվում էին, դողում ու ցնցվում էր նա, ատամներն իրար էին զարկվում։ Գրիգորին նրան թափով վերցրեց իր ձեռների վրա,— այդպես գայլն իր ուսին է գցում պատառոտած ոչխարը,— ու խճճվելով բացված կապայի փեշերի մեջ, շնչասպառ լինելով, գնաց։

— Օ՜յ, Գրի-ի-շա... Գրի-ի-շինկա... Հե՛րրդ...

— Սո՛ւս...

Աշխատելով պոկ գալ, կապայի մեջ շնչելով ոչխարի բրդի թթվահոտը, խեղդվելով զզվման դառնությունից, Ակսինյան ցածր, հեծկլտուն ձայնով համարյա ճչաց.

— Թո՛ղ. հիմի էլ ի՞նչ... ինքս կգամ։

X

Ոչ թե ալ-կարմիր լալայի պես, այլ բարբադի, ճանապարհների կողքին բանող փշախնձորի պես է ծաղկում կնկա ուշացած սերը։

Խոտհնձից հետո Ակսինյան վերածնվեց։ Ասես մեկը նշան արավ նրա երեսին, դաղելով դրոշմ դրեց։ Կնանիքը նրան հանդիպելիս նենգաբար ժպտում, ատամներն էին ցույց տալիս, նրա ետևից նայելով՝ օրորում էին գլուխները, աղջիկները նախանձում էին, իսկ նա գնում էր հպարտ-հրապարտ, գլուխը բարձր պահած, երջանիկ, բայց խաղը ու խայտառակ եղած։

Շուտով բոլորն էլ իմացան Գրիշկայի սիրային կապի մասին։ Սկզբում դրա մասին փսփսալով էին խոսում,— հավատում էին ու չէին հավատում,— բայց երբ խուտորի շրջան Կուզկա Կուզնոսին առավոտ ծեգին նրանց տեսավ հեղմաղացի մոտ, դեռ լուսնի լույսի տակ ցածլիկ գարու արտի մեջ պառկած,— լուրը տարածվեց մակընթացության պղտոր ալիքի նման։

Դա Պանտելեյ Պրակոֆևիչի ականջին էլ հասավ։ Մի կիրակի օր նա գնաց Մոխովի խանութը։ Խանութը լեփ-լեցուն էր մարգկանցով։ Ներս մտավ. ոնց որ թե խլրտում սկսվեց, ժպտացին քթերի տակ։ Զոռով մոտեցավ վաճառասեղանին, որտեղ ճոթեղեն էին բաց թողնում։ Խանութի տերն ինքը, Սերգեյ Պլատոնովիչը հանձն առավ նրան ապրանք բաց թողնել։

— Հը՛, վաղուց չես երևում, Պրակոֆիչ.

— Գործերս թողնո՞ւմ են որ։ Չենք կարենում կառավարվել։

— Ոնց թե։ Այնպիսի տղերք ունես, ու չեք կառավարվում։

— Ի՞նչ տղերք, ի՞նչ բան. Պետրոյին հրե՛ն ղրկել եմ ճամբարները, գործը ես ու Գրիշկան ենք անում։

Սերգեյ Պլատոնովիչը ձեռքով տնտղեց, երկու կես արավ խիտ, թուխլիկ-մուխլիկ մորուքը, խորամանկ ու ծուռը նայեց խմբված կազակներին։

— Հա, ախպեր ջան, ո՞նց է որ ձեն չես հանել։

— Ի՞նչ է որ։

— Ո՞նց թե ինչ։ Տղիդ պսակում ես ու իսկի բերան չես բաց անում։

— Ի՞նչ տղա։

— Քո Գրիգորին հո ազա՞պ է։

— Հլա դեռ պսակելու միտք չունեմ։

— Իսկ ես լսել եմ, որ հարս ես բերելու... Ստեփան Ատաֆովի Ակսինյային։

— Ե՞ս։ Ողջ-կենդանի էրիկի՞ց... Այդ ի՞նչ է, Պլատոնիչ, ոնց որ ձե՞ռ ես առնում, հը՞։

— Ի՞նչ ձեռ առնել։ Մարդկանցից եմ լսել։

Պանտելեյ Պրակոֆևիչը վաճառասեղանի վրա կոկից ճոթեղենի բացված փաթաթը, ու իսկույն շուռ գալով, կաղկաղ քայլեց դեպի դուրս։ Նա ուղղակի տուն էր գնում։ Եզան պես քաշ էր արել գլուխը, ջլուտ մատները սեղմել, բռունցք էր արել. ավելի շատ էր կաղում, քան մինչև այդ օրը։ Աստախովի տան կողքից անցնելիս նայեց ցանկապատի վրայով. Ակսինյան զուգված-զարդարված, ջահելացած, կոնքը օրորելով, դատարկ մի դույլ ձեռքին գնում էր խրճիթ։

— Է՛յ, հլա կա՛ց...

Պանտելեյ Պրակոֆևիչը արագ-արագ մտավ բակի դռնից, Ակսինյան կանգ առավ՝ սպասելով նրան։ Մտան խրճիթը։ Մաքուր ավլված հողե հատակին կարմրավուն, հողախառն ավազ է շաղ տված. առջևի անկյունում, նստարանի վրա դրված են վառարանից հանված կարկանդակները։ Օթախից հագուստի ու, չգիտես ինչու, անիսոնի խնձորների հոտ է դալիս։

Խատուտիկ, մեծագլուխ մի կատու փայփայվելու համար մոտեցավ Պանտելեյ Պրակոֆևիչի ոտներին։ Ծռեց մեջքը ու մտերմաբար հպվեց նրա կոշիկին։ Պանտելեյ Պրակոֆևիչը նրան շպրտելով խփեց նստարանին ու նայելով Ակսինյայի հոնքերին, բղավեց.

— Այդ ի՞նչ է, հը՞... Երեկ — մեկել օրը էրիկդ գնաց, իսկ դու արդեն պոչդ կողքիդ ես գցում, հը՞։ Դրա համար ես Գրիշկայի գլուխը կշարդեմ, իսկ քո Ստեփանին էլ կըգրեմ... Թո՛ղ գիտենա... Թո՛ւ, անառակի մեկը, քիչ են թակել քեզ, հա՞... Այսօրվանից էլ ոտ չդնես իմ տան բակը։ Տղիս հետ օյիններ ես սարքում, հա՞, իսկ Ստեփանը կգա ու ինձ համար էլ...

Ակսինյան աչքերը կկոցած լսում էր։ Ու հանկարծ անամոթաբար թափահարեց փեշերը, կնկա յուրկաների հոտը արձակեց Պանտելեյ Պրակոֆևիչի վրա ու կոտրատվելով, ատամները ցույց տալով, վրա տվեց։

— Դու իմ կեսրա՞րն ես, հը՞, կեսրա՞րս ես... Խրա՞տ ես տալի ինձ։ Գնա՛ քո հաստաքամակ կնկանը խրատ տուր։ Քո տա՛նը կարգադրություն արա... Տո, թոփալ դև, ես քեզ խսկի տեսնե՛լ էլ չեմ ուզում... Հա՛յդա այստեղից, մի մոթմոթա խոզի պես, չե՛ս վախեցնի։

— Հլա դու կա՛ց, անզգամ։

— Ի՞նչ պիտի անես, կրակ է՛լ դառնաս, ինձ չես կարող վառել... Չքվիր գնա այնտեղ, որտեղից եկել ես։ Թե որ ուզենամ, քո Գրիշկայի միսն էլ կուտեմ, ոսկորն էլ, ու պատասխան չեմ տա... Ա՛ռ քե՛զ։ Կե՛ր։ Հա՛, Գրիշկան ինձ դուր է գալի։ Հետո՞։ Պիտի զարկե՞ս, ինչ է... Մարդուս նամա՞կ կգրես... Գրի՛ր թեկուզ հենց ատամանին, իսկ Գրիշկան ի՛մն է, ի՛մն է, ի՛մը։ Տիրում եմ նրան ու պիտի տիրեմ...

Ակսինյան կրծքով (որը թփրտում էր ինչպես տափաստանի հավքը վանդակում) վրա էր տալիս վախեցած Պանտելեյ Պրակոֆևիչին, այրում էր նրան իր սև աչքերի բոցով, մեկը մյուսից սարսափելի ու անպատկառ խոսքեր էր թափում։ Պանտելեյ Պրակոֆևիչը դողդողջուն հոնքերով նահանջում էր դեպի դուռը, նա շոշափելով գտավ անկյունում դրված հենակը ու թափահարելով ձեռքը, հետևանց բացեց դուռը։ Ակսինյան նրան հաշտից դուրս քշեց, շնչասպառ, կատաղի բղավեց.

— Ո՛ղջ կյանքումս, դառն կյանքումս մի անգամ պիտի սրտո՛վ սիրեմ... Իսկ հետո թեկուզ սպանեցե՛ք։ Իմն է Գրիշկան, ի՛մն է։

Պանտելեյ Պրակոֆևիչը մորուքի տակին ինչ-որ քրթմընջալով, աճապարեց դեպի տուն։

Գրիշկային նա գտավ օթախում։ Առանց մի խոսք ասելու՝ հենակով շրմփացրեց նրան մեջքի երկարությամբ։ Գրիգորին կուչ եկավ ու կախվեց հոր թևից։

— Ինչի՞ համար, ապի։

— Արարքիդ համար, շուն շ-ան որ-դի...

— Ինչի համա՞ր։

— Մի՛ վնասիր հարևանիդ, մի՛ խայտառակիր հորը դ, մի՛ թրև գա, ա՛յ շուն շնացող,— խռպոտ բղավում էր Պանտելեյ Պրակոֆևիչը՝ օթախում դես ու դեն քաշ տալով Գրիգորին, չանալով նրանից պոկել հենակը։

— Չե՛մ թողնի որ զարկես,— խուլ ֆսսաց Գրիգորին ու ծնոտներն իրար սեղմելով՝ խլեց հենակը։ Դեմ արավ ծընկին ու շրջ՛խկ, կոտրեց այն...

Պանտելեյ Պրակոֆևիչը պինդ բռունցքով հասցրեց որդու վզին։

— Ամբողջ խուտորի առաջ կքոթակեմ... սատանի ծնունդ, անիծվա՛ծ զավակ։— Նրա ոտները դողում էին, նա մտադրվում էր մի անգամ է՛լ խփել։— Դարձվոր Մարֆուշկայի հե՛տ կպսակեմ... կկոտե՛մ քեզ... ի-ի՛հ, քոսոտ շուն...

Աղմուկի վրա ներս վազեց մայրը։

— Պրակո՛ֆիչ, Պրակո՛ֆիչ... ախր մի քիչ հանդարտվի՛ր, է՛, կա՛ց...

Բայց ծերունին մոլեգնում էր, է՛լ ավելի կատաղում. մի բռունցք էլ կերցրեց կնկանը, շուռ տվեց սեղանը կարի մեքենայի հետ միասին ու բարկությունը թափելով, դուրս թռավ բակը։ Գրիգորին գեռ չէր հանել տուրուդմբոցի մել թևքը պատռած շապիկը, երբ դուռը շրխկալով բացվեց ու շեմքի վրա նորից փոթորկաբեր ամպի նման կանգնեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Պսակե՛լ չան չակոտին...— նա ձիու նման ոտը խփեց գետնին, հայացքը հառեց Գրիգորիի մկանոտ, թիկունքին։— Կպսակեմ... Հենց վազը կգնամ աղջիկ տեսնելու։ Մնչ օրի հասա՞, տղայիս երեսից մարդիկ ծիծաղում են վրաս։

— Թող շապիկս հագնեմ, հետո կպսակես։

— Կպսակե՛մ... դարձվորի հե՛տ կպսակեմ...— դուռը շրխկացնելով ծածկեց, սանդուղքի վրա թփթփացին նրա քայլերն ու լռեցին։

XI

Սետրակով խուտորի մերձակայքում շարիշար կանգնած էին սայլերը՝ բրեզենտե ծածկերով։ Աննկատելի արագությամբ գոյացել էր կանոնավոր մի ավան սպիտակ կտուրներով, ուղիղ փողոցներով ու կենտրոնում մի փոքրիկ հրապարակով, որտեղ ետ ու առաջ էր քայլում ժամապահը։

Ճամբարները սկսեցին ապրել ամեն տարվա մայիս ամսի համար սովորական միապաղաղ կյանքով։ Առավոտները կազակների մի խումբ, որ արոտավայրում հսկում էր ձիերին, դրանց քշում-բերում էր ճամբար։ Ցկսվում էր մաքրելը, թամբելը, առկայության ստուգումը, շարք կանգնելը։ Թավ ձայնով հրամաններ էր տալիս ճամբարների վարիչ շտաբսպան,— ճղճղան զորական ավագ Պոպովը, ու վարժեցնելով երիտասարդ կազակներին, գոռգոռոց էին գցել ուրյադնիկները։ Մի բլրակի մոտ միմյանց վրա գրոհ էին տալիս, խորամանակաբար շրջապատում ու թևանցում «հակառակորդին»։ Թիրախի վրա կրակում էին կոտորակացան հրացաններով։ Ջահել կազակները հաճույքով մասնակցում էին սրամարտի մրցություններին, ավելի մեծերը խուսափում էին պարապմունքներից։

Մարդիկ խոպոտում էին շոգից ու աբաղից, իսկ ծածկված սայլերի երկար տոպրակների վրա տուրում էր բուրավետ, մեղմիկ զեփյուռը, հեռվից ճստճստում էին գետնատեղյունները, տափաստանը հետզհետե մոռացման էր մատնում բնակավայրերը ու սպիտակեցրած խրճիթների ծուխը։

Ճամբարից դուրս գալուց մի շաբաթ առաջ Անդրեյ Տամիլինի՝ հրեանանվար Իվանի հարազատ եղբոր մոտ եկավ իր կինը։ Բերեց տնային կաթնահունց կարկանդակներ, ամեն տեսակ ուտելեղեն ու մի ամբողջ շարք նորություններ խուտորի կյանքից։

Մյուս օրը վաղ առավոտյան նա մեկնեց։ Կազակներից բարևներ ու կարգադրություններ տարավ տնեցիներին ու մոտիկներին։ Միայն Ստեփան Աստախովը ոչինչ չուղարկեց նրա միջոցով։ Նախորդ օրը նա հիվանդացել էր, բուժվում էր օղիով ու չտեսավ ոչ միայն Տամիլինի կնոջը, այլև լույս աշխարհը։ Վարժությունների չգնաց. իր խնդրով բուժակը արյուն առավ — կրծքին մի դյուժին տզրուկ դրեց։ Ստեփանը միայն տակի շապկով նստել էր իր բրիչկայի անիվի կողքին, սպիտակ բոլորքով գլխարկը քսվում էր անիվին ու կեզտոտվում դրա քսուքով, նա շրթունքները ուռցրած նայում էր, թե ինչպես տզրուկները իր կրծքի ուռուցիկ կիսագնդերին կպած, լցվում էին սև արյունով, ուռչում էին ու ծավալով մեծանում։

Նրա կողքին կանգնած էր գնդի բուժակը, ծխում էր ու թութունի ծուխը բաց թողնում նոսր առամների միջով։

— Թեթևացա՞ր։

— Կրծքիցս է ծծում։ Սիրտս ինչ որ թե ավելի ազատ է զարկում...

— Տզրուկները առաջին միջոցն են։

Տամիլինը մոտեցավ նրանց։ Աչքով արավ։

— Ստեփան, ուզում էի բան ասել։

— Ասա։

— Արի մի բոպե։

Ստեփանը տնքալով վեր կացավ։ Տամիլինի հետ մի կողմ անցավ։

— Դեհ, ասա տեսնենք։

— Կնիկս էր եկել... այսօր գնաց։

— Հա՛...

— Քո կնկա մասին խուտորում ասում են, որ...

— Ի՞նչ։

— Վատ բան են ասում։

— Հը՞։

— Գրիշկա Մելեխովի հետ է ընկել... աշկարա։

Ստեփանը, գունատվելով, կրծքից պոկում էր տզրուկները, ճզմում ոտներով։ Վերջին տզրուկը ճզմեց, կոճկեց շապկի օձիքը ու ասես մի բանից վախենալով, նորից արձակեց կոճակը... Սպիտակ շրթունքները,— կարծես կավիճ էր կերել,— հանգիստ չէին գտնում. դողալով, անհեթեթ ժպտէին արձակում, կծկվում, կապտավուն մսակտոր դառնում... Տամիլինին թվում էր, թե Ստեփանը ատամների տակ չկտրվող ինչ-որ կարծր բան է ծամում։ Հետզհետե վերադարձավ Ստեփանի երեսի գույնը, ներսից ատամներով բռնված, քարացան, անշարժացան շրթունքները։ Ստեփանը հանեց գլխարկը, անիվի քսուքի բիծը թևքով անզգուշաբար քսեց դրա բոլորքին, հնչուն ձայնով ասաց.

— Շնորհակալություն բերածդ լուրերի համար։

— Ուզում էի նախազգուշացնել... Ներիր... Այդպիսի բաներ են կատարվում տանդ, էլի՛...

Տամիլինը ցավակցությամբ ձեռքը չմփացրեց շալվարին ու գնաց դեպի թամբած ձին։ Ճամբարում ձայների դժժոց է։ Սրամարտի վարժություններից եկան կազակները։ Ստեփանը մի բոպե կանգնած մնաց՝ ուշադիր և խորազնին դիտելով գլխարկի վրա եղած սև բիծը։ Կիսաճզմված, հետզհետև սատկող տզրուկը մագլցում էր նրա կոշիկի վրա։

XII

Մնում էր մեկուկես շաբաթ, մինչև որ կազակները վերադառնային ճամբարից։

Ակսինյան մոլեգնում էր իր ուշացած, դառն սիրո մեջ։ Ջնայած հոր սպառնալիքներին, Գրիգորին գաղտագողի, գիշերով գնում էր նրա մոտ ու վերադառնում արշալույսին։

Երկու շաբաթվա մեջ նա ուժասպառ եղավ ինչպես ուժից վեր վազք կատարած ձի։

Անքուն գիշերներ անցկացնելուց կապտել էր ցցուն այտոսկրներ ունեցող նրա դեմքի դարչնագույն մաշկը, փոս ընկած ակնակապիճներից հոգնածորեն էին նայում սև, չոր աչքերը։

Ակսինյան ման էր գալի երեսը բաց,— չէր ծածկում լաչակով. աչքերի տակ տխուր սևին էին տալիս խոր փոսերը. նրա ուռուցիկ, մի փոքր շրջված, ագահ շուրթերը անհանգիստ և հանդգնաբար ժպտում էին։

Այնպես արտասովոր ու բացահայտ էր նրանց սիրային խելացնոր կապը, այնպես մոլեգնաբար էին նրանք վառվում միևնույն անամոթ կրքով, մարդկանցից չքաշվելով ու չթաքնվելով, հարևանների աչքի առաջ նիհարելով ու սևանալով,— որ հիմա մարդիկ հանդիպելիս չգիտես ինչու ամաչում էին նրանց նայել։

Գրիգորիի ընկերները, որոնք նրան ձեռ էին առնում Ակսինյայի հետ ունեցած կապի առիթով, այժմ մի տեղ հավաքվելիս լռում էին ու Գրիգորիի ներկայությամբ իրենց անհարմար, կաշկանդված էին զգում։ Կանայք ներքուստ նախանձելով, պախարակում էին Ակսինյային, չարախնդում էին՝ սպասելով Ստեփանի գալուն, հալումաշ էին լինում անհագուրդ հետաքրքրությունից։ Ենթադրություններ էին անում, թե բանն ինչով պիտի վերջանա։

Եթե Գրիգորին ամուսնու ժամանակավոր բացակայությամբ ապրող Ակսինյայի մոտ հաճախելով, ցույց տար, թե այդ թաքցնում է մարդկանցից, եթե ամուսնու ժամանակավոր բացակայությամբ ապրող Ակսինյան, ապրելով Գրիգորիի հետ, որոշ չափով դա գաղտնի պահեր ու միևնույն ժա-

մանակ չմերժեր ուրիշներին, ապա դրա մեջ ոչ մի արտասովոր, աչքի զարնող բան չէր լինի։ Խուտորը կխոսեր այդ մասին ու կլռեր։ Բայց նրանք ապրում էին համարյա բացահայտ կերպով, նրանց կապում էր մի ինչ-որ մեծ բան, որը նման չէր կարճատև կապին, և այս պատճառով էլ խուտորում որոշեցին, որ դա հանցագործություն, անբարոյականություն է, ու խուտորը սկսել էր գարշելի սպասման վիճակում,— կգա Ստեփանը, կլուծի հանգույցը։

Օթախում, մահճակալի վերևում պարան է անցկացրած։ Պարանի վրա շարված են սպիտակ ու սև թելի կոճեր, որոնք դատարկ են, առանց թելի։ Կախված են իբրև զարդարանք։ Նրանց վրա գիշերում են ճանճերը, նրանցից մինչև առաստաղը սարդի ոստայն է կախված։ Գրիգորին պառկած է գլուխը Ակսինյայի մերկ, զով թևին ու նայում է առաստաղին, կոճերի շարանին։ Ակսինյան մյուս ձեռքով — աշխատանքից կոշտացած մատներով — տնտղում է Գրիգորիի ետ ընկած գլխի մազերը, որոնք կոշտ են ձիու մազի նման։ Ակսինյայի մատներից կովի թարմ կաթի հոտ է գալիս. երբ Գրիգորին շուռ է տալի գլուխը՝ քիթը տանելով Ակսինյայի թևատակը, կնկա քրտնքի սուր, քաղցրավուն հոտը գայլուկի չթթված խմիչքի նման խփում է նրա քթին։

Օթախում բացի փայտե ներկված մահճակալից, որի անկյունների վրա սրածայր կոներ են ցցված, դռան մոտ դրված է երկաթապատ, մեծածավալ մի սնդուկ՝ Ակսինյայի օժիտով ու հագուստով։ Առջևի մի անկյունում դրված է մի սեղան, դրա վրա փռված է մոմլաթ՝ գեներալ Սկոբելևի դիմանկարով. սա ձիով սլանում է դեպի իր առջև իջեցրած, ծոպավոր դրոշակները. երկու աթոռ. վերևում՝ սրբապատկերները անպաճույճ, թղթե գունավոր պսակներով։ Կողքից, պատի վրա — ճանճերի ծոտոտած լուսանկարներ։ Մի խումբ կազակներ՝ քյաքուլավոր գլուխներ, դուրս ընկած կրծքեր ժամացույցի շղթաներով, հեծելազորի մերկացրած սրեր. դա Ստեփանն է իր ընկերներով, դեռ իսկական ծառայության ժամանակներից։ Կախոցից քաշ է արված Ստեփանի չմաքրված համազգեստը։ Լուսինը նայում է պատուհանի ճեղքից, կասկածանքով շոշափում համազգեստի ուսադրի ուրվագծային երկու սպիտակ թելերը։

Ակսինյան հոգոց հանելով համբուրում է Գրիգորիի քթարմատից վեր, երկու հոնքերի մեջտեղը։

— Գրիշա, հոգո՛ւս կտոր։

— Հը՛, ասա։

— Ինն օր է մնացել...

— Հլա ժամանակ կա։

— Բա ես ի՞նչ պիտի անեմ։

— Ես ի՞նչ գիտեմ։

Ակսինյան պահում է հառաչանքը և նորից շոյում ու տնտղում է Գրիշկայի խճճված քյաքուլը։

— Ստեփանն ինձ կսպանի...— չգիտես՝ հարցնո՞ւմ է, թե՞ հաստատ ասում Ակսինյան։

Գրիգորին լուռ է։ Նա ուզում է քնել։ Նա դժվարությամբ է բաց անում իրար կպչող կոպերը, հենց դեմուդեմ տեսնում է Ակսինյայի սև աչքերի առկայծուն նայվածքը։

— Մարդս կգա, երևի կթողնես ինձ, կվախենաս, հա՞։

— Ես ինչո՞ւ պիտի վախենամ նրանից. դու նրա կինն ես, դո՛ւ վախեցիր։

— Հիմի քեզ հետ եմ ու չեմ վախենում, ամա ցերեկը որ միտք եմ անում, դողս բռնում է...

Գրիգորին հորանջում է, գլուխը շուռումուռ անելով ասում.

— Ստեփանը կգա, դա հեչ բան է։ Հրե՛ն, հերս պատրաստվում է ինձ պսակել։

Գրիգորին ժպտում է, ուզում է էլի մի բան ասել, բայց զգում է, որ իր գլխի տակ Ակսինյայի թևը հանկարծ մի տեսակ թուլանում է ու փափկում, թաղվում է բարձի մեջ ու դողալով, մի վայրկյան անց վերստին պնդանում է, ընդունում է սկզբնական դիրքը։

— Ո՞ւմ եք ուզել,— խուլ հարցնում է Ակսինյան։

— Նոր է պատրաստվում գնալու։ Մերս ասում էր, թե գնալու է Կորշունովների մոտ, նրանց Նատալյային ուզելու։

— Նատալյան... Նատալյան... սիրուն աղջիկ է... շատ սիրուն է։ Դեհ, ի՛նչ արած, ա՛ռ... Մի քանի օր առաջ նրան տեսա եկեղեցում... Զուգված-զարդարված էր...

Ակսինյան արագ է խոսում, բայց խոսքերը ցրիվ են գալիս, լսելի չեն անկենդան ու անգույն խոսքերը։

— Իմ ինչի՞ն է պետք նրա սիրունությունը։ Ես քեզ հետ կպսակվեի։

Ակսինյան Գրիգորիի գլխի տակից արագ հանում է թևը, սառն աչքերով նայում է պատուհանին։ Բակում լուսնի դեղնավուն լույսն է։ Զարդախից սև ստվեր է ընկել։ Ծղրտում են ծղրիդները։ Լսվում է Դոնի ջրի շաչյունը, խուլ, թավ ձայները միափեղկ պատուհանի միջով սողում են օթախը։

— Գրի՛շա։

— Ի՞նչ մտածեցիր։

Ակսինյան վերցնում է Գրիշկայի անհնազանդ, փայփայանքից խուսափող ձեռները, դրանք սեղմում է կրծքին, սառն, անկյանք այտերին, բղավում է հեծկլտող ձայնով.

— Ինչո՞ւ դու ինձ հետ կապվեցիր, ա՛յ անիծված, հը՞։ Ի՞նչ պիտի անեմ ես... Գրի-ի-իշ-կա՛... Դու իմ հոգին ես հանում... Կորած եմ ես... Ստեփանը կգա, ի՞նչ պատասխան պիտի տամ... Ո՞վ կպաշտպանի ինձ...

Գրիգորին լռում է։ Ակսինյան տխուր նայում է նրա գեղեցիկ, ուղղադիր քթին, ստվերված աչքերին, համբ շրթունքներին... Ու հանկարծ զգացմունքի հեղեղը ճեղքում է զսպվածության պատնեշը. Ակսինյան մոլեգնաբար համբուրում է Գրիգորիի երեսը, վիզը, ձեռները, կրծքի կոշտ, խուճուճ, սև մազերը։ Մեջեմեջ, շնչասպառ լինելով, խոսքեր է շշնջում, ու Գրիգորին զգում է նրա դողը.

— Գրի՛շա, սիրելիս... ... հարազատս... Արի փախչենք։ Սիրունիկս, ամեն բան թողնենք, փախչենք։ Մարդուս էլ կթողնեմ, ամեն ինչ էլ, մենակ թե դու լինես հետս... Գնանք շախտերը, հեռո՛։ Կգուրգուրեմ քեզ, հոգիս կտամ քեզ համար... Պարամոնովի հանքերում հարազատ քեռիս պահակ է, նա մեզ ձեռք կբռնի... Գրի՛շա, դե մի խոսք ասա, է՛։

Գրիգորին թեթևակի խաղացնում է ձախ հոնքը, մտածում է ու անսպասելիորեն բաց անում իր վառվռուն, ո՛չ ռուսական աչքերը։ Դրանք ծիծաղում են։ Խայթում են հեգնանքով.

— Հիմար ես դու, Ակսինյա, հիմար։ Բլբլում ես, ամա խելոք բան չես ասում։ Ախր ես տնից ո՞ւր գնամ։ Այս տարի էլ ծառայության են կանչելու։ Քո ասածը անխելքություն է... Մեր հողից ոչ մի տեղ էլ չեմ գնա։ Այստեղ տափաստան է, մարդ ազատ շունչ է քաշում, իսկ այնտե՞ղ։ Անցած ամեռ

հորս հետ գնացել էի կայարան, ու քիչ մնաց սրտաճաք լինեի։ Շոգեքարշերը բռռում են, վառվող ածուխից շնչել չի լինում, ոնց են այնտեղ մարդիկ ապրում, չգիտեմ, երևի նրանք սովոր են այդ ածխահոտին...— Գրիգորին թքում է ու մի անգամ էլ ասում.— Ես խուտորից ոչ մի տեղ չեմ գնա։

Դրսում մթնում է, ամպը ծածկել է լուսինը։ Բակում մարում է դեղին լույսը, չքանում են ստվերները, ու արդեն անկարելի է որոշել, թե ինչն է մթին տալիս ցանկապատից դենը,— անցյալ տարվա կտրած ցա՞խը, թե՞ ցանկապատին փարած հնգօրյա քոլախոտը։

Օթախում նույնպես թանձրանում է մթությունը, աղոտում են Ստեփանի ուրյադնիկական նշանները պատուհանի մոտ կախված կազակական համազգեստի վրա, ու գորշ, անշարժ մթության մեջ Գրիգորին չի տեսնում, թե ինչպես կամացուկ, անընդհատ ցնցվում են Ակսինյայի ուսերը ու բարձի վրա լուռ դողում է ձեռներով սեղմած գլուխը։

XIII

Այն օրից, երբ եկավ Տամիլինի կնիկը, Ստեփանի երեսը տգեղացավ։ Հոնքերը կախվեցին աչքերի վրա, խորունկ ու չոր մի ակոս շեղակի կտրեց ճակատը։ Նա քիչ էր խոսում ընկերների հետ, դատարկ բաների մասին տաքանում ու սկսում էր վիճել, առանց որևէ պատճառի կռվեց վախմիստր Պլեշակովի հետ, Պետրո Մելեխովին համարյա չէր նայում։ Կտրվեց բարեկամության թելը, որ առաջ միացնում էր նրանց։ Իր բուռն, եռուն զայրույթով Ստեփանը ներքև էր գլորվում ինչպես մի ձի, որը փախցնում-տանում է ձիավորին։ Նրանք տուն էին վերադառնում իբրև թշնամիներ։

Կարծես թե հարկավոր էր այնպիսի մի դեպք, որը արագացներ վերջին ժամանակներում նրանց միջև հաստատված անորոշ ու թշնամական հարաբերությունների լուծումը։ Ճամբարից մեկնեցին դարձյալ հինգ հոգի միասին։ Բրիշկային լծեցին Պետրոյի ու Ստեփանի ձիերը։ Խրիստոնյան գնում էր իր ձին նստած։ Անդրեյ Տամիլինը դողացնում էր տենդից, պառկել էր բրիշկայի բուդկայում, շինելի տակ։

Ֆեդոտ Բոդովսկովը ծուլացավ ձիերը քշել, այս պատճառով էլ կառապանի դերը Պետրոն էր կատարում։ Ստեփանը քայլում էր բրիչկայի կողքից, մտրակով փշրում ճամփի կողքին աճած ուղտափշի թունդ կարմիր գլխիկները։ Անձրև էր գալիս։ Խիտ սևահողը կպրի նման կպչելով անիվներին, պտտվում էր դրանց հետ։ Աշնան երկինքը, ամպերով պարուրված թխակապույտ գույն ուներ։ Իջավ գիշերը։ Որքան էլ դեռ ու դեն էին նայում, որևէ խուտորից լույսեր չէին երևում։ Պետրոն առատաձեռնությամբ մտրակի հարվածներ էր տեղում ձիերի վրա։ Եվ ահա հենց այստեղ մթության մեջ Ստեփանը բղավեց։

— Այդ ի՞նչ ես անում, հը՞... քո ձիուն ափսոսում ես, իսկ իմ ձիուն հա՛ զարկում ես ու զարկում։

— Լա՛վ մտիկ արա։ Որը լավ չի գնում, նրան էլ թակում եմ։

— Քիչ է մնում քե՛զ լծեմ։ Թուրքերը հո լավ քաշողներ են...

Պետրոն թողեց երասանները։

— Ուզածդ ի՞նչ է, հը՞։

— Նստիր տեղդ, մի՛ վեր կենա։

— Հենց այդ է, է՛, սսկվեիր — լավ կլիներ։

— Ի՞նչ ես կպել դրան, է՛յ, — դմդմբալի ձայնով ասաց Խրիստոնյան՝ ձին քշելով դեպի Ստեփանը։

Վերջինս լուռ էր։ Մթության մեջ նրա դեմքը չէր երևում։ Կես ժամ լուռ գնում էին։ Ցեխը ճլմփում էր անիվների տակ։ Մաղվող անձրևը քնկոտ կտկտում էր բուդկայի բրեզենտե կտուրին։ Պետրոն երասանները թողած՝ ծխում էր։ Մտքում ընտրում էր այն բոլոր վիրավորական խոսքերը, որ նոր ընդհարման դեպքում պիտի ասեր Ստեփանին։ Ոխը հանգիստ չէր թողնում նրան։ Ուզում էր թունդ հայհոյել այդ փուչ Ստեփանին, ծաղրել նրան։

— Դե՛ն քաշվիր։ Թող մտնեմ բուդկան,— Ստեփանը մի քիչ հրեց Պետրոյին, թռավ ոտնատեղի վրա։

Հենց այստեղ էլ անսպասելիորեն ցնցվեց բրիչկան ու կանգ առավ։ Ցեխի մեջ սլկալով, դոփդոփեցին ձիերը, պայտերի տակից կայծեր թռան։ Պրկված լծաձողը շրխկոց արձակեց։

— Բը՛ռռռռ...— բղավեց Պետրոն՝ բրիչկայից վայր թռչելով։

— Այդ ի՞նչ բան է,— անհանգստացավ Ստեփանը։

Մոտեցավ Խրիստոնյան։

— Բան եք ջարդե՞լ, փուչ կենդանիներ...

— Լույս վառիր։

— Լուցկի ո՞ւմ մոտ կա։

— Ստեփան, տուր լուցկին։

Առջևում խոխոալով, թպրտում էր ձիերից մեկը։ Լուցկին վառվեց։ Լույսի նարնջագույն բոց, ու էլի մթություն։ Պետրոն դողդողջուն ձեռներով շոշափում էր ընկած ձիու մեջքը։ Քաշեց սանձը։

Դե՛հ...

Ձին թառանչելով ընկավ կողքի, առեղը ճքճքաց։ Վրա հասած Ստեփանը մի քանի հատ լուցկի վառեց։ Նրա ձին ընկել էր ու գլուխը վերև էր գցում։ Առջևի մի ոտը մինչև ծունկը խրվել էր արջամկան փորած բնի մեջ։

Խրիստոնյան դես-դեն ընկնելով, արձակեց ձգափոկերը։

— Փրկե՛լ ձիու ոտը։

— Արձակիր Պետրոյի ձին, շո՛ւտ։

— Կաց, է՛, անիծված։ Բ՛ռռռ...

— Անտերը քացի է տալի։ Հեռո՛ւ։

Ստեփանի ձին դժվարությամբ ոտքի հանեցին։ Ցեխի մեջ կորած Պետրոն բռնել էր նրա սանձը։ Խրիստոնյան ցեխի մեջ սողում էր ծնկաչոք, շոշափելով բարձրացրած, անկյանք ոտքը։

— Երևի կոտրել է...— դմդմբաց նա։

Ֆեդոտ Բուդովսկովը ձեռքով շրմփացրեց ձիու դողդողջուն մեջքին։

— Հապա, ման ածիր, գուցե կգնա։

Պետրոն սանձը քաշեց դեպի իրեն։ Ձին ցատկեց առանց առջևի ձախ ոտը գետին դնելու, և վրնջաց։ Տամիլինը հագնելով շինելը, վշտացած դես ու դեն էր ընկնում։

— Օյին խաղացիք, էլի... Փչացրիք ձին, ափսո՛ս։

Ստեփանը, որ շարունակ լուռ էր, ասես հենց դրան էր սպասում. Խրիստոնյային մի կողմ հրելով, հարձակվեց Պետրոյի վրա։ Նշան էր բռնել գլխին, բայց վրիպեց,— խփեց

տոին։ Կպան իրար։ Ընկան ցեխի մեջ։ Մեկի շապիկը ճըղ-
վեց։ Ստեփանը գետնեց Պետրոյին ու ծունկը սեղմելով նրա
ոտքին, խփում էր հա՛ խփում բռունցքով։ Խրիստոնյան մայր
հայհոյելով անջատեց նրանց։

— Ախր ինչի՞ համար, է՛... — բղավում էր Պետրոն ար-
յուն թքելով։

— Կարգին քշիր ձիերը, ի՛ժ։ Ճամփով գնա...

Պետրոն փորձում էր պոկ գալ Խրիստոնյայի ձեռներից։

— Դեհ, դե՛հ, խելոք կաց, հա՛,— ասում էր վերջինը՝
մի ձեռքով նրան սեղմելով բրիչկային։

Պետրոյի ձիու հետ լծեցին Ֆեդոտ Բոդովսկովի ցածրիկ,
բայց դիմացկուն ձիուկը։

— Նստիր իմ ձին,—հրամայեց Ստեփանին Խրիստոնյան։
Ինքը մտավ բուդկա, Պետրոյի մոտ։

Արդեն կեսգիշերին հասան Գլինովսկոյ խուտորը։ Կանգ
առան խուտորի ծայրին գտնվող մի փոքրիկ խրճիթի մոտ։
Խրիստոնյան գնաց, որ գիշերելու տեղ խնդրի։ Ուշադրություն
չդարձնելով որձ շան վրա, որը բռնում էր նրա շինելի փե-
շերից, նա մոտեցավ պատուհանին, բացեց փեղկը, եղունգով
քերեց ապակին։

— Տանտե՛ր, է՛յ։

Անձրևի խշշոց և շան երկար հաչոց։

— Ա՛յ տանտեր, է՛յ բարի մարդիկ, ի սեր Քրիստոսի
թողեք գիշերենք, հը՞։ Զինվորներ ենք, ճամբարներից ենք
գալի։ Քանիսն ե՞նք։ Հինգ հոգի ենք։ Ըհը՛, դեհ, փառք քեզ
Քրիստոս։

— Մտեք,— բղավեց Խրիստոնյան՝ շուռ գալով դեպի
դարբասը։

Ֆեդոտը ձիերը ներս արեց բակը։ Դիպավ խոզի տաշտա-
կին, որ ընկած էր բակի մեջտեղում, սայթաքեց, հայհոյանք
թափեց։ Ձիերը տեղավորեցին շարդախի ծածկի տակ։ Տամի-
լինը, դողալուց չխկչխկացնելով ատամները, մտավ խրճիթ։
Բուդկայում մնացին Պետրոն ու Խրիստոնյան։

Առավոտ ծեգին վեր կացան մեկնելու։ Խրճիթից դուրս
եկավ Ստեփանը, նրա ետևից շորորալով քայլում էր զառամ,
կուզիկ մի պառավ։ Խրիստոնյան, որ լծում էր ձիերը, խըղ-
ճաց նրան։

— Է՛յ, տատո, այդ ո՞նց ես կուզիկացել, օ՜-օ։ Ժամումը
կարող ես լավ ծունր դնել, հա՛ա, մի քիչ կռացար, հենց գե-
տինն է։

— Մատաղդ լինեմ, ատամանցի, ես ծունր կդնեմ, իսկ
քո վրայից կարելի է շներ էլ կախ տալ... Ամեն մարդ պիտի
իր չափը ճանաչի,— պառավը խստասիրտ ժպտաց՝ Խրիս-
տոնյային զարմացնելով չմաշված, մանր ատամների խիտ
շարքով։

— Հլա սրա՛ն տես, է՛, ի՛նչ ատամներ ունի, ոնց որ
գայլաձուկ։ Գոնե մի տասը հատ նվեր տայիր ինձ, խեղճիս։
Չահել եմ, ամա ծամելու համար ատամ չկա։

— Բա ես ի՞նչ անեմ, որդիս։

— Քեզ ձիու ատամներ կդնենք, տատո։ Մեկ է, մեռ-
նելու ես, իսկ այն աշխարհում ատամներին մտիկ չեն անում.
սրբերի համար դա նշանակություն չունի։

— Հերիք դուրս տաս ավել-պակաս,— ժպտաց Տամի-
լինը՝ բարձրանալով բրիչկայի վրա։

Պառավը Ստեփանի հետ գնաց դեպի շարդախը։

— Սրանցից ո՞րն է։

— Սևը,— հառաչեց Ստեփանը։

Պառավը իր հենակը դրեց գետին ու տղամարդու պես
վստահ, ուժեղ շարժումով բարձրացրեց ձիու վնասված ոտը։
Կեռացած, բարակ մատներով երկար շոշափում էր ծնկոսկրը։
Ձին իշեցնում էր ականջները, բաց անում դարչնագույն
ատամնաշարքը, ցավից պպզում ետին ոտների վրա։

— Չի՛ կոտրվել, կազակ աղբեր, չի՛ կոտրվել։ Թող մնա,
կբուժեմ։

— Բան դուրս կգա՞, տատի։

— Հը՞։ Ո՞վ գիտե, ջանս... Կարելի է բան դուրս գա։
Ստեփանը ձեռքը թափ տվեց ու գնաց դեպի բրիչկան։

— Թողնո՞ւմ ես, թե ո՞նց,— նրա ետևից հարցրեց պա-
ռավը։

— Թող մնա, էլի՛։

— Պառավը կբուժի, հա՛. երեք ոտով թողիր, բոլորովին
առանց ոտների ետ կստանաս։ Ամա՛ թե տավարի բժիշկ
գտար, հա՛ա,— քրքջում էր Խրիստոնյան։

XIV

— ... Նրա կարոտն եմ քաշում, սիրելի տատիկ։ Ինքս իմ աչքի առաջ հալումաշ եմ լինում։ Օր չի լինում, որ յուրկաս չնեղացնեմ,— քանի գնում լայնանում է վրաս... Մեկ էլ տեսար բակի կողքից անցավ, ու սիրտս փուլ եկավ, նվաղեց... կընկնեի գետին, կպաչեի նրա ոտքի տեղերը... կարելի է թալիսման է արել... Մի ճար արա, տատի ջան։ Ուզում են պսակել նրան... Մի ճար արա, մերս։ Ինչ որ արժե, կտամ։ Թեկուզ վերջին շապիկս էլ չեմ խնայի, միայն թե ճար արա։

Դրոզդիխա տատը պայծառ, կնճիռների հաշիայի մեջ կորած աչքերով նայում է Ակսինյային, օրորում գլուխը նրա տասած դառն խոսքերից։

— Այդ ո՞ւմ տղան է։

— Պանտելեյ Մելեխովի։

— Թուրքի՞։ Հա՞։

— Հենց նրա տղան։

Տատը ճպճպացնում է ներս ընկած բերանը, ուշացնում պատասխանը։

— Կգաս էգուց, ա՛ հարս, շուտ կգաս։ Ծեգը բացվեց թե չէ. կգաս։ Կգնանք Դոն, ջրի ափը։ Կթափենք դարդերս։ Տանից մի պտղունց աղ կվերցնես։ Պրծավ-գնաց։

Ակսինյան դեղին կիսաշալով ծածկում է երեսը, կուզեկուզ դուրս է գնում դարբասից։

Նրա մթին կերպարանքը չքանում է գիշերային խավարում։ Չոր քստքստում են քոշերի ներբանները։ Քայլերը լռում են։ Հեռվում, խուտորի ծայրում ինչ-որ մարդիկ կռիվ են տալի ու երգեր են բռռում։

Լուսաբացին Ակսինյան, որ ամբողջ գիշեր չէր քնել, կանգնած է Դրոզդիխայի պատուհանի տակ։

— Տատի՛։

— Ո՞վ է։

— Ես եմ, տատի, վեր կաց։

— Հիմի կհագնվեմ։

Ներբանցքով իջնում են Դոնը։ Նավակայանում, կամրջակի մոտ, ջրի մեջ ընկած է սայլի ինչ-որ քարշակ։ Ջրափի

ավազը սառույցի նման պաղ է։ Դոնի վրա խոնավ, ցուրտ մուժ է հոսում։

Դրոզդիխան ոսկրոտ ձեռքով վերցնում է Ակսինյայի ձեռքը, նրան քաշում է դեպի ջուրը։

— Աղ վերցրե՞լ ես։ Տո՛ւր։ Խաչակնքիր արևելքի կողմը։

Ակսինյան խաչակնքում է։ Զարմացած նայում է դեպի երջանիկ, վարդակարմիր այգաբացը։

— Բռովդ ջուր վերցրու։ Խմի՛ր,— հրամայում է Դրոզդիխան։

Ակսինյան կոֆտայի թևքերը թրջելով՝ ջուր խմեց։ Տատը ոտները լայն բացեց դանդաղահոս ալիքների վրա, նա սև սարդի էր նմանվում. պպզեց, սկսեց՝ փսփսալ.

— Պաղ աղբյուրներ, հատակն ի վեր... Արուն-կրակ... Սրտումը ցեց... Ո՛վ չար կարոտ... Ու սուրբ խաչով... ամենասուրբ դու տիրամեր... Ասսո ծառա Գրիգորիին... — հասնում էր Ակսինյայի ականջին։

Դրոզդիխան աղը շաղ տվեց թաց ավազի վրա, ոտների տակ, ջրի մեջ, մնացորդը ածեց Ակսինյայի ծոցը։

— Վրադ ջուր ցանիր, շո՛ւտ։

Ակսինյան այդպես արեց։ Թախծոտ ու շարասիրտ նայեց Դրոզդիխայի դարչնագույն թշերին։

— Վերջացա՞վ թե ոնց։

— Դնա, քնիր, աղունիկս։ Վերջացավ։

Ակսինյան հևալով, վազեվազ տուն գնաց։ Բակում բառաչում էին կովերը։ Դարյա Մելեխովան քնկոտ ու կարմրաթուշ, խաղացնելով գեղեցիկ, կամար հոնքերը, իրենց կովերը տանում էր նախրին խառնելու։ Նա ժպտալով նայեց իր կողքից վազող Ակսինյային։

— Հը՛, լա՞վ քնեցիր, հարևանուհի։

— Փա՛ռք աստծու։

— Այդ ո՞րտեղ էիր այսքան վաղ ման գալի։

— Գործով մի տեղ էի գնացել։

Առավոտյան ժամասացության զանգերը տվին։ Դանդաղ, ծոր տալով հեղվում էին պղնձահնչուն ղողանջները։ Ներբանցքից լսվում էր հոտաղի մտրակի շրխկոցը։

Ակսինյան շտապելով դուրս քշեց կովերը, կաթը տարավ հաշտը՝ քամելու։ Գոզնոցով սրբեց մինչև արմունկները

քշտած ձեռները. ինչ-որ մտքերով տարված, կաթը լցնում էր փրփրակալած քամիչի մեջ։

Փողոցից լսվեց անիվների գոգոց։ Խրխնջացին ձիերը, Ակսինյան վայր դրեց դույլը, գնաց պատուհանից նայելու։

Ստեփանը ձեռքով թուրը պահած՝ տուն էր գալիս։ Կազակները մեկմեկուց առաջ անցնելով, ձիերը քշում էին դեպի հրապարակը։ Ակսինյան մատներով ճմռթեց գոգնոցը ու նստեց նստարանին։ Քայլեր մուտքի սանդուղքի վրայով... քայլեր հաշտում... քայլեր հենց դռան ետևում..

Ստեփանը կանգնեց շեմքին, նիհարած և օտար։

— Հը՛...

Ակսինյան կոտրատելով իր ամբողջ խոշոր, լիքը մարմինը, գնաց ընդառաջ։

— Ծնծի՛ր,— ձայնը երկարացնելով ասաց նա ու կողքի կանգնեց։

— Դե՛, Ակսինյա...

— Չե՛մ թաքցնում, հոգուս մեղք կա։ Խփիր Ստեփան։

Նա գլուխն ուսերի մեջ առած, գունդ ու կծիկ դարձած, ձեռներով միայն փորը պաշտպանելով, կանգնել էր երեսը դեպի Ստեփանը։ Վախից այլանդակված, բութ դեմքից անՀարթ նայում էին սևորակ աչքերը։ Ստեփանն օրորվելով անցավ նրա կողքից։ Ճանապարհից եկած տղամարդու քրտինքի ու չվացված շապկի դառն հոտ էր գալիս, որ նման էր օշինդրի հոտին։ Ստեփանն առանց գլխարկը հանելու պառկեց մահճակալի վրա։ Մի քիչ պառկեց, ուսից հանեց սուսերակալը։ Միշտ ճարպկորեն ոլորած, շեկ բեղերը թույլ կախվել էին ներքև։ Ակսինյան առանց գլուխը շուռ տալու շեղակի նայում էր նրան։ Երբեմն ցնցվում էր։ Ստեփանը ոտները դրեց մահճակալի մեջքին։ Երկայնաճիտք կոշիկներից կախվում էր լպրծուն ցեխը։ Նա նայեց առաստաղին, մատներով տնտղեց թրակոթի կաշվե փունջը։

— Հլա բան-ման չե՞ս եփել։

— Չէ՛...

— Դե մի բան բեր ուտելու։

Թասից կաթ էր խմում գդալով, սրբում բեղերը։ Հացը երկար էր ծամում, այտերի վրա թռչկոտում էին վարդագույն մաշկով պրկված ուռուցքները։ Ակսինյան կանգնել էր վառարանի մոտ։ Թունդ սարսափով նայում էր ամուսնու փոքրիկ, պիրկ ականջներին, որոնք ուտելիս վեր ու վար էին սողում։

Ստեփանը սեղանից վեր կացավ, խաչակնքեց։

— Պատմիր, սիրելի,— կարճ խնդրեց նա։

Ակսինյան գլուխը քարշ արած, հավաքում էր սեղանը։ Լռում էր։

— Պատմիր, թե ոնց էիր սպասում քո մարդուն, ոնց էիր նրա պատիվը պահում։ Դե՞հ։

Սարսափելի մի հարված իջավ Ակսինյայի գլխին, ոտները կտրվեց գետնից, նրան շպրտեց դեպի շեմքը։ Նա մեջքով խփվեց դռան դրանդիին, խուլ հառաչեց։

Ստեփանը կարող էր գլխին ճարպիկ հարված հասցնելով գետին գլորել չէ՛ թե թույլ ու անզոր կնկանը, այլև ամրակազմ, հաղթանդամ ատամանցիներին։ Արդյո՞ք վախը ոտքի հանեց Ակսինյային, թե՞ կնկա կենսունակ բնությունը դիմացավ այդ ամենին, միայն թե նա մի փոքր պառկած մնաց, շունչ առավ, կանգնեց շորեքթաթ։

Ստեփանը ծխեց սենյակի մեջտեղում ու չնկատեց, թե ինչպես նա ոտքի ելավ։ Թութունի տոպրակը գցեց սեղանի վրա, իսկ Ակսինյան արդեն դուռը շրխկացնելով դուրս թռավ։ Ստեփանը վազեց նրա ետևից։

Ակսինյան քամու արագությամբ, արնաշաղախ սլանում էր դեպի ցանկապատը, որով նրանց բակը բաժանված էր Մելեխովների բակից։ Ստեփանը ցանկապատի մոտ հասավ նրան։ Իր սև ձեռքը բազեի նման իջավ Ակսինյայի գլխին։ Ստեփանը բռունցքով բռնեց նրա մազերից։ Քաշեց, գցեց գետնին, մոխրի մեջ, այն մոխրի, որ Ակսինյան ամեն օր վառարանից տանում թափում էր ցանկապատի մոտ։

Ի՞նչ մի առանձին բան կա, որ ամուսինը ձեռները քամակին դրած, սապոգներով դնքսում է սեփական կնկանը... կողքից անցնում էր մի թևը կտրած Ալյոշկա Շամիլը, սա նայեց, նայեց, աչքերը թարթեց ու ժպտաց՝ շարժելով իր թփակալած մորուքը. շատ լավ է՛լ հասկանալի է, թե Ստեփանն ինչի համար է քոթակում իր օրինական կողակցին։

Շամիլը կուզենար կանգնել ու մտիկ տալ (ում էլ որ պատահած լիներ, այնուամենայնիվ հետաքրքիր է, է՛). ծծծե-

լով պիտի սպանի՞, թե ոնց, բայց խիղճը թույլ չի տալիս։ Դեհ, ինքը հո կնիկ չէ՞։

Թե որ հեռվից Ստեփանին նայեիր, կկարծեիր, թե մարդը կազակ է պարում։ Հենց այդպես էլ մտածեց Գրիշկան, օթախի պատուհանից տեսնելով, թե ինչպես է ոստոստում Ստեփանը։ Իսկ երբ տեսավ, թե ինչ էր կատարվում, տնից դուրս թռավ։ Ոտների մատների վրա վազեց դեպի ցանկապատը՝ կրծքին պինդ սեղմելով քար կտրած բռունցքները։ Նրա ետևից ծանր դոփդոփելով գնում էր Պետրոն։

Գրիգորին թռչունի պես թռավ բարձր ցանկապատի վրայով։ Թափ առնելով՝ ետևից շրմփացրեց զբաղված Ստեփանին։ Սա օրորվեց ու ետ դառնալով, արջի նման հարձակվեց Գրիշկայի վրա։

Մելեխով եղբայրները կատաղաբար էին կռվում։ Կտցում էին Ստեփանին, ոնց որ լեշակեր հավքերը կտցում են լեշը։ Ստեփանի ծանր բռունցքը մի քանի անգամ գետին գլորեց Գրիշկային։ Սա թույլ էր քարի պես պնդացած Ստեփանի դեմ։ Բայց կարճահասակ, ճարպիկ Պետրոն կուչ էր գալիս հարվածներից, ոնց որ եղեգը քամուց, ու գետին չէր ընկնում։

Ստեփանը մի աչքից կրակ թափելով (մյուսը ուռել, խակ շլորի գույն էր առել), նահանջում էր դեպի տան մուտքը։

Նրանց բաժանեց Խրիստոնյան, որ եկել էր Պետրոյի մոտ՝ ձիու սանձը վերցնելու։

— Ցրվել,— նա թափահարում էր լայն-լայն թևքը,— ցրվե՛լ, թե չէ քաշ կտամ ատամանի մոտ։

Պետրոն բոի մեջ խնամքով թքեց բերանում եղած արյունը ու մի ատամի կեսը, խռպոտ ասաց.

— Գնանք, Գրիշկա։ Մենք դրան մի օր կբռնենք...

— Դու կա՛ց, հլա կընկնես ձեռս,— մուտքի սանդուղքից սպառնում էր՝ շատ կապտուկներով պատած Ստեփանը։

— Լա՛վ, լա՛վ։

— Առանց լավի էլ հոգիդ կհանեմ փոր ու փսորիդ հետ։

— Հա՛-ա՞, լո՞ւրջ ես ասում, թե հանաք ես անում։

Ստեփանն արագ իջավ սանդուղքից։ Գրիշկան փորձեց նետվել նրա վրա, բայց Խրիստոնյան նրան բակից դուրս հրելով՝ ասաց.

— Դեհ, դեհ, ե՛տ կաց, թե չէ կտոր-կտոր կանեմ ոնց որ ձկանը։

Այդ օրվանից Մելեխովների ու Ստեփան Աստախովի միջև ոխ ու քենը չլուծվող մի հանգույց դարձավ։

Գրիգորի Մելեխովին վիճակված էր այդ հանգույցը լուծել երկու տարուց հետո, Արևելյան Պրուսիայում, Ստոլիպին քաղաքի մոտ։

XV

— Պետրոյին ասա, որ լծի զամբիկը ու իր ձին։

Գրիգորին գնաց բակ։ Պետրոն շարդախի տակից դուրս էր քաշում բրիշկան։

— Հերըս ասում է՝ լծիր զամբիկը ու քո ձին։

— Առանց նրան էլ գիտենք։ Թող սսկվի,— ուղղելով առեղը՝ պատասխանեց Պետրոն։

Պանտելեյ Պրակոֆևիչը հանդիսավոր տեսքով, ոնց որ երեցփոխը պատարագի ժամանակ, խփշտում էր բորշչի մնացորդը, լողում տաք քրտինքի մեջ։

Դունյաշկան խորամանկ նայեց Գրիգորիին, կեռ թարթիչների ինչ-որ ստվերախիտ զովում թաքցրեց իր աղջկական քմծիծաղը — ժպիտը։ Կարճ շորով, լրջադեմ Իլյինիչնան տոնական բաց-դեղնավուն շալը գցած, շուրթերի անկյուններում մայրական անհանգստությունը թաքցրած, նայեց Գրիգորիին ու դիմեց ծերուկին,

— Հերի՛ք զխտվես, ա՛յ Պրակոֆիչ։ Այդքան սովա՞ծ ես, ինչ է։

— Չի թողնում որ մարդ հաց ուտի։ Կպչում է կարկատանի պես։

Պետրոն դռնից ներս խոթեց երկար, ցորնագույն-դեղնավուն բեղերը։

— Հրամմեցե՛ք, ֆայտոնը պատրաստ է։

Դունյաշկան փոթկաց ու թևքով ծածկեց երեսը։

Խոհանոցի միջով անցավ Դարյան, խաղացրեց հոնքերի բարակ աղեղները՝ նայելով փեսացուին։

Իրրև հարսնախոս, գնում էր Իլյինիչնայի հորեղբոր աղջիկը, ճարպիկ մի կին, այրի մորաքույր Վասիլիսան։ Նա

առաջինը տեղավորվեց բրիչկայի մեջ՝ դես ու դեն դարձնելով գլաքարի նման կլոր գլուխը, քոքռալով, գիրգ շրթունքների տակից ցույց տալով ծուռտիկ, սև ատամները։

— Դու, Վա՛սենկա, այնտեղ ատամներդ ցույց չտաս, հա՛-ա,— նախազգուշացրեց նրան Պանտելեյ Պրակոֆևիչը,— թե չէ այդ քո ռեխով ամբողջ գործը կփչացնես... ատամներդ հարբածի պես են նստել բերանումդ. մեկը դեսն է ծռվել, մյուսը դենը...

— Է՛հ, սանահեր, ինձ հո չե՞ն նշանելու։ Ես հո փեսացու չե՞մ։

— Դա այդպես է, բայց և այնպես չծիծաղես։ Շատ են փչացել ատամներդ... Այնքան սևացել են, որ մինչև իսկ նայելն էլ զզվելի է։

Վասիլիսան նեղանում էր, այդ ժամանակ Պետրոն բացեց դարբասը։ Գրիգորին վերցրեց հոտ արձակող կաշվե երասանները, թռավ-նստեց իր տեղը։ Պանտելեյ Պրակոֆևիչը և Իլյինիչնան նստեցին բրիչկայի ետին մասում, իրար կողքի, ասես նորապսակներ լինեին։

— Մտրակի՛ր դրանց,— բղավեց Պետրոն՝ ձեռքից բաց թողնելով սանձափոկերը։

— Դե մի՛ խլշկոտի, անտեր,— Գրիշկան կծեց շրթունքը ու մտրակով խփեց Պետրոյի ձիուն, որը խաղացնում էր ականջները։

Ձիերը քաշեցին լծափոկերը, իսկույն պոկ եկան տեղից։

Տես, մի բանի չկպչես,— ճղճղաց Դարյան, բայց բրիչկան բակից դուրս ելավ ու անհարթ ճանապարհի վրա ցատկոտելով, աղմկալից սլացավ փողոցի երկարությամբ։

Գրիգորին կողքի կռանալով, մտրակում էր Պետրոյի շարային ձիուն, որը խլշկոտելով էր վազում։ Պանտելեյ Պրակոֆևիչը մորուքն առել էր բռի մեջ, ասես վախենալով, որ քամին կպոկի ու կտանի։

— Մադիանի՛ն զարկ,— կերկերում էր նա, աչք ածում դես ու դեն՝ թեքվելով դեպի Գրիգորիի մեջքը։

Իլյինիչնան կոֆտայի ժանյակավոր թևքով սրբում էր քամուց առաջացած արցունքը, աչքերը ճպելով նայում, թե ինչպես Գրիգորիի մեջքի վրա, քամուց ուռչելով ու ասես նրան կուզիկ դարձնելով, փոփոում էր սատինե կապույտ վերնաշապիկը։ Հանդիպող կազակները ճանապարհ էին տալիս, երկար նայում բրիչկայի ետևից։ Շները բակերից դուրս թռչելով, վրա էին տալիս, քիչ էր մնում ընկնեին ձիերի ոտների տակ։ Նոր անվադողերի դղրդոցի մեջ նրանց հաչոցը չէր լսվում։

Գրիգորին չէր խնայում ոչ մտրակը, ոչ էլ ձիերին, ու տասը րոպեից հետո խուտորից դուրս եկան, ճանապարհի մոտ փռված էին վերջին տների այգիները։ Ահա Կորշունովների ընդարձակ տուն ու տեղը։ Տախտակե ցանկապատ։ Գրիգորին քաշեց երասանները, ու բրիչկան, կես խոսքի վրա ընդհատելով իր երկաթի պատմությունը, կանգ առավ ներկած, մանր քանդակած դարբասի առաջ։

Գրիգորին մնաց ձիերին նայելու, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը կաղալով քայլեց դեպի տան մուտքը։ Նրա ետևից յուրքաների շրշյունով գնացին կարմիր խաշխաշ Իլյինիչնան ու Վասիլիսան, որը շատ պինդ սեղմել էր շրթունքները։ Ներունին շտապում էր, վախենալով, որ կկորցնի ճանապարհին իր մեջ հավաքած համարձակությունը։ Նա կաղ ոտը խփեց սանդուղքի բարձր աստիճանին, ու դեմքը ցավից կնճռոտելով, արագ բարձրացավ լվացած սանդուղքը։

Նա տուն մտավ համարյա Իլյինիչնայի հետ միասին։ Նրա համար ձեռնտու չէր իր կնոջ կողքին կանգնել,— վերջինս իրենից մի ամբողջ քառորդաչափ բարձր էր. դրա համար էլ նա շեմքից մի քայլ առաջ անցավ, աքլորավարի ծալեց ոտը ու գլխարկը հանելով, խաչակնքեց սև, մրակալած սրբապատկերի առաջ։

— Բարև։ Ողջ-առո՞ղջ եք։

— Բարև, էհ, փառք աստծու,— նստարանից քիչ բարձրանալով՝ պատասխանեց տանտերը,— ցածրահասակ, պեպենոտ դեմքով, զառամած մի կազակ։

— Ընդունիր հյուրերին, Միրոն Գրիգորևիչ։

— Հյուրերին միշտ էլ ուրախությամբ ենք ընդունում։ Մա՛րյա, նստեցրու մարդկանց։

Տարեց, հարթակուրծք տանտիրուհին ի ցույց թափ տվեց տաբուրետները, հրամցրեց հյուրերին։ Պանտելեյ Պրակոֆևիչը նստեց ծայրի տաբուրետին, աղլուխով սրբեց քրտնած, թուխ ճակատը։

— Ձեզ մոտ գործով ենք եկել,— սկսեց նա առանց դեմ ու դեմի։

Այդ ժամանակ Իլյինիչնան ու Վասիլիսան հավաքելով յուրկաները, նույնպես նստեցին։

— Հրամանքներդ բարի, այդ ի՞նչ գործ է որ,— ժպտաց տանտերը։

Ներս մտավ Գրիգորին, այս ու այն կողմ աչք ածեց։

— Բարև, ո՛նց եք, հաջողա՞կ եք։

— Բարին արևդ, փառք աստծո,— ձայնը երկարացնելով պատասխանեց տանտիրուհին։

— Փա՛ռք աստծո,— հաստատեց նաև տանտերը։ Պեպենների ծածկված նրա դեմքի վրա դարչնագույն կարմրություն երևաց. միայն այստեղ նա գլխի ընկավ, թե ինչի համար են եկել հյուրերը։

— Ասա, որ սրանց ձիերը ներս անեն բակը։ Թող խոտ էլ տան,— դիմեց նա կնոջը։

Վերջինս դուրս ելավ։

— Մի պուճուր գործ ունենք ձեզ հետ...—շարունակեց Պանտելեյ Պրակոֆևիչը։ Նա տնտղում էր խուճուճ, թուխ մորուքը, հուզմունքով թափահարում գլուխը։

— Դուք աղջիկ ունեք, հարսնացու, իսկ մենք — փեսացու... Ուրեմն, լավ չէ՞ր լինի, որ մոտիկանայինք։ Կուզենք իմանալ՝ հիմի ձեր աղջկան պիտի նշանե՞ք թե չէ։ Կարելի է խնամի լինենք, հը՞։

— Դե՛հ, ո՛վ գիտե...— տանտերը քորեց քաչալ գլուխը,— դրուստը որ ասեմ, այս տարի նշանելու միտք չունեինք։ Անհաշիվ գործեր կան, աղջիկս էլ հո այնքան շատ մեծացած չի։ Նոր է անցկացրել տասնութերորդ գարունը։ Այնպես չի՞, Մարիա։

— Այդպես կլինի։

— Հիմի հենց ծաղիկ հասակումն է, էլ ինչո՞ւ պահել, բա քի՞չ կան տանը մնացած, պառավ աղջիկներ,— մեջ ընկավ Վասիլիսան, որը չէր կարողանում տաբուրետի վրա հանգիստ նստել (նրան ծակծկում էր հաշտում գողացած ու կոֆտայի տակ դրած ավելը. ըստ հավատալիքի, եթե հարսնախոսները գողանում են հարսնացուի ավելը, մերժում չեն ստանա)։

— Մեր աղջկան ուզողներ էին եկել դեռ անցած գարնանը։ Մեր աղջիկը տանը չի մնա։ Էհ, գոհություն աստծո, այնպիսի աղջիկ է, որ ձեռքից ամեն բան գալիս է թե դաշտումը և թե տանը...

— Որ լավ մարդ պատահի, կարելի է և նշանել,— միջամտեց Պանտելեյ Պրակոֆևիչը կանանց կչկչան խոսակցությանը։

— Նշանելը հե՛չ,— տանտերն էլի քորեց գլուխը, — երբ ասես կարելի է նշանել։

Պանտելեյ Պրակոֆևիչը կարծեց, թե տանտերերը մերժում են, ու տաքացավ։

— Դեհ, իհարկե, այդ ձեր գործն է... Փեսացուն այնպիսի տղա է որ, ո՞ւմ ուզի, որ չհամաձայնվեն։ Իսկ եթե դուք, օրինակի համար, կարող է պատահել, որ վաճառական փեսացու եք ման գալի, ուրեմս այդ ուրիշ բան է, մեր կողմից ներողություն։

Գործը կարող էր և վիժել. Պանտելեյ Պրակոֆևիչը ֆսֆրսում էր ու կարմրում ոնց որ կարմիր ճակնդեղ, հարսնացուի մայրը կչկչում էր ուրուր տեսած թուխսի պես, բայց հարկավոր բոպեին միջամտեց Վասիլիսան։ Ա՛մա թե լեզու թափեց, հա՛-ա, ասես աղ ածեց ջանի վառած տեղը ու դրստեց գործը։

— Էհ, ի՛նչ խոսք, սիրելիներս։ Բանը որ այդտեղ է հասել, ուրեմս պետք է այնպես անել, որ այդ բանը կարգով գնա ու ձեր զավակներն էլ բախտավոր լինեն։ Հենց Նատալյայի մասին ասենք,— ախր այդ տեսակ աղջիկ արար-աշխարհ ման գաս, չես գտնի։ Ձեռքը ամեն բան կգա. ձեռագործ էլ գիտի, տան գործ էլ։ Դուք էլ հո լավ մարդիկ եք, գիտենք,— ձեռներով հաճելի շարժումներ էր անում Վասիլիսան՝ դիմելով Պանտելեյ Պրակոֆևիչին և փքված Իլյինիչնային,— գիտեք, թե տղան ինչքան լավ փեսացու է։ Մտիկ եմ տալի, ու սիրտս կուչ է գալի դարդից,— այնքան նման է լուսահոգի Դոնյուշկային... սրանց ընտանիքն էլ զոռ աշխատող, քրտինք թափող ընտանիք է։ Պրակոֆևիչը հո արարաշխարհքին հայտնի մարդ է ու բարի գործ բռնող, շրջանում մի հատ է... Որ ուղիղն ասենք, մենք հո մեր երեխաների բախտին հակառակ չե՞նք, հո նրանց վատը չե՞նք ուզում։

Խնամախոսի գլգլան ձայնը մեղրի պես ծորում, լցվում էր Պանտելեյ Պրակոֆևիչի ականջները։ Լսում էր ծերունի Մելեխովը՝ մեծ մատով ու ցուցամատով քթածակից դուրս քաշելով սև, մշտական մթության մեջ խամրած մազերը, հիացած մտածում էր՝ «էֆ, ի՞նչ լեզու է բանեցնում գրողի տարածը։ Ոնց որ գուլպա գործի։ Ա՛յ թե ոնց է բանեցնում ճագերը. դե գլխի ընկիր, թե ինչը ինչից է։ Ա՛յ ինչ եմ ասում,— կնիկ է հա՛-ա, կազակին էլ խելքահան կանի զանազան խոսքերով... Վա՛յ գլուխդ չմեռնի, յուրկա հագած ցեց»,— նա հաճույքով նայում էր խնամախոսին, որը գովասանքներ էր թափում հարսնացուի ու նրա հարազատների վրա՝ հինգերորդ պորտից սկսած։

— Էլ ի՞նչ ասել կուզի, մենք մեր զավակի վատը չենք ուզում։

— Այն ենք ասում, որ նշանելը միգուցե շուտ է,— ժպտալով ու հաշտ տոնով ասաց տանտերը։

— Շուտ չէ, ասուված վկա, շուտ չէ,— համոզում էր նրան Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Վաղ թե ուշ պիտի բաժանվենք մեր զավակից,— կիսակեղծ ու կիսաանկեղծ հեծկլտաց տանտիրուհին։

— Կանչի՛ր աղջկադ մի տեսնենք, Միրոն Գրիգորևիչ։

— Նատա՛լյա։

Դռան շեմքին անհամարձակ կանգնեց հարսնացուն՝ թուխ մատներով շփոթված տնտղելով գոգնոցի բոլորքը։

— Առա՛ջ արի, առա՛ջ արի, մի՛ ամաչի,— սիրտ տվեց մայրը ու ժպտաց արցունքոտ աչքերով։

Գրիգորին, որ նստել էր մի մեծ, կապույտ գույնի ու խունացած սնդուկի մոտ, նայեց նրան։

Փայտե ճաղերի նման թել-թել, սև շարֆի տակից նայում էին համարձակ, գորշ աչքերը։ Շփոթմունքից ու զուսպ ժպիտից դողում էին պիրկ այտերի ոչ խորը, վարդագունող փոսիկները։ Գրիգորին նայեց ձեռներին. դրանք մեծ էին, աշխատանքից կոշտացած։ Կանաչ կոֆտայի տակից, որ հուպ նստել էր պիրկ մարմնին, պարզունակ ու խոնարհաբար գծագրվել և շնչառությունից ելնում ու իջնում էին կուսական ամուր ստինքները, կոճակների նման ցցվել էին սուր պտուկները։

Գրիգորիի հայացքը մի քանի վայրկյան սահեց նրա ամբողջ մարմնովը մեկ,— գլխից մինչև բարձր, գեղեցիկ ոտները։ Դիտեց նա, ինչպես գնորդը նախքան գնելը դիտում է մատակ ձին, ու մտածեց՝ «լավն է», աչքերը հանդիպեցին նրա աչքերին, որոնք սևեռված էին իր վրա։ Անպաճույճ, մի փոքր ջփոթված, ճշմարտացի նայվածքը կարծես ասում էր՝ «ա՛հա ես ամբողջովին, ինչպես որ կամ։ Ինչպես կուզես, այնպես էլ դատիր իմ մասին»։— «Հիանալի ես»,— աչքերով ու ժպիտով պատասխանեց Գրիգորին։

— Դե գնա,— տանտերը ձեռքով արավ։

Նատալյան դուռը վրա բերելիս նայեց Գրիգորիին, շթաքցնելով ժպիտն ու հետաքրքրությունը։

— Ա՛յ թե ինչ, Պանտելեյ Պրակոֆևիչ,— ասաց տանտերը կնոջ հետ հայացքներ փոխանակելով,— դուք իրար մեջ խորհուրդ արեք, մենք էլ խորհուրդ կանենք մեր մեջ, տանս-տանու։ Հետո էլ կվճռենք՝ խնամիներ կլինենք, թե ո՞չ։

Արտաքին սանդուղքից իջնելիս Պանտելեյ Պրակոֆևիչը ասաց.

— Եկող կիրակի գալու ենք, հա՛-ա։

Տանտերը հյուրերին ուղեկցելով մինչև դարբասը, դիմամբ լռեց, կարծես ոչինչ չէր լսել։

XVI

Ստեփանը Ակսինյայի մասին Տամիլինից լուր առնելուց հետո միայն, թախիծով և ատելությամբ համակված, հասկացավ, որ շնայելով իր կնոջ հետ ապրած վատ կյանքին, վաղուցվա այն վիրավորանքին, սիրում էր նրան ծանր առաջ սիրով։

Գիշերները պառկում էր սայլի վրա, շինելով ծածկված, գլուխը ձեռների մեջ առած, ու մտածում էր, թե ինչպես կվերադառնա տուն, ինչպես իրեն կդիմավորի կինը, ու զգում էր, որ կրծքում սրտի փոխարեն ասես մի փրչոտ մորմ է շարժվում... կապտած կոպերն աչքերին քաշած պառկում էր, մտքում պատրաստվելով դատաստանի հազարավոր մանրամասնություններ, ու այնպիսի զգացմունք էր ապրում, որ ասես ատամների վրա հատիկ-հատիկ ու խոշոր

ավազ էր ցանված։ Պետրոյի հետ տուրուդմբոց սարքելով՝ թափում էր բարկությունը։ Տուն վերադարձավ հոգնատանջ վիճակում, այս պատճառով էլ Ակսինյան հեշտ պրծավ։

Այն օրվանից Աստախովի տանը բուն դրեց անտեսանելի մի մեռել։ Ակսինյան կամացուկ էր քայլում, շշնջալով էր խոսում, բայց աչքերի մեջ, հազիվ նշմարվելով, մլմլում էր Գրիշկայի վառած հրդեհի մնացուկ կայծը՝ երկյուղի մոխրով շաղված։

Նայելով նրան, Ստեփանն ավելի շուտ զգում էր այդ, քան տեսնում։ Տանջվում էր։ Գիշերները, երբ խոհանոցում ցախավելի վրա քուն էր մտնում ճանճերի երամը, և Ակսինյան շրթունքները դողացնելով անկողին էր փռում, Ստեփանը ծեծում էր նրան՝ սև, կոշտացած ափը նրա բերանին սեղմելով։ Անամոթաբար հարցուփորձ էր անում Գրիշկայի հետ եղած կապի մանրամասնությունների մասին, Ակսինյան շուռումուռ էր գալի ոչխարենու հոտ արձակող կոշտ մահճակալի վրա, ծանր էր շնչում։ Ելած խմորի պես փափուկ մարմինը խոշտանգելուց հոգնելով, Ստեփանը ձեռքով շոշափում էր նրա դեմքը, արցունքներ էր փնտրում։ Բայց Ակսինյայի այտերը տաք էին ու չոր, Ստեփանի մատների տակ կծկվելով ու բացվելով, շարժվում էին նրա ծնոտները։

— Կասե՞ս։

— Չէ՛։

— Կսպանեմ։

— Սպանիր, սպանիր, ի սեր Քրիստոսի... Կպրծնեմ ցավից... Սա կյանք չէ...

Ատամներն իրար սեղմելով, Ստեփանը ոլորում էր կնոջ կրծքի նուրբ, քրտնքից պաղած մաշկը։

Ակսինյան ցնցվում էր, հառաչում։

— Հը՛, ցավո՞ւմ է,— հրճվում էր Ստեփանը։

— Ցավում է։

— Բա իմ հոգին չէ՞ր ցավում, հը՞։

Ստեփանը ուշ էր քնում։ Քնի մեջ իրար էր սեղմում ու շարժում ուռուցիկ հոդերով սև մատները։ Ակսինյան բարձրանալով ու հենվելով արմունկին, երկար նայում էր ամուսնու գեղեցիկ, քնից փոխված դեմքին։ Ինչ-որ բան էր շշնջում՝ գլուխը գցելով բարձին։

Ակսինյան համարյա չէր տեսնում Գրիշկային։ Մի անգամ Դոնի մոտ հանդիպեց նրան։ Գրիգորին եղները տարել էր ջրելու, բարձրանում էր դարիվեր՝ թափահարելով կարմրավուն ճիպոտը, նայելով ոտներին։ Ակսինյան գալիս էր դեմուդեմ։ Տեսավ ու զգաց, թե ինչպես ձեռների տակ պաղեց դույլերի լծակը ու արյունը թունդ խփեց քունքերին։

Հետո, վերհիշելով այդ հանդիպումը, նա քիչ ջանք չէր թափում ինքն իրեն հավատացնելու, որ այդ եղել էր արթմնի վիճակում։ Գրիգորին նրան տեսավ, երբ նա բոլորովին մոտեցել էր իրեն։ Լսելով դույլերի շրխկոցը, որ դիտմամբ առաջացրեց Ակսինյան, նա մի փոքր բարձրացրեց գլուխը, ցնցեց հոնքերը ու հիմար ժպիտով ժպտաց։ Ակսինյան քայլում էր, նրա գլխի վրայից նայելով կանաչավուն, ալեծուփ Դոնին ու ավելի ու ավելի հեռու,— ավազոտ ցամաքաշերտի կատարին։

Նա կարմրեց, և նրա աչքերում արցունքներ երևացին։

— Կսյո՛ւշա։

Ակսինյան անցավ մի քանի քայլ ու կանգ առավ՝ թեքելով գլուխը, ասես հարվածից պաշտպանվելու համար։ Գրիգորին չարացած ճիպոտելով ետ մնացող չալտիկ եզանը, առանց գլուխը շուռ տալու հարցրեց։

— Ստեփանը ե՞րբ է գնում հունձ անելու։

— Հենց հիմի... լծում է ձիերը։

— Որ ճամփու դնես, գնա գետառ, ուր մեր արևածաղիկներն են. ես կգամ այնտեղ։

Դույլերը շրխկացնելով, Ակսինյան իջավ Դոնի ափը։ Ափի մոտ, որպես դեղին, փարթամ ժանյակ ալիքի կանաչ փեշի վրա, օձանում էր փրփուրը։ Սպիտակ ձկնորս-որորները աղմուկով սլանում էին Դոնի վրա։

Ջրի երեսին արծաթե անձրևի նման պսպղում էին մանր ձկները։ Գետի մյուս ափին, ավազոտ, սպիտակավուն ցամաքաշերտից դենը վեհորեն ու հպարտ խոյանում էին հին բարդիների ալեզարդ, քամուց օրորվող կատարները։ Ակսինյան ջուր վերցնելիս վայր գցեց մի դույլը։ Ձախ ձեռքով շրջազգեստը բարձրացնելով, մինչև ծնկները մտավ ջուրը։ Ջուրը խտոտեց առուսաների կապիչների հարած սրնքամասե-

ը, ու Ակսինյան Ստեփանի գալուց հետո առաջին անգամ ծիծաղեց կամացուկ ու անվստահ։

Նայեց Գրիշկային. սա դարձյալ ճիպոտը թափահարելով, ասես բոռերին քշելով, դանդաղ բարձրանում էր դարիվերը։

Ակսինյան արցունքներից պղտորված հայացքով փաղաքշում էր նրա հուժկու ոտները, որոնք վստահորեն դոփում էին գետինը, Գրիշկան հագել էր լայն, ծայրերը բբրդե սպիտակ գուլպաների մեջ դրած շալվար, որի լամպասները կարմրին էին տալի։ Մեջքի վրա, թիակի մոտ փոփոում էր կեղտոտ, նոր պատված շապկի մի կտորը, դեղնին էր տալի մերկացած մարմնի թուխ եռանկյունին։ Ակսինյան աչքերով համբուրում էր սիրած մարմնի այդ փոքրիկ, մի ժամանակ իրեն պատկանած կտորը. արցունքներն ընկնում էին ժպտացող, դալկացած շուրթերի վրա։

Նա դույլերը դրեց ավազի վրա ու դրանից կանթերը լծակի ծայրին անցկացներիս ավազի վրա տեսավ Գրիշկայի սրաքիթ քոշերի հետքը։ Գողավարի նայեց շուրջը. ոչ ոք չկար. միայն հեռավոր նավակայանի մոտ երեխաներ էին լողանում։ Պպզեց ու ձեռքը դրեց հետքին, հետո լծակը դրեց ուսին ու ինքնիրեն ժպտալով, շտապեց դեպի տուն։

Խուտորի վրա բացվում էր արևը՝ մարմարե բարակ մուժով շղարշված։ Հեռո՜ւ բարձունքում, ճերմակ ամպիկների զանգուր երամակի տակին շողում էր խորունկ, զով արոտի կապտությունը, իսկ խուտորի ու շիկացած երկաթե կտուրների վրա, փոշոտ փողոցների ամայության վրա, շոր եղանակից թառամած խոտաբույսերով լեցուն բակերի վրա շոքել էր մեռած տոթը։

Ակսինյան դույլերից ջուրը թափթփելով ճաքճքված գետնին, օրորվելով, մոտեցավ տանը։ Ստեփանը ծղոտե լայնեզր գլխարկը գլխին՝ ձիերը լծում էր հնձիչին։ Ուղղեց անուրի տակ ննջող մաղիանի շրջափոկը, նայեց Ակսինյային։

— Ջո՜ւր լցրու ջրամանի մեջ։

Ակսինյան մի դույլ ջուրը լցրեց ջրամանի մեջ, վառեց ձեռները՝ դիպցնելով երկաթե, մեխած օղակապերին։

— Սառույց է հարկավոր։ Ջուրը կտաքանա,— ասաց նա՝ նայելով ամուսնու մեջքին, որ թրջվել էր քրտնքից։

— Գնա վերցրու Մելեխովներից... Մի՛ գնա...— բղավեց Ստեփանը՝ հիշելով կնոջ կապը Գրիգորիի հետ։

Ակսինյան գնաց բակի բաց թողած դուռը ծածկելու։ Ստեփանը նայեց գետնին, վերցրեց մտրակը։

— Ո՞ւր։

— Դուռը ծածկելու։

— Ե՛տ դառ, փուչ... ասի՝ մի գնա։

Ակսինյան հապճեպ մոտեցավ տան մուտքի սանդուղքին, ուզում էր կախ տալ դույլերի լծակը. բայց դողդոջուն ձեռները չհնազանդվեցին,— լծակը սանդուղքից ներքև գլորվեց։

Ստեփանը բրեզենտե պլաշչը գցեց առջևի նստելատեղին. նստեց, ուղղեց երասանները։

— Բա՛ց արա դարբասը։

Դարբասը բանալով, Ակսինյան համարձակվեց հարցնել։

— Ե՞րբ կգաս։

— Իրիկնադեմին։ Անիկուշկայի հետ միասին ենք հնձելու։ Նրան ուտելիք տար։ Դարբնոցից կգա արտը։

Հնձիչի փոքրիկ անիվները ճռճռալով խրվեցին գորշ, փափուկ փոշու մեջ, դուրս եկան դարբասից։ Ակսինյան մտավ տուն, մի քիչ կանգնեց՝ ձեռները սեղմելով կրծքին, ու լաչակը կապելով՝ վազեց դեպի Դոն։

«Իսկ եթե ետ գա, ի՞նչ կլինի»,— այրեց նրան այդ միտքը։ Կանգ առավ, ասես ոտների տակ մի խորունկ զառիթափ տեսավ, ետ նայեց ու Դոնի ափով համարյա վազելավազ գնաց դեպի գետառը։

Ցանկապատեր։ Բանջարանոցներ։ Արեգակի աչքերին նայող արևածաղիկների դեղին պաճուճանք։ Կանաչ, դալկածաղիկ կարտոֆիլ։ Ահա Շամիլների կնանիքը, մի քիչ ուշացած, վերջացնում են կարտոֆիլի դաշտի քաղհանը. վարդագույն շապիկներով, կռացած մեջքեր, գորշ հողին խփող քլունգների կարճ թռիչքներ դեպի վերև։ Ակսինյան հևիհև հասավ Մելեխովների բանջարանոցը։ Նայեց շուրջը. սյունից հանելով ոստերից ոլորված օղը, բացեց դռնակը։ Տափտափած կածանով հասավ արևածաղկի ցողունների խիտ շարքը։ Կուզեկուզ մտավ ամենախիտ տեղը, երեսն աղտոտեց ոսկե-

գույն ծաղկափոշիով. հավաքեց յուրքայի փեշերը, նստեց գայլախոտով պատած գետնին։

Ականջ դրեց. լռություն,— միայն դժժոց ականջներում։ Վերևում թե ուր միայնակ բզզում է իշամեղուն։ Արևածաղկի սնամեջ, կոշտ խավով պատած ցողունները լուռ ծծում են հողը։

Կես ժամի չափ նստել էր կասկածից տանջվելով,— կգա՞ թե ոչ. արդեն ուզում էր գնալ. վրա նստեց ուղղեց լաչակով ծածկված մազերը. այդ ժամանակ երկարաձիգ ճռռաց բանջարանոցի դռնակը։ Քայլեր։

— Ակսյո՛ւտկա։

— Այստեղ արի...

— Ըհը՛, եկե՛լ եմ։

Խշշացնելով տերևները, Գրիգորին մոտեցավ, նստեց Ակսինյայի կողքին։ Մի պահ լուռ էին։

— Այդ ի՞նչ է թշիդ վրա։

Ակսինյան թևքով սրբեց դեղին, բուրավետ փոշին։

— Երևի արևածաղկից է։

— Այստեղ էլ կա, ա՛յ, աչքիդ տակ...

Ակսինյան սրբեց։ Հայացքները իրար հանդիպեցին։ Ու պատասխանելով Գրիշկայի համր հարցին, Ակսինյան լաց եղավ։

— Հալ չկա՛... կորա՛ ես, Գրիշա...

— Ի՞նչ է անում նա։

Ակսինյան բարկությամբ քաշեց բաց արեց կոֆտայի օձիքը։ Դուրս ընկած կարմրավուն, կուսականորեն պիրկ ստինքների վրա — կարմրակապույտ, ուռած տեղեր։

— Չգիտե՞ս ինչ է անում... Ամեն օր ծեծում է... ծծում է արյունս... դու է՛լ լավն ես... Շնավարի ուզածդ արեցիր ու դեն քաշվեցիր... Դուք բոլորդ էլ...— դողդողջուն մատներով կոճկեց կոֆտան ու վախենալով, թե չլինի՞ Գրիգորին նեղանա, նայեց վերջինիս, որը շուռ էր տվել դեմքը։

— Մեղավո՞ր ես փնտրում,— կծոտելով խոտի մի ցողուն, հարցրեց Գրիգորին։

Նրա հանգիստ ձայնը դաղեց Ակսինյային։

— Բա դու մեղավոր չե՞ս,— տաքանալով գոչեց Ակսինյան։

— Թե որ քածը չուզենա, որձ շունը վրա չի գնա։

Ակսինյան ձեռներով ծածկեց դեմքը։ Վիրավորանքը խրփեց ուժգին, մտածված հարվածի նման։

Գրիգորին ճակատը կնճռոտելով, շեղակի նայեց նրան, Ակսինյայի ցուցամատի ու միջամատի արանքով կաթում էր արցունքը։

Արևածաղիկների մացառուտներում մշուշված, թեք ճառագայթը փայլեցնում էր թափանցիկ կաթիլը, չորացնում մաշկի վրա դրանից մնացած խոնավ հետքը։

Գրիգորին արցունքներ տանել չէր կարողանում։ Նա անհանգստացավ նստած տեղում, բարկությամբ դեն գցեց կինամոնագույն մի մժեղ, որ սողում էր շալվարի վրա, ու էլի կարճ նայեց Ակսինյային։ Սա նստել էր առանց դիրքը փոխելու, միայն թե ձեռքի վրայով մի կաթիլ արցունքի փոխարեն արդեն երեք կաթիլներ էին հոսում իրար ետևից։

— Ի՞նչ ես բղավում, նեղացա՞ր։ Կսյո՛ւշա, դե լավ, կաց... Սպասիր, ուզում եմ մի բան ասել։

Ակսինյան ձեռները իջեցրեց թաց դեմքից։

— Ես եկել եմ խորհուրդ հարցնելու... Բա ինչի համար դու... առանց այդ էլ զարկված եմ... Իսկ դու...

«Ընկածին խփեցի»...— Գրիգորին կարմրեց։

— Կսյուշա... Բա՛ն էր, էլի, բերնիցս թռավ, դե լավ, մի՛ նեղանա...

— Ես վզովդ ընկնելու չեմ եկել... Մի՛ վախենա։

Այդ րոպեին նա ինքն է՛լ էր հավատում, որ չի եկել Գրիգորիի վզովն ընկնելու. բայց երբ Դոնի ափով վազում էր դեպի գետառը, առանց ինքն իրեն պարզ հաշիվ տալու, մտածում էր. «Կհամոզեմ, որ չպսակվի։ Բա կյանքս ո՞ւմ հետ եմ կապելու»։ Այն ժամանակ հիշեց Ստեփանին ու գլխի մի վճռական շարժում արավ՝ վանելով անպատեհ վրա հասած միտքը։

— Ուրեմն, վերջացա՞վ մեր սերը, հա՞,— հարցրեց Գրիգորին ու պառկեց փորի վրա՝ հենվելով արմունկներին ու բերանից թափելով գայլախոտի ծաղկի կարմրավուն թերթիկները, որ ծամծմել էր խոսակցության ժամանակ։

— Ո՞նց թե վերջացավ,— վախեցավ Ակսինյան,— ո՞նց

թե, հը՞,— հարցը կրկնեց նա՝ աշխատելով նայել Գրիգորիի աչքերին։

Գրիգորին դես ու դեն էր դարձնում աչքերի կապտավուն, ուռուցիկ սպիտակուցները, մի կողմ էր նայում։

Հողմահար, հյուծված գետինը մգլածություն ու արևի ջերմություն էր բուրում։ Սուրում էր քամին՝ շուռումուռ անելով արևածաղկի կանաչ տերևները։ Մի րոպե մշուշվեց արևը՝ անցնելով ամպի գանգուր մեջքի տակ, ու տափաստանի, խուտորի, Ակսինյայի կախ ընկած գլխի, փարթամ գայլախոտի ծաղկի վարդագույն բաժակի վրա, երերալով ու սահելով, ընկավ թուխ ստվերը։

Գրիգորին շունչ առավ,— ձիու խոպոտ թառանչ էր այդ,— ու պառկեց մեջքին՝ թիակները սեղմելով տաք գետնին։

— Ա՛յ թե ինչ, Ակսինյա,— ասաց նա՝ դանդաղորեն արտասանելով բառերը,— սիրտս ոնց որ թե խառնում է, դոշիս տակը մի բան է կծում... Ես մտածեցի...

Բանջարանոցովը մեկ վնգվնգալով տարածվեց ինչ-որ սայլի ճռճռոցը։

— Հո՞, չալտիկս, հո՞-ո՞...

Ձայնը Ակսինյային այնքան բարձր թվաց, որ նա երեսնիվայր ընկավ գետնին։ Գրիգորին գլուխը քիչ բարձրացնելով՝ շշնջաց.

— Լաչակդ հանիր։ Ճերմակ է, երևում է։ Չլինի՞ թե տեսնեն։

Ակսինյան հանեց լաչակը։ Արևածաղիկների միջև սուրող գոլ քամին նրա պարանոցի վրա փուփռացրեց ոսկե պայծառ ծամերը։ Դեռ լսվում էր հեռացող սայլի ճռնչոցը։

— Ա՛յ թե ես ինչ մտածեցի,— սկսեց Գրիգորին ու աշխուժացավ,— ինչ որ եղել է, եղել է, էլ ինչո՞ւ մեղավոր փնտրել։ Պետք է սրանից դենն էլ ապրել, էլի՛...

Ակսինյան ուշքը լարած լսում էր, սպասում, ծոմռում մրջյունից խլած մի ցողուն։

Նայեց Գրիգորիի դեմքին, տեսավ նրա աչքերի չոր ու անհանգիստ փայլը։

— ...Ես մի բան մտածեցի... արի վերջ տանք...

Ակսինյան օրորեց գլուխը։ Ոլորված մատներով կառչեց ճլոտ պատատուկից։ Անհանգիստ շնչելով, սպասում էր

խոսքի վերջավորությանը։ Երկյուղի ու անհամբերության կրակն ագահությամբ լիզում էր նրա դեմքը, բերանի մեջ չորացնում թուքը։ Կարծում էր, թե Գրիգորին կասի՝ «...վերջ տանք Ստեփանին», բայց նա բարկությամբ ճպճպացրեց չորացած շրթունքները (դրանք դժվարությամբ էին շարժվում), ասաց.

— ...վերջ տանք այս պատմությանը։ Հը՞։

Ակսինյան վեր կացավ՝ կուրծքը դիպցնելով արևածաղիկների դեղին, ճոճուն գլխիկներին, գնաց դեպի դոնակը։

— Ակսինյա,— խուլ ձայնով կանչեց Գրիգորին։

Ի պատասխան՝ ծոր տալով ճռնչաց դոնակը։

XVII

Գարու հնձից հետո,— դեռ այն չէին փոխադրել կալերը,— մոտեցավ և ցորենի հունձը։ Կավախառն տեղերում, բլրակների վրա դեղնին էր տալի ու ոլորվում էր խանձվող տերևը, չորանում էր իր կյանքն ապրած ցողունը։

Բերքը լավ է, հա՛ա՛,— գովում էին մարդիկ։ Հասկերը լիքն են, հատիկը ծանրաքաշ, ուռուցիկ։

Պանտելեյ Պրակոֆևիչը խորհրդակցելով Իլյինիչնայի հետ, որոշեց հարսանիքը հետաձգել մինչև Փրկչի տոների վերջը,— եթե համաձայնության գան Կորշունովների հետ։

Դեռ չէին գնացել պատասխան ստանալու. հունձը վրա էր հասել, տոներն էլ մոտիկ էին։

Հնձի գնացին ուրբաթ օրը։ Հնձիչին երեք ձի էր լծված։ Պանտելեյ Պրակոֆևիչը տաշտում էր եզան սայլի աղեղատախտակը, պատրաստում սոնին ու անիվները՝ օրանը փոխադրելու համար։ Հնձի գնացին Պետրոն ու Գրիգորին։

Գրիգորին քայլում էր առջևի նստելատեղից բռնած, որի վրա նստել էր եղբայրը։ Գրիգորին կիտում էր հոնքերը։ Դողում ու ցնցվում էին այտոսկրները մինչև ստորին ծնոտը։ Պետրոն գիտեր, դա ճիշտ նշան է, որ Գրիգորին զայրացած է ու պատրաստ է ամեն տեսակ անմիտ քայլ անելու, բայց, քմծիծաղ տալով իր ցորնագույն բեղերի տակին, շարունակում էր ձեռ առնել եղբորը.

— Խայր վկա այդպես պատմեց մի կնիկ։

— Է՛հ, շա՛տ պետքս է,— մռմռում էր Գրիգորին՝ կծոտելով բեղի փափլիկ մազը։

— «Գալիս եմ բոստանից,— ասում է,— մեկ էլ ի՛նչ եմ լսում, ոնց որ թե մարդու ձեն է գալի Մելեխովենց բոստանից»։

— Պետրո, ձե՛ռ քաշի։

— Հա՛-ա-ա... Մարդու ձեն։ «Ես,— ասում է,— մտիկ արի ցանկապատի վրայից...»

Գրիգորին ստեպ-ստեպ թարթում էր աչքերը։

— Վերջ կտա՞ս։ Չէ՞։

— Ա՛յ քեզ սարսաղ, թող մի վերջն ասեմ, էլի՛։

— Տես, Պետրո, կկովենք, հա՛-ա— ետ մնալով՝ սպառնաց Գրիգորին։

Պետրոն շարժեց հոնքերը ու շուռ եկավ քամակով դեպի ձիերը, երեսը դեպի Գրիգորին, որ քայլում էր սայլի ետևից։

— «Հա՛,— ասում է, — մտիկ արի ցանկապատի վրայից, ու ի՛նչ տեսնեմ,— նրանք պառկել են իրար խտտած»։

— «Ովքե՞ր»,—հարցնում եմ, իսկ նա թե՝ «Ակսյուտկա Աստախովան ու քո աղբերը»։ Ես ասում եմ...

Գրիգորին կոթից վերցրեց հնձիչի ետին մասում դրված մի կարճ եղան, նետվեց Պետրոյի վրա։ Սա երասանները գցելով, թռավ նստելատեղից, ճղեց, ձիերից առաջ անցավ։

— Թյո՛ւ, անիծված... կատաղել ես, հա՞... Թյո՛ւ, թյո՛ւ։ Մի դրա՛ն մտիկ է՛...

Գայլի նման ցույց տալով ատամները, Գրիգորին նետեց եղանը։ Պետրոն ընկավ ձեռների վրա, ու եղանը նրա վերևից թռչելով, մի վերշոկի չափ խրվեց քարքարոտ, չոր հողի մեջ ու զնգզնգալով դողաց։

Մոայլված Պետրոն բռնել էր արմուկից խլշկոտած ձիերի սանձը, հայհոյանք էր թափում։

— Բա որ սպաններիր, ա՛յ խուժան։

— Հա՛, կսպաններ։

— Սարսաղ, կատաղած սատանա։ Ա՛յ թե ոնց ես հորդ քաշել, խելա՞ռ չերքեզ։

Գրիգորին հողից դուրս քաշեց եղանը, քայլեց հնձիչի ետևից։

Պետրոն մատով կանչեց նրան։

— Ե՛կ այստեղ։ Տո՛ւր եղանը։

Երասաններն անցկացրեց ձախ ձեռքը ու վերցրեց եղանը՝ սպիտակացրած ատամից։

Ու կոթով մի լա՛վ հասցրեց ոչինչ չսպասող Գրիգորիի քամակին։

— Պետք էր ետ տանել ու վրա բերել,— ափսոսաց Պետրոն՝ նայելով Գրիգորիին, որ մի կողմ էր ցատկել։

Մի բոպե անց ծխեցին, նայեցին միմյանց աչքերին ու քրքջացին։

Խրիստոնյայի կինը, որ սայլ նստած գնում էր ուրիշ ճանապարհով, տեսավ, թե ինչպես Գրիգորին եղանը նետեց եղբոր վրա։ Այդ կինը փոքր-ինչ բարձրացավ սայլի վրա, բայց չկարողացավ լավ տեսնել, թե ինչ էր կատարվում Մելեխովների հետ,— հնձիչն ու ձիերը խանգարում էին։ Հենց որ մտավ իրենց նրբանցքը, ձայն տվեց հարևանուհուն.

— Կլիմովնա, վազ տուր, ասա թուրք Պանտելեյին, որ նրա տղաները թաթարական կուրգանի մոտ եղանով զարկեցին իրար։ Ամա՛ տվին իրար, հա՛-ա, իսկ Գրիշկան,— նա հո խելառի մեկն է,— այնպես եղանը խրեց Պետրոյի կողքը, Պետրոն էլ այդ ժամանակ նրան... Արյուն էր որ թափվեց այնտեղ, հա՛-ա։

Պետրոյի ձայնն արդեն խոպվել էր բեզարած ձիերի վրա գոռալուց, և նա երկար ու բարակ սուլում էր։ Գրիգորին փոշուց սևացած ոտը դնելով հնձիչին, դրա վրայից թափում էր թևերի կուտակած օրանը։ Ձիերը միջատների կծելուց գրեթե արյունոտած, պտտում էին պոչերը ու լավ չէին քաշում ձգափոկերը։

Տափաստանում մինչև հորիզոնի կապուտակ եզրագիծը վիտում էին մարդիկ։ Շաչում, շխկշխկում էին հնձիչների դանակները, տափաստանը ծածկվում էր հնձած հացի լասերով։ Ձիերը քշողներին տնազ անելով, փոքրիկ հողաթմբերի վրա ճստճստում էին արշամկները։

— Էլի երկու անգամ գնանք-գանք ու ծխենք,— մեքենայի թևերի ու կտրիչի աղմուկում բղավեց Պետրոն՝ շուռ գալով դեպի Գրիգորին։

Գրիգորին միայն գլխով արավ։ Դժվար էր բաց անել

հողմահար, չորացած շուրթերը։ Նա եղանի մեջտեղից էր քոնում, որ հեշտությամբ գցեր օրանի ծանր կույտերը, հանելով էր շնչում։ Քրտնած կուրծքը քոր էր գալի։ Լայնեզր գլխարկի տակից հոսում էր դառն քրտինքը. ընկնելով աչքերի մեջ, կսկծեցնում էր ինչպես սապոնը։ Կանգնեցնելով ձիերը, ջուր խմեցին ու ծխեցին։

— Ճամփովը մի մարդ է ձիով գալիս,— ասաց Պետրոն՝ նայելով բոի տակից։

Գրիգորին նայեց ու զարմանքից բարձրացրեց հոնքերը։

— Հերրս է գալի։

— Ցնդե՞լ ես, ինչ է։ Ձիերը հնձիչին են լծված, էլ ինչո՞վ պիտի գա։

— Նա՛ է։

— Հավ չես տեսնում, Գրիշկա։

— Աստված վկա նա է։

Մի բոպե անց պարզ երևացին յորղա սլացող ձին ու ձիավորը։

— Հերրս է... — Պետրոն երկյուղի տարակուսանքով անհանգիստ շարժումներ էր անում կանգնած տեղում։

— Կարելի է տանը բան է պատահել... — արտահայտեց Գրիգորին թե իր և թե եղբոր միտքը։

Պանտելեյ Պրակոֆևիչը հարյուր սաժենի չափ մոտենալով, քաշեց ձիու սանձը, այնուհետև ձին վարգելով էր գալի։

— Կը-թա-կեե՛մ... Շան որդիք,— դեռ հեռվից գոռաց նա ու գլխի վերև թափահարեց կաշվե մտրակը։

— Ի՞նչ է ուզում նա,— բոլորովին ապշեց Պետրոն՝ ցորնագույն բեղը կիսով չափ տանելով բերանը։

— Թաքնվիր հնձիչի տակ։ Աստված վկա կխփի մտրակով։ Մինչև բանը պարզվի, նա կթակի... — քմծիծաղ տալով ասաց Գրիգորին ու համենայն դեպս անցավ հնձիչի մյուս կողմը։

Քափ-քրտնքի մեջ կորած, փրփրակալած ձին ոստոստալով վազ էր տալի հնձած արտի միջից։ Պանտելեյ Պրակոֆևիչը թափ-թափ տալով ոտները (ձին առանց թամքի էր), սպառնում էր մտրակով։

— Այդ ի՞նչ եք անում, սատանի ճտեր։

— Հնձում ենք... — Պետրոն տարածեց ձեռները ու վախվրխկելով, ծուռ նայեց մտրակին։

— Ո՞վ և ո՞ւմ էր եղանով խփում։ Ինչո՞ւ էիք կռվում։

Գրիգորին մեջքը դարձնելով հոր կողմը, շշնջալով հաշվում էր քամու ցրած ամպերը։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ եղան, ո՞վ է կռվել... — Պետրոն աչքերը թարթելով վարից վեր նայում էր հորը՝ կոթնելով մի ոտից մյուսի վրա։

— Բա ո՞նց, շան քածը վազեվազ գալիս է ու բղավում՝ «Տղերքդ եղանով խփեցին իրար»։ Հը՞։ Ո՞նց թե այդպես...— Պանտելեյ Պրակոֆևիչը զայրացած թափահարեց գլուխը ու գցելով սանձը, վար թռավ շնչահեղձ ձիուց։— Ես վերցրի Ֆեդկա Սեմիշկինի ձին ու յորղա տվի։ Հը՞...

— Ախր ո՞վ ասավ։

— Ասողը կնիկ է...

— Ստում է նա, ապի։ Անիծվածը քնել է սայլի վրա ու այդ տեսակ երազ տեսել։

— Կնիկ է,— ցասկոտ բղավեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ քաշքշելով ի՛ր իսկ մորուքը,— փուչ-անառակ Կլիմովնան։ Ա՛խ, տե-ե՛ր իմ աստվա-ա՛-ած... Հը՞։ Կսատկացնեմ այդ քածին... — Նա ոտներով դոփեց գետինը՝ կաղալով ձախ ոտից։

Զսպված ծիծաղից ցնցվելով, Գրիգորին նայում էր գետնին։ Պետրոն աչքը չէր կտրում հորից, շփում էր քրտնած գլուխը։

Պանտելեյ Պրակոֆևիչը հետզհետե մեղմացավ ու լռեց։ Նստեց հնձիչին, մի երկու պտույտ արավ ու «սատանա, սատանա» մոթմոթալով՝ նստեց ձին։ Դուրս եկավ ճանապարհը, օրանով բարձած երկու սայլից առաջ անցավ, սլացավ դեպի խուտոր։ Արտում մնաց նրա մոռացած, բարակ ոստերից հյուսած, ծոպավոր մտրակը։ Պետրոն ձեռների մեջ շուռումուռ տվեց, գլուխն օրորեց ու դիմեց Գրիշկային.

— Թե կխփե՛ր, վա՛յ մեզ, տղա։ Տե՛ս է, բա սա մտրա՞կ է։ Սա ուղղակի թուր է, սրանով կարելի է գլուխ թռցնել։

XVIII

Կորշունովներն ամենահարուստ մարդկանց համբավ ունեին Տատարսկի խուտորում։ Տասնչորս լուծ եզ, ձիերի մի ամբողջ երամակ, մերուններ Պրովալսկի բուծարաններից, մեկ ու կես տասնյակ կով, անհաշիվ մանր անասուններ, մի քանի հարյուր ոչխարների հոտ։ Առանց այդ էլ շատ բան կար տեսնելու. տունը Մոխովի տանից պակաս չէր, բաղկացած էր վեց սենյակից, երկաթե կտուրով էր, առաստաղները տախտակած։ Բակի շենքերը ծածկված էին շքեղ ու նոր կղմինդրով. մեկ ու կես դեսյատին այգի ու դրան կից պուրակ։ Էլ ի՞նչ է հարկավոր մարդուն։

Ահա թե ինչու Պանտելեյ Պրակոֆևիչը առաջին անգամ երկչոտությամբ ու ծածուկ դժկամությամբ գնաց Կորշունովների աղջիկն ուզելու։ Կորշունովները իրենց աղջկա համար կարող էին շատ ավելի լավ փեսացու գտնել, քան Գրիգորին էր։ Պանտելեյ Պրակոֆևիչը հասկանում էր այդ, վախենում էր մերժումից, չէր ուզում գլուխ ծռել քմահաճ Կորշունովի հանդեպ. բայց Իլյինիշնան ուտում էր նրան՝ ինչպես ժանգը երկաթին, ու ի վերջո կոտրեց ծերունու կամակորությունը։ Պանտելեյ Պրակոֆևիչը համաձայնեց ու գնաց՝ մտքում անիծելով և՛ Գրիշկային, և՛ Իլյինիշնային, և՛ արար աշխարհը։

Հարկավոր էր երկրորդ անգամ գնալ պատասխան ստանալու. սպասում էին կիրակի օրվան, իսկ այդ ժամանակ Կորշունովի տան կանաչ ներկած կտուրի տակ խուլ երկպառակություն էր տեղի ունենում։ Խնամախոսների մեկնելուց հետո հարսնացուն մոր հարցին պատասխանել էր.

— Գրիշկան ինձ դուր է գալի, ուրիշ ոչ ոքի չեմ առնի։

— Տո անխե՛լք, նա ի՞նչ փեսացու է որ,— համոզում էր հայրը,— միայն մի բան է լավ, որ գնչուի պես սև է։ Բա ես քեզ համար, գառնիկս, այդ տեսա՞կ փեսացու պիտի գտնեմ։

— Ուրիշներն ինձ հարկավոր չեն, ապի ջան...—Նատալյան կարմրում էր ու արտասվում։— Չե՛մ առնի, թող իսկի էլ չնշանեն։ Կուզեք հենց Ուստ-Մեդվեդիցկի վանքը տարեք ինձ...

— Թրև եկող է, կնամոլ, պսակված կնանոնց ետևից է ընկնում,— բերում էր հայրը վերջին փաստարկը,— խայտառակվել է ամբողջ խուտորում։

— Է՛հ, ի՞նչ կա որ։

— Որ քեզ համար մեկ է, ինձ համար՝ հեչ։ Մեզքն ու վարձը ձեր վզին, ինձնից հեռու։

Նատալյան, մեծ աղջիկը, հոր սիրելին էր, դրա համար էլ վերջինը նրան չէր նեղում ընտրություն անելիս։ Դեռ անցած աշնանը հեռու տեղից, Ցուցկան գետի ափերից եկել էին խնամախոսներ, շատ հարուստ հնդավան կազակներ. խնամախոսներ էին եկել նաև Խոպերի[1] ու Ցիրի[2] ափերից, բայց փեսացուները Նատալյային դուր չէին եկել, և խնամախոսական աղ ու հացն իզուր էր կորել։

Գրիշկան Միրոն Գրիգորևիչին դուր էր գալի իր կազակական խիզախության համար, տնտեսությունը և աշխատանքը սիրելու համար։ Ծերունին խուտորի տղաների մեջ նրա վրա էր ուշադրություն դարձրել դեռ այն ժամանակ, երբ տեղի էին ունեցել ձիարշավի մրցություններ, և Գրիշկան տարել էր առաջին մրցանակը. բայց ծերունուն վիրավորական էր թվում աղջկան տալ ո՛չ հարուստ և վատ համբավով արատավորված փեսացուին։

— Աշխատող տղա է ու սիրունիկ էլ դեմք ունի...— գիշերները նրա ականջին փսփսում էր կինը՝ շոյելով նրա պեպենոտ ու շեկ մազմզուկով պատած ձեռքը,— իսկ Նատալյան, ա՛յ Գրիգորիչ, ուղղակի հալումաշ է լինում նրա համար... Գրիշկան նրան շատ է դուր եկել։

Միրոն Գրիգորևիչը մեջքը դարձնում էր կնոջ նիհար, սառը կրծքին, բարկությամբ մռթմռթում էր.

— Ձե՛ռ քաշիր, է՛, ի՞նչ ես կպել տզի պես։ Ուզում ես նշանիր խելառ Պաշայի հետ, ի՞նձ ինչ։ Ա՛մա թե աստված խելք է տվել, հա՛-ա։ «Սիրունիկ դեմք ունի»...— անուշ արեց նա,— ի՞նչ է, դու նրա մռութից բե՞ռք պիտի հավաքես, հա՞...

— Հենց բերք, այո։

— Ախր, հասկացիր, է՛, նրա երես-մերեսը ընչի՞ դ է

---

1 Խոպերը Դոնի ձախ վտակն է։

2 Ցիրը Դոնի աջ վտակն է։

պետք։ Թող միայն լավ մարդ լիներ։ Դրուստն էլ ասեմ, ինձ համար մի քիչ զզվելի բան է աղջկաս տալ Թուրքերին։ Կարգին մարդիկ լինեին, ասեի, հա՛... — հպարտանում էր Միրոն Գրիգորևիչը՝ ոստոստալով մահճակալի վրա։

— Աշխատող ընտանիք է ու շեն տուն է...— Փսփսում էր կինը ու մոտենալով ամուսնու պինդ մեջքին, մեղմակի շոյում էր նրա ձեռքը։

— Է՛, սատանա, դե՛ն քաշվիր, էլի՛։ Տեղ չկա՞ քեզ համար, ինչ է։ Հերի՛ք մաժես ինձ, ոնց որ ծանրած կովին։ Նատալյայի հետ ինչ ուզում ես արա։ Նշանիր Թեկուզ մազը կտրած անառակի հետ...

— Խղճա՛ քո զավակին։ Հարստությո՞ւնս որն է... — Ֆսֆսում էր Լուկինիչնան Միրոն Գրիգորևիչի մազոտ ականջին։

Վերջինս ծալում էր ոտները, կպչում էր պատին ու խոմփացնում,— իբր Թե քնած էր։

Խնամախոսների գալուստը նրանց հանկարծակիի բերեց։ Պատարագից հետո սրանք տարանտասով մոտեցան դարբասին։ Իլյինիչնան, ոտը դնելով ոտնատեղը, քիչ մնաց շուռ տար տարանտասը, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը նստելատեղից վար Թռավ ջահել աքլորի նման. Թեև Թմրեցրել էր ոտները, բայց այդ Թաքցրեց ու քաջաբար, կաղալով քայլեց դեպի տուն։

— Ահա՛ նրանք։ Ոնց որ սատանան բերեց նրանց,— հերսոտ ասաց Միրոն Գրիգորևիչը՝ պատուհանից դուրս նայելով։

— Վա՛յ իմ մեղքը, ոնց որ եփում-Թափում էի, այնպես էլ չփոխեցի ամեն օրվա յուրկաս,— կչկչաց տանտիրուհին։

— Այդպես էլ սիրուն ես։ Հո քեզ չե՞ն նշանելու, ո՞ւմ ես պետք, ձիո՛ւ քոս...

— Դու հո էն գլխից կոշտ ու կոպիտ ես եղել, իսկ ծերանալով՝ բոլորովին ցնդվել ես։

— Դե՛հ, դե՛հ, ձենդ կտրի։

— Մաքուր շապիկ հագնեիր, էլի՛, քամակդ կեղտից սևացել է, չես է՛լ ամաչում։ Ի՞հ, սատանա,— նախատում էր կինը Միրոն Գրիգորևիչին նայելով, մինչդեռ խնամախոսները գալիս էին բակի միջով։

— Է՛հ, սա էլ շատ է նրանց համար։ Ճիլոպ էլ որ հագնեմ, էլի կգան կկպչեն։

— Բարև ձեզ,— շեմքի վրա սլկալով, ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ ոնց որ աքլորը ծուղրուղո՛ւ կանչեր ու ամաչելով իր զիլ ձայնից, մի ավելորդ անգամ էլ խաչակնքեց սրբապատկերի առաջ։

— Բարև ձեզ,— ողջունեց տանտերը՝ զոռոզաբար նայելով խնամախոսներին։

— Աստված լավ եղանակ է տալի։

— Փառք աստծո, լավ է։

— Խալխը հո կդզի իրեն գործը։

— Այդպես է, հա։

— Ա-ա-յդպե-ե՛-ս է։

— Ը՛հմ։

— Հրես մենք էլ եկանք, ուրեմս, Միրոն Գրիգորիչ, որ իմանանք, Թե դուք իրար մեջ ինչ մտածեցիք, խնամի պիտի լինե՞նք Թե չլինենք...

— Անցեք, խնդրե՛մ։ Նստեցե՛ք, խնդրեմ,— հրավիրեց տանտիրուհին գլուխ տալով, երկար ու փոթած յուրկայի փեշը քսելով հատակին, որը փայլում էր աղյուս քսելուց։

— Մի՛ անհանգստանաք, խնդրեմ։

Իլյինիչնան նստեց՝ խշշացնելով ու հավաքելով կիսամետաքսե շորի փեշերը։ Միրոն Գրիգորևիչը կոթնեց նոր մոմլաթով զարդարված սեղանին, լռեց։ Մոմլաթը Թաց ռետինի ու էլի ինչ-որ բանի վատ հոտ էր արձակում. դրա եզրազարդ անկյուններից ծանր ու մեծ նայում էին հանգուցյալ Թագավորներն ու Թագուհիները, իսկ մեջտեղում աչքի էին ընկնում օգոստափառ աղջիկները սպիտակ գլխարկներով, ու ճանճերից աղտոտված Նիկոլայ Ալեքսանդրովիչ Թագավորը։

Միրոն Գրիգորևիչը ընդհատեց լռությունը.

— Է՛հ... Մենք որոշեցինք տալ աղջկան։ Խնամի լինենք, եթե համաձայնություն գանք...

Այս խոսքերի վրա Իլյինիչնան իր լյուստրինե, ծալավոր Թևքեր ունեցող կոֆտայի ինչ-որ անհայտ խորքերից, ինչ-որ տեղից, կարծես մեջքի տակից դուրս քաշեց երկար, սպիտակ մի հաց, դրեց սեղանին։

Պանտելեյ Պրակոֆևիչը հայտնի չէ ինչու ուզեց խաչակնքել։ բայց կոշտացած, հաստլիկ մատները խաչակնքման գիրք ընդունելով ու բարձրանալով մինչև անցնելիք ճանապարհի կեսը, փոխեցին ձևը, երկար եղունգով, մեծ, սև մատը, իր տիրոջ կամքին հակառակ, անզգուշաբար խցկվեց ցուցամատի ու միջամատի արանքը, ու մատների այդ անամոթ հանգույցը գողավարի սողոսկեց կապույտ չեքմենի չոված փեշի տակ, այնտեղից հանեց բկից բռնած, կարմրագլուխ մի շիշ։

— Դեհ, հիմի եկեք, ի՛մ թանկագին խնամիներս, աղոթենք աստծուն, խմենք ու խոսենք մեր զավակների ու պայմանի մասին...

Պանտելեյ Պրակոֆևիչը, հուզված թարթելով աչքերը, նայում էր խնամու երեսին, որ ծածկված էր խիտ պեպենների, ու ձիու սմբակի պես լայն բուռը գուրգուրանքով խփում էր շշի ետևին։

Մի ժամից հետո խնամիներն այնքան իրար մոտիկ էին նստած, որ Մելեխովի մորուքի կպրագույն օղակները շոշափում էին Կորշունովի մորուքի ուղիղ, շիկակարմիր մազերը։ Պանտելեյ Պրակոֆևիչը շնչելիս աղած վարունգի համ ու հոտ էր արձակում և համոզում էր տանտիրոջը։

— Ի՛մ թանկագին խնամի ջա՛ն,— սկսում էր նա հուժկու, կամացուկ ձայնով,— սիրելի խնամի ջան,— միանգամից բարձրացնում էր ձայնը բղավելու չափ,— խնամի՛,— մոնչում էր նա՝ ցույց տալով սև, բթացած կտրիչ ատամները,— ձեր պահանջած նվերները շատ, չափից դուրս ծանր են ինձ համար։ Լա՛վ միտք արա, խնամի ջան, հոգիդ սիրեմ, ախր լա՛վ միտք արա, թե ինչու ես ցանկանում նեղացնել ինձ. գետրի ու կալոշ՝ սա մեկ, Դոնի մուշտակ՝ նա երկու, բրդե երկու շոր՝ սա երեք, աբրեշումե լաչակ՝ չորս։ Ախր սա տնա-աքանդու-ությո՛ւն է...

Պանտելեյ Պրակոֆևիչը լայն տարածում էր ձեռները, նրա լեյբ-կազակական համազգեստի ուսերի կարերը ճաքճքքում էին ու փոշի էր բարձրանում։ Միրոն Գրիգորևիչը գլուխը կախած, նայում էր արաղով ու վարունգի աղաջրով ողողված մոմլաթին։ Կարդաց վերևում բարդ նկարով պատճուճված մակագրությունը՝ «Համառուսական ինքնակալ-

ներ»։ Նայեց դրանից ներքև՝ «Նորին կայսերական մեծություն թագավոր կայսր Նիկոլայ...»։ Դրանից դեմը կարտոֆիլի կճեպ էր թափված։ Ջնեց նկարը. թագավորի դեմքը չի երևում, դրա վրա դրված է օղու դատարկած շիշը։ Միրոն Գրիգորևիչը երկյուղածությամբ թարթելով աչքերը, փորձում էր լավ տեսնել փարթամ համազգեստի ձևը, որի վրա փայլում էր սպիտակ գոտին, բայց համազգեստը խիտ ծածկված էր ուտելու ժամանակ բերաններից թափած՝ վարունգի լպրծուն կորիզներով։ Անգույն կերպով միանման դուստրերի շրջանից ինքնագոհ նայում էր լայնեզր՝ գլխարկ դրած կայսրուհին։ Միրոն Գրիգորևիչն ինքն իր մեջ նեղացավ արտասվելու չափ։ Նա մտածեց. «Հիմի շատ հպարտ ես մըտիկ անում, ոնց որ սագը զամբյուղի միջից, բա որ աղջըկաղ մարդու տաս, այն ժամանակ ես կտեսն-ե-ե՛մ... այն ժամանակ երևի գլուխդ էլ կկորցնես»։

Նրա ականջի տակ մեծ, սև իշամեղվի նման բզզում էր Պանտելեյ Պրակոֆևիչը։

Կորշունովը պղտոր լորձով լցված աչքերը բարձրացրեց նրա վրա, ականջ դրեց։

— Որպեսզի մենք քո աղջկա համար, իսկ հիմի մեկ է թե իմ աղջկա համար... իմ և քո աղջկա համար այդ տեսակ նվերներ, այդ կալոշներով գետրիներն ու Դոնի մուշտակն առնենք... մենք պետք է տավարը բակից դուրս քշենք ու ծախենք...

— Ափսոսո՞ւմ ես... Միրոն Գրիգորևիչը բռունցքով խփեց սեղանին։

— Ափսոսելս ո՞րն է, է՛, բանն այդ չի...

— Ափսոսո՞ւմ ես, հա՞։

— Կա՛ց, է՛, խնամի ջան...

— Որ ափսոսում ես, ուրեմն...

Միրոն Գրիգորևիչը պարզած, քրտնքոտ ձեռքը տարավ սեղանի վրայով, գավաթները թափեց հատակին։

— Ախր քո աղջի՛կը պիտի ապրի ու դատի իմ տանը։

— Թո՛ղ ապրի ու դատի, իսկ նվերները կբերես, թե չէ խնամի չենք..

— Անասունները քշել ծախելո՛ւ... — Պանտելեյ Պրա-

կոֆեմիչը պտտում էր գլուխը։ Գինդը դողում էր ականջի տակին ու թույլ պսպղում։

— Նվերները պետք է բերել... Աղջիկս սնդուկներով շոր ունի, իսկ դու ինձ պատիվ արա, եթե նա ձեր սրտովն է... Այսպես է մեր կազակական սովորությունը։ Հնում այսպես էր, իսկ մենք հնից պիտի կպչենք։

— Պատիվ կանեմ...

— Արա՛։

— Կանեմ...

— Իսկ նորապսակները թող դատեն և լցնեն տուն ու տեղը։ Մենք դատել ենք ու հարուստներից վատ չենք ապրում, գրողը տանի. թո՛ղ նրանք էլ դատեն իրենց համար...

Խնամիների տարբեր գույների մորուքները իրար հյուսվեցին։ Պանտելեյ Պրակոֆիևիչը համբույրի վրա կերավ անհյութ, ճխլված մի վարունգ ու լաց եղավ շատ ու շատ, միախառնված զգացումներից։

Մայրերն իրար գրկած, նստել էին սնդուկի վրա, կչկչան ձայներով իրար ականջ էին տանում։ Իլյինիչնայի երեսը կարմրատակել էր բալի նման, նրա խնամին ոանգը գցել էր արաղից, ասես անտառային ցրտատար տանձ լիներ։

— ... Աղջի՛կ եմ ասում, հա՛-ա, արար աշխարհում նրա հատը չկա։ Կլսի քեզ, կհարգի, համ խոնարհ է, համ հնազանդ։ Նա, ազի՛զ խնամի ջան, վախենում է, թե չլինի՞ մի ավելորդ խոսք ասի։

— Հա՛, այն էի ասում, ծաղի՛կ ջան,— ընդհատում էր Իլյինիչնան տանտիրուհուն, թուշը դնելով ձախ ձեռքին, իսկ աջ ձեռքը պահելով ձախ արմունկի տակ,— քանի՞-քանի անգամ եմ խրատել նրան, շան որդուն։ Անցած կիրակի իրիկունը մեկ էլ տեսնեմ տեղ է գնալու, թամբաքու է լցնում տոպրակի մեջ, ես էլ ասում եմ. «Բա դու ե՞րբ պիտի այդ կնկանից ձեռ քաշես, ա՛յ անիծված որձակ։ Մինչև ե՞րբ պետք է ես պառավ հալովս քաշեմ այդ ամոթանքը, հը՞։ Ախր նա, Ստեփանը, մեկ էլ տեսար վիզդ կտրեց»...

Միտկան խոհանոցից, դռան վերևի ճեղքից նայում էր օթախը, ներքևում փսփսում էին Նատալյայի երկու փոքրիկ քույրերը։

Նատալյան նստել էր տան անկյունի հեռու սենյակում,

թախտի վրա, կոֆտայի նեղ թևքով սրբում էր արցունքները։ Նրան վախեցնում էր նոր, մոտալուտ կյանքը, մաշում անհայտ գալիքով։

Օթախում վերջանում էին օղու երրորդ շիշը. որոշեցին հարս ու փեսայի տեսակցությունը նշանակել Փրկչի տոներ առաջին օրը։

XIX

Կորշունովների տանը նախահարսանեկան իրարանցում էր։ Հարսնացուի համար շտապ կարում էին ինչ-որ սպիտակեղեն։ Նատալյան երեկոները փեսացուի համար այծի գորշ բրդից ավանդական շարֆ և բրդե ձեռնոցներ էր գործում։

Նրա մայրը, Լուկինիչնան, մինչև օրվա մթնելը կռացած էր կարի մեքենայի վրա,— օգնում էր ստանիցայից կանչված դերձակուհուն։

Միտկան հոր և մշակների հետ գալիս էր դաշտից. առանց լվացվելու և առանց կոշտուկահար ոտներից դաշտային ծանր քոշերը հանելու գնում էր օթախը, նստում Նատալյայի մոտ։ Քրոջը ձեռ առնելը շատ մեծ բավականություն էր նրա համար։

— Գործո՞ւմ ես,— կարճ հարցնում էր նա ու աչքով ցույց տալի շարֆի բրդոտ ծոպերը։

— Գործում եմ, իսկ դո՛ւ ինչ ես ուզում։

— Գործիր, գործիր, անխելք, իսկ նա շնորհակալության փոխարեն քիթ ու մռութդ կջարդի։

— Ինչի՞ համար։

— Լավությանդ համար. ես գիտեմ Գրիշկային, ընկերներ ենք։ Նա այնպիսի մի շուն է որ. կկծի ու չի է՛լ ասի ինչի համար։

— Դեհ, մի՛ դուրս տա։ Կարծես թե ես նրան չեմ ճանաչում։

— Ես ավելի լավ եմ ճանաչում։ Միասին դպրոց էինք գնում։

Միտկան ծանր ու կեղծ հոգոց էր հանում, նայում եղանից չանգռոտած ձեռներին, բոլորովին կորացնում երկար մեջքը։

— Որ նրա հետ լինես, կկորչես, Նատաշկա։ Ավելի լավ է աղջիկ մնաս։ Նրա մեջ ի՞նչ բան ես գտել, հը՞։ Երկյուղալի է, ձին քշես վրան, չես կպչի, մի տեսակ թարս տղա է... Դու լավ մտիկ արա, մունտռիկի մեկն է...

Նատալյան բարկանում էր, կուլ էր տալիս արցունքները, երեսը խեղճ-խեղճ թեքում շարֆի վրա։

— Գլխավորը — դարդ ու ցավ ունի մեկի հետ... — անգթորեն խայթում էր Միտկան։ — Էլ ինչո՞ւ ես կպչում։ Հիմար ես դու, Նատաշկա։ Չե՛ռ քաշիր։ Ես հիմի կթամբեմ ձին ու կգնամ կասեմ՝ էլ չխոթեք քթերդ, հա՛-ա...

Նատալյային փրկում էր Գրիշակա պապին. նա մտնում էր օթախը՝ ոստառատ հենակը դխդխկացնելով հատակին, ասես փորձելով դրա ամրությունը, ու շփելով դեղին, կանեփանման, լմկված մորուքը. հենակով Միտկային բոթելով, հարցնում էր.

— Դու ինչի՞ ես եկել այստեղ, մունտռիկ, հը՞։

— Տեսության եմ եկել, պապի ջան,— արդարանում էր Միտկան,

— Տեսությա՞ն ես եկել։ Ես քեզ, մունտռիկ, հրամայում եմ չքվել այստեղից։ Քայլով մա՛րշ։

Պապը թափ էր տալիս հենակը ու քշում էր Միտկայի վրա՝ անհաստատ շարժելով ցողունի պես սմքած ոտները։

Գրիշակա պապը վաթսուն ինը տարի մաշել էր գետինը։ Մասնակցել էր 1877 թվականի թուրքական պատերազմին, հանձնաստար էր եղել գեներալ Գուտկոյի մոտ, նրա աչքից ընկել էր և ուղարկվել գունդ։ Պլևնայի և Ռոշիչի մոտ մարտական սխրագործություններ կատարելու համար ստացել էր երկու գեորգիևյան խաչ և գեորգիևյան մեդալ։ Ծառայել էր Պրակոֆի Մելեխովի հետ և, ապրելով որդու մոտ, խուսորում ընդհանուր հարգանք վայելելով մինչև ծերությունը պայծառ մտքի, անկաշառ ազնվության և աղուհացով մարդ լինելու համար, կյանքի վերջին օրերում հուշերով էր ապրում

Ամառը արևածագից մինչև մայրամուտը նստում էր հողաթմբի վրա, հենակով խազում գետինը, գլուխը թեքած՝ տարվում էր անպարզ կերպարներով, կցկտուր մտքերով։

հուշերի աղոտ ցոլքերով, որոնք սահում էին մոռացության մշուշում...

Կազակական խունացած գլխարկի ճղճղված հովարից սև ստվեր էր ընկնում գոց աչքերի սև կոպերի վրա. ստվերից այտերի խորշոմները ավելի խոր էին թվում, ալեզարդ մորուքը կապտավուն երանգ էր ստանում։ Հենակին դրված մատների, ձեռների դաստակների, ուռուցիկ, սև երակների միջով հովտի սևահողի նման սև, դանդաղաշարժ արյուն էր հոսում։

Տարեցտարի պաղում էր արյունը։ Գրիշակա պապին ջանգատվում էր Նատալյային՝ սիրած թոռին.

— Բրդե գուլպաներ եմ հագել, ամա դրանք էլի՛ չեն տաքացնում ոտներս։ Դու ինձ համար, բալիկս, չանգալով գործիր գուլպաները։

— Ի՞նչ ես ասում, պապի ջան, ախր հիմի ամառ է,— ծիծաղում էր Նատալյան, ու նստելով պապի մոտ, հողաթմբի վրա, նայում էր նրա մեծ, խորշոմած ու դեղին ականջին։

— Ի՛նչ անենք որ, բալիկս, թեև ամառ է, ամա արյունս պաղ է ոնց որ գետնի տակի հողը։

Նատալյան դիտում էր ծերունու ձեռքի ցանցկեն երակները, հիշում էր, թե ինչպես բակում ջրհոր էին փորում, և ինքը, որ այն ժամանակ փոքրիկ աղջիկ էր, դույլով խոնավ կավ էր հանում, ծանր տիկնիկներ ու փխրուն պողերով կովեր էր շինում։ Նա հիշողության մեջ պարզ վերականգնում էր այն զգացումը, որ առաջանում էր մեռած, սառն, հինգ սաժեն խորությունից հանված հողը ձեռներին, շոշափելուց, ու արդեն վախով էր նայում պապի ձեռներին, որոնք ծերունական դարշնագույն, կավագույն պեպեններով էին ծածկված։

Թվում էր նրան, թե պապի ձեռների մեջ ոչ թե աշխույժ, կարմիր արյուն, այլ մուգ-կապույտ, կավախառն հող է հոսում։

— Վախենո՞ւմ ես մեռնելուց, պապի,— հարցնում էր Նատալյան։

Գրիշակա պապին պատում էր բարակ, կնճռոտ ու ջլոտ վիզը՝ ասես ցանկանալով այն գուրս հանել մաշված հա-

մազգեստի կանգուն օձիքից. շարժում էր դժգույն, ալեզարդ բեղերը։

— Սպասում եմ մահվանս, ոնց որ թանկագին հյուրին։ Էհ, ժամանակն է... ապրել է՛լ եմ, թագավորներին է՛լ ծառայել, ու արաղ է՛լ եմ խմել ողջ կյանքումս,— ավելացնում էր նա, ժպտում անատամ, բերանով ու դողացնում աչքերի խորշոմները։

Նատալյան շոյում էր պապի ձեռքը ու հեռանում, իսկ ծերունին դարձյալ կորանալով, կոթը մաշված հենակով խազմզում էր գետինը, նստում էր հողաթմբին գորշ, շատ տեղերից կարկատած համազգեստով, ու պինդ, կանգնած օձիքի վրա չարաճճիորեն փայլում էին կարմիր, ասես նոր կոճկառները։

Նատալյային նշանելու լուրը նա ընդունեց արտաքին հանգստությամբ, բայց ներքուստ դարդ էր անում ու շարանում. Նատալյան նրան լավագույն պատառն էր տալիս, երբ բոլորը միասին էին ուտում. Նատալյան լվանում էր նրա սպիտակեղենը, կարկատում, կարում էր նրա գուլպաները, կարկատում նրա շալվարն ու շապիկները. հենց այս պատճառով էր Գրիշակա պապին, իմանալով նրա նշանվելու լուրը, երկու օր մռայլ խստությամբ էր նայում նրան։

— Մելեխովները հիանալի կազակներ են։ Լուսահոգի Պրակոֆիի հետ ծառայել եմ մեկ գնդում։ Քաջ կազակ էր։ Բա թոռնե՞րը ոնց են։ Հը՞։

— Թոռներն է՛լ ոչինչ,— խուսափուկ պատասխանում էր Միրոն Գրիգորևիչը։

— Այդ Գրիշկան մեծի պատիվ չգիտի, մունտուկի մեկն է։ Օրվան մեկը գալիս եմ եկեղեցուց, հանդիպեց ինձ ու բարև չտվեց։ Ալևոր մարդիկ հիմի պատիվ չունեն...

— Նա բարի սրտով տղա է,— պաշտպանեց Լուկինիչնան ապագա փեսային։

— Հը՞։ Ասում ես բարի սիրտ ունի՞։ Դեհ, տա՛ աստված։ Մենակ թե Նատաշկայի սրտովը լինի...

Գրիշակա պապին համարյա չմասնակցեց պայման կապելուն, մի բոպե դուրս եկավ օթախից, մի քիչ նստեց սեղանի մոտ, նեղացած կոկորդը դժվարությամբ թրջեց մի գավաթ արաղով ու տաքացած, զգալով, որ հարբում է, հեռացավ։

Երկու օր լուռ նայում էր տագնապալիորեն-երջանիկ Նատալյային, ճպճպացնում էր բերանը, շարժում սպիտակդեղնավուն բեղերի փնջերը. հետո, ըստ երևույթին, մեղմացավ։

— Նատա՛շկա,— մի անգամ կանչեց նա։

Նատալյան մոտեցավ։

— Հը՛, ո՞նց է, թոռնիկս, դու ուրա՞խ ես, հա՞։

— Ես ինքս էլ չգիտեմ, պապի ջան,— խոստովանեց Նատալյան։

— Դեհ, դե՛հ... հլա սրան տես... էհ, Քրիստոսը քեզ հետ։ Աստված տա,— և սրտնեղությամբ ու ցավով կշտամբեց.— չսպասեցիր, անիրավ, որ մեռնեի, հետո մարդու գնայիր... առանց քեզ կյանքս դառն կլինի։

Միտկան, որ խոհանոցից ականջ էր դնում նրանց խոսակցությանը, ասաց.

— Պապի, կարելի է դու էլի հարյուր տարի կապրես, բա նա պիտի սպասի՞։ Խորամանկ ես, հա՞։

Գրիշակա պապին կարմրեց մռայլվելու և շունչը կտրրվելու չափ։ Հենակն ու ոտները խփեց հատակին։

— Զենդ կտրի՛, մունտուկ, շան որդի։ Կորի գնա՛... Հայդա... Ա՛խ դու, անպիտան արարած... Ակա՞նջ էիր դնում հա՞...

Միտկան փոթկալով վազեց բակը, իսկ Գրիշակա պապին երկար վրդովվում էր, հայհոյում Միտկային, ու դողում էին նրա ծնկները, բրդե կարճ գուլպա հագած ոտները։

Նատալյայի երկու փոքրիկ քույրերը,— տասներկու տարեկան անչափահաս Մարիշկան ու ութ տարեկան սուտլիկ ու երես առած Գրիպկան անհամբերությամբ սպասում էին հարսանիքի օրվան։

Զուսպ ուրախություն էին արտահայտում նաև մշակները, որոնք մշտապես ապրում էին Կորշունովների մոտ։ Նրանք առատաձեռն հյուրասիրություն էին սպասում տանտիրոջից և հույս ունեին, որ քեֆերի ժամանակ մի-երկու օր ազատ կլինեն։ Նրանցից մեկը, բարձրահասակ, ջրհորի կոունկի երկարության հասնող, Գետ-Բաբա տարօրինակ

ազգանունով բոգուչարցի մի ուկրաինացի, կես տարին մի անգամ թունդ հարբում էր։ Ինչ որ կար հագին և ինչ որ վաստակում էր, խմիչքի էր տալիս։ Վաղուց էր նրան հրապուրում մաշող սրտախառնուքի ծանոթ զգացումը, բայց նա զսպում էր իրեն, ուզում էր խմելը սկսել հարսանիքի օրերին։

Երկրորդը, Միգուլինսկայա ստանիցայի հիվանդոտ ու թխադեմ մի կազակ, Միխեյ անունով, վաղուց չէ, ինչ ապրում էր Կորշունովների մոտ. նրա տուն ու տեղը հրդեհ էր ընկել, ու նա սնանկացել էր, վարձվել իրրև մշակ, ու ընկերանալով Գետկայի (այսպես կրճատ էին անվանում Գետ-Բաբային) հետ, սկսել էր ժամանակ առ ժամանակ խմել։ Նա չերմորեն սիրում էր ձիերը. խմում ու լաց էր լինում, արցունքները քսում սուր, հոնքերից զուրկ դեմքին, կպչում էր Միրոն Գրիգորևիչին.

— Աղա՛ ջան, իմ աչքի՛ լույս։ Աղջկադ հարսանիքը որ անես, Միխեյկոյին էլ հարսնառ ղրկի։ Այնպե՛ս գնամ-գամ, որ քեֆդ գա։ Կրակի միջով կթռչեմ, ամա ձիու մի մազն էլ չի խանձվի։ Ես է՛լ եմ ձիեր ունեցել... Ա՛խ...

Շարունակ մռայլ ու մարդախույս Գետկոն, հայտնի չէր, թե ինչու կապվել էր Միխեյի հետ, նրան ձեռ էր առնում միշտ միևնույն կատակով.

— Միխե՛յ, լսո՞ւմ ես։ Դու ո՞ր ստանիցայից ես,— հարցնում էր նա Միխեյին՝ շփելով երկար, մինչև ծնկները հասնող ձեռները, ու ինքն էլ պատասխանում էր ձայնը փոխելով — «Միգուլինսկայա ստանիցայից»։ — Բա ինչո՞ւ դու այդպես քոսոտ-մոսոտ ես։ «Մենք տնով-տեղով այսպես ենք»։

Գետկոն միշտ էլ խոպոտ ձայնով քրքջում էր շարունակ կրկնվող կատակից՝ ձեռները շրմփացնելով երկար, լղարիկ սրունքներին, իսկ Միխեյը ատելությամբ էր նայում Գետկոյի թրաշված երեսին, բկի վրա շարժվող ադամախնձորին. ու նրան «լագլագ» և «քոսոտ-բորոտ» էր անվանում։

Հարսանիքը նշանակեցին առաջին ուտիսին։ Մնում էր երեք շաբաթ։ Վերափոխման տոնին Գրիգորին եկավ հարսնացուին այցելելու։ Օթախում նստեց կլոր սեղանի մոտ արևածաղիկի սերմ շրթեց և ընկույզ կերավ աղջիկների՝ հարսնացուի ընկերուհիների հետ, ու գնաց։ Նատալյան ճապարհ դրեց նրան։ Ջարդախի ծածկի տակ, ուր մսուրից խոտ էր ուտում Գրիշկայի ձին, նոր, շքեղ թամքը մեջքին,— Նատալյան ձեռքը տարավ ծոցը ու կարմրելով, սիրահար աչքերը հառելով Գրիգորիի վրա, նրան տվեց ինչ-որ մի փափուկ, կուսական ստինքների չերմությունը պահած առարկա։ Ընդունելով նվերը, Գրիգորին նրան ապշեցրեց գայլի իր ատամների սպիտակությամբ, հարցրեց.

— Սա ի՞նչ է։

— Այնտեղ կտեսնես... թութունի տոպրակ եմ գործել։

Գրիգորին թևի անհաստատ շարժումով գրկեց նրան, ուզեց համբուրել, բայց Նատալյան ձեռները ուժով դեմ արավ նրա կրծքին, ճկունությամբ ետ թեքեց գլուխը ու վախեցած նայեց պատուհաններին։

— Կտեսնեն, է՛։

— Թող տեսնեն։

— Ամաչում եմ...

— Առաջին անգամ այդպես է,— բացատրեց Գրիգորին։

Նատալյան բռնել էր սանձը։ Գրիգորին աչքերը կկոցելով, ոտը հագցրեց կորաձև ասպանդակին։ Նա հարմար նստեց թամքի բարձին ու մեկնեց բակից։ Նատալյան բացեց դարբասը, ձեռքի տակից մտիկ տվեց. Գրիգորին նստել էր ոնց որ կալմիկ, մի քիչ ձախ կողքին թեքված, ճարպկորեն թափահարելով մտրակը։

«Տասնմեկ օր մնաց»,— մտքում հաշվեց Նատալյան, և հոգոց հանեց, և՛ ծիծաղեց։

XX

Ելում-բարձրանում է սրատերև, կանաչ ցորենը, աճում է. մեկ ու կես ամսից հետո ագռավը գլխով մեկ կթաղվի նրա մեջ ու չի երևա. ծծում է հողի հյութերը, հասկ է բռնում, հասկիկը լցվում է բուրավետ ու քաղցր կաթով և ուռչում է. հետո դեղնում է հասկը, ոսկեպայծառ գույն է առնում։ Արտաստերը դուրս է գալի տափաստան, նայում է, ու սիրտը լցվում է բերկրանքով։ Որտեղից-որտեղ արտն է մտնում անասունների նախիրը. կճղակներով կոխոտում, տրորում է

հասկերը։ Այնտեղ, ուր պառկում են նրանք, հացը ճխլտըվում, գետնին է կպչում... Տեսնողը ապշում է ու ցավում։

Այդպես էլ պատահեց Ակսինյայի հետ. հասուն, ոսկեծաղիկ զգացմունքի վրա Գրիգորին դրեց ոտի կոշտ, ծանր թաթը։ Մոխրացրեց, աղտեղեց — և ուրիշ ոչինչ։

Մելեխովների բանջարանոցից, արևածաղիկների միջից տուն գալուց հետո Ակսինյայի հոգու մեջ դատարկություն և ամայություն էր տիրում, ինչպես մոռացված, թալլով ու քոլախոտով պատած կալում։

Քայլում էր նա ու ծամծմում լալակի ծայրերը, ու ճիչը խեղդվում էր կոկորդում։ Մտավ հաշտը, ընկավ հատակին, շնչասպառ եղավ արցունքների մեջ, տանջանքի մեջ, սև դատարկության մեջ, որ պաշարել էր միտքը... Հետո այդ անցավ։ Սուր ցավը ճմլում, մաշում էր սրտի ինչ-որ մի անկյունը։

Անասունների ճմռթած հացը հո վեր է բարձրանում։ Ցողից, արևից շտկվում է գետնին պառկած ցողունը. սկզբում կորացած է լինում ինչպես ուժից վեր ծանրություն տանող մարդը, հետո ուղիղ դիրք է ստանում, բարձրացնում է գլուխը, ու դարձյալ նրան լույս է տալիս ցերեկը, ու դարձյալ նրան օրորում է քամին...

Գիշերները մոլեգնաբար փայփայելով ամուսնուն, Ակսինյան մտածում էր ուրիշ բանի մասին, ու նրա հոգու մեջ ատելությունը միահյուսվում էր մեծ սիրո։ Իր մտքերի մեջ նա ընթանում էր դեպի նոր անպատվություն, դեպի առաջվա խայտառակությունը. որոշեց Գրիշկային խլել երջանիկ, սիրո վիշտն ու բերկրանքը չտեսած Նատալյա Կորշունովայից։ Գիշերները հազար ու մի մտքերով էր տարվում, մթության մեջ թարթում էր չոր աչքերը։ Քնի մեջ աջ թևի վրա ծանրանում էր Ստեփանի գլուխը, որ գեղեցիկ էր, կողքի ընկած խուճուճ ու երկար քյաքուլով։ Ստեփանը շնչում էր կիսաբաց բերանով, նրա սև ձեռքը, որ մնում էր կնոջ կրծքի վրա, շարժում էր աշխատանքից ճաքճքված երկարթե մատները։ Ակսինյան միտք էր անում։ Ջափում ու ձևում էր։ Փոխում էր մտքերը։ Միայն մի բան էր հաստատապես որոշել. Գրիշկային խլել բոլորից, հեղեղել սիրով, տիրանալ նրան ինչպես առաջ։

Ու սրտի խորքում սուր զգացումը, որ նման էր մեղվի թողած խայթին, ավելի սրում էր նրա անամոթ ցավը։

Այդ լինում էր գիշերները, իսկ ցերեկը Ակսինյան իր մտքերը խեղդում էր հոգսերի, տնտեսության գործերի մեջ։ Որևէ տեղ հանդիպում էր Գրիշկային և, գունատվելով, անցնում էր կողքից իր գեղեցիկ, նրան կարոտած մարմնով, անամոթ պատրաստակամությամբ դիտում նրա աչքերի սև անդունդը։

Նրան հանդիպելուց հետո Գրիշկան մաշող կարոտ էր զգում։ Առանց պատճառի շարանում էր, բարկությունը թափում Դունյաշկայի վրա, մոր վրա, ու ամենից հաճախ վերցնում էր թուրը, գնում ետին բակը, ու քրտինքի մեջ կորած, շարժելով այտոսկրների ուռուցքները, թրատում էր գետնի մեջ խրած հաստ ճիպոտները։ Մի շաբաթում մի ամբողջ շեղջ թրատեց։ Պանտելեյ Պրակոֆևիչը հայհոյանք էր թափում՝ փայլեցնելով գինդը ու աչքերի դեղնած սպիտակուցները։

— Ցախ չթողեց, ջարդ ու փշուր արավ այդ գարշելի սատանան, այդքան ցախը հերիք կլիներ երկու ցանկապատ շինելու համար։ Քաջությո՞ւն ես անում, հա՞, շան ծիծ կերած։ Հրեն, գնա ցախուտը, զարկ ու ջարդի խելքիցդ դուրս... Հլա կաց, տղա, կգնաս ծառայության, այնտեղ այնքան թրատես, որ աչքերդ դուրս գան... Այնտեղ քեզ նմաններին շուտ են վարժեցնում...

XXI

Հարսին բերելու համար հասնառ էին ուղարկելու զույգ ձիեր լծած չորս բրիչկա։ Տոնավարի զուգված մարդիկ խմբվում էին Մելեխովների բակում, բրիչկաների մոտ։

Հարսանիքի կառավարիչը, Պետրոն, հագել է սև սերթուկ ու կապույտ շալվար լամպասներով, նրա ձախ թևքին երկու սպիտակ թաշկինակ է կապված, նա շարունակ, անընդհատ քմծիծաղ է տալիս ցորնագույն բեղի տակին։ Նա փեսացուի կողքին է։

— Դու, Գրիշկա, չքաշվես։ Գլուխդ աքլորավարի պես հիր, ի՞նչ ես թթվել։

Բրիչկաների կողքին խառնաշփոթություն, աղմուկ է։

— Ո՞ւր կորավ խաչեղբայրը։ Գնալու ժամանակն է։

— Քավո՛ր։

— Հը՞։

— Քավոր, դու երկրորդ բրիչկայով կգնաս։ Լսո՞ւմ ես, քավոր։

— Բրիչկաների վրա օրորաններ դրե՞լ եք։

— Մի՛ վախենա, առանց օրորանների էլ ջարդ ու փշուր չես լինի։ Տեղը փափուկ է։

Դարյան, որ կարմիր, բրդե շրջազգեստ էր հագել և ճկուն ու բարակ էր կարմիր շվի պես, խաղացնում էր ներկած, կամար հոնքերը, բոթում Պետրոյին։

— Ժամանակն է գնալ, ասա հորը։ Հիմի այնտեղ ըստ պտսում են։

Փսփսալով որտեղից-որտեղ մոտեցող հոր հետ, Պետրոն կարգադրություն արավ.

— Նստեցեք։ Իմ բրիչկային կնստեն հինգ հոգի՝ փեսացուի հետ։ Անիկե՛յ, դու կառապան կլինես։

Տեղավորվեցին։ Կարմրադեմ ու ցնծալից Իլյինիչնան բացեց դարբասը։ Չորս բրիչկաները սլացան փողոցով, աշխատելով մեկը մյուսից առաջ անցնել։

Պետրոն նստել էր Գրիգորիի կողքին։ Նրանց դիմաց Դարյան թափ էր տալիս ժանյակավոր թաշկինակը, հովացնում երեսը։ Փոսերից ու գուղձերից անցնելիս խլանում էին երգող ձայները։ Կազակական գլխարկների կարմիր բոլորք, կապույտ ու սև համազգեստներ և սերթուկներ, սպիտակ կապերով թևքեր, կնանոց շալե լաչակների ցաք ու ցրիվ ծիածան, գույնզգույն շրջազգեստներ, փոշու մարմաշե տուտք ամեն մի բրիչկայի ետևից։ Ահա և հարսնառը։

Անիկեյը, Մելեխովների հարևանը, որ հորեղբոր թոռ էր գալի Գրիգորիին, քշում էր ձիերը։ Դեպի առաջ կախվելով, համարյա ընկնելով նստած տեղից, նա շրխկացնում էր մրտրակը, բղավում ու ճղճղում, ու քրտնած ձիերը ճիգ թափելով՝ քաշում էին ձգափոկերը։

— Շրմփացրո՛ւ դրանց, շրմփացրու...— գոռում էր Պետրոն։

Անբեղ, ներքինու նմանվող Անիկեյը աչքով էր անում Գրիգորիին, մերկ, կանացի դեմքը ծռմռում խորամանկ ժպիտով, ճղճղում ու թունդ մտրակում ձիերը։

— Խաբարդա՞...— նրանց ետևից հասնելով, գոռաց Իլյա Օժոգինը, փեսացուի քեռին։ Գրիգորին նրա կողքին տեսավ բրիչկայի օրորվելուց ոստոստող Դունյաշկայի երջանիկ, թուխ այտերով դեմքը։

— Չէ՛, դու կա՛ց...— ոտքի կանգնելով բղավեց Անիկեյը ու սուր շվացրեց։

Ձիերը սլացան կատաղի թափով։

— Կը-ընկ-նե՞ես...— ճչում էր Դարյան ոստոստալով, գրկում Անիկեյի լաքած կոշիկները։

— Պինդ կաց...— կողքից հարա էր տալի Իլյա քեռին։ Նրա ձայնը կորչում էր անիվների անընդմեջ գոգոցում։

Մնացած երկու բրիչկաները, որ լեփ-լեցուն էին գույնզգույն զգեստ հագած, բղավող մարդկանցով, կողք-կողքի սլանում էին ճանապարհով։ Ձիերը կարմիր, կապույտ, բացվարդագույն տապճակներով, թղթե ծաղիկներով, բաշերին ու ճակատների մազափնջերին կպցրած ժապավեններով, բոժոժների զրնգոցով թռչում էին խորդուբորդ ճանապարհին, բերաններից փրփուրի պղպջակներ թափում, ու նրանց քրտնաթոր, թաց մեջքերին գցած տապճակները շփշփում էին, թոթռում քամուց։

Կորշունովների դարբասի առաջ մի խումբ երեխաներ հարսնառին էին սպասում։ Ճանապարհի վրա փոշի տեսան ու վազ տվին բակը։

— Գալիս են։

— Սլանում են։

— Ծրևացին...— Նրանք շրջապատեցին Գետկային։

— Ի՞նչ եք հավաքվել։ Հա՛յդա, կորեք, սատանի ճտեր։ Ականջներս տարաք ձեր վժվժոցով։

— Խախո՛լ, կպրի կարաս, արի կովենք, կարա՞ս։ Խախո՛լ... ա՛յ խախոլ... կպրո՛տ երես...— ճվում-ճչում էին երեխաները՝ ցատկոտելով Գետկայի լայն, պարկանման շալվարի շուրջ։

Գետկան գլուխը թեքած, ասես ջրհորի խորքը զննելով, նայում էր չարաճճի երեխաներին ու քորում մեծ, պիրկ փորը, ներողամտությամբ ժպտում։

Բրիչկաներն աղմուկով մտան բակ։ Պետրոն Գրիգորիին տարավ դեպի մուտքը, նրա ետևից գնացին հարսանքավորները։

Հաշտից խոհանոցը տանող դուռը փակ էր։ Պետրոն ծեծեց դուռը։

— Տե՛ր Հիսուս Քրիստոս, ողորմյա մեզ։

— Ամի՛ն,— արձագանքեցին դռան ետևից։

Պետրոն թիկոցը կրկնեց երեք անգամ, նրան խուլ արձագանքում էին։

— Թո՛ւյլ տվեք ներս մտնել։

— Հրամմեցեք։

Դուռը լայն բացվեց։ Նատալյայի սանամերը,— գեղեցիկ այրի մի կին,— Պետրոյին դիմավորեց գլուխ տալով ու թեթև, վառ ժպիտով։

— Համեցեք, խնամի, անուշ լինի։

Նա մեկնեց մի բաժակ պղտոր, նոր պատրաստված կվաս։ Պետրոն հարթեց բեղերը, խմեց, բիկաց ընդհանուր զուսպ ծիծաղի տակ։

— Ամա՛ թե խմացրիր, խնամի ջան... դու կաց, հոգիդ սիրեմ, ջանիկս, ես քեզ այնպե՛ս խմացնեմ, որ լաց լինես...

— Ներո՛ղ եղեք, խնդրեմ,— այրին գլուխ տվեց ու Պետրոյին շնորհեց իր զուսպ, խորամանկ ժպիտը։

Մինչդեռ հարսանիքի կառավարիչն ու այրի կինը մրրցում էին սրամտությամբ, փեսացուի հարազատներին, ըստ սովորության, երեքական գավաթ օղի մատուցեցին։

Արդեն պսակի շոր հագած ու քող կապած Նատալյային պահում էին սեղանի մոտ։ Մարիշկան պարզած ձեռքով բռնել էր գրտնակը։ Գրիպկան եռանդով թափահարում էր խմորի խառնիչը։

Քրտնած, գինովցած Պետրոն նրանց գլուխ տվեց ու գավաթով հիսունական կոպեկ մատուցեց։ Այրի կինը աչքով արավ Մարիշկային, սա էլ գրտնակը գլորեց սեղանի վրայով.

— Քիչ է, չե՛նք ծախի հարսին...

Պետրոն մի անգամ էլ արծաթե մանր փող մատուցեց գավաթի մեջ ընդացնելով այն։

— Չե՛նք տա,— համառում էին քույրերը, արմունկներով բոթում գլուխը խոնարհած Նատալյային։

— Ո՛նց թե, արդեն վճարված է ու էլա մի բան էլ ավելի։

— Զիջեցեք, աղջկերք,— հրամայեց Միրոն Գրիգորևիչը ու ժպտալով, մոտեցավ սեղանին։ Նրա շիկակարմիր մազերը, որոնք օծված էին կովի հալած յուղով, քրտնքի ու գոմաղբի նեխահոտ էին արձակում։

Հարսնացուի ազգականներն ու մոտիկները, որ նստած էին սեղանի շուրջը, վեր կացան ու տեղ բաց արին։

Պետրոն աղլուխի մի ծայրը տվեց Գրիգորիի ձեռքը, թռավ նստարանի վրա, սեղանի կողքով նրան տարավ հարսնացուի մոտ, որը նստել էր սրբապատկերի տակ։ Նատալյան շփոթմունքից քրտնած ձեռքով վերցրեց աղլուխի մյուս ծայրը։

Սեղանի շուրջը նստածները ուտում էին չփչփացնում բերանները, ձեռներով պատառոտում եփած հավի միսը, ձեռները սրբում՝ մազերին քսելով։ Անիկեյը կրծում էր հավի կրծոսկրը, դեղին յուղը մերկ կզակի վրայով թափվում էր օձիքին։

Գրիգորին ներքին ափսոսանքով նայում էր իր և Նատալյայի գդալներին, որոնք թաշկինակով իրար էին կապված, նայում էր թասի միջից գոլորշի արձակող արիշտային։ Նա ուտել էր ուզում, անհաճելի ու խուլ գոգոում էր փորը։

Դարյան ուտում էր Իլյա քեռու կողքին նստած։ Սա իր պինդ ժանիքներով պռճոկում էր ոչխարի կողը, երևի անպարկեշտ բաներ էր ասում Դարյային, որովհետև սա աչքերը կկոցելով և հոնքերը խաղացնելով, կարմրում ու քմծիծաղ էր տալիս։

Երկար ու կուշտ ուտում էին։ Տղամարդկանց քրտնքի կպրահոտը խառնված էր կանանց բարկ ու սուր քրտնահոտին։ Սնդուկներում երկար պահված յուքաներից, սերթուկներից ու շալերից նավթալինի ու էլի ինչ-որ քաղցրամեղցր բանի հոտ էր գալիս. այդպիսի հոտ են արձակում պառավների բանեցրած հին, փայտե մեղրամանները։

Գրիգորին շեղակի նայում էր Նատալյային։ Եվ այստեղ

առաջին անգամ նկատեց, որ նրա վերին շրթունքը ուռուցիկ է, հովարի պես կախ է ընկած ստորին շրթունքի վրա։ Նաև նկատեց, որ աջ այտի վրա, այտոսկրից քիչ ներքև կա դարշնագույն մի խալ, իսկ խալի վրա — երկու ոսկեգույն մազ, և դա, հայտնի չէ ինչու, նրան անախորժություն պատճառեց։ Գրիգորին վերհիշեց Ակսինյայի կոկլիկ վիզը և գանգուր, փարթամ ծամերը, ու իրեն այնպես զգաց, որ կարծես թե շապկի օձիքի տակից խոտի ծակծկող մանրունք էին լցրել քրտնած մեջքին։ Կուչ եկավ, ընկճված ու թախծալի նայեց բերանները ճպճպացնող, մշմշացող, լակող մարդկանց։

Երբ վեր էին կենում սեղանից, մեկը բերանից խոշաբի ու թթվահամ, կշտացնող ցորենհացի հոտ արձակելով, թեքվեց նրա վրա, մի բուռ կորեկաձավար լցրեց կոշիկի ճեղքից ներս. այդ նրա համար էր, որ մեկն ու մեկը աչքով շտար փնտացուին։ Վերադարձի ամբողջ ճանապարհին կորեկաձավարը հարում էր Գրիգորիի ոտը, շապկի ամուր օձիքը խեղդում էր կոկորդը, ու Գրիգորին հարսանեկան ծեսերից ճնշված, սառը և հուսահատական կատաղությամբ ինքն իր մեջ հայհոյանքներ էր թափում։

XXII

Կորշունովների մոտ հանգստացած ձիերը վերջին ուժերը լարած, սլանում էին Մելեխովների տան ուղղությամբ։ Փրփուրը հոսում, թափվում էր կաշվե շրջափոկերի վրա։

Հարբած կառապանները անգթաբար քշում էին նրանց։

Հարսնառին դիմավորեցին փեսացուի ծնողները։ Պանտելեյ Պրակոֆևիչը բռնել էր սրբապատկերը, փայլում էր նրա ալեխառն, ասես վրան արծաթ շաղ տված մորուքը, Իլլինիչնան կանգնել էր նրա կողքին, նրա բարակ շրթունքները քարի պես անշարժ էին։

Գրիգորին ու Նատալյան, որոնց վրա գինու գայլուկ և ցորենի հատիկներ էին շաղ տված, մոտեցան օրհնություն ստանալու։ Պանտելեյ Պրակոֆևիչը օրհնելիս արցունք թափեց ու անհանգստացավ, մռայլվեց, ցավելով, որ մարդիկ ականատես էին իր այդ թուլության։

Նորապսակները մտան տուն։ Արաղից, ճանապարհ գնալուց և շոգից կաթմրած Դարյան վազեց դեպի արտաքին սանդուղքը, բարկացկոտ գիմեց խոհանոցից եկող Դունյաշկային.

— Ո՞րտեղ է Պետրոն։

— Չեմ տեսել։

— Տերտերի մոտ պետք է գնալ, իսկ այդ անիծվածը կորել է։

Պետրոն, որ շափից դուրս արաղ էր կոնծել, պառկել էր առջևի մասից անջատված սայլի վրա ու ննջում էր։ Դարյան ուրուրի պես կպավ նրան։

— Քի՛չ զխտվեիր, ա՛յ գլխամեռ։ Պետք է տերտերի մոտ գնալ... վեր կաց։

— Կորի-գնա, է՛։ Դո՞ւ ինչացու ես։ Հրամանատա՞ր ես գլխիս, հը՞,— լուրջ պատասխանեց Պետրոն՝ ձեռներով շոշափելով գետինը, հավաքելով հավի ծերտն ու դարմանի մնացորդները։

Դարյան լաց լինելով, երկու մատը խոթեց նրա բերանը, սեղմեց անհարմար խոսքեր բլբլացող նրա լեզուն, օգնեց թեթևանալու։ Անակնկալից շշկլված Պետրոյի գլխին շրհորի մի դույլ շուր լցրեց, սրբեց շորացող տապճակով, տարավ տերտերի մոտ։

Մի ժամից հետո Գրիգորին կանգնած էր եկեղեցում, մոմերի լույսի տակ սիրունացած Նատալյայի կողքին, ձեռքի մեջ սեղմում էր մոմի ծայրը, մշուշված հայացքը սահեցնում փսփսացող հոծ բազմության վրայով, մտքում կրկնում միևնույն անմոռանալի բառը՝ «Պսակվեցի... պսակվեցի»։ Ետևից հազում էր ուռած Պետրոն, ամբոխի մեջ մի տեղ փայլում էին Դունյաշկայի աչքերը, երևում էին ինչ-որ ծանոթ ու անծանոթ դեմքեր. լսվում էին ձայների աննրդաշնակ դժժոցը ու սարկավագի երկարաձիգ բացականչությունները։ Անտարբերությունը շղթայել էր Գրիգորիին։ Սա քայլում էր գրքակալի շուրջ, ոտն անզգուշաբար դնում քթի մեջ խոսող տեր-Վիսսարիոնի կիսամաշ կոշիկների կրունկներին. կանգ էր առնում, երբ Պետրոն աննկատելի քաշում էր նրա սերթուկի փեշը. նայում էր մոմերի երերուն բոցերին ու պայքարում իրեն պաշարած քնկոտ թմրածության դեմ։

— Իրար հետ փոխեք մատանիները,— ասաց տեր-Վիսսարիոնը՝ ջերմագին նայելով Գրիգորիի աչքերին։

Փոխեցին։ «Շո՞ւտ կվերջանա»,— աչքերով հարցրեց Գրիգորին՝ կողքից հանդիպելով Պետրոյի հայացքին։ Պետրոն էլ շարժեց շրթունքների անկյունները մարելով ժպիտը՝ «Շուտով»։ Հետո Գրիգորին երեք անգամ համբուրեց կնոջ խոնավ, անհամ շուրթերը, եկեղեցին լցվեց հանգցրած մոմերի ծխի հեռուցիչ հոտով, մարդիկ խոնվելով, սկսեցին դուրս գալ եղեղեցու գավիթը։

Գրիգորին Նատալյայի կոշտ, խոշոր ձեռքը բռնած, դուրս եկավ գավիթը։ Մեկը նրա գլխարկը դրեց նրա գլխին։ Հարավից փչեց օշինդրաբույր, տաք զեփյուռը։ Տափաստանից գիշերային զով էր տարածվում։ Հեռո՛ւ-հեռվում, Դոնի մյուս կողմում որոտում էր կայծակը, անձրև էր գալիս, իսկ սպիտակ ցանկապատից դենը, միախառնվելով ձայների դժժոցին, հաճելի ու քնքուշ զնգզնգում էին ոտները շարժող ձիերի բոժոժները։

XXIII

Կորշունովները ժամանեցին այն ժամանակ, երբ արդեն հարս ու փեսային տարել էին եկեղեցի։ Պանտելեյ Պրակոֆիևիչը մինչ այդ դուրս էր գալիս դարբասից, նայում փողոցի երկայնքով, բայց գորշ ճանապարհը, որ եզերված էր փշաբույսերի մացառուտներով, բոլորովին դատարկ էր, ոչ ոք չէր երևում։ Պանտելեյ Պրակոֆիևիչը դիտում էր Դոնի մյուս ափը։ Այնտեղ բավական դեղնել էր անտառը, հասունացած, ծոպավոր եղեգնը հոգնածորեն թեքվում էր գետի մյուս կողմի մի փոքրիկ լճակի, բոշխի վրա։

Մինչաշնանային, մելամաղձոտ, կապույտ նիրհը միախառնվելով մթնշաղին, շոքել էր խուտորի վրա։ Ահա Դոնը, կավճոտ բլրալանջերը, գետի մյուս կողմում կապտավուն մշուշով սքողված, դալկացող անտառները, տափաստանը։ Դեպի ճանապարհը տանող փողոցի խաչմերուկում ուրվագծվում է մատուռի սուր անկյունավոր, բարակ գրմբեթը։

Պանտելեյ Պրակոֆիևիչի ականջին հասավ անիվների հազիվ լսելի գոգոց և շան հաչոց։ Հրապարակից փողոց

դուրս եկան երկու բրիչկա։ Առջևի բրիչկայի վրա, օրորանի մեջ ճոճվելով, իրար կողքի նստել էին Միրոն Գրիգորևիչը ու Լուկինիչնան, նրանց դեմ ու դեմ— Գրիշակա պապին մաքուր համազգեստով, գեորգիևյան խաչերով և մեդալներով։ Բրիչկան քշում էր Միտկան իր տեղում անփույթ նստած, վազքից կատաղած, պարարտ, սևաթույր ձիերին ցույց չտալով նստելատեղի տակն անցկացրած մտրակը։ Երկրորդ բրիչկայի վրա Միխեյը մեջքին ընկնելով, երասանները քաշքշելով, ճիգ էր թափում դանդաղեցնելու յորդա սլացող ձիերի վազքը։ Միխեյի սուր, հոնքերից զուրկ դեմքը մանիշակագույն-կարմիր էր, մեջտեղից պատռված հովարի տակից առատորեն թափվում էր քրտինքը։

Պանտելեյ Պրակոֆիևիչը լայն բացեց դարբասը, ու բրիչկաներն իրար ետևից մտան բակ։

Արտաքին սանդուղքից բադի քայլվածքով իջավ Իլյինիչնան, նրա փեշն ավելց աստիճանների վրա թափթփված աղբի մնացորդները։

— Համեցեք, համեցեք, թանկագին խնամիներ։ Պատիվ արեք մեր աղքատ տունը,— և Իլյինիչնան թեքեց իր պարարտ իրանը։

Պանտելեյ Պրակոֆիևիչը գլուխը թեքելով, լայն տարածեց ձեռները.

— Խոնարհաբար խնդրում ենք, խնամիներ։ Անցեք ներս։— Նա հրամայեց, որ արձակեն ձիերը, ու մոտեցավ, խնամուն՝ հարսի հորը։

Միրոն Գրիգորևիչը ձեռքով շփում էր շալվարը, մաքրում փոշին։ Բարևելով միմյանց, քայլեցին դեպի մուտքը։ Գրիշակա պապին, որ ցնցահարվել էր իր համար անսովոր ճանապարհորդության ժամանակ, մի փոքր ետ մնաց։

— Անցեք ներս, խնամի, անցեք ներս,— խնդրում էր Իլյինիչնան։

— Ոչինչ, շնորհակալ ենք... կանցնենք։

— Շատ սպասեցինք ձեզ, անցեք։ Հիմի ավել կտամ, որ համազգեստդ մաքրես։ Այնպես թոզ ու դուման է, որ մարդ չի կարենում շունչ քաշի։

— Դրուստ որ, չորություն է... Հենց դրանից էլ թոզ է... Մի՛ անհանգստանաք, խնամի, ես հիմի կգամ...— Գրիշա-

կա պապին գլուխ տալով բան չհասկացող Իլլինիչնային, շուռ եկավ ու քայլեց դեպի չարդախը ու անհետացավ քամահարի ներկած կողի ետևում։

— Ի՞նչ էիր կպել ալևորին, ա՛յ սարսաղ, — կշտամբեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ սանդուղքի մոտ հանդիպելով Իլլինիչնային։ — Ախր նա ծեր մարդ է, թեթևանալ է ուզում, իսկ դու... թյո՛ւ, տեր աստված, այդքան է՞լ կնիկն անխելք լինի...

— Դն ես ի՞նչ իմանայի,—շփոթվեց Իլլինիչնան։

— Պետք է հասկանաս։ Դեհ, պրծա՛վ։ Գնա խնամու կնկա մոտ։

Բացված սեղանների շուրջ զի՛լ դժժոց են բարձրացրել խմած հյուրերը։ Խնամիներին նստեցրին օթախում, սեղանի շուրջ։ Շուտով եկեղեցուց եկան նորապսակները։ Պանտելեյ Պրակոֆևիչը քառորդ դույլանոց շշից օղի լցնելով, արտասվեց։

— Դեհ, խնամիներս, խմենք մեր զավակների կենացը։ Թող նրանք լավ լինեն իրար հետ, ոնց որ մենք լավ գտանք իրար... ու թող նրանք բախտավոր և առողջ լինեն իրենց կյանքում...

Գրիշկա պապի համար լցրին ուռուցիկ մի գավաթ, ու արաղի կեսը լցրին բեղ ու մորուքի մեջ կորած բերանը, կեսն էլ համազգեստի կանգնած օձիքի տակ։ Խմում էին բաժակներն իրար զարկելով։ Հենց միայն խմում էին։ Տոնավաճառի աղմուկ։ Կորշունովների հեռավոր ազգականը, Ատամանյան գնդի հին ռազմիկ Նիկիֆոր Կոլովեյդինը, որ նստել էր սեղանի ծայրին, բարձրացնելով վտիտ ձեռքը, բղավում էր.

— Դա՞-ռն է[1]։

— Դա-ա-ա-ա՞-ռն է...— կրկնում էին սեղանի շուրջ նստածները։

[1] Սովորության համաձայն, հարսանեկան խնջույքում նորապսակները պետք է հաճախակի համբուրվեն, որով, ուրեմն, այն «քաղցր» կլինի։ Իսկ երբ նրանք չեն համբուրվում, հյուրերը գոչում են՝ «դառն է», այսինքն ցանկություն են հայտնում, որ նրանք համբուրվեն։ (Ծան. թարգմ.)։

— Օ՞, դա-ա՞-ռն է... — արձագանքում էր լեփ-լեցուն խոհանոցը։

Գրիգորին մոայլվելով, համբուրում էր կնոջ խոնավ շուրթերը, երկչոտ հայացքն այս ու այն կողմ էր դարձնում։

Կարմիր դեմքեր։ Գինովությունից պղտորված անպատկառ հայացքներ ու ժպիտներ։ Համով ծամող, գեղանաշխ սիրոցների վրա հարբածությունից լորձունք թափող բերաններ։ Մի խոսքով, խրախճանք։

Նիկիֆոր Կոլովեյդինը բաց էր անում չեչոտ բերանը, բարձրացնում ձեռքը։

— Դա՞-ռն է... — Նրա կապույտ, Ատամանյան գնդի թևքի վրա ծոմովում էին երեք ոսկեգույն նշանները, — գերակեսիկ ծառայության համար տրված թելերը։

— Դա-ա՞-ռն է...

Գրիգորին ատելությամբ էր նայում Կոլովեյդինի չեչոտ բերանին։ Վերջինս ատամների միջի դատարկ խոռոչից «դառն է» ասելիս փողակի նման դուրս էր գալիս լորձոտ, կարմիր լեզուն։

— Պաչե՛ք իրար, է՛, խունջիկ-մունջիկներ... — ֆշշում էր Պետրոն՝ շարժելով արաղի մեջ թրջված բեղերի հյուսիկները։

Խմած ու կարմրած Դարյան խոհանոցում սկսեց երգել։ Ներգեցին և մյուսները, օթախում՝ նստածները։

Ահա գետն էլ, կամուրջն էլ,
Ահա նավը, որ նստես...

Ձայները միախառնվում էին, և ուրիշներից առաջ անցնելով, ցնցելով պատուհանների ապակիները, որոտում էր Խրիստոնյան.

Բա ո՞վ արաղ կբերի,
Որ խմենք կուշտ ու կուռ։

Ննջարանից գալիս է կնանոց անընդհատ ճվոցը.

Ջենս չի գալի, կորել է ձենս։

Օգնության է հասնում մեկի ծերունական, տակառի օղակապի պես տնկտնկացող, տղամարդու ձայնը.

Ձենս չի գալի, ա՛խ, էլ չի գալի,
Կորել է ձենս։
Ա՛խ, ուրիշների այգին եմ մտել,
Ու դառն պտուղ-փոունչ եմ քաղել։

— Հ-հ, լավ մարդիկ, քեֆ ենք անում, էլի՛...

— Ոչխարի մսի հետ ո՞նց ես։

— Դե՛նը տար ձեռքդ... հրե՛ն, մարդս մտիկ է տալիս։

— Դա-ա՛-ոն է-է՛...

— Կառավարիչը ցնդել է, տես թե ոնց է վարվում խնամու կնկա հետ։

— Չէ՛, չէ՛, ոչխարի միսը դենը... Ինձ ձուկ տուր, ձո՛ւկ... Ա՛յ, կուտեմ. ինչ էլ յուղոտ է, հա՛-ա։

— Քավոր Պրոշկա, խմե՛նք արշավանքի թասը։

— Արաղը ջանս կրակ լցրեց...

— Սեմյո՛ն Գարդեևիչ։

— Հա՛մմե։

— Սեմյո՛ն Գարդեևիչ։

— Հա՛մմե։

— Դե գնա՛, է՛։

Խոհանոցի հատակը սկսեց ցնցվել, ճռճվել, սկսեցին թրխկալ կրունկները, մի բաժակ ընկավ հատակին. դրա շրխկոցը կորավ ընդհանուր աղմուկում։ Գրիգորին սեղանի շուրջ նստածների գլուխների վրայով նայեց խոհանոցը. բացականչությունների ու աղաղակների տակ կնանիքը պարում, դոփդոփում էին հատակը։ Ցնցում էին լիքը հետույքները (լղարներ չկային, ամեն մեկը հինգ-յոթ յուրկա էր հագել), թափահարում էին ժանյակավոր թաշկինակները, պարելիս ճռճում արմունկները։

Հնչեց հարմոնի սուր, ականջ ծակող նվագը։ Հարմոնիստը նվագեց կազաչոկ պարը՝ թավ ելևէջներով։

— Շրջան կազմեք, շրջան։

— Մի քիչ սեղմվեք, ազի՛զ հյուրեր,— խնդրում էր Պետրոն, հրելով կնանոնց փորերը, որ պարելուց քրտնել էին։

Գրիգորին աշխուժացավ, աչքով արավ Նատալյային։

— Պետրոն հիմի կազաչոկ է թռչելու, մտիկ արա։

— Ո՞ւմ հետ։

— Չե՞ս տեսնում։ Մորքդ հետ։

Լուկինիչնան ձեռները դրեց կողերին, ձախ ձեռքում՝ թաշկինակ։

— Դե ֆոռա, է՛, թե չէ ես...

Պետրոն ոտների թեթև ու արագ շարժումներով մոտեցավ Լուկինիչնային, ամենահրաշալի մի ֆիգուր արավ, վերադարձավ իր տեղը։ Լուկինիչնան հավաքեց փեշը՝ ասես անցնելու էր ջրափոսի վրայով, սկսեց պարել թաթերի վրա՝ տղամարդու պես ոտները վեր-վեր գցելով ու ստանալով ընդհանուրի հավանությունը։

Հարմոնիստը սկսեց նվագել ցածրաձայն ստեղների վրա, այդ նվագը տեղից թռցրեց Պետրոյին, և սա նետվեց առաջ ու սկսեց պպզապարել՝ ձեռները չմփացնելով կոշիկների ճիտքերին, բեղի ծայրը բերանի անկյունում պահած. Նրա ոտները թրմփում էին, արագ, հաճախակի ու բարդ ֆիգուրաներ կատարում. ճակատի վրա թռչկոտում էր քրտինքից թրջված քյաքուլը ու իր շարժման արագությամբ չէր հասնում ոտների շարժումներին։

Դռան մոտ հավաքվածների մեջքերը խանգարում էին Գրիգորիին՝ դիտելու պարը։ Նա լսում էր միայն երկաթած կրունկների ճքճքոցը,— ասես սոճու տախտակ էր վառվում,— ու հարբած հյուրերի գրգռիչ աղաղակները։

Վերջում պարեց Միրոն Գրիգորևիչը՝ Իլյինիչնայի հետ, պարեց բանիմացությամբ և լրջորեն,— ինչպես և այն ամենը, ինչ որ նա անում էր։

Պանտելեյ Պրակոֆևիչը կանգնել էր տաքուրեստի վրա, ճռճում էր կաղ ոտը, ճպճպացնում լեզուն։ Ոտների փոխարեն պարում էին հանգիստ չգտնող նրա շրթունքները և գինը։

Կազաչոկ էին թռչում թե վարժ պարողները և թե նրանք, ովքեր չէին է՛լ կարողանում ինչպես հարկն է ծռել ոտները։

Բոլորի վրա էլ բղավում էին.

— Մի՛ փչացնի, է՛։

— Շուտ-շուտ թռիր։ Ա՛խ, դու...

— Ոտներդ թեթև են, ամա հետևդ խանգարում է։

— Հո՛պ, հո՛պ։

— Մեր կողմը հաղթում է։

— Խոշաբ տուր, թե չէ ես...

— Նվաղե՛ցիր, մունտռիկ։ Պարիք, թե չէ շիշը կշպրտեմ վրադ։

Հարբած Գրիշակա պապին գրկում էր կողքին նստած իր հարևանի լայնոսկր մեջքը, մոծակի նման բզբզում էր նրա ականջին.

— Ո՞ր թվականին ես զինվորական երդում տվել։

Նրա հարևանը, քոթուկի ու հնամյա կաղնու պես պինդ մի ծերուկ, ձեռքով ինչ-որ շարժում արեց ու ասավ.

— Երեսունինն թվականին, որդյակ։

— Ո՞ր, հը՞,— Գրիշակա պապին բունեց կնճռոտված ականջակոնքը։

— Քեզ ասում եմ երեսունինն։

— Ո՞վ եք եղել, ո՞րտեղից եք։

— Բակլանովյան գնդի վախմիստր Մաքսիմ Բոգատիրյով։ Ինքս ծնվել եմ... Ծնվել եմ Կրասնի Յատ խուտորում։

— Մելեխովների ազգակա՞նն եք։

— Ո՞նց։

— Ազգակա՞նն եք, ասում եմ։

— Հը՞մ, պապի տեղ եմ գալի։

— Բակլանովյան գնդի՞ց, հը՞։

Ծերունին մարած աչքերով նայեց Գրիշակա պապին ու գլխով արավ՝ անատամ լնդերի տակ գլորելով չծամված պատառը։

— Ուրեմս, կովկասյան կովումը եղե՞լ եք, հա՞։

— Ծառայել եմ հենց լուսահոգի Բակլանովի հետ, երկնային արքայությո՛ւն նրան, Կովկասն էինք նվաճում... Մեր գունդն էին գալիս ջոկովի կազակները... Վերցնում էին գվարդիական հատակ ունեցողներին... Երկար թևերով, հիմիկվա կազակի բոյի չափ լայն թիկունքով... Ա՛յ թե ինչ տեսակ մարդիկ էին, որդիս... Մի անգամ, Չելենչի առվում, նորին գերազանցություն լուսահոգի գեներալը բարեհաճեցին մտրակով դաղել ինձ...

— Իսկ ես թուրքի կովում եմ եղել... Հը՞։ Եղել եմ, հա։— Գրիշակա պապին շտկում էր գոստացած կուրծքը՝ ճնկճնկացնելով գեորգիևյան խաչերը։

— Առավոտ ծեգին մենք առանք այդ առվը, իսկ կեսօրին փողհարը տագնապի նշան է ածում...

— Հա՛, մենք էլ ծառայեցինք սպիտակ թագավորին։ Ռոշիչի մոտ կռիվ եղավ, ու մեր գունդը, Դոնի կազակական տասներկուերորդ գունդը կռվեց նրանց ենիչերիների դեմ...

— Հա, փողհարը տագնապ է ածում... — շարունակում է բակլանովցին՝ չլսելով Գրիշակա պապին։

— Նրանց ենիչերիները — ոնց որ ատամանցիները։ Հը՞մ։ — Գրիշակա պապին տաքանում է, բարկացած թափահարում ձեռքը։ — Իրենց թագավորի մոտ ծառայություն են անում ու գլխներին սպիտակ տոպրակներ են դրել։ Հը՞։ Գլխներին սպիտակ տոպրակներ կային։

— Ես էլ ասում եմ մեր գնդում ծառայող մի մարդու։ «Տիմոշա, ոնց որ երևում է, նահանջելու ենք, քարշ տուր բեր պատից կախած այն խալին, կապենք թամքին...»

— Երկու հատ եգոր[1] ունեմ։ Ստացել եմ մարտական հերոսություններիս համար... Թուրքի մայորին սաղ-սաղ գերի վերցրի...

Գրիշակա պապին լաց է լինում ու փոքրիկ, սմքած բռունցքով թփթփացնում բակլանովցի պապի դմբդմբան ու արջային մեջքին, բայց վերջինը հավի մսի պատառը ծովաբողկով համեմելու փոխարեն թաթախելով բալից եփած կիսելի մեջ, անկյանք հայացքով նայում է սփռոցին, որի վրա էրիշտա է թափթփված, ու ծամծմում է ներս ընկած բերանով.

— Ա՛յ թե սատանան ինչ մեղքի մեջ գցեց, որդի... — Պապի աչքերը տկար լարվածությամբ նայում են սփռոցի սպիտակ փոթերին, ասես նա տեսնում է ոչ թե արաղով ու էրիշտայով ողողված սփռոցը, այլ կովկասյան լեռների կուրացուցիչ — ձյունապատ կատարները։ — Դրանից առաջ կյանքումս ձեռ չէի տվել ուրիշի ունեցածին... Մեկ էլ տեսար մտանք չերքեզի մի առվ, սակլյաները լեփ-լեցուն են, իսկ ես չեմ է՛լ նախանձում... Հեռո՞ւ ուրիշի ունեցածից... իսկ այստեղ գե արի ու տես... խալին աչքիս դուր եկավ...

---

1 Եգոր — Գեորգիևյան խաչ։ (Ծան. թարգմ.)։

Փնջերով էր... Ա՛յ, մտածում եմ, լավ տապճակ կլինի ձիուս համար...

— Մենք այդ տեսակ զանազան բաներ շատ ենք տեսել։ Մենք էլ ենք եղել յոթ սարից, յոթ ծովից դենը։— Գրիշկա պապին փորձում է նայել հարևանի աչքերին, բայց վերջինիս խորն ակնակապիճները ծածկված են հոնքերի ու մորուքի ալեզարդ մազափնջերով, ինչպես ձորակը՝ քոլախոտով. Գրիշկա պապին չի տեսնում հարևանի աչքերը. երևում է միայն մազերի խիտ ծածկոցը։

Նա խորամանկության է դիմում. նա ուզում է հարևանի ուշադրությունը գրավել իր պատմածի ամենահետաքրքիր տեղով, դրա համար էլ առանց կանխական նախապատրաստության սկսում է հենց մեջտեղից.

— Ու հրաման է տալի եսաուլ Տերսինցևը՝ «Դասակների շարասյուներով, յորղա, մա՛րշ — ա՛րշ»։

Բակլանովցի պապին վեր է գցում գլուխը ինչպես շարային հին շեփորի ձայնը լսելիս. հանգուցավոր բռունցքը խփելով սեղանին, շշնջում է.

— Նիզակները մարտի՛, թրերը հանե՛լ, բակլանովցիներ...— Այստեղ նրա ձայնը հանկարծակի ուժգնանում է, մարած բիբերը փայլ են առնում ու բռնկում են ծերության հանգցրած երբեմնի կրակով։ — Բակլանովցի քաջե՛ր... — Բղավում է նա՝ բաց անելով բերանն ու դեղին, անատամ լինդերը, — դեպի գրո՛հ... մա՛րշ, մա՛րշ...

Ու իմաստավորված, երիտասարդական հայացքով է նայում Գրիշկա պապին և չեքմենի կեղտոտված թևքով չի սրբում կզակը խտխտացնող արցունքները։

Գրիշկա պապին նույնպես աշխուժանում է։

— Նա այդպիսի հրաման տվեց մեզ ու թափահարեց սուրը։ Մենք սլացանք, իսկ ենիչերիները դիրք էին բռնել այսպես, ա՛յ, — նա սփռոցի վրա մատով անհավասարակողմ քառանկյունի է գծում, — ու կրակում են մեր վրա։ Մենք երկու անգամ գնացինք նրանց վրա, — խփում են ու ետ քշում։ Որտեղից-որտեղ, թևից, անտառից դուրս թռավ նրանց հեծելազորը։ Մեր հարյուրյակի հրամանատարը հրաման է տալի։ Մենք շուռ տվինք մեր աջ թևը, վերադասավորվեցինք ու վրա տվինք նրանց։ Զարկեցինք։ Ոտնատակ արինք։ Կազակների դեմ ի՞նչ հեծելազոր կկանգնի։ Հենց այդ է բանը։ Նրանք ճղեցին դեպի անտառը, ոռնում են... Մեկ էլ տեսնեմ իմ առջևից սլանում է նրանց սպան՝ թուխ ձի նստած։ Քաջ սպա էր, հա՛-ա, սև, ծայրերը կախված բեղեր ուներ. սա հա՛ մտիկ է տալի ինձ ու ատրճանակը հանում պատյանից։ Պատյանն էլ թամքին է կպցրած... Կրակեց ու վրիպեց։ Այստեղ ես արագ քշում եմ ձիս, հասնում նրան։ Ուզեցի թրատել, ամա միտքս փոխեցի։ Ախր նա էլ մարդ է, է՛... Աջ ձեռքով նրան խտտեցի մեջքից, ու նա, հոգիդ սիրեմ, այնպես էլ թռավ ու ընկավ թամքից։ Ձեռս կծեց, ամա էլի բռնեցի նրան...

Գրիշկա պապին ցնծությամբ նայեց հարևանին. սա ահագին, անճոռնի գլուխը կրծքին թեքած, քնել էր աղմուկի տակ ու հանգիստ խռմփում էր։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Սերգեյ Պլատոնովիչ Մոխովը հին ժամանակներից է առնում իր ծագումը։

Պյոտր I-ի թագավորության տարիներին մի անգամ թագավորի բեռնանավը պաքսիմատով ու հրազենի պաշարով բեռնված, Դոնի վրայով գնում էր Ազով։ Դոնի վերին հոսանքում, խոպերի գետաբերանից ոչ հեռու գտնված Չիգոնակի գողային ավանի կազակները գիշերով հարձակվեցին այդ բեռնանավի վրա, մորթոտեցին քնած պահակներին, պաքսիմատն ու հրազենը թալանեցին, իսկ բեռնանավը ջրասույզ արին։

Թագավորի հրամանով Վորոնեժից զորքեր եկան, այն Չիգոնակի գողային ավանը վառեցին, բեռնանավի վրա ավազակային հարձակման մասնակից կազակներին կռվում անխնա ջախջախեցին, իսկ գերի վերցրած եսաուլ Յակիրկային ու նրա հետ քառասուն կազակների կախեցին լողացող կախաղաններից ու Դոնի ստորին հոսանքի անհանգստացած ստանիցաները վախեցնելու համար այդ կախաղանները բաց թողնվեցին գետի հոսանքով դեպի ներքև։

Տասը տարուց հետո այնտեղ, ուր առաջ ծուխ էր ելնում Չիգոնակիի տներից, ապաստանեցին եկվոր կազակները և նրանք, ովքեր ջախջախումից անվնաս էին մնացել։ Նորից աճեց ու մարտական պատնեշներով շրջապատվեց ստանիցան։ Այն ժամանակից էլ Վորոնեժի շրջանից այստեղ եկավ թագավորի վերակացուն ու աչքը՝ մուժիկ Նիկիշկա Մոխովը։ Նա ձեռքի վրա կազակական կենցաղում անհրաժեշտ

զանազան իրեր էր ծախում,— դանակների պատյաններ, թուփուն, կայծքարեր. գնում ու ծախում էր գողացված իրեր ու տարեցը երկու անգամ ճանապարհվում էր Վորոնեժ, իբր թե ապրանք բերելու, իսկ իրականում այնտեղ զեկուցում էր, որ ստանիցայում առայժմ հանգստություն է, և կազակները միտք չունեն մի նոր չարագործություն կատարելու։

Հենց այս Նիկիշկա Մոխովից էլ սկիզբ առավ Մոխովների վաճառականական տոհմը։ Նրանք ամուր նստեցին կազակական հողում։ Արմատներ գցեցին ու աճեցին ստանիցայում, ոնց որ քոլերը,— քաշես էլ չես պոկի. սրբությամբ պահպանում էին կիսափտած մի շնորհագիր, որ նրանց նախապապին շնորհել էր Վորոնեժի զորավարը՝ նրան ուղարկելով խռովարար ստանիցան։ Դուցե թե այն պահպանվեր նաև մինչև մեր ժամանակները, բայց դեռ Սերգեյ Պլատոնովիչի պապի օրով, մի մեծ հրդեհում վառվել էր փայտե արկղիկի հետ, որ պահվում էր սրբապատկերների պահարանում։ Պապը տնտեսապես քայքայվեց, թուղթ խաղալով վատնեց ամբողջ կարողությունը. նորից ոտքի էր ելնում, բայց հրդեհը ամեն ինչ կլանեց, ու Սերգեյ Պլատոնովիչին վիճակվեց նորից սկսել գործը։ Թաղելով անդամալույծ հորը, նա չնչին դրամագլխով առաջ տարավ այդ գործը։ Սկսեց խուտորներում խոզի մազ ու թռչունների բմբուլ գնել։ Մի հինգ տարի աղքատ էր ապրում, խաբեբայություն էր անում և շրջակա խուտորների կազակներին նեղում էր յուրաքանչյուր կոպեկի համար, հետո էլ այնպես եղավ, որ նա մազ ու բմբուլի գնորդ Սերյոժկայից դարձավ Սերգեյ Պլատոնովիչ, ստանիցայում գալանտերեայի խանութ բացեց, ամուսնացավ կիսաթելագար տերտերի աղջկա հետ, նրա հետ ահագին օժիտ բերեց ու մանուֆակտուրայի խանութ բացեց։ Սերգեյ Պլատոնովիչը հենց իր ժամանակին սկսեց մանուֆակտուրայի գործը։ Զորաց կառավարության կարգադրությամբ կազակներն ամբողջ խուտորներով սկսեցին Դոնի աջ կողմը տեղափոխվել ձախափնյա ստանիցաներից, որտեղ անբերրի ու կոշտ էր ավազա-կավախառն քարքարոտ հողը։ Աճեց ու շենքերով ճոխացավ նորակերտ Կրասնոկուտսկայա ստանիցան. նախկին կալվածատիրական հողերի սահմանի վրա, Չիր, Չյորնայա և Ֆրոլովկա գետերի ափերին, տափաստա-

նային ձորակների ու հովիտների կողքին, սահմանակից լինելով ուկրաինական գյուղերին, աճեցին նոր խուտորները։ Ապրանք գնելու համար հիսուն վերստ ու դրանից էլ ավելի ճանապարհ էին գնում, իսկ այստեղ ահա խանութը սոճու փայտից շինած նոր դարակներով, որոնք լեփ-լեցուն էին հոտավետ. հիանալի ապրանքով։ Սերգեյ Պլատոնովիչը լայն ծավալեց գործը՝ ոնց որ լայն բաց աներ եռաշար հարմոնը, բացի ճոթեղենից, ծախում էր այն ամենը, ինչ որ հարկավոր է գյուղական պարզ տնտեսության մեջ,— կաշվե ապրանք, աղ. նավթ, գալանտերեա։ Վերջին ժամանակներում նույնիսկ գյուղատնտեսական մեքենաներ էր մատակարարում։ Ակսայի գործարանից բերված հնձիչները, շարքացանները, գութանները, քամհարները, տեսակավորիչները պատշաճ կարգով շարված էին կանաչ փեղկանի, ամառը զով խանութի կողքին։ Ուրիշի քսակում եղած փողը դժվար է հաշվել, բայց երևում էր, որ առևտուրը քիչ շահույթ չէր տալիս բանիմաց Սերգեյ Պլատոնովիչին։ Երեք տարուց հետո նա հացի մթերակայան բացեց, իսկ առաջին կնոջ մահվան հետևյալ տարում ձեռնամուխ եղավ շոգեաղացի կառուցման։

Իր սև բռունցքի մեջ, որ ծածկված էր նոսր ու փայլունթուխ մազերով, նա ամուր սեղմել էր Տատարսկի խուտորը և շրջակա խուտորները։ Տուն չկար, որ մուրհակ տված չլիներ Սերգեյ Պլատոնովիչին. կանաչավուն մի թուղթ նարնջագույն ժապավենով — հնձիչի համար, աղջկա համար վերցրած հագուստի համար (մոտեցել էր աղջկան մարդու տալու ժամանակը, իսկ Պարամոնովի մթերակայանում ջրի գին են տալիս ցորենին,— «Պարտք տուր, Պարամոնովիչ»), էլ ո՞վ գիտե ինչի համար... Աղացում աշխատում է ինը բանվոր, խանութում՝ յոթը, տան ծառայողներն էլ չորս հոգի են. ահա և քսան բերան, որ ուտում են վաճառականի ողորմածությամբ։ Առաջին կնոջից մնացել էր երկու երեխա. աղջիկը, Լիզան և տղան, որ երկու տարով փոքր էր նրանից, — թուլակազմ, գեղձախտավոր Վլադիմիրը։ Երկրորդ կինը, նիհար, նեղ քթանի Աննա Իվանովնան երեխա չունեցավ։ Մայրական ամբողջ ուշացած, շարտահայտված սերը և կուտակված մաղձը (նա Սերգեյ Պլատոնովիչի հետ ամուսնացավ իր կյանքի 34-րդ տարվա վերջին) թափվեցին մնացած երեխաների վրա։ Խորթ մոր ջղային բնավորությունը վատ ազդեցություն էր գործում երեխաների դաստիարակության վրա, իսկ հայրը դրանց վրա ավելի մեծ ուշադրություն չէր դարձնում, քան ձիապան Նիկիտայի կամ խոհարարուհու վրա։ Գործերն ու ճանապարհորդությունները կլանում էին նրա ամբողջ ժամանակը. նա գնում էր մերթ Մոսկվա, մերթ Նիժնի-Նովգորոդ, մերթ Ուրյուպինսկայա, մերթ է՛լ ստանիցաների տոնավաճառները։ Երեխաներն առանց հսկողության էին մեծանում։ Անուշադիր Աննա Իվանովնան չէր փորձում թափանցելու մանկական հոգիների գաղտնարանները, դրա համար ժամանակ չէր թողնում մեծ տնտեսությունը, դրա համար էլ քույր ու եղբայր այնպես մեծացան, որ մեկմեկու օտար էին, տարբեր բնավորություն ունեին, նման չէին իրենց հարազատներին։ Վլադիմիրը ինքնամփոփ տղա էր, դանդաղոտ, աչքի տակով նայող և մեծահասակների պես լուրջ։ Լիզան, որ շփվում էր աղախնի ու խոհարարուհու — անպարկեշտ, ընկած-ելած կնկա հետ, վա՛ղ տեսավ կյանքի թարս կողմը։ Կանայք նրա մեջ. անառողջ հետաքրքրություն էին զարթեցնում, և նա,— այն ժամանակ դեռ անտաշ ու ամաչկոտ, իրեն բախտին թողնված մի անչափահաս,— մեծանում էր ինչպես անտառում վայրի դափնյակի թուփը։

Դանդաղ անցնում էին տարիները։

Հինը, ըստ սովորականին, հնանում էր. նորը աճում էր տհաս վիճակում։

Եվ ահա, մի անգամ իրիկվա թեյի ժամանակ խիստ զարմացավ Սերգեյ Պլատոնովիչը՝ նայելով աղջկան (Ելիզավետան, որ այդ ժամանակ ավարտել էր գիմնազիան, արդեն տեսքով, գեղեցիկ աղջիկ էր). նայեց, ու սաթի գույն ունեցող թեյի բաժակակալը դողաց իր ձեռքում. «Հանգուցյալ մորն է նման։ Տե՛ր աստված, ինչպիսի՞ նմանություն»։— Լի՛զկա, ապա շուռ եկ։ — Չէ՛ր նկատել, որ դուստրը վաղ մանկությունից ապշեցուցիչ կերպով մորն էր հիշեցնում։

Վլադիմիր Մոխովը, հինգերորդ դասարանի գիմնազիստ, նեղ թիկունքով, հիվանդոտ-դեղնագեմ մի տղա, քայլում էր աղացի բակում։ Նա և իր քույրը նոր էին եկել ամառային

արձակուրդն անցկացնելու համար, ու Վլադիմիրը ինչպես միշտ, եկել էր դիտելու աղացը, վխտալու ալյուրոտ մարդկանց ամբոխի մեջ, լսելու գլանների ու շարժանիվների համաչափ դղրդոցը, սահող փոկերի սուլոցը։ Հացահատիկ բերող կաղակների հարգալից փսփսոցը շոյում էր նրա ինքնասիրությունը.

— Աղացատիրոջ ժառանգն է...

Զգուշությամբ շրջանցելով եզան թրիքի կույտերը ու բակում կանգնած սայլերը, Վլադիմիրը հասավ դռնակին ու հիշեց, որ մեքենաների բաժանմունքում չէր եղել։ Վերադարձավ։

Մեքենայական բաժանմունքի մուտքի մոտ կանգնած նավթի կարմիր ցիստեռնի կողքին գլանիչ Տիմաֆեյը, «Վալետ» մականունով կշռորդը և գլանիչի օգնականը, երիտասարդ, սպիտակատամ Դավիդկան շալվարները մինչև ծնկները քշտած, ոտներով տրորում էին կավացեխի մի մեծ բոլորակ։

— Ա-ա՜-ա, աղացատե՛ր... — հեգնական ողջույնով դիմեց Վլադիմիրին Վալետը։

— Բարև ձեզ։

— Բարև՛, Վլադիմիր Սերգեևիչ։

— Այս ի՞նչ եք անում...

— Դեհ, կավ ենք տրորում, էլի, — ոտները դժվարությամբ դուրս քաշելով կպչուն, աղբահոտ արձակող զանգվածից, չարախինդ քմծիծաղ տվեց Դավիդկան։ — Հերդ ափսոսում է մի ռուբլի տալ, կնանիք վարձել, մեր վրա է գցում։ Գուփող է քո հերը, — ավելացրեց նա, ճլմփոցով փոխեց ոտների տեղերը։

Վլադիմիրը կարմրեց։ Նա անհաղթահարելի հակակրանք էր զգում դեպի շարունակ ժպտացող Դավիդկան, նրա արհամարհական տոնը, նույնիսկ դեպի սպիտակ, միշտ թքոտ ատամները։

— Ո՞նց, գուփո՞ղ է

— Այնպես, էլի։ Սարսափելի ժլատ է։ Վախում է իրեն բաժինը քիչ լինի, — հենց այսպես էլ բացատրեց Դավիդկան ու ժպտաց։

Վալետն ու Տիմաֆեյը հավանության քմծիծաղ էին տա-

լիս։ Վլադիմիրը վիրավորանքի ծակոց զգաց։ Նա սառն նայեց Դավիդկային։

— Ուրեմն դու... դժգո՞հ ես, հա՞։

— Հապա եկ տրորիր ցեխը, այն ժամանակ կիմանաս։ Ո՞ր հիմարը գոհ կլինի։ Հորդ պետք է այստեղ բերել, մի քիչ թափ կտար փորը։

Դավիդկան օրորվելով, բոլորակի վրա ծանր փոխում էր քայլերը, բարձր էր գցում ոտները և հիմա արդեն ժպտում էր ուրախ ու անշար։ Վլադիմիրը հաճելի բավարարություն նախաճաշակելով, դասավորում էր մտքերը։ Հարկավոր պատասխանը գտնվեց։

— Լա՛վ, — բառերը շեշտելով ասաց նա,— ես հայրիկին կհայտնեմ, որ դու դժգոհ ես ծառայությունից։

Նա շեղակի նայեց Դավիդկայի դեմքին ու ապշեց իր թողած տպավորությունից։ Դավիդկայի շրթունքները ողորմելի ու բռնազբոսիկ կերպով էին ժպտում, մյուսների դեմքերը մռայլվել էին։ Մի բոպեի շափ երեքն էլ լուռ ճմռթում էին պնդացած կավը։ Վերջապես, Դավիդկան այլևս չնայելով իր ցեխոտ ոտներին, շողոքորթությամբ ու բարկացկոտ ասաց.

— Ես հո հանաք արեցի, Վալոդյա... Դեհ, հանաքով ասացի, էլի՛...

— Ես հայրիկին կհայտնեմ, ինչ որ դու ասացիր։

Աչքերում արցունքներ զգալով իր համար, հոր համար և Դավիդկայի խղճուկ ժպիտի համար վիրավորվելուց, Վլադիմիրն անցավ ցիստեռնի կողքից։

— Վալո՛դյա... Վլադիմիր Սերգեևիչ... — Վախեցած գոչեց Դավիդկան ու դուրս ելավ կավի միջից՝ շալվարը իջեցնելով հենց մինչև ծնկները ցեխոտված ոտներին։

Վլադիմիրը կանգ առավ։ Դավիդկան մոտ վազեց ծանր շնչելով։

— Մի՛ ասեք հայրիկիդ։ Ես հանաք արեցի... Ներեցեք ինձ, հիմարիս... Աստված վկա վատ մտքով չեմ ասել... հանաք էր, էլի՛...

— Լա՛վ։ Չեմ ասի...— դեմքը կնճռոտելով բղավեց Վլադիմիրը ու քայլեց դեպի դռնակը։

Դավիդկայի նկատմամբ եղած կարեկցությունը հաղթա-

հարեց։ Վլադիմիրը թեթևության զգացումով սկսեց քայլել սպիտակ ցցապատնեշի մոտ։ Աղացի բակի մի անկյունում գտնվող դարբնոցից լսվում էր մուրճի աշխույժ թրխկոցը. մուրճը մի անգամ խփվում էր երկաթին, խուլ ու փափուկ թրխկոց արձակում, ու երկու անգամ էլ իրար ետևից խրփվում զինգացող սալին։

— Ի՞նչ գործ ունեիր, է՛, — հասավ հեռացող Վլադիմիրի ականջին Վալետի խուլ, բամբ ձայնը,— ձե՛ռ քաշիր, քանի փորես, այնքան վատ հոտ կգա։

«Այ քեզ սրիկա, — չարացած մտածեց Վլադիմիրը, — բերանից ինչե՛ր է թափում... Ասե՞մ թե չասեմ»։

Ետ նայելով, տեսավ սպիտակ ատամները բաց արած Դավիդկայի ժպիտն ու հաստատ որոշեց. «Կասեմ»։

Հրապարակում, խանութի կողքին կանգնած էր սյանը կապված ու սայլին լծած մի ձի։ Հրդեհաշեջ սրահի կտուրից երեխաները քշում էին ճնճղուկների ծլվլացող երամը։ Պատշգամից թնդում էր ուսանող Բայարիշկինի հնչեղ բարիտոնը ու էլի ինչ-որ մեկի ճղճղան, խռպոտ ձայնը։

Վլադիմիրը բարձրացավ արտաքին սանդուղքով, նրա վերևում ծածանվում էր վայրի խաղողի սաղարթը, որ փարթամորեն պատել էր արտաքին սանդուղքը և պատշգամբը, կանաչ ու ճոխ գդակները կախել կապույտ, քանդակավոր քիվից։

Բայարիշկինը օրորում էր սափրված, մանուշակագույն գլուխը, ու դիմելով իր մոտ նստած երիտասարդ, բայց մորուքավոր ուսուցիչ Բալանդային ասում էր.

— Կարդում եմ նրան ու չնայելով, որ ես հողագործ կազակի որդի եմ ու միանգամայն բնական ատելություն եմ տածում դեպի բոլոր արտոնյալ դասակարգերը, այստեղ, երևակայեցեք, ես չափազանց շատ եմ խղճում այդ մեռնող դասին։ Քիչ է մնում, որ ես ինքս էլ ազնվական ու կալվածատեր դառնամ, հիացմունքով եմ դիտում նրանց իդեալը կնոջ վերաբերմամբ, ցավում եմ նրանց շահերի համար,— մի խոսքով, սատանան գիտե թե ինչ։ Ահա թե ինչ է նշանակում հանճար, բարեկամս։ Կարելի է հավատն էլ փոխել։

Բալանդան ճմլում էր մետաքսե գոտու ծոպը ու հեգնաբար ժպտալով դիտում էր իր վերնաշապկի փեշի կարմիր, դարուսով ասեղնագործած նախշերը։ Լիզան նստել էր բազկաթոռին։ Ըստ երևույթին խոսակցությունը բնավ չէր հետաքրքրում նրան։ Նա իր սովորական, ինչ-որ բան կորցրած և ինչ-որ բան որոնող հայացքով տաղտկալի նայում էր Բայարիշկինի մանուշակագույն, տեղ-տեղ քերծված գլխին։

Բարևելով նրանց, Վլադիմիրն անցավ մի կողմ ու ծեծեց հոր կաբինետի դուռը։ Սերգեյ Պլատոնովիչը պաղ, կաշվե թախտին նստած, թերթում էր «Ռուսսկոյե բոգատստվո[1]» ամսագրի հունիսի համարը։ Հատակին ընկած էր դեղնած ոսկրե դանակը։

— Ի՞նչ ես ուզում։

Վլադիմիրը կուչ եկավ, ջղայնորեն շտկեց իր վերնաշապիկը։

— Ես աղացից էի գալիս...— սկսեց նա տատանվելով, բայց հիշեց Դավիդկայի կուրացուցիչ քմծիծաղը ու նայելով հոր կլոր փորին, որի վրա քիփ նստած էր չեսուչայից կարած բաճկոնակը, արդեն վճռականորեն շարունակեց — ... ու լսեցի, որ Դավիդկան ասաց.

Սերգեյ Պլատոնովիչը ուշադրությամբ լսեց, ասաց.

— Կհեռացնենք։ Գնա։ — Ու տնքալով, կռացավ դանակը բարձրացնելու։

Երեկոները Սերգեյ Պլատոնովիչի մոտ հավաքվում էր խուտորի ինտելիգենցիան. Բայարիշկինը՝ Մոսկվայի տեխնիկական ուսումնարանի ուսանողը, նիհար, ահագին, ինքնասիրությունից ու տուբերկուլյոզից տառապող ուսուցիչ Բալանդան, սրա կենակցուհին՝ ուսուցչուհի Մարֆա Գերասիմովնան, չպառավող ու կլոր մի աղջիկ՝ շարունակ անպարկեշտ կերպով դուրս ընկած տակի յուրկայով, փոստի կառավարիչը՝ ցանցառ, պեպենոտ, ամուրի մի մարդ, որից զմուռսի և էժան օծանելիքի հոտ էր գալիս։ Երբեմն իր կալվածքից ժամանում էր երիտասարդ հարյուրապետ Եվգենի Լիստնիցկին, որը հյուր էր կալվածատեր ու ազնվական իր հոր մոտ։ Երեկոները պատշգամբում թեյ էին խմում, պարապ խոսակցու-

[1] «Ռուսսկոյե բոգատստվո» — ամսագիր, որ հրատարակվում էր Պետերբուրգում։ Ինսուլնական թվականների սկզբից դարձավ նարոդնիկների օրգան, թերրիական կատաղի պայքար էր մղում մարքսիզմի դեմ։

թյուններով զբաղվում, ու երբ կտրվում էին խոսակցության թույլ թելերը, հյուրերից մեկնումեկը սկսում էր նվագել տանտիրոջ թանկարժեք, գեղազարդ գրամոֆոնը։

Սերգեյ Պլատոնովիչը սիրում էր երբեմնակի, մեծ տոներին մարդկանց աչքին թոզ փչել. հյուրեր էր հրավիրում և հյուրասիրում թանկ գինիներով, թառափ ձկան թարմ խավիարով, որ այդ դեպքի համար բերվում էր Բատայսկից, այլև լավագույն ուտելիքներով։ Մնացած ժամանակը նեղ էր ապրում։ Միակ բանը, որից չէր հրաժարվում, դա գրքերն էին։ Սերգեյ Պլատոնովիչը սիրում էր կարդալ ու ամեն ինչի իրազեկ լինել գայլախոտի նման կպչուն իր սեփական մտքով։

Նրա կոմպանյոնը, շիկահեր, սուր մորուքով ու փոս ընկած աչքերով Եմելյան Կոստանտինովիչ Ատեպինը հազվադեպ էր գալիս։ Նա ամուսնացած էր Ուստ-Մեդվեդիցկի մի նախկին միանձնուհու հետ, տասնհինգ տարվա ամուսնական կյանքում նրանից ունեցել էր ութ երեխա ու ժամանակի մեծ մասը տանն էր անցկացնում։ Նա սկզբում գնդի գրագիր էր, հետո առաջ գնաց, ունևոր մարդ դարձավ, այնտեղից էլ ընտանիքի մեջ բերեց քծնության, շողոքորթության նեխահոտը։ Նրա ներկայությամբ երեխաները ոտների մատների վրա էին քայլում, փսփսալով էին խոսում։ Ամեն առավոտ, լվացվելով, նրանք շարք էին կանգնում սեղանատանը, պատից կախված ահագին, սև, դագաղանման ժամացույցի տակ, մայրը կանգնում էր նրանց ետևում, ու հենց որ ննջարանից լսվում էր հոր շոր հազը, սկսում էին տարբեր ձայներով ու աններդաշնակ երգել «Փրկյա, տեր, քո մարդոց»-ը, հետո՝ «Հայր մերը»։

Եմելյան Կոստանտինովիչը կարողանում էր հագնվել մինչև աղոթքը վերջանալը, դուրս էր գալիս՝ կկոցելով կաղամբագույն ակնախոռոչները, եպիսկոպոսի նման պարզում մատ, մերկ ձեռքը։ Երեխաները հերթով մոտենում էին ու համբուրում։ Եմելյան Կոստանտինովիչը համբուրում էր կնոջ թուշը, խոսում էր՝ աղավաղված արտասանելով «չ» տառը.

— Պոլիցկա, ցայ գցե՞լ ես։

— Գցել եմ, Եմելյան Կոստանտինովիչ։

— Լցրու, թունդ լինի։

Խանութի հաշվապահությունը ինքն էր տանում։ Գրագրի պոչավոր ձեռագրով լցնում էր էջերը «դեբետ» և «կրեդիտ» վերնագրերի տակ։ Կարդում էր «Բիրժեվիե վեդոմոստի»-ն՝ ոսկե ակնոցը դնելով ցցուն քթին, թեև դրա կարիքը չէր զգում։ Ծառայողների հետ քաղաքավարի էր վարվում։

— Իվան Պետրովից, այս մարդուն տավրիկյան ցիթ[1] բաց թողեք։

Կինը նրան անվանում էր Եմելյան Կոստանտինովիչ, երեխաները՝ պապացկա, իսկ խանութի գործակատարները՝ Ցացա[2]։

Երկու քահանան՝ տեր-Վիսսարիոնը և գործակալ տեր-Պանկրատին, Սերգեյ Պլատոնովիչի հետ բարեկամություն չէին անում, նրանց մեջ վաղուցվա հաշիվներ կային։ Տերտերները իրար հետ էլ հաշտ չէին։ Կամակոր ու նենգամիտ տեր-Պանկրատին ճարպկությամբ խարում էր մերձավորաց, իսկ ուկրաինուհի տնտեսուհու հետ ապրող այրի տեր-Վիսսարիոնը, որ սիֆիլիսից ոնգախոս էր, բնությունից սիրալիր, խորշում էր գործակալ տերտերից ու չէր սիրում նրան չափից անց հպարտության ու նենգավոր բնավորության համար։

Բացի ուսուցիչ Բալանդայից, բոլորն էլ խուտորում սեփական տներ ունեին։ Հրապարակում աչքի էր ընկնում Մոխովի ահագին տունը, որ երկաթե կտուրով էր և կանաչ ներկված։ Դրա դիմաց հրապարակի հենց մեջտեղում ցցվել էր խանութը՝ միջանցիկ դռներով և գունաթափ ցուցանակով. **«Առևտրական տուն Ս. Պ. Մոխովի և Ե. Կ. Ատեպինի»։**

Խանութին կից էր ցածրիկ, երկար սրահը իր ներքնահարկով, նրանից մի քսան սաժեն հեռու գտնվում էր եկեղեցու բակի աղյուսե ցանկապատը ու եկեղեցին իր գմբեթով, որը նման էր հասունացած կանաչ սոխի գլխին։ Եկեղեցու մյուս կողմում դպրոցն էր իր սպիտակացրած, պետականորեն խիստ տեսք ունեցող պատերով ու երկու շքեղ տուն. մեկը կապույտ էր, նույնպիսի ցցապատնեշով, պատ-

---

1 Տավրիկյան ցիթ — ուկրաինական ցիթ։

2 Ցացա — գոռոզություն անող, դեպի իրեն ուշադրություն պահանջող մարդ։ (Ծան. թարգմ.)։

կանում էր տեր-Պանկրատիին, մյուսը դարչնագույն էր (որ շնմանվեր առաջինին), քանդակավոր ցանկապատով ու լայն պատշգամբով, պատկանում էր տեր-Վիսսարիոնին։ Անկյունից անկյուն կանգնած էր Ատեպինի երկհարկանի, անհամաչափ երկարությունն ունեցող տունը, դրանից դենը գտնվում էին փոստը, կազակական տներն իրենց ծղոտե ու երկաթե կտուրներով, աղացն իր թեք կտուրով, որի վրա երևվում էր թիթեղե, ժանգոտ երկու աքլոր։

Ապրում էին արար-աշխարհից արտաքին ու ներքին պինդ փեղկերով փակված։ Երեկոները, եթե հյուր չէին գալիս, ամուր գոցում էին փեղկերը, արձակում էին կապված շներն ու համր խուտորում լսվում էր միայն գիշերային պահակի գավազանի խուլ թխկոցը։

II

Օգոստոսի վերջին Միտկա Կորշունովը Դոնի մոտ պատահմամբ հանդիպեց Սերգեյ Պլատոնովիչի աղջկան, Ելիզավետային։ Միտկան հենց նոր էր եկել Դոնի մյուս ափից և նավակը մոտեցնելով ծուռ քոթուկին, տեսավ ներկած, թեթև մի մակույկ, որը հեշտությամբ ճեղքում էր հոսանքը։ Մակույկը գալիս էր սարի տակից, ընթանում դեպի նավակայանը, թիավարում էր Բայարիշկինը։ Նրա մերկ գլուխը փայլում էր քրտնքից, ճակատի ու քունքերի երակների շյուղերն ուռել էին։

Միտկան չկարողացավ միանգամից ճանաչել Ելիզավետային։ Վերջինիս աչքերի վրա ընկել էր ծղոտե գլխարկի կապտավուն ստվերը։ Արևից սևացած ձեռներով նա դեղին ջրաշուշանների մի փունջ սեղմել էր կրծքին։

— Կո՛րշունով, — նա գլխով արավ՝ տեսնելով Միտկային, — խաբեցիր ինձ, հա՞։

— Ո՞նց թե խաբեցի։

— Բա չե՞ս հիշում, որ խոստացել էիր ինձ հետ գալ ձուկ որսալու։

Բայարիշկինը թողեց թիակները ու շտկեց մեջքը։ Մակույկի քիթը ընթացքի թափով ջրից դուրս ելավ, ճռճռոցով փշրեց առափնյա կավիճը։

— Հիշո՞ւմ ես,— ծիծաղում էր Լիզան՝ դուրս գալով մակույկից։

— Ժամանակ չկար։ Աշխատում էի, — արդարանում էր Միտկան ու շունչը բռնված հետևում էր իրեն մոտեցող աղջկան։

— Ո՛չ, այդ անկարելի է... Ես, Ելիզավետա Սերգեևնա, հրաժարվում եմ։ Ես այլևս չեմ կարող հաշտվել այս դրության հետ։ Հապա մտածեցեք, թե որքան ենք շրջել այս անիծված ջրի վրայով։ Ձեռներիս վրա արյունակալած կոշտուկներ են առաջացել թիակներից։ Ուրի՛շ բան է ցամաքը։

Բայարիշկինը երկար, բոբիկ ոտնաթաթը ամուր դրեց կավճի ծակող մանրուքին, ուսանողական գլխարկի բոլորքով սրբեց ճակատի քրտինքը։ Լիզան առանց նրան պատասխանելու մոտեցավ Միտկային։ Սա անճոռնի կերպով սեղմեց իրեն մեկնած ձեռքը։

— Ե՞րբ գնանք ձուկ բռնելու,— հարցրեց Լիզան՝ գլուխը ետ գցելով ու կկոցելով աչքերը։

— Թեկուզ վաղը։ Կալ ու կուտը պրծանք, հիմի կարելի է։

— Կխաբե՞ս։

— Չէ՛, ի՞նչ ես ասում։

— Շո՞ւտ կգաս։

— Մինչև լուսանալը։

— Կսպասեմ։

— Կգա՛մ, աստված վկա, կգամ։

— Չե՞ս մոռացել, ո՞ր պատուհանը պիտի ծեծես։

— Կգտնեմ,— ժպտաց Միտկան։

— Երևի ես շուտով մեկնեմ խուտորից։ Ուզում էի մի քիչ ձուկ որսալ։

Միտկան ձեռքի մեջ լուռ պտտում էր նավակի ժանգոտած բանալին ու նայում էր Լիզայի շրթունքներին։

— Շո՞ւտ կվերջացնեք,— հարցրեց Բայարիշկինը՝ զննելով բոի մեջ դրած մի նախշուն խեցի։

— Հիմա կգնանք։

Լիզան մի փոքր լռեց ու ինչ-որ մտքից ժպտալով հարցրեց.

— Ձեզ մոտ կարծեմ հարսանիք եղավ, հա՞։

— Քրոջս պսակեցինք։

— Այդ ո՞ւմ հետ,— ու պատասխանի չսպասելով, անհասկանալի և կարճ ժպտաց։ — Ուրեմն կգաս։ — Կրկին, ինչպես այն ժամանակ, առաջին անգամ, Մոխովի տան պատշգամբում, ժպիտը այրեց Միտկային ինչպես եղինջի փուշը։

Նա աղջկան աչքերով ուղեկցեց մինչև մակույկը։ Բայարիշկինը, ոտները լայն դնելով, մակույկը հրում էր դեպի ջուրը. Լիզան նրա գլխի վրայից ժպտալով նայում էր բանալին ձեռքի մեջ խաղացնող Միտկային, գլխով էր անում նրան։

Մի հինգ սաժեն հեռանալուց հետո Բայարիշկինը հուշիկ հարցրեց.

— Այդ ի՞նչ տղա է։

— Ծանոթ է։

— Սրտակից բարեկա՞մ։

Միտկան, որ լսում էր նրանց խոսակցությունը, թիակների ճռճռոցի տակ չլսեց պատասխանը։ Նա տեսավ, թե ինչպես Բայարիշկինը, կոթնելով թիակներին, գլուխը ետ գցելով, ծիծաղեց, բայց ինքը Միտկան չէր տեսնում Լիզայի դեմքը. վերջինս նստել էր մեջքը դեպի Միտկան։ Լիզայի գլխարկի ժապավենը, որ յասամանի գույն ուներ, ընկնում էր նրա կլորավուն ուսերին, երերում էր թույլ քամուց, գրգռում Միտկայի մշուշված հայացքը։

Միտկան, որ հաղվադեպ էր գնում կարթով ձուկ որսալու, երբեք այնպիսի եռանդով չէր պատրաստվել դրա համար, ինչպես այդ երեկոյան։ Նա տարթ ջարդեց և բանջարանոցում կորեկաձավարից կաշա եփեց, հապճեպ քանդեց կեռերի փտած կապերը ու դրանք նորից կապեց։

Միխեյը տեսնելով նրա պատրաստությունները, խնդրեց.

— Ինձ է՛լ տար, Միտրի։ Մի հոգու համար դժվար կլինի։

— Մենակ է՛լ կորսամ։

Միխեյը հոգոց հանեց։

— Վաղուց է, որ ես ու դու չենք գնացել։ Հիմի կես փթանոց ձուկ է՛լ կբռնեի։

Միտկան լռեց, դեմքը կնճռոտելով գոլորշուց, որ սյան պես տաք-տաք բարձրանում էր շուգունի մեջ եփվող կաշայից։ Վերջացնելով պատրաստությունները, գնաց օթախ։

Գրիշկա պապին նստել էր պատուհանի մոտ. պղնձե շրջանակ ունեցող և կլոր ակնոցով քիթը թամբած, կարդում էր Ավետարանը։

— Պապի,— ձայն տվեց Միտկան՝ ուսը դռան դրանդին հենած։

Գրիշկա պապին աչքերը չռեց ակնոցի վերևից։

— Հը՞։

— Առաջին աքլորականչից հետո զարթեցրու ինձ։

— Այդքան վաղ ո՞ւր պիտի գնաս։

— Ձուկ բռնելու։

Պապը, որ ձուկ էր սիրում, առերևույթ հակառակեց.

— Հերդ ասում էր, որ էգուց պետք է կալսել կանեփը։ Թամբալություն անելու կարիք չկա։ Ի՞՛հ, ձկնորսիս մտիկ։

Միտկան անջատվեց դրանդիից, խորամանկեց.

— Ինձ համար մեկ է։ Ուզում էի ձուկ ուտեցնել պապիս, իսկ եթե կանեփի գործ կա, ուրեմս չեմ գնա։

— Կա՛ց, ո՞ւր ես գնում, — վախեցավ Գրիշակա պապին, հանեց ակնոցը։ — Ես կխոսեմ Միրոնի հետ, կերթաս որսալու, էլի՛։ Վատ չի լինի ձուկ բռնել, վաղն էլ հենց շաբաթաշաբթի է։ Կզարթեցնեմ, դեհ գնա, գնա, սարսաղ։ Էլ ի՞նչ ես ատամներդ բաց արել։

Կեսգիշերին Գրիշակա պապին մի ձեռքով քաթանե վարտիքից բռնած, մյուսով, որ պահել էր հենակը, շոշափելով ճանապարհը, իջավ արտաքին սանդուղքի աստիճաններից։ Սպիտակ, դողդոջուն ուրվականի պես անցավ բակի միջով մինչև ամբարը և հենակի ծայրով բոթեց կարպետի վրա ֆսսացող Միտկային։ Ամբարում զգացվում էր նոր կալսած հացի, մկան ծերտի, անբնակ շինության թթու, երկար մնացած սարդոստայնային հոտը։

Միտկան քնել էր հացարկղի մոտ, կարպետի վրա։ Նա շուտ չշարժվեց։ Գրիշակա պապը սկզբում հենակով թեթև բոթում էր նրան, շշնջում.

— Միտյո՛ւշկա, Մի՛տկա... Տո՛, մունտռիկ, ա՛յ Միտկա։

Միտկան թունդ ֆսսում էր, կծկում ոտները։ Պապը շարանալով, հենակի բութ ծայրը խոթեց նրա փորը, սկսեց

պատել բուրդունի նման։ Միտկան «օֆ» անելով բռնեց հենակը և արթնացավ։

— Ա՛յ քեզ քուն։ Ո՞նց ես շնթռկել, սարսա՛ղ, — հայհոյում էր պապը։

— Սո՛ւս, սո՛ւս, կա՛մաց, — քնաթաթախ շշնջում էր Միտկան՝ հատակի վրա փնտրելով քոշերը։

Նա հասավ հրապարակ։ Խուտորում երկրորդ անգամ կանչեցին աքաղաղները։ Գնում էր փողոցով, Վիսսարիոն տերտերի տան կողքից. լսեց, թե ինչպես հավանոցում շփշըփացնելով թևերը, ավագ սարկավագի թավ ձայնով կանչեց աքաղաղը ու վախեցած, կամացուկ կչկչացին հավերը։

Խանութի սանդուղքի ստորին աստիճանի վրա ննջել էր պահակը, քիթը թաղել ոչխարենու օձիքի տաքության մեջ։ Միտկան մոտեցավ Մոխովի ցանկապատին, կարթը ծալեց ու դրեց պարկի մեջ, ուր գտնվում էր մթերքը, ու հուշիկ քայլերով, որ շները չլսեն, բարձրացավ արտաքին սանդուղքով։ Քաշեց դռան սառը բռնակը,— դուռը փակ էր։ Անցավ բազրիքի վրայով, մոտեցավ պատուհանին։ Փեղկերը կիսով չափ էին ծածկված։ Սև ճեղքից քաղցր բուրում էր աղչկական, քնի մեջ տաքացած մարմինը ու զգացվում էր օծանելիքի անծանոթ, քաղցր, բուրմունքը։

— Լիզավետա Սերգեևնա։

Միտկային թվաց, թե դա շատ բարձր ասաց։ Սպասեց։ Լռություն։ «Բա որ այս պատուհանը չլինի՞։ Բա որ այստեղ քնած լինի հենց ինքը տանտե՞րը։ Կորա՛ծ եմ, հա՛-ա... Կքնեցնի հրացանով», — մտածում էր Միտկան՝ սեղմելով պատուհանի բռնակը։

— Լիզավե՛տա Սերգեևնա, վեր կաց ձուկ որսալու։

«Թե որ սա նրա պատուհանը չի, ա՛մա ձկնորսություն կլինի, հա՛-ա»։

— Դեհ վեր կաց, էլի՛, — ջղայնացած ասավ նա ու դլուխը պատուհանից ներս խոթեց։

— Հը՞, ո՞վ է, — մթության միջից վախեցած և կամացուկ արձագանքեց Լիզան։

— Ձուկ բռնելու կգա՞ս։ Ես եմ, Կորշունովը։

— Ա՛-ա-ա, այս բոպեին։

Սենյակից շրշյուն լսվեց։ Քնեած, տաք ձայնից կարծես

դաղձի հոտ էր գալիս։ Միտկան տեսավ ինչ-որ սպիտակ բան, որ շրշում, շարժվում էր սենյակում։

«Ա՛խ, ի՛նչ քաղցր կլիներ սրա հետ քնելը... Թե չէ ձո՛ւկ բռնե՛լ... Նստիր այնտեղ ու սրթսրթա...» — անորոշ մտածում էր Միտկան՝ ներշնչելով ննջարանի հոտը։

Պատուհանում երևաց Լիզայի ծիծաղկոտ դեմքը. նա գլխին սպիտակ լաչակ էր կապել։

— Ես կե՛լնեմ պատուհանից։ Տո՛ւր ձեռքդ։

— Ե՛կ, — Միտկան օգնեց։

Հենվելով նրա ձեռքին, Լիզան մոտիկից նայեց նրա աչքերին։

— Շո՞ւտ դուրս եկա։

— Ոչի՛նչ։ Ձենք ուշանա։

Գնացին դեպի Դոն։ Լիզան վարդագույն ձեռով տրորում էր մի փոքր ուռած աչքերը, նա ասաց.

— Ի՞նչ քաղցր էի քնել։ Պետք է էլի՛ քնել։ Շատ վաղ ենք գնում։

— Հենց իր ժամանակին է։

Առաջին իսկ նրբանցքով հրապարակից իջան Դոնի ափը։ Գիշերվա ընթացքում հայտնի չէ ինչու բարձրացել էր ջուրը, ու նավակը, որ կապված էր երեկ չոր տեղում եղած քոթուկին, այժմ ճոճվում էր ջրի մեջ։

— Պետք է բոբիկանանք, — հոգոց հանեց Լիզան՝ աչքերով չափելով մինչև նավակը եղած տարածությունը։

— Արի ես քեզ անցկացնեմ, — առաջարկեց Միտկան։

— Անհարմար է... ավելի լավ կլինի ես բոբիկանամ։

— Որ անցկացնեմ, լավ կլինի։

— Հարկավոր չէ,— Լիզան շփոթությունից կտրեց խոսքը։

Միտկան ձախ ձեռքով նրա ոտները գրկեց ծնկներից վեր ու հեշտությամբ բարձրացնելով, ջրի մեջ տարավ դեպի նավակը։ Լիզան ակամա խտտեց նրա պարանոցի թուխ, ամուր սյունը, գուրգուրանքով ու կամացուկ ծիծաղեց։

Եթե Միտկան չդիպչեր այն քարին, որի վրա խուտորի կնանիքը տոփաններով սպիտակեղեն էին թակում, չէր լինի անակնկալ, կարճ համբույրը։ Լիզան հառաչելով, շրթունքները սեղմեց Միտկայի ճաքճքած շրթունքներին, ու Միտ-

կան կանգ առավ նավակի գորշ պատից երկու քայլ հեռավորությամբ։ Ջուրը լցվում էր նրա քոշերի մեջ, պաղեցնում ոտները։

Բաց անելով նավակի փակը, նա քոթուկից ուժով դեն հրեց այն ու թռավ նստեց, երբ նավակն արդեն ընթանում էր ջրի վրա։ Թիավարում էր կանգնած վիճակում, կարճ թիակով։ Նավակի ետևից վշշում, լալիս էր ջուրը։ Նավակը մի քիչ բարձրացած քթով թեթև ճեղքում էր հոսանքը՝ ընթանալով դեպի մյուս ափը։ Կարթերը շարժվում, ճքճքում էին։

— Ո՞ւր ես տանում, — ետ նայելով, հարցրեց Լիզան։

— Մյուս կողմը։

Նավակը կանգ առավ ավազոտ մի յուռի մոտ։ Միտկան առանց հարցնելու գրկեց Լիզային ու տարավ դեպի առափնյա մլենու թփերը։ Լիզան կծում էր նրա դեմքը, չանգռռում նրան, մի երկու անգամ խուլ ճչաց ու զգալով, որ ուժասպառ է լինում, բարկությամբ, առանց արցունքների լաց եղավ։

. . . . . .

. . . . . .

Վերադարձան ժամը իններին։ Երկինքը պատած էր դեղնակարմիր մեգով։ Քամին պար էր գալիս Դոնի վրա, լեռնացնում ալիքները։ Պար էր գալիս, թռչում հանդիպական ալիքների, նավակի վրայով, ու գետի խորքերից բարձրացած փրփրադեզ, պաղ ջրի կաթիլները խփում էին Ելիզավետայի գունաթափ դեմքին, հոսում ու կախվում էին արտևանունքներից ու գլխաշորի տակից դուրս թափված մազափնջերից։

Նա հոգնածորեն կկոցում էր ամայացած աչքերը, մատներով ճմլում նավակի մեջ ընկած մի ծաղկի ցողունը։ Միտկան թիավարում էր առանց նրան նայելու, իր ոտների տակ ընկած էին մի փոքրիկ ծածան ու մի բրամ ձուկ՝ մահվան ջղաձգությունից քարացած բերանով ու նարնջագույն օդակի միջից դուրս ընկած աչքով։ Միտկայի դեմքի վրա դրոշմված էր մեղավորությունը, բավականությունը խաչաձևվում էր անհանգստության հետ...

— Ես քեզ կտանեմ Սեմյոնովյան նավակայանը։ Այնտեղից շուտ կհասնես տուն, — ասաց Միտկան՝ նավակը շուռ տալով հոսանքի ուղղությամբ։

— Լա՛վ, — շշուկով համաձայնեց Լիզան։

Գետափում մարդիկ չկային, կավճի փոշով շպարված բանջարանոցային ցանկապատերը տաք հողմից խարկված, նվաղում էին Դոնի ափին, օդը լցնում ցախի բարկ հոտով։ Արևածաղիկների ծանր, ծտերի կտցած գլխիկները, լիովին հասունացած, կախվել էին գետնի վրա, թափում էին խավոտ սերմերը։ Գետառը զմրուխտանում էր աճեցրած մատաղ աշնանախոտով։ Հեռվում ցատկոտում, աքացում էին ձիու քուռակները ու հարավային տաք քամին դեպի Դոն էր բերում նրանց վզերին կախած բոժոժների հնչուն ծիծաղը։

Միտկան վերցրեց ձկները, մեկնեց նավակից իջնող Ելիզավետային։

— Վերցրու սրանք։ Ա՛ռ։

Ելիզավետան վախեցած թարթեց աչքերը, վերցրեց։

— Դեհ, ես գնում եմ։

— Ի՞նչ արած...

Ու ողորմելի տեսքով, մլենու թփերի մեջ մի քիչ առաջվա ինքնավստահությունը և ուրախությունը թողած, հեռացավ Ելիզավետան, ուսի վրա շարված ձկները ձեռքին։

— Լիզավե՛տա։

Նա շուռ եկավ, հոնքերի կեռվածքում թաքցնելով սրտնեղությունն ու տարակուսանքը։

— Մի բոպե ետ դարձ։

Ու երբ Ելիզավետան մոտեցավ, Միտկան ջղայնանալով իր շփոթության վրա, ասաց.

— Ես էլ, դու էլ չենք նկատել... օհո՛, յուրկադ հետևից... մի քիչ... աղտոտվել է...

Ելիզավետան բռնկվեց ու կարմրեց մինչև անրակները։ Միտկան մի փոքր լռելով, ասաց.

— Թաքուն տեղերով գնա։

— Միևնույն է, պետք է անցնել հրապարակի միջով։ Էխ ուզում էի սև յուրկա հագնել, է՛, — տխրությամբ և անակնկալ ատելությամբ շշնջաց Ելիզավետան՝ նայելով Միտկայի դեմքին։

— Բեր, կանաչ տերև քսեմ, — պարզապես առաջարկեց

Միտկան և զարմացավ, տեսնելով, որ աղջկա աչքերում արցունքներ երևացին։

Քամու սուրոց-սվսվոցի նման խուտորովը մեկ սողաց նորությունը՝ «Միտկա Կորշունովը խայտառակել է Սերգեյ Պլատոնովիչի աղջկան»։ Կնանիքը խոսում էին առավոտ ծեգին՝ նախրատեղում, երբ կովերը նախիր էին տանում, խոսում էին ջրհորի կոունկի նեղլիկ, գորշ փոշու մեջ կորած շվաքում՝ դույլերից թափթփելով ջուրը, խոսում էին Դոնի ափին՝ տափակ սալ-քարերի վրա թակելով լվացած ջուլ ու փալասը։

— Հարազատ մեր չունեցողն այդպես կլինի, բա՞։

— Պլատոնովիչն ինքը շունչ քաշելու ժամանակ է՛լ չունի, իսկ խորթ մերը մատների արանքով է մտիկ անում...

— Այն օրը պահակ Դավիդկա Բեսպալին պատմում էր. «Գիշերվա կեսը կլիներ, մեկ էլ տեսնեմ մի մարդ է մոտենում վերջին պատուհանին։ Հը՛մ, միտք եմ անում, գող է մտնում Պլատոնովիչի տունը։ Ուրե՛մս, ես էլ մոտ եմ վազում։ Հե՛յ, այդ ո՞վ է։ Պոլիցա, այստե՛ղ արի։ Դա, ուրեմս, հենց նա էր որ կար, Միտկան էր»։

— Հիմի աղջիկները, գրո՛ղը նրանց բկից բռնի, ուրիշ տեսակ են...

— Միտկան իմ Միկիշկային ասել է, թե «պիտի ուզեմ այդ աղջկան»։

— Հլա մի քիչ թող խլինքը սրբի, հետո խոսի։

— Այն օրը ասում էին, թե գիր է արել, զոռով է մոտեցել...

— Ի-ի՛-ի՛հ, քավորկի՛ն...

Փողոցներով ու նրբանցքներով մեկ պտտվում էին լուրերը, աղտոտում աղջկա նախկին մաքուր անունը, ոնց որ թանձր կուպր քսես նոր շինած դռանը...

Համբավը ընկավ Սերգեյ Պլատոնովիչի քաչալացող գըլխին ու քաշեց գետին։ Երկու օր ոչ խանութ էր գնում, ոչ աղաց։ Ներքևում ապրող ծառաները միայն ճաշից առաջ էին երևում։

Երրորդ օրը Սերգեյ Պլատոնովիչի համար խատուտիկ, գորշ հովատակը լծեցին մրցարշավի դրոժկային, նա սլացավ դեպի ստանիցա, գլխով ծանր ու մեծ, անմատչելի

բարև տալով հանդիպող կազակներին։ Նրա ետևից էլ սրվսրվալով բակից դուրս ելավ լաքով փայլող վիեննական մի կալյասկա։ Կառապան Եմելյանը թքոտելով ճերմակող մորուքին ընկած կեռ ծխամորճը, վերցրեց կապույտ մետաքսե երասանները ու երկու սևաթույր ձիերը խլշկոտելով սլացան փողոցովը մեկ։ Եմելյանի դիք մեջքի ետևում երևում էր դալուկ Ելիզավետան։ Ձեռքին բռնել էր մի թեթև ճամպրուկ և անուրախ ժպտում էր. ձեռնոցը թափահարելով, հրաժեշտ էր տալի դարբասի մոտ կանգնած Վլադիմիրին ու խորթ մորը։ Խանութից կաղալով դուրս եկող Պանտելեյ Պրակոֆևիչը հետաքրքրվեց, դիմեց ծառա Նիկիտային.

— Ո՞ւր գնաց աղջիկը, հը՞։

Ծառան ներողամտություն ցույց տալով դեպի մարդկային այդ սովորական թուլությունը, պատասխանեց.

— Մոսկվա, սովորելու, դասընթացներն անցնելու։

Հետևյալ օրը պատահեց մի դեպք, որի պատմությունը երկար ծամծմում էին և՛ Դոնի ափին, և՛ ջրհորի կոունկի շվաքում, և՛ նախրատեղում... Մթնշաղից առաջ (տափաստանից արդեն փոշի բարձրացնելով գալիս էր նախիրը) Սերգեյ Պլատոնովիչի մոտ գնաց Միտկան (դիտմամբ ուշ գնաց որ մարդիկ չտեսնեն)։ Գնաց ոչ թե հենց այնպես, այլ նրա աղջկան, Ելիզավետային, ուզելու։

Մինչ այդ Ելիզավետայի հետ տեսնվել էր մի չորս անգամ, ո՛չ ավելի։ Վերջին հանդիպումին նրանց միջև այսպիսի խոսակցություն եղավ.

— Ամուսնացիր ինձ հետ, Լիզավետա, հը՞։

— Հիմարությո՛ւն։

— Կսիրեմ քեզ, կգուրգուրեմ... Աշխատողներ մեզ մոտ կան, կնստես պատուհանի մոտ, գիրք կկարդաս։

— Հիմար ես դու։

Միտկան վիրավորվեց ու լռեց։ Այդ երեկո շուտ գնաց տուն, իսկ առավոտյան ասավ զարմացած Միրոն Գրիգորևիչին.

— Ապի, ամուսնացրու ինձ։

— Խաչ հանիր երեսդ։

— Դրո՛ւստ, հանաք չեմ անում

— Շա՞տ ես ուզում, հա՞։

— Էլ ի՞նչ ասեմ...

— Այդ ո՞վ է խելքահան արել, հո դարձվոր Մարֆուշկան չէ։

— Խնամախոսներ ղրկի Սերգեյ Պլատոնովիչի մոտ։

Միրոն Գրիգորևիչը նստարանի վրա խնամքով դարսեց փինաչուության գործիքները (նա ձիու փոկեր էր նորոգում), քոքոաց.

— Ոնց որ տեսնում եմ, այսօր խելքդ տեղը չէ, որդի։

Միտկան բուղայի համառությամբ պնդեց իր ասածը. հայրը տաքացավ։

— Ա՛յ սարսաղ, Սերգեյ Պլատոնովիչը հարյուր հազարից էլ շատ կապիտալ ունի, վաճառական է, իսկ դո՞ւ... Գնա՛ այստեղից, տուտուց բաներ մի՛ դուրս տա, թե չէ կթակեմ այս ղայիշով. փեսացուի՛ս մտիկ։

— Մենք տասներկու լուծ եզ ունենք, այսքան տուն ու տեղ, նա հո մուժիկ է, իսկ մենք կազակներ ենք։

— Հա՛յդա,— կարճ հրամայեց Միրոն Գրիգորևիչը, որ երկար խոսակցություններ չէր սիրում։

Միտկան համակրանք գտավ միայն Գրիշկա պապի մոտ։ Սա կպավ որդուն՝ հենակը թխթխկացնելով հատակին։

— Միրո՛ն։

— Հը՞։

— Ինչո՞ւ ես հակառակում։ Տղի աչքը որ կպել է, ուրեմս...

— Հե՛րըս, դուք ոնց որ երեխա լինեք, ասված վկա։ Միտրին հո սարսաղ է, իսկ դուք զարմանք բան եք ասում...

— Սո՛ւս,— Գրիշկա պապին հենակը զարկեց հատակին։— Բա մենք պակա՞ս ենք նրանից, հը՞։ Նա պետք է պատիվ համարի, որ կազակի տղան ուզում է իրեն աղջկան։ Ոտով-գլխով կտա։ Ողջ շրջանումը մենք հայտնի մարդիկ ենք։ Տկլորներ չենք, այլ տուն ու տեղի տեր ենք... Այո՛... Գնա ուզի, Միրոշկա, պրծավ-գնաց։ Թող աղացն էլ օժիտ տա։ Խնդրիր։

Միրոն Գրիգորևիչը մոթմոթաց ու դուրս ելավ բակը, իսկ Միտկան որոշեց սպասել իրիկվան ու անձամբ գնալ. գիտեր, որ հոր կամակորությունը ծփի ծառին է նման. ծռվելը ծռվում է, բայց կոտրել՝ մի է՛լ փորձիր։

Սուլելով հասավ մինչև շքաղուռը, իսկ այստեղ երկչոտեց։ Մի քիչ դես-դեն քայլեց ու գնաց բակի միջով։ Մուտքի սանդուղքի վրա հարցրեց աղախնին, որ օսլայած գոգնոց էր կապել։

— Ինքը տա՞նն է։

— Թեյ են խմում։ Սպասիր։

Նստեց, սպասեց, թութուն փաթաթեց ու ծխեց. մատները թքոտելով հանգցրեց և ծխախոտի մնացորդը երկար քսմսեց հատակին։ Սերգեյ Պլատոնովիչը դուրս եկավ՝ բաճկոնակից թափ տալով պաքսիմատի փշրանքը. տեսավ ու խոժոռեց հոնքերը։

— Անցեք։

Միտկան առաջինը մտավ զով կաբինետը, ուր գրքերի ու ծխախոտի հոտ էր գալիս, զգաց, որ տանից դուրս գալու ժամանակ ունեցած իր համարձակությունը բավականացել է հենց մինչև կաբինետի շեմքը։

Սերգեյ Պլատոնովիչը մոտեցավ սեղանին, շուռ եկավ ճաճռան կրունկների վրա։

— Դե՞հ,— նրա մատները մեջքի հետևում չանգռեցին գրասեղանի տակի տախտակը։

— Եկա իմանալու... — Միտկան ընկղմեց նրա խոցող աչքերի պաղ լորձի մեջ և սարսռելով ցնցեց ուսերը, — կարելի է կտա՞ք ինձ Լիզավետային։

Միտկայի շփոթված դեմքին հուսահատությունից, բարկությունից, վախից քրտինք երևաց, որ ժլատ էր, ինչպես ցողային խոնավությունը երաշտի ժամանակ։

Սերգեյ Պլատոնովիչի ձախ հոնքը դողում էր ու վերին շրթունքը չովում՝ ցույց տալով բորդոյի գույնի թարս կողմը։ Վիզը երկարացնելով, նա ամբողջովին դեպի առաջ թեքվեց։

— Ի՞նչ... Ի-ի՞-նչ... Սրիկա... Կորի-գնա... Քեզ պետք է քարշ տալ ատամանի մոտ։ Ա՛խ դու շան որդի։ Գարշելի՛...

Միտկան ուրիշի ճշոցից համարձակություն առնելով, հետևում էր, թե ինչպես գորշ-կապույտ արյունը խփում է Սերգեյ Պլատոնովիչի թշերին։

— Ինձանից մի՛ նեղանաք... Մտածում էի քավել մեղքս։

Սերգեյ Պլատոնովիչը չոեց արյունից ու արցունքներից ուռած աչքերը և չուգունե ծանր մոխրամանը շպրտեց Միտկայի ոտների տակ։ Մոխրամանը շիղակի կպավ ձախ ծունկին, բայց Միտկան տոկունությամբ դիմացավ ցավին ու թափով բաց անելով դուռը, սկսեց գոռգոռալ, ատամները ցույց տալ՝ կատաղելով վիրավորանքից ու ցավից.

— Ձեր կամքն է, Սերգեյ Պլատոնովիչ, ինչպես կուզեք, ես սրտանց ասի... էլ ո՞ւմ է հարկավոր այդ տեսակ աղջիկը։ Ես միտք ունեի ծածկել նրա խայտառակությունը... Թե չէ ծամած թիքան ո՞ւմ է պետք։ Շունն էլ չի ուտի։

Սերգեյ Պլատոնովիչը ճիլտած թաշկինակը դնելով շրթունքներին, կրնկակոխ գնում էր Միտկայի ետևից։ Նա փակեց ճանապարհը դեպի շքադուռը, ու Միտկան դուրս փախավ բակը։ Հենց այստեղ Սերգեյ Պլատոնովիչը միայն աչքով արավ բակում ցցված կառապան Եմելյանին։ Մինչդեռ Միտկան փորձում էր բաց անել բակի դռան պինդ սողնակը, շարդախի մի անկյունից դուրս թռան բաց թողած չորս շները ու տեսնելով օտարին, վազ տվին մաքուր ավլված բակի միջով։

Սերգեյ Պլատոնովիչը 1910 թվականին Նիժնի-Նովգորոդի տոնավաճառից բերել էր մի զույգ սև, խուճուճ լակոտ՝ էգ ու որձ։ Դրանք սև էին, գանգրամազ, լայներախ։ Մի տարուց հետո հասակով միամյա հորթից էլ բարձր էին, սկզբում քաշում-պատռում էին Մոխովի բակի կողքից անցնող կանանց յուբկաները, հետո սովորեցին կանանց գլորել գետին ու կծել նրանց ազդրերը, ու միայն այն ժամանակ, երբ մահացու կերպով գզեցին տեր-Պանկրատիի հորթը և Ատեպինի մի զույգ վայրի խոզերը, Սերգեյ Պլատոնովիչը հրամայեց նրանց կապած պահել։ Շներին բաց էին թողնում գիշերները, տարեկան մի անգամ էլ, գարնանը, բաց էին թողնում զուգավորման համար։

Միտկան դեռ ետ չէր նայել, երբ առջևի շունը, Բայան անունով, թաթերը գցեց նրա ուսերին ու սեղմեց երախը՝ ատամները խրելով նրա բամբակած սերթուկի մեջ։ Շները հարձակվում էին, քաշքշում, գլորվում սև գնդի նման։ Միտկան պաշտպանվում էր ձեռներով, աշխատում էր վայր չընկնել։ Անցողակի տեսավ, թե ինչպես Եմելյանը ծխամորճից կայծեր թափելով, գնաց դեպի արտաքնոցը, ծածկեց ներկած դռնակը։

Մուտքի սանդուղքի անկյունում, ջրատար խողովակին մեջքով հենված, կանգնել էր Սերգեյ Պլատոնովիչը, սեղմում էր սպիտակ բռունցքները, որոնք ծածկված էին փայլուն, կոշտ մազերով։ Միտկան ճոճվելով, դուրս քաշեց սողնակը ու արյունլվիկ ոտների վրա դուրս տարավ գարշահոտ արձակող շնակույտը։ Նա Բայանի կոկորդը սեղմելով, խեղդեց նրան, իսկ մնացած շներից նրան դժվարությամբ ազատեցին այնտեղից անցնող կազակները։

III

Նատալյան հարմարվեց Մելեխովների տանը։ Միրոն Գրիգորևիչը լավ էր կրթում երեխաներին. չնայելով իր հարբստության և այն հանգամանքին, որ նրանցից բացի մշակներ կային, նրանց ստիպում էր աշխատել, ընտելացնում էր գործին։ Աշխատասեր Նատալյան մտավ կեսուր-կեսրարքի աչքը։ Իլյինիչնան, որ ծածուկ ատում էր մեծ հարսին՝ զուգվող-զարդարվող Դարյային, հենց առաջին օրերից սիրեց Նատալյային։

— Քնի՛ր, քնիր, բալիկս։ Ինչի՞ վեր կացար, — սիրալիր ասում էր նա՝ խոհանոցում քայլելով իր հաստլիկ ոտների վրա, — գնա՛, էլի քնիր, առանց քեզ կանենք գործերը։

Նատալյան, որ վեր էր կենում առավոտ ծեգին, որ օգներ եփել-թափելու գործին, գնում էր օթախը՝ քունն առնելու։

Տան մեջ խստաբարո Պանտելեյ Պրակոֆևիչն էլ ասում էր կնոջը.

— Լսի, ա՛ կնիկ, Նատաշկային չզարթեցնես։ Նա առանց այդ էլ ցերեկը չարչարվում է։ Նա ու Գրիշկան պատրաստվում են վար անելու։ Դարյային, Դարյային բանեցրու։ Թամբալ կնիկ է, փչացած է... Երեսին ներկ է քսում և հոնքերը սևացնում, դրա հերն անիծած։

— Նատաշկան թող գոնե առաջին տարին քեֆ քաշի,— հոգոց է հանում Իլյինիչնան՝ վերհիշելով չարքաշ աշխատանքի մեջ անցկացրած իր կյանքը։

Գրիգորին մի փոքր ընտելացավ ամուսնության իր նոր

վիճակին, սթափվեց ու մի երեք շաբաթ անց վախով ու սրտնեղությամբ ինքն իր մեջ գիտակցեց, որ Ակսինյայի հետ եղած կապը վերջնականապես չի կտրվել, ինչ-որ մի բան է մնացել ոնց որ փտած, կոտրված ատամի արմատը։ Ամուր կապավ այն, ինչից նա ձեռ էր քաշել ամուսնության հաճույքներով տարված, — որպես թե սրտի վերքը կսաղանա, կմոռացվի... Բայց արի ու տես, որ դա չի մոռացվել ու մաշում է հիշողությունների պահին։ Դեռ ամուսնությունից առաջ մի անգամ կալում, կալսելու ժամանակ, Պետրոն հարցրեց։

— Գրիշկա, բա Ակսյուտկայի հետ ո՞նց կլինի։

— Ի՞նչ է որ։

— Երևի ափսոսում ես, որ պիտի կորցնես։

— Ես կկորցնեմ, մեկնումեկը կգտնի,— այն ժամանակ ծիծաղում էր Գրիշկան։

— Տե՛ս, դո՛ւ գիտես, — ու Պետրոն ծամում էր ծամ-ծմված բեղը, — թե չէ կամուսնանաս ու մեկ էլ տեսար՝ ուրիշ բան պատահեց...

— Ինչ որ եղել է, մեռել-թաղվել է,— կատակեց Գրիշկան։

Բայց գործն այդպես չեղավ, ու գիշերները իրը պարտականություն փայփայելով կնոջը, ջերմացնելով նրան իր երիտասարդական սիրային զեղումներով, Գրիշկան նրա մեջ սառնություն, հլու-հնազանդություն էր տեսնում։ Նատալյան չէր արձագանքում ամուսնու խնդությանը, ծնվելիս մայրը նրան օժտել էր անտարբեր, դանդաղահոս արյունով, ու Գրիգորին հիշելով սիրո մեջ մոլի Ակսինյային, հոգոց էր հանում.

— Նատալյա, երևի հերդ քեզ սառույցի վրա է կյանք տվել... դու շատ սառն ես։

Իսկ Ակսինյան հանդիպումների ժամանակ աղոտ ժպտում էր, սև բիբերը ուղղելով նրան՝ խոսքերի կպչուն տիղմ էր թափում.

— Բարև, Գրիշենկա։ Ո՞նց ես ապրում ու քեֆ քաշում ջահել կնկանդ հետ։

— Ապրում ենք, էլի՛... — անորոշ պատասխանում էր

Գրիգորին ու աշխատում էր շուտ հեռանալ Ակսինյայի փաղաքշող հայացքից։

Ստեփանը ըստ երևույթին հաշտվել էր կնոջ հետ։ Սկսել էր ուշ-ուշ գնալ օղեփուն ու կալում մի երեկո հացը էրնելիս խռովության ժամանակվա ընթացքում առաջին անգամ առաջարկեց.

— Արի երգ ասենք, Կսյուշա։

Նստեցին, թիկնեցին կալսած ցորենի փոշոտ թեղին։ Ստեփանը սկսեց զինվորի մի երգ։ Ակսինյան ձայնակցեց կրծքային բարձր ձայնով։ Լավ էին երգում, ոնց որ ամուսնական կյանքի առաջին տարիներին։ Այն ժամանակ, մեկ էլ տեսար, գալիս են դաշտից, վերջալույսի ալ-կարմիր փեշով ծածկված, ու Ստեփանը սայլի վրա ճոճվելով, երգում է մի հին երգ, ծորուն ու թախծոտ՝ ոնց որ ճամփորդի երես չտեսնող, ջղախտով ծածկված տափաստանային ճամփան։ Ակսինյան գլուխը ամուսնու ուռուցիկ կրծքին դրած, ձայնակցում է։ Ձիերը քաշում են ճոճոան սայլը, ճոճում քեղին։ Խուտորի ալևորները հեռվից հետևում են երգին։

— Ա՛մա թե ձենով կնիկ է առել Ստեփանը, հա՛-ա։

— Մտիկ, է՛, ո՞նց է՛լ տեղակի են զունդունում։

— Ստյոպկի ձենն էլ հո ձեն չի, զանգ է։

Ու պապերը, որ հողաթմբերի վրայից դիտում էին վերջալույսի փոշոտ, կարմրավառ շամանդաղը, փողոցների միջով իրար ասում էին.

— Ցածի կողմերի[1] երգ են երգում։

— Այդ երգը Վրաստանից է դուրս եկել։

— Հենց այդ է, է՛, լուսահոգի Կիրյուշկան սիրում էր այդ երգը։

Գրիգորին երեկոները լսում էր Աստախովների երգերը։ Կալսի ժամանակ (նրանց կալը հարևան էր Ստեփանի կալին) Ակսինյային տեսնում էր առաջվա պես ինքնավստահ, որպես թե երջանիկ։ Գոնե այդպես էր թվում նրան։

Ստեփանը չէր բարևում Մելեխովներին։ Եղանը ձեռքին քայլում էր կալում, աշխատելիս շարժում էր լայն, կախ

1 Ցածի կողմերի—Դոնի ստորին ավազանի խուտորների։ (Ս. Թ.)

ուսերը, երբեմնակի սրամիտ խոսքեր էր ասում կնոջը, ու Ակսինյան ծիծաղում էր՝ լաչակի տակից խաղացնելով սևորակ աչքերը։ Նրա կանաչ յուրկան երերվում էր Գրիգորիի փակ աչքերի առաջ։ Անհայտ մի ուժ պտտում էր վերջինիս պարանոցը՝ գլուխը շուռ տալով Ստեփանի կալի կողմը։ Գրիգորին չէր նկատում, թե ինչպես Նատալյան, օգնելով Պանտելեյ Պրակոֆևիչին օրանը դարսելու, իր կարոտող, խանդոտ հայացքով բռնում էր ամուսնու յուրաքանչյուր ակամա հայացքը. չէր տեսնում, թե ինչպես Պետրոն կալսվող հացի վրա ձիերը քշելիս նայելով իրեն, անդուրեկան, թաքուն ժպիտով ծամռում էր դեմքը։

Խուլ շաչյունի, քարե կամարի տակ խաչված գետնի անքոցում Գրիշկան տարվում էր անորոշ մտքերով, փորձում էր ու չէր կարողանում ըմբռնել գիտակցությունից ճողոպրող մտքերի բեկորները։

Մոտիկ ու հեռու կալերից դեպի գետառ էին սողում ու լռում կալսման ձայները, ձիավորների ճչոցները, մտրակների սվսվոցը, քամհարների թմբուկների թխթխկոցը։ Խուտորը, որ ուռճացել էր բերքից, նվաղում էր սեպտեմբերյան հով ջերմության տակ, ձգվելով Դոնի ափին՝ ոնց որ ուլունքանման օձը ճանապարհի լայնքով։ Յուրաքանչյուր ցանկապատված բակում, յուրաքանչյուր տան յուրաքանչյուր կտուրի տակ հորձանքի նման պտույտ էր գայի մյուս տներից առանձնացած, ուրույն, լիարյուն, և՛ դառն, և՛ քաղցր կյանքը. Գրիշկա պապին մրսելով, տառապում էր ատամների ցավից. Սերգեյ Պլատոնովիչը, շփելով երկատված մորուքը, մենակության մեջ լալիս էր ու կրճտացնում ատամները՝ մորմոքվելով խայտառակությունից. Ստեփանը հոգու մեջ ատելություն էր սնում դեպի Գրիգորին ու գիշերները երագում երկաթե մատներով քերքրում էր կտոր-կտոր գործվածքներից կարված վերմակը. Նատալյան փախչելով շարդախը, ընկնում էր տարթերի վրա, ցնցվում, գունդ ու կծիկ լինում՝ ողբալով իր ոտնահարված երջանկությունը. Խրիստոնյան, որը տոնավաճառում մի մոզի էր ծախել ու փողը խմիչքի տվել, տանջվում էր խղճահարությունից. անհագ նախազգացումից ու վերադարձած ցավից տառապելով, ախ ու վախ էր անում Գրիգորին. Ակսինյան փայփայելով ամուսնուն, արցունքներով ողողում էր չմարող իր ատելությունը նրա նկատմամբ։

Աղացի հեռացված գլանիչ Դավիդկան ամբողջ գիշերներով նստում էր Վալետի մոտ, հացահատիկ բերողների հարդոտ կացարանում, ու վերջինը, փայլեցնելով բարկացկոտ աչքերը, ասում էր.

— Չէ՛, հե-ռիի-ք եղավ։ Շուտով կկտրատեն նրանց դամարները։ Նրանց դեմ մի ուռոլյուցիան քիչ է։ Նրանց դեմ կգա հազար ինն հարյուր հինգ թիվը, այն ժամանակ քվիտ կլինենք, քը-վի՛-տ կլինենք...— նա սպառնում էր սպիավոր մատով և, ուսերը թափ տալով, շտկում վրան գցած պիջակը։

Իսկ խուտորի վրայով սահում էին օրերը գիշերների հետ փարված. հոսում էին շաբաթները. սողում ամիսները. փչում էր քամին, սարն արձագանքում էր եղանակին, ու աշնանային թափանցիկ-կանաչ լազուրով ապակեպատած, անտարբերությամբ դեպի ծով էր գնում Դոնը։

IV

Հոկտեմբերի վերջին, մի կիրակի օր, Ֆեդոտ Բոդովսկովը գնաց ստանիցա։

Զամբյուղով շուկա տարավ չորս զույգ չաղացրած բադ, ծախեց. մի խանութում կնկա համար գնեց ծաղկավոր չիթ ու պատրաստվում էր բոլորովին մեկնելու (ոտը անիվի շրջանակին հենած, ձգում էր անուրի փոկը). — այդ պահին նրան մոտեցավ մի մարդ, որն անծանոթ էր. ստանիցայից չէր։

— Բարև ձեզ,— ասաց նա Ֆեդոտին՝ թուխ մատները տանելով սև, լայնեզր գլխարկի եզրին։

— Բարև՛ քեզ,— սպասողական վիճակում մռմռաց Ֆեդոտը՝ կկոցելով կալմիկական աչքերը։

— Դուք ո՞րտեղացի եք։

— Խուտորից ենք, այստեղացի չենք։

— Իսկ ո՞ր խուտորից եք։

— Տատարսկից։

Օտար մարդը կողքի գրպանից հանեց արծաթե մի պորտսիգար, որի կափարիչի վրա մակույկ էր քանդակված. Ֆե-

դատին պապիրոս հրամցնելով, շարունակեց հարցուփորձը։

— Ձեր խուտորը մե՞ծ է։

— Շնորհակալություն, նոր ծխեցի։ Մեր խուտո՞րը, հը՞։ Մեծ խուտոր է։ Երեք հարյուր տուն կլինի։

— Ծկեղեցի կա։

— Բա ո՞նց, կա։

— Դարբիններ կա՞ն։

— Այսինքս թե նալբանդնե՞ր։ Հա, նալբանդներ էլ կան։

— Իսկ աղացին կից փականագործական արհեստանոց կա՞։

Ֆեդոտը կապեց թմրած ձիու երասանները, կտսկածանքով դիտեց անծանոթի սև գլխարկը և լայն, սպիտակ դեմքի խորշոմները, որոնք իջնում, խցկվում էին կարճ, սև մորուքի մեջ։

— Ձեր ուզածն ի՞նչ է։

— Ես քոչելու եմ ձեր խուտորը՝ այնտեղ ապրելու համար։ Հենց հիմա եղա ստանիցայի ատամանի մոտ։ Դուք դատարկ սայլո՞վ եք գնում։

— Դատարկ սելով։

— Ինձ կտանե՞ք։ Միայն թե ես մենակ չեմ, ինձ հետ կինս է ու երկու սնդուկ՝ ուիթը փութ քաշով։

— Տանել կարելի է։

Համաձայնվելով երկու ռուբլի վերցնել, Ֆեդոտը սայլը քշեց բուբլիկ ծխող Ֆրոսկայի տուն, որի մոտ իջևանել էր իրեն վարձողը, վտիտ, խարտյաշ մի կնոջ նստեցրեց սայլին, երկաթապատ սնդուկներն էլ տեղավորեց սայլի հետին մասում։

Մեկնեցին ստանիցայից։ Ֆեդոտը չմշմացնելով, մաղե երասանները թափահարում էր իր ձիուկի վրա, պտտում էր տափակավիզ, անճոռնի գլուխը. նրան համակել էր հետաքրքրությունը։ Նրա ճանապարհորդները համեստ նստել էին սայլին, լռում էին։ Ֆեդոտը սկզբում ծխախոտ խնդրեց, իսկ հետո հարցրեց.

— Հրամանքներդ ո՞րտեղից եք գալի մեր խուտորը։

— Ռոստովից։

— Այնտեղի բնի՞կ եք։

— Ինչպես եք ասո՞ւմ։

— Հարցնում եմ՝ ո՞րտեղացի եք։

— Ա՜-ա, այո, այո, այնտեղացի ենք, ռոստովցի։

Ֆեդոտը բարձրացնելով բրոնզե դեմքը, դիտեց տափաստանային քոլախոտի հեռավոր մացառուտները։ Հետմանական ճանապարհը բարձրանում էր սարալանջով և կատարին, չորացած, դարչնագույն մոլախոտերի մեջ, ճանապարհից կես վերստ հեռավորությամբ Ֆեդոտի կալմիկական փորձված ու սուր աչքը նկատեց արոսների գլխիկներ, որոնց շարժումները հազիվ էին նշմարվում։

— Հրացան չկա, թե չէ կխփեինք արոսները։ Հրե՛ն նրանք ման են գալի... — մատով ցույց տալով՝ հոգոց հանեց Ֆեդոտը։

— Ձեմ տեսնում, — խոստովանեց ուղևորը՝ թարթելով աչքերը։

Ֆեդոտն աչքերով ուղեկցեց ձորակն իջնող արոսներին ու շուտ եկավ դեպի ուղևորները։ Տղամարդը միջահասակ էր, նիհար, մոտ քթարմատին մոտիկ գտնվող աչքերը խորամանկություն էին արտահայտում։ Խոսելիս նա հաճախ ժըպտում էր, հովարի նման կախում վերին, ուռուցիկ շրթունքը։ Նրա կինը գործած շալով փաթաթվել ու քնել էր։ Ֆեդոտը չտեսավ կնոջ դեմքը։

— Բա ինչի՞ համար եք գալի մեր խուտորումը ապրելու։

— Ես փականագործ եմ, ուզում եմ արհեստանոց բաց անել։ Հյուսնություն եմ անում։

Ֆեդոտը անվստահությամբ դիտեց նրա խոշոր ձեռները, ու ճանապարհորդը հասկանալով այդ հայացքը, ավելացրեց.

— Բացի դրանից, ես «Զինգեր» ընկերության կարի մեքենաների տարածման գործակալ եմ։

— Բա ո՞նց է ձեր անունը, — հետաքրքրվեց Ֆեդոտը։

— Իմ ազգանունը Շտոկման է։

— Ուրեմն ռուս չե՞ք։

— Ո՛չ, ռուս եմ։ Պապս գերմանացիներից էր ծագում առել։

Ֆեդոտը կարճ ժամանակվա ընթացքում իմացավ, որ փականագործ Իոսիֆ Դավիդովիչ Շտոկմանը առաջ աշխատել է «Ակսայ» գործարանում, հետո Կուբանի ինչ-որ վայ-

բում, հետո էլ հարավ-արևելյան երկաթուղու արհեստանոցներում։ Բացի այդ, հարցասեր Ֆեդոտը ուրիշի կյանքի էլի մի ամբողջ մանրամասնություններ իմացավ։

Մինչև հասան պետական անտառը, խոսակցությունը սպառվեց։ Ֆեդոտը քրտնակալած ձին ջրեց ճանապարհի մոտ գտնվող աղբյուրի ջրով, ու սայլի ցնցումից և ճամփից հոգնած՝ ուղում էր քուն մտնել։ Մինչև խուտոր հինգ վերստ էր մնում։

Ֆեդոտը թափահարեց երասանները. ոտները կախելով սայլից, տեղավորվեց որքան կարելի էր հարմար։ Քնել չէր հաջողվել նրան։

— Ո՞նց է ձեզ մոտ ապրուստը, — հարցրեց Շտոկմանը՝ ճստոստալով ու ճռճվելով նստած տեղում։

— Է՛հ, ապրում ենք, էլի՛։

— Իսկ կազակներն առհասարակ գո՞հ են իրենց կյանքից։

— Մեկը գոհ է, մյուսը չէ։ Ամեն մեկին էլ հո չե՞ս գոհացնի։

— Այդպես է, այդպես... — համաձայնվում էր փականագործը ու մի փոքր լռելով, շարունակում էր ծուռ, ինչ-որ բան թաքցնող հարցեր տալ։

— Ասում ես՝ կո՞ւշտ են ապրում, հը՞։

— Կարգին են ապրում։

— Ծառայությունը երևի ծա՞նր է, հը՞։

— Ծառայությո՞ւնը... Մենք սովոր ենք, հենց միայն իսկական ծառայության մեջ ենք շունչ քաշում։

— Վատն այն է, որ կազակներն իրենք պետք է ամեն ինչ վերցնեն ծառայության գնալիս։

— Այդպես է, բա՞ս, նրանց մերը... — աշխուժացավ Ֆեդոտը ու վախեցած նայեց երեսը շուռ տված կնոջը։ — Այդ մեծամեծների հետ գործ ունենալը փորձանք է... Դուրս եմ գալի ծառայության, եկներս ծախել եմ, ձի եմ գնել, իսկ նրանք մեկ էլ տեսար խոտանեցին այդ ձին։

— Խոտանեցի՞ն, — փականագործն իրեն զարմացած ցույց տվեց։

— Հա՛, էլի՛, բոլորովին. ոտներից տկար է, — ասում են նրանք։ Ես էլ լեզու է որ թափում եմ. «Մտեք, ասում եմ,

իմ դրության մեջ, ախր դրա ոտները մրցանակ տանող հովատակի ոտներ են, ամա աքլորի պես թեթև է ման գալի... դրա քելքը աքլորի քելք է»։ Չէ, չընդունեցին։ Ախր դա տնաքանդություն է...

Խոսակցությունն աշխուժացավ։ Ֆեդոտը տաքանալով, վար թռավ սայլից, սկսեց հաճույքով պատմել խուտորցիների մասին, հայհոյել խուտորի ատամանին մարգագետինը սխալ բաժանելու համար, գովաբանելով Լեհաստանում եղած կարգերը, ուր գտնվում էր իր գունդը, երբ ինքը իսկական ծառայության մեջ էր։ Փականագործը իրար մոտիկ աչքերի սուր նայվածքով զննում էր սայլի կողքից քայլող Ֆեդոտին, թույլ ծխախոտ էր ծխում ոսկրե, օղակապատ մուշտուկով ու ստեպ-ստեպ ժպտում էր. բայց շեղադիր, լայնակի մի կնճիռ, որ ակոսում էր սպիտակ, թեք ճակատը, դանդաղ ու ծանր էր շարժվում, ասես ինչ-որ թաքցրած մտքերից էր տեղի ունենում այդ շարժումը։

Իրիկնադեմին հասան խուտոր։

Ֆեդոտի խորհրդով Շտոկմանը գնաց այրի կին Լուկեշկա Պապովայի մոտ, նրանից երկու սենյակ վարձեց բնակվելու համար։

— Ո՞ւմ ես բերել ստանիցայից, — հարցնում էին հարևանուհիները Ֆեդոտին, դարբասի մոտ հանդիպելով նրան։

— Գործակալ է։

— Ի՞նչ գործակատար։

— Է՛հ, անխելք եք, անխելք։ Ձեզ ասում եմ՝ գործակալ է, մեքենաներ է ծախում։ Սիրուններին առանց փողի է բաժանում, իսկ տգեղներին, ոնց որ դու ես, քիքիր Մարյա, — փողով է տալի։

— Ի-ի՛հ, գրո՛ղն երեսդ, սատանա՛, միթամ դու շատ սիրուն ես, էլի։ Սֆաթդ ոնց որ կալմիկի սֆաթ լինի... Ձին է՛լ չի մոտենա քեզ, կվախենա։

— Կալմիկն ու թաթարն առաջին մարդիկն են տափաստանում, դու, քիքիր, հանաք մի՛ անի... — պաշտպանվելով հեռացավ Ֆեդոտը։

Փականագործ Շտոկմանը տեղավորվեց շիլ աչքերով ու լեզվանի Լուկեշկայի մոտ։ Մի գիշեր էլ չէր անցել, երբ խուտորում կնանիքն արդեն բաց արին լեզուները։

— Լսե՞լ ես, քավորկին։
— Ի՞նչ։
— Կալմիկ Ֆեդոտկան մի գերմանացի է բերել։
— Է՛-է՞...
— Քա այն աստվածածինը վկա։ Շլյապայով է, անունն էլ Շտոպոլ է թե Շտոկալ...
— Պոլիցա հո չի՞, հը՞։
— Քա, ակցիզի չինովնիկ է, ջանս...
— Ի-ի-ի՜հ, կնանիք, սուտ բան է։ Ասում են, որ հաշվապան է, ոնց որ տեր-Պանկրատի տղան։
— Պա՛շկա, աղունիկ, վազ տուր Լուկեշի մոտ, հարցրու ականջին՝ «մորքուր, ո՞վ է եկել քեզ մոտ»։
— Շո՛ւտ թռիր, բալիկս։
Մյուս օրը եկվորը ներկայացավ խուտորի ատամանին։
Ֆյոդոր Մանիցկովը, որ երրորդ տարին ատամանի գավազան էր կրում, ձեռների մեջ երկար շուռումուռ արավ սև, մոմլաթապատ անձնագիրը, հետո այն շուռումուռ արավ ու գնեց գրագիր Եգոր Ժարկովը։ Նայեցին իրար, ու ատամանը վախմիստրի իր հին սովորությամբ տիրաբար ձեռքով արավ.
— Ապրի՛ր։
Եկվորը գլուխ տվեց ու գնաց։ Մի շաբաթ տանից քիթը ցույց չէր տալի, ապրում էր ոնց որ արջամուկը իրեն բնի մեջ։ Թրխկացնում էր կացինը, արհեստանոց էր սարքում ամառային խոհանոց-մառանում։ Սառեց կանանց անկուշտ հետաքրքրությունը նրանց նկատմամբ, միայն երեխաներն էին օրնիբուն ցցվում ցանկապատերի վրա՝ վայրենի, անպատկառ հետաքրքրությամբ դիտելով օտար մարդուն։

V

Գրիգորին և կիները վար անելու գնացին Աստվածածնի տոնից երեք օր առաջ։ Պանտելեյ Պրակոֆիևիչը հիվանդացել էր. կոթնելով հենակին, հառաչելով գոտկատեղը ծակող ցավից, նա դուրս եկավ ճանապարհելու վար անողներին։
— Գրիշկա, կվարես արոտատեղից դենը, Կարմիր ձորին մոտիկ այն երկու հողամասը։

— Հա, լավ։ Բա Ուռի զատիթափին մոտիկ հողամասը, — շշնջալով հարցրեց Գրիգորին՝ կապելով բուկը. ձուկ որսալիս կտրվել էր նրա ձայնը։
— Աստվածածնա տոնից հետո։ Հիմա այդքան վարելն էլ հերիք է։ Կարմիր ձորի մոտ վեց հեկտար է, ագահություն մի՛ անի։
— Պետրոն չի՞ գա օգնելու։
— Նա Դաշկայի հետ աղաց կգնա։ Պետք է այսօր աղալ, թե չէ աղունը շատանում է։
Իլյինիշնան Նատալյայի կոֆտայի տակ փափուկ կարկանդակներ դրեց, քշփշաց.
— Դունյաշկային վերցնեիք եղները քշելու։
— Երկուսով էլ գլուխ կհանենք։
— Դեհ, տես, մատաղ լինեմ։ Քրիստոսը քեզ հետ։
Մի ամբողջ կույտ թաց շորերի ծանրության տակ ծռմռելով բարակ իրանը, Դունյաշկան բակի միջով գնաց Դոն՝ շորերը ցայելու։
— Նատաշա, մատաղ լինեմ, այնտեղ, Կարմիր ձորում շատ ավելուկ կա, քաղիր։
— Կքաղեմ, կքաղեմ։
— Ձե՛նդ, չաչանակ։— Պանտելեյ Պրակոֆիևիչը թափահարեց հենակը։
Երեք լուծ եղները ճանապարհով քաշեցին շուռ տված գութանը՝ քերելով աշնանային չորությունից, երաշտից պնդացած, կոշտ գետինը։ Գրիգորին բոպե առ բոպե ուղղում էր վիզը սեղմող թաշկինակը, քայլում էր ճանապարհի կողքից, հազում էր։ Նատալյան գնում էր նրա կողքից, մեջքին ճոճվում էր ուտելիքով լեցուն պարկը։
Տափաստանում, խուտորից դենը մեղմ անդորրություն էր տիրում։ Արոտավայրի, կուզիկ բլրակի մյուս կողմում հողը վարում էին գութաններով, սուլում էին հորիք քշողները, իսկ այստեղ, ճանապարհի վրա փռված էր սպիտակավուն, կարճլիկ օշինդրը, ոչխարների ատամներով պոռոկված ճանապարհամերձ իշառվույտը, գետնին թեքված, ասես ծունր դնող պատատուկը, ու վերևում տարածված էր սառչող երկնքի զրնգուն, թափանցիկ անհունը, որ հատվում էր փայլուն սարդոստայնի թռչող թելերով։

Պետրոն ու Դարյան ճանապարհելով վար անողներին պատրաստվում էին աղաց գնալու։ Պետրոն ամբարում կախ էր տվել քարմաղը ու մաղում էր ցորենը։ Դարյան մաղած ցորենը լցնում էր պարկերը և տանում-դարսում էր բրիչկայի վրա։

Պանտելեյ Պրակոֆևիչը լծեց ձիերը, խնամքով շտկեց լծասարքը։

— Հը՛, շո՞ւտ կվերջանա։

— Հիմի՛, — ամբարից պատասխանեց Պետրոն։

Աղացում շատ աղուն է կուտակվել։ Բակում խիտ կանգնած են սայլերը։ Կշեռքի մոտ հրմշտոց է։ Պետրոն երասանները գցեց Դարյային ու իջավ բրիչկայից։

— Իմ հերթը շո՞ւտ կգա, — հարցրեց կշեռքի մոտ կանգնած Վալետին։

— Կգա՛, էլի։

— Ո՞ր համարն են աղում։

— Երեսունութերորդը։

Պետրոն դուրս եկավ պարկերը բերելու։ Այդ ժամանակ կշռատեղում աղմկեցին։ Մեկը խռպոտած, բարկացկոտ ձայնով բղավում էր.

— Դու քնած էիր, իսկ հիմի առաջ ես քշում։ Դե՛ն գնա, խախոլ, թե չէ .կզարկեմ։

Պետրոն ձայնից ճանաչեց Յակով Պոդկովային։ Ականջ դրեց։ Կշռանոցում ճչաց մեկը ու ճիչը դուրս թռավ դռնից։

Պարզ շաչեց հարվածը ու մի տարեց, մորուքավոր տավրիկցի[1] դուրս թռավ դռնից՝ սև կարտուզը ծոծրակին ընկած։

— Ինչի՞ համար, հը՞, — աղաղակեց նա՝ բռնելով թուշը։

— Ես քո փոր ու փսո՛րը կթափեմ...

— Չէ՛, հլա կա՛ց։

— Միկիխվո՛ր, այստեղ արի։

Յակով Պոդկովան (ծառայության մեջ մի անգամ ձի էր նալում. ձին խլշկոտեց, սմբակով խփեց Յակովի երեսին, ու նալը ջարդելով քիթը, կտրելով շրթունքները, խրվեց երեսին. ձվաձև վերք առաջացավ, կապուտկեց, մնացին սև բծեր — սուր սեպերի հետքերը. այստեղից էլ առաջացավ

[1] Տավրիկցի — ուկրաինացի։

Պոդկովա մականունը, — այսինքն նալ) — քաջ, ամրակազմ մի հրեատանավոր, դուրս վազեց դռնից, քշտեց թևքերը։ Ետևից նրան ուժեղ զարկեց բարձրահասակ, վարդագույն վերնաշապիկով մի տավրիկցի։ Պոդկովան օրորվեց, բայց վայր չընկավ։

— Տղե՛րք, կազակներին խփում են...

Աղայի դռնից, ոնց որ թևքի միջից, իրար խառնված կազակներն ու ամբողջ շրջաններով եկած տավրիկցիները դուրս թափվեցին բակը, որ լեփ-լեցուն էր սայլերով։

Տուրուդմբոցը սկսվեց գլխավոր մուտքի մոտ։ Դռները կոտրտվեցին վրա տվող մարմինների զոռից։ Պետրոն թողեց պարկը ու աղաղակելով, մանրաքայլ գնաց դեպի աղացը։ Դարյան կանգնեց սայլի վրա ու տեսավ. թե ինչպես Պետրոն նետվեց կռվողների մեջ՝ գետին գլորելով հանդիպածներին. Դարյան ճչաց, երբ Պետրոյին խփելով հասցրին մինչև պատը ու վայր գցեցին. տրորեցին ոտքերի տակ։ Մեքենայական բաժանմունքի անկյունից ոստոստալով վազում էր Միտկա Կորշունովը՝ թափահարելով ձեռքին բռնած երկաթե հեղույսը։

Հենց այն տավրիկցին, որը ետևից խփել էր Պոդկովային, դուրս թռավ կռվողների խմբից. նրա մեջքին զարկված թոչունի թևի նման երերվում էր կտրված վարդագույն թևքը։ Ցածր կռանալով, ձեռները գետնին քսելով, տավրիկցին վազեվազ հասավ հենց առաջին սայլին ու հեշտությամբ հանեց քեղին։ Աղացի բակը թնդում էր աղաղակող, խռպոտ ձայներից.

— Ա-ա-ա-ա՛...

— Հո՛-ու-ու-ո՛-ւ...

— Այ-ա՛-յա՛-ա՛-ա՛...

Շրմփոց։ Թրմփոց։ Տնքոց։ Շաչյուն...

Երեք եղբայր Շումիլինները վազեվազ եկան տանից։ Անթև Ալեքսեյը ընկավ դռան մոտ — ոտները խճճվեցին մեկի շպրտած երասանների մեջ. վեր թռավ, ցատկոտելով անցավ սայլերի իրար մոտիկ քեղիների վրայից՝ կտրված ձախ թևի դատարկ թևքը սեղմելով փորին։ Նրա եղբոր, Մարտինի շալվարի մի ծայրը դուրս ընկավ սպիտակ գուլպայի

միջից. կռացավ, ուզում էր ուղղել, բայց աղացի մոտ աղաղակ բարձրացավ։ Մեկի ճիչը թռավ աղացի թեք կտուրից էլ վեր, ոնց որ սարդոստայնի թռչող թելը։ Մարտինը շտկվեց ու վազեց Ալեքսեյին հասնելու։

Դարյան սայլի վրայից նայում էր շնչասպառ, մատները կոտրտելով. շուրջը ճչում, աղաղակում էին կնանիքը, անհանգստությամբ ականջներն էին շարժում ձիերը... սայլերին սեղմվելով՝ բառաչում էին եզները... Սփրթնած Սերգեյ Պլատոնովիչը, շրթունքները ճպճպացնելով, դես ու դեն էր ընկնում, բաճկոնակի տակին երերվում էր կլոր ձվի նմանվող նրա փորը։ Դարյան տեսավ, թե ինչպես պատառոտված վարդագույն վերնաշապիկով տավրիկցին քեղիով զարկեց ու վայր գցեց Միտկա Կորշունովին ու նույն վայրկյանին ընկավ մեջքի վրա՝ վայր գցելով կոտրված քեղին, իսկ նրան ոտնատակ արավ թևը կտրված Ալեքսեյը՝ սուզագնդիկի պես ծանր իր բռունցքը դեմ անելով նրա ծոծրակին։ Դարյայի աչքերի առաջ գույնզգույն լաթերի նման երևում ու չքանում էր տուրուդմբոցի մեկ այս, մեկ այն տեսարանը. նա առանց զարմանալու տեսավ, թե ինչպես Միտկա Կորշունովը շոքած վիճակում երկաթե բոլտով խփեց իր կողքից վազող Սերգեյ Պլատոնովիչին. սա բարձրացրեց ճոճվող ձեռները ու խեցգետնի նման ետ-ետ գնաց դեպի կշռատեղը, նրան ոտնատակ էին անում, գցում մեջքի վրա. Դարյան հիստերիկաբար քրքջում էր, ծիծաղելիս երերվում էին նրա ներկած հոնքերի սև աղեղները։ Նա կոտրեց խելագար ծիծաղը, երբ աչքերով հանդիպեց Պետրոյին. սա օրորվելով, դուրս թռավ դես ու դեն նետվող ու աղաղակող հոծ ամբոխի միջից ու արյուն թքելով՝ ընկավ սայլի տակ։ Դարյան ճչալով նետվեց նրա մոտ։ Խուտորից էլ վազեվազ գալիս էին կազակները մի-մի ցից վերցրած, մեկն էլ թափահարում էր փայտե կոթով երկաթե լինգը։ Տուրուդմբոցը հրեշավոր չափեր էր ընդունում։ Կռվում էին ո՛չ այնպես, ինչպես հարբած վիճակում, օղետան առաջ կամ բարեկենդանին տեղի ունեցող մուշտակովի ժամանակ։ Կշռատեղի դռան առաջ ընկել էր գլուխը պատռված երիտասարդ մի տավրիկցի. ոտները երկարացրել էր գետնի վրա, գլուխը կորել էր սև, մակարդվող արյան մեջ, մազերի արյունոտ փնջերը թափվել

էին երեսին. ինչպես երևում էր, նա մնաս բարով էր ասում հրապուրիչ, բերկրալից երկրին...

Ոչխարի հոտի պես իրար գլխի հավաքված տավրիկցիներին քշեցին հացահատիկ բերողների կացարանի կողմը։ Բանը վատ կվերջանար, եթե մի ծերուկ տավրիկցի գլխի չընկներ, թե ինչ պետք է անել. նետվելով կացարանը, նա վառարանից դուրս քաշեց վառված մի խանձող ու դռնից դուրս վազեց։ Աճապարեց դեպի մարագը, որտեղ պահվում էր աղունը, — ավելի քան հազար փութ հաց։ Նրա ետևից գալարվում էր գորշ ծուխը, թռչում էին ցերեկվա լույսի մեջ դժգույն կայծերը։

— Կրա-ա՜-ակ կգցեմ, հա-ա-ա՜, — կոկորդովը մեկ բոռաց նա՝ ճթճթացող խանձողը մոտեցնելով եղեգնե կտուրին։

Կազակները ընկրկեցին ու կանգ առան։ Ջոր, ուժեղ քամի էր փչում արևելքից՝ կացարանի կտուրից բարձրացող ծուխը տանելով իրար գլխի հավաքված տավրիկցիների կողմը։

Բավական էր որ մի խոշոր կայծ ընկներ կտուրի չոր, երկար ժամանակ պառկած եղեգների մեջ, ու խուտորը ծուխ կարձակեր...

Խուլ ու կարճ մի դժժոց շարժեց կազակների շարքերը։ Ոմանք ետ-ետ քայլեցին դեպի աղացը, իսկ տավրիկցին թափահարելով խանձողը, մուգ-կապույտ ծխի միջից հրեղեն կաթիլներ շաղ տալով, գոռում էր.

— Կվառե՛մ... կվա-ա-առե՛-եմ։ Հեռացեք բակից...

Յակով Պոդկովան, որի դեմքը այլանդակվել, շատ տեղերում կապուտակել էր և որը տուրուդմբոցի դրդիչն էր, առաջինը հեռացավ աղացի բակից։ Նրա ետևից հապճեպ ու արագ հեռացան կազակները։

Տավրիկցիները թողին պարկերը, ձիերը լծեցին բրիչկաներին ու դրանց վրա կանգնած, թափահարելով կաշվե երասանների կապուկները, մտրակելով ձիերին, դուրս եկան բակից ու դղրդալի սլացան փողոցով դեպի տափաստանը։

Թևը կտրած Ալեքսեյը բակի մեջտեղումն է. շապկի դատարկ, ծայրը կապած թևքը փոփոում է վտիտ փորի

վրա. մի աչքը և այտը, ինչպես միշտ, դողում են ջղաձգությունից։

— Չի՛ նստեք, կազակնե՛ր...

— Հասնե՛լ...

— Բլրակից ավելի հեռու չեն փախչի...

Միտկա Կորշունովը կողքի քայլելով՝ փորձեց բակից դուրս նետվել։ Արշավելու իրարանցումը վերստին ցնցեց, հուզեց աղացի մոտ հավաքված կազակներին, բայց այդ պահին մեքենայական բաժանմունքից արագաքայլ մոտեցավ մինչ այդ աննկատելի, անծանոթ, սև ու լայնեզր գլխարկով մի մարդ. իրար մոտիկ, սուր աչքերի սայրերն ուղղելով ամբոխին, նա բարձրացրեց ձեռքը։

— Սպասեցե՛ք։

— Դո՞ւ ով ես, — Պոդկովան կիտեց խաղացկուն հոնքերը։

— Ո՞րտեղից բուսար։

— Բռնի՛ր դրան...

— Պա՜-հ...

— Թյո՛ւ-ու-ու...

— Սպասեցե՛ք, հայրենակիցնե՛ր...

— Պոչատ շունն է քո հայրենակիցը։

— Մուժի՛կ։

— Քոսոտ յաբու։

— Տո՛ւր դրա սֆաթին, Յա՛շ։

— Հենց քիթ ու մռութին... քի՛թ ու մռութին...

Մարդը ժպտաց, շփելով, բայց առանց վախի, հանեց գլխարկը, անօրինակ պարզության մի ժեստով սրբեց ճակատը, ի վերջո ժպիտով զինաթափեց հավաքվածներին։

— Ի՞նչ է պատահել։ — Նա թափահարեց երկտակ ծալած գլխարկը՝ ցույց տալով կշռանոցի դռան առջևի սև, գետնի ծծած արյունը։

— Խախոլներին էինք ծեծում, — հանգիստ պատասխանեց թևը կտրված Ալեքսեյը և խաղացրեց թուշն ու աչքը։

— Բայց ինչի՞ համար էիք ծեծում։

— Հերթի համար։ Թող չխցկվեին առաջ, — բացատրեց Պոդկովան՝ մոտենալով ու թևի լայն շարժումով սրբելով քթատակի կարմիր փսլինքը։

— Ջե՛ն մոռանա այս օրը։

— Ախ, մի հասնե՛նք ետևներից... Տափաստանում կրակ չէին գցի։

— Վախեցանք, էլի, կարելի է չէր համարձակվի կրակ գցել։

— Հուսահատության մեջ մարդը կրակ էլ կգցեր, ոնց որ խմելու ջուր տաս։

— Այդ խախոլները սարսափելի բարկացկոտ են, — քմծիծաղ տվեց Աֆոյնկա Օզերովը։

Անծանոթը գլխարկով ցույց տվեց նրա կողմը։

— Իսկ դո՞ւ ով ես։

Օզերովը արհամարհանքով թքեց չեչոտ բերանի նեղացրած անցքից ու նայելով թքի թռիչքին, մի ոտը ետ դրեց։

— Ես հո կազակ եմ, իսկ դու գնչուներից չե՞ս։

— Ո՛չ։ Ես էլ դու էլ ռուսներ ենք։

— Սո՛ւտ ես խոսում, — շեշտելով ասաց Աֆոյնկան։

— Կազակները ռուսներից են առաջացել։ Դու այդ գիտե՞ս։

— Իսկ ես քեզ ասում եմ՝ կազակները կազակներից են առաջացել։

— Հնում կալվածատերերից փախչում էին ճորտերը, ապաստանում էին Դոնի ափերին, հենց դրանց էլ կազակներ անվանեցին։

— Դո՛ւ, աղբերացու, գնա քո ճամփով, — ուռած մատները սեղմելով ու բռունցք անելով, դուսպ ցասկոտությամբ խորհուրդ տվեց թևը կտրված Ալեքսեյը ու ավելի հաճախ թարթեց աչքերը։

— Խուժանը տեղ է գտել մեզ մոտ... Ի՛հ, մունտռի՛կ, ուզում է մեզ մուժիկներ դարձնել։

— Ո՞վ է դա։ Լսո՞ւմ ես, Աֆանասի։

— Եկել է մեր խուտորը, էլի։ Շլդիկ Լուկեշկայի մոտ բնակարան է վերցրել։

Հետապնդման պահը բաց էր թողնված։ Կազակները ցրվում էին՝ աշխույժ քննարկելով տեղի ունեցած ընդհարումը։

. . . . . .

. . . . . .

Գիշերը խուտորից ութ վերստ հեռու, տափաստանում, կոշտ, պինդ կապան քաշելով վրան, Գրիգորին թախծոտ ասաց Նատալյային.

— Դու ոնց որ օտար լինես... Դու նման ես այն լուսնյակին. ոչ մրսեցնում ես, ոչ տաքացնում։ Չե՞մ սիրում քեզ, Նատաշկա, մի բարկանա։ Չէի ուզում այս բանն ասել, ամա չէ, երևում է, որ այսպես ապրել չի լինի... Մեղքս գալիս է քեզ, այս օրերին ոնց որ թե պիտի մոտիկանայինք, ամա սրտիս մեջ բան չկա... Դատարկ է։ Ա՛յ, այս տափաստանի նման...

Նատալյան նայում էր վերև, աստղաշող, անմատչելի երկնքին, վերևում սահող ամպի ստվերոտ, ցնորական ծածկոցին ու լռում էր։ Այնտեղից, բարձր, սև-կապույտ ամայությունից արծաթե զանգակների նման կանչում էին ուշ չվող կռունկները։

Թախծալի, անկյանք բուրում էին չորացած խոտաբույսերը։ Հեռո՛ւ-հեռվում, բլրակի վրա առկայծում էր արտերը՝ վարողների վառած խարույկի կարմրավուն բոցը...

Լուսանալուց առաջ Գրիգորին արթնացավ։ Կապայի վրա երկու վերշոկ խորությամբ ձյուն էր իջել։ Թարմ ձյան առկայծուն, կուսական ծածկոցի տակ նեղվում էր տափաստանը, ու կայանի մոտ պարզ նշմարվում էին սահնակի առաջին ճանապարհով անցած նապաստակի հետքերը։

VI

Վաղուց ի վեր այսպես էր ընդունված. եթե Միլլերովո տանող ճանապարհով կազակը գնում էր մենակ, առանց ընկերների, ապա բավական էր, որ ուկրաինացիներին հանդիպելիս (նրանց գյուղերը սկսվում էին Նիժնե-Յաբլոնովսկի խուտորից, ու 75 վերստ տարածվում էին ընդհուպ մինչև Միլլերովո) ճանապարհ չտար նրանց, ուկրաինացիները ծեծում էին նրան։ Դրա համար էլ կազակները կայարան էին գնում մի քանի սայլ միասին, ու այդ դեպքում տափաստանում հանդիպելով ուկրաինացիներին, առանց վախենալու սկսում էին հայհոյել նրանց։

— Է՛յ, խախոլ, ճանապարհ տուր։ Կազակի հողում ես

տպրում, ա՛յ խուժան, ու դեռ չես է՞լ ուզում ճանապարհը զիջել։

Վատ էր լինում նաև այն ուկրաինացիների վիճակը, որոնք ցորեն էին բերում Դոնի պարամոնովյան հանձնման կայանը։ Այստեղ տուրուդմբոցները սկսվում էին առանց որևէ պատճառի, հենց միայն նրա համար, որ ցորենը բերողը «խախոլ» էր, իսկ եթե «խախոլ» էր, ուրեմն պետք էր խփել։

Հարյուրավոր տարիներ առաջ հոգատար մի ձեռք դասային երկպառակության սերմեր էր ցանել կազակական հողում, աճեցրել, զուրգուրանքով պահել էր դրանք, ու սերմերը փարթամ ծիլեր էին տվել. տուրուդմբոցների ժամանակ թափվում էր տերերի ու Վորոնեժի կողմերից եկածների՝ ռուսների և ուկրաինացիների արյունը։

Աղացում եղած կռվից երկու շաբաթ անց խուտոր ժամանեցին գավառակի պրիստավը և քննիչը։

Շտոկմանին առաջինը կանչեցին հարցաքննության։ Քննիչը, կազակ ազնվականների թվին պատկանող մի երիտասարդ չինովնիկ, պորտֆելը քրքրելով հարցրեց.

— Դուք ո՞րտեղ էիք ապրում մինչև այստեղ ժամանելը։

— Ռոստովում։

— Հազար ինը հարյուր յոթ թվականին ինչի՞ համար էիք բանտարկված։

Շտոկմանը ժանտաքիսի իր փայլող աչքերը հառեց պորտֆելին ու քննիչի թեքված գլխի շեղ, թեփոտ մազաբաժանին։

— Անկարգությունների համար։

— Ըհը՛մ... Այն ժամանակ ո՞րտեղ էիք աշխատում։

— Երկաթուղային արհեստանոցներում։

— Ձեր պրոֆեսիա՞ն։

— Փականագործ եմ։

— Դուք չհուդ չե՞ք։ Քրիստոնյա դարձած չե՞ք։

— Ոչ։ Ես կարծում եմ որ...

— Ինձ համար հետաքրքիր չէ գիտենալ, թե դուք ինչ եք կարծում։ Աքսորված եղե՞լ եք։

— Այո, եղել եմ։

Քննիչը գլուխը բարձրացրեց պորտֆելից, ծամծմեց մաքուր սափրված, բշտոտ շրթունքները։

— Ես ձեզ խորհուրդ եմ տալիս մեկնել այստեղից... — ու ինքն իրեն, — սակայն ես ինքս կհոգամ դրա մասին։

— Ինչո՞ւ, պարոն քննիչ։

Հարցին հետևեց հարցը.

— Աղացում եղած կռվի օրը դուք ինչի՞ մասին էիք զրուցում տեղական կազակների հետ։

— Իսկապես ասած...

— Դեհ, կարող եք գնալ։

Շտոկմանը դուրս ելավ Մոխովի տան պատշգամբը (իշխանավորները միշտ իջևանում էին Սերգեյ Պլատոնովիչի մոտ և ոչ թե իջևանում) և ուսերը թոթվելով, նայեց դեպի ետ, երկփեղկանի, ներկած դռանը։

VII

Ամեռը միանգամից չի՛ջավ։ Աստվածածնի տոնից հետո հալվեց եկած ձյունը, և անասունները նորից քշվեցին արածելու։ Մի շաբաթ փչում էր հարավային քամին, եղանակը, հողը տաքանում էին, տափաստանում աճում էր աշնանային վառ, մամռանման կանաչը։

Տաքությունը տևեց մինչև Միքայել հրեշտակապետի տոնը, հետո սկսվեցին ցրտերը, ձյուն տեղաց. ցուրտն օրը օրին սասկանում էր, էլի քառորդ արշինաչափ ձյուն եկավ, ու Դոնի առափնյա լքված բանջարանոցներում, մինչև կատարները ձյունի մեջ թաղված ցանկապատերի վրայով աղջկական զարդակար ժանյակի նման ձգվեցին նապաստակի հետքերի ոլոր-մոլոր կածանները։ Փողոցներն ամայացան։

Խուտորից քուլա-քուլա բարձրանում էր տարթի ծուխը, ճանապարհի կողքին թափված մոխրակույտերի մոտ պտույտ էին գալիս դեպի բնակարանները թռած սերմնագռավները։ Խուտորի միջով մուգ-կապույտ, խունացած ժապավենի նման ձգվեց սահնակի ծուռումուռ ճանապարհը։

Հավաքատեղում մի անգամ ժողովի էին հավաքվել. մոռանում էր ցախը բաժանելու և կտրելու ժամանակը։ Վարչության շենքի արտասանդուղքի մոտ խմբվում էին քուրքեր ու մուշտակներ հագած մարդիկ, ճռճռում էին թաղիքե ոտնամանները։ Ցուրտը նրանց բերել էր վարչություն։ Սեղանի շուրջը, ատամանի ու գրագրի կողքերին նստոտել էին արծաթափայլ մորուքներով պատվավոր ծերունիները, ավելի փոքրերը՝ տարբեր գույնի մորուքներով և անմորուք կազակները, հավաքվել էին իրար գլխի, խոսում էին ոչխարենու տաք օձիքների միջից։ Գրագիրը, թուղթը լցնում էր խիտ տողերով, ատամանը ուսի վրայով նայում էր նրան, իսկ վարչության ցուրտ սենյակով մեկ խուլ դժժում էին ձայները։

— Խոտը հիմի...

— Ա՛յ, հա՛... Մարգագետնի խոտը լավ կեր է, ամա տափաստանի խոտը հենց միայն էշի յոնջա է։

— Հնումը մեկ էլ տեսար տավարը արածեց մինչև ծննդյան տոները։

— Կալմիկների աչքը լույս։

— Ըհը-մ։

— Ատամանը գիլի յախա ունի հա՛-ա, հլա տե՛ս, գլուխքն էլ չի կարենում շուռ տա։

— Անիծվածը ոնց է հաստացրել վիզը, խոզ է դառել։

— Թյո՛ւ, խնամի, վախեցնո՞ւմ ես ձուն-ձմռանը։ Բա քո՛ւրքը, քո՛ւրքը...

— Դնչուն հիմի ծախած կլինի մուշտակը։

— Ջրօրհնեքին այդ գնչուները տափաստանում են գիշերում, ամա վրաները գցելու բան չունեն, ջուլ ու փալաս են հագնում, ցուրտը մտնում է մինչև աղիքները. մեկ էլ տեսար զարթնեց գնչուն, մատը խոթեց բարալիկ ոտնամանի մեջ ու դարձավ մորը. «Ո՛ւհ, մերրս, — ասում է, — ա՛մա թե ցուրտը զոռ է տալի, հա՛-ա...»

— Աստված չանի գետինը սառցակալի։

— Որ այդպես լինի, եզները պիտի նալես։

— Անցած օրը Սատանի ձորումը սպիտակ ուռ էի կըտրում, լավն է։

— Ձախար, շալվարդ կոճկիր, է՛... Կմրսեցնես, կնիկդ տնից դուրս կանի։

— Հը՛, Ավդեիչ, դո՞ւ ես գիրացնում հասարակական բուդան։

— Ջուզեցի։ Պարանկա Մրիխինան իրեն վրա վերցրեց...

Ծ՞ս, ասում է, այրի կնիկ եմ, ավելի ուրախ կլինի։ Տի՛ր եղիր, ասում եմ, բայց որ հորթ ծնվի՞...

— Ը-հա՛-ա՛-հա՛։

— Ի՞-հի-հի-հա՛...

— Պարո՛ն ծերուկներ, ցախի բանը ո՞նց կլինի... Կամա՛ց, է՛...

— Իսկ երբ որ հորթ-մորթ ծնվեց, — ասում եմ, — ուրեմս ես քավոր եմ, հա՛-ա...

— Կամաց, խոնարհաբար խնդրում ենք։

Ժողովը սկսվեց։ Ատամանը շփելով տաքությունից թացացած գավազանը, ասում էր ժողովականների աղդանունները, բերանից գոլորշի էր արձակում, ճկույթով պոկում մորուքին կպած սառցի լուլանները։ Հետևում, շրխկոցով բացվող ու ծածկվող դռան մոտ — գոլորշի, հրմշտոց, բարձրաձայն խնչոցներ։

— Ցախ կտրելը չի կարելի նշանակել հինգշաբթի օրը, — աշխատում էր ատամանից ավելի բարձր բղավել Իվան Տամիլինը և շփում էր կարմրած ականջները՝ թեքելով հրետանային կապույտ գլխարկ դրած գլուխը։

— Ո՞նց թե։

— Ականջներդ կկտրես, ա՛յ թուփչի։

— Մենք դրան եզի ականջներ կկպցնենք։

— Հինգշաբթի օրը խուտորի կեսը կերթա ձիերի արածատեղը՝ խոտ բերելու։ Ամա թե բան եք մտածել...

— Կիրակվանից կերթաս, էլի՛։

— Պարո՛ն ծերուկներ...

— Ի՞նչ է որ, է՛։

— Բարի հաջողո՛ւմ։

— Ո՛ւհ-ո՛ւ-ու-ո՛ւ...

— Օ-հո՛-օ-օ՛-օ՛...

— Ա՛-հա՛-ա-ա-ա՛...

Ծերունի Մատվեյ Կաշուլինը, կռանալով խախուտ սեղանի վրայից, տաքացած ճղճղում էր, հացենու կոկլիկ հենակը թփթփացնում Տամիլինի կողմը։

— Խոտի համար կսպա՛սես, հա՛... Ոնց որ հասարակությունը ուզի, այնպես էլ կլինի... Դու միշտ էլ հակառակ

ես կանգնում։ Ջահել ես, սարսաղ ես, աղբերացու... Հա՛... Մի դրա՛ն մտիկ է՛...

— Դու ինքդ մինչև ծերանալդ էլ խելքդ դրկիցներից ես փոխ առնում... — հետին շարքերից գլուխը բարձրացնելով՝ բղավեց թեր կտրած Ալեքսեյը, սկսեց արագ-արագ թարթել աչքը, ջղաձգաբար ցնցել ծակ թուշը։

Նա ծերունի Կաշուլինի հետ վեց տարի թշնամություն էր անում մի կտոր վարելահողի համար։ Ամեն գարուն ծեծում էր նրան, իսկ Մատվեյ Կաշուլինը նրանից ընդամենը կես թզաչափ հող էր զավթել, — թքեիր, թուքդ այդ հողից դենը կթուչեր։

— Ձենդ կտրի, ընկնավո՛ր։

— Ափսոս հեռու ես, ձեռս չի հասնում, թե չէ այնպես կհասցնեի սֆաթիդ, որ քթիցդ կարմիր խլինք կթափվեր։

— Կորի գնա, ա՛չքդ ճպճպացրու, ծոթաթ...

— Սո՛ւս, է՛, ի՛նչ եք իրար կպել...

— Գնացեք բակը, այնտեղ իրար միս կերեք։ Փիա՛։

— Թող, Ալեքսեյ, տեսնո՞ւմ ես, բիձան կուչ է եկել, փափախը գլխին դողում է։

— Բա նա ինչո՞ւ...

— Էգուց նրան կսխկես, իսկ հիմի սուս արա։

— Ովքեր զալմաղալ են անում, նրանց բանտարկե՛լ...

Ատամանը բռունցքը զարկեց ճոճռան սեղանին։

— Հիմի կկանչե՛մ հերթապահներին։ Լռե՛լ...

Դժժոցը մեղմացավ, անցավ հետին շարքերը ու լռեց։

— Հինգշաբթի օրը, հենց որ լուսացավ, կգնաք ցախ կտրելու։

— Դուք ի՞նչ կասեք, պարոն ծերուկներ։

— Բարի հաջողում լինի։

— Տա՛ աստված։

— Հիմա ալևորներին այնքան էլ չեն լսում...

— Մի վախի՛, կլսեն։ Բա չե՞նք կարող նրանց հախիցը գալ։ Իմ Ալեքսաշկան, երբ որ նրան բաժանեցին, փորձեց կռիվ սարքել, ինձ գետին գցել։ Ես նրան մի լավ թակեցի։ «Հենց հիմի կհայտնեմ ատամանին ու մեծամեծներին, գլուխդ կջարդենք...» Խելոքացավ, պառկեց ոնց որ խոտի ցողունը հալչող ջրի տակ։

— Հա՛, մի բան էլ, պարոն ծերուկներ, ստանիցայի ատամանից կարգադրություն է ստացվել, — ատամանը ձայնը փոխեց ու պտտեց գլուխը. համազգեստի կանգնած օձիքը բարձրացնելով կպակը, խրվել էր վզի մեջ, — որ այս շաբաթ օրը երիտասարդները գնան ստանիցա՝ պինվորական երդում տալու։ Իրիկնադեմին պետք է լինեն ստանիցայի վարչության շենքի առաջ։

Դոնը մոտիկ պատուհանի առաջ Պանտելեյ Պրակոֆևիչը ֆոունկի նման վեր քաշելով կաղ ոտը, կանգնել էր իր խնամու կողքին։ Միրոն Գրիգորևիչը չկոճկած քուրքով նստել էր պատուհանի գոգին, ժպտում էր դարչնագույն մորուքի տակին։ Կարճ, շեկ արևանունքները ծածկվել էին եղյամով, կինամոնագույն, խոշոր պեպենները ցրտից արյունակալել, գորշացել էին։ Նրանց կողքին, միմյանց աչքով անելով, ժպտալով, խոնվում էին ավելի ջահել կազակները, իսկ սենյակի մեջտեղում, կապույտ բոլորքով ու արծաթե խաչով ատամանական փափախը տափակ, մերկ ծոծրակին քաշած, ոտնաթաթերի վրա ճոճվում էր Պանտելեյ Պրակոֆևիչի հասակակից, չծերացող, անտոնովկա խնձորի նման միշտ կարմրաթուշ Ավդեիչը՝ «Փչան» մականունով։

Ավդեիչը մի ժամանակ ծառայել էր լեյբ-գվարդիայի Ատամանյան գնդում։ Ծառայության էր գնացել Սինիլին ազգանունով ու վերադարձել... Փչան մականունով։

Խուտորից նա առաջինն էր ընկել Ատամանյան գունդը, ու տարօրինակ բախտ էր վիճակվել այդ կազակին. նա մեծանում էր ինչպես և բոլորը. փոքր հասակից էլ մի քիչ սարսաղ էր, իսկ ծառայությունից վերադառնալով, ցած էր գլորվում ոնց որ անիվը սարից։ Հենց որ վերադարձավ, առաջին իսկ օրվանից սկսեց տարօրինակ բաներ պատմել ցարի պալատում կատարած իր ծառայության և Պետերբուրգում իր ունեցած ամենաարտառոց արկածների մասին։ Շշմած ունկընդիրները սկզբում հավատում էին, բերանները բանալով ընդունում նրա պատմածն իբրև իրողություն, բայց հետո պարզվեց, որ Ավդեիչը ստախոս է և խուտորը նրա նմանը չի տեսել իր հիմնվելու օրից. նրա վրա բացահայտ կերպով ծիծաղում էին, բայց նա, իր հրեշավոր ստերի մեջ բռնված լինելով, չէր կարմրում (գուցե և կարմրում էր, բայց մշտապես կարմրատակած դեմքի վրա այդ չէր նկատվում) ու շարունակում էր փչել։ Ծերանալով, բոլորովին ցնդվեց։ Սուտը բռնում են,— նեղանում է, կովել է փորձում, իսկ երբ լռում են, քմծիծաղ է տալիս,— բաց է անում ստի տոպրակը, չի նկատում ծաղրանքը։

Տնտեսության մեջ գործունյա և աշխատող կազակ էր, ամեն ինչ խելացի կերպով էր անում, մեկ-մեկ էլ խորամանկություն էր բանեցնում, իսկ երբ խոսակցությունը շոշափում էր Ատամանյան գնդում նրա կատարած ծառայությունը... այստեղ արդեն ամեն ոք արմանք-զարմանք էր կտրում, ծիծաղից նվաղելով՝ պպզում գետնին։

Ավդեիչը կանգնել էր սենյակի մեջտեղում, ճոճվում էր թաղիքե կիսամաշ կոշիկներ հագած ոտների վրա. նայելով հավաքված կազակներին, թավ ձայնով ու ծանրակշիռ ասում էր.

— Հիմի կազակը բոլորովին փոխվել է. մանր է կազակը ու բանի պետք չի։ Ամեն մեկին թքվող զարկես՝ երկու կես կանես։ Այսպես, մի խոսքով,— ու արհամարհաբար ժպտալով, թաղիքե ոտնամանը քսում էր հատակին գցած թքին,— Վեշենսկայա ստանիցայում ես տեսել եմ մեռելների կմաղքներ, ա՛յ թե ինչ տեսակ կազակություն է եղել, հա՛-ա...

— Բա դրանք ո՞րտեղից էիր հանել, Ավդեիչ,— հարցրեց անմորուք Անիկուշկան՝ արմունկով բոթելով հարևանին։

— Դու, ծառայակից, ի սեր մոտիկ տոնի մի՛ փչի։

Պանտելեյ Պրակոֆևիչը կնճռոտեց սապատավոր քիթը ու ճոճեց ականջի օղը։

Նա ստախոսին չէր սիրում։

— Ես, աղբեր, կյանքումս սուտ չեմ ասել,— շեշտեց Ավդեիչը ու զարմանքով նայեց Անիկուշկային, որը ցնցվում էր ծիծաղից ոնց որ դողէրոցքից,— հա; տեսել եմ մեռելների ոսկորները, երբ տուն էին շինում աներձագիս համար։ Սկսեցին հիմքը գցել, բաց արին մի գերեզման։ Ուրեմս, հընոմը այստեղ, Դոնի մոտ, եկեղեցու կողքին գերեզմանատներ էլ են եղել։

— Է՛հ, ի՞նչ ոսկորներ էին,— դժգոհ հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ պատրաստվելով գնալու։

— Ձեռքը ա՛յ այսպես,— Ավդեիչը տարածեց փոցխա-

նման ձեռները,— գլուխը — աստված վկա սուտ չեմ ասում— ոնց որ փթանոց ձմերուկ։

— Դո՛ւ, Ավդեիչ, ավելի լավ է ջահելներին պատմեիր, թե Սանկտ-Պետերբուրգում ոնց ես ավազակ բռնել,— առաջարկեց Միրոն Գրիգորևիչը՝ կոճկելով քուրքը։

— Դեհ, պատմելու ի՞նչ կա որ,— ծոկթեց Ավդեիչը։

— Պատմի՛ր, էլի՛։

— Խնդրո՛ւմ ենք։

— Պատիվ արա, Ավդեիչ։

— Հա, այդ բանը, գիտե՛ս, ոնց պատահեց,— Ավդեիչը հագալով մաքրեց կոկորդը ու շալվարից հանեց թութունի պարկը։ Սեղմած բռի մեջ մի պտղունց թութուն լցնելով, պարկի մեջ գցեց այնտեղից ընկած երկու պղնձադրամ, ուրախ աչքերով նայեց ունկնդիրներին։— Բերդից փախել էր մի բռնավոր շարագործ։ Այստեղ ու այնտեղ փնտրեցին,— չկա ու չկա։ Ամբողջ իշխանությունը հալից ընկել էր։ Չարագործը բոլորովին կորել էր, ու պրծավ-գնաց։ Գիշերը ինձ կանչում է պահակապետ սպան, գալիս եմ... հա՛-ա... «Գնա,— ասում է,— նորին կայսերական մեծության ընդունարանը, քեզ... ինքը թագավոր կայսրն է պահանջում»։ Ես, իհարկե, վախեցա, ներս եմ մտնում։ Ճակատ կանգնեցի, իսկ նա, ողորմած թագավորը, ձեռքով թփթփացրեց ուսիս և ասում է՝ «Ահա թե ինչ, Իվան Ավդեիչ,— ասում է,— փախել է մեր կայսրության ամենամեծ շարագործը։ Թեկուզ գետնի տակն անցիր, միայն թե գտիր, թե չէ աչքիս չերևաս»։— «Լսում եմ, ձերդ կայսերական մեծություն»,— ասացի։ Հա՛-ա՛... աղբորս ասեմ, բանս բուրդ էր... Թագավորական ախոռից վերցրի երեք հատ ամենաառաջին ձիերը ու մա՛րշ-մա՛րշ։— Ավդեիչը, վառելով թութունը, նայեց ունկնդիրների ցած ընկած գլուխներին, ոգևորվելով, շարունակեց ծխի ամպի միջից, որ պատել էր նրա դեմքը։— Թռչում եմ ցերեկը, թռչում եմ գիշերը։ Երրորդ օրը Մոսկվայի մատ հասա շարագործին։ Նրան, այդ աղունիկին գցում եմ կառեթի մեջ ու նույն ճամփով ետ եմ դառնում։ Տեղ եմ հասնում կեսգիշերին, կեղտի մեջ կորած, ու գնում եմ հենց թագավորի մոտ։ Է՛լ իշխաններ, է՛լ կոմսեր, դրանք կտրում՝ ևն ճամփաս չեն թողնում, իսկ ես գնում եմ։ Հա՛... ծեծում

եմ դուռը։ «Թույլ տվեք ներս մտնել, ձերդ կայսերական մեծություն»։— «Այդ ո՞վ է, հը՞»,— հարցնում է նա։ «Ես եմ,— ասացի,— Իվան Ավդեիչ Սինիլինը»։ Այնտեղ իրարանցում սկսվեց, լսում եմ, հենց ինքը բղավում է՝ «Մարե՛յա Ֆեդորովնա, Մարի՛յա Ֆեդորովնա, վեր կաց, շուտ, սամավարը գցիր, Իվան Ավդեիչը եկել է»։

Հետին շարքերում որոտի նման պայթեց ծիծաղը։ Գրագիրը, որ հայտարարություններ էր կարդում կորած ու տուն չեկած անասունների մասին, կանգ առավ «ձախ ոտը մինչև կոճիկը փրչոտ է» ֆրազի վրա։ Ատամանը որձ սագի նման երկարացրեց վիզը՝ նայելով ծիծաղից ալեկոծվող ամբոխին։

Ավդեիչը տեղից շարժեց փափախը, մոայլվեց ու շփոթված նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին։

— Սպասեցե՛ք։

— Օ՞-հա՛-հա՛-հա...

— Օ՛խ գը-բո-ղի՛ տա-բա՛ած...

— Ի՛հ-հի-ի-ի-ի...

— Ավդեիչ, գլուխդ մեռնի, օ՞-հա-հա-հա...

— Հա, «սամավար գցիր։ Ավդեիչը եկել է»։ Ը՛հը՛-մ։

Ժողովը սկսեց ցրվել։ Երկար, անընդհատ ճռճռում էին արտաքին սանդուղքի տախտակե սառած աստիճանները։ Վարչության շենքի առաջ, կոխոտված ձյան վրա տաքանալու համար ըմբշամարտում էին Ստեփան Աստախովը և բարձրահասակ, բարձրասրունք մի կազակ՝ հոլլանդական հողմաղացի տերը։

— Այդ աղացպանին գլխի վրայից բռնացրու,— խորհուրդ էին տալիս նրանց շրջապատած կազակները։— Դրա փոը ու փսորը թափիր, Ստյոպկա։

— Դու աճուկից մի՛ բռնի։ Խորամանկություն մի անի, է՛յ,— ճնճղուկի նման մոտ ցատկելով ասաց ծերուկ Կաշուլինը և ըմբշամարտով տարված, չէր նկատում ահագին, պարզ կաթիլը, որ անհամարձակ կախվել էր իր կապուտակ քթի ծայրից։

VIII

Պանտելեյ Պրակոֆևիչը վերադարձավ ժողովից և ուղղակի անցավ այն սենյակը, որ գրավում էին ինքն ու պառավը։ Իլյինիչնան այդ օրերին հիվանդ էր։ Նրա դժգույն, ուռած երեսին հոգնածություն ու ցավ էր երևում։ Նա պառկել էր հաստ, փետուրե դոշակի վրա, մեջքը դրել դիք դրված բարձին։ Լսելով իրեն ծանոթ քայլերի ձայնը, գլուխը շուռ տվեց, վաղուց ի վեր իր դեմքի վրա արտահայտվող խստությամբ նայեց ամուսնուն, հայացքը հառեց մորուքի գանգուրներին, որոնք շնչառությունից թրջվել էին ու շրջապատել Պրակոֆևիչի բերանը, կախ ընկած, մորուքին կպած խոնավ բեղերին, ու շարժեց ոունգները,— հոտ քաշեց, բայց ծերուկից սառնություն և ոչխարենու թթվաշ հոտ էր փչում։ «Այսօր չի խմել»,— մտածեց Իլյինիչնան ու գոհ լինելով, կրունկը դեռ չգործած գուլպան ու մլերը դրեց իր ուռած փորին։

— Ցախ կտրելը ո՞նց կլինի։

— Նշանակեցին հինգշաբթի օրը։— Պրակոֆևիչը շփեց բեղերը։— Հինգշաբթի օրը, առավոտից,— կրկնեց նա՝ նստելով մահճակալի կողքին սնդուկի վրա։— Ո՞նց է, հը՞։ Չի՞ թեթևանում ցավը։

Իլյինիչնայի դեմքի վրա ստվերի պես նստեց ինքնամփոփությունը։

— Էլի այնպես է... ծակվում, ջարդվում են հոդերս...

— Քեզ ասում էի, անխելք, ախր աշուն է, ջուրը մի մտնի։ Գիտես, որ գլխիդ փորձանք կգա, էլ ինչո՞ւ ես համառում,— տաքացավ Պրակոֆևիչը՝ հենակով լայն շրջաններ գծելով հատակի վրա։— Թե՞ քիչ կնանիք կան։ Երիցս անիծված լինի քո այդ կանեփը. թրջեցիր, իսկ հիմի... է՜-է, մեղա քեզ, տեր...

— Կանեփն էլ չպիտի կորչի։ Կնանիք չկային, Գրիշկան իրեն կնկա հետ վար էր անում, Պետրոն ու Դարյան էլ ուրիշ տեղ էին գնացել։

Ծերունին փչելով իրար միացրած բուերի մեջ, թեքվեց մահճակալին։

— Նատաշկան ո՞նց է։

Իլյինիչնան աշխուժացավ, նկատելի անհանգստությամբ ասաց.

— Չգիտեմ՝ ինչ անեմ։ Անցած օրը էլի լաց էր լինում։ Դուրս ելա բակը, մտիկ արի,— մեկը բաց է արել ամբարի դուռը։ Գնամ, փակեմ,— մտածեցի հա։ Ներս մտա, իսկ նա կանգնած է կորեկի արկղի մոտ։ Ես նրան ասում եմ՝ «Ի՞նչ է, այդ ի՞նչ է պատահել, սիրունիկս»։ Նա թե՝ «Գլուխս մի քիչ ցավում է, մայրիկ ջան»։ Է՜հ, դուզ կասի՞ որ։

— Կարելի է ցա՞վ ունի։

— Չէ՜, հարց ու փորձ եմ արել... կամ մի բան է խարաբ, Նղել, կամ էլ Գրիշկայի հետ...

— Գրիշկան էլի հո չի կպչում... այն մյուսին։

— Ի՞նչ ես ասում, մարդ, քա ի՞նչ ես ասում,— Իլյինիչնան ձեռները վախենալով իրար խփեց,— բա Ստեփանը հո հիմար չի։ Չե՛մ նկատել, չէ՜։

Ծերունին մի քիչ նստեց ու դուրս ելավ։ Գրիգորին իր օթախում խարտոցով սրում էր ձկնորսական սարքերի կեռերը։ Նատալյան դրանց խոզի հալած ճարպ էր քսում, յուրաքանչյուրը խնամքով փաթաթում առանձին փալասով։ Պանտելեյ Պրակոֆևիչը կաղ-կաղ անցնելով նրանց կողքից, խորազնին նայեց Նատալյային։ Վերջինիս դեղնած այտերին ինչպես աշնան տերևների վրա՝ կարմիր բծեր կային... Նատալյան զգալիորեն նիհարել էր այդ ամսում, աչքերում ինչոր մի նոր, ցավոտ արտահայտություն էր առաջացել։ Ծերունին կանգ առավ դռան շեմքին։ «Է՜, հալումաշ է արել կրնկանը»,— մտածեց նա, մի անգամ էլ նայեց Նատալյայի կոկիկ սանրված գլխին, որ թեքվել էր նստարանի վրա։

Գրիգորին նստել էր պատուհանի մոտ՝ բանեցնելով խարտոցը. նրա ճակատին թռչկոտում էր մազերի սև, խճճված փունջը։

— Դեն գցիր, է՜, գրո՜ղը տանի,— իր մեջ առաջացած կատաղությունից կարմրելով, գոռաց ծերունին ու սեղմեց հենակը, զսպեց իրեն։

Գրիգորին ցնցվեց, աչքերը տարակուսանքով բարձրացրեց Հոր վրա։

— Ուզում էի այս երկու կեռերի ծայրերն էլ սրել, ապի։

— Քեզ հրամայում եմ դե՛ն գցել։ Ցախ կտրելո՛ւ պատրաստվիր։

— Լավ, հիմի։

— Սահնակի վրա մի հատ էլ չիվի չկա, իսկ նա կեռերով է զբաղվում,— արդեն հանդիստ ասաց ծերունին ու դռան մոտ մի քիչ էլ կանգնելով (ինչպես երևում է, ուզում էր էլի՛ ինչ-որ բան ասել), դուրս ելավ։ Բարկության մնացորդը թափեց Պետրոյի վրա։

Հագնելով կիսամուշտակը, Գրիգորին լսում էր, թե ինչպես հայրը գոռում է բակում.

— Անասունները մինչև հիմի ջրված չեն, ինչի՞ ես նրատել, ա՛յ անպետք, ինչի՞... Իսկ ցանկապատի կողքի դեղը ո՞վ է քանդել, հը՞։ Ո՞ւմ եմ ասել, որ ծայրի դեղին ձեռք չտան, հը՞... Ամենալավ խոտը ծախսում եք, անիծվածներ, իսկ գարնանը, վարի ժամանակ, եզներին ի՞նչ պիտի կերցնես...

Հինգշաբթի օրը, լուսաբացից երկու ժամ առաջ, Իլյինիչնան արթնացրեց Դարյային։

— Վե՛ր կաց, վառարանը վառելու ժամանակն է։

Դարյան միայն շապկով մոտեցավ վառարանին։ Խցիկում փնտրեց ու գտավ լուցկին, կրակ վառեց։

— Շուտ եփիր, հա,— շտապեցրեց կնոջը գզգզված մազերով Պետրոն՝ ծխելով ու հազալով։

— Նատաշկային հո ափսոսում են զարթեցնել, շնթռկել է անզգամը։ Ինչ է, ես քանի՞ կտոր պիտի լինեմ,— քրթմնջում էր քնկոտությունից բարկացած Դարյան։

— Գնա, զարթեցրու,— խորհուրդ տվեց Պետրոն։

Նատալյան ինքը վեր կացավ։ Կոֆտան գցելով վրան, գնաց դոմը՝ տարթ բերելու։

— Խուշո՛ւր բեր,— հրամայեց մեծ հարսը։

— Դունյաշկային ուղարկիր ջրի, լսո՞ւմ ես, Դաշկա,— խոհանոցում դժվարությամբ շարժելով ոտները, խռպոտ ասաց Իլյինիչնան։

Խոհանոցում թարմ գայլուկի, կաշվե ձիասարքի, մարդկային մարմինների ջերմության հոտ էր զգացվում։ Դարյան դես-դեն է վազում, քստքստացնում թաղիքե ոտնամանները, շրխկացնում չուգունե ամանները։ Վարդագույն շապկի

տակ, որի թևքերը քշտել էր մինչև արմունկները, երևում էին փոքրիկ ստինքները։ Ամուսնական կյանքը չէր թառամեցրել, չէր թոշնեցրել նրան, լինելով բարձրահասակ, բարակ, կարմիր ուռի պես ճկուն իրանով, նա աղջկա էր նմանվում։ Քայլում էր շորորալով, ուսերի շարժումներով. ամուսնու կանչերին քմծիծաղով էր պատասխանում. բարկացկոտ շուրթերի բարակ գծերի տակից փայլում էին մանր, խիտ ատամները։

— Տարթերը իրիկվանից պետք էր դնել վառարանի մեջ, հիմի չորացած կլինեին,— դժգոհ քրթմնջում էր Իլյինիչնան։

— Մոռացել էի, մայրիկ։ Մեր մեղքն է,— բոլորի փոխարեն պատասխանեց Դարյան։

Երբ կերակուրը պատրաստ էր, լուսացավ։ Պանտելեյ Պրակոֆիևիչը ջրիկ կաշայով բերանը վառելով, շտապում էր նախաճաշել։ Նոթերը կիտած Գրիգորին ծամում էր դանդաղ, շարժելով այտոսկրների ուռուցքները։ Պետրոն կատակի էր տվել՝ հորից աննկատելի տնազ անելով Դունյաշկային, որը ատամի ցավից կապել էր թուշը։

Խուտորովը մեկ ճռճռում էին սահնակների հիմնաձողերը։ Լուսաբացի գորշ աղջամուղջում դեպի Դոն էին գնում եզան սայլերը։ Գրիգորին ու Պետրոն դուրս ելան եզները լծելու։ Քայլելիս վզին փաթաթելով փափուկ շարֆը,— հարևանցուի նվերը փեսացուին,— Գրիգորին կլանում էր ցուրտն ու չոր օդը։ Մի ագռավ, թռչելով բակի վերևից, կոկորդային լիահնչուն կռնչոց արձակեց։ Սառնամանիքային օդում պարզ լսվում էր դանդաղ թափահարվող թևերի շփշփոցը։ Պետրոն հետևեց թռիչքին, ասաց.

— Դեպի հարավ, տաք տեղեր է թռչում։

Աղջկա ժպիտի նման ուրախ, վարդագույն մի ամպիկի տակից երկնքում շողում էր լուսնի բարա՛կ, բարակ ծայրը։ Մի ծխնելոյզից ծառս էր լինում ծուխը ու գալարվելով բարձրանում դեպի նորալուսնի անմատչելիորեն հեռավոր, ոսկեհուր, սրված սայրը։

Մելեխովների տան դիմաց Դոնը չէր սառել։ Եզրերին ամրացել էր կանաչավուն, ձյունապատ սառույցը, դրա տակին պղպջում, փրփրում էր հոսանքի հետ չընթացող ջուրը, իսկ մեջտեղից դենը, ձախ ափին մոտիկ, ուր սև զառիթափից աղբյուրներ էին բխում, սևին էր տալիս ահավոր,

զարդանդ բերող, ձյունաշիրտերով շրջապատված և բաց ջուրը· դրա վրա սև բծերի նման լողում էին ձմեռելու համար մնացած վայրի բադերը։

Սահնակներն անցան հրապարակից։

Պանտելեյ Պրակոֆևիչը չսպասելով որդիներին, առաջինը ճանապարհվեց պառաված եղներով, Պետրոն ու Գրիգորին մի քիչ ետ մնալով, մեկնեցին նրա ետևից։ Զառիվայրի գլխին հասան Անիկուշկային։ Բոլորովին նոր կոթով կացինը սահնակի կողին խփած, կանաչ լաթագոտի կապած, Անիկուշկան քայլում էր եղների կողքից։ Նրա կարճահասակ, հիվանդոտ կինը քշում էր եղները։ Պետրոն դեռ հեռվից բղավեց.

— Հարևան, այդ ի՞նչ է, կնկանդ է՞լ ես տանում քեզ հետ։

Ծիծաղկոտ Անիկուշկան ցատկոտելով մոտեցավ սահնակին·

— Տանում եմ, տանում եմ։ Տաքանալու համար։

— Նրանից ի՞նչ տաքություն, շատ լղար է։

— Վարսակ եմ կերցնում, ամա էլի չի շաղանում։

— Մենք մի տե՞ղ պիտի ցախ կտրենք,— հարցրեց Գրիգորին՝ վար թռչելով իր սահնակից։

— Մի տեղ, եթե թութուն տաս։

— Անիկեյ, դու միշտ ուրիշի թութունն ես քաշում։

— Գողացածը ու խնդրածը ամեն բանից քաղցր է,— վրա բերեց Անիկուշկան՝ կանացի մերկ դեմքին փայլեցնելով ժպիտը։

Միասին շարունակեցին ճանապարհը։ Անտառում, ուր ծառերը ժանյականման եղյամ էին հագել, համատարած ճերմակություն էր։ Անիկուշկան առջևից էր գնում, մտրակով խփում ճանապարհի վերևից կախված ճյուղերին։ Ցոր, փրփրուն ձյունը առատորեն թափվում էր քուրքով փաթաթված նրա կնոջ վրա։

— Դե բո՛լ եղավ, գրո՛ղն երեսդ, է՛— բղավում էր կինը՝ վրայից թափ տալով ձյունը։

— Դու դրա գլուխը ձյան մեջ թաղիր,— ասաց Պետրոն, փորձեց մտրակով խփել եղան փորի տակից՝ արագ ընթանալու համար։

Երբ շուռ եկան դեպի Կնկա ձորը, հանդիպեցին Ստեփան Աստախովին։ Սա լուծը արձակած եղները քշում էր դեպի խուտորը, քայլում էր թևերը թափ տալով, ճռճռացնում տակից ներբաններ խփած թաղյակները։ Ոռած փափախի տակից խալոդի սպիտակ ողկույզի նման կախվել էր նրա փերշոտ, զզկված քյաքուլը։

— Է՛յ, Ստյոպա, ճամփեն կորցրե՞լ ես,— հասնելով նրան, հարցրեց Անիկուշկան։

— Կորցրել եմ, գրո՛ղը տանի... Սահնակը գլորվեց ու զարկվեց մի քոթուկի, կողը ջարդվեց։ Ետ դարձա։— Ստեփանն ավելացրեց փողոցային մի խոսք ու անցավ Պետրոյի կողքից՝ փայլուն ու ավազակաբարո աչքերը երկար թարթիչների տակից լկտիաբար հառելով նրա վրա։

— Սահնակը թողե՞լ ես,— ետ նայելով հարցրեց Անիկուշկան։

Ստեփանը ձեռքով արավ, մտրակեց ճամփից շեղված եղներին ու երկար հայացքով ուղեկցեց Գրիգորիին, որը քայլում էր սահնակի ետևից։ Առաջին ձորակի մոտ Գրիգորին տեսավ ճամփի վրա ընկած սահնակը, դրա կողքին կանգնել էր Ակսինյան։ Ձախ ձեռքով տեղական մուշտակի փեշը բռնած՝ Ակսինյան նայում էր ճանապարհին, եկող սայլերին։

— Դեն գնա, թե չէ ոտնատակ կանեմ։ Ա՛խ դու, ուրիշի կնիկ,— խրխնջաց Անիկուշկան։

Ակսինյան ժպտալով մի կողմ քաշվեց, նստեց թեք ընկած, կողը ջարդված սահնակին։

— Հրե՛ն քո կնիկը նստած է քեզ հետ։

— Կպել է ոնց որ փուշը խոզի պոչին, թե չէ ես քե՛զ կտանեի։

— Շնորհակալ եմ։

Պետրոն հասնելով Ակսինյային, աչքի տակով նայեց Գրիգորիին, որ վերջինն էր գնում, Գրիգորին քայլում էր անհանգիստ ժպտալով. նրա յուրաքանչյուր շարժումը տագնապ ու ակնկալություն էր արտահայտում։

— Բարև, հարևանուհի, ո՞նց ես,— ասաց Պետրոն՝ ձեռքը տանելով փափախին։

— Փա՛ռք աստծու։

— Սահնակը ջարդվե՞լ է, հը՞։

— Ջարդվել է,— ձայնը երկարացնելով պատասխանեց Ակսինյան առանց Պետրոյին նայելու, ու վեր կացավ՝ դառնալով դեպի մոտեցող Գրիգորիին։

— Գրիգորի Պանտելեիչ, ձեզ բան եմ ասելու...

Գրիգորին շուռ եկավ նրա կողմը, ասաց հեռացող Պետրոյին.

— Մտիկ տուր իմ եղներին։

— Այ-հո՛ւ,— կեղտոտ քմծիծաղ տվեց Պետրոն՝ թուքունի ծխից դառնացած բերդի ծայրը տանելով բերանը։

Նրանք կանգնած էին իրար դիմաց, լռում էին։ Ակսինյան անհանգիստ նայում էր իր շուրջը, ապա խոնավ, սև աչքերն ուղղում Գրիգորիին։ Ամոթը և ուրախությունը խարկում էին նրա թշերը, շորացնում պռոշները։ Շնչելիս նա կարճ, արագ հոդոցներ էր հանում։

Անիկուշկայի ու Պետրոյի սահնակները չքացան դարշնագույն կաղնուտի ետևում։ Գրիգորին դեմառդեմ նայեց Ակսինյայի աչքերին, տեսավ, թե ինչպես դրանք բոնկեցին լարաճճի, մոլեգին կրակով։

— Էհ, Գրիշա, ոնց ուզում ես, ամա առանց քեզ ապրելու էլ հալ չկա,— կտրուկ ասաց Ակսինյան և պինդ սեղմեց պռոշները՝ սպասելով պատասխանի։

Գրիգորին լուռ էր։ Անդորրությունը պատել էր անտառը։ Ապակե ամայությունից դժժում էին նրանց ականջները։ Սահնակներով տրորված պսպղուն ճանապարհ, երկնքի գորշ հնոտի, համր, մահու անդորրով լեցուն անտառ... Ագռավի անակնկալ, զիլ և մոտիկ կոնչոցը Գրիգորիին ասես սթափեցրեց կարճատև նիրհից։ Նա բարձրացրեց գլուխը, տեսավ՝ սև-կապտավուն փետուրներով թռչունը ոտները իրեն քաշած՝ հեռանում է անաղմուկ թռիչքով, թևերը թափահարելով։ Իրեն համար էլ անսպասելի կերպով Գրիգորին ասաց.

— Տաք կլինի։ Տաք կողմեր է թռչում...— ու ցնցվելով՝ խոպոտաձայն ծիծաղեց...— Դե՛հ...— Նա գոգավարի նայեց արբեցած աչքերի ցածր խոնարհված քիրերով ու պինդ գրկեց Ակսինյային։

IX

Երեկոները շլդիկ Լուկեշկայի տանը, Շտոկմանի բնակարանում, հավաքվում էին ղանապան մարդիկ, գալիս էր Խրիստոնյան. աղացից գալիս էր Վալետը՝ կեղտոտված պիջակը ուսերին գցած, մասխարա Դավիդկան, որը երեք ամիս պարապ-սարապ ման էր գալիս. մեքենավար Իվան Ալեքսեևիչ Կոտլյարովը. երբեմն երևում էր կոշկակար Ֆիլկան ու մշտական հյուր էր Միշկա Կաշևոյը, որը դեռ իսկական ծառայության չգնացած մի երիտասարդ կազակ էր։

Սկզբում խաղաթղթերով դուրաչկի էին խաղում, հետո Շտոկմանը աննկատելի կերպով մեջտեղ բերեց Նեկրասովի գիրքը։ Սկսեցին բարձրաձայն կարդալ,— դուր եկավ։ Անցան Նիկիտինին, իսկ ծննդյան տոնի օրերին Շտոկմանն առաջարկեց կարդալ քրքրված, կեղտոտված, առանց կազմի մի տետր։ Կաշևոյը, որ մի ժամանակ եկեղեցական դպրոց էր ավարտել ու բարձրաձայն կարդացողն էր, արհամարհանքով նայեց կեղտոտված տետրին։

— Դրանից կարելի է էրիշտա կտրել։ Շատ յուղոտ է։

Խրիստոնյան քահ-քահ ծիծաղեց, Դավիդկայի դեմքը շողաց շլացուցիչ ժպիտով, բայց Շտոկմանը սպասելով մինչև ընդհանուր ծիծաղի վերջանալը, ասաց.

— Կարդա, էլի, Միշա։ Սա կազակների մասին է։ Հետաքրքիր է։

Կաշևոյը ոսկեփայլ քյաքուլը սեղանին կախած՝ առանձին-առանձին կարդաց հետևյալ բառերը.

— Դոնի կազակության համառոտ պատմությունը։— Ու նայեց բոլորին՝ սպասողական վիճակում կկոցելով աչքերը։

— Կարդա՛,— հրամայեց Իվան Ալեքսեևիչը։

Երեք իրիկուն երկար ու բարակ կարդացին Պուգաչևի, ազատ կյանքի, Ստենկա Ռազինի և Կոնդրատի Բուլավինի[1] մասին։

---

[1] Կոնդրատի Բուլավինը (ծնվ. մոտ 1660 թ.) 1707—1708 թթ. ապստամբության ղեկավարն էր։ «Բուլավինի բունտը» հետևանք էր կառավարության փորձի՝ գտնել ու առաջվա բնակավայրերն ուղարկել անչափ ծանր լծից փախած (որ կապված էր Պետրոս I-ի պատերազմների հետ) գյուղացիներին, դասալիքներին և այլն։ Բուլավինը

Հասան վերջին ժամանակաշրջանին։ Անհայտ հեղինակը մատչելի ու սուր լեզվով ծաղրում էր կապակական աղքատիկ կյանքը, ծանակում էր կարգերն ու վարչությունը, ցարական իշխանությունն ու հենց կազակությանը, որը վարձված էր իբրև միապետների օպրիչնիկներ։ Իրար անցան։ Վիճեցին։ Գմդմբան ձայնով խոսեց Խրիստոնյան, որի գլուխը հասնում էր առաստաղի մեծ գերանին։ Շտոկմանը նստել էր դռան մոտ, ծխում էր ոսկրե, օղակավոր մուշտուկով, ծիծաղում միայն աչքերով։

— Ճի՛շտ է, իրավացի է,— բռռում էր Խրիստոնյան։

— Կազակներն իրենք մեղավոր չեն, նրանց այդ տեսակ խայտառակության են հասցրել։— Կաշևոյը տարակուսանքով տարածում էր ձեռները և կնճռոտում գեղեցիկ, սևաչյա դեմքը։

Նա ամրակազմ էր, միևնույն լայնությամբ ուսերով ու կոնքով և դրա համար էլ քառակուսի էր թվում. թուջի պես ամուր հիմքի վրա նստել էր պիրկ, աղյուսի կարմրություն ունեցող պարանոցը, ու այդ պարանոցի վրա տարօրինակ էր թվում գեղեցիկ նստած, փոքրիկ գլուխը՝ փայլատ այտերի կնոջական ուրվագծերով, փոքրիկ, կամակոր բերանով ու խուճուճ մազերի ոսկեփայլ խուրձի տակ փայլող թուխ աչքերով։ Մեքենավար Իվան Ալեքսեևիչը, բարձրահասակ, թիկնեղ մի կազակ, վիճում էր անկոտրում համառությամբ։ Նրա ոսկրոտ մարմնի յուրաքանչյուր բջջի միջով ներծծվել ու աճել էին կազակական տրադիցիաները։ Նա պաշտպանում էր կազակներին, թունդ հակաճառում Խրիստոնյային՝ փայլեցնելով ուռուցիկ, կլոր աչքերը։

— Դու մուժիկացել ես, Խրիստան, մի՛ վիճիր, էլի՛... Քո մեջ մի կաթիլ է՛լ կազակական արյուն չկա։ Մայրդ քեզ Վորոնեժի ձվավաճառից է ծնել։

— Հիմա՛ր ես դու, հիմար, աղբերացու...— ասաց Խրիստոնյան։— Ես ճշմարտությունն եմ պաշտպանում։

— Ես Ատամանյան գնդում չեմ ծառայել,— խայթեց

հենվում էր փախած մարդկանց, չքավոր կազակության, աղանդավորների վրա։ Ապստամբությանը հարել էին Խոպեր գետի վրայով փայտեղեն փոխադրող բանվորները։

Իվան Ալեքսեևիչը,— այդ Ատամանյան գնդում է, որ հենց միայն հիմարների ես հանդիպում...

— Բանակային գնդերում էլ այդ տեսակ մարդիկ անհաշիվ են։

— Դե սո՛ւս, է, մուժիկ։

— Բա մուժիկները մարդ չե՞ն։

— Նրանք հենց միայն մուժիկներ են, հավատարիմ են իրենց բնությանը։

— Ես, աղբորս ասեմ, երբ որ ծառայում էի Պետերբուրգում, զանազան մարդիկ էի տեսնում։ Հա՛, ուրեմս, այսպիսի մի դե՛պք եղավ,— ասաց Խրիստոնյան՝ շեշտելով «դեպք» բառը։— Մենք պահպանում էինք ցարի պալատը, դրսումն էլ պահակ էինք կանգնում։ Դրսում, պարսպի մոտ ձիավորներ էին ման գալի,— երկուսը մի կողմից, երկուսն էլ մյուս կողմից։ Պատահում են իրար, հարցնում՝ «է՛, ամեն ինչ հանգի՞ստ է, հո բունտեր չկա՞ն»։— «Չէ՛, չկան»,— ու ամեն ոք գնում է իր կողմը, իսկ կանգ առնել, խոսել,— այդ չէր կարելի։ Անձնավորություններին էլ խիստ ջոկում էին, ուրեմս, դռան մոտ կանգնեցնում են երկուսին, այնպես են անում, որ նրանք իրար նման լինեն։ Սևը սևի հետ է կանգնում, սպիտակը — սպիտակի հետ։ Հո մենակ մազերը չէ, երեսներն էլ պետք է նման լինեին։ Հա՛, ուրեմս, մի անգամ դալլաքը մորուքս ներկեց հենց այդ ախմախությունների պատճառով։ Ես պետք է պահակ կանգնեի Նիկիֆոր Մեշչերյակովի հետ,— այդպիսի մի կազակ կար Տելեկինսկայա ստանիցայից, մեր հարյուրյակում,— իսկ նա, անիծվածը, ոնց որ թե ցարշնի ռանգ ունենար։ Սադայելը գիտի, թե ինչ տեսակ մազեր ուներ քունքերի վրա, ոնց որ թե դրանք կրակով բռնվել ու վառվում էին։ Դե՛ս ման եկան, դե՛ն ման եկան, ուրեմս, հարյուրյակներում այդ ռանգի մարդ չկա ու չկա. հարյուրապետ Բարկինը, ուրեմս, ասում է ինձ՝ «Գնա դալլաքանոց, այնպես որ, աչքս բանամ-խփեմ, բեղ ու մորուքդ ներկած լինի»։ Գալիս եմ, ու ներկում են... Ամա երբ որ հայլուն մտիկ արի, թուքս սառավ. ոնց որ թե վառվում էի։ Կրակ եմ ընկել ու վառվում եմ։ Մորուքս բոխս մեջ եմ առնում, օ՛ֆ, մատներս դաղվում են։ Բա՛ս...

— Է՛, Եմելյա, թաց աղունը վրա հո լցրել։ Ինչի՞ մասին հս խոսում,— ընդհատեց Իվան Ալեքսեևիչը։

— Խալիի մասին, ա՛յ թե ինչի մասին։

— Դեհ, պատմիր։ Թե չէ մորուքդ ես մեջտեղ բերել, դա մեր ինչի՞ն է պետք։

— Հա՛, այն էի ասում. մի անգամ ձիով պահակություն էինք անում։ Գնում ենք ես ու ընկերս, մեկ էլ տեսնենք փողոցի անկյունից ուսանողները դուրս եկան։ Այնքան էլ շա՞տ էին որ։ Մեզ տեսան թե չէ, ղժվժացին՝ «Հա-ա-ա՞-ա-ա»։ Ու էլի մի անգամ՝ «Հա՞-ա-ա՞-ա...» Մենք հլա դեռ բան չհասկացած՝ շրջապատեցին։ «Է՛յ, կազակներ, այդ ի՞նչ եք ման գալիս»։ Ես էլ ասում եմ՝ «Պահակություն ենք անում, իսկ դու թո՛ղ սանձը, մի՛ բռնի»,— ու քաշում եմ թուրը։ Նա էլ ասում է՝ «Դու, հայրենակից, կասկած մի՛ տանի, ես ինքս Կամենսկայա ստանիցայից եմ, այստեղ ուսում եմ առնում համբալսարանում թե համսարանում», միտս չի ոնց ասավ։ Այստեղ մենք առաջ ենք շարժվում, իսկ մի մեծքթանի ջեբիցը մի հատ տասանոց է հանում ու ասում՝ «Խմե՛ք իմ լուսահոգի հայրիկի կենացը, կազակներ»։ Տասնոցը տվեց մեզ ու պայուսակից մի պատկեր հանեց. «Ահա, — ասում է, — հայրիկիս անձնավորությունը, վերցրեք բարի հիշատակի համար»։ Է՛հ, մենք էլ վերցրինք, բա ո՞նց չվերցնես։ Ուսանողներն էլ ետ քաշվեցին ու էլի՝ «Հա՞-ա-ա-ա»։ Հետո էլ, ուրեմն, գնացինք դեպի Նևսկի պրոշպեկտը։ Պալատի ետևի դարբասից հարյուրապետը մի դասակով մեր կողմն է գալիս։ Մոտեցավ. «Հը՛, ի՞նչ կա»։ Ես, ուրեմն, ասում եմ՝ «Ուսանողները մեր առաջը կտրեցին ու սկսեցին խոսել, իսկ մենք ըստ կանոնագրքի ուզում էինք նրանց զարկել թրերով, ամա հետո, երբ նրանք մեզանից ետ քաշվեցին, մենք էլ, ուրեմն, հեռացանք»։ Մեզ փոխեցին, մենք էլ ասում ենք վախմիստրին՝ «Հրես, Լուկիչ, մենք, ուրեմն, տասը մանեթ աշխատեցինք ու այս փողով պետք է խմենք ա՛յ, այս պապի ողորմաթասը»,— ու ցույց ենք տալի պատկերը։ Վախմիստրը իրիկունն արաղ բերեց, ու երկու օր մենք քեֆ էինք անում, իսկ հետո պարզվեց խաբեբայությունը. այդ ուսանողը, մեծքթանի անզգամը հոր փոխարեն մեզ տվել էր գերմանական ազգ ու տակի գլխավոր խառնակչի

պատկերը։ Ես հո վերցրել էի նրան հավատալով, կախ տվի մահճակալիս վերևից, հիշատակի համար, տեսնում եմ՝ պատկերի վրա մորուքը ճերմակ է, ինքն էլ կարգին մարդ է, ոնց որ թե վաճառականներից լինի, իսկ հարյուրապետը, ուրեմն, ճանաչեց ու հարցնում է՝ «Ո՞րտեղից ես վերցրել այս պատկերը, է՛յ, փուչ կենդանի»։— «Այսպես ու այսպես»,— ասում եմ։ Նա էլ սկսեց ճղճղել պատկերը, խփե՛լ երեսիս, ու էլի ճղճղել... «Գետե՞ս,— բղավում է,— ախր սա նրանց ատաման Կարլան է...»— ափսոս մոռացա ազգը... Ո՞նց էր, է՛, ասես լեզվիս ծերին լինի...

— Կարլ Մա՞րքս,— ասաց Շտոկմանը՝ զսպելով ժպիտը։

— Հա՛, հա... հենց նա է, Կարլա Մարսը...— ուրախացավ Խրիստոնյանն։— Ախր կարող էր մարդու գլուխ կորցնել, նրա հերն անիծած։ Ախր մեկ-մեկ պատահում է, որ թագաժառանգ Ալեքսեյն իրեն թիկնապահներով գալիս է պահակատուն։ Բա որ տեսնեի՞ն։ Ի՞նչ կլիներ։

— Իսկ դու միշտ էլ մուժիկներին ես գովում։ Ա՛յ, տեսա՞ր ոնց են նալել քեզ,— քմծիծաղ տվեց Իվան Ալեքսեևիչը։

— Բա որ տասանոցով մի լավ խմեցի՞նք։ Շատ է՛լ մորուքավոր Կարլայի համար էր դա, հո խմեցի՛նք։

— Նրա հիշատակին պե՛տք է խմել,— ժպտաց Շտոկմանը՝ շուռումուռ անելով ծխելուց սևացած ոսկրե, օղակավոր մուշտուկը։

— Նա ի՞նչ լավ գործեր է արել,— հարցրեց Կաշևոյը։

— Մի ուրիշ անգամ կպատմեմ, իսկ այսօր ուշ է,— Շտոկմանը բռով խփեց մուշտուկի ծայրին ու դուրս թափեց ծխախոտի հանգած մնացորդը։

Շլդիկ Լուկեչկայի վարձով տված սենյակներում շատերի գնալ-գալուց և եկողների միջև ընտրություն կատարելուց հետո կազմվեց մի միջուկ՝ տասը հոգի կազակներից։ Շտոկմանը կորիզն էր, համառորեն ընթանում էր դեպի նպատակը, որը միայն իրեն էր հայտնի։ Քայքայում էր պարզունակ հասկացողություններն ու սովորությունները՝ ինչպես որդը քայքայում է ծառը, զզվանք ու ատելություն էր ներշնչում դեպի գոյություն ունեցող կարգերը։ Սկզբում հանդիպում էր

անվստահության սառն պողպատին, բայց չէր նահանջում, այլ այն կրծելով, ճամփա էր բաց անում...

Դժգոհության թրթուր աճեցրեց։ Եվ ո՞վ կարող էր գիտենալ, որ չորս տարուց հետո այդ թրթուրի հնացած թաղանթների միջից դուրս է գալու ուժեղ ու կենսունակ սաղմը։

X

Դոնի ձախ ափին, մի փոքր թեք, ավազոտ վայրում գտնվում է Վեշենսկայա ստանիցան, որը Դոնի վերին հոսանքի ստանիցաներից ամենահինն է, փոխադրվել է Պետրոս I-ի օրով ավերված Զիգոնակի ստանիցայի տեղից, վերանվանվել Վեշենսկայա։ Մի ժամանակ այստեղից էր անցնում Վորոնեժ — Ազով ջրային մեծ ճանապարհը։

Ստանիցայի դիմաց Դոնը ծովում է թաթարական աղեղի նման, ասես աջ է դառնում, ու Բազկի կոչված խուտորի մոտ նորից շտկվում է, վեհապանծ տեսք ընդունում, կանաչավուն-բաց-կապույտ տեսքով հոսում աջափնյա սարերի կավճոտ ճյուղավորությունների կողքից, աջ կողմի համատարած խուտորների, ձախ կողմի հատ ու կենտ ստանիցաների կողքից մինչև ծովը, մինչև Ազովյան կապուտակ ծովը։

Ուստ-Խոպերսկայայի դիմաց իր մեջ է ընդունում Խոպեր գետը, Ուստ-Մեդվեդիցկայայի դիմաց — Մեդվեդիցա գետը, իսկ այնուհետև հոսում է ջրառատ, բնակելի խուտորներով ու ստանիցաներով զարդարված։

Վեշենսկայան ամբողջովին գտնվում է դեղնավուն ավազուտներում։ Անուրախ, ճաղատ, այգիներից զուրկ ստանիցա է։ Հրապարակում կանգնած է հին, ժամանակի ընթացքում գորշացած տաճարը, վեց փողոցները ձգվում էին Դոնի հոսանքի երկարությամբ։ Այնտեղ, ուր Դոնը ծովելով, ստանիցայից հեռանում է դեպի Բազկի, կաղամախիների ծառուտներում գետաբազուկից առաջացել է չվարարած Դոնի լայնությամբ մի լիճ։ Փոքրիկ հրապարակում, որ ծածկված է ասեղանման ոսկեգույն փշաբույսերով, կանգնած է երկրորդ եկեղեցին՝ գմբեթները կանաչ, կտուրը կանաչ,— լճի մյուս կողմում աճած կաղամախիների սաղարթի գույնով։

Իսկ դեպի հյուսիս, ստանիցայից դենը — շաֆրանե ավազուտներ, նոսր, վտիտ սոճուտ, լճակներ, որոնք լցված են կարմրակավ գետնից գույն առած վարդագույն ջրով։ Ու համատարած ավազուտներում, հատիկ-հատիկ ավազի հեռավոր ցրվածքներում — խուտորների, պուրակների հատուկենտ կղզիներ, շիկակարմրավուն ուռուտներ։

Հրապարակում, հին եկեղեցու դիմաց դեկտեմբերյան մի կիրակի օր կանգնած է ամբողջ ստանիցայից հավաքված երիտասարդ կազակների սև բազմությունը՝ հինգ հարյուր հոգի։ Եկեղեցում վերջանում էր պատարագը, «Արժան և իրավ» տաղերգության վրա զողանջեցին զանգերը։ Ավագ ուրյադնիկը,— քաջատես, զառամյալ մի կազակ, գերակետիկ ծառայության համար ուսադիրներին կպցրած թելերով,— հրաման տվեց՝ «շարվե՛լ»։ Դժժող բազմությունը հավաքվեց ու կազմեց երկու անհամաչափ, երկար տողան։ Շարքերի առջևից վազվզեցին ուրյադնիկները՝ հավասարեցնելով ծուռումուռ կանգնած տողանները։

— Երկշա-ա՛-արք,— ձայնը երկարացրեց ուրյադնիկը ու ձեռքն անորոշ շարժելով, ավելացրեց՝ կազմի՛ր...

Ատամանը պատշաճ տարազով, սպայական նոր շինելով, շպորների զրնգոցով մտավ եկեղեցու գավիթը. նրա ետևից քայլում էր զինվորական պրիստավը։

Գրիգորի Մելեխովը կանգնած էր Միտկա Կորշունովի կողքին, նրանք շշնջալով խոսքեր էին փոխանակում։

— Կոշիկս սեղմում է ոտս, էլ համբերություն չկա։

— Համբերիր, ատաման կլինես։

— Հիմի կտանեն։

Կարծես այդ հաստատելու համար ավագ ուրյադնիկը հետ-ետ գնալով, շուռ եկավ կրունկների վրա։

— Ա-ա՛ջ-դա՛ռ։

«Հո՛ւխ-հո՛ւկ»,— հստակ կատարեցին հինգ հարյուր զույգ ոտները։

— Ձախ թևն առաջ, քայլով-ո՛վ ա՛ռաջ։

Շարասյունը ներս լցվեց եկեղեցու գավթի բացած դռնից, մի պահ երևացին գլուխներից վերցրած փափախները, եկեղեցին մինչև գմբեթը լցվեց քայլերի ձայնով։

Գրիգորին կանգնել էր, լսելով քահանայի կարդացած երդման խոսքերը։ Նայում էր Միտկայի դեմքին. վերջինս

երեսը կնճռոտում էր ցավից ու փոխում կոշիկի սեղմած ստը։ Գրիգորիի բարձրացրած ձեռքը թմրում էր, գլխի մեջ իրար էին խառնվել այլևայլ մտքերը։ Մոտենալով քահանային ու համբուրելով շատ բերաններից թքոտված, խոնավ, արծաթե խաչը, մտածում էր Ակսինյայի ու կնոջ մասին։ Ինչպես կեռագիծ կայծակի բռնկոց, նրա մտքերը հատեց կարճատև մի հուշ. անտառը, ծառերի թուխ բները սպիտակ, փարթամ պաճուճանքով, ասես արծաթե գեղազարդ շրջափոկով պատած. Ակսինյայի սև, բրդե շալի տակից նայող աչքերի խոնավ, ջերմ փայլը...

Դուրս ելան հրապարակը։ Նորից շարվեցին։ Ուրյադնիկը խնչեց, մատները աննկատելիորեն սրբեց համազգեստի աստառով, սկսեց ճառը.

— Հիմի դուք արդեն ոչ թե տղաներ եք, այլ կազակներ։ Երդում տվիք ու պետք է իմանաք, թե ինչ պիտի անեք, ոնց պահեք ձեզ։ Հիմի դուք մեծացել, կազակներ եք դարձել ու պետք է պահպանեք ձեր պատիվը, լսեք հորն ու մորը, ու այսպես ամեն բան։ Մինչև հիմի, դեհ, տղերք էիք, էլի,— սաբսաղությունններ էիք անում, գուցե թե ճանապարհին ցախ ու փետ էիք քարշ տալի, իսկ սրանից հետո պետք է մտածեք գալող ծառայության մասին։ Ա՛յ, մի տարուց հետո պիտի գնաք իսկական ծառայության,— այստեղ ուրյադնիկը նորից խնչեց, բոի մեջ հավաքվածը դեն գցեց ու հագնելով ճագարի բրդից պատրաստված ձեռնոցը, ավարտեց իր խոսքը,— ձեր հերն ու մերն էլ պետք է մտածեն ձեզ հարկավոր բաների մասին։ Պետք է ձեռք բերեք շարային ձի ու առհասարակ ինչ որ հարկավոր լինի... Իսկ հիմի տեր ընդ ձեզ, քաջեր, գնացեք ձեր տները։

Գրիգորին ու Միտկան կամրջի մոտ սպասեցին թբենց խուտորի տղաներին, միասին ճանապարհ ընկան։ Գնում էին սառած Դոնի վրայով։ Բազկի խուտորի վերևում ցնդում էր մի ծխնելույզի ծուխը, բարակ ղողանջում էր զանգը։ Միտկան կաղ-կաղ քայլում էր բոլորի ետևից՝ հենվելով իր պոկած ոստաշատ ցցին։

— Հանի՛ր կոշիկդ,— խորհուրդ տվեց տղաներից մեկը։

— Ոտս կմրսի,— ետ մնալով, տատանվելով ասաց Միտկան։

— Գուլպայով կգնաս։

Միտկան նստեց ձյան վրա, ջանալով հանեց կոշիկը։ Կոշիկը հանած՝ քայլեց կաղալով։ Ճանապարհի փուխր ձյան վրա մնում էր կեռով դործած հաստ գուլպայի պարզ հետքը։

— Ի՞նչ ճանապարհով գնանք,— հարցրեց ցածրահասակ, անճոռնի Ալեքսեյ Բեշնյակը։

— Դոնի վրայով,— բոլորի փոխարեն պատասխանեց Գրիգորին։

Կնում էին խոսելով, ճանապարհից հրելով միմյանց։

Պայմանավորված լինելով, ամեն մեկին գցում էին ձյունակուտի մեջ ու խմբով ընկնում վրան։ Բազկի ու Գրոմովսկի խուտորների միջև Միտկան առաջինը տեսավ Դոնի վրայով անցնող մի գայլ։

— Տղերք, հրե՛ն գելը, հա-ա՛... Թյո՛ւ...

— Հո՛ւ-հո՛-օ-օ-օ...

— Օ՛-հո՛...

Գայլը ծույլ, ճոճուն քայլվածքով անցավ մի քանի սաժեն ու կանգնեց կողքի, մյուս ափին մոտիկ տեղում։

— Բռնե՛լ նրան...

— Հա՛-ա...

— Թյո՛ւ, անիծված...

— Միտրի, նա զարմանում է քո վրա, որ դու գուլպայով ես քայլում։

— Ո՛նց է կողքի կանգնել, վիզը շուռ տալ չի կարողանում։

— Նա վիզը չի պտտի։

— Տե՛ս, տե՛ս, գնաց...

Գորշ, ասես բնածին քարից ձուլված գազանը կանգնել էր ու ձողի նման ցցել պոչը։ Հետո հապճեպ ցատկեց մի կողմ ու երերալով քայլեց դեպի ուռենիները, որ շարիշար կանգնած էին գետափին։

Իջնում էր մթնշաղը, երբ հասան խուտոր։ Գրիգորին ոտոցի վրայով գնաց իրենց նրբանցքը, բարձրացավ դեպի դարբասը։ Բակում թողել էին սահնակը. ցանկապատի մոտ

թափված ցախակույտի մեջ ծվծվում էին ծտերը։ Բնակարանի, այրված մրուրի, գոմի տաք հոտն էր զգացվում։

Մուտքի սանդուղքից ելնելով, Գրիգորին պատուհանից ներս նայեց։

Խոհանոցը աղոտ լուսավորված էր կախովի լամպի դեղնավուն լույսով, ներսում կանգնած էր Պետրոն՝ մեջքը դեպի պատուհանը։ Գրիգորին ավելով մաքրեց կոշիկները, գոլորշու ամպով պատած մտավ խոհանոցը։

— Ահա և ես։ Է՛հ, բարի իրիկուն։

— Լա՛վ շուտ եկար։ Երևի մրսե՞լ ես,— անհանգիստ ու հապճեպ պատասխանեց Պետրոն։

Պանտելեյ Պրակոֆևիչը նստել էր ձեռները ծնկներին, գլուխը կախած։ Դարյան ոտով պտտում էր ճախարակի բզզող անիվը։ Նատալյան կանգնել էր սեղանի մոտ, մեջքը դեպի Գրիգորին, առանց շուռ գալու։ Խոհանոցովը մեկ թռուցիկ հայացք նետելով, Գրիգորին աչքերը հառեց Պետրոյին։ Վերջինիս անհանգիստ, սպասողական վիճակ արտահայտող դեմքից հասկացավ, որ մի բան է պատահել։

— Երդում տվի՞ր։

— Հմ-մ։

Գրիգորին դանդաղորեն հանում էր շորերը ժամանակ շահելով, մտքում արագ կշռադատելով հնարավոր պատահմունքները, որոնց հետևանքն էին այդ լռությունը ու սառն ընդունելությունը։

Օթախից դուրս եկավ Իլյինիչնան, նրա դեմքի վրա մի փոքր շփոթություն կար։

«Նատալյան»,— մտածեց Գրիգորին՝ նստելով հոր կողքին, նստարանի վրա։

— Իրիկնահաց բեր դրան,— դիմեց Իլյինիչնան Դարյային՝ աչքերով ցույց տալով Գրիգորիին։

Դարյան ընդհատեց մանելու երգը, մոտեցավ վառարանին՝ աննկատելիորեն թոթվելով ուսերը, իր ամբողջ բարակ, ոչ կանացի իրանը։ Խոհանոցում խուլ լռություն տիրեց։ Ցածրիկ վառարանի կողքին իր ուլիկի հետ պառկել ու ֆոֆսում էր նոր ծնած այծը։

Գրիգորին շշի ուտելով, երբեմնակի նայում էր Նատալյային, բայց նրա դեմքը չէր տեսնում. Նատալյան նստել էր

կողքը դեպի Գրիգորին, գլուխը ձեռքի ճաղերի վրա կախած։ Պանտելեյ Պրակոֆևիչը առաջինը չկարողացավ տանել ընդհանուր լռությունը, ճռնչալի ու շինծու հազալով, ասաց.

— Նատալյան պատրաստվում է տանից գնալու։

Գրիգորին հացի գլորակով հավաքում էր փշրանքները, լռում էր։

— Այդ ի՞նչ պատճառով է,— հարցրեց հայրը, որի ստորին շրթունքը զգալիորեն դողում էր (կատաղության մոտալուտ բռնկոցի առաջին նշանը)։

— Չգիտեմ ինչ պատճառով,— Գրիգորին կկոցեց աչքերը ու դեն տանելով թասը, խաչակնքեց ու վեր կացավ։

— Իսկ ես գիտեմ...— ձայնը բարձրացրեց հայրը։

— Դե՛, զալմաղալ մի անի,— մեջ մտավ Իլյինիչնան։

— Իսկ ես գիտեմ, թե ինչն է պատճառը...

— Դեհ, այստեղ զալմաղալի կարիք չկա,— Պետրոն պատուհանի կողքից անցավ սենյակի մեջտեղը,— այստեղ կամքի բան է, ուզում է, թող մնա, չի ուզում,— բարի ճամփա։

— Ես Նատալյային չեմ մեղադրում։ Թեկուզև դա խայտառակություն է ու աստծու առաջ մեղք է, բայց ես չեմ մեղադրում. մեղավորը նա չի, մեղավորը, ա՛յ, այս շան որդի՛ն է...— Պանտելեյ Պրակոֆևիչը ցույց տվեց վառարանին հենված Գրիգորիին։

— Ես ինչո՞վ եմ մեղավոր...

— Դու չգիտե՞ս քո մեղքը... Չգիտես, սատանա, հը՞...

— Չգիտեմ։

Պանտելեյ Պրակոֆևիչը վեր թռավ, շուռ տալով նստարանը, և հուպ մոտեցավ Գրիգորիին։ Նատալյան վայր գցեց դուլպան, ասեղն ընկավ հատակն ու ճնկաց. լսելով այդ ձայնը, կատուն թռավ վառարանից. գլուխը թեքեց, կորացած թաթով հրեց կծիկը ու գլորեց դեպի սնդուկը։

— Ես քեզ ա՛յ թե ինչ կասեմ,— սկսեց ծերունին զուսպ տոնով ու բառերը շեշտելով,— եթե Նատաշայի հետ չես ապրելու, հեռացիր տնից՝ ուր որ կուզես։ Ահա իմ խոսքը։ Հեռացիր-գնա՝ ուր որ կուզես,— կրկնեց նա սովորական հանգիստ ձայնով ու ետ քաշվեց՝ բարձրացնելով նստարանը։

Դունյաշկան նստել էր մահճակալի վրա, կլոր, վախեցած աչքերով դես-դեն էր նայում։

— Ես ձեզ կասեմ, ապի, չբարկանաք,— Գրիգորիի ձայնը խուլ ու խռպոտ էր հնչում,— ոչ թե ե՛ս ամուսնացա, այլ դո՛ւք ինձ ամուսնացրիք։ Իսկ Նատալյայի հետ ես գործ չունեմ։ Ուզում է՝ թող գնա հոր մոտ։

— Դու է՛լ գնա այստեղից։

— Կե՛րթամ։

— Գնա՛ գրողի ծոցը...

— Կերթա՛մ, կերթամ, մի՛ վռազի,— Գրիգորին թևքից վերցնելով քաշեց մահճակալի վրա գցած կիսամուշտակը՝ ուղղելով պինչերը, նույնպես դողալով թունդ բարկությունից, ինչպես և հայրը։

Նրանց երկուսի մեջ էլ թուրքական արյան հետ խառնված արյուն էր հոսում և այդ պահին նրանք զարմանալի նման էին միմյանց։

— Ո՞ւր կերթա-ա՛ս,— հառաչեց Իլյինիչնան Գրիգորիի ձեռքից բռնելով, բայց վերջինը ուժով դեն հրեց մորը ու վերցրեց մահճակալից ընկած փափախը։

— Թող գնա՛ անառակ շունը, թող գնա՛, անե՛ծք գրան։ Գնա՛, գնա՛, հա՛յդա...— գոռում էր ծերունին՝ ամբողջովին բաց անելով դուռը։

Գրիգորին դուրս թռավ հաշտը ու վերջին ձայնը, որ լսեց, դա Նատալյայի լացն էր։

Ցրտաշունչ գիշեր էր իջել խուտորի վրա։ Սև երկնքից ասեղ-ասեղ ձյուն էր տեղում, ջարդվում էր Դոնի սառույցը՝ որոտալով թնդանոթի կրակոցի նման։ Գրիգորին շնչասպառ լինելով՝ դարբասից դուրս վազեց։ Խուտորի մյուս ծայրում տարբեր ձայներով հաչում, ոռնում էին շները, սևին էր տալիս դեղին լույսերով ճաքճքած խավարը։

Գրիգորին աննպատակ քայլեց փողոցով։ Ստեփանի տան պատուհաններում ալմասի փայլով անդրադառնում էր սեությունը։

— Գրի-ի՛-շա,— դարբասից նետվեց Նատալյայի կարոտալից աղաղակը։

«Կորի՛ դու, չսիրված»,— Գրիգորին կրճատացրեց ատամները՝ արագացնելով քայլերը։

— Գրի՛շա, ե՛տ դարձ։

Գրիգորին իր անհաստատ քայլերն ուղղեց դեպի առաջին նրբանցքը, վերջին անգամ լսեց հեռավորությունից խլացած, դառն կանչը.

— Գրի՛շենկա, հարազա՛տս...

Արագ անցավ հրապարակը, ճամփաբաժանում կանգ առավ՝ մտքում թվելով ծանոթ տղաների անունները, որոնց մոտ կարելի էր գիշերել։

Կանգ առավ Միխայիլ Կաշևոյի վրա։ Սա ապրում էր խուտորից դուրս, հենց սարի տակին. մայրը, ինքը Միխայիլը և աղջիկ քույրը,— ահա ամբողջ ընտանիքը։ Ներս մտավ բակը, ծեծեց աղյուսաշեն խրճիթի փոքրիկ պատուհանը։

— Ո՞վ է։

— Միխայիլը տա՞նն է։

— Տանն է, իսկ դու ո՞վ ես։

— Ես եմ, Գրիգորի Մելեխովը։

Մի րոպեից հետո, առաջին քաղցր քնից կտրվելով. Միխայիլը բացեց դուռը։

— Դո՞ւ ես, Գրիշա։

— Ես եմ։

— Ի՞նչ է պատահել գիշերով։

— Թող ներս դնանք, այնտեղ կխոսենք։

Հաշտում Գրիգորին բռնեց Միխայելի արմունկից. ինքն իր վրա չարանալով, որ չէր գտնում հարկավոր խոսքերը, շշնջաց.

— Գիշերս կքնեմ քեզ մոտ... Մերոնց հետ մի քիչ կռվել եմ...Քեզ մոտ ո՞նց է, նեղվա՞ծք է... Դեհ, ես մի տեղ կպառկեմ, էլի։

— Տեղ կգտնվի, անցիր։ Ինչի՞ համար եք կռվել։

— Է-է՛, աղրեր... հետո... Բա այստեղ ո՞ւր է դուռը։ Չեմ տեսնում։

Գրիգորիի համար տեղ զցեցին նստարանի վրա։ Պառկեց, գլուխն է՛լ փաթաթեց կիսամուշտակով, որ չլսի Միխայելի մոր փսփսոցը,— վերջինս աղջկա հետ պառկել էր մի մահճակալի վրա։

«Հիմի ո՞նց է մեր տանը։ Կգնա՞ Նատաշկան, թե՞ չի

գնա։ Է՛հ, կյանքը նոր ձևով է դասավորվում։ Ի՞նչ պիտի անեմ»։ — Ու ենթադրությունն արագությամբ թելադրեց՝ «էգուց կկանչեմ Ակսինյային, միասին կգնանք Կուբան, այստեղից հեռո՛ւ... հեռու...»։

Գրիգորիի փակ աչքերի առաջ սահում էին տափաստանների բլրակները, խուտորները, ստանիցաները, որ նա առաջ երբեք չէր տեսել և որոնք օտար էին նրա սրտին։ Իսկ բլրակների կատարներից, գորշ ճանապարհից դենը հեքիաթի պես փռվում էր կապույտ, հիասքանչ մի երկիր ու Ակսինյայի խռովահույզ, ուշ ծաղկած սերն էլ քաղցրացնում էր այդ ամենը։

Քնեց վերահաս անհայտությունից անհանգստացած։ Քնելուց առաջ իզուր էր աշխատում վերհիշել մտքերը մաշող, անըմբռնելի ինչ-որ մի բան։ Կես քուն, կես արթուն վիճակում մտքերն ընթանում էին սահուն և համաչափ, որպես նավակը ջրի հոսանքի ուղղությամբ, և հանկարծ դեմ էին առնում մի ինչ-որ բանի, ասես ծանծաղուտի. խռնվում էին մտքերը, կտրվում էր նրանց թելը. նա պտույտ էր գալիս, գալարվում ենթադրությունների մեջ։ «Ի՞նչ է սա, ի՞նչն է փակել ճամփես»։

Իսկ առավոտյան վեր կացավ ու հիշեց. «բա ծառայությո՛ւնը։ Ո՞ւր պիտի գնանք ես ու Ակսինյան։ Գարնանը պիտի գնամ ճամբար, իսկ աշնանը — ծառայության... Ա՛յ թե ինչն է խանգարում»։

Նախաճաշեց ու Միխայիլին կանչեց հաշտը։

— Մի՛շա, գնա Աստախովների մոտ։ Ասա՛ Ակսինյային, որ հենց օրը մթնի, նա գա հողմաղացի մոտ։

— Բա Ստեփա՛նը,— շփոթվեց Միխայիլը։

Մի բան մտածիր, իրը թե գործով ես գնացել։

— Կերթամ։

— Գնա։ Ասա, որ անպատճառ դուրս գա։

— Լա՛վ, էլի՛։

Երեկոյան նստել էր հողմաղացի տակ, ծխում էր՝ կրակը պահելով թևքի մեջ։ Հողմաղացից դենը, եգիպտացորենի չոր ցողուններին փարվելով, սուլում էր քամին։ Հողմաղացի կապված թևերի վրա փոփոում էր պատռված քաթանը։ Գրիգորիին թվում էր, թե իր վերևում պտույտ է գալիս մի մեծ թռչուն, շփշփացնում է թևերը ու չի կարողանում թռչելհեռանալ։ Ակսինյան չէր գալիս։ Արևմուտքում մարում էր բաց-կապույտ, ոսկեզօծված վերջալույսը, արևելքից փչում, սաստկանում և արագանում էր քամին, վրա էր հասնում մթությունը՝ կտրելով ուռենիների մեջ խրված լուսնի ճանապարհը։ Հողմաղացի վերևում մթնում էր դիակի նման կապտակած-ուռած երկինքը, մարում էին դեղնակարմրավուն ցոլքերը. խուտորից լսվում էին ցերեկվա հախուռն աղմուկի վերջին ձայները։

Գրիգորին երեք անգամ թութուն փաթաթեց ու ծխեց, թութունի վերջին մնացորդը խոթեց ճմռթված ձյան մեջ, ջղայնոտ անհամբերությամբ նայեց շուրջը։ Հողմաղացից դեպի խուտորը տանող, մի փոքր հալված հետքերը կպրի նման սևին էին տալի։ Խուտորից ոչ ոք չէր երևում։ Գրիգորին վեր կացավ. ճմլկոտելով և ուսերը ճքճքացնելով, քայլեց դեպի լույսը, որ, ասես նրան կանչելով, երերվում էր Միխայիլենց խրճիթի պատուհանում։ Ատամների արանքից կամացուկ սուլելով, մոտեցավ բակին ու համարյա դեմառդեմ հանդիպեց Ակսինյային։ Սա ըստ երևույթին վազել էր կամ արագ քայլել,— հևում էր, ու թարմ, պաղած բերանից քամու հետ տափաստանային թարմ խոտի հեռավոր, հազիվ զգալի հոտ էր գալիս։

— Շատ սպասեցի, կարծում էի չես գա։

— Ստեփանին զոռով դուրս արեցի...

— Դու ինձ մրսեցրիր, անիծված կնիկ։

— Ես տաք եմ, կտաքացնեմ։— Բացեց Դոնի մուշտակի կախ ընկած փեշերը, փաթաթվեց Գրիգորիին ինչպես գայլուկը՝ կաղնու արմատին։

— Ի՞նչու ես կանչել։

— Կաց, ձեռներդ քեզ քաշիր... Այստեղից մարդիկ են անցնում։

— Ձերոնց հետ կովեցիր, հա՞։

— Հեռացա։ Մի օր է, որ Միշկայի մոտ եմ... Ապրում եմ ոնց որ կորած-մոլորված շուն։

— Բա հիմի դու ի՞նչ պիտի անես։— Ակսինյան թուլացրեց Գրիգորիին գրկած ձեռները ու մրսելով՝ մուշտակի փեշերը քաշեց իր վրա։

— Եկ, Գրիշա, անցնենք ցանկապատի տակ։ Ինչո՞ւ ենք կանգնել ճամփի մեջտեղը։

Անցան։ Գրիգորին ցրիվ տալով ձյունակույտը, մեջքը դեմ արեց սառած, ճքճքան ցանկապատին։

— Չգիտե՞ս, Նատալյան գնացե՞լ է իրենց տունը։

— Չգիտեմ... Երևի կգնա։ Բա հո այստեղ չի՞ ապրելու։

Գրիգորին Ակսինյայի մրսած ձեռքը տարավ իր թևքի մեջ. մատները սեղմելով նրա բարակ դաստակին հարցրեց.

— Բա ի՞նչ պիտի անենք։

— Ես չգիտեմ, սիրելիս։ Ոնց որ դու, այնպես էլ ես։

— Ստեփանին կթողնե՞ս։

— Իսկի չեմ ափսոսի։ Թեկուզ հենց հիմի։

— Մի տեղ երկուսս էլ գործի մտնենք, ապրենք։

— Թեկուզ նախրապան լինենք, ես քեզ հետ եմ, Գրիշա... Միայն թե քեզ հետ լինեմ...

Կանգնել ու տաքացնում էին միմյանց։ Գրիգորին չէր ուզում գնալ, կանգնել էր՝ գլուխը քամու կողմը դարձրած, ունգները ցնցելով, առանց բարձրացնելու իրար եկած կոպերը։ Ակսինյան երեսը նրա թևատակը դրած, շնչում էր նրա քրտնքի այնքա՛ն հարազատ, արբեցուցիչ հոտը, ու մոլեգնորեն ագահ իր շուրթերին դողում էր Գրիգորիի աչքից թաքնված, բերկրալի, բուռն երջանկությամբ լեցուն ժպիտը։

— Էգուց կգնամ Մոխովի մոտ, գուցե թե այնտեղ գործի մտնեմ,— ասաց Գրիգորին՝ ավելի վերևից բռնելով Ակսինյայի ձեռքի դաստակը, որ քրտնել էր իր մատների մեջ։ Ակսինյան լռեց։ Չթարձրացրեց գլուխը։ Նրա շուրթերից ասես քամին տարավ քիչ առաջ եղած ժպիտը, լայն բացված աչքերում հալածված փոքրիկ գազանի նման ծվարել էին թախիծն ու վախը։ «Ասե՞մ թե չասեմ»,— մտածում էր նա՝ հիշելով իր հղիությունը։ «Պետք է ասելը»,— որոշեց նա, բայց իսկույն ևեթ, վախից ցնցվելով, վանեց սարսափելի միտքը։ Իր կանացի բնազդով կռահեց, որ այդ մասին խոսելն անժամանակ է, հասկացավ, որ կարող է առմիշտ կորցնել Գրիգորիին, ու կասկածելով, թե երկուսից որն է իր արգանդում խաղացող մանկան հայրը, խորամանկության դիմեց,— շասաց։

— Ինչո՞ւ ցնցվեցիր, մրսե՞լ ես,— հարցրեց Գրիգորին ու նրան ծածկեց կիսամուշտակի փեշով։

— Մի քիչ մրսեցի... Պետք է գնալ, Գրիշա։ Ստեփանը կգա ինձ կփնտրի, իսկ ես այնտեղ չեմ։

— Նա ո՞ւր է գնացել։

— Զոռով ուղարկեցի Անիկեի մոտ՝ թուղթ խաղալու։

Անջատվեցին։ Գրիգորիի շուրթերի վրա մնաց նրա շուրթերի հուղիչ բույրը, որ ասես ձմեռային քամու թե մայիսյան անձրևով ցողված տափաստանային խոտի հեռավոր, անորալի բույր լիներ։

Ակսինյան դարձավ դեպի ներքանցքը. կռանալով, համարյա վազեց։ Ինչ-որ մեկի ջրհորի դիմաց, այնտեղ, ուր անասունները կոխկրտել էին աշնանային ցեխը, անզգուշաբար ոտը սխալ դրեց, սայթաքեց սառած գուղձի վրայից ու փորի մեջ ծակող ցավ զգալով կառչեց ցանկապատի ցցերին։ Ցավը մեղմացավ, իսկ կողքում, շուռ գալով, մի քանի անգամ ցատկոտ և ուժեղ խաղաց ինչ-որ կենդանի մի բան։

XI

Գրիգորին առավոտյան գնաց Մոխովի տունը։ Սերգեյ Պլատոնովիչը խանութից եկել էր թեյ խմելու։ Ստեփանի հետ նստել էր սեղանատանը, որի պատերը ծածկված էին թանկարժեք, կազնեգույն պաստառներով, ու թունդ, մուգ-կարմիր թեյ էր խմում։ Գրիգորին փափախը թողեց նախասենյակում, մտավ սեղանատուն։

— Ես ձեզ մոտ եմ եկել, Սերգեյ Պլատոնովիչ։

— Ա՛-ա, Պանտելեյ Մելեխովի տղան ես, չէ՞։

— Այո։

— Ի՞նչ ես ուզում։

— Ուզում էի խնդրել, չէ՞իք վարձի աշխատելու համար։

Լսելով դռան ճռնչոցը, Գրիգորին շուռ տվեց գլուխը։ Զորս տակ ծալած լրագիրը ձեռքին դահլիճից ներս եկավ երիտասարդ մի ոպա կանաչ կիսաելով, հարյուրապետի ուսադիրներով։ Գրիգորին ի դեմս նրա ճանաչեց այն սպային, որին անցյալ տարի ձիարշավի ժամանակ հաղթել էր Միտկա Կորշունովը։

Սպային աթոռ առաջարկելով, Սերգեյ Պլատոնովիչը ասաց.

— Ո՞նց է, հայրդ աղքատացե՞լ է, որ տղային աշխատանքի է ղրկել։

— Ես նրա հետ չեմ ապրում։

— Բաժանվե՞լ ես։

— Այո։

— Գիտե՛մ ձեր ընտանիքը, աշխատող մարդիկ եք, ուրախությամբ կվերցնեի, բայց ինձ մոտ տեղ չկա։

— Ինչո՞ւմն է բանը,— հարցրեց հարյուրապետը՝ նստելով սեղանի մոտ ու նայելով Գրիգորիին։

— Տղան աշխատանք է ուզում։

— Ձիերին կարո՞ղ ես խնամել։ Լա՞վ ես բանեցնում նրանց լծասարքը,— հարցրեց հարյուրապետը ու գդալով խառնեց թեյը։

— Կարող եմ։ Մենք վեց հատ ձի էինք պահում։

— Ինձ կառապան է հարկավոր։ Քո պայմանները։

— Ես թանկ չեմ ասի...

— Այդ դեպքում վաղը եկ մեր կալվածքը, հորքս մոտ։ Գիտե՞ս որտեղ է Նիկոլայ Ալեքսեևիչ Լիստնիցկու կալվածքը։

— Ճիշտ այդպես, գիտեմ։

— Այստեղից տասներկու վերստ է։ Վաղը առավոտյան եկ, այնտեղ կպայմանավորվես։

Գրիգորին մի փոքր կանգնեց և արդեն դռան բռնակը վերցնելով, ասաց.

— Ձերդ բարեծննդություն, մի բոպե ձեզ բան եմ ասելու...

Հարյուրապետը Գրիգորիի ետևից դուրս ելավ կիսախավար միջանցքը։ Փայլատ ապակիների միջով պատշգամբից աղոտ, վարդագույն լույս էր թափանցում։

— Ի՞նչ է։

— Ես մենակ չեմ...— Գրիգորին թունդ կարմրեց։— Ինձ հետ կնիկ կա։ Կարելի է նրա համար է՞լ մի տեղ լինի։

— Կի՞նդ է,— հարցրեց հարյուրապետը ժպտալով, բարձրացնելով լույսից վարդագույն դարձած հոնքերը։

— Ուրիշի կին է...

— Ախ, ահա թե ինչ։ Դեհ, ինչ կա որ, նրան էլ կտեղավորենք իբրև սև աշխատանք կատարողների խոհարարուհի։ Իսկ նրա ամուսինը ո՞րտեղ է։

— Այստեղ, խուտորից է։

— Դու կնոջը փախցրե՞լ ես ամուսնուց, հը՞։

— Ինքն է ինձ կպել։

— Ռոմանային պատմություն է։ Դեհ, լավ, վաղը եկ։ Կարող ես գնալ, աղբերս։

Գրիգորին առավոտյան ժամը ութին հասավ Յագոդնոյե՝ Լիստնիցկիների կալվածքը։ Լայն ձորահովիտում էր գտնվում մեծ բակը, որը շրջապատված էր աղյուսե, քանդրտված ցանկապատով։ Բակում անկանոն կերպով դասավորված էին շենքերը. կողաշենքը՝ կղմինդրե կտուրով, մեջտեղում կղմինդրե թիվ՝ 1910 թվական,— սպասավորների շենքը, բաղնիքը, ախոռը, թռչնանոցը և կովանոցը, երկար ամբարը, կառեթանոցը։ Մեծ հին տունը, որ բակի կողմից ցանկապատված էր ցցապատնեշով, գտնվում էր պարտեզում։ Տան ետևում գորշ պարսպի նման կանգնած էին տնամերձ պուրակի մերկ կաղամախիները և ուռենիները՝ լքած ագռավաբների դարչնագույն գդակներով։

Բակից դուրս Գրիգորիին դիմավորեց զրիմյան սև բարակների ոհմակը։ Քավթառ, կաղ, պառավական արցունքվող աչքերով մի քած շուն առաջինը հոտոտեց Գրիգորիին, քայլեց նրա ետևից, մերկ գլուխը կախած։ Սպասավորների շենքում խոհարարուհին վիճում էր ջահել, պեպենոտ աղախնի հետ։ Շեմքի մոտ թութունի ծխի մեջ, ոնց որ պարկի մեջ, նստել էր ծեր, հաստ պռոշներով մի մարդ։ Աղախինը Գրիգորիին տարավ տուն։ Նախասենյակում շնահոտ ու գազանների չլորացած մորթիների հոտ էր գալիս։ Սեղանի վրա ընկած էին որսորդական հրացանի պատյանը և որսապարկը՝ կանաչ մետաքսե, գզգղված ծոպերով։

— Երիտասարդ պարոնն իր մոտ է կանչում։— Կողքի դռնից նայեց աղախինը։

Գրիգորին վախվխելով դիտեց իր կեղտոտ կոշիկները, քայլեց դեպի դուռը։

Պատուհանի տակ դրված մահճակալի վրա պառկած էր հարյուրապետը. վերմակի վրա գտնվում էր մի տուփ՝ պապիրոսի պարկուճներով ու թութունով։ Պարկուճի մեջ թութուն լցնելով, հարյուրապետը կոճկեց սպիտակ շապկի օձիքը, ասաց.

— Շուտ ես եկել, Սպասիր, հիմա հայրս կգա։

Գրիգորին կանգնեց դռան մոտ։ Մի րոպեից հետո նախասենյակի ճոճռան հատակի վրա քստքստացին ինչ-որ մեկի քայլերը։ Թավ, ցածր մի ձայն հարցրեց դռան ճեղքից.

— Քնած հո չե՞ս, Եվգենի։

— Մտե՛ք։

Ներս մտավ մի ծերունի՝ կովկասյան սև յափնջիով։ Գրիգորին կողքից նայեց նրան և առաջինը, որ նրա աչքովն ընկավ, դա բարակ, ծուռ քիթն էր ու բեղերի սպիտակ, ծխելուց քթի տակին դեղնած լայն կիսաաղեղներն էին։ Ծերունին սաժենաչափ հասակ ուներ, ուսերը լայն էին, բայց ինքը նիհար էր։ Նրա վրա թույլ կախված էր երկար, ուղտի բրդից արտադրված մահուդի սերթուկը, օձիքն օղի նման նստած էր կինամոնագույն, կնճռոտ պարանոցին։ Խամրած աչքերը սովորականից ավելի մոտիկ էին քթարմատին։

— Ահա, հայրիկ, կառապանը, որին ես հանձնարարում եմ ձեզ, լավ ընտանիքի տղա է։

— Ո՞ւմ տղան է,— դմբդմբալի, խուլ ձայնով ասաց ծերունին։

— Մելեխովի։

— Ո՞ր Մելեխովի։

— Պանտելեյ Մելեխովի տղան է։

— Պրակոֆիին ճանաչում եմ, ծառայում էր ինձ հետ. Պանտելեյին ճանաչում եմ։ Կաղ մարդ է, չերքեզ չէ՞։

— Ճիշտ այդպես, կաղ է,— Գրիգորին ձգվեց լարի նման։

Նա հիշում էր հոր պատմածները պաշտոնաթող գեներալ Լիստնիցկու՝ ռուս-թուրքական պատերազմի հերոսի մասին։

— Ինչո՞ւ ես աշխատանքի վարձվում,— վերևից որոտաց ծերունին։

— Հորդս հետ չեմ ապրում, ձերդ գերազանցություն։

— Քեզանից ի՞նչ կազակ դուրս կգա, եթե դու քարշ ես գալիս իբրև վարձկան։ Հայրդ քեզնից բաժանվելիս մի՞թե ոչինչ չի տվել։

— Ճիշտ այդպես, ձերդ գերազանցություն, չի տվել։

— Այդ ուրիշ բան է։ Դու կնոջդ հե՞տ ես վարձվում։

Հարյուրապետը զիլ ճոճռացրեց մահճակալը։ Գրիգորին աչք ածեց, տեսավ, որ նա աչքով է անում, շարժում գլուխը։

— Ճիշտ այդպես, ձերդ գերազանցություն։

— Դեհ, առանց գերազանցությունների։ Ջե՛մ սիրում։ Գինը՝ ամսական ութ ռուբլի։ Այդքանը՝ երկուսիդ։ Կինդ խոհարարություն կանի սպասավորների և սեզոնային բանվորների համար։ Համաձա՞յն ես։

— Ճիշտ այդպես։

— Վաղը ևեթ պետք է լինեք կալվածքում։ Կտեղավորվես սպասավորների շենքի այն մասում, ուր ապրում էր առաջվա կառապանը։

— Ի՞նչպես էր ձեր երեկվա որսը,— հարցրեց որդին ծերունուն ու նեղ, մազոտ ոտնաթաթերը իջեցրեց գորգի վրա։

— Գրեմյաչի լոգից փախցրինք մի աղվես, քշեցինք մինչև անտառը, բայց քավթառ աղվես էր, խաբեց շներին։

— Կազբեկն էլի կաղո՞ւմ է։

— Ինչպես պարզվեց, նրա ոտը դուրս է ընկել։ Շո՛ւտ արա, Եվգենի, նախաճաշը սառչում է։

Ծերունին շուռ եկավ դեպի Գրիգորին, շրխկացրեց վտիտ, ոսկրոտ մատները։

— Քայլով մա՛րշ։ Վաղը ժամի ութին պետք է այստեղ լինես։

Գրիգորին դուրս ելավ դարբասից։ Ամբարի ետին ճակատի մոտ որսաշները տաքանում էին ձյունից մաքրված, չորացած գետնի վրա։ Քավթառ, պառավական նայվածքով քած շունը քայլեց դեպի Գրիգորին, ետևից հոտոտեց նրան և ուղեկցեց մինչև առաջին հեղեղատը՝ գլուխը տխուր կախած, քայլ առ քայլ հետևելով նրան։ Հետո վերադարձավ։

XII

Ակսինյան վաղ վերջացրեց եփել-թափելը, վառարանի մեջ կիտեց կրակը, ծածկեց ծխնելույզը, և ամանեղենը լվանալով, պատուհանից նայեց բակը։ Ստեփանը կանգնել էր հեծանների կողքին, որոնք դարսված էին ցանկապատի մոտ, Մելեխովների բակին կից տեղում։ Նրա կոշտ պռոշների

անկյունից կախվել էր հանգած ծխախոտը. նա հեծանների մեջ հարմար սյուն էր ընտրում։ Զարդախի ձախ անկյունը փուլ էր եկել, հարկավոր էր երկու ամուր սյուն դնել ու ծածկել եղեգնով։

Ակսինյայի թշերն առավոտից կարմիր էին, աչքերը փայլում էին ջահելության կրակով։ Ստեփանը նկատեց այդ փոփոխությունը. նախաճաշելիս հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ։

— Ի՞նձ. ի՞նչ կա որ,— Ակսինյան շիկնեց։

— Երեսդ փայլում է, ասես ձեթ է քսված։

— Վառարանը թեժ էր... տաքությունը խփեց գլխիս։— Ու շուտ գալով, գողավարի դուրս նայեց պատուհանից, որ տեսնի, թե արդյոք չի՞ գալիս Միշկա Կաշևոյի քույրը։

Վերջինս եկավ միայն օրը մթնելուց քիչ առաջ։ Սպասումից տանջված Ակսինյան ցնցվեց։

— Դու ինձ մո՞տ ես եկել, Մաշուտկա։

— Մի բոպե դուրս եկ։

Ստեփանը վառարանի պատին կպցրած հայելու կտորի առաջ սանրում էր քյաքուլը, եզան պոզից շինված կարճլիկ սանրով կոկում շագանակագույն բեղերը։

Ակսինյան երկչոտ նայեց ամուսնու կողմը։

— Դու երևի տե՞ղ ես գնալու։

Ստեփանը միանգամից չպատասխանեց, սանրը դրեց շալվարի գրպանը, վառարանի պատի գոգից վերցրեց խաղաթղթերի կապուկը և թութունի պարկը։

— Կերթամ Անիկուշկայի մոտ, մի քիչ կնստեմ։

— Հերիք չեղա՞վ, հը՞, Խումա՛ր հա խումար. գիշեր չի լինում, որ չխաղաս։ Նստո՛ւմ են մինչև աքլորականչը։

— Դեհ, բոլ եղավ, այդ շատ ենք լսել։

— Էլի քսանմե՞կ պիտի խաղաս։

— Ձե՛ռ քաշի, Ակսյուտկա։ Հրե՛ն քեզ մարդ է սպասում, գնա՛։

Ակսինյան կողքի դուրս ելավ հաշտը։ Դրսի դռան մոտ նրան ժպիտով դիմավորեց կարմրադեմ, պեպենոտ Մաշուտկան։

— Գրիշկան եկավ։

— Է՞հ։

— Ասավ, որ հենց մթնի, գաս մեզ մոտ։

Ակսինյան վերցնելով Մաշուտկայի ձեռները, նրան հրեց դեպի դուռը։

— Կամաց, կամաց, ջանիկ։ Հետո՞, Մա՛շա։ Կարելի՞ է էլի՞ մի բան ասավ։

— Ասավ, որ ինչ վերցնելու ես քեզ հետ, վերցրու։

Ակսինյան ամբողջովին կրակ կտրած ու դողալով, նայում էր դռանը, կուշտ ու կուռ գարի կերած ձիու նման փոխում ոտները։

— Տե՛ր աստված, բա ես ո՞նց անեմ... հը՞... Այդքան շո՛ւտ... Լավ, բա ես... Կա՛ց, ասա նրան, որ ես շուտ կգամ... Բա նա ինձ ո՞րտեղ կպատահի։

— Ներս արի տուն։

— Օ՛ֆ, չէ, չէ՛։

— Լավ, ոչինչ, ես նրան կասեմ, դուրս կգա։

Ստեփանը հագավ սերթուկը, կախովի լամպից վառեց ծխախոտը։

— Ինչո՞ւ էր նա եկել,— հարցրեց ծխախոտը վառելիս։

— Ո՞վ։

— Այդ Կաշևոյենց Մաշկան, էլի՛։

— Հա՛, իրեն գործով էր եկել... խնդրեց, որ իրեն համար յուբկա ձևեմ։

Փչելով ծխախոտի ծայրի մոխիրը, Ստեփանը քայլեց դեպի դուռը...

— Դու կպառկես քնելու, մի՛ սպասիր։

— Հա՛, էլի՛։

Ակսինյան կոթնեց սառած պատուհանին, նստարանի առաջ ծնկաչոք եղավ։ Մինչև բակի դուռը կոխոտված ձյան շավիղից լսվում էին Ստեփանի ճռճռան քայլերը։ Քամին ծխախոտի կրակից պոկեց մի կայծ և թոցրեց մինչև պատուհանը։ Ապակու չսառած, կլորաձև տեղից Ակսինյան բռնկող ծխախոտի լույսի տակ մի վայրկյան տեսավ փոքրիկ ականջին կոթնած փափախի կիսաշրջանը, սպիտակ դեմքի մի մասը։

Շրջազգեստները, կոֆտաները, կիսաշալերը,— իր աղջկական օժիտը սնդուկից տենդային արագությամբ գցեց մի մեծ շալի մեջ, ու շնչասպառ լինելով, շփոթված աչքերով

վերջին անգամ մտավ խոհանոց, մարեց կրակը, դուրս վազեց։ Մելեխովների տանից մեկը դուրս ելավ բակը անասուններին նայելու։ Ակսինյան սպասեց մինչև որ քայլերը լռեցին, դռան շղթան գցեց կեռին ու կապոցը սեղմելով մարմնին, վազ տվեց դեպի Դոն։ Բրդե լաչակի տակից դուրս էին թափվում մազերը, խտղտում թշերը։ Խուլ տեղերով հասավ Կաշևոյների տունը,— ուժասպառ եղավ, դժվարությամբ էր փոխում թուջի պես ծանրացած ոտները։ Գրիգորին դարբասի մոտ սպասում էր նրան։ Նա վերցրեց կապոցը ու լուռ, առջևից քայլեց դեպի տափաստան։

Կալից դենը Ակսինյան քայլերը դանդաղեցնելով, բռնեց Գրիգորիի թևը։

— Սպասի՛ր մի քիչ։

— Էլ ի՞նչ սպասեմ։ Լուսինը շուտ չի ծագի, պետք է վազել։

— Կա՛ց, Գրիշա,— Ակսինյան կուչ եկավ, կանգ առավ։

— Ի՞նչ պատահեց քեզ,— Գրիգորին կռացավ դեպի Ակսինյան։

— Ոչինչ... փորս մի քիչ ցավեց։ Ծանր բան էի վերցրել։— Լիզելով չորացած շրթունքները, ցավից կկոցելով աչքերը, որոնց առջև հրեղեն կետեր էին շարժվում, Ակսինյան բռնեց փորը։ Կորացած, խղճուկ վիճակում մի փոքր կանգնեց ու մազերի փնջերը տանելով լաչակի տակ, շարժվեց տեղից։

— Էհ, պրծավ, գնա՛նք։

— Դու չես է՛լ հարցնում, թե ես քեզ ուր եմ տանում։ Կարելի է տանում եմ մինչև առաջին յառը ու այնտեղից ցած եմ գլորում, հը՞,— մթության մեջ ժպտաց Գրիգորին։

— Ինձ համար մեկ է։ Այս օրին եմ հասել,— Ակսինյայի ձայնը հնչեց անուրախ ծիծաղով։

Ստեփանը, ինչպես միշտ, այս անգամ էլ վերադարձավ կեսգիշերին։ Մտավ ախոռ, ձիու ոտների տակ թափթփված խոտը հավաքեց, գցեց մսուրը, հանեց պախուցը ու բարձրացավ մուտքի սանդուղքով։ «Ծրևի գնացել է երեկույթի»,— մտածեց նա շղթան կեռից հանելով։ Մտավ խոհանոց, պինդ ծածկեց դուռը, վառեց լուցկին։ Նա տարել էր (մանր խաղացել), դրա համար էլ հանգիստ էր ու քունը տանում էր։

Լույսը վառեց ու տեսավ խոհանոցում այստեղ ու այնտեղ թափթփված իրերը՝ չհասկանալով դրա պատճառը։ Մի փոքր զարմանալով, գնաց օթախը։ Մթին երախի նման սեին էր տալի բացված սնդուկը, հատակին ընկած էր կնոջ հին, շտապելուց մոռացված կոֆտան։ Ստեփանը վրայից դեն գցեց կիսամուշտակը, նետվեց խոհանոց՝ լամպ բերելու։ Դիտեց օթախը,— հասկացավ։ Լամպը շրխկացնելով վար դրեց. առանց ինքն իրեն պարզ հաշիվ տալու պատից քաշեց թուրը. կոթը սեղմեց, մինչև որ մատները ցավեցին, թրի ծայրով բարձրացրեց Ակսինյայի մոռացած կապույտ, հարդագույն ծաղիկներով կոֆտան, գցեց վերև ու օդի մեջ թրի կարճ հարվածով երկու կես արավ այն։

Սփրթնած, հուզված, գայլի իր տխրության մեջ մորմոքվելով, նա դեպի առաստաղ էր շպրտում պատառոտված կապույտ լաթերը. սվսվացող, սուր պողպատը օդի մեջ բրդում էր այդ լաթերը։

Հետո, կտրելով թրափունջը, թուրը շպրտեց օթախի մի անկյունը, գնաց խոհանոց ու նստեց սեղանի առաջ։ Գլուխը ծռած, դողդոջուն, երկաթե մատներով երկար շփում էր սեղանի չլվացած ծածկոցը։

XIII

Փորձանքը միշտ էլ փորձանք է բերում։ Գետկոյի անուշադրության հետևանքով մի առավոտ Միրոն Գրիգորևիչի ցեղային բուղան պոզով պատռեց լավագույն մատակ ձիու վիզը։ Գետկոն սփրթնած, գլուխը կորցրած, դողդողալով վազեց տուն։

— Փորձանք պատահեց, աղա ջան։ Բուղան, ա՛յ սատկի նա, անիծված բուղան...

— Ի՞նչ բուղա, հը՞,— անհանգստացավ Միրոն Գրիգորևիչը։

— Փչացրեց մատակ ձին... պոզով զարկեց... Ես ասում եմ...

Միրոն Գրիգորևիչը չհագնված դուրս թռավ բակը։ Ջրհորի մոտ Միտկան ցցով ծեծում էր հինգ տարեկան կարմիր

ցուլին։ Վերջինս իր ծալ-ծալ կուրծքը գետնին կախած, ձյան վրա այն քարշ տալով, պտտում, ետ-ետ էր տանում ցած գցած գլուխը, ոտով դեն էր շպրտում ձյունը՝ արծաթե փոշին շաղ տալով պարուրաձև ոլորված պոչի շուրջը։ Նա ծծից չէր փախչում, միայն խուլ բառաչում էր, ետին ոտները խփում գետնին ինչպես ցատկումից առաջ։

Նրա կոկորդում աճում, սաստկանում էր ահեղ մնչոցը։ Միտկան խփում էր նրա մռութին, կողերին, այլանդակ հայհոյանքներ էր թափում՝ ուշադրություն չդարձնելով Միխեյին, որը քաշում էր նրա գոտուց։

— Թո՛ղ, Միտրի... Քրիստոս-աստծով եմ խնդրում... Նա քեզ հարու կտա... Գրիգորիչ, դե բո՛լ եղավ էլի՛...

Միրոն Գրիգորևիչը վազեց դեպի ջրհորը։ Ցանկապատի մոտ, գլուխը տխուր քաշ արած, կանգնել էր մատակ ձին։ Գավակոսկրների կողքի քրտնաթոր, սև ու խոր փոսերը ելնում ու իջնում էին շնչառությունից, վզից արյուն էր հոսում ձյան և կրծքի մկանների կլոր ուռուցքների վրա։ Արագ դողից ծածանվում էին մեջքի ու կողերի բաց-կինամոնագույն մազերը, ցնցվում էին աճուկները։

Միրոն Գրիգորևիչը վազեվազ մոտեցավ ձիուն։ Պարանոցի վրա լայն, արյունոտ վերք էր բացվել։ Վերքը խորն ու երկար էր, ձեռքդ կմտներ նրա մեջ. բացված, ծնկաձև կոկորդը դողում էր շնչառությունից։ Միրոն Գրիգորևիչը բռունցքի մեջ սեղմեց ձիու ճակատի մազափունջը, բարձրացրեց նրա կախ ընկած գլուխը։ Ձին իր առկայծող, մանուշակագույն ակնաբիբը ուղղեց տիրոջ աչքերին, ասես հարցրեց՝ «Հետո ի՞նչ կլինի», ու Միրոն Գրիգորևիչը այդ անձայն հարցին ի պատասխան ըղավեց.

— Մի՛տկա, ասա թող կաղնու կեղև խաշեն։ Դեհ, շո՛ւտ։

Գետկոն վազեց կաղնուց կեղև պոկելու, վազելիս դողում էր նրա կեղտոտ բկի եռանկյուն ադամախնձորը։ Միտկան մոտեցավ հորը՝ նայելով բակում պտտվող բուդային։ Կարմրավուն կենդանին, կոխկրտելով հալչող ձյունը, բակովը մեկ այս ու այն կողմ էր նետվում, բառաչում անընդհատ։

— Բռնիր մազափունջը,— հրամայեց հայրը Միտկային։— Միխե՛լ, վազիր թոկ բեր։ Շո՛ւտ, թե չէ մուրթդ կչարդեմ...

Ձիու թավիշե, նոսր մազերով վերին շրթունքը փաթաթեցին ու կապեցին պարանով, որ ցավ չզգա։ Մոտ եկավ Գրիշկա պապը։ Գույնզգույն մի թասով բերին կաղնի գույնի խաշուն։

— Պաղեցրու, երևի տաք է։ Լսո՞ւմ ես թե չէ, Միրոն։

— Ապի, լավ կլինի գնաք տուն։ Այստեղ կմրսեք։

— Իսկ ես ասում եմ՝ պաղեցրու։ Ուզում ես կորցնե՞լ մերունին։

Վերքը լվացին։ Միրոն Գրիգորևիչը մրսած մատներով խամ թելով թելեց ասեղը։ Ինքն էլ կարեց։ Նա այդ արեց ճարպիկությամբ։ Միրոն Գրիգորևիչը դեռ չէր հեռացել ջրհորից, երբ տանից վազեվազ մոտեցավ Լուկինիչնան։ Տագնապը ճզմել էր նրա խամրած այտերի դատարկ տոպրակները։ Նա մի կողմ կանչեց ամուսնուն։

— Նատալյան ետ է եկել, Գրիգորիչ... Ա՛խ, տե՛ր աստվա-ա՛ծ...

— Ա՞յդ էր պակաս...— Փշաքաղվեց Միրոն Գրիգորևիչը, սփրթնեց նրա պեպենոտ, սպիտակավուն դեմքը։

— Գրիգորիի հետ... Փեսադ տանից փախել է։— Լուկինիչնան տարածեց թևերը ոնց որ ադռավը թռչելուց առաջ. ձեռները խփելով փեշերին, նա սկսեց հեծկլտալ.

— Խայտառակվեցինք ամբողջ խուտորում... տե՛ր աստված, այս ի՞նչ խաթա էր... Ա՛խ, օ՛ֆ։

Նատալյան շալով ու ձմեռային կարճլիկ կոֆտայով կանգնել էր խոհանոցի մեջտեղում։ Քթարմատի կողքին երկու արցունքներ էին երևում ու չէին ընկնում։ Թշերը պատել էին աղյուսե սալերի կարմրությամբ։

— Դու ինչո՞ւ ես եկել,— վրա տվեց հայրը՝ մտնելով խոհանոց,— մարդդ ծեծե՞լ է, կռվե՞լ եք...

— Նա հեռացավ տանից,— չոր հեկեկանքը կուլ տալով ու զկոտալով ասաց Նատալյան ու մի փոքր օրորվելով, ծունկ չոքեց հոր առաջ։— Ապի ջան, ապի, կորա՛վ կյանքս... Ինձ ետ բեր այնտեղից։ Գրիգորին փախավ իրեն դարձվորի հետ... Մենակ եմ ես։ Ապի ջան, ես ոնց որ թե անիվի տակ

եմ ընկել...— արագ-արագ վրա էր տալիս Նատալյան՝ կուլ տալով խոսքերի վերջավորությունները, ներքևից աղերսագին նայելով հոր մորուքի շիկակարմիր բծին։

— Կաց, է՛, սպասիր...

— Այնտեղ էլ ապրել չի լինի։ Վերցրեք ինձ...— Դողդոջուն, իրար խփվող ծնկոսկրներով Նատալյան արագ մոտեցավ սնդուկին ու լացից ցնցվող գլուխը դրեց ձեռքին։ Նրա լայնակն ընկավ մեջքին, կոկիկ սանրված, սև ուղիղ մազերը կախվեցին գունատ ականջների վրա։ Սանր բոպեին լացը նույնն է, ինչ որ անձրևը մայիսյան երաշտի ժամանակ, մայրը Նատալյայի գլուխը սեղմեց իր ներս ընկած փորին՝ բարձրացնելով իր կանացի, անկատ լաց ու կոծը. Միրոն Գրիգորևիչը զայրացած դուրս վազեց։

— Լծի՛ր սահնակին երկու ձի... շո՛ւտ արա...

Աքաղաղը, որ արտաքին սանդուղքի մոտ եռանդով դետնել էր մի հավ, բարձր բղավոցից վախենալով, թռավ նրա վրայից ու օրորվելով, կչկչալով և զայրանալով, սանդուղքից թռավ դեպի ամբարները։

— Լծի՛ր...— Միրոն Գրիգորևիչը սապոգներով շարդ ու փշուր արեց սանդուղքի քանդակավոր ճաղերը և միայն այն ժամանակ թողեց այլանդակ կերպով կոտրտված բազրիքն ու տուն մտավ, երբ Գետկոն ախոռից վազեցնելով դուրս բերեց երկու սև ձի՝ միաժամանակ անուրները գցելով նրանց վրա։

Միտկան ու Գետկոն գնացին Նատալյայի իրերը բերելու։ Ուկրաինացին մտամոլոր վիճակում սահնակի տակ գցեց ճանապարհից չհեռացող մի խոճկոր՝ մտածելով իր դրության մասին. «Կարելի է այս գործի պատճառով աղան մոռանա՞ զամբիկի մասին»,— և ուրախանում էր՝ թուլացնելով երաստանները։

«Այնպիսի թարս մա՛րդ է այդ գրողի տարածը, ո՞նց կմոռանա...»— վրա էր հասնում այս միտքը, ու Գետկոն մայրվելով ծռմռում էր շրթունքները։

— Մի՛ խլշկոտի, սև՛ սատանա... Ես քեզ ցո՛ւյց կտամ։— Ու եռանդով շանում էր մարտակահարել ձիու հենց այն տեղը, ուր դողում էր փայծաղը։

XIV

Հարյուրապետ Եվգենի Լիստնիցկին ծառայում էր լեյբգվարդիայի Ատամանյան գնդում։ Սպայական ձիարշավի ժամանակ ընկել էր ձիուց, ձախ թևի բազուկը կոտրվել էր։ Լազարեթում պառկելուց հետո արձակուրդ էր վերցրել ու մեկ և կես ամսով գնացել Յագոդնոյե, հոր մոտ։

Վաղուց այրիացած ծերունի գեներալը Յագոդնոյում մենակ էր ապրում։ Նա կնոջը կորցրել էր Վարշավայի արվարձաններում, անցյալ դարի ութսունական թվականներին։ Կրակել էին կազակական գեներալի վրա, բայց խփել նրա կնոջն ու կառապանին, շատ տեղերից ծակծկել կառքը, իսկ գեներալը կենդանի էր մնացել։ Կնոջից մնացել էր այն ժամանակ երկու տարեկան Եվգենին։ Դրանից հետո գեներալը շատով պաշտոնաթող եղավ, տեղափոխվեց Յագոդնոյե (նրա չորս հազար դեսյատին հողը, որ շնորհվել էր դեռ իր նախապապին 1812 թվականի Հայրենական պատերազմին մասնակցելու համար, գտնվում էր Սարատովի նահանգում) ու սկսեց միայնակ, մռայլ կյանք վարել։

Մեծացած Եվգենին ազատեց կադետների դպրոց, ինքը զբաղվեց տնտեսությամբ. ցեղային պտուղներ աճեցրեց, կայսերական ձիաբուծարանից գնեց արագաժաղ արտադրողներ՝ ցեղային ձիեր աճեցնելու համար, ու նրանց խաչասերելով Անգլիայից և Դոնի Պրովալսյան ձիաբուծարանից բերված լավագույն մատակ ձիերի հետ, ունեցավ իր ցեղային նժույգները։ Իրեն բաժին ընկած կազակական և գնված հողում ձիերի երամակներ էին պահում, ուրիշի ձեռքերով հաց էր ցանում, ձմռանն ու աշնանը բարակներով որս էր անում, երբեմն էլ առանձնանալով սպիտակ դահլիճում, շաքարներով խմում էր։ Ստամոքսի ծանր հիվանդությունը մաշում էր նրան, ու բժիշկների ամենախիստ արգելքի պատճառով նա չէր կարող կուլ տալ ծամած կերակուրը. ծամում էր, ծծում հյութերը, իսկ ծամածը բերանից թափում էր արծաթե ափսեի մեջ, որը կողքից, կարկառած ձեռներով միշտ բռնում էր երիտասարդ լակեյ, մուժիկ Վենիամինը։

Վենիամինը մի քիչ տարտաղ էր, թխադեմ, գլխին ոչ թե մազեր էին, այլ սև ու խիտ անթափանց փրշեր։ Վեց տարի

ծառայում էր պան Լիստնիցկու մոտ։ Սկզբում, երբ ստիպված էր արծաթե ափսեով կանգնել գեներալի կողքին, չէր կարողանում առանց զզվելու նայել, թե ծերունին ինչպես է բերանից թափում ատամների տակ քրքրված, գորշ գույնի ուտելիքը, իսկ հետո ընտելացավ։ Մի տարուց հետո, մի անգամ տեսնելով, թե ինչպես պանը ծամում է հնդուհավի սպիտակ մսից պատրաստված կատլետները ու թափում բերանից, մտածեց. «Ափսոս, կորչում է լավ ուտելիքը։ Ինքը չի դիտվում, իսկ իմ փորը ղողոում է սովածությունից։ Մի խոսքով, իսկը դեզի վրայի շուն։ Ոչ ինքն է ուտում, ոչ թողնում է տավարն ուտի։ Փորձեմ ուտել սրա ծամածը, ամա հո սիրտս չեմ թափի»։ Փորձեց — սիրտը նստ չտվեց։ Այդ ժամանակներից սկսած՝ ճաշից հետո արծաթե ափսեն տանում էր նախասենյակը և այնտեղ շուտ-շուտ կուլ էր տալիս այն, ինչ որ բժիշկները պանին արգելել էին կուլ տալ։ Դրանի՞ց էր արդյոք, թե մի ուրիշ բանից,— նա չաղացավ, ճարպակալեց, վզի վրա խիտ-խիտ ծալքեր առաջացան։

Կալվածքում, բացի Վենիամինից, ապրում էր նաև հեռակայալ սպասավորները՝ խոհարարուհի Լուկերյան, զառամյալ ձիապան Սաշկան, հովիվ Տիխոնը և կառապան պաշտոնով նոր ընդունված Գրիգորին՝ Ակսինյայի հետ։ Լիտիկ, չեշտ, հաստաքամակ Լուկերյան, որը չբարձրացած խմորի գեղին գնդի էր նման, հենց առաջին օրը Ակսինյային վանեց խոհանոցից։

— Կերակուր կեփես, երբ պանը ամառվա համար բանվորներ կվարձի, իսկ հիմի ես, իհարկե, ինքս կե՛փեմ։

Ակսինյայի պարտականությունն էր շաբաթը երեք անգամ լվալ տան հատակները, կերակրել բազմաթիվ հավ ու ճիվը և մաքուր պահել թռչնանոցը։ Նա եռանդով ձեռնամուխ եղավ ծառայության՝ աշխատելով գոհացնել բոլորին, նաև Լուկերյային։ Գրիգորին ժամանակի մեծ մասն անց էր կացնում ընդարձակ, գերաններից կառուցված ախոռում, ձիապան Սաշկայի հետ։ Ծերունին ամբողջովին ճերմակել էր, բայց էլի նրան Սաշկա էին ասում,— կարծես ջահել տղա լինի։ Ոչ ոք նրան հայրանունով չէր կանչում, իսկ ազգանունը երևի չգիտեր նաև ինքը ծերունի Լիստնիցկին, որի մոտ Սաշկան ապրում էր քսան տարուց ավելի։ Սաշկան ջահել ժամանակ կառապանություն էր անում, բայց կյանքի վերջում, կորցնելով ուժն ու տեսողությունը, ձիապան էր դարձել։ Ցածրահասակ էր, ամբողջովին ճերմակած-գորշավուն մազերով (մինչև իսկ ձեռների վրա էլ սպիտակ մազեր կային), քիթը տափակած էր դեռ մանկությունից, հաստ մահակի հարվածից, շարունակ ժպտում էր մանկական վառ ժպիտով, պարզամտություն արտահայտող ու կարմիր ծալերի մեջ կորած աչքերով նայում էր շրջապատին։ Նրա առաքելական դեմքը փչացնում էին տափակ, մի քիչ ծիծաղաշարժ քիթը ու դեպի ներքև իջնող սպիով այլանդակված ստորին շրթունքը։ Զինվոր ժամանակ հարբեցողություն անելիս (Սաշկան բոգուչարցի ռուս էր) թագավորական արաղի փոխարեն կես շիշ այրող թունդ արաղ էր գցել, դրա հրեղեն հոսանքն էլ հենց իր ստորին շրթունքը կպցրել էր կզակին։ Այնտեղ, ուր հոսել էր այդ արաղը, մնացել էր չմազակալող, վարդակարմիր, ծուռտիկ ու ծիծաղաշարժ մի սպի, ասես անհայտ մի գազան լիզել էր Սաշկայի մորուքը՝ թողնելով բարալիկ, խարտոցանման լեզվի հետքը։ Սաշկան հաճախ արաղ էր կոնծում, այդպիսի բոպեներին թրև էր գալի կալվածքի բակում, ասես ինքն էր տեր ու տնօրենը, ու ոտները չմփացնելով իրար, կանգնում էր պանական ննջարանի պատուհանների տակ ու խորամանկությամբ մատը պտտում էր ծիծաղելի քթի առաջ։

— Միկոլայ Լեքսեիչ, ա՛յ Միկոլայ Լեքսեիչ,— կանչում էր նա բարձրաձայն ու խստորեն։

Ծերուկ պանը, եթե այդ բոպեին ննջարանումն էր, մոտենում էր պատուհանին։

— Կշտացել ես, հա՞, ա՛յ սևահոգի,— որոտում էր նա պատուհանից։

Սաշկան վեր էր քաշում ընկնող վարտիքը, աչքով էր անում, շարաճճիորեն ժպտում։ Ժպիտը շեղակի անցնում էր նրա ամբողջ դեմքով. կկոցված ձախ աչքից մինչև վարդակարմիր սպին, որ իջնում էր բերանի աջ անկյունից։ Ժպիտը խոտորնակի էր, բայց հաճելի։

— Միկոլայ Լեքսեիչ, ձերդ արժանապատվություն, ես քեզ ճա-նա-ա-չո՛ւմ եմ...— Ու Սաշկան ոստոստալով,

սպառնալից թափ էր տալի վերև ցցած, բարակ ու կեղտոտ մատը։

— Գնա, քնիր,— հաշտվողաբար ժպտում էր պանը լուսամուտից, ծխելուց դեղնած ամբողջ հինգ մատներով ոլորում կախ ընկած բեղերը։

— Սաշկային սատանան էլ չի խաբի,— մոտենալով ցցապատնեշին, ծիծաղում էր Սաշկան։— Միկոլայ Լեքսեիչ, դու... ինձ պես ես։ Ես ու դու — ոնց որ ձուկն ու ջուրը։ Ջուկը անցավ ջրի տակը, ես ու դու էլ... մոռանք բակը։ Ես ու դու հարուստ ենք, հա՛-ա...— Սաշկան կռանալով, լայն տաբաձում էր ձեռները։— Մեզ բոլորն էլ գիտեն Դոնի ամբողջ մարդում։ Ես ու դու...— Սաշկայի ձայնը տխուր և գաղտագողի էր հնչում,— ես ու դու, ձերդ գերազանցություն, ամեն բանով լավ ենք, միայն թե մեր քթերը տոպականված են...

— Ինչո՞վ,— հետաքրքրվում էր պանը՝ կապուտկելով ծիծաղից ու շարժելով բեղերը և ենթաբեղերը։

— Արաղի պատճառով,— կտրուկ ասում էր Սաշկան, հաճախակի թարթում աչքերը ու լեզվով սրբում փուլինքը, որը իջնում էր վարդակարմիր տպի անցքով։— Դո՛ւ, Միկոլայ Լեքսեիչ, մի՛ խմիր։ Թե չէ ես ու դու բոլորովին կկորչենք։ Ունեցած-չունեցածներս էլ տուրք կտանք...

— Գնա՛, հրես, մի հատ էլ գցիր, որ հանգստանաս։

Պանը լուսամուտից շպրտում էր մի քսան կոպեկանոց, Սաշկան բռնում էր օդում, դնում ոլխարկի ատատի տակ։

— Դեհ, մնաս բարով, գեներալ,— հեռանալով, հոգոց էր հանում նա։

— Իսկ ձիերը ջրե՞լ ես,— կանխապես ժպտալով՝ հարցնում էր պանը։

— Ա՛խ, քոսոտ սատանա, շան սրդի,— պայթացած բղավում էր Սաշկան կերկերուն ձայնով։ Բարկությունից նա դողում էր։— Սաշկան մոռանա՞ ձիերը ջրել, հը՞։ Որ մեռած էլ լինեմ, էլի մի-մի դույլ ջրհորի ջուր կտանեմ ձիերին, իսկ նա տես թե ինչեր է դուրս տալի... օ՛ֆ...

Սաշկան հեռանում էր անարդարացի վիրավորանքով համակված, հայհոյելով ու բռունցքները թափ տալով։ Նրան

ամեն ինչ ներվում էր,— և՛ հարբեցողությունը, և՛ մտերմական վարմունքը պանի հետ. ներվում էր այն պատճառով որ Սաշկան անփոխարինելի ձիապան էր։ Նա ամառ-ձմեռ քնում էր ախոռում, ձիու գոմաղբ տեղում. ոչ ոք չէր կարող նրանից ավելի լավ վարվել ձիերի հետ, նա թե ձիապան էր և թե ձիաբույժ. գարնանը, մայիս ամսին տափաստանում, չոր և խոնավ հովիտներում բուժիչ խոտաբույսեր, արմատիքներ էին հավաքում։ Ախոռի պատերից բարձր կախված էին լինում տարբեր տեսակի սաղարթ ունեցող խոտաբույսերի կապուկները. թորթոմը — սրտախտի դեմ, օձի աչքը — օձի կծելու դեմ, սև տերևուկը՝ ոտները փչանալու դեմ, պուրակներում, ուռենիների արմատի մոտ բսնող, սակավ նկատելի մի սպիտակ խոտաբույս — վնասվածքի դեմ, և ուրիշ շատ, անհայտ բույսեր ձիերի այլևայլ ախտերի ու հիվանդությունների դեմ։

Ախոռում, ձիու տեղում, որտեղ քնում էր Սաշկան, ամառ-ձմեռ սարդոստայնե վարագույրի նման կախված էր սուր, կոկորդին կպչող հոտը։ Տախտակե մահճակալի վրա, ձիու սթարի տակ փռված էր քարի պես պնդացած խոտը և այդ մահճակալի վրա ընկած էր լինում Սաշկայի վերնազգեստը, որից միշտ ձիու քրտնքի հոտ էր գալիս։ Բացի այդ վերնազգեստից ու աղաղած կիսամուշտակից, Սաշկան ուրիշ իրեր չուներ։

Տիխոնը, հաստ պոռշներով, հաղթանդամ ու ցանցառ մի կազակ, ապրում էր Լուկերյայի հետ, ծածուկ, առանց պատճառի խանդում Սաշկայի նկատմամբ։ Ամիսը մի անգամ նա բռնում էր Սաշկայի կեղտակալած շապկի կոճակից ու նրան տանում մի ծածուկ տեղ։

— Պապի, դու իմ կնկա վրա աչք մի տնկի։

— Դեհ, ո՛նց ասեմ...— Սաշկան խորհրդավոր կերպով թարթում էր աչքերը։

— Ե՛տ քաշվիր, պապի,— խնդրում էր Տիխոնը։

— Ես, բարեկամ, չեչոտներին եմ սիրում։ Արաղից ձեռ կքաշեմ, իսկ չեչոտ կնկանից՝ ոչ։ Ինչքան նա չեչոտ լինի, այնքան այդ անիծվածը շատ կսիրի մեզ նմաններին։

— Քո հասակում, ա՛յ պապի, դա անհարմար է և մեղք

է... ի՜-ի՜հ, հլա դեռ բժիշկ է՛լ ես, ձիեր ես բժշկում, գյուխ ունես...

— Ես ամեն բան բժշկում եմ,— համառում էր Սաշկան։

— Ետ քաշվիր, պապի։ Այդպես հո չի կարելի։

— Ես պիտի կպչեմ այդ Լուկերյային, հա՜-ա։ Ձեռ քաշիր նրանից, այդ անզգամից, մեկ է, ձեռիցդ կխլեմ։ Նա ոնց որ չամչով կարկանդակ լինի։ Միայն թե չամիչը միջից հանված է, դրանից էլ նա մի քիչ չեչոտ է։ Սիրում եմ այդպիսիներին։

— Ա՜ռ, վերցրու... իսկ ճամփես մի՜ փակի, թե չէ կսպանեմ,— ասում էր Տիխոնը, հոգոց էր հանում ու թուքունի տոպրակի միջից նրան պղնձադրամ էր տալիս։

Ամեն ամիս այդպես էր լինում։

Քնեած թմրության մեջ բորբոսնում էր կյանքը Յագոդնոյում։ Կալվածքը գտնվում էր խուլ վայրում, շոր հովտում, բանուկ ճանապարհներից հեռու. աշնանից կտրվում էր կապը ստանիցայի և խուտորների հետ։ Սև անտառում ձմեռող գայլերն իրենց ձագերով ձմռան գիշերներին դուրս էին գալիս բլրակի վրա, որը կորնթարդ ավազոտ հրվանդանի էր նման և կոթնել էր պուրակին, ու ոռնում էին, վախեցնում ձիերին։ Տիխոնը գնում էր պուրակ՝ պանի որսորդական հրացանից կրակելու, իսկ Լուկերյան ռուսական վառարանի կափարիչի նման հաստ հետույքը կոշտ քթանով փաթաթած, կուչ էր գալի, սպասում կրակոցին, պարարտ ու չեչոտ թշերի մեջ կորած աչքերով դիտում էր մթությունը։ Տգեղ, քաչալ Տիխոնն այդ ժամանակ գեղեցիկ ու խիստ քաջ երիտասարդ էր թվում նրան, ու երբ ճռնչում էր սպասավորների շենքի դուռը և ներս թողնում քուլա-քուլա գոլորշին ու Տիխոնին, Լուկերյան տեղ էր բաց անում մահճակալի վրա, մեջքով ճրզմում էր պատի վրայի փայտոջիլները ու ղունղունալով, քաղցը գրկում էր մրսած կենակցին։

Ամառը Յագոդնոյում մինչև ուշ դիշեր լսվում էին բանվորների ձայները։ Պանը մի քառասուն դեսյատին հաց էր ցանում, հնձելու համար բանվորներ էր վարձում։ Ամառը երբեմն Եվգենին գալիս էր կալվածք, զբոսնում էր այգում և տնամերձ պուրակում, ձանձրանում էր։ Առավոտները ձրկնոբսական կարթերով նստում էր լճակի ափին։ Նա ցածրահասակ էր, ուռուցիկ կրծքով։ Կազակավարի քյաքուլ էր թողնում, սանրում աջ կողմը։ Սպայական սերթուկը քիպ նստում էր նրա մարմնին։

Գրիգորին հենց որ Ակսինյայի հետ տեղավորվեց կալվածքում, առաջին օրերից սկսեց հաճախ լինել երիտասարդ պարոնի մոտ։ Մի անգամ Վենիամինը մտավ սպասավորների շենքը. թեքեց փրշոտ գլուխը, ժպտաց։

— Գրիգորի, գնա երիտասարդ պանի մոտ. հրամայեց կանչել։

Գրիգորին գնաց, ներս մտավ, կանգնեց դռան մոտ։ Եվգենի Նիկոլաևիչը բաց անելով նոսր, լայն ատամները, ձեռքով ցույց տվեց աթոռը։

— Նստիր։

Գրիգորին նստեց աթոռի ծայրին։

— Ի՞նչպես են քեզ դուր գալիս մեր ձիերը։

— Կարգին ձիեր են։ Գորշ ձին շատ լավն է։

— Դու նրան շուտ-շուտ վարժեցրու։ Տե՛ս, շատ արագ չքշես։

— Սաշկա պապին բացատրել է ինձ։

— Իսկ Դիմացկո՞ւն ինչպես է։

— Թուխ ձի՞ն, հա՞։ Գին չունի։ Սմբակը հարել է, պետք է նորից նալել։

Երիտասարդ պանը կկոցելով ծակող, գորշ աչքերը, հարցրեց.

— Մայիսին դու գնալու ես ճամբարները, չէ՞։

— Ճիշտ այդպես։

— Ես կխոսեմ ատամանի հետ, չես գնա։

— Խոնարհաբար շնորհակալ եմ։

Լռում էին։ Հարյուրապետը արձակելով համազգեստի օձիքը, քորում էր կանացի սպիտակ կուրծքը։

— Հը՛, ո՛նց է, դու չե՞ս վախենում, որ Ակսինյայի ամուսինը նրան կխլի քեզանից։

— Նա Ակսինյայից հրաժարվել է, չի խլի։

— Ո՞վ է քեզ ասել։

— Գնացել էի ստանիցա նալի մեխեր բերելու, տեսա մեր խուտորից մի մարդ։ Ասում է՝ Ստեփանը խոսք է թոցրել բերանից։ «Ինձ,— ասել է,— Ակսյուտկան մի գրոշի չափ

էլ հարկավոր չի։ Թող կորչի-գնա, ես նրանից ավելի լավը կգտնեմ»։

— Ակսինյան դեղեցիկ կին է,— ասաց հարյուրապետը ու նայեց Գրիգորիի աչքերից վերև, շնական ժպիտը դեմքին։

— Վատ կնիկ չէ,— համաձայնվեց Գրիգորին ու մռայլվեց։

Եվգենիի արձակուրդի ժամկետը լրանում էր։ Նա արդեն կարող էր ազատ, առանց վիրակապի ման գալ, բարձրացնել թևը առանց ծալելու։

Վերջին օրերում նա հաճախ նստում էր Գրիգորիի մոտ, սպասավորների շենքի այն մասում, որ տեղավորված էր Գրիգորին։ Ակսինյան մաքուր սպիտակացրել էր կեղտի մեջ կորած սենյակը, լվացել էր պատուհանների վարագույրները, ջարդած աղյուսով քերել ու մաքրել հատակը։ Կնոջ ձեռքը հաճելի ու հարմար մի անկյուն էր ստեղծել։ Ցածրիկ վառարանը հիանալի տաքացնում էր սենյակը։ Հարյուրապետը կապույտ մահուդե ռոմանովյան կիսամուշտակը վրան գցած, գնում էր սպասավորների շենքը։ Այնպիսի ժամանակ էր ընտրում, երբ Գրիգորին զբաղված էր ձիերով։ Սկզբում մտնում էր խոհանոց, կատակում Լուկերյայի հետ ու շուտ գալով, գնում էր Ակսինյայի մոտ։ Նստում էր վառարանի կողքին, տաբուրետի վրա, կռացնում մեջքը, անամոթ, ժպտուն հայացքով նայում Ակսինյային։ Ակսինյան նրա ներկայությամբ շփոթվում էր, մատների մեջ դողում էին մլերը, որոնցով նա գուլպա էր գործում։

— Ի՞նչպես ես ապրում, Ակսինյուշկա,— հարցնում էր հարյուրապետը, պապիրոսի կապույտ ծխով լցնում սենյակը։

— Շնորհակալ եմ։

Ակսինյան բարձրացնում էր գլուխը, ու հանդիպելով նրա սուր հայացքին,— որը լուռ խոսում էր հարյուրապետի ցանկության մասին,— թունդ շիկնում էր։ Նրա համար դայրացուցիչ ու անհաճելի էր նայել Եվգենի Նիկոլաևիչի մերկացած, պայծառ աչքերին։ Նա կցկտուր պատասխաններ էր տալիս այլևայլ դատարկ հարցերին ու աշխատում էր շուտ հեռանալ։

— Գնա՛մ։ Պետք է բադերին կուտ տալ։

— Նստիր։ Հետո կուտ կտաս,— ժպտում էր հարյուրա-

պետը ու նրա ոտները դողում էին քիպ նստած շալվարի մեջ։

Նա Ակսինյային երկար ու բարակ հարցափորձ էր անում նրա առաջվա կյանքի մասին, մերթ ցածրացնում, մերթ բարձրացնում էր հոր ձայնին նմանվող իր ձայնը, անպատկառ նայում աղբյուրի ջրի պես վճիտ իր աչքերով։

Վերջացնելով իր գործը, Գրիգորին գալիս էր սպասավորների շենքը։ Հարյուրապետը հանգցնում էր իր աչքերի կայծերը, նրան հյուրասիրում էր պապիրոսով ու հեռանում։

— Ինչի՞ էր նստել այստեղ,— առանց Ակսինյային նայելու, խուլ ձայնով հարցնում էր Գրիգորին։

— Ի՞նչ իմանամ։— Հիշելով հարյուրապետի հայացքը, Ակսինյան շինծու ծիծաղում էր։— Եկավ, նստեց այստեղ, մտիկ արա, Գրիշենկա, ա՜յ, այսպես,— (նա ցույց էր տալիս, թե ինչպես էր նստել հարյուրապետը, վերջինիս նման կռացնում էր մեջքը),— նստեց ու նստեց զահլա տարավ, ծնկներն էլ այնքան սուր են, այնքան սուր։

— Դո՞ւ ես կանչել նրան, հը՞,— Գրիգորին չարանալով կկոցում էր աչքերը։

— Նա ինչի՞ս է պետք։

— Տե՛ս, հա՛-ա, թե չէ մեկ էլ տեսար ես նրան սանդուղքից ցած գլորեցի։

Ակսինյան ժպտալով նայում էր Գրիգորիին ու չէր կարողանում հասկանալ՝ լո՞ւրջ է ասում նա, թե՞ կատակում է։

XV

Մեծ պասի չորրորդ շաբաթում ձմեռը տեղի տվեց։ Դոնի վրա ծոպավոր ժապավենի նման փռվեցին ջրաշերտերը, տեղ-տեղ ծակծկվեց, ճերմակեց երեսից հալչող սառույցը։ Եբեկոնեբին խուլ շաչում էր սարը, ծերունիների ասելով դա սառնամանիքի նշան էր, իսկ իրականում հուպ մոտենում էր հալչոցը։ Առավոտները թեթև սառնամանիքներ էին լինում ու ճրնգում էին սառույցները, իսկ կեսօրին հողը տաքանում էր ու զգացվում մարտ ամսի, բալենիների սառած կեղևի, փտած ծղոտի բույրը։

Միրոն Գրիգորևիչը կամաց-կամաց պատրաստվում էր

վար ու ցանքին, օրնիբուն զբաղված էր շարդախի տակ.— տաշում էր ցաքանների ատամները, Գետկոյի հետ միասին երկու նոր անվասարք էր շինում սայլերով երթևեկելու համար։ Գրիշակա պապին պասի չորրորդ շաբաթում ծոմ էր պահում։ Ցրտից սևացած դալիս էր եկեղեցուց, գանգատվում հարսին.

— Հոգի հանեց տերտերը, այդ անպետք սպասավորը, ը-հմ, այնպես է ժամ ասում, ոնց որ հավկիթ ծախողը սայլաբեռ տանի։ Օ՜ֆ, փորձանք է, էլի՜։

— Հայրիկո՛, լա՛վ կլիներ դուք ավագ շաբաթին ծոմ պահեիք, այն ժամանակ եղանակը տաք կլինի։

— Դու կանչիր Նատաշկային։ Թող նա ինձ համար ավելի հաստ գուլպա գործի, իսկ այսպիսի բարակ կրունկներ ունեցող գուլպաներով գելն էլ կկորցնի ոտները։

Նատալյան հոր մոտ ապրում էր «ոնց որ հալից ընկած խախոլ». նրան շարունակ թվում էր, թե Գրիգորին կվերադառնա իր մոտ, սպասում էր կարոտավառ, ականջ չդնելով բանականության զգաստ թելադրանքին. գիշերները հալ ու մաշ էր լինում այրող կարոտից, հեծկլտում էր՝ անսպասելի, անարդարացի վիրավորանքով ճզմված։ Իսկ դրան ավելացավ մի ուրիշ բան, ու Նատալյան սառն երկյուղով գնում էր դեպի վախճան, գիշերները թպրտում էր աղջկական սենյակում ինչպես զարկված կիվիվը ճահճուտի բոշխում։ Առաջին իսկ օրերից Միտկան ուրիշ կերպ էր նայում նրան, ու մի անգամ հաշտում բռնելով Նատալյային, ուղղակի հարցրեց.

— Կարոտո՞ւմ ես Գրիշային։

— Իսկ դու ի՞նչ ես ուզում։

— Ուզում եմ կարոտդ ցրեմ...

Նատալյան նայեց նրա աչքերին ու սարսափեց իր ենթադրությունից։ Միտկան նրա վրա էր շռել իր կանաչ, կատվի աչքերը, հաշտի մթության մեջ յուղի փայլ էին արձակում նրա բիբերը։ Նատալյան դուռը շրխկացնելով, ներս ընկավ կողքի սենյակը, Գրիշակա պապի մոտ, ու երկար կանգնեց՝ ունկնդրելով սրտի տագնապալից տրոփյունին։ Դրանից հետո, հետևյալ օրը բակում Միտկան մոտեցավ նրան։ Միտկան անասուններին խոտ էր տալիս, և նրա ուղիղ մազերի վրա, սպանական ոչխարենու փափախի վրա խոտի կանաչ

ցողուններ էին թափվել։ Նատալյան խոզի տաշտակից դեն էր քշում հավաքված շներին։

— Դու նոթերդ մի՛ կիտի, Նատաշկա...

— Հայրիկին կասեմ, հա՜-ա,— բղավեց Նատալյան՝ ձեռներով նրանից պաշտպանվելով։

— Թյո՜ւ, գժվե՞լ ես, ինչ է։

— Կորի-գնա՜, անիծված...

— Լավ, էլ ինչի՞ ես բղավում։

— Հեռացիր, Միտկա։ Հիմի կերթամ ու կպատմեմ հայրիկին... Այդ ի՞նչ աչքերով ես նայում ինձ։ Ի-ի-ի՜հ, անամոթ... Գետինը մտնես։

— Գետինը պինդ է, մտնել չի լինի։ — Միտկան այդ հաստատելու համար դոփեց ոտները, ձեռքերը դնելով կողերին։

— Ինձ մի՛ կպչի, Միտրի։

— Հիմի չեմ կպչի, իսկ գիշերը կգամ։ Աստված վկա կգամ։

Նատալյան ցնցվելով հեռացավ բակից։ Երեկոյան անկողին գցեց սնդուկի վրա, փոքր քրոջը պառկեցրեց իր հետ։ Գիշերը շուռումուռ էր գալիս, բորբոքված աչքերով դիտում մթությունը։ Սպասում էր շշուկի, որ բղավեր ամբողջ տունը մեկ, բայց լռությունը խախտվում էր պատի մյուս կողմում քնած Գրիշակա պապի ֆսսոցով միայն և իր կողքին փռված քրոջ հազվադեպ խռմփոցով։

Քանդվում էր օրերի կծիկը՝ կանացի անքթիթ վշտով թունավորված։

Միտկան, որ դեռ չէր մոռացել վաղուցվա իր խայտառակությունը խնամախոսության վերաբերմամբ, մոայլ էր ու չարացած։ Երեկոները գնում էր երգ ու պարի և հազվադեպ էր շուտ գալիս տուն, ավելի ու ավելի հաճախ վերադառնում էր առավոտ ծեգին։ Թրևում էր ամուսինների բացակայությամբ ապրող, ման եկող կանանց հետ, գնում էր Ստեփանի մոտ՝ քսանմեկ խաղալու։ Միրոն Գրիգորևիչը առժամանակ լռում էր, դիտում։

Յատկից առաջ մի անգամ Մոխովի խանութի մոտ Նատալյան հանդիպեց Պանտելեյ Պրակոֆևիչին։ Պրակոֆևիչն առաջինը դիմեց նրան.

— Սպասիր մի բոպե։

Նատալյան կանգ առավ։ Տխրեց՝ նայելով կեսարի սապատաքիթ, աղոտ կերպով Գրիգորիին հիշեցնող դեմքին։

— Դու ինչո՞ւ չես գալիս մեզ, ալևորներիս մոտ,— ասաց ծերունին ու շփոթված նայեց Նատալյային, կարծես ինքն էր մեղավոր նրա առաջ։— Պառավը կարոտել է քեզ ...Նա ոտ ու գլխին է տալի, թե ինչու բանն այսպես եղավ... է՜հ, ո՞նց ես, լա՞վ ես։

Նատալյան ուշքի եկավ ակամա շփոթությունից։

— Շնորհակալություն... — ու կանգ առնելով (ուզում էր հայրիկ ասել), վերստին շփոթվելով, վերջացրեց,— Պանտելեյ Պրակոֆևիչ։

— Ինչո՞ւ չես գալի մեր տունը։

— Աշխատում եմ... մերոնց հետ։

— Մեր Գրիշկան, է՜հ... — ծերունին դառնությամբ պտտեց գլուխը,— փորձանք բերեց մեր գլխին այդ անիծվածը... Ինչքա՜ն լավ կապրեինք...

— Ի՞նչ արած, ապի... — բարձր զրնգուն ձայնով ասաց Նատալյան,— երևում է որ բախտը այդպես չի կամեցել։

Պանտելեյ Պրակոֆևիչը նայելով Նատալյայի արցունքով լցված աչքերին, շփոթությունից չիմացավ ինչ անի։ Նատալյան սեղմում էր շուրթերը, ճիգ էր անում պահել արցունքները։

— Դեհ, մնաս բարով, սիրելիս... Դու նրա համար, շան որդու համար դարդ մի անի, նա քո եղունգին էլ չարժի։ Կարելի է նա ետ գա։ Թե մի կտեսնեմ նրա՜ն, գիտեմ ինչ կանեմ։

Նատալյան հեռացավ գլուխը կուչ արած, կարծես ծեծկված լիներ։ Պանտելեյ Պրակոֆևիչը երկար կոխկրտեց գետինը, ասես ուզում էր միանգամից անցնել վազքի։ Նատալյան փողոցի անկյունում շուռ գալով, ետ նայեց. կեսարը կաղ-կաղ գնում էր հրապարակով, ուժգին հենվելով գագանակին։

XVI

Շտոկմանի մոտ ուշ-ուշ էին հավաքվում։ Մոտենում էր գարունը։ Խուտորցիները պատրաստվում էին գարնանային աշխատանքին. միայն աղացից գալիս էին Վալետը, Դավիդկան և Իվան Ալեքսեևիչը։ Ավագ հինգշաբթի օրը իրիկնադեմին հավաքվեցին արհեստանոցում։ Շտոկմանը աշխատում էր դազգահի վրա, խարտոցով հղկում էր արծաթե հիսուն կոպեկանոցից պատրաստած մատանին։ Պատուհանից ներս էր ընկել մայր մտնող արևի ճառագայթների խուրձը։ Հատակի վրա շողում էր վարդագույն-դեղնավուն, փոշոտ քառակուսին։ Իվան Ալեքսեևիչը ձեռների մեջ շուռումուռ էր անում աքցանը։

— Օրերս եղա աղացատիրոջ մոտ, գնացել էի մխոցի մասին խոսելու։ Հարկավոր է տանել Միլլերովո, այնտեղ ոնց որ պետք է կսարքեն, իսկ մենք ի՞նչ կարող ենք անել։ Ա՛յ թե ինչպիսի ճեղք է բացվել,— Իվան Ալեքսեևիչը ճկույթի վրա հայտնի չէ ում ցույց տվեց ճեղքի չափը։

— Այնտեղ կարծեմ գործարան կա, հը՞,— հարցրեց Շտոկմանը՝ շարժելով խարտոցը, արծաթե մանրագույն փոշի շաղ տալով մատի շուրջը։

— Մարտենյան գործարան։ Անցյալ տարի ես եղել եմ այնտեղ։

— Շա՞տ են բանվորները։

— Շատ են։ Չորս հարյուր։

— Ի՞նչպես են նրանք,— Շտոկմանը աշխատելիս թափահարում էր գլուխը և դրանից էլ բառերն առանձին-առանձին էին հնչում ինչպես կակազողի արտասանած բառերը։

— Նրանք լավ են ապրում։ Ոչ թե պրոլետարներ են, այլ այնպես, էլի՜... աղբ։

— Ինչո՞ւ է այդպես,— հետաքրքրվեց Վալետը՝ նստելով Շտոկմանի կողքին, ծնկների տակ խաչաձև ծալելով կարճլիկ, սպիներով ծածկված մատները։

Գլանիչ-Դավիդկան ալրափոշուց ճերմակած, որ լցվել էր նրա մազերի մեջ,— քայլում էր արհեստանոցում, քոշերով ցրիվ էր տալիս տաշեղների շրշող փրփուրը, ժրպ-

տալով ունկնդրում չոր, հոտավետ շրշյունին։ Նրան թվում էր, թե քայլում է ծիրանեգույն սաղարթով պատած կիրճում, տերևները փափլիկ ճմլվում են, իսկ նրանց տակին զգացվում է կիրճի խոնավ հողի թարմ պրկությունը։

— Այդպես է, որովհետև նրանք բոլորն էլ ունևոր են։ Ամեն մեկն ունի իրեն տնակը, իրեն կնիկը ամեն տեսակ հաճույքով։ Այն էլ պիտի ասեմ, որ նրանց կես մասը բապտիստներ են։ Գործատերն ինքը նրանց մոտ քարոզիչ է, դեհ, իհարկե, ձեռքը ձեռք է լվանում, իսկ երկու ձեռքի կեղտը քլունգով էլ չես հանի։

— Իվան Ալեքսեևիչ, այդ ի՞նչ բապտիստներ են,— լսելով անծանոթ բառը, Դավիդկան կանգ առավ։

— Բապտիստնե՞րը։ Իրենց ուզածի պես են հավատում աստծուն։ Պոլիպոնների[1] պես են։

— Ամեն մի հիմար իր ուզածի պես է գժվում,— ավելացրեց Վալետը։

— Հա՛, այն էի ասում, գալիս եմ Սերգեյ Պլատոնովիչի մոտ,— Իվան Ալեքսեևիչը շարունակեց սկսած պատմությունը,— նրա մոտ նստած է Ատեպինը, Ցացան։ «Սպասիր,— ասում է,— նախասենյակում»։ Նստեցի, սպասում եմ։ Դռան միջից լսում եմ նրանց խոսակցությունը։ Ինքը ասում է Ատեպինին, թե շատ շուտով պետք է գերմանացիների հետ պատերազմ լինի, ինչ-որ գրքից մի բան կարդաց, իսկ Ցացան գիտե՞ս ինչ է ասում։ «Իհարկե,— ասում է,— պատերազմի վերաբերմամբ ես ձեզ հետ համաձայն չեմ»։ — Իվան Ալեքսեևիչը այնպես հաջող արավ Ատեպինի տոնազը, որ Դավիդկան բերանը կլորացնելով, թեթև ծիծաղեց, բայց տեսնելով Վալետի դեմքի խայթող արտահայտությունը լռեց։

— «Ռուսաստանի հետ պատերազմ չի կարող լինել, որովհետև Գերմանիան մեր հաջով է ապրում»,— Իվան Ալեքսեևիչը շարունակեց հաղորդել իր լսած խոսակցությունը։— Այստեղ մի ուրիշն էլ խոսեց, ձենից չճանաչեցի, իսկ հետո իմացա, որ պան Լիստնիցկու տղան էր, սպան։

[1] Պոլիպոններ — հնածեսների (старообрядцы) մականուն (Ս. Բ.)։

«Պատերազմը,— ասում է,— լինելու է Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև, խաղողի դաշտերի համար, իսկ մենք այստեղ ի՞նչ գործ ունենք»։

— Քո կարծիքն ի՞նչ է, Օսիպ Դավիդովիչ,— դիմեց Իվան Ալեքսեևիչը Շտոկմանին։

— Ես նախագուշակել չեմ կարող,— խուսափուկ պատասխանեց Շտոկմանը՝ խորազնին դիտելով կարկառուն ձեռքում գտնվող հղկած մատանին։

— Նրանք որ կռվեն, մենք էլ պիտի մեջ մտնենք։ Ուզես-չուզես, այդպես կլինի, մազերիցս կբռնեն ու քարշ կտան,— դատում էր Վալետը։

— Այստեղ ահա թե բանն ինչ է,— ասաց Շտոկմանը՝ Իվան Ալեքսեևիչի ձեռքից զգուշությամբ վերցնելով աքցանը։

Նա խոսում էր լրջորեն, ըստ երևույթին մտադիր էր հիմնովին մեկնաբանել հարցը։ Վալետը ավելի հարմար բռնեց դազգահից ցած ընկած ոտները, Դավիդկայի դեմքի վրա կլորացան շրթունքները՝ չծածկելով պինդ ատամներին նստող լորձունքը։ Շտոկմանն իրեն հատուկ պարզությամբ, սեղմ, հաստատուն, ասես սերտած ֆրազներով նկարագրեց կապիտալիստական պետությունների պայքարը շուկաների ու գաղութների համար։ Վերջում նրան գայրացած ընդհատեց Իվան Ալեքսեևիչը։

— Կա՛ց, իսկ մենք այդտեղ ի՞նչ գործ ունենք։

— Քո և քեզ նմանների գլուխները կցավեն ուրիշի խըմած դինուց,— ժպտաց Շտոկմանը։

— Դու երեխա մի լինի,— խայթեց Վալետը,— հին առածն ասում է՝ «Պաները կռվում են, խախոլների քյաքուլներն են դողում»։

— Ը-հ՛մ, — Իվան Ալեքսեևիչը կիտեց հոնքերը՝ քանդելով մտքերի ինչ-որ ծանրաշարժ, դժվարին կծիկը։

— Այդ Լիստնիցկին ի՞նչ գործ ունի Մոխովների մոտ։ Հո նրանց աղջկա համար չի՞ գալիս,— հարցրեց Դավիդկան։

— Այնտեղ արդեն եղել է Կորշունովենց տղան... — լարախոսեց Վալետը։

— Լսում ես, Իվան Ալեքսեևիչ, սպան այնտեղ ինչո՞ւ է հոտ քաշում։

Իվան Ալեքսեևիչը ցնցվեց, ասես մտրակով դաղեցին նրա ծնկատակերը։

— Հը՞, ի՞նչ ես ասում։

— Քնե՛լ ես, ա՛յ քեռի... խոսակցությունը Լիստնիցկու մասին է։

— Կայարան է գնում։ Հա՛, մի թապա բան է՛լ. այնտեղից դուրս եմ գալի, տան առաջ,— ի՞նչ եք կարծում, ո՞վ էր,— Գրիշկա Մելեխովը։ Կանգնել է մտրակը ձեռքին։ Հարցնում եմ՝ «Այստեղ ի՞նչ ես անում, Գրիգորի»։ — «Պան Լիստնիցկուն տանում եմ Միլլերովոյի կայարանը»։

— Գրիշկան նրանց մոտ կառապան է,— մեջ մտավ Դավիդկան։

— Պանական սեղանից թերմածք է խոշտում։

— Է՛յ, Վալետ, դու ոնց որ կապած շուն լիներս։ Ամեն մեկի վրա հաչում ես։

Խոսակցությունը մի բոպե դադարեց։ Իվան Ալեքսեևիչը վեր կացավ գնալու։

— Դու հո ժամասացության չե՞ս շտապում,— մի անգամ ևս խայթեց Վալետը։

— Ինձ համար ամեն օր ժամասացություն է։

Շտոկմանը ճանապարհեց մշտական հյուրերին. փակելով արհեստանոցը, գնաց տուն։

Զատկի գիշերը երկինքը ծածկվել էր սևակուրծք ամպերով, անձրև էր մաղում։ Խոնավացած մթությունն էր շոքել խուտորի վրա։ Դոնի վրա դեռ իրիկնամտից ծանր, դղրդալի տնքոցով ջարդվում էր սառույցը, ու շրխկալով, ջարդված սառույցի զանգվածով սեղմված, առաջինը ջրից դուրս ելավ մի սառցագունդ։ Սառույցը միանգամից ջարդվեց չորս վերստ տարածությամբ, մինչև խուտորից դենը գտնվող առաջին գետածունկը։ Սկսվեց սառցահոսանքը։ Եկեղեցու զանգի համաչափ զարկերի տակ, որ խփում էր «տասներկու ավետարանը», Դոնի վրա, ցնցելով ափերը, զարնվելով իրար, փշրվում էին սառցե դաշտերը։ Գետածնկի մոտ, այնտեղ, ուր Դոնը ծռվելով, դեպի ձախ է դառնում, սառցի կուտակում առաջացավ։ Իրար խփվող սառցագնդերի դղրդյունն ու ճքճքոցը մինչև խուտոր էր հասնում։ Եկեղեցու բակում, որ երփներանգված էր հալչող ձյան փայլուն ջրափոսերով, խմբվում էին տղաները։ Եկեղեցուց, լայն բացված դռան միջով, դեպի գավիթը ու գավիթից դեպի բակն էին սողում ժամասացության խուլ հնչյունները, վանդակավոր պատուհաններից շողում էր տոնական, ցնծագին լույսը, իսկ բակում տղաները կսմթում էին կամացուկ ճղճղացող աղջիկներին, համբուրվում էին, ցածր ձայնով անպատկառ բաներ էին պատմում։

Եկեղեցու պահակատնակում խմբվում էին կազակները, որոնք մերձակա ու հեռավոր խուտորներից եկել էին զատկի գիշերվա ժամերգությանը ներկա լինելու։ Հոգնածությունից և պահակատնակի ծանր օդից նվաղած մարդիկ քնել էին նստարանների, հատակի վրա, պատուհանների գոգերում։

Կոտրատված սանդուղքի վրա ծխում էին, խոսում եղանակի ու աշնանացանի մասին։

— Ձեր խուտորցիները երբ դուրս կգան դաշտերը։

— Երևի զատկի առաջին շաբաթում։

— Այդպես լավ է, ձեզ մոտ ախր ավազոտ է տափաստանը։

— Հողը ավազախառն է, հովտի այս կողմը աղուտներ են։

— Հիմի հողը բար կտա։

— Անցած տարի վարեցինք,— հողը ոնց որ խիճ լիներ, թույլ ու փխրուն էր։

— Դույնկա, ո՞րտեղ ես դու,— ներքևում, պահակատնակի սանդուղքի մոտ ծվծվաց բարալիկ մի ձայն։

Իսկ եկեղեցու բակի դռան մոտ մեկը խռպոտ, կոպիտ ձայնով բղավում էր։

— Համբուրվելու տեղ եք գտել հա՞, ա՛խ դուք... Հա՛յդա այստեղից, աննամուսներ։ Ջաններիդ է հասել, էլի՛։

— Քեզ հետ աղջիկ չկա՞։ Գնա համբուրիր մեր քածին,— մթության միջից լսվեց երիտասարդական զրնգուն մի ձայն։

— Քա-ա-ծի-ի՛ն։ Այ, ես քեզ...

Վազվզող ոտների խուլ դոփյուն, փոթկոց և աղջկերանց յուրկաների շրշյուն։

Կտուրից ընկնող կաթիլի ապակեհնչուն զնգոց ու դարձյալ նույն դանդաղ, սևահողից ցեխի պես լպրծուն ձայնը։

— Օր առաջ Պրոխորից գութան էի առնելու, տալիս եմ

տասներկու մանեթ, ամա նազ ու տուղ է անում։ Դեհ, էժան կտա՞ որ...

Դոնի վրա — սահուն խշշոց, շրշյուն, ճքճքոց։ Ասես ներքևում, խուտորից դենը քայլում է զուգված-զարդարված, հուժկու, բարդու չափ բարձրահասակ մի կնիկ՝ խշշացնելով չտեսնված մեծություն ունեցող փեշը։

Կեսգիշերին, երբ թանձրացել էր անթափանց մթությունը, Միտկա Կորշունովը շթամբած ձիով մոտեցավ եկեղեցու բակին։ Իջավ, սանձափոկը կապեց բաշին, ձեռքով շմփացրեց անհանգիստ ձիուն։ Մի քիչ կանգնեց, ականջ դրեց սմբակների ճփճփոցին, և ուղղելով գոտին, գնաց բակը։ Գավթում հանեց փափախը, երկրպագեց՝ թեքելով կողքերից անհամաչափ սափրված գլուխը. կանանց միջև ճանապարհ բաց անելով, մոտեցավ բեմին։ Զախ կողմում սև Երամակի նման քիպ խմբվել էին կազակները, աջ կողմում փայլում էին կանացի գույնզգույն, խայտաբղետ զգեստները։ Միտկան աչքերով փնտրեց ու գտավ առաջին շարքում կանգնած հորը, մոտեցավ նրան։ Արմունկից բռնեց Միրոն Գրիգորևիչի թևը, որ բարձրանում էր խաչակնքելու համար, շշնջաց նրա մազակալած ականջին.

— Ապի, մի բոպե դուրս արի։

Ճեղքելով այլևայլ բույրերի անընդմեջ վարագույրը, Միտկան դողացնում էր ռունգները. շշմեցնում էին հալչող մեղրամոմի ծուխը, քրտնակալած կանացի մարմինների ժանտ հոտը, սնդուկներում երկար պահված հագուստի (որը այնտեղից հանվում էր միայն ծննդյան տոներին ու զատկին) գերեզմանային նամշահոտը, խոցում էին՝ ոտնամանների թաց կաշվի, նավթալինի հոտը, ծոմ պահած, սովահար ուտամոքսների արտածությունները։

Գավթում Միտկան կուրծքը սեղմելով հոր ուսին, առաց.

— Նատալյան մեռնո՞ւմ է։

XVII

Ծաղկազարդի կիրակի օրը Գրիգորին վերադարձավ Կայսարանից, ուր տարել էր Եվգենիին։ Հալչոցը կերել էր

ձյունը. ընդամենը մի երկու օրում փչացել էր ճանապարհը։

Ալխովի Հոգում, ուկրաինական գյուղում, կայսարանից քսանհինգ վերստ հեռու, անցնելով գետից, քիչ մնաց ջրասույզ աներ ձիերը։ Գյուղ հասավ իրիկնադեմին։ Անցած գիշերը սառույցը ջարդվել էր, հոսել ու անցել, ու գետը հալված ձյան ջրի դարչնագույն հեղեղներով վարարած, բարձրանում էր, փրփրում, մոտենում փողոցներին։

Իջևանը, որտեղ կայսրան գնացող-եկողները կանգ էին առնում ձիերին կեր տալու, գտնվում էր գետի մյուս կողմում։ Գիշերվա ընթացքում ջուրը կարող էր է՛լ ավելի բարձրանալ, և Գրիգորին որոշեց անցնել գետը։

Մոտեցավ այն տեղին, որտեղից մի օր առաջ անցել էր սառույցի վրայով. ափերից դուրս եկած գետը լայնացած հունով քշում էր կեղտոտ ջուրը, մեջտեղում թեթևակի պրտտում էր ուռից գործած ցանկապատի մի կտոր և անիվի ջարդված մի շրջանակ։ Ձյունից մերկացած ավազի վրա երևում էին սահնակի կողերի թողած թարմ հետքերը։ Գրիգորին կանգնեցրեց քրտնաթոր, ոտները փրփրակալած ձիերը և իջավ սահնակից՝ հետքերը զննելու։ Սահնակի հիմնաձողերի երկաթե տակերը բարակ շերտեր էին թողել։ Ջրի մոտ հետքը մի քիչ դեպի ձախ էր դառնում, կորչում ջրի մեջ։ Գրիգորին աչքով չափեց տարածությունը. ամենաշատը կլիներ քսան սաժեն։ Մոտեցավ ձիերին՝ լծասարքը ստուգելու։ Այդ ժամանակ մոտակա տանից ելավ աղվեսի մորթու փափախով մի տարեց ուկրաինացի ու քայլեց դեպի Գրիգորին։

— Այստեղից անցնո՞ւմ են,— հարցրեց Գրիգորին ու երասաններով ցույց տվեց դարչնագույն, հորդահոս հեղեղը։

— Հա՛, անցնում են։ Այսօր առավոտ անցան։

— Խորո՞ւնկ է։

— Չէ՛։ Միայն սահնակը կծածկի։

Գրիգորին ի մի հավաքեց երասանները ու պատրաստ պահելով մտրակը, կարճ, հրամայական «նո՛»-ով առաջ մղեց ձիերին... Ձիերը խռխռալով և ջուրը հոտոտելով, դրժկամորեն դեպի առաջ քայլեցին։

— Նո՛,— Գրիգորին թափահարեց մտրակը՝ մի փոքր բարձրանալով նստելատեղը։

Թուխ, լայնագավակ ձին, որ ձախ կողմից էր լծված, թափահարեց գլուխը,— յա՛ բախտ,— և ուժգնությամբ քաշեց ձգափոկերը։ Գրիգորին շեղակի նայեց իր ոտների տակ. ջուրը վշշում էր սահնակի հենց եզրաձողի մոտ։ Ձիերը սկզբում սուզվեցին մինչև ծնկները, հետո էլ միանգամից մինչև կրծքները։ Գրիգորին ուզում էր ետ դառնալ, բայց ձիերը ծուլ եղան ու խոխոռացնելով, լող տվին դեպի առաջ։ Ջուրը քշեց սահնակի ետին մասը՝ ձիերին դարձնելով հոսանքի հակառակ կողմը։ Նրանց մեջքերի վրայով հոսում ու թափվում էր ջուրը, ճոճում սահնակը ու շեշտակի քաշում դեպի ետ։

— Ա-ա-յա՛յ... Այ-ա-յա՛յ, քշի՛ր...— եզերքում վազվզելով բղավում էր ուկրանիացին ու հայտնի չէ ինչու թափահարում աղվեսի մորթու փափախը, որ հանել էր գլխից։

Գրիգորին վայրագ կատաղությամբ հարա էր տալիս, շտապեցնում ձիերին։ Ջուրը հորդում էր ցած իջնող սահնակի ետևից, փոքրիկ ձագարներ առաջացնում։ Սահնակը թափով խփվեց ջրից դուրս ընկած մի ցցի (ջրի տարած կամրջի հետքը) ու ապշեցուցիչ թեթևությամբ շուռ եկավ։ Գրիգորին ճչալով ամբողջովին ջրասույզ եղավ, բայց երասանները ձեռքից բաց չթողեց։ Հոսանքը քաշում էր նրա կիսամուշտակի փեշերից, նրա ոտներից, քշում անհողդողդ համառությամբ, գրկում, շուռումուռ անում ճոճվող սահնակի կողքին։ Գրիգորին կարողացավ ձախ ձեռքով կառչել սահնակի հիմնաձողից, թողեց երասանները, ու շնչասպառ լինելով, սկսեց ձեռներով հենարան փնտրել, աշխատելով հասնել ձգափոկերի ձողին։ Նա արդեն մատներով բռնելու էր ձողի երկաթած ծայրը, բայց այդ ակնթարթում թուխ ձին, որ դիմադրում էր հոսանքին, ետին ոտով ուժեղ խփեց նրա ծնկին։ Գրիգորին շնչահեղձ լինելով, ձեռները մի կողմ տարավ ու կառչեց ձգափոկից։ Հոսանքը նրան ձիերից դեն էր քշում, կրկնապատկված ուժով բաց անում նրա մատները։ Պաղությունից ամբողջովին ծակծկվող մարմնով նա հասավ մինչև թուխ ձիու գլուխը, և ձին իր արնակալած աչքերի կատաղած, մահվան սարսափով լեցուն նայվածքը ուղղեց Գրիգորիի լայնացած անհարիբերին։

Գրիգորին մի քանի անգամ ձեռքից բաց էր թողնում լպրծուն սանձափոկերը. լողալով հասնում էր դրանց, բռնում, բայց սանձափոկերը սլլում, դուրս էին պրծնում նրա մատների միջից. մի կերպ բռնեց, ու ոտներով հանկարծակի ղղաց գետինը։

— Օ՜-օ-օ,— ծայրագույն լարվածությամբ առաջ նետվեց ու խփելով ձիու կրծքին, ընկավ փրփրալից ծանծաղուտում։

Ձիերը նրան ոտնատակ տալով, սահնակը թափով դուրս քաշեցին ջրից. ուժասպառ, դողդողջուն ու քրտնաթոր, թաց մեջքերով կանգ առան նրանից մի քանի քայլ հեռավորությամբ։

Ցավ չզգալով, Գրիգորին ոտքի ելավ. ցուրտը կարծես անտանելի տաք խմորով ծեփել էր նրա ամբողջ մարմինը։ Գրիգորին ավելի շատ էր դողում, քան ձիերը, զգում էր, որ այժմ ոտներից թույլ է այնպես, ինչպես գրկի երեխան։ Ուշքի եկավ, ու սահնակը շուռ տալով, մտրակելով ձիերին, քշեց յորդա վազքով։ Գրոհի թափով նետվեց փողոց, առանց վազքը դանդաղեցնելու առաջին իսկ բաց դարբասից ներս քշեց ձիերը։

Տանտերը սրտաբաց մարդ էր։ Որդուն ուղարկեց ձիերին խնամելու, իսկ ինքը օգնեց Գրիգորիին հանվելու և ոչ մի առարկություն չթույլատրող տոնով հրամայեց կնոջը.

— Վառիր վառարանը։

Գրիգորին տանտիրոջ շալվարով պառկեց վառարանի վրա, մինչև որ կչորանար իր հագուստը. պասուց շշի կերավ, պառկեց քնելու։

Լուսումութին նա ճանապարհ ընկավ։ Նա անցնելու էր հարյուր երեսունհինգ վերստ, յուրաքանչյուր բոպեն թանկ էր։ Տափաստանում գարնանային ճանապարհազրկություն էր սպառնում. յուրաքանչյուր հեղեղատում, յուրաքանչյուր ձորակում — ձյան ջրի աղմկալից հեղեղ։

Սև, մերկացած ճանապարհը հոգնեցնում էր ձիերին։ Առավոտյան թեթև սառնամանիքին հասավ ուկրաինական գավառամասը, որ գտնվում էր ճանապարհից չորս վերստ հեռու, և կանգ առավ ճամփաբաժանում։ Քրտնած ձիերից

գոլորշի էր բարձրանում, ետևից երևում էր սահնակի հիմնաձողերի պսպղուն հետքը։ Գրիգորին սահնակը թողեց գավառամասում, կապեց ձիերի պոչերը, նստեց ձիերից մեկին ու մյուսի սանձն էլ բռնած՝ ճանապարհ ընկավ։ Ծաղկազարդի կիրակի առավոտյան հասավ Յազդոնոյե։

Ծերուկ պանը լսեց մանրամասն պատմությունը ճանապարհի մասին, գնաց ձիերը տեսնելու։ Սաշկան դրանց տանում էր բակով, բարկացկոտ նայում դրանց ներս ընկած կողերին։

— Ի՞նչպես են ձիերը,— մոտենալով հարցրեց պանը։

— Ինքնըստինքյան հասկանալի է,— մոթմոթաց Սաշկան առանց կանգ առնելու, ցնցելով ալեզարդ-կանաչավուն, կլոր մորուքը։

— Հո ուժասպառ չի՞ արել։

— Ոչ։ Թուխ ձիու կուրծքը անուրից հարվել է։ Դատարկ բան է։

— Հանգստացի՛ր։— Պանը ձեռքով արավ սպասող Գրիգորիի կողմը։

Վերջինս գնաց ծառայանոց, բայց կարողացավ հանգըստանալ միայն գիշերը։ Հետևյալ օրվա առավոտյան եկավ Վենիամինը նոր, սատինե կապույտ վերնաշապիկով, մշտական, փայլուն ժպիտը երեսին։

— Գրիգորի՛, գնա պանի մոտ։ Շո՛ւտ։

Գեներալը քստքստացնելով թաղիքե տուֆլիները, քայլում էր դահլիճում։ Գրիգորին դահլիճի դռան մոտ մի ոտից մյուսին կոթնելով, հազաց, հետո էլի՛ հազաց, ու պանը բարձրացրեց գլուխը։

— Ի՞նչ ես ուզում։

— Վենիամինը եկավ, կանչեց։

— Ա՛խ, հա՛։ Գնա թամբիր Հովատակը և Դիմացկունը։ Ասա, որ Լուկերյան լակ չտա շներին։ Որսի՛ պիտի գնալ։

Գրիգորին շուռ եկավ գնալու։ Պանը նրան ետ դարձրեց, ասելով.

— Լսո՞ւմ ես, կգնաս ինձ հետ։

Ակսինյան մի քաղցր կարկանդակ դրեց Գրիգորիի կիսամուշտակի գրպանը, շշնջաց.

— Չի թողնում որ մի բան ուտես, գրողը դրան տանի... Սատանան է բզում դրան։ Գրի՛շա, լավ կլիներ շարֆդ կապեիր։

Գրիգորին թամբած ձիերը տարավ դեպի ցցապատնեշը, շվոցով կանչեց շներին։ Պանը դուրս եկավ կապույտ մահուդե, անթև բաճկոնը հագին, վահանակներով զարդարված կաշեգոտիով։ Ուսից կախված էր խցանապատ, նիկելե ջրասրվակը։ Ետևից օձի նման քարշ էր գալիս ձեռքից կախված, ոլորուն մտրակը։

Գրիգորին, սանձը բռնած, նայում էր ծերունուն ու զարմացավ, երբ վերջինս իր ոսկրոտ, ծեր մարմինը հարգությամբ գցեց թամբին։

— Իմ ետևից կգաս,— կարճ հրամայեց գեներալը ու ձեռնոց հագած ձեռքով փաղաքուշ տնտղեց սանձը։

Գրիգորիի տակ ծառս եղավ ու գլուխը աքլորավարի թափահարելով, կողքի վրա քայլեց չորս տարեկան հովատակը։ Նրա ետին ոտները նալած չէին, և նա ընկնելով կոշտ սառցի վրա, սայթաքում էր, կքվելով ուժ էր տալիս բոլոր ոտներին։ Ծերուկ պանը օրորվում էր՝ Դիմացկունի լայն մեջքին կորաքամակ նստած։

— Մենք ո՞ւր ենք գնալու,— ձին առաջ քշելով ու նրան հավասարվելով, հարցրեց Գրիգորին։

— Օլշանսկի ձորը,— հաստ ձայնով պատասխանեց պանը։

Ձիերը միահամուռ կերպով էին ընթանում։ Հովատակը գլուխը ետ էր տալիս սանձը ձգվելուց. կարապի նման ծռելով կարճ վիզը, ուռուցիկ աչքերով շեղակի նայում էր հեծյալին, փորձում էր կծել նրա ծունկը։ Բարձրացան տափարակ մի բլուրի վրա, և պանը Դիմացկունին քշեց ուժգնաթափ վարդով։ Շները վազում էին Գրիգորիի ետևից, կարճ շղթա կազմած։ Սև, քավթառ քուծը վազելիս սապատավոր դնչով շոշափում էր ձիու պոչի ծայրը։ Հովատակը պպզում էր, խլշկոտում, ուզում էր ոտքով շմփացնել անհրես շանը, բայց սա մի փոքր ետ էր մնում, պառավական թախծոտ նայվածքով բռնում էր ետ նայող Գրիգորիի հայացքը։

Կես ժամում հասան Օլշանսկի ձորը։ Պանը գնաց ձորի

լանջով, որը հնօրյա քոլախոտերով էր ծածկված։ Գրիգորին իջավ ներքև՝ զգուշությամբ դիտելով ձորի հատակը, ուր հեղեղները քշել-տարել էին հողը, խորխորատներ առաջացրել։ Նա երբեմնակի նայում էր պանին։ Թուխ-գորշավուն, պողպատափայլ, մերկ ու նոսր լաստենուտի միջից երևում էր ծերունու պարզ, ասես նկարված կերպարանքը։ Կոթնելով թամքի կեղին, նա կիսականգնեց ասպանդակների վրա, ու նրա մեջքին կնճռոտվեց կաղակական գոտիով պրկված կապույտ բաճկոնը։ Շները իրար գլխի հավաքված, գնում էին դար ու փոս լանջով։ Անցնելով խորունկ ողողատի վրայով, Գրիգորին կախվեց թամքից։

«Ծխե՛մ, էլի՛։ Հիմա կթողնեմ սանձը ու կհանեմ թութունս»,— մտածեց նա՝ հանելով ձեռնոցը, գրպանում խշշացնելով ծխելու թուղթը։

— Շները բաց թող...— հրացանի կրակոցի նման ճայթեց մի ճչոց ձորի լանջի ետևից։

Գրիգորին արագ բարձրացրեց գլուխը. պանը դուրս թռավ լանջի սուր սապատավոր կատարի վրա ու բարձրացնելով մտրակը, սրարշավ քշեց Դիմացկունին։

— Շները բա՛ց թող...

Անցնելով ձորի ճահճային, բոշխով ու եղեգնով ծածկված հատակից, սայթաքելով ու կոթնելով գետնին, արագ-արագ վազեց գորշ-թուխ գույնի, փրչոտ աճուկներով, շմաքաթափված մի գայլ։ Ցատկեց մի խանդակի վրայից, կանգ առավ ու հապճեպ շուռ գալով կողքի, տեսավ շներին։ Նրանք վրա էին տալիս ցրիվ շարքով, շրջանցում էին պայտի ձևով, փակում գայլի ճանապարհը դեպի անտառ, որ սկսվում էր ձորի ծայրից։

Զսպանակաձև օրորվելով, գայլը դուրս թռավ մի փոքրիկ հողաթմբի՝ արջամկան վազուցվա բնի վրա, ու վազ տվեց դեպի անտառը։ Կամացուկ դեպի առաջ նետվելով, նրան համարյա դեմուդեմ էր գալիս քավթառ քած շունը, ետևից գալիս էր Բազե անունով մի սպիտակ, բարձրահասակ որձ շուն, որը ամենալավ և որսին հալածելիս ամենակատաղի շներից մեկն էր։

Գայլը մի րոպե կանգ առավ, ասես տատանվում էր։ Գրիգորին, բարձրանալով ձորից, բոլորակաձև պտտելով սանձափոկը, մի րոպե աչքից փախցրեց նրան, իսկ երբ բարձրացավ հողաթմբի վրա, գայլը դեգերում էր հեռո՛ւ-հեռվում, տափաստանի սև պաստառի վրա, գետնին կպչելով, քոլախոտերում սահում էին՝ սև շները, իսկ ավելի հեռու, կողքից, մտրակի կոթով բոթելով Դիմացկունին, ծերուկ պանը սրարշավ շրջանցում էր մի գահավեժ յառ։ Գայլը վազում էր դեպի հարևան ձորակը, մոտիկից վրա էին տալիս ու նրան շրջապատում էին շները, ու գայլի փրչոտ աճուկներին համարյա կպչում էր Բազե անունով սպիտակ շունը, որը այստեղից Գրիգորին ճերմակ լաթ էր թվում...

— Քրս-քրՙս արա-ա՛-ա...— բղավոցը հասավ Գրիգորիի ականջին։

Նա հովատակի գլուխը բաց թողեց ամբողջ թափով, իզուր ջանալով տեսնելու, թե առջևում ինչ էր կատարվում. աչքերը ծածկվում էին արցունքներով, ճեղքվող քամու սուր սվսվոցը ծակում էր ականջները։ Որսը հրապուրել էր Գրիգորիին։ Կոթնելով հովատակի վզին, որը քրտնքի սուր հոտ էր արձակում, նա սլանում էր կատաղի թափով։ Մինչև հասավ ձորակը, չկային ոչ գայլը, ոչ էլ շները։ Մի րոպեից հետո պանը հասավ նրան։ Լրիվ թափով սլանալիս Դիմացկունին ետ տալով՝ բղավեց։

— Ո՞ւր գնաց։

— Երևի ձորակը։

— Թռի՛ր ձախից... Շո՛ւտ...

Պանը կրունկներով բոթեց ծառսող, խլշկոտած ձիու կողերը, սլացավ դեպի աջ։ Գրիգորին իջնելով բլրագոգը, քաշեց սանձափոկը. հա՛յ-հո՛ւյ անելով, թռավ բլրագոգի մյուս կողմը։ Հովատակին մեկ ու կես վերստի չափ քշում էր մտրակելով ու աղաղակելով։ Կպչուն, չչորացած հողը նստում էր ձիու սմբակներին, հողակտորները խփում էին Գրիգորիի երեսին։ Երկար ձորը, որ գալարապտույտ ձգվում էր մի բլրակի շուրջը, շուռ եկավ դեպի աջ, բաժանվեց երեք ճյուղի։ Գրիգորին անցավ խոտորնակի ձգված ճյուղը ու սլացավ քիչ թեք լանջով, հեռվում տեսավ շների սև շղթան, որոնք տափաստանում քշում էին գայլին։ Ինչպես երևում էր, գազանին դուրս էին քշել ձորի մեջտեղից, որ առանձնապես խիտ էր ծածկված կաղնիներով ու լաստենիներով։ Այնտեղ,

ուր ձորի միջուկը երեք ճյուղի էր բաժանվում և ձորը շեղակի ձգվում էր երեք գորշ-կապտավուն բակուկներով, գայլը դուրս եկավ բաց տեղ և մի հարյուր սաժեն տարածություն շահելով, արագությամբ վազ տվեց դեպի ներքև, անջուր մի հովիտ, որ ամբողջովին ծածկված էր քոլերի և չոր ուղտափուշի վայրի, վաղուցվա մացառուտով։

Կիսականգնելով ասպանդակների վրա, Գրիգորին հետամուտ էր լինում նրան, թևքով սրբում արցունքները, որոնք թրջում էին քամուց ծեծվող աչքերը։ Հարևանցի նայելով դեպի ձախ, նա ճանաչեց իրենց հողը։ Ընդարձակ, շեղ քառակուսու նման փռված էր հողամասը, այն հողամասը, որ նա աշնանը վարում էր Նատալյայի հետ։ Գրիգորին հովատակը դիտմամբ քշեց հերկի վրայով և այն կարճատև րոպեների ընթացքում, երբ հովատակը սայթաքելով ու օրորվելով, անցնում էր հերկից, Գրիգորիի սրտում սառեց, մոխրացավ իրեն համակած որսորդական ոգևորությունը։ Գրիգորին արդեն անտարբերությամբ էր խթանում ծանր հևող հովատակին, ու հետամուտ լինելով պանին,— թե նա հո չի՞ նայում իր կողմը,— անցավ դանդաղ քառատրոփի։

Հեռվում, Կարմիր բլրագլխի մոտ երևում էր վար անողների դատարկ կայանը։ Մի փոքր հեռու, թավշի գույն արձակող վարելահողում սողում էին երեք լուծ եղներ, որոնք քաշում էին գութանը։

«Մեր խուտորցիներն են։ Այդ ո՞ւմ հողն է... Ասես Անիկուշկայինը լինի»։— Գրիգորին դիտեց կկոցած աչքերով, ճանաչեց եզները և գութանի ետևից գնացող մարդուն։

— Բոնե՞-ե-ել...

Գրիգորին տեսավ, թե ինչպես երկու կազակ, թողնելով գութանը, վազ տվին դեպի բլրագոգը սլացող գայլի ճանապարհը կտրելու։ Մեկը,— բարձրահասակ, կազակական կարմրաբոլորք գլխարկով, որի փոկիկները նա իջեցրել էր կզակի տակ,— թափահարում էր լծից հանած երկաթե սամին։ Եվ հենց այստեղ էլ գայլը նստեց, հետույքը դրեց խոնավ ակոսի մեջ։ Բաղե անունով սպիտակ շունը վազքի թափից թռավ նրա վրայով ու ընկավ՝ ծալելով առջևի ոտները. քավթառ քածը, փորձելով կանգ առնել, պոչով խաղում էր թմբաշատ հերկը. չկարողանալով կանգ առնել, ընկավ գայլի վրա։ Վերջինս ուժեղ թափահարեց գլուխը, քած շունը գետնին պառկած վիճակում շպրտվեց մի կողմ։ Գայլին վրա տված շների սև, ահագին կծիկը ճռճվելով՝ մի քանի սաժեն սահեց հերկի վրա ու գլորվեց գնդի նման։ Գրիգորին վրա հասավ պանից կես րոպե առաջ, թռավ թամքից ընկավ ծնկների վրա, ետ տարավ որսորդական դանակը բռնած ձեռքը։

— Ահա՛ նա... Անիծվածը... Բկի՛ն...— Ծանոթ, հևալուց կերկերող ձայնով բղավեց վրա հասած կազակը, սամին ձեռքում։ Նա սֆսֆալով ընկավ Գրիգորիի կողքին ու ետ քաշելով գայլի փորը զզող որձ շան վզի մաշկը, հինգ աղբերով բռնեց գայլի երեք ոտը։ Գրիգորին իր ձեռքի տակ շարժվող կոշտ, բիզ-բիզ եղած մազերի մեջ գտավ կոկորդի փողակը, իսկույն կտրեց դանակով։

— Շնե՛ր... Շներին... Դե՛ն քշի-իր...— հիվանդագին, խռպոտ ձայնով ասավ կապուտկած պանը՝ թամքից ընկնելով փափուկ հերկի վրա։

Գրիգորին դժվարությամբ դեն քշեց շներին, նայելով պանին։

Մի քիչ հեռու կանգնած էր Ստեփան Աստախովը՝ գրլխարկի լաքած փոկիկները կզակի տակ իջեցրած։ Նա ձեռներով տնտղում էր երկաթե սամին, նրա սփրթնած ատորին ծնոտը և հոնքերը դողում էին։

— Դու ո՞ր տեղացի ես, ա՛յ տղա,— դիմեց նրան պանը... ո՞ր խուտորից ես։

— Տատարսկուց,— մի փոքր ուշ պատասխանեց Ստեփանը և մի քայլ արեց Գրիգորիի կողմը։

— Ա՞զգդ։

— Աստախով։

— Ա՛յ թե ինչ, սիրելիս, դու ե՞րբ կգնաս տուն։

— Այսօր իրիկունը։

— Այս դիակը բեր մեզ։— Պանը ոտով ցույց տվեց գայլին, որը հոգեվարքի մեջ թույլ չքչքացնում էր ատամները, բարձրացնում շտկված ետին ոտը, աճուկի մազերի թուխ, կախ ընկած փնջի հետ միասին։

— Ինչ որ արժի, կվճարեմ,— խոստացավ պանը, շարֆով սրբեց կարմրած դեմքի քրտինքը, մի քիչ հեռացավ,

դարձավ կողքի՝ ուսից հանելով ջրասրվակին կպրցրած նեղ փոկը։

Գրիգորին մոտեցավ հովատակին։ Ոտը դնելով ասպանդակին, ետ նայեց։ Ստեփանը սաստիկ դողով բռնված, քայլում էր նրա կողմը՝ գլուխն օրորելով, ծանր, խոշոր ձեռները կրծքին ամուր սեղմած։

XVIII

Ավագ շաբաթվա ուրբաթ օրվա երեկոյան Կորշունովնեերի հարևանուհի Պելագեյի մոտ կնանիքը հավաքվել էին երեկոն անցկացնելու։ Գավրիլա Մայդաննիկովը՝ Պելագեյի ամուսինը նամակ էր գրել Լոռից, խոստացել էր զատկին արձակուրդ գալ։ Պելագեյան սպիտակացրել էր պատերը ու խրճիթը կարգի բերել դեռ երկուշաբթի օրը, իսկ հինգշաբթի օրվանից սպասում էր, դարբասից դուրս էր նայում, ցանկապատի մոտ երկար կանգնում էր արձակ մազերով. նա նիհար էր, դեմքը դեղին ու շերտ-շերտ բծերով ծածկված, ձեռքը աչքերի վերև պահած, նայում էր, թե արդյոք չի՞ գալիս։ Նա երեխով էր, բայց այդ եղել էր օրինական ճանապարհով. նախորդ տարվա ամառը Գավրիլան եկել էր գնդից, կնոջը լեհական չիթ էր բերել, երկար չէր մնացել. չորս գիշեր քնել էր կնոջ հետ, իսկ հինգերորդ օրը խմել էր, հայհոյել լեհերեն ու գերմաներեն ու լաց լինելով, երգել դեռ 1831 թվականին հորինված կազակական մի երգ Լեհաստանի մասին։ Նրա հետ սեղանի շուրջը նստել էին ընկերներն ու եղբայրները, որոնք եկել էին զինվոր մարդուն ճանապարհ գցելու մինչև ճաշ արաղ էին կոնծում, երգում էին.

Ասում էին՝ Լեհաստանը շատ է հարուստ,
Մենք խմացանք, որ տկլոր է, չունի ապրուստ։
Ու այդ երկրում, Լեհաստանում, կա մի պանդոկ,
Լեհական է այդ պանդոկը, արքայական։
Այդ պանդոկում քեֆ են անում երեք ջահել,—
Մի լեհացի, պրուսացի ու մի կազակ։
Պրուսացին արաղ խմում, փող է տալի,
Լեհացին էլ արաղ խմում, փող է տալի,
Իսկ կազակը արաղ խմում, բան չի տալի.
Ման է գալի, շպորները զրնգացնում,
Ու պանդոկի տիրուհուն է իր մոտ կանչում.

— Տիրուհի ջան, հոգուս արև, արի՛ գնանք,
Գնա՛նք դեպի խաղաղ Դոնը, այնտեղ մնանք։
Դոնի ափին, մեզ մոտ ձեզ պես հո չե՞ն ապրում
Ոչ գործում են, ոչ էլ մանում, ցանում, հնձում,
Ջեն ցանում ու չեն հնձում, բայց լավ են ապրում։

Իսկ ճաշից հետո Գավրիլան հրաժեշտ տվեց ընտանիքին ու մեկնեց։ Հենց այդ օրվանից էլ Պելագեյան սկսեց մտիկ տալ շապկի փեշին։

Նատալյա Կորշունովային նա այսպես բացատրեց հղիության պատճառը.

— Գավրյուշան հլա դեռ չէր եկել, անուշ ջան, ես երազ տեսա։ Ոնց որ թե ես գնում եմ գետառով, առաջից էլ գնում է մեր քավթառ կովը, որ մենք ծախեցինք ամառս, տոներից առաջ. գնում է նա, իսկ ծծերից կաթ է թափվում ճամփի վրա... «Վո՛ւյ, քոռանամ ես,— մտածեցի,— բա ես ո՞նց եմ կթել դրան»։ Հետո ինձ մոտ է գալի Դրոզդիխան՝ գայլուկ տանելու, ես էլ նրան պատմեցի երազս, իսկ նա թե՝ «Մի կտոր մեղրամոմ տար կովանոցը, կտրիր մոմից, կոլոլիր, գունդ արա ու տար թաղիր կովի թարմ թրիքի մեջ, թե չէ փորձանքը ման է գալի պատուհանիդ տակ»։ Դես-դեն ընկա, իսկ մոմ չկա, մի հատ կար, երեխեքը կոլոլել էին, որ մորմերին ընելից դուրս բերեն թե ինչ, չգիտեմ։ Մեկ էլ տեսնեմ եկավ Գավրյուշան,— ահա և փորձանքը։ Դրանից առաջ երեք տարի իսկի բան չկար, իսկ հիմի հլա տես, է՛...— մորմոքվում էր Պելագեյան՝ մատը խփելով իր ուռած փորին։

Սպասելով ամուսնուն, Պելագեյան տխրում էր ձանձրանում մենակությունից, դրա համար էլ ուրբաթ օրը հարևան կանանց կանչեց ժամանակ անցկացնելու։ Նատալյան եկավ կիսատ գուլպան ձեռքին, որ կեռով էր գործում (գարունը եկել էր,— Գրիշակա պապին ավելի շատ էր մրրսում), նա ուշիուժացել էր, ավելի հաճախ էր ծիծաղում ուրիշի կատակներից, քան այդ պետք էր, սա ուղղակի չէր ուզում կնանիքը տեսնեն, որ ամուսնու կարոտը մաշում է իրեն։ Պելագեյան բոբիկ, մանուշակագույն երակներով ոտները վառարանից կախած, ձեռ էր առնում Ֆրոսյա անունով ջահել, չարաճճի կնկանը։

— Ֆրոսյակա, դու ո՞նց դնքստեցիր մարդուդ։

— Չգիտե՞ս ոնց։ Շրմփացնում էի քամակին, գլխին, որտեղին ասես։

— Ես այդ չեմ ասում. ինչի՞ց եղավ այդ բանը։

— Եղավ. էլի՛,— դժկամ պատասխանեց Ֆրոսյան։

— Դու որ մարդուդ ուրիշ կնկա հետ բռնեիր, կլռե՞իր, հա՞,— դանդաղ արտասանելով բառերը, հարցրեց երկաբահասակ, պոլոզ մի կնիկ՝ Մատվեյ Կաշուլինի հարսը։

— Պատմիր, Ֆրոսինյա։

— Պատմե՞լս որն է... խոսելու բա՛ն գտաք, էլի՛...

— Սի՛ ծոկիթի, այստեղ բոլորն էլ մերոնք են։

Ֆրոսյան արևածաղկի կճեպները բերանից գցելով ձեռքի մեջ ժպտում էր։

— Ես վաղուց տեսնում էի, որ մի բան կա, ու մեկ էլ ինձ ասում են, թե մարդդ աղացում մունտոիկություն է անում Դոնի այն կողմերից եկած մի կնկա հետ... Ես վազ տվի այնտեղ, նրանց գտա կորեկ աղալու մեքենայի կողքին։

— Նատա՛լյա, ո՞նց է, մարդուցդ խաբար չկա՞,— Ֆրոսյային ընդհատեց Կաշուլինի հարսը՝ դիմելով Նատալյային։

— Նա Ցագոդնոյում է...— հուշիկ պատասխանեց Նատալյան։

— Նրա հետ ապրելու միտք ունե՞ս, թե ոնց։

— Սա դուցեն միտք ունի, ամա մարդը սրա մասին չի մտածում,— միջամտեց տանտիրուհին։

Նատալյան զգաց, թե ինչպես լացացնելու չափ տաք արյունը խփեց երեսին։ Նա գլուխը թեքեց ձեռքի գուլպայի վրա, աչքի տակով նայեց կանանց, ու տեսնելով, որ բոլորն էլ իրեն են նայում, գիտակցելով, որ ամոթից կարմրելն անկարելի է թաքցնել նրանցից, դիտավորյալ, բայց անճարպիկ կերպով, այնպես, որ բոլորն էլ նկատեցին այդ,— ծնկներից վար գցեց կծիկը ու կռացավ այն վերցնելու, սառն հատակի վրա քստքստացնելով մատները։

— Թքի՛ր նրա վրա, ա՛ կնիկ։ Վիզ որ եղավ, լուծ էլ կլինի,— չթաքցրած ցավակցությամբ խորհուրդ տվեց կանանցից մեկը։

Նատալյայի շինծու աշխուժությունը հանգավ ոնց որ կայծը քամու տակ։ Կնանիքը խոսակցությունը շուռ տվին վերջին բամբասանքների, ասեկոսեների վրա։ Նատալյան լուռ գործում էր գուլպան։ Դժվարությամբ նստելով մինչև վերջը, նա գնաց՝ մտքում կշռադատելով չձևակերպված իր որոշումը։ Իր անորոշ դրության ամոթանքը (նա դեռ չէր հավատում, որ Գրիգորին հեռացել էր ընդմիշտ ու ներելով, սպասում էր նրան) նրան մղեց դեպի հետևյալ քայլը. որոշեց տնեցիներից թաքուն մի նամակ ուղարկել Ցագոդնոյե, Գրիգորիին, որ իմանա, թե արդյոք վերջինս բոլորովի՞ն է հեռացել և արդյոք չի՞ փոխել միտքը։ Նա ուշ վերադարձավ Պելագեյի տանից։ Օթախում նստել էր Գրիշկա պապին, կարդում էր քրքրված, վրան մոմ կաթած, կաշվե կազմով ավետարանը։ Միրոն Գրիգորևիչը խոհանոցում ուռկանը կապում էր պարանասարքին, լսում Միխեյի պատմածը մի ինչ-որ վաղուցվա սպանության մասին։ Նատալյայի մայրը երեխաներին քուն դնելուց հետո քնել էր ռուսական վառարանի վրա, ոտների սև ներբանները դեմ արել դռանը։ Նատալյան հանեց վերնազգեստը, աննպատակ անցավ սենյակից-սենյակ։ Դահլիճում, տախտակով կտրած մի անկյունում դիզված էր ցանքի համար պահվող կանեփի սերմացուն, և այնտեղ ճստճստում էին մկները։

Նա մի բոպե մնաց պապի սենյակում, մի քիչ կանգնեց պատկերադարակի մոտ՝ բութ նայելով եկեղեցական գրքերին, որոնք դասված էին սրբապատկերների տակ։

— Պապի ջան, քեզ մոտ թուղթ կա՞։

— Ի՞նչ թուղթ,— պապը ակնոցներից վերև կիտեց կնճիռների խիտ փունջը։

— Գրելու թուղթ։

Գրիշկա պապին պրպտեց սաղմոսը և հանեց ճխլտված, մեղրով շիլայի և խնկի նեխահոտ արձակող մի թերթ թուղթ։

— Բա մատի՞տ։

— Հորը դ հարցրու։ Գնա, բալիկս, մի խանդարի։

Նատալյան հոր մոտ մի կտոր մատիտ ճարեց։ Նստեց սեղանի կողքին, տանջալից կերպով կշռադատեց վաղուց մտածված քայլը, որ իր սիրտը մաշում էր բութ, ցավագին կսկիծով։

Առավոտը Գետկոյին օղի խոստանալով, նրան Ցաղոդնոյն կալվածքն ուղարկեց հետևյալ նամակով.

«Գրիգորի Պանտե՛լեիչ,

Գրի ինձ, թե ոնց պիտի ապրեմ, ու իմ կյանքը բոլորովին կորա՞ծ է թե չէ։ Դու տնից գնացիր ու ինձ ոչ մի խոսք չասացիր։ Ես քեզ ոչ մի բանով չէի վիրավորել ու սպասում էի, որ դու կա՛ռձակես իմ ձեռքերը ու կասես, որ դու բոլորովին հեռացել ես, իսկ դու կորել ես խուտորից ու լռում ես մեռելի նման։

Մտածում էի, թե դու սրտի հերսից հեռացար, ու սպասում էի, որ ետ կգաս, բայց ես չեմ ուզում ձեզ բաժանել։ Ավելի լավ է մենակ ես ոտքի տակ ընկնեմ-կորչեմ, քան թե երկուսը։ Խնդա՛ վերջին անգամ ու գրի։ Կիմանամ, մի բան կմտածեմ, թե չէ կես ճամփին եմ կանգնել։

Դու, Գրիշա, ինձ վրա մի՛ բարկանա, ի սեր Քրիստոսի։

Նատալյա»

Մոտալուտ թունդ հարբեցողության նախազգացումից մռայլված, Գետկոն ձին տարավ կալը. Միրոն Գրիգորևիչից թաքուն հեծնելով նրան, սլացավ առանց թամքի։ Նա անհարմար էր նստել ձին, ինչպես այդ հատուկ է ո՛չ կազակ մարդկանց, թափահարում էր ցնցոտիապատ արմունկները, ու մի նրբանցքում խաղացող կազակ երեխաների անբրես բղավոցների տակ գնում էր արագ յորդայով...

— Խախո՛ւ... ա՛յ խախոլ...

— Խախոլ, կպրի կարաս։

— Է՛յ, կընկնե՛ս...

— Ցանկապատի վրա թառած շուն...— նրա ետևից աղաղակում էին երեխաները։

Իրիկնադեմին նա վերադարձավ, բերեց պատասխանը։ Դա գրված էր շաքարի մի կտոր փաթթոցաթղթի վրա. ծոցից հանելով այդ թուղթը, աչքով արավ Նատալյային.

— Ճամփեն անտանելի էր, մումուշ ջան։ Գետկոն այնպես էր ցնցվում ձիու վրա, որ փոր ու փսորը տակն ու վրա էին լինում։

Նատալյան կարդաց ու ուրթնեց։ Սուր-ատամնավոր

մի բան չորս անգամ խոցեց նրա սիրտը՝ պոկելով ինչ-որ մի հյուսվածք։

Թղթի կտորի վրա — ճապաղված չորս բառ՝ «Ապրիր մենակ։ Մելեխով Գրիգորի»։

Շտապելով, ասես հույս չդնելով իր ուժերի վրա, Նատալյան գնաց բակից, պառկեց մահճակալի վրա։ Լուկինիչնան իրիկվանից վառել էր վառարանը, որ կերակուրները շուտ եփեր ու իր ժամանակին պատկա թխեր։

— Նատաշկա, արի օգնիր ինձ,— կանչեց նա աղջկան։

— Գլուխս ցավում է, մայրիկ ջան։ Ես մի քիչ կպառկեմ։

Շորբերով ամբողջովին փաթաթված Լուկինիչնան գլուխը դռնից դուրս հանեց։

— Աղջուր խմիր։ Հը՞։ Մի անգամից կլավանաս։

Նատալյան չորացած լեզվով շոշափեց սառն շուրթերը, ոչինչ չպատասխանեց։

Մինչև երեկո նա պառկեց՝ գլուխը բրդե տաք շալով փաթաթած։ Թեթև դողը ցնցում էր կլոր հացի նման գունդ ու ծծիկ եղած նրա մարմինը։ Միրոն Գրիգորևիչն ու Գրիշկա պապին արդեն եկեղեցի էին գնալու, երբ նա վեր կացավ ու մտավ խոհանոց։ Նրա քունքերի վրա, կոկիկ սանրված, սև մազերի տակին պսպղում էր քրտինքը, աչքերին յուղափայլ, անառողջ մշուշ էր նստել։

Միրոն Գրիգորևիչը կոճկելով լայն շալվարի կոճակներով երկար շարքը, շեղակի նայեց աղջկան։

— Հիվանդանալու ժամանա՞կ գտար, աղջիկս։ Գնանք տուրբ պատարագը լսելու։

— Գնացեք, ես հետո կգամ։

— Երբ բոլորովին վերջանա՞, հը՞։

— Չէ, հիմի ես կհագնվեմ... Հագնվեցի թե չէ, կգամ։

Կազակները գնացին։ Երեքթում մնացին Լուկինիչնան ու Նատալյան։ Վերջինս թույլ վիճակում մերթ անդուկին էր մոտենում, մերթ մահճակալին, չտեսնող աչքերով նայում անդուկում տակն ու վրա արած շորերի կույտը, տանջալից կերպով ինչ-որ բան էր մտածում, շշնջում շրթունքներով։ Լուկինիչնան կարծեց, թե Նատալյան չգիտի՝ ինչ շոր ընտրի,

ու մայրական մեծահոգությամբ առաջարկեց իր յուրկան։

— Հագիր իմ կապույտ յուրկան, սիրելիս։ Դա հիմի լավ կնստի քո վրա։

Ջատկի առնչությամբ Նատալյայի համար նոր շոր չէին կարել, ու հիշելով, թե ինչպես իր դուստրը դեռ աղջիկ ժամանակ սիրում էր տոներին հագնել մոր կապույտ, նեղ փեշերով յուրկան, ինքը առաջարկեց իր ունեցածը, կարծելով, թե Նատալյան դժվարացել է շոր ընտրել։

— Կհագնե՞ս, հա՞։ Ես կհանեմ սնդուկից։

— Չէ՛, ես սրանով կգնամ։— Նատալյան սնդուկից խնամքով հանեց իր կանաչ յուրկան և հանկարծ հիշեց, որ ինքն այդ յուրկայով էր, երբ Գրիգորին իրրև փեսացու այցելության եկավ, չարդախի զով ծածկի տակ առաջին անգամ նրան ամաչացրեց թռուցիկ համբույրով, ու Նատալյան ցնցվեց անակնկալ հեկեկանքից, կրծքով ընկավ սնդուկի բարձրացրած կափարիչի վրա։

— Նատա՛լյա, ի՞նչ եղավ քեզ...— Մայրը ձեռներն իրար զարկեց։

Նատալյան խեղդեց կոկորդից դուրս թռչելու պատրաստ հիչը. իրեն զսպելով, ծիծաղեց բռնազբոսիկ, շինծու ծիծաղով։

— Սիրտս տեղը չի... այսօր։

— Օֆ, Նատաշկա, ոնց որ տեսնում եմ...

— Ի՞նչ ես տեսնում, է՛, մայրիկ,— անսպասելի բարկությամբ բղավեց Նատալյան՝ մատների մեջ ճմռթելով կանաչ յուրկան։

— Տեսնում եմ, որ քո բանը վատ է... պետք է մարդ առնել։

— Հերի՛ք է... կշտացել եմ...

Նատալյան գնաց իր սենյակում հագնվելու, շուտով էլի խոհանոց եկավ արդեն հագնված, աղջկավարի բարակ, կապուտկած ու դալուկ, երեսի անուրախ կարմրությունը թափանցիկ կապտությամբ երանգավորված։

— Գնա՛ մենակ, ես հլա դեռ գործս չեմ պրծել,— ասաց մայրը։

Թաշկինակը դնելով թևածալի տակ, Նատալյան դուրս գնաց։ Քամին Դոնից բերում էր լողացող սառույցների

խշշոցը ու հալհլոցի խոնավության անուշ, կենարար բույրը։ Ձախ ձեռքով յուրկայի փեշը բռնած, շրջանցելով փողոցի ջրափոսերը, որոնք փայլում էին սաղափե կապտությամբ, Նատալյան հասավ եկեղեցի։ Ճանապարհին նա փորձում էր վերադարձնել առաջվա իր հանգիստ տրամադրությունը, կըցկտուր և անորոշ կերպով էր մտածում տոնի և ամեն ինչի մասին, բայց միտքը համառորեն անդրադառնում էր մի կտոր կապույտ փաթթոցաթղթին, որ նա պահել էր կրծքի վրա, Գրիգորիին և այն երջանիկ կնոջը, որը հիմա ներողամտությամբ ծիծաղում է իր վրա և գուցե նույնիսկ խրդճում է...

Նա մտավ եկեղեցու բակը։ Տղաները կտրեցին նրա ճանապարհը։ Անցնելով նրանց կողքից, Նատալյան լսեց հետևվյալը.

— Ո՞վ է սա, դու ճանաչեցի՞ր։

— Նատաշկա Կորշունովան է։

— Ասում են՝ ճողած է։ Դրա համար էլ մարդը թողել է դրան։

— Սուտ ես ասում։ Նա կեսարի, թոփալ Պանտելեյի հետ է եղել...

— Հը՛-մ, ա՛յ թե ինչ։ Ուրեմն Գրիշկան հենց դրա համար էլ փախել է տնից։

— Բա ինչի՞ համար։ Նա հիմի էլ...

Նատալյան սայթաքելով խորդուբորդ քարերի վրա, հասավ գավիթ։ Նրա ետևից կամացուկ, քարի նման շպրտեցին կեղտոտ, խայտառակ մի բառ։ Գավիթում կանգնած աղջիկների քոքոցի տակ Նատալյան դուրս եկավ բակի մյուս դռնից ու հարբածի նման օրորվելով, վազեց տուն։ Իրենց բակի դարպասի մոտ շունչ առավ, ներս մտավ՝ ոտները փեշերի վրա դնելով, կծելով ուռած, արյունոտած շուրթերը։ Բակի յասամանագույն, հածող մթության մեջ սևին էր տալիս մարագի կիսաբաց դուռը։ Նատալյան լարված ճիգ թափելով հավաքեց ուժերի մնացորդը, վազեց մինչև դուռը, հապճեպ անցավ շեմքից։ Մարագում շոր զովություն էր, զգացվում էր կաշվե լծասարքի և երկար մնացած ծղոտի հոտը։ Նատալյան խարխափելով, մտամոլոր, անզգա վիճակում, սև թախիծով համակված, որ չանգռում էր ամոթանքով և հու-

սահատութ՝յամբ լեցուն իր հոգին, հասավ մինչև անկյունը։ Գերանդու կոթը վերցրեց ձեռքը, դրանից հանեց գերանդին (նրա շարժումները դանդաղ, հաստատ, ճշգրիտ էին) ու գլուխը ետ գցելով, ուժգին և իրեն այրող բերկրալի վճռականութ՝յամբ գերանդու սուր սայրով խփեց կոկորդին։ Վայրի, սուր ցավից ընկավ ինչպես հարվածից, ու զգալով, տարտամորեն հասկանալով, որ չի վերջացել սկսածը, չորեքթաթ եղավ, հետո բարձրացավ ծնկների վրա, շտապելով (նրան վախեցնում էր կրծքին թափված արյունը), դողդողջուն մատներով կոճակները պոկելով, հայտնի չէ ինչու բացեց կոֆտան։ Մի ձեռքով ետ տարավ պիրկ, դժվարութ՝յամբ շարժվող ստինքը, մյուսով գերանդու սուր սայրը դրեց կրծքին։ Ծնկների վրա սողալով հասավ պատին, գերանդու բութ ծայրը դեմ արեց դրան,— այն ծայրը, որ ամրացվում է կոթին,— ու ձեռները տանելով ետ գցած գլխի ետևը, կուրծքը ուժով մղեց դեպի առաջ, առաջ... Պարզ լսում, զգում էր կտրատվող մարմնի գարշ կքճկրճոցը, ասես կաղամբ էին կտրում. սուր ցավի սաստկացող ալիքը բոցի պես անցավ կրծքով մինչև կոկորդը, զրնգուն ասեղների նման խրվեց ականջների մեջ...

Տան դուռը ճռնչաց։ Լուկինիչնան իջավ արտաքին սանդուղքից՝ ոտով շոշափելով աստիճանները։ Զանգակատնից համաչափ զողանջում էին զանգերը։ Դոնի վրա անլռելի կրճատոցով, ծառս լինելով գնում էին սառցագնդերը։ Բերկրալի, վարարած, ասուլյցներից ազատված Դոնը դեպի Ազովյան ծովն էր տանում իր սառցե կապանքը։

XIX

Ստեփանը մոտեցավ Գրիգորիին ու բռնելով ասպանդակից, պինդ սեղմվեց հովատակի քրտնքոտ կողքին։

— Հը՛, ո՞նց ես, Գրիգորի։

— Փա՛ռք աստծու։

— Բա ի՞նչ ես մտածում, հը՞։

— Ի՞նչ պետք է մտածեմ որ։

— Փախցքիր ուրիշի կնկանը և... օգտվում ես, հա՞։

— Ո՛ղ ասպանդակը։

— Մի՛ վախենա... Չե՛մ խփի։

— Ես չեմ վախենում, թո՛ղ, է՛։— Գրիգորին ձայնը բարձրացրեց, այտերը կարմրեցին։

— Այսօր ես քեզ հետ չեմ կռվելու, չեմ ուզում... Բայց դու, Գրիշկա, հիշի՛ր խոսքս. վաղ թե ուշ կսպանեմ։

— Կույրն ասաց՝ «տեսնենք»։

— Դու լավ հիշիր այդ։ Վիրավորեցի՛ր դու ինձ... Կյանքս ամուրի դարձրիր ոնց որ կոտած խողի կյանքը... Հրե՛ն, տեսնո՞ւմ ես,— Ստեփանը մեկնեց ձեռները՝ սևացած բռերը դեպի վերև,— վար եմ անում, ամա ես էլ չգիտեմ ինչի համար։ Մենակ ինձ շա՞տ բան է հարկավոր։ Որ պարապ էլ մանգալի, էլի սոված չէի մնա։ Միայն թե ձանձրույթը սպանում է ինձ... Դու ինձ խիստ վիրավորեցիր, Գրիգորի...

— Դու ինձ մի՛ գանգատվիր, չե՛մ հասկանա քեզ։ Կուշտը սոված մանր կբրդի։

— Հա՛, այդպես է,— համաձայնեց Ստեփանը՝ ներքևից վերև նայելով Գրիգորիի երեսին, ու հանկարծ ժպտաց մանկական պարզ ժպիտով, աչքերի անկյունները ծածկվեցին բազմաթիվ բարակ կնճիռներով։— Ես մենակ մի բանի համար եմ ափսոսում, տղա... շատ եմ ափսոսում... Հիշո՞ւմ ես, հերու չէ մեկել տարի բարեկենդանին մենք մուշտակով էինք տալի տղերանց շարքի առաջ։

— Այդ ե՞րբ։

— Այն օրը, է՛, երբ որ սպանեցին գզրարին։ Ազաբները պսակվածների հետ էին կռվում, մի՞տդ է։ Մի՞տդ է, որ ես քո ետևից էի ընկնում։ Իմ դեմ դու ի՞նչ էիր որ՝ ճխըլ-տուրիկ զամիշ։ Ես խղճացի քեզ, իսկ եթե զարկեի, երկու կտոր կանեի։ Դու վռազ-վռազ փախչում էիր, հևոցդ բռնել էր. թե որ վրա բերեի ու հասցնեի կողքիդ, շունչդ կփչեիր։

— Դարդ մի՛ անի, մի օր էլի կզարկվենք։

Ստեփանն ինչ-որ մի բան հիշելով, ձեռքը տարավ, շփեց ճակատը։

Պանը, որ Դիմացկունին տանում էր սանձից բռնած, ձայն տվեց Գրիգորիին։

— Գնա՛նք։

Շարունակելով ձախ ձեռքում բռնած պահել ասպանդակը, Ստեփանը քայլեց հովատակի կողքից։ Գրիգորին հետևվում էր նրա յուրաքանչյուր շարժման։ Նա վերևից տեսնում

էր Ստեփանի շեկ, կախ ընկած բեղերը, վաղուց չսափրած մորուքի խիտ մազերը։ Ստեփանի կզակի տակ կախված էր գլխարկի լաքած, շատ տեղերից ճաքճքած փոկիկը։ Նրա դեմքը, որ կեղտից գորշ գույն էր ստացել ու պատած էր թեք ղոլերով՝ հոսուն քրտնքի հետքերով, տարտամ էր ու անծանոթ։ Նայելով նրան, Գրիգորին ասես սարից նայում էր հեռավոր, անձրևի մուժով սքողված տափաստանին։ Ծանր հոգնածությունը և ձանձրույթը խամրել էին Ստեփանի դեմքը։ Նա առանց հրաժեշտ տալու ետ մնաց։ Գրիգորիի ձին քայլելով էր գնում։

— Հլա կա՛ց։ Բա ո՞նց է... ո՞նց է Ակսյուտկան։

Գրիգորին մտրակով վար գցելով կոշիկի ներբանին կպած ցեխի կտորը, պատասխանեց.

— Ոչի՛նչ։

Նա կանգնեցրեց հովատակը, ետ նայեց։ Ստեփանը կանգնել էր ոտները լայն դրած, ատամներով կծոտում էր քոլախոտի մի ցողուն։ Գրիգորին անդիտակցորեն խղճաց նրան, բայց խանդի զգացումը վանեց խղճահարությունը. թամքի ճոճոան բարձի վրա շուռ գալով, նա բղավեց.

— Ակսինյան քեզ համար հալ ու մաշ չի լինում, դարդ մի՛ անի։

— Իսկապե՞ս։

Գրիգորին մտրակով խփեց հովատակի ականջների արանքին և սլացավ առանց պատասխանելու։

Վեցերորդ ամսում, երբ արդեն անկարելի էր թաքցնել հղիությունը, Ակսինյան Գրիգորիին խոստովանեց այն։ Նա թաքցրել էր, վախենալով, որ Գրիգորին չի հավատա, թե երեխան իրենն է, սփրթնում էր երբեմնակի վրա հասնող տխրությունից ու վախից, ինչ-որ առիթի էր սպասում։

Առաջին ամիսներին էլ Ակսինյայի սիրտը խառնում էր մսով կերակուրներից, բայց Գրիգորին չէր նկատում, իսկ եթե նկատում էր, ապա չհասկանալով պատճառը, առանձին նշանակություն չէր տալիս։

Խոսակցությունը տեղի ունեցավ երեկոյան։ Հուզվելով, Ակսինյան ասաց հղիության մասին և ագահությամբ փոփոխություն էր փնտրում Գրիգորիի դեմքի վրա, բայց վերջինս դեպի պատուհանը դարձած, ոստիկանորեն հազում էր։

— Բա առաջ ինչո՞ւ էիր լռում։

— Վախենում էի, Գրիշա... կարծում էի, թե դու կթողնես ինձ...

Մատները թփթփացնելով մահճակալի մեջքին, Գրիգորին հարցրեց.

— Շո՞ւտ կլինի։

— Կարծում եմ՝ օգոստոսի սկզբներին...

— Ստեփանի երեխա՞ն է։

— Քոնն է։

— Ո՞նց թե։

— Ինքդ հաշվիր... Ցախ կտրելու օրերից...

— Սուտ մի՛ ասա, Կսյուշկա։ Թեկուզև Ստեփանից է, հիմի ի՞նչ պիտի անես։ Ես լուրջ եմ հարցնում։

Դառն արցունքներ թափելով, Ակսինյան նստել էր նստարանի վրա, տանջալից, կամացուկ ձայնով ասում էր.

— Նրա հետ, մի քանի տարի ապրեցի, ու ոչինչ չէր լինում... Ի՜նքդ մտածիր... Ես հիվանդ կնիկ չէի... Ուրեմն երեխան քեզանից է, իսկ դու...

Գրիգորին այդ մասին այլևս չխոսեց։ Ակսինյայի հանդեպ նրա վերաբերմունքին զգուշավոր խորթացման ու թեթև, հեգնոտ կարեկցության մի նոր արտահայտություն ավելացավ։ Ակսինյան ամփոփվեց ինքն իր մեջ, փայփայանքի չէր ձգտում։ Ամառվա ընթացքում նա տգեղացել էր, բայց հղիությունը համարյա չէր փչացնում նրա գեղանի իրանը. ընդհանուր հղիությունը սակավ նկատելի էր դարձնում կլորացող փորը, իսկ ջերմորեն սիրունացած աչքերը մի նոր շքեղություն էին տալիս նիհարած դեմքին։ Նա հեշտությամբ էր կատարում խոհանոցային սև աշխատանքը։ Այդ տարի բանվորները քիչ էին, քիչ էր նաև եփել-թափելու գործը։

Սաշկա պապին ծերունական քմահաճ կապվածությամբ կպել էր Ակսինյային։ Թերևս այդ նրանից էր, որ Ակսինյան հոգատարությամբ էր վերաբերվում նրան, ինչպես հորը. լվանում էր նրա սպիտակեղենը, կարկատում շապիկները, սեղան նստած ժամանակ փափուկ, քաղցր պատառներ էր տալիս նրան, ու Սաշկա պապին վերջացնելով ձիերին խնամելու գործը, ջուր էր բերում խոհանոց, ճմռում խոզերի

համար եփած կարտոֆիլը, ամեն կերպ ծառայություն էր մատուցում, ու մեկ էլ տեսար ուրախությունից վեր-վեր թռավ, տարածեց թևերը, բացեց անատամ լինդերը՝ ասելով.

— Դու ինձ խղճացիր, ես է՛լ պարտք չեմ մնա։ Ես քեզ համար հոգիս է՛լ կտամ, Ակսինյուշկա։ Ախր ես առանց կնկա խնամքի կորչում էի։ Ոչիլն ուտում էր ինձ։ Քեզ ինչ որ հարկավոր լինի, ասա։

Գրիգորին Եվգենի Նիկոլաևիչի միջնորդությամբ ազատվելով ճամբար գնալուց, հունձ էր անում, ծերուկ պանին երբեմն տանում էր ստանիցա, մնացած ժամանակը նրա հետ գնում էր տափաստանային հավքեր, արոսներ որսալու։ Դյուրին, կուշտ կյանքը փչացնում էր նրան։ Նա ծուլանում էր, հաստանում, իր տարիքից ավելի մեծ էր թվում։ Միայն մի բան էր անհանգստացնում նրան՝ մոտալուտ ծառայությունը։ Ո՛չ ձի ուներ, ոչ հանդերձանք, իսկ հոր վրա հույս դնել չէր կարելի։ Ստանալով իր և Ակսինյայի ռոճիկը, Գրիգորին ժլատություն էր անում, մինչև իսկ թութուն է՛լ չէր գնում իրեն համար, հույս ունենալով, որ հավաքած փողերով ձի կգնի, հոր առաջ գլուխ չի ծռի։ Պանն է՛լ խոստացել էր օգնել։ Գրիգորիի այն ենթադրությունները, թե հայրը ոչինչ չի տա, շուտով հաստատվեցին։ Հունիսի վերջին Պետրոն եկավ եղբորը տեսնելու, խոսակցության ժամանակ ասաց, որ հայրը առաջվա պես բարկացած է նրա վրա ու մի անգամ հայտարարել է, որ շարային ձի չի տա, թող նա, Գրիգորին, գնա տեղական զորախումբը։

— Է՛հ, թող նա դրանով չզարմացնի։ Ծառայության կգնամ իմ (Գրիգորին ընդգծեց այդ բառը) ձիով։

— Ո՞ւտեղից կվերցնես, մեկի առաջ պա՞ր կգաս թե ոնց,— բեղը ծամծմելով, ժպտաց Պետրոն։

— Պար չեմ գա, խնդրելով կառնեմ, մինչև իսկ կգողանամ։

— Ղոչա՛ղ տղա։

— Ռոճիկով կգնեմ,— արդեն լուրջ ասաց Գրիգորին։

Պետրոն արտաքին սանդուղքին նստած, հարցուփորձ էր անում աշխատանքի, ուտել-խմելու, ռոճիկի մասին. շարունակ «ը-հ՛մ», «հա» ասելով, ծամում էր բեղի արդեն շատ

ծամծմված ծայրը, ու ամեն ինչ իմանալով, հրաժեշտ տալու ժամանակ ասաց Գրիգորիին.

— Տո՛ւն գայիր, էլի, ի՞նչ կարիք կա պոչ խաղացնել։ Կարծում ես մի քանի ռուբլու ետևից ընկնելով բա՞ն դուրս կգա։

— Ես դրա ետևից չե՛մ էլ ընկնում։

— Միտք ունե՞ս ապրել կնկանդ հետ,— խոսքը շուռ տվեց Պետրոն։

— Այդ ո՞ր կնկա։

— Սրա հետ։

— Հլա միտք ունեմ, ինչի՞ ես հարցնում։

— Այնպես, էլի, հետաքրքրվեցի։

Գրիգորին գնալու էր եղբորը ճանապարհ դնելու։ Վերջում հարցրեց.

— Ի՞նչ կա տանը։

Պետրոն արտաքին սանդուղքի բազրիքից ձին արձակելով, քմծիծաղ տվեց.

— Ոնց որ նապաստակը պալատ ունի, այնպես էլ դու տուն ունես։ Է՛հ, ոչինչ, ապրում ենք կամաց-կամաց։ Մերը կարոտում է քեզ։ Բավական շատ խոտ քաղեցինք, երեք դեզ դրինք։

Գրիգորին հուզմունքով նայում էր պառաված, ականջը կտրած զամբիկին, որով եկել էր Պետրոն։

— Ձի՞ ծնել։

— Չէ՛, աղբեր, չբեր է։ Ծնել է թուխ ձին, որ մեր ձիու հետ փոխել-առել էինք Խրիստոնյայից։

— Ի՞նչ է բերել։

— Հովատակ, աղբեր ջան։ Այնպիսի հովատակ, որ գին չունի։ Ոտները բարձր են, կոճիկները ուղիղ և դոշն էլ լավ է։ Հիանալի ձի կդառնա։

Գրիգորին հոգոց հանեց։

— Կարոտում եմ մեր խուտորին, Պետրո։ Կարոտել եմ Դոնին, այստեղ վազող ջուր չես տեսնի։ Ձվելի տեղ է։

— Արի այցելության,— տնքաց Պետրոն՝ փորը գցելով ձիու սուր լանջին ու նրա վրայից անցկացնելով աջ ոտը։

— Մի կերպ կգամ։

— Դեհ, մնաս բարով։

— Բարի համբա՛ր։

Պետրոն արդեն բակից դուրս ելավ, ինչ-որ բան հիշելով, ձայն տվեց արտաքին սանդուղքի վրա կանգնած Գրիգորիին.

— Նատալյան... Մոռացա ասել... Փորձանք պատահեց...

Քամին, որ ուրուրի պես պոռչտ էր գալի բակում, խոսքի վերջը չհասցրեց Գրիգորիին. աբրեշումն փոշին շղարշեց Պետրոյին ու նրա ձիուն, ու Գրիգորին չլսելով նրա խոսքերը, ձեռքը թափ տվեց, գնաց ախոռ։

Ամառը չորային էր։ Հազվադեպ էր անձրև գալիս, ու հացը շուտ հասավ։ Հենց նոր էին վերջացրել տարեկանի քաղը, արդեն հասել էր գարին, դեղնել էր, կախվել քյաքուլավոր հասկերով։ Օրով վարձված չորս եկվոր բանվորներն ու Գրիգորին գնացին հնձելու։

Ակսինյան վաղ վերջացրեց եփել-թափելը, Գրիգորիին խնդրեց, որ իրեն էլ տանի։

— Տանը նստիր, էլի՛, դա ինչի՞ դ է պետք,— համոզում էր Գրիգորին, բայց Ակսինյան պնդեց իր ասածի վրա, ու հապճեպորեն լաչակը կապելով, դարբասից դուրս վազեց, հասավ սայլի վրա նստած բանվորներին։

Այն, ինչ-որ Ակսինյան սպասում էր կարոտով ու խնդալից անհամբերությամբ, այն, ինչից մի փոքր վախենում էր Գրիգորին, պատահեց հնձի վայրում։ Ակսինյան փոցխում էր, ու ցավի որոշ նշաններ զգալով, թողեց փոցխը, պառկեց դեզի տակ։ Շուտով սկսվեց ցավը։ Կծելով սևացած լեղուն, Ակսինյան պառկել էր մեջքի վրա։ Նրա կողքից, արտի չհնձած մասի եզրից հնձիչով անցնող բանվորները բղավում էին ձիերի վրա։ Նրանցից մեկը, որ երիտասարդ էր, տակից փտած քթով ու ասես փայտից տաշած, դեղին ու անհարթ դեմքով, անցնելիս ասաց Ակսինյային.

— Է՛յ, ի՞նչ ես փռվել անհարմար տեղում։ Վե՛ր կաց, թե չե կհալվես։

Հնձիչի վրա հերթափոխվելով, Գրիգորին մոտեցավ Ակսինյային.

— Ի՞նչ եղավ քեզ....

Ծոմռելով անհնազանդ շրթունքները, Ակսինյան խռխռոտ ասաց.

— Ցավս բռնել է։

— Ասում էի մի՛ գա, գրողի տարած խուժան։ Է՛, հիմի ի՞նչ անենք։

— Մի՛ հայհոյի, Գրիշա... օ՛ֆ... օ՛ֆ... Գրիշա, լծի՛ր ձիերը... Տուն գնանք... Այստեղ ես ո՞նց անեմ, ախր կազակները... — տնքում էր Ակսինյան՝ ցավի երկաթե օղակով սեղմված։

Գրիգորին վազեց բլրագագում արածող ձին բերելու։ Մինչև լծեց ու մոտեցավ, Ակսինյան մի կողմ սողաց, չորեքթաթ եղավ՝ գլուխը խոթելով փոշոտ գարու կույտի մեջ, բերանից թափելով ծակող հասկերը, որ կրծոտում էր տանջանքից։ Նա ուռած, օտարոտի աչքերով անզգայորեն նայեց վրա հասած Գրիգորիին, ու տնքալով, բերանը փակեց ճխլտած գոգնոցով, որ բանվորները չլսեն իր այլանդակ, կենդանական ճչոցը։

Գրիգորին նրան տեղավորեց սայլի վրա, ձին քշեց, դեպի կալվածքը։

— Օ՛յ, կամաց քշի... Օ՛յ, մեռա՛ ես... Ջարդվեցի...— կոպտացած ձայնով գոռում էր Ակսինյան՝ սայլի հատակի վրա ցնցելով զզզված գլուխը։

Գրիգորին մտրակով լուռ ձաղկում էր ձիուն, գլխի վրա պտտում երասանները առանց ետ նայելու, որտեղից թափվում էր խոպոտ, ժայթքող հեծեծանքը։

Ակսինյան ձեռներով այտերը սեղմած, սարսափահար հածելով լայն բացված, խելագար աչքերը, կոստկոստում էր սայլի վրա, որ այս ու այն կողմ ընկնելով, սլանում էր խորդուբորդ, ոչ բանուկ ճանապարհին։ Ձին քառատրոփով էր ընթանում. Գրիգորիի աչքերի առաջ սահուն կերպով վեր-վեր էր թռչում աղեղը, իր ծայրով ծածկում երկնքից կախված, կուրացուցիչ կերպով սպիտակ, բյուրեղի նման կոկիկ մի ամպ։ Ակսինյան մի բոպե ընդհատեց անընդմեջ, ճչոցի հասնող հեծեծանքը։ Գոգոռում էին անիվները, սայլի ետին մասում Ակսինյայի անկամք գլուխը խուլ զարնվում էր տախտակներին։ Գրիգորին միանգամից չըմբռնեց վրա հասած լռությունը, ուշքի գալով՝ ետ նայեց. Ակսինյան պառկած էր աղճատված, այլանդակված դեմքով, սայլի կողին թուշը պինդ սեղմած, բերանը բաց ու խուփ անելով

ինչպես ափ շպրտված ձուկ։ Նրա ճակատից քրտինքը առատորեն հոսում, լցվում էր ակնակապիճները։ Գրիգորին քիչ բարձրացրեց նրա գլուխը իր ճմռթված գլխարկը դրեց գլխի տակ։ Շեղակի նայելով, Ակսինյան կտրուկ ասաց.

— Ես մեռնում եմ, Գրիշա։ Է՛... ուրիշ չ...ինչ։

Գրիգորին ցնցվեց։ Հանկարծակի սարսուռը հասավ մինչև քրտինքոտ ոտների մատները։ Գրիգորին հուզվելով, քաջալերման, փայփայանքի խոսքեր փնտրեց ու չգտավ. անզգա ջղաձգությամբ իրար կպած նրա շուրթերից դուրս թռավ.

— Ի՞նչ ես դուրս տալի, դմբո՛...— թափահարեց գլուխը, ու թեքվելով, գալարվելով, գրկեց Ակսինյայի անհարմար մեկնված ոտը։— Ակսյո՛ւտկա, տատրակի՛կս...

Երկունքի ցավը, որ մի րոպե բաց էր թողել Ակսինյային, վերսկսվեց տասնապատկված ուժով։ Զգալով, թե ինչպես ներքև իջած փորում ինչ-որ մի բան է կտրվում, ու աղեղի նման կորանալով, Ակսինյան Գրիգորիին խոցող, անպատմելիորեն սարսափելի ու սաստկացող աղաղակ բարձրացրեց։ Գրիգորին խելքը կորցրած, քշում էր ձին։

Անիվների դղրդոցի տակ նա հազիվ լսեց ծորուն-բարակ ձվոցը.

— Գրի-ի՛-ի-շա-ա։

Գրիգորին քաշեց երասանները, շուռ տվեց գլուխը. արյունով ողողված Ակսինյան պառկել էր թևերը տարածած. նրա ոտների արանքում, շրջազգեստի տակ, կարմիր-սպիտակավուն լորձի մեջ շարժվում էր կենդանի, ծվծվացող մի բան... Շշմած Գրիգորին սայլից ցած թռավ ու ճռճվելով, ասես ոտները կապած, քայլեց դեպի այն։ Նայելով Ակսինյայի բորբոքված բերանին, ավելի շուտ գլխի ընկավ, քան լսեց՝

— Պոր-տի լարը կր-ծիր ու կտ-րի-իր... կա-ա-պիր թե-լով... շա-ապ-կիցդ...

Գրիգորին ցնցվող մատներով իր բյազե շապկի թևքից հանեց մի փունջ թել, ցավեցնելու չափ կկոցեց աչքերը, կրձելով կտրեց պորտալարը և հուսալի կերպով, թելերով կապեց պորտի արյունոտ ծայրը։

XXI

Ընդարձակ, անջուր հովտին պալատի նման կպել էր Լիստնիցկու կալվածքը՝ Յագոդնոյեն։ Փոփոխվելով, քամին փչում էր մերթ հարավից, մերթ հյուսիսից, երկնքի կապտավուն սպիտակության մեջ հածում էր արեգակի դեղնուցը. ամառվա փեշը կոխելով, շշշում էր տերևաթափ աշունը, ձմեռը վրա էր տալիս սառնամանիքներով, ձյուներով, իսկ Յագոդնոյեն էլի ու էլի կծկվում էր փայտացած ձանձրույթի մեջ ու անցնում էին օրերը՝ թռչելով կալվածքը մնացած աշխարհից կտրող բարձր ցանկապատի վրայից, մեկը մյուսին նման, ինչպես եկվորյակները։

Բակում էլի՛ ու էլի թափառում էին սև, կչկչան բաղեները՝ կարմիր, ակնոցանման շրջանակներով աչքերը օղակված, ուլունքացողուն անձրևի պես ցրիվ էին գալիս խայտահավերը, ախոռի կտուրի վրա կատվի որովայնային ձայնով մլավում էին ճոխ փետրավորված սիրամարգները։ Ծերունի գեներալը սիրում էր ամեն տեսակ թռչուններ, նույնիսկ զարկած կռունկ էր պահում, ու նոյեմբերին վերջինս պղնձաձայն, թախծոտ ճիչով խփում էր մարդկային սրտերի լարերին՝ լսելով ազատ թռչող կռունկների անպարզ կանչը։ Բայց թռչել չէր կարող, թույլ կախ էր ընկել զարկված թևը, իսկ գեներալը պատուհանից նայելով, թե ինչպես կռունկը թեքելով գլուխը, ցատկոտում է, ուզում է գետնից վեր թռչել,— ծիծաղում էր՝ բաց անելով երկար, բեղերի ճերմակ ծածկի տակ ընկած բերանը ու բամբ ծիծաղը թութունի ծխի նման գալարվում, ծածանվում էր դատարկ, սպիտակ դահլիճում։

Վենյամինը էլի՛ ու էլի բարձր էր պահում խիտ թավշավոր գլուխը, դողացնում վտիտ ոտները ու նախասենյակում, սնդուկի վրա ամբողջ օրերով ինքն իր հետ թուղթ էր խաղում։ Տիխոնը էլի՛ ու էլի իր չեչոտ սիրուհուն խանդում էր Սաշկայի, բանվորների, Գրիգորիի, պանի և նույնիսկ կռունկի նկատմամբ, որի վրա Լուկերյան թափում էր իր, այրի կնոջ ծով քնքշությունը։ Սաշկա պապին ժամանակ առ ժամանակ խմում-հարբում էր ու գնում կանգնում պատուհանների տակ՝ պանից քսան կոպեկ պոկելու։

Ամբողջ ժամանակ միայն երկու դեպք պատահեց, որոնք

ցնցեցին քնեած վիճակում բորբոսնող կյանքը,— Ակսինյայի ծննդաբերությունը և ցեղային արու սագի կորուստը։ Ակսինյայի բերած աղջկան շուտով ընտելացան, իսկ սագից միայն փետուրները գտան տնամերձ պուրակից դենը, մի զառիթափի տակ (ըստ երևույթին աղվեսն էր խպշտել),— ու հանգստացան։

Առավոտյան արթնանալով, պանը կանչում էր Վենիամինին.

— Հը՛, երազումդ ի՞նչ տեսար։

— Օ՜, այնպիսի հրաշալի երա՛զ էր։

— Պատմի՛ր,— կարճ հրամայում էր պանը՝ շուռ ու մուռ անելով պապիրոսը։

Ու Վենիամինը պատմում էր։ Եթե երազն անհետաքրքիր կամ սարսափելի էր, պանը բարկանում էր.

— Է՜, հիմա՛ր, անասո՛ւն։ Հիմարը հիմար երազներ է տեսնում։

Վենիամինը սովորեց ուրախ ու հետաքրքիր երազներ հնարել։ Նրան մի բան էր ճնշում՝ հարկավոր էր մոգոնել, և ահա պատմելուց մի քանի օր առաջ սկսում էր ուրախ երազներ հնարել՝ նստելով սնդուկի վրա ու գորգին չմպացնելով խաղաթղթերը, որոնք կակուղ ու ճենճոտ էին ինչպես թուղթ խաղացողի թշերը։ Բուն հայացքը հառում էր մի կետի, հերյուրում էր, և բանն այնտեղ հասավ, որ իրականում էլ բնա՛վ երազ չէր տեսնում։ Արթնանում էր, լարում հիշողությունը, բայց մտքում անհուն խավար էր, դատարկություն, չէ՛ թե երազ, այլ թեկուզ մի հատիկ դեմք էլ տեսած չէր լինում։

Վենիամինը մաշվում էր իր անպաճույճ հնարքներից, իսկ պանը բարկանում էր՝ բռնելով պատմողի կրկնությունները։

— Է՛յ, գարշելի մունտռիկ, դու ինձ հինգշաբթի օրն է՛լ ես պատմել ձիու վերաբերյալ այդ երազը։ Ցնդել ես, հը՞ գրողի տարած...

— Նորից եմ տեսել, Նիկոլայ Ալեքսեիչ։ Քրիստոսը վկա, նույն բանը ուրիշ անգամ է՛լ եմ տեսնում,— առանց շփոթվելու ստում էր Վենիամինը։

Դեկտեմբեր ամսում Գրիգորիին խուտորի վարչության

հերթապահի հետ կանչեցին Վեշենսկայա, ստանիցայի վարչությունը։ Ձի գնելու համար ստացավ հարյուր ռուբլի և ծանուցում այն մասին, որ ծննդյան տոնի երկրորդ օրը պետք է մեկնի Մայնկովո մեծ գյուղը, հավաքման տեղամասը։

Գրիգորին ստանիցայից վերադարձավ շփոթված վիճակում. ծննդյան տոնը մոտենում էր, իսկ նա բոլորովին անպատրաստ էր։ Պետության տված փողով և իր խնայողություններով, հարյուր քառասուն ռուբլով մի ձի գնեց Օբրիվսկի խուտորում։ Գնման համար գնացել էր Սաշկա պապի հետ, գնեցին հարմար մի ձի, որ վեց տարեկան էր, թուխ գույնի, կախ գավակով, ուներ ինչ-որ թաքնված պակասություն։ Սաշկա պապին տնտղելով մորուքը, ասաց.

— Ավելի էժան չես գտնի, իսկ պետերը չեն նկատի։ Այդքան ուստա չեն։

Գրիգորին այնտեղից մեկնեց գնած ձիով, փորձեց նրա քայլքն ու վարդը։ Իսկ ծննդից մի շաբաթ առաջ Յագոդնոյե ժամանեց ինքը Պանտելեյ Պրակոֆևիչը։ Առանց բակը մտնելու, սահնակին լծված ղամբիկին կապեց ցանկապատին, կաղալով քայլեց դեպի ծառայանոց, սառցի լուլաները պոկելով մորուքից, որ սև ձողի նման նստել էր քուրքի օձիքին։ Գրիգորին պատուհանից ճանաչելով հորը, շփոթվեց։

— Ա՛յ քեզ բա՛ն... Հե՞րըս է...

Ակսինյան հայտնի չէ ինչու նետվեց դեպի օրորոցը, փաթաթեց երեխային։

Պանտելեյ Պրակոֆևիչը մտավ սենյակ, իր հետ ներս բերելով ցուրտը. հանեց փափախը ու խաչակնքեց սրբապատկերի առաջ՝ դանդաղ դիտելով պատերը։

— Բա՛ն։

— Բարև, ապի,— նստարանից վեր կենալով, պատասխանեց Գրիգորին ու մի երկու քայլ անելով, կանգնեց սենյակի մեջտեղում։

Պանտելեյ Պրակոֆևիչը մրսած ձեռքը պարզեց Գրիգորիին, նստեց նստարանի ծայրին՝ ծածկելով քուրքի փեշը, մի հայացք նետելով Ակսինյայի վրա, որ անշարժ կանգնել էր օրորոցի մոտ։

— Պատրաստվում ես ծառայության՞։

— Բա ո՞նց։

Պանտելեյ Պրակոֆևիչը լռեց՝ զննողաբար երկար նայելով Գրիգորիին։

— Քուրքդ հանիր, ապի, երևի մրսած կլինես։

— Ոչինչ։ Կդիմանանք։

— Սամավար կգցենք։

— Շնորհակալություն։— Ասաց հայրը՝ եղունգով քուրքից քերելով ցեխի վաղուցվա մի բիծ։— Քեզ համար հանդերձանք եմ բերել՝ երկու շինել, թամք, շալվար։ Վերցրու... բոլորը այնտեղ է։

Գրիգորին առանց գլխարկի դուրս գնաց ու սահնակից երկու պարկ վերցրեց։

— Ե՞րբ ես գնալու,— հետաքրքրվեց Պանտելեյ Պրակոֆևիչը, վեր կացավ։

— Սննդի մյուս օրը։ Գնում ես, հա՞, ապի։

— Վառազում եմ, պետք է շուտ ետ դառնամ։

Նա հրաժեշտ տվեց Գրիգորիին ու դարձյալ մի հայացք նետելով Ակսինյայի վրա, քայլեց դեպի դուռը։ Արդեն ձեռքը դռան վրա դնելով, աչքերի նետերն ուղղեց դեպի օրորոցը, ասաց.

— Մերդ բարև ղրկեց, ոտները ցավում են։— Ու մի փոքր լռելով, լարված, ասես ծանր բան վերցնելով, ավելացրեց.— կգամ, քեզ ճամփու կդնեմ մինչև Մայնկովո։ Դու պատրաստվիր։

Դուրս ելավ՝ ձեռները խոթելով տաք, գործած թաթմանների մեջ։ Իր ապրած ստորացումից գունատ Ակսինյան լուռ էր։ Գրիգորին քայլում, շեղակի նայում էր նրան՝ աշխատելով ոտը դնել հատակի մի ճռճռան տախտակին։

Սննդյան առաջին օրը Գրիգորին Լիստնիցկուն տարավ Վեշենսկայա։

Պանը ներկա եղավ պատարագին, նախաճաշեց իր հոր-եղբոր աղջկա, կալվածատիրուհու մոտ, հրամայեց լծել ձին։

Գրիգորին, որ ժամանակ չունեցավ մինչև վերջ ուտելու խոզի մսով եփած մի ման յուղալի շչին, վեր կացավ, գնաց ախոռ։ Քաղաքային թեթև սահնակին լծում էին օռլովյան մոխրագույն և կարմրախայտ վարգաձին՝ Շիբայը։

Ձանձը ներքև քաշելով, Գրիգորին նրան դուրս տարավ ախոռից, շտապ լծեց։

Քամին էրնում էր փխրուն, ծակող ձյունը, բակովը մեկ ֆշշալով հոսում էր արծաթե բուք-բորանը։ Ցցապատնեշի ետևում, ծառերի վրա նուրբ, ծոպազարդ եղյամ էր նստել։ Քամին թափում էր այն, ու ընկնելով, ցրիվ գալով, եղյամը արևի տակ ջողում էր ծիածանային, հեքիաթային-հարուստ ու ներդաշնակ գույներով։ Տան կտուրի վրա, մրոտած ծխնելույզի կողքին,— որից շեղակի գալարվում էր ծուխը,— կոճղում էին ճրեկան, սև ագռավները։ Քայլերի ճռճռոցից վախեցած, նրանք թռան, դորշ-կապույտ փաթիլների նման ճախրեցին տան վերևում ու սլացան դեպի արևմուտք, եկեղեցին, հստակորեն կապույտին տալով առավոտյան մանուշակագույն երկնքում։

— Ասա, որ սահնակը պատրաստ է,— դիմեց Գրիգորին տանից դուրս վազող մի սպասուհի աղջկա։

Դուրս եկավ պանը՝ բեղերը ընկղմելով ջրարջի մորթուց կարած մուշտակի օձիքի մեջ։ Գրիգորին փաթաթեց նրա ոտները, կոճկեց ոտնածածկոցը, որ գայլի մորթուց էր, թավշով բոլորակարված։

— Տաքացրու դրան։— Պանը աչքերով ցույց տվեց ձին։

Նստելատեղից իրանը ետ-ետ տալով, լարված ձեռներում ամուր պահելով պիրկ երերվող երասանները, Գրիգորին վախվխելով, աչքի տակից նայում էր սլկուն ճամփին, հիշելով, թե ինչպես սահնակի առաջին ճանապարհն անցնելիս թեթև ցնցումի համար պանը նրա ծոծրակը դաղել էր պինդ, ոչ-ծերունական բռունցքով։ Իշան մինչև կամուրջը, և այստեղ, Դոնի վրա, Գրիգորին թուլացրեց երասանները, ձեռնոցով շփեց ցուրտ քամուց մրսած այտերը։

Յագողնոյի հասան երկու ժամում։ Պանը ամբողջ ճանապարհին լուռ էր, երբեմն ծռած մատը խփում էր Գրիգորիի մեջքին՝ «կանգնեցրու-ու», և պապիրոս էր շինում՝ մեջքը շարձնելով քամու կողմը։

— Վաղը շո՞ւտ կգնաս։

Գրիգորին շուռ եկավ կողքի, դժվարությամբ բացեց սառած շրթունքները։

— Շո՛ւտ,— կարողացավ արտասանել նա «շուտ»-ի փո-

խաբեն։ Ցրտից կոշտացած լեզուն կարծես ուռել էր. կպչելով ատամների շարքին, դժվարությամբ էր շարժվում։

— Փողը լրիվ ստացա՞ր։

— Ճիշտ այդպես։

— Կնոջդ համար մի անհանգստանա, կապրի։ Լա՛վ ծառայիր։ Քո պապը հիանալի կազակ էր։ Դու էլ պետք է,— պանի ձայնը խուլ հնչեց (Լիստնիցկին դեմքը քամուց ծածկեց օձիքով),— դու է՛լ պետք է քեզ արժանավայել պահես, ինչպես պապդ և հայրդ։ Չէ՞ որ քո հայրը հազար ութ հարյուր ութսուներեք թվականին կայսերական զորատեսի ժամանակ ձիարշավի համար առաջին մրցանակը ստացավ։

— Ճիշտ այդպես, հայրս։

— Այո, հենց այդ է բանը,— խիստ տոնով, ասես սպառնալով, վերջացրեց պանը ու դեմքը բոլորովին թաղեց օձիքի մեջ։

— Գրիգորին ձին ձեռքե-ձեռք հանձնեց Սաշկա պապին, գնաց ծառայանոց։

— Հերրդ եկել է,— նրա ետևից ասաց Սաշկա պապին՝ տապճակը գցելով ձիու վրա։

Պանտելեյ Պրակոֆևիչը նստել էր սեղանի կողքին, ուտում էր։ «Խմել է»,— մտածեց Գրիգորին, մի հայացք գցելով հոր մեղմացած դեմքին։

— Եկա՞ր, զինվոր տղա։

— Մրսել եմ,— ձեռները շփելով պատասխանեց Գրիգորին ու դիմեց Ակսինյային.— արձակիր բաշլուղս, ձեռներս փետացել են։

— Դու քյալագի մեջ ընկար, թարսի պես ցուրտ քամի է փչում,— ուտելիս ականջներն ու մորուքը շարժելով՝ մռմռաց հայրը։

Այս անգամ նա շատ սիրալիր էր, կարճ, աղավարի հրամայեց Ակսինյային.

— Էլի՛ հաց կտրի, մի՛ խնայի։

Վեր կենալով սեղանից ու ծխելու համար դեպի դուռը քայլելով, իրը թե պատահաբար մի երկու անգամ օրորեց սրորոցը. մորուքը խոթելով ծածկոցի տակ, հարցրեց.

— Կազա՞կ է։

— Աղջիկ է,— Գրիգորիի փոխարեն պատասխանեց Ակսինյան, ու նկատելով դժգոհությունը, որ սահեց ծերունու դեմքով ու կորավ նրա մորուքի մեջ, հապճեպ ավելացրեց.— այնպես սիրունիկն է որ, բոլորովին նման է Գրիշային։

Պանտելեյ Պրակոֆևիչը լրջադեմ դիտեց լաթակույտի տակից երևացող թուխլիկ գլխիկը, ու ո՛չ առանց հպարտության ասաց.

— Մեզ է քաշել... Ըհը՛-մ... Հլա տես, իի՛հ...

— Դու ինչո՞վ եկար, ապի,— հարցրեց Գրիգորին։

— Սահնակով, զամբիկով ու Պետրոյի ձիով։

— Մի ձիո՛վ գայիր, էլի՛, իմ ձին էլ կլծեինք։

— Կարիք չկա, թող դատարկ գնա։ Լավ ձի է։

— Տեսա՞ր։

— Մի քիչ մտիկ արի։

Խոսում էին այլևայլ մանր հարցերի մասին՝ մի ընդհանուր բանով մտահոգված։ Ակսինյան չէր մասնակցում խոսակցությանը, նստել էր մահճակալին ոնց որ ջրի մեջ ընկղմված։ Պիրկ ուռճացած ծծերը բացել էին կոֆտայի դոշը։ Ծննդաբերությունից հետո նա բավական հաստացել էր, մի նոր, վստահորեն երջանիկ կերպարանք էր առել։

Արդեն ուշ էր, երբ պառկեցին քնելու։ Սեղմվելով Գրիգորիին, Ակսինյան նրա շապիկը թրջում էր աղի արցունքներով ու ծծերի մեջ կուտակված կաթով։

— Կմեռնեմ դարդից... Մենակ ի՞նչ պիտի անեմ։

— Հա՛, էլի՛,— նույնպես շշնջալով պատասխանեց Գրիգորին։

— Գիշերները երկար են... երեխան չի քնում... Հալումաշ կլինեմ քեզ համար... Ախր մտածիր, է՛, Գրիշա,— չորս տարի՞։

— Հնում, ասում են, քսանհինգ տարի էին ծառայում։

— Հինը ի՞նձ ինչ...

— Դեհ, հերիք է։

— Անիծված լինի այդ քո ծառայությունը, որ բաժանում է մեզ։

— Արձակուրդ կգամ։

— Արձակո՞ւրդ,— հառաչանքով արձագանքեց Ակսինյան, հեկեկաց և շապկի թևքով սրբեց քիթը,— մինչև դու գաս, Դոնով շատ ջուր կհոսի...

— Լաց մի լինի... Ոնց որ աշնան անձրևը, այնպես էլ քո արտասուքները, մի հաշիվ է։

— Դու իմ տեղը լինեի՞ր։

Գրիգորին քնեց լուսաբացից առաջ։ Ակսինյան ծիծ տվեց երեխային, ու արմունկին կռթնած, անթարթ նայում էր Գրիգորիի թուխ դիմագծերին, հաշտվում իր վիճակի հետ։ Նա վերհիշում էր այն գիշերը, երբ իր սենյակում նրան համոզում էր գնալ Կուբան. նույն վիճակն էր, միայն թե այն ժամանակ լուսնակ գիշեր էր, և դրսում սպիտակին էր տալի բակը՝ լուսնի վարար ճաճանչներով ողողված։

Նույն վիճակն էր, իսկ Գրիգորին այժմ և այն է, և այն չէ։ Նրա առաջ երկար, անհայտություններով լի շավիղ էր ձգված...

Գրիգորին շուռ եկավ կողքի, պարզորոշ ասաց.

— Օլշանսկի խուտորում... — ու լռեց։

Ակսինյան փորձում էր քնել, բայց մտքերը ցրիվ էին տալիս քունը, ինչպես քամին՝ խոտի բարդոցը։ Նա մինչև լուսաբաց մտածեց այդ անկապ խոսքերի մասին՝ փնտրելով դրանց բացատրությունը... Պանտելեյ Պրակոֆևիչը արթնացավ, երբ արդեն եղյամապատ պատուհաններից ներս էր ընկել աղջամուղջը։

— Գրիգորի, վեր կաց, լուսանում է։

Ակսինյան ծնկների վրա նստելով, հագավ յուրկան. ախ ու վախ անելով, երկար ժամանակ լուցկի էր փնտրում։

Մինչև նախաճաշեցին ու կապոտեցին իրերը, լուսացավ։ Շոգում էր առավոտյան կապտավուն լույսը։ Պարզ, ասես ձյան մեջ խրված, ցցվել էր ցանկապատը, ու ծածկելով երկնքի քնքուշ, յասամանագույն մուժը, մթին էր տալի ախոռի կտուրը։

Պանտելեյ Պրակոֆևիչը գնաց ձիերը լծելու։ Գրիգորին պոկ եկավ իրեն մոլեգնաբար համբուրող Ակսինիայից, գնաց հրաժեշտ տալու Սաշկա պապին ու մյուսներին։

Փաթաթելով ու վերցնելով երեխային, Ակսինյան դուրս եկավ նրան ճանապարհելու։

Գրիգորին շուրթերը հպեց դստեր խոնավ ճակատին, մոտեցավ իր ձիուն։

— Նստիր սահնակին,— գոչեց հայրը՝ առաջ տալով ձիերը։

— Չէ, ես ձիով կգնամ։

Գրիգորին դիտավորյալ դանդաղությամբ ձգեց ձիու փորքաշը, նստեց ձիուն ու վերցրեց սանձը։ Ակսինյան մատնեքը նրա ոտքին դրած, արագ-արագ կրկնում էր.

— Գրիշա, կա՛ց... Մի քան էի ուզում ասել...— ու աշխատելով ինչ-որ բան հիշել, կնճռոտում էր ճակատը, ինքն իրեն կորցրած՝ դողում էր։

— Դեհ, մնաս բարով։ Երեխին լավ մտիկ տուր... գնամ, թե չէ հերիս հրե՛ն ուր հասավ...

— Կաց, ազի՛զ ջան...— Ակսինյան ձախ ձեռքով բռնել էր սառն ասպանդակը, աջ ձեռքով գրկին սեղմել փեշով փաթաթած երեխային, ու նայում էր անհագ. ու չուներ ազատ ձեռք, որ սրբեր լայն բացված, անթարթ աչքերից հոսող արցունքները։

Տանից դուրս եկավ Վենիամինը։

— Գրիգորի, պանը կանչում է։

Գրիգորին հայհոյանք թափեց, մտրակեց ձին ու սլացավ բակից։ Ակսինյան վազեց նրա ետևից՝ խրվելով բակի ձնակույտերի մեջ ու դժվարությամբ բարձրացնելով թաղիքե կոշիկներ հագած ոտները։

Բլրակի վրա Գրիգորին հասավ հորը։ Ջսպելով իրեն, ետ նայեց։ Ակսինյան կանգնած էր դարպասի մոտ՝ փեշով փաթաթած մանկանը կրծքին սեղմած, քամին նրա ուսերի վրա քաշքշում, պտտում էր կարմիր շալե լաչակի ծայրերը։

Գրիգորին հավասարվեց սահնակին։ Գնում էին քայլքով։ Պանտելեյ Պրակոֆևիչը դարձավ դեպի Գրիգորին, հարցրեց.

— Ուրեմս, կնկադ հետ ապրելու միտք չունե՞ս։

— Անցածն անցել է... էլ ո՞ւր մնաց այդ բանը...

— Ուրեմս միտք չունե՞ս։

— Դեհ, այդպես է, էլի։

— Չե՞ս լսել, որ նա իր դեմ ձեռք էր բարձրացրել։

— Լսել եմ։

— Ումի՞ց։

— Պանին տարել էի ստանիցա, այնտեղ պատահեցին մեր խուտորցիները ու ասացին։

— Բա աստվա՞ծ։

— Դեհ հիմի ի՞նչ անենք որ, ապի... սայլից ընկած բանը կորած է։

— Դու իմ գլխին սատանայի օյին մի խաղա։ Ես բարի մտքով եմ խոսում քեզ հետ,— չարանալով՝ վրա տվեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Հրե՛ն ես երեխա ունեմ. էլ ի՞նչ կա խոսելու։ Հիմի հո էլ չես կպչի։

— Դու հլա մի տես... ուրիշի երեխան չէ՞, որ պահում ես։

Գրիգորին սփրթնեց. հայրը շոշափեց չլավացած վերքը։ Երեխայի ծննդից հետո ամբողջ ժամանակվա ընթացքում Գրիգորին տանջվում էր կասկածից, այդ թաքցնելով Ակսինյայից, թաքցնելով հենց ինքն իրենից։ Գիշերները, երբ Ակսինյան քնած էր լինում, նա հաճախ մոտենում էր օրորոցին, խորազնին նայում, երեխայի թուխ-կարմրավուն դեմքի վրա իր դեմքը հիշեցնող նշաններ էր փնտրում և ետ քաշվում առաջվա պես անվստահ։ Մուգ-շիկավուն, համարյա սև էր նաև Ստեփանը, ի՞նչպես իմանաս, թե մանկան սիրտը ում արյունն է մղում երակների կապտավուն ցանցով, որ բաբախում է նրա մաշկի տակ։ Գրիգորիին երբեմն թվում էր, թե դուստրը նման է իրեն, երբեմն էլ վեջինս խիստ հիշեցնում էր Ստեփանին։ Գրիգորին ոչ մի զգացում չէր տածում նրան, բացի միայն անբարյացակամության զգացումից, այն բոպեների համար, որ նա ապրել էր, երբ տափաստանից տանում էր ցավատանջ Ակսինյային։ Մի անգամ (Ակսինյան խոհանոցում կերակուր էր եփում) աղջկան հանեց օրորոցից, ու փոխելով թաց բարուրը, սուր, խոցող հուզմունք զգաց։ Գողավարի կռացավ, ատամներով սեղմեց մանկան ոտի կարմիր ուռուցիկ մի մատը։

Հայրը անգթաբար խոցեց նրա ցաված տեղը, ու Գրիգորին ձեռները ծալելով թամքի դաշի վրա, խուլ պատասխանեց.

— Երեխան ումն էլ որ լինի, չեմ թողնի նրանց։

Պանտելեյ Պրակոֆևիչը առանց շուռ գալու մտրակը թափահարեց ձիերի վրա։

— Այն օրվանից Նատալյան վնասված է... Գլուխը ծռուն է պահում, ասես կաթվածահար է եղել։ Հարկավոր ճիլը կտրել էր, դրա համար էլ վիզը ծռում է։

Նա լռեց։ Ճեղքելով ձյունը, ճռճռում էին սահնակի հիմնաձողերը. Գրիգորիի ձին ոտներն իրար էր խփում, շրխկացնում պայտերը։

— Բա ո՞նց է նա,— հարցրեց Գրիգորին՝ ձիու բաշից մի առանձին ուշադրությամբ պոկելով մգլած կոատուկը։

— Ոնց որ թե հետո ուշքը վրան եկավ։ Յոթ ամիս պառկեց։ Հոգեգալստին բոլորովին վատ էր։ Տեր-Պանկրատին վերջին անգամ օծում կատարեց... Իսկ հետո Նատալյան լավացավ։ Կամաց-կամաց ոտքի ելավ։ Գերանդիով ծակել էր սրտի տակը, իսկ ձեռքը դողացել էր, գերանդին սրտից դեն էր անցել, թե չէ որ սրտին կպչեր, բանը պրծած էր։

— Զառիվայր է, արագ քշենք։— Գրիգորին թափահարեց մտրակը, ու հորից առաջ անցնելով, ձիու սմբակների տակից թռչող ձյան փաթիլները շպրտելով սահնակի մեջ ու կիսականգնելով ասպանդակների վրա, սկսեց յորղա գնալ։

— Նատալյային մենք կվերցնե՛նք,— հասնելով նրան, գոչեց Պանտելեյ Պրակոֆևիչը։— Նա չի ուզում իրենց տանն ապրել։ Օրեր առաջ տեսա նրան, ասի, որ գա մեզ մոտ։

Գրիգորին չպատասխանեց։ Մինչև առաջին խուտորը լուռ էին գնում, ու Պանտելեյ Պրակոֆևիչն այլևս չխոսեց դրա մասին։

Օրվա ընթացքում անցան յոթանասուն վերստ։ Մյուս օրը (տներում արդեն վառում էին լույսերը) ժամանեցին Մայնկովո մեծ գյուղը։

— Վեշենսկայայից եկածները ո՞ր թաղումն են,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը առաջին հանդիպած մարդուն։

— Գնա մեծ փողոցով։

Այն բնակարանում, ուր նրանք կանգ առան, տեղավորվել էին հինգ զորակոչիկներ՝ ճանապարհ դնող իրենց հայրերի հետ միասին։

— Ո՞ր խուտորներից եք,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ ձիերին տեղավորելով մարագի չարդախի տակ։

— Չիրից,— հաստ ձայնով պատասխանեցին մթության միջից։

— Որ խուտորի՞ց։

— Կարտինից էլ կան, Նապոլովից է՛լ, Լիխովիդովից էլ, իսկ դուք ո՞րտեղից եք։

— Կուկույից,— ծիծաղեց Գրիգորին՝ հանելով ձիու թամքը ու շոշափելով թամքի տակին քրտնած ձիու մեջքը։

Առավոտյան Վեշենսկայա ստանիցայի ատաման Դուդարևը վեշենցիներին տարավ բժշկական հանձնաժողով։ Գրիգորին տեսավ իրենց խուտորի հասակակից տղաներին։ Միտկա Կորշունովը բարձր ոտքերով ու բաց-կինամոնագույն մի ձի նստած, որ բոլորովին նոր և շքեղ թամքով էր, ճոխ կրծապանակով և վահանակներով զարդարված սանձով,— դեռ առավոտյան մոտեցել էր ջրհորին ու տեսնելով Գրիգորիին, որ կանգնած էր իրենց բնակարանի դարբասի ճոտ, անցել էր առանց բարև տալու, ձախ ձեռքը պահելով թեք դրած ղլխարկին։

Վոլոստային վարչության ցուրտ սենյակում հերթով հանվում էին զորակոչիկները։ Նրանց կողքից դես ու դեն էին ընկնում զինվորական գրագիրները և պրիստավի օգնականը՝ կարճ, լաքած սապոգներով, հաճախակի անցնում էր օկրուգային ատամանի աղյուտանտը. նրա սև քարով մատանին ու գեղեցիկ, սև աչքերի վարդերանգ, ուռուցիկ սպիտակուցները խիստ երանգավորում էին մաշկի և ակսելբանտի սպիտակությունը։ Սենյակից դուրս էին թռչում բժիշկների խոսակցությունները, կցկտուր դիտողությունները։

— Վաթսունինը։

— Պա՛վել Իվանովիչ, տվեք թանաքե մատիտը,— դուռն մոտ խոխոջ գինովցած մի ձայն։

— Կրծքի ծավալը...

— Այո՛, այո՛, պարզ արտահայտված ժառանգականություն։

— Սիֆիլիս է, գրեցեք։

— Ի՞նչ ես դա ծածկում ձեռքով. աղջիկ հո չե՛ս։

— Տես թե ինչպիսի կազմվածք ունի...

— ...Խուտորումն է այդ հիվանդության բույնը։ Անհրաժեշտ են հատուկ միջոցառումներ։ Ես արդեն զեկուցել եմ նորին գերազանցությանը։

— Պավել Իվանովիչ, նայեցեք այս սուբյեկտին։ Ինչպիսի կազմվածք ունի, հը՞։

— Հը՛մ...

Գրիգորին հանվում էր Զուկարինսկի խուտորից եկած մի բարձրահասակ, շիկահեր տղայի կողքին։ Դոնից դուրս եկավ գրագիրը՝ բլուզի մեջքը փոթած. նա պարզ ասավ.

— Պանֆելով Սեաստյան, Մելեխով Գրիգորի։

— Շո՛ւտ,— վախենալով շշնջաց Գրիգորիի հարևանը՝ կարմրելով ու թարս հանելով գուլպան։

Գրիգորին ներս մտավ բշտոտած մեջքով։ Նրա մարմինը թուխ էր, շոր կաղնու գույնով երանգավորված։ Նա ամաչում էր՝ նայելով իր ոտներին, որոնք ծածկված էին խիտ, սև մազերով։ Սենյակի մի անկյունում, կշեռքի վրա կանգնած էր մի մերկ, անճոռնի երիտասարդ։ Մեկը, որ ըստ երևույթին բուժակ էր, տեղաշարժելով չափը, գոչեց.

— Չորս, տասը։ Իջի՛ր։

Բժշկական քննության ստորացուցիչ արարողությունը հուզում էր Գրիգորիին։ Սպիտակ խալաթով, ալեհեր մի բժիշկ փողակը ականջին դնելով, զննեց Գրիգորիին, մի ուրիշը, որ հասակով ավելի փոքր էր, դիտեց նրա աչքերը, լեզուն, երրորդը, որ եղջյուրե շրջանակով ակնոց էր դրել,— զննում էր մեջքի կողմից՝ շփելով մինչև արմունկները քշտած ձեռները։

— Կշռվե՛լ։

Գրիգորին կանգնեց կշեռքի պաղ հարթակի վրա։

— Հինգ, վեց և կես,— չկացնելով կշեռքի մետաղե ծխնին, հայտարարեց կշռողը։

— Ի՞նչ բան է սա, այնքան էլ բարձրահասակ չէ...— մոմոաց ալեհեր բժիշկը՝ ձեռքից բռնելով ու պտույտ տալով Գրիգորիին։

— Զար-մա-նա՛լի է,— կակազելով խոփաց մյուսը, ավելի ջահելը։

— Որքան է՞,— զարմանքով հարցրեց սեղանի շուրջը նստածներից մեկը։

— Հինգ փութ վեց և կես ֆունտ,— առանց իջեցնելու

վերն տարած հոնքերը, պատասխանեց ալեհեր բժիշկը։

— Գվարդիա՞ գնա,— հարցրեց օկրուգային զինվորական պրիստավը՝ սև, կոկլիկ գլուխը թեքելով դեպի իր հարևանը։

— Բանդիտի սֆաթ ունի... Շատ վայրենի է։

— Լսիր ապա շուռ եկ։ Այդ ի՞նչ է մեջքիդ վրա,— բղավեց գնդապետի ուսադիրներով մի սպա՝ մատներն անհամբերությամբ խփելով սեղանին։

Ալեհեր բժիշկը անհասկանալի մի բան մոթմոթաց, իսկ Գրիգորին, մեջքը դարձնելով դեպի սեղանը, դժվարությամբ զսպելով իր ամբողջ մարմնովն անցնող դողը, պատասխանեց.

— Դարնանից մրսեցրել էի մեջքս։ Սրանք չիբաններ են։

Չափման վերջում աստիճանավորները սեղանի շուրջը խորհրդակցելով, որոշեցին.

— Նշանակել բանակ։

— Տասներկուերորդ գունդը, Մելեխով։ Լսո՞ւմ ես։

Գրիգորիին բաց թողին։ Քայլելով դեպի դուռը, նա լսեց կամացուկ մոթմոթոցը.

— Չի՛ կա-ա-բելի։ Երևակայեցեք, թագավորը կտեսնի այդ սֆաթը, այն ժամանակ ի՞նչ կլինի։ Դրա միայն աչքերը...

— Այլասերվա՛ծ է։ Երևի արևելքից է։

— Բացի այդ, մարմինը մաքուր չէ, չիբաններով է...

Գրիգորիին շրջապատեցին իրենց խուտորի տղաները, որոնք հերթի էին սպասում։

— Հը՛, ո՞նց եղավ, Գրիշկա։

— Ո՞րտեղ նշանակեցին։

— Երևի Ատամանյան գունդը, հա՞։

— Քաշդ ինչքա՞ն դուրս եկավ։

Մի ոտի վրա կաղալով, Գրիգորին հագավ շալվարը, ատամների միջով պատասխանեց.

— Ձե՛ռ քաշեք, է՛, ձեր ի՞նչ գործն է։ Ո՞ւր։ Տասներկուերորդ գունդը։

— Կորշունով Դիմիտրի, Կարգին Իվան։— Գրագիրը դռնից դուրս հանեց գլուխը։

Քայլելիս կոճկելով կիսամուշտակը, Գրիգորին սանդուղքով ներքև վազեց։

Հրապարակում մարդիկ գնում էին ձիերով կամ ձիերը տանում սանձերից բռնած։

Հալհլոցի տակ քամի էր փչում, տեղ-տեղ մերկացած ճանապարհից գոլորշի էր բարձրանում։ Փողոցի միջով վազելավազ անցնում էին կչկչացող հավերը, շեղակի, թրթռուն ալյակներով ծածկված լճափոսում չփչփում էին սագերը։ Նրանց նարնջագույն-կարմիր թաթերը վարդագունում էին ջրի մեջ, նման էին սառնամանիքից չորացած աշնանային տերևներին։

Մեկ օրից հետո սկսվեց ձիերի ստուգատեսը։ Հրապարակում դես-դեն էին ընկնում սպաները. շինելի փեշերի փողփողումով անցավ անասնաբույժը ու նրա հետ բուժակը՝ ձիաչափը ձեռքին։ Ցանկապատի երկայնքով շարված էին տարբեր գույնի ձիերը։ Վեշենսկայա ստանիցայի ատաման Դուդարևը կշեռքի մոտից սայթաքելով վազեց դեպի սեղանը, որ դրված էր հրապարակի մեջտեղը և որի վրա գրագիրը գրանցում էր զննման ու չափման արդյունքները, անցավ զինվորական պրիստավը՝ ինչ-որ բան բացատրելով մի երիտասարդ հարյուրապետի, բարկությամբ, շարժելով ոտները։

Գրիգորին, որ 108-րդն էր, ձին մոտեցրեց կշեռքին։ Չափեցին ձիու մարմնի բոլոր մասերը, կշռեցին նրան, ու ձին իջավ կշեռքի հարթակից, անասնաբույժը նորից, իր համար սովորական վարժվածությամբ բռնեց ձիու վերին շրթունքը, դիտեց բերանը. ուժեղ սեղմելով, շոշափեց կրծքի մկանները, ու ինչպես սարդ, արագ-արագ շարժելով մատները, անցավ ոտների զննության։

Նա սեղմում էր ձիու ծնկների հոդերը, թփթփացնում ջլերի կապուկներին, սեղմում կոճիկների ոսկորը...

Երկար տնտղում ու շոշափում էր ուշքը լարած ձիուն, ու հեռացավ սպիտակ խալաթի փեշերը թափ տալով, շուրջը տարածելով կարբոլյան թթվուտի բարկ հոտը։

Ձին խոտանեցին։ Ձ՛րդարացավ Սաշկա պապի հույսը, և փորձված անասնաբույժը «ուստա» դուրս եկավ ու դտավ

այն թաքնված պակասությունը, որի մասին խոսում էր Սաշկա պապին։

Հուզված Գրիգորին խորհրդակցեց հոր հետ ու կես ժամից հետո, հերթից դուրս, Պետրոյի ձին կանգնեցրեց կշեռքի վրա։ Անասնաբույժը համարյա առանց զննության անցկացրեց այդ ձին։

Հենց այնտեղ էլ, կշեռքից քիչ հեռու, Գրիգորին մի չոր տեղ ընտրեց, ու փռելով ձիու սթարը, դրա վրա դարսեց իր հանդերձանքը։ Պանտելեյ Պրակոֆիևիչը բռնել էր ձին՝ խոսելով մի ուրիշ ձերունու հետ, որը նույնպես ճանապարհ էր գնում իր որդուն։

Նրանց կողքից գորշ-կապտավուն շինելով ու կարակուլի արծաթափայլ փափախով անցավ բարձրահասակ, ալեհեր մի գեներալ։ Նա ձախ ոտը մի փոքր առաջ էր դնում, թափահարում սպիտակ ձեռնոց հագած ձեռքը։

—Դա օկրուգային ատամանն է,— շշնջաց Պանտելեյ Պրակոֆիևիչը՝ ետևից բռթելով Գրիգորիին։

— Գեներալ է, չէ՞։

— Գեներալ-մայոր Մակեևն է։ Խիստ թարա մարդ է։

Ատամանի ետևից խմբով գնում էին գնդերից ու մարտկոցներից եկած սպաները։ Մի փոխ-յասավուլ, որ լայն թիկունքով էր ու լայն ազդրերով, հրետանային տարազով, բարձրաձայն ասում էր ընկերոջը՝ լեյբ-գվարդիայի Ատամանյան գնդի բարձրահասակ, գեղեցիկ սպային.

— Սատանան գիտե, թե ինչ բան է դա. էստոնական մի փոքրիկ գյուղ, մարդիկ առավելապես սպիտակամորթ են, ու այդ աղջիկը այնքա՛ն աչքի ընկնող կոնտրաստ է կազմում, և նա միակը չէ։ Մենք այլևայլ ենթադրություններ ենք անում և ահա իմանում ենք, որ քսան տարի առաջ....— Սպաները անցան, հեռանալով այն տեղից, ուր Գրիգորին ձիու սթարի վրա իր կազակական հանդերձանքն էր դարսում և քամու պատճառով դժվարությամբ լսեց հրետանավոր փոխ-յասավուլի վերջին խոսքերը, որոնց ետևից սպաների ծիծաղը.— ...Բանից դուրս եկավ, որ այդ գյուղում տեղավորված էր ձեր Ատամանյան գնդի մի հարյուրյակը։

Գրագիրը մի կողմ վազեց՝ քիմիական թանաքից կեղտոտված, դողդոջուն մատներով սերթուկի կոճակները կոճկելով, նրա ետևից օկրուգային պրիստավի օգնականը տաքացած բղավեց.

— Քեզ ասել են երեք օրինա՛կ։ Հոգիդ կհանե՛մ։

Գրիգորին հետաքրքրությամբ նայում էր սպաների ու ենթասպաների անծանոթ գեմքերին։ Կողքից անցնող ադյուտանտը իր ճանձրալի, խոնավ աչքերը հառեց նրա վրա ու հանդիպելով նրա ուշադիր հայացքին, շուռ տվեց դեմքը. հասնելով նրան, համարյա վազելով էր գնում մի ծերունի հարյուրապետ, որը ինչ-որ հուզված էր, դեղին ատամներով կծոտում էր վերին շրթունքը։ Գրիգորին նկատեց, թե ինչպես էին խաղում հարյուրապետի աչքը, շիկակարմիր հոնքը և կոպը։

Գրիգորիի ոտների տակ փռված էր չբանեցրած տապճակը, դրա վրա կարգով դարսված էին՝ թամքը իր կանաչ ներկված, ծայրերը երկաթած փայտե հենքով, առջևի ու ետևի տոպրակներով, երկու շինել, երկու շալվար, մի համազգեստ, երկու զույգ սապոգ, սպիտակեղեն, մի ֆունտ և 54 մսխալ պաքսիմատ, մի բանկա պահածո, ձավար և այլն, —ձիավորի համար որոշված քանակությամբ ուտելիք։

Բացված տոպրակների միջից երևում էին շորս ոտի համար վերցրած պայտերը, դրանց մեխերը, որոնք փաթաթված էին յուղած լաթով, զզրոցը՝ երկու ասեղով ու թելերով, երեսսրբիչը։

Գրիգորին վերջին անգամ դիտեց իր իրերը, պպզեց ու թևքով սրբեց բեռը կապոտելու այլզուկների կեղտոտված եզրերը։ Հրապարակի ծայրից, տապճակների մոտ կանգնած կազակների շարքի երկարությամբ գալիս է հանձնաժողովը։ Սպաները և ատամանը ուշադրությամբ զննում էին կազակական հանդերձանքը, պպզում էին՝ հավաքելով բաց գույնի շինելների փեշերը, խառնխտում էին տոպրակները, նայում կարի պարագաները, ձեռների վրա վերցնում պաքսիմատով լցված ամբողջ տոպրակը։

— Մտիկ արեք, տղերք, հրե՛ն այն պոլոզ մարդը իրերն է քրքրում, ոնց որ շունը՝ աքիսի բույնը,— ասավ Գրիգորիի կողքին կանգնած տղան՝ մատնացույց անելով օկրուգային զինվորական պրիստավին։

— Ի՜հ, սատանի մուրթ... Տոպրակը շուռ է տալի։

— Երևի անկարգություն կա, թե չէ չէր քրքրի։

— Նա ոնց որ թե նալերի մեխերն է հաշվում, հը՞...

— Ա՛յ քեզ շո՛ւն։

Խոսակցությունները հետզհետե դադարեցին, հանձնաժողովը մոտենում էր, մինչև Գրիգորիին հասնելը մի քանի մարդ էր մնում։ Օկրուգային ատամանը ձախ ձեռքով բռնել էր ձեռնոցը, աջով շարժումներ էր անում առանց այն ծռելու։ Գրիգորին շտկվեց, ետևից հազաց հայրը։ Քամին հրապարակում տարածում էր ձիու մեզի ու հալչող ձյան հոտը։ Անուրախ, կարծես գինարբուքից հետո, նայում էր արևը։

Մի խումբ սպաներ զբաղվեցին Գրիգորիի կողքին կանգնած կազակի իրերով և ապա մեկ-մեկ մոտեցան Գրիգորիին։

— Ազգանո՞ւնդ, անո՞ւնդ։

— Մելեխով Գրիգորի։

Պրիստավը մի քիչ բարձրացրեց շինելներից մեկը, հոտոտեց աստառը, արագ հաշվեց կոճակները. մի ուրիշ սպա, որ խորունժիի ուսադիրներով էր, մատներով տնտղում էր շալվարների լավորակ մահուդը. երրորդը քրքրում էր տոպրակները, այնքան կռանալով, որ քամին շինելի փեշերը գբցում էր նրա քամակին։ Պրիստավը ճկույթով ու մեծ մատով, զգուշությամբ,— ասես դրանք կրակի վրա էր դնում,— շոշափեց մեխերով լցված լաթը, հաշվեց՝ չմպացնելով շրթունքները։

— Ինչո՞ւ քսաներեք մեխ է, հը՞։ Սա՞ ինչ բան է,— նա բարկությամբ քաշեց լաթի ծայրից։

— Ամենևին ո՛չ, ձերդ բարձր բարեծննդություն, քսանչորս է։

— Ես հո կույր չե՞մ։

Գրիգորին հապճեպ շուռ տվեց լաթի ծալված ծայրը, որի տակ գտնվում էր քսանչորսերորդ մեխը, նրա կոշտ ու սև մատները թեթևակի հպվեցին պրիստավի սպիտակ, շաքարե մատներին։ Վերջինս ետ քաշեց ձեռքը, ասես մեկը ասեղով ծակել էր այն, ու քսեց մոխրագույն շինելի կողքին. զզվանքից դեմքը կնճռոտելով, հագավ ձեռնոցը։

Գրիգորին նկատեց այդ. շտկվելով, կծու ժպտաց։ Նրանց հայացքները իրար հանդիպեցին, ու պրիստավը թշերի վերին ծայրերից կարմրելով, բարձրացրեց ձայնը.

— Այդ ի՞նչպես ես նայում, ի՞նչպես ես նայում, կազակ, հը՞։— Նրա այտը, որի վրա ածելու կտրածքի հետք էր մնացել, կարմրեց վերից-վար։— Ինչո՞ւ այվզուկները կարգին չեն։ Բա սա՞ ինչ բան է։ Դու կազա՞կ ես, թե մուժիկի տրեխ... Ո՞րտեղ է հայրդ։

Պանտելեյ Պրակոֆիևիչը քաշեց ձիու սանձից, մի քայլ առաջ եկավ՝ շրխկացնելով կաղ ոտը։

— Զգիտե՞ս ծառայությունը, հը՞... — Նրա վրա գոռաց պրիստավը, որ առավոտից չարացած էր,— պրեֆերանս խաղալիս տանուլ էր տվել։

Մոտեցավ օկրուգային ատամանը, ու պրիստավը սսկրվեց։ Ատամանը կոշիկի քթով բութեց թամքի բարձը, զկոտաց ու անցավ հետևյալին։ Այն գնդի էշելոնատար սպան, ուր նշանակվել էր Գրիգորին, քաղաքավարությամբ զննեց ամեն ինչ, նաև գզրոցի մեջ եղած կարի պարագաները, ու վերջինը հեռացավ ետ-ետ քայլելով, քամու տակ վառելով ծխախոտը։

Մեկ օրից հետո դեպի Լիսկի-Վորոնեժ մեկնեց Ջերտկովո կայարանից դուրս եկած գնացքը, տանելով կարմիր վագոնները, որոնք բեռնված էին կազակներով, ձիերով ու կերով։

Նրանցից մեկում, տախտակե մսուրին հենված, կանգնել էր Գրիգորին։ Վագոնի բաց դռան կողքից սահում էր օտար, հարթ հողը, հեռվում կարուսելի նման պտտվում էին անտառի կապույտ ու քնքուշ ծամերը։

Ձիերը կրճկրճացնելով խոտ էին ուտում, բարձրացնում ու դնում ոտները՝ անհանգստանալով ոտնատակերի երերուն հենարանից։

Վագոնում տափաստանային օշինդրի, ձիու քրտինքի, գարնանային ձյունհալքի հոտ էր գալիս, ու հեռո՛ւ-հեռվում, հորիզոնում անհայտանում ու էլի՛ երևում էին անտառի ծամերը, որ կապուտակ էին, խոհուն և անմատչելի, ինչպես իրիկնային աղոտափայլ աստղը։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

1914 թվականի մարտի հալչլոցի մի պայծառ օր Նատալյան եկավ կեսարարի մոտ։ Պանտելեյ Պրակոֆեիչը խավոտ, թուխ-գորշագույն ուռով նորոգում էր բուղայի ջարդած ցանկապատը։ Կտուրից ջուր էր կաթում, արծաթի փայլ էին արձակում սառցի լուլաները, տան քիվի վրա կպրե շերտերով սևին էին տալի մի ժամանակ ներքև հոսած ջրի հետքերը։

Փաղաքուշ հորթի նման գգվում էր հալչող բլրակին շեկլիկ, տաքացած արևը, ու հողը ուռճանում էր, կավճոտ հրվանդաններում, որ թշնում էին առափնյա բլրակից ու ազատվել էին ձյունից, մալախիտի նման կանաչին էր տալիս վաղ ճաճած խոտը։

Փոխված, լղար Նատալյան ետևից մոտեցավ կեսարարին, թեքեց այլանդակված, ծռված վիզը։

— Բարև, ապի։

— Նատա՛լյուշկա, բարև, սիրելիս, բարև,— հուզվեց Պանտելեյ Պրակոֆեիչը։ Ոլորված ուռը ընկավ նրա ձեռքից ու շակվեց։— Այդ ինչո՞ւ չես գալի մեր կողմը, հը՞։ Դեհ, գնանք տուն, տե՛ս, թե մերդ ո՞նց կուրախանա։

— Ես, ապի ջան, եկել եմ...— Նատալյան ձեռքով մի անորոշ շարժում արեց ու երեսը շուռ տվեց։— Թե որ դուրս չանեք, միշտ կմնամ ձեզ մոտ...

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, զավակս։ Դու հո օտար չե՞ս մեզ համար։ Գրիգորին հրե՛ն նամակում գրել է որ... Նա, աղջիկս, գրել է, որ քո մասին տեղեկանանք։

Գնացին տուն։ Պանտելեյ Պրակոֆեիչը քայլում էր կաղալով, հուզված և ուրախ։

Իլլինիչնան, գրկելով Նատալյային, բուռ-բուռ արցունք թափեց, ու գոգնոցով քիթը սրբելով, շշնջաց.

— Երեխա՛ պետք է բերեիր... Երեխան կկապեր երկուսիդ։ Դեհ, նստիր։ Հիմի ես բիշի կբերեմ։

— Գոհություն Քրիստոսի, նանի՛ ջան։ Ես ահա... եկել եմ...

Դունյաշկան, կաս-կարմիր կտրած, ներս վազեց խոհանոց ու հապճեպ գրկեց Նատալյայի ծնկները։

— Անա՛մոթ, մոռացել ես մեզ...

— Կատաղե՞լ ես, ի՞նչ է, սարսա՛ղ,— շինծու խստությամբ բղավեց հայրը նրա վրա։

— Ինչքա՞ն մեծացել ես դու...— ասաց Նատալյան՝ ետ տալով Դունյաշկայի ձեռները ու նայելով նրա գեմքին։

Բոլորն էլ սկսեցին խոսել միաժամանակ՝ ընդհատելով միմյանց ու լռելով։ Իլլինիչնան թուշը ձեռքի ափին հենած, վշտանում էր, ցավագին նայում Նատալյային, որը բոլորովին փոխվել էր։

— Մշտակա՞ն ես եկել մեզ մոտ,— հարցրեց Դունյաշկան՝ տնտղելով Նատալյայի ձեռները։

— Ո՛վ գիտե...

— Իմ տղի հարազատ կնիկն ես, ինչի՞ պիտի ուրիշ տեղ ապրես։ Մնա՛ մեզ մոտ,— որոշեց Իլլինիչնան ու հարսին հյուրասիրելու համար բիշիներով լիքը կավե քրեզանը սեղանի վրայով մոտեցրեց նրան։

Նատալյան կեսուր-կեսրարի մոտ էր եկել երկար տատանումներից հետո։ Հայրը նրան չէր թողնում, բղավում էր, ամոթանք էր տալիս, համոզում էր չգնալ, բայց Նատալյան անհարմար էր համարում ապաքինվելուց հետո նայել յուրայինների երեսին և իրեն համարյա օտար էր զգում երբեմնի հարազատ ընտանիքում։ Ինքնասպանության փորձը նրան հեռացրել էր հարազատներից։ Պանտելեյ Պրակոֆեիչը Գրիգորիին ծառայության ուղարկելուց հետո շարունակ կանչում էր նրան։ Նա հաստատ որոշել էր Նատալյային բերել իր տունը և հաշտեցնել Գրիգորիի հետ։

Այդ օրվանից Նատալյան մնաց Մելեխովների մոտ։ Դարյան արտաքուստ ոչնչով չէր արտահայտում իր դժգոհությունը. Պետրոն սիրալիր էր ու ջերմ վերաբերմունք էր ցույց

տալիս, իսկ Դարյայի հազվադեպ խեթ հայացքները չէին ազդում Նատալյայի վրա, որովհետև նա վայելում էր Դունյաշկայի ջերմ սերը և ծերուկների ծնողական, գուրգուրալից վերաբերմունքը։

Հետևյալ օրը, հենց որ Նատալյան տեղափոխվեց կեսրանց մոտ, Պանտելեյ Պրակոֆևիչը Դունյաշկային ստիպեց հետևյալ նամակը գրել Գրիգորիին ու տվեց իր ցուցումները։

Բարև, մեր թանկագին որդի, Գրիգորի Պանտելևիչ։ Ուղարկում ենք քեզ շատ կարոտով բարև ու քո մոր, Վասիլիսա Իլյինիչնայի ու իմ ծնողական սրտանց օրհնությունը։ Շատ կարոտով բարև են ուղարկում քո եղբայրը՝ Պյոտր Պանտելևիչը և իր ամուսին Դարյա Մատվեևնան ու քեզ առողջություն և հաջողություն են ցանկանում. շատ կարոտով բարև են ուղարկում քո քույր Եվդոկեյան ու բոլոր տնեցիները։ Քո նամակը, որ գրել էիր փետրվարի հնգին, մենք ստացանք և դրա համար սրտանց շնորհակալ ենք քեզանից։

Իսկ որ դու գրել էիր, թե ձիդ ոտները հարում է, ուրեմն դրանց խոզի փորի ճրագու քսիր, դու այդ գիտես, ու ետևի ոտները մի՛ նալի, եթե գետինը սլկուն չէ կամ, ոնց ասենք, եթե բարակ ու սլկուն սառուց չկա։ Քո կին Նատալյա Միրոնովնան մեզ մոտ է ապրում և առողջ ու հաջողակ է։

Մերդ քեզ ուղարկում է չորացած բալ ու մի ջուխտ բրդե գուլպա, ու էլի ճարպ և զանազան նվերներ։ Մենք բոլորս էլ ողջ և առողջ ենք, իսկ Դարյայի երեխան մեռավ, որի մասին և հաղորդում ենք։ Անցած օրը Պետրոյի հետ շարդախներն էինք ծածկում, ու նա քեզ պատվիրում է լավ պահել ձին։ Կովերը ծնեցին. մեծ զամբիկը ծանրացել է, կաթից կտրվել է ու երևում է, թե նրա փորի մեջ ոնց է խաղում քուռակը։ Այս քուռակը ստանիցայի ախոռի «Դոնեց» անունով հովատակիցն է, ու հինգերորդ շաբաթին սպասում ենք ծնելուն։ Մենք ուրախ ենք, որ դու լավ ես ծառայում և մեծավորները քեզ հավանություն են տալիս։ Դու ծառայիր ոնց որ պետք է։ Թագավորին ծառայելը զուր չի կորչի։ Իսկ Նատալյան հիմի ապրելու է մեզ մոտ ու դու էլ մտածիր դրա մասին։ Հա՛, փորձանք եղավ, բարեկենդանին գազանը

ներեք ոչխար տարավ։ Դեհ, ողջ-առողջ լինես, աստված քեզ պահի։ Կնկանդ չմոռանաս, այս է քեզ իմ հրամանը։ Նա սրտով սիրող կնիկ է ու քեզ հետ օրենքով է կապված։ Դու անխելքություն մի անի ու լսի հորդ։

Քո ծնող, ավագ ուրյադնիկ

Պանտելեյ Մելեխով։

Գրիգորիի գունդը գտնվում էր ռուս-ավստրիական սահմանից չորս վերստ հեռու, Ռաձիվիլովո գյուղաքաղաքում։ Գրիգորին ուշ-ուշ էր նամակ ուղարկում տուն։ Նա զուսպ տոնով պատասխանեց այն լուրին, թե Նատալյան եկել է կեսրանց տունը, խնդրեց բարևել նրան. նրա նամակների բովանդակությունն անորոշ ու մթին էր։ Պանտելեյ Պրակոֆևիչը Դունյաշկային կամ Պետրոյին ստիպում էր մի քանի անգամ կարդալ այդ նամակները՝ խորհրդածելով Գրիգորիի տարտամ մտքերի մասին, որ թաքնված էին տողերի արանքում։ Ջատկից առաջ նա իր նամակում ուղղակի հարց դրեց, թե արդյոք Գրիգորին ծառայությունից վերադառնալուց հետո ապրելո՞ւ է կնոջ հետ, թե՞ առաջվա պես Ակսինյայի հետ։

Գրիգորին ուշացրեց պատասխանը։ Հոգեգալստից հետո նրանից մի կարճ նամակ ստացան։ Դունյաշկան կարդում էր արագ-արագ, կուլ տալով խոսքերի վերջավորությունները, ու Պանտելեյ Պրակոֆևիչը դժվարությամբ էր ըմբռնում արտահայտված մտքերը՝ մի կողմ թողնելով անհամար բարևներն ու հարց ու փորձը։ Նամակի վերջում Գրիգորին շոշափել էր Նատալյային վերաբերող հարցը։

...Դուք խնդրել եք, որ ես գրեմ, Նատալյայի հետ ապրելու եմ թե ոչ, բայց ես ձեզ կասեմ, ապի, որ կոտրած շուշան չես կպցնի։ Ես էլ ո՞նց կարող եմ Նատալյայի հետ միանալ, երբ որ, դուք էլ գիտեք, երեխա ունեմ։ Իսկ խոստանալ ես ոչինչ չեմ կարող, ու գլուխ էլ չունեմ դրա մասին խոսելու։ Անցած օրը սահմանում մի ջհուդ էին բռնել իրեն կոնտրաբանդով, ու մենք կարողացանք տեսնել նրան, բացատրում է, թե շուտով ավստրիացիների հետ պատերազմ պիտի լինի, ու ասում է՝ նրանց թագավորը եկել էր սահմա-

նը, մտիկ էր տվել, թե որտեղից սկսի պատերազմը և ո՛ր հողերը զավթի։ Պատերազմը որ սկսվեց, միգուցե ես էլ կենդանի չմնամ, առաջուց ոչինչ չի կարելի որոշել։

Նատալյան կեսարարի մոտ աշխատում և ապրում էր այն անգիտակցական հույսով, թե ամուսինը կվերադառնա, ընկրճված հոգով հենվում էր այդ հույսի վրա։ Նա ոչինչ չէր գրում Գրիգորիին, բայց ընտանիքում չկար մեկը, որն այնպես կարոտով ու ցավով նամակ սպասեր Գրիգորիից, ինչպես նա։

Խուտորում կյանքն ընթանում էր սովորական անխախտ կարգով. վերադարձել էին ծառայության ժամկետները լրացրած կազակները, լի օրերին ծանր աշխատանքը աննկատելիորեն կլանում էր ժամանակը, կիրակի օրերին ընտանիքները առավոտից խմբերով գնում էին եկեղեցի. կազակները գնում էին համազգեստներով ու տոնական շալվարներով. կնանիքը փոշի էին ավլում գույնզգույն յուբկաների երկար, խշխշան փեշերով, նրանց վրա քիպ նստած էին լինում նախշուն կոֆտաները ծալավոր, փոթած թևքերով, որոնց կոնատակերը մղել ու գունաթափվել էին կանացի սուր-քաղցրավուն, մանանեխի նման քիթ խտղտող քրտնքից։

Իսկ հրապարակի քառակուսու վրա ծառսել էին սայլերի բարձրացրած քեղիները, վրնջում էին ձիերը, վխտում էին այլևայլ մարդիկ. հրդեհաշեջ սրահի մոտ բուլղար պլանտատորները երկար քաթանների վրա դարսած բանջարեղեն, ուտելիք էին վաճառում. նրանց ետևում վժվժալով խմբվում էին երեխաները, նայելով լծասարքերից արձակված ուղտերին, որոնք գոռոզաբար դիտում էին շուկայի հրապարակը և մարդկանց ամբոխները՝ կարմրաբոլորք գլխարկներով ու կանացի գույնզգույն, խայտաբղետ լաչակներով։ Ուղտերը փրփրոտ բերաններով ծամում էին քոլախոտերը, որոճում՝ հանգստանալով ջրամբարձ հարմարանքի վրա կատարած մշտական աշխատանքից, ու փակվում էին նրանց կանաչավուն, քնեած աչքերը։

Երեկոները դոփյունների դեղոցում հեծում էին փողոցները, երգ ու պարի տեղերը թնդում էին երգերից, հարմոնով կատարվող պարերից, ու միայն ուշ գիշերը ծայրամասերում գոլ զեփյուռի թևերին մեռնում էին վերջին երգերը։

Նատալյան երգ ու պարի չէր գնում, ուրախությամբ էր լսում Դունյաշկայի անպաճույճ պատմությունները։ Դունյաշկան աննշմարելի զարգանում, բարեկազմ ու յուրօրինակ գեղեցիկ աղջիկ էր դառնում։ Շուտ հասունացավ, ոնց որ վաղահաս խնձորը։ Այս տարի ավելի մեծ ընկերուհիները նրան կտրեցին անցած պատանեկությունից, ընդունեցին իրենց աղջկական շրջանի մեջ։ Դունյաշկան հորն էր քաշել. կարճ ու թուխ էր։

Անցել էր տասնհինգերորդ գարունը՝ առանց կլորացնելու նրա բարակ, աներդաշնակ մարմինը։ Մանկության և ծաղկող ջահելության մի խղճուկ ու նաիվ խառնուրդ կար նրա մեջ. պրկվում և կոֆտայի տակից նկատելիորեն թմբանում էին փոքրիկ, բռունցքաչափ ստինքները, լայնանում էին ուսերը. իսկ երկար, մի փոքր շեղադիր ակնակապիճներում կայծկլտում էին էլի նույն ամաչկոտ ու չարաճճի, սև, սպիտակուցների ագաթե կապտությամբ երանգավորված նշիկները։ Գալով երգ ու պարի տեղից, նա միայն Նատալյային էր պատմում իր անպաճույճ գաղտնիքները։

— Նատաշա, ջանիկս, ուզում եմ մի բան պատմել...

— Դեհ, պատմիր։

— Միշկա Կաշևոյը երեկ ամբողջ իրիկուն ինձ հետ նստեց մաղազաների մոտ, փետերի վրա։

— Բա ինչո՞ւ կարմրեցիր։

— Իսկի է՛լ չէ։

— Մտիկ տուր հայելուն, ոնց որ պորինջան լինես։

— Դե լա՛վ, էլի։ Դո՛ւ ամաչացրիր...

— Պատմիր, չեմ ամաչացնի։

Դունյաշկան թուխլիկ ձեռներով շփում էր վառվռուն թշերը, մատները սեղմում քունքերին, զրնգացնում ջահելության անառիթ ծիծաղը.

— «Դո՛ւ,— ասում է,— կարմիր լալա ես...»

— Հա՛-ա՞,— սիրտ էր տալի Նատալյան՝ ուրախանալով սրիշի ուրախությամբ ու մոռանալով իր ոտնահարված ու անցած բերկրանքը։

— Ես էլ ասում եմ նրան՝ «Հերիք դուրս տաս, Միշկա»։ Իսկ նա երդում-կրակ է ուտում։— Դունյաշկան օթախում

շաղ էր տալիս իր ծիծաղի զանգակները, օրորում էր գլուխը, ու սև, պիրկ հյուսված ծամերը մողեսների նման սողում էին ուսերի ու մեջքի վրա։

— Նա էլ ի՞նչ դուրս տվեց։

— Աղլուխդ,— ասում է,— տուր պահեմ իբրև հիշատակ։

— Տվի՞ր։

— Չէ՛,— ասում եմ,— չեմ տա։ Գնա քո սիրածից խնդրիր։ Ախր նա Երոֆեևի հարսի հետ է լինում... Սա առանց մարդու է մնացել, ման է գալի։

— Դու այդ տղայից հեռու կաց։

— Ես առանց այդ էլ հեռու եմ։— Դունյաշկան զսպելով հորդող ժպիտը, պատմում էր։—Հա՛, երգ ու պարից տուն ենք գալի, երեք աղջիկ ենք, ու մեր ետևից հասնում է հարբած Միխեյ պապին։ «Պաշեցեք ինձ, սիրունիկներս,— բղավում է նա,—երկու կոպեկը ձեզ մատաղ»։—Ու վրա է տալի մեզ, իսկ Նյուրկան ցախով շրը՞մփ նրա ճակատին։ Հազիվ փախանք։

Ամառը չորային էր։ Խուտորի դիմաց ծանծաղանում էր Դոնը, ու այնտեղ, ուր առաջ հորդում էր գետի արագ հոսանքը, ծանծաղուտ էր առաջացել, եզներն առանց մեջքերը թրջելու անցնում էին մյուս ափը։ Գիշերները բլրակներից դեպի խուտոր էր իջնում թանձր, հոսուն տոթը, քամին օդը հագեցնում էր խանձված խոտաբույսերի բարկ հոտով։ Ձիերի արածատեղում վառվում էին չորացած քոլախոտերը, ու քաղցր նինջը աննշմար վարագույրի նման կախվում էր Դոնի ափերին։ Գիշերները Դոնից դենը խտանում էին ամպերը, չոր ու որոտընդոստ տրաքում էին որոտի հարվածները, բայց անձրև չէր գալիս ջերմությունից դաղված հողի վրա, ապարդյուն փայլատակում էր կայծակը, երկինքը սուր անկյունավոր, կապույտ հատվածների էր բաժանում։

Գիշերները զանգակատան վրա ճչում էր բվեճը։ Խուտորի վրա կախվում էին դողդոջ ու ահավոր ճիչերը, իսկ բվեճը զանգակատնից թռչում էր գերեզմանոց, որ կոխկրտել էին հորթերը, թառանչում էր գորշ, խոտակալած գերեզմանների վրա։

— Փիս բան է լինելու,— մարգարեություն էին անում ծերուկները՝ գերեզմանոցից լսելով բվեճի կանչերը։

— Կռիվ կլինի, հա՞-ա։

— Թուրքի կռվից առաջ էլի այդպես էր կանչում։

— Կարելի է էլի խոլերա՞ կգա։

— Լավ բան մի սպասիր, եկեղեցուց թռչում է մեռելների մոտ։

— Օֆ, ողորմած տեր, Միկոլա-արդար...

Շումիլին Մարտինը, թեր կտրած Ալեքսեյի եղբայրը, գերեզմանոցի ցանկապատի տակ երկու գիշեր հետամուտ էր լինում անիծված թռչունին, բայց անտեսանելի ու խորհրդավոր բվեճը անաղմուկ թռչում էր նրա գլխավերևից, նստում էր գերեզմանոցի մյուս ծայրի մի խաչին, տագնապալից կանչեր սփռում քնեած խուտորի վրա։ Մարտինը թունդ հայհոյանքներ էր թափում, կրակում էր սահող ամպի սև, կախ ընկած փորի վրա ու հեռանում։ Նա ապրում էր հենց այդտեղ, մոտիկ տեղում։ Նրա կողակիցը,— երկչոտ, հիվանդ, ճագարի պես բեղմնավոր, տարենը մի երեխա բերող մի կնիկ,— կշտամբանքներով էր դիմավորում ամուսնուն.

— Դմբո՛, իսկական դմբո՛։ Նա քեզ խանգարո՞ւմ է, այ՛ սատանա, հը՞։ Բա որ աստված պատժի՞։ Էգուց-էլօր երեխա պիտի բերեմ, բա որ քո պատճառով վիժե՞մ, գրողը բկիցդ բռնի։

— Ձե՛նդ, է՛յ։ Թե չէ՝ կվիժես։ Խրխնջում է ոնց որ խլըշկոտած ձի։ Բա այդ անիծվածը ինչո՞ւ է մարդ վախեցնում։ Բա որ փորձանք բերե՞ց։ Կռիվ որ լինի, ինձ կտանեն, իսկ դու, հրե՛ն, քանի՛ հատ ես ցնկնես։։— Մարտինը քաշվում էր անկյունը, որտեղից լսվում էին մկան ճռճռոցները և որտեղ կարպետի վրա խոմփում էին իրար գլխի թափված երեխաները։

Մելեխով Պանտելեյը ժողովատեղում զրույց անելով ծերուկների հետ, ծանրակշիռ կերպով ասում էր.

— Մեր Գրիգորին գրում է, որ Ավստրայի թագավորը եկել էր սահմանը ու հրաման տվել, որ իրեն ամբողջ զորքը մի տեղ հավաքվի ու գնա Մոսկվայի և Պետերբուրգի վրա։

Ծերունիները վերհիշում էին անցած պատերազմները, ենթադրություններ էին անում.

— Կռիվ չի՛ լինի, դա բերքից է երևում։

— Այստեղ բե՞րքս որն է։

— Կարելի է ուսանողներն են խառնակչություն անում։
— Մենք դա բոլորից ուշ կիմանանք։
— Ինց որ յապոնի կռիվն էր։
— Տղիդ ձի տվի՞ր։
— Առաջուց ի՞նչ իմանաս...
— Սուտ բան է, է՛։
— Ո՞ւմ հետ է կռիվը, հը՞։
— Թուրքերի հետ, ծովի համար։ Սովը ոչ մի կերպ չեն կարենում բաժանել։
— Լավ, այդտեղ ի՞նչ դժվար բան կա։ Թող իրար մեջ մասերի բաժանեն, ինց որ մենք՝ խոտը։

Խոսակցությունը վերջանում էր կատակներով, ու ծերունիները ցրվում էին։

Մարդկանց հետամուտ էր լինում մարդագետինների հունձը, Դոնից դենը հասնում էր խոտը, որ տափաստանային խոտի պես փարթամ չէր, — լզճոր ու անբույր էր։ Հողը մեկ է, ամա խոտը տարբեր հյութեր է ծծում. բլրակից դենը. տափաստանում սևահողը պինդ է ինց որ դռաջ գետինը, — ձիերի ջոկն անցնի, ամբակի հետք չես տեսնի. ամուր է հողը, ամա նրա վրա փարթամ, հոտավետ խոտ է բուսնում, ձիու փորին է հասնում. իսկ Դոնի ափին ու Դոնից դենը թաց, կակուղ գետինը անհամ ու անպետք խոտեր է տալիս, տարի է լինում, որ անասունն այդ խոտը իսկի չի էլ ուտում։

Խուտորում ծեծում էին գերանդիները, ռանդում փոցխերի կոթերը, կնանիքը կվաս էին պատրաստում հնձվորներին ուրախացնելու համար, և այստեղ վրա հասավ մի դեպք, որը ծայրեծայր ցնցեց խուտորը. ժամանեց ստանովոյ պրիստավը քննիչի ու սև ատամներով, կարճլիկ մի սպայի հետ, որը մինչ այդ չտեսնված տարազով էր. կանչեցին ատամանին, վկաներ հավաքեցին ու գնացին հենց շլդիկ Լուկեշկայի տունը։

Քննիչը ձեռքին բռնել էր պարուսինե գլխարկը՝ պատշաճ գլխարկանիշով։ Գնում էին փողոցի ձախ կողմի ցանկապատերի տակից, ճամփին ընկած էին արևի ցոլքերը, ու քննիչը փոշոտ կիսակոշիկները դնելով դրանց վրա, հարցեր էր տալիս ատամանին, որը ամեն մի հարցի վրա աքլորավարի առաջ էր վազում.

— Եկվոր Շտոկմանը տա՞նն է։
— Ճիշտ այդպես, ձերդ բարեծննդություն։
— Նա ինչո՞վ է զբաղվում։
— Հայտնի բան է, արհեստով... տաշում և ռանդում է, էլի՛։
— Նրա կողմից ոչինչ չե՞ս նկատել։
— Ամենևին ոչ։

Պրիստավը քայլելիս մատներով հուպ էր տալի հոնքերի արանքում բուն դրած բուշտը. հևում էր նեղվելով մահուդե համազգեստի մեջ։ Սև ատամներով սպան ծղոտիկով քշփորում էր ատամները, կնճռոտում աչքերի լայրծուն, կարմրաւ ծալերը։

— Ովքե՞ր են լինում նրա մոտ, — հարցրեց քննիչը ո ձեռքով փակեց առաջ վազող ատամանի ճամփան։
— Լինում են, ճիշտ այդպես։ Մեկ-մեկ էլ թուղթ են խաղում։
— Ովքե՞ր, է՛։
— Ավելի շատ գալիս են աղացի բանվորները։
— Ի՞նչ բանվորներ։
— Մեքենավարը, կշռողը, գլանիչ Դավիդկան, ու մեր կազակներից էլ մի-երկու մարդ է գնում։

Քննիչը կանգ առավ՝ սպասելով ետ մնացած սպային, գլխարկով սրբեց քթարմատի քրտինքը։ Նա ինչ-որ բան ասաց սպային՝ մատներով նրա համազգեստի կոճակը տնտղելով, ու մատի շարժումով կանչեց ատամանին։ Սա շունչը պահած, մոտ վազեց ոտնաթաթերի վրա։ Ուռել ու դողում էին նրա վզի խճճված ջլերը։

— Վերցրու երկու հերթապահ և գնա ձերբակալիր նրանց։ Քշիր-բեր վարչություն, իսկ մենք հիմա կգանք։ Հասկանալի՞ է։

Ատամանը ձգվեց՝ իրանի վերին մասը այնքան ետ տալով, որ ամենախոշոր ջիլը կապույտ քուղի նման ընկավ համազգեստի կանգնած օձիքին. նա շուռ գալով, դեպի ետ քայլեց։

Շտոկմանը տակի շապիկով, որի օձիքի կոճակներն արձակված էին, նստել էր մեջքով դեպի դուռը ու ձեռքի փոքրիկ սղոցով ծուռ նախշ էր անում ֆանների վրա։

— Նեղություն քաշեք վեր կենալ։ Դուք ձերբակալված եք։

— Ի՞նչ բանի համար...

— Դուք երկու սենյա՞կ եք գրավում։

— Այո։

— Մենք ձեզ մոտ խուզարկություն կկատարենք։— Սպան շպորով կպավ շեմքի մոտ փռված փոքրիկ գորգին, մոտեցավ սեղանին ու աչքերը կկոցած, վերցրեց առաջին իսկ գիրքը։

— Տվեք այս սնդուկի բանալին։

— Ինչո՞վ եմ ես պարտական, պարոն քննիչ...

— Մենք դեռ կխոսենք ձեզ հետ։ Վկա, ապա եկ այստեղ։

Երկրորդ սենյակից դուրս նայեց Շտոկմանի կինը՝ դուռը թողնելով կիսաբաց։ Քննիչը ու նրա ետևից գրագիրը մտան այնտեղ։

— Սա ի՞նչ բան է,— կամացուկ հարցրեց սպան՝ բարձրացնելով դեղին կազմով գիրքը։

— Գիրք է։— Շտոկմանը թոթվեց ուսերը։

— Սրախոսությունները պահիր ավելի հարմար դեպքի համար։ Ես քեզ կխնդրեմ հարցերին պատասխանել ա՛յլ կարգով։

Շտոկմանը հենվեց վառարանին, զսպելով ծուռ ժպիտը։ Պրիստավը նայեց սպայի ուսի վրայով ու աչքերը դարձրեց Շտոկմանի վրա։

— Ուսումնասիրո՞ւմ եք։

— Հետաքրքրվում եմ,— չոր պատասխանեց Շտոկմանը՝ մի փոքրիկ սանրով սև մորուքը բաժանելով երկու հավասար մասի։

— Այդպե՛ս։

Սպան թերթեց էջերը և գիրքը գցեց սեղանին. հարևանցիորեն նայեց երկրորդ գիրքը. այդ էլ մի կողմ դնելով ու կարդալով երրորդ գրքի շապիկը, դեմքը դարձրեց դեպի Շտոկմանը։

— Այսպիսի գրականություն էլ ո՞րտեղ ես պահում։

Շտոկմանը կկոցեց ձախ աչքը, կարծես նշան էր բռնում։

— Ինչ որ կա այստեղ է։

— Սո՛ւտ ես ասում,— կտրուկ ասաց սպան՝ թափահարելով ձեռքի գիրքը։

— Ես պահանջում եմ...

— Փնտրեցի՛ք։

Պրիստավը, ձեռքով թուրը բռնած, մոտեցավ սնդուկին, որտեղ չեչոտ, ըստ երևույթին այդ ամենից վախեցած հերթապահ կազակը խառնշտում էր սպիտակեղենը և հագուստը։

— Ես պահանջում եմ քաղաքավարի վերաբերմունք,— խոսքը լրացրեց Շտոկմանը, կկոցած աչքը ուղղեց սպայի քթարմատին։

— Լռեցեք, սիրելի։

Տան այն մասում, որ գրավում էր Շտոկմանն իր կնոջ հետ, քրքրեցին այն ամենը, ինչ որ կարելի էր քրքրել։ Խուզարկություն կատարեցին նաև արհեստանոցում։ Ջանադիր պրիստավը ծալած մատով նույնիսկ պատերն էլ թրխկթրխկացրեց։

Շտոկմանին տարան խուտորի վարչություն։ Նա քայլում էր հերթապահի առջևից, փողոցի միջով, մի ձեռքը հին սերթուկի բոլորքի տակ դրած, մյուսը թափահարելով, ասես թափ տալով մատներին կպած ցեխը. մնացածները քայլում էին ցանկապատերի տակից, ուր տեղ-տեղ ընկած էին արևի ցոլքերը։ Քննիչը էլի դրանց վրա էր դնում կիսակոշիկները, որոնք կանաչել էին թայլից, իսկ գլխարկը ոչ թե ձեռքին էր բռնել, այլ պինդ քաշել էր գունատ ականջակոնքերին։

Շտոկմանին վերջինը քննեցին։ Նախասենյակում նստել էին արդեն հարցաքննվածները, որոնց հսկում էր հերթապահ կազակը,— Իվան Ալեքսեևիչը, որ ժամանակ չէր ունեցել լվալու մազութոտ ձեռները, մեղավորաբար ժպտացող Դավիդկան, Վալետը՝ ուսերին գցած պիջակով, և Կաշևոյ Միխայիլը։

Քննիչը քրքրելով վարդագույն թղթապանակը, հարցրեց սեղանի մյուս կողմում կանգնած Շտոկմանին.

— Երբ ես ձեզ հարցաքննում էի աղացում կատարված սպանության առթիվ, ինչո՞ւ դուք թաքցրիք, որ ՌՍԴԲՊ-ի անդամ եք։

Շտոկմանը լուռ նայում էր քննիչի գլխից վերև։

— Դա պարզված է։ Դուք ձեր աշխատանքի համար

արժանի պատիժ կստանաք,— ավելացրեց լռությունից ջղայնացած քննիչը։

— Խնդրում եմ ձեզ սկսել հարցաքննությունը,— ձանձրույթով ասաց Շտոկմանը ու շեղակի նայելով ազատ տաբուրետին, նստելու թույլտվություն խնդրեց։

Քննիչը լռեց. խշշացնելով թղթերը, աչքի տակից նայեց Շտոկմանին, որը հանգիստ նստեց տաբուրետի վրա։

— Դուք ե՞րբ եք ժամանել այստեղ։

— Անցյալ տարի։

— Ձեր կազմակերպության առաջադրանքո՞վ։

— Առանց որևէ առաջադրանքի։

— Դուք երբվանի՞ց եք ձեր պարտիայի անդամ։

— Ինչի՞ մասին է խոսքը։

— Ես հարցնում եմ,— քննիչը շեշտեց «ես»-ը,— երբվանի՞ց եք ՌՍԴԲՊ-ի անդամ։

— Ես կարծում եմ, որ...

— Ինձ համար բոլորովին էլ հետաքրքիր չէ, թե դուք ինչ եք կարծում։ Պատասխանեցեք հարցին։ Թաքցնելն անօգուտ է, նույնիսկ վնասակար է։— Քննիչը առանձնացրեց մի թուղթ և ցուցամատով այն սեղմեց սեղանին։— Ահա Ռոստովից ստացված մի տեղեկանք, որը հաստատում է ձեր պատկանելիությունը հիշյալ պարտիային։

Շտոկմանը հոնքերը կիտելով նայեց սպիտակ թղթի կտորին, հայացքը մի պահ մեխեց նրա վրա, ձեռներով շփեց ծունկը ու կտրուկ պատասխանեց.

— Հաղար ինը հարյուր յոթ թվականից։

— Այդպես։ Դուք ժխտո՞ւմ եք այն, որ այստեղ եք ուղարկվել ձեր պարտիայի կողմից։

— Այո։

— Այդ դեպքում ինչո՞ւ եք եկել այստեղ։

— Այստեղ փականագործական աշխատանքի կարիք էր զգացվում։

— Ինչո՞ւ դուք հենց այս ռայոնն եք ընտրել։

— Այդ նույն պատճառով։

— Ձեր պարտիայի հետ կապ ունե՞ք կամ ունեցե՞լ եք այս ժամանակվա ընթացքում։

— Ո՛չ։

— Նրանք գիտե՞ն, որ այստեղ եք եկել։

— Երևի՛։

Քննիչը սաղափակոթ փոքրիկ դանակով սրեց մատիտը. չնայեց Շտոկմանին։

— Ձերոնցից որևէ մեկի հետ նամակագրություն ունե՞ք։

— Ո՛չ։

— Հապա այն նամա՞կը, որ գտնվեց խուզարկության ժամանակ։

— Դա գրել էր ընկերս, որը, անշուշտ, ոչ մի առնչություն չունի որևէ ռևոլյուցիոն կազմակերպության հետ։

— Ռոստովից ստանո՞ւմ էիք այլևայլ դիրեկտիվներ։

— Ո՛չ։

— Ձեզ մոտ ի՞նչ նպատակով էին հավաքվում աղացի բանվորները։

Շտոկմանը թոթվեց ուսերը, ասես զարմանալով հարցի անհեթեթության վրա։

— Հենց այնպես, ձմռան երեկոներին հավաքվում էին, էլի՛... Դե, միայն ժամանակ էին անցկացնում։ Թուղթ էին խաղում...

— Օրենքով արգելված գրքեր էին կարդում,— հուշեց քննիչը։

— Ո՛չ։ Նրանք բոլորն էլ կիսագրագետ են։

— Սակայն աղացի մեքենավարը և մյուսները չեն ժխտում այդ փաստը։

— Այդ ճիշտ չէ։

— Ինձ թվում է, որ դուք ուղղակի տարրական հասկացողություն չունեք...— Շտոկմանը այստեղ ժպտաց, ու քննիչը կորցնելով խոսակցության թելը, խոսքը վերջացրեց զուսպ բարկությամբ.— Ուղղակի զուրկ եք առողջ դատողությունից։ Դուք ամեն ինչ թաքցնում էք ի վնաս հենց ձեզ։ Միանգամայն հասկանալի է, որ դուք այստեղ եք ուղարկված ձեր պարտիայի կողմից, որպեսզի քայքայիչ աշխատանք կատարեք կազակների մեջ, որպեսզի նրանց խլեք կառավարության ձեռքից։ Ես չեմ հասկանում, այստեղ էլ ինչի՞ համար է խաղ խաղալը։ Միևնույն է, դա չի կարող մեղմել ձեր հանցանքը...

— Դրանք ձեր ենթադրություններն են։ Թույլ տվեք ծրխել, հը՞։ Շնորհակալ եմ ձեզանից։ Դրանք ենթադրություններ են, այն էլ ոչ մի բանի վրա չհիմնված ենթադրություններ։

— Թո՛ւյլ տվեք, ձեզ այցելող բանվորների համար դուք հո կարդո՞ւմ էիք այս գրքույկը։— Քննիչը ձեռքը դրեց մի փոքրիկ գրքի վրա, ծածկելով վերնագիրը։ Վերևում սեով սպիտակի վրա երևում էր «Պլեխանով» մակագիրը։

— Մենք բանաստեղծություններ էինք կարդում,— շունչ առավ Շտոկմանը ու ներս քաշեց պապիրոսի ծուխը՝ մատների մեջ ամուր սեղմելով օղակավոր, ոսկրե մուշտուկը...

Մյուս օրը, մռայլ, ամպամած առավոտյան խուտորից մեկնեց երկու ձի լծած փոստային տարանտասը։ Ետին մասում, վերարկուի կեղտոտ, կարճ օձիքով մորուքը փաթաթած, նստել ու ննջում էր Շտոկմանը։ Նրա կողքին տեղավորվել էին թրերով զինված հերթապահ կազակները։ Նրանցից մեկը, որ շեչոտ դեմքով ու խուճուճ մազերով էր, հանգուցավոր կեղտոտ մատներով պինդ սեղմել էր Շտոկմանի արմունկը, վախեցած, խարտյաշ աչքերով շեղակի նայում էր նրան, ձախ ձեռքով բռնել էր թրի քրքրված պատյանը։

Տարանտասը փողոցով մեկ առատ փոշի էր բարձրացնում։ Պանտելեյ Մելեխովի տան մոտ, կալի ցանկապատին հենված, նրանց սպասում էր շալով փաթաթված մի փոքրիկ կին։ Արցունքի հետքեր կային նրա գորշ դեմքին, որ կարծես վաղուցվա հնացած մետաղադրամ լիներ, դեղինին էր տալիս, պղտոր էր ու խղճուկ, փոս ընկած ու թախծոտ աչքերը լցված էին արցունքներով։

Տարանտասը եկավ ու անցավ, ու կինը ձեռները կրծքին սեղմած, վազեց նրա ետևից։

— Օ՛սյա... Օ՛սիպ Դավիդիչ։ Ա՜խ, բա ո՞նց կլինի...

Շտոկմանն ուզում էր ձեռքով հրաժեշտ տալ նրան, բայց չեչոտ հերթապահը կեղտոտ մատները սեղմեց նրա ձեռքին, կոշտ ու խռպոտ ձայնով բղավեց.

— Նստիր, է՛, թե չէ կթրատեմ...

Իր հասարակ կյանքում նա առաջին անգամ էր տեսնում մի մարդ, որը հենց ցարի դեմ էր գնում։

II

Մայնկովո-Կալիտվենսկայա ավանից մինչև Ռաձիվիլովո գյուղաքաղաքը ձգված երկար ճանապարհը մնացել էր հեռո՛ւ-հեռվում, գորշ, անուրախ մուժում։ Գրիգորին փորձում էր վերհիշել իր անցած ճանապարհը, բայց ոչ մի պարզ ու կապակցված բան չէր դուրս գալի. կայարանների կարմիր շենքեր, վագոնների խախուտ հատակի տակ գոգոացող անիվներ, ձիերի արտաթորությունների ու խոտի հոտ, շոգեքարշի տակից ձգվող ռելսերի անվերջ ու անծայր թելեր, վագոնների դռներից երբեմնակի, պատահմամբ ներս լցվող ծուխ, կայարանում ցցված ժանդարմի երկարաբեղ մռութը Վորոնեժում թե Կիևում...

Այն կիսակայարանում, ուր իջան գնացքից, խռնվում էին սպաները ու գորշ հագուստով, սափրված ինչ-որ մարդիկ, որոնք խոսում էին օտար, անհասկանալի լեզվով։ Երկար ժամանակ վագոններից, լաստակների վրայով իջեցնում էին ձիերը, էշելոնի պետի օգնականը ձիերը թամբելու հրաման տվեց, ավելի քան երեք հարյուր կազակ տարավ անասնաբուժական լազարեթը։ Ձիերի զննման երկար պրոցեդուրա։ Հարյուրակների բաժանում։ Դես-դեն ընկնող վախմիստրներ և ուրյադնիկներ։ Առաջին հարյուրյակի համար ընտրեցին բաց կինամոնագույն ձիերը. երկրորդի համար՝ մոխրագույն ու բաց գույնի ձիերը. երրորդի՝ մուգ շագանակագույն ձիերը. Գրիգորիին նշանակեցին չորրորդ հարյուրյակը, որի համար ընտրեցին շեկ և կինամոնագույն ձիեր. հինգերորդի համար՝ բաց շիկակարմիրներին և վեցերորդի՝ սևաթույրներին։ Վախմիստրները կազակներին դասակների բաժանեցին ու տարան դեպի հարյուրյակները, որոնք ցրված էին կալվածքներում և ավաններում։

Քաջատես, դուրս ընկած աչքեր ունեցող վախմիստր Կարգինը, որ գերակետիկ ծառայության համար ստացած թելերով էր (ուսադիրների վրա), ձիով Գրիգորիի կողքից անցնելիս հարցրեց.

— Ո՞ր ստանիցայից ես։

— Վեշենսկայա։

— Պոչա՞տ ես։[1]

Գրիգորին ուրիշ ստանիցաների կազակների զուսպ փոթկոցների տակ լուռ կուլ տվեց վիրավորանքը։

Ճանապարհը հասավ խճուղուն։ Դոնի նժույգները, որոնք առաջին անգամ էին խճուղի տեսնում, դրա վրա ոտ դրին ականջները ցցելով ու խռխռալով, ինչպես սառցապատ գետի վրա, հետո ընտելացան ու գնացին՝ շրխկացնելով նոր խփած, չմաշված պայտերը։ Առջևում տարածվում էր վտիտ ծմակներով կտրատված, օտար, լեհական հողը։ Մռայլ տաք օրը գոլորշի էր արձակում, ու արևը որ նույնպես կարծես թե Դոնի արևը չլիներ, հածում էր հեռո՛ւ բարձրում, անընդմեջ ամպերի մարմաշե վարագույրի տակ։

Ռաձիվիլլովո կալվածքը գտնվում էր կիսակայարանից չորս վերստ հեռու։ Էշելոնի պետը ձին արագ-արագ քշելով, իր հանձնակատարի հետ կես ճանապարհին հասավ կազակներին։ Կես ժամում հասան կալվածքը։

— Սա ի՞նչ խուտոր է,— հարցրեց վախմիստրին Միտյակինսկայա ստանիցայի մի կազակ, ցույց տալով այգու մերկագագաթ ծառերի խումբը։

— Խուտո՞ր։ Խուտորը մոռացիր, Միտյակինսկայայի քուռակ։ Սա քեզ համար Դոնի Զորաց Երկիր չէ։

— Բա սա ի՞նչ է, քեռի։

— Ի՞նչ քեռի, է՛յ։ Օ-հո՜, ազգական գտնվեց։ Սա, այ աղբերացու, իշխանուհի Ուրուսովայի կալվածքն է։ Այստեղ հենց մեր չորրորդ հարյուրյակն է տեղավորված։

Զանձրանալով ու շփելով ձիու պարանոցը, Գրիգորին ոտները սեղմում էր ասպանդակներին, նայում էր մաքուր, երկհարկանի տանը, փայտե ցանկապատին, բակում գտնվող, օտարոտի տեսք ունեցող շենքերին։ Գնում էին այգու կողքից, ու մերկ ծառերը միատեսակ լեզվով փսփսում էին քամու հետ, այնպես, ինչպես և այնտեղ, հեռո՛ւ-հեռվում Բողած Դոնի ափերին։

Սահում էր տաղտկալի ու թմրեցուցիչ կյանքը։ Երիտասարդ կազակները, աշխատանքից կտրված, սկզբում ձանձրանում էին, ազատ ժամերին սփոփվում խոսակցություններով։ Հարյուրյակը տեղավորվեց կղմինդրով ծածկված, մեծ շենքերում. քնում էին պատուհանների կողքին շինված որմատախտերի վրա։ Գիշերները հովվի հեռավոր սրնգի նման սվսվում էր պատուհանի ճեղքին կպցրած, նրա շրջանակից պոկված թուղթը, ու Գրիգորին բազմաձայն խռմփոցների միջից ականջ դնելով այդ սվսվոցին, զգում էր, թե ինչպես ամբողջովին մաշվում է ժանտ, այրող ձանձրույթից։ Բարակ, թրթռուն սվսվոցը աքցանի նման սեղմում էր նրա սիրտը. այդպիսի բոպեներին նա անսահմանորեն ուզում էր վեր կենալ, գնալ ախոռ, թամբել նժույգը ու քշել հենց մինչև տուն՝ նրա բերանի փրփուրն ու մարմնի քրտինքը շաղ տալով խուլ գետնի վրա։

Ժամը հինգին վեր էին կենում ձիերին խնամելու, մաքրելու համար։ Ընդամենը մի կես ժամում, երբ ձիակապարաններում ձիերին վարսակ էին կերցնում, կարճ ֆրազներ էին փոխանակում միմյանց հետ։

— Այստեղ զզվելի է, տղերք։

— Հալ չկա։

— Բա վախմի՛ստրը, ա՛յ քեզ շո՛ւն։ Ստիպում է ձիու սմբակներն է՛լ լվալ։

— Հիմի տանը բիշի են պատրաստում, բարեկենդան է...

— Մի աղջի՛կ լիներ, ո՛նց կխտտեի, հա՛։

— Ես, տղերք ջան, այս գիշեր երազումս տեսա, որ իբր թե հորս հետ ճալայումը խոտ ենք հնձում, չորս կողմը այնքա՛ն մարդ է դուրս գալի, ոնց որ լվածաղիկները կալերից դենը,— ասում էր սուսիկ-փուսիկ Պրոխոր Զիկովը՝ փայլեցնելով հորթի աչքերին նմանվող իր փաղաքուշ աչքերը,— հնձում ենք մենք, խոտն էլ պառկում է ու պառկում... Հոգիս ոնց որ թե պար է գալի...

— Կնիկս հիմի կասի՝ «Ա՛խ, հիմի ի՞նչ է անում իմ Միկոլուշկան»։

— Օ-հո՜-հո՜։ Կարելի է նա կնսրարի հետ փոր-փորի է խաղում։

— Է՜, դու էլ բա՛ն ես ասում, էլի՜։

— Ախր չկա մի կնիկ, որ առանց մարդու մնալով, դեսից-դենից չխպշտի։

[1] Յուրաքանչյուր ստանիցա ուներ իր մականունը. Վեշենսկայան — Կոբելի (որձ շուն)։

— Ինչի՞ եք դարդ անում, է՛, երբ որ ծառայությունից տուն գնանք, հալբաթ մի թաս կաթ էլ մեզ կհասնի։

Ամբողջ հարյուրյակում հայտնի մասխարա ու զվարճախոս, անպատկառ ու լկտի Եգորկա Ժարկովը խցկվում էր խոսակցության մեջ, աչքով էր անում ու կեղտոտ ժպտում.

— Հայտնի բան է. քո հերը հարսին ձեռից բաց չի թողնի։ Բուղա մարդ է... Մի անգամ հենց այդպիսի բան եղավ...— Նա խաղացնում էր աչքերը՝ նայելով ունկնդիրներին։— Այդ տեսակ մի մարդ աչք դրեց հարսի վրա, նրան հանգիստ չի տալի, իսկ մարդը մեջ է մտնում։ Ու դիտե՞ք կեսարն ինչ մոգոնեց։ Գիշերը դուրս ելավ բակը ու դիտմամբ բաց արեց դարբասը, անասունները բոլորն էլ դուրս փախան։ Նա տղին ասում է՝ «էյ, սարսաղ, ես քո այսինչը, այդ ո՞նց ես փակել դուռը, մտի՛կ, է՛, բոլոր անասունները դուրս են եկել, գնա ու բեր»։ Նա կարծում էր, թե տղան դուրս կգնա, իսկ ինքն այդ ժամանակ կմտնի հարսի ծոցը, իսկ տղան թամբալություն արավ, չգնաց։ «Գնա՛,— փսփսում է կնկա ականջին,— ներս արա անասունները»։ Կնիկը գնում է։ Մարդն էլ պառկել, ականջ է դնում, հերը իջնում է վառարանից ու ծնկների վրա սողում դեպի մահճակալը։ Տղան հո դմբո չէր, նստարանից վերցրեց գրտնակը ու սպասում է։ Հերը մոտենում է մահճակալին ու հենց որ քշում է ձեռքը, տղան գրտնակով մի լավ շրմփացնում է նրա քաչալ գլխին։ «Ա՛ռ քեզ,— բղավում է,— անիծված, ուզում ես էլի կրծե՞լ շորերը...»։ Նրանց հորթն էլ գիշերը խրճիթում էր մնում, մոտ էր գալի, կրծոտում շորերը։ Տղան ենց որ թե հորթին զարկեց, բայց իսկապես հոր կատարը զաղեց ու սուսուփուս պառկեց... Սերուկը սող տվեց մինչև վառարանը, պառկեց, սկսեց տրորել զարկից ուռած տեղը, ուռուցքն էլ սագի ձվի չափ կլիներ։ Պառկեց, պառկեց, ու ասավ. «Իվա՛ն, ա՛յ Իվան»,— «Ի՞նչ է, ապի»,— «Դու այդ ո՞ւմ զարկեցիր»,— «Հորթին, ո՞ւմ»,— ասում է տղան։ Սերուկն էլ արտասուքը աչքերին ասում է նրան. «Բա քեզանից էլ ի՞նչ մալատեր դուրս կգա, եթե դու այդպես զարկում ես անասունին, հը՞»։

— Ա՛մա թե փչում ես, հա՛-ա։

— Դեհ կորի, է՛, քոսոտ։

— Սա ի՞նչ բազար է, ցրվե՛լ,— մոտենալով բղավում էր վախմիստրը, ու կազակները վազ էին տալիս դեպի ձիերը, ծիծաղում ու կատակներ էին փոխանակում։ Թեյից հետո դուրս էին գնում շարային պարապմունքների։ Ուրյադնիկները թափ էին տալիս, մեռցնում տնային սովորությունները։

— Փորդ մի՛ տնկի, էյ դու, խոզի՛ մռութ։

— Հավասարվիր դեպի ա՛ջ, քայ-լով...

— Դասակ, կա՛նգ առ։

— Ա՛րշ։

— Էյ, ձախ թևային, ո՞նց ես կանգնել, ես քո մերը...

Պարոնայք սպաները կանգնում էին մի կողմ և դիտելով, թե կազակներին ինչպես են դես ու դեն քշում լայն հրապարակում, ծիում էին, երբեմն միջամտում ուրյադնիկների կարգադրություններին։

Նայելով փափկասուն, քիփ, բաց մոխրագույն ու շքեղ վերարկուներ և գեղեցիկ նստող համազգեստներ հագած սպաներին, Գրիգորին զգում էր, որ իր ու նրանց միջև գոյություն ունի անանց, անտեսանելի մի պարիսպ. այնտեղ ընթանում էր մի ուրիշ, յուրովի կյանք, որն իր պերճությամբ հատուկ չէր հասարակ կազակին, առանց կեղտի էր, առանց ոջիլների, մի կյանք, ուր չկար երկյուղ վախմիստրների հանդեպ, որոնք սովորել էին հաճախ քիթ ու մռութ ջարդել։

Գրիգորիի ու բոլոր երիտասարդ կազակների վրա ծանր տպավորություն թողեց մի դեպք, որը տեղի ունեցավ կալվածք ժամանելու երրորդ օրը։ Ձիերին նստած, վարժություններ էին կատարում. հորթի փաղաքուշ աչքեր ունեցող, իր հրապուրիչ ստանիցայի մասին հաճախակի երազներ տեսնող Պրոխոր Զիկովի աշխույժ ու խլշկոտ ձին անցնելիս խփվեց վախմիստրի ձիուն։ Հարվածը ուժեղ չէր ու միայն մի քիչ քերծեց ձախ ոտի կոճկի մաշկը։ Վախմիստրը մտրակով թարս խփեց Պրոխորի դեմքին, ձին քշելով նրա վրա, բղավեց.

— Բա ո՞րտեղ են աչքերդ, հը՞... Որտե՞ղ են աչքերդ։ Ես քեզ շուն-շան որդի ցո՛ւյց կտամ։ Երեք օր ու գիշեր օրապահ կկանգնես...

Հարյուրյակի հրամանատարը, որ հրաման էր տալիս դասակապետ սպային, տեսավ այդ բանը ու շուտ եկավ՝

ունտղելով թրափունջը, ձանձրալի ու երկար հորանջելով։ Գրոխորը շինելի թևքով սրբեց ուռչող թշից դուրս եկած աչյունը, նրա շուրթերը դողում էին։

Ձին հավասարեցնելով շարքին, Գրիգորին նայում էր սպաներին, բայց նրանք խոսակցում էին, ասես ոչինչ չէր պատահել։ Հինգ օրից հետո Գրիգորին ձին ջրելիս դույլը պատահմամբ գցեց ջրհորի մեջ, վախմիստրը ուրուրի նման հարձակվեց նրա վրա, բարձրացրեց ձեռքը։

— Ձեռք չտա՛ս...— խուլ մռմռաց Գրիգորին՝ նայելով ջրհորի ալեթրթռուն ջրին։

— Ի-ի՞նչ։ Մտիր ու դուրս բեր դույլը, քոսոտ։ Մռութդ արյունլվիկ կանեմ...

— Դուրս կբերեմ, իսկ դու ձեռք չտաս ինձ,— առանց գլուխը բարձրացնելու, Գրիգորին դանդաղ արտասանեց բառերը։

Եթե ջրհորի մոտ կազակներ լինեին, գործը այլ կերպ կվերջանար. վախմիստրն անկասկած կծեծեր Գրիգորիին. բայց նրանք ցանկապատի մոտ էին ու չէին կարող լսել խոսակցությունը։ Վրա տալով Գրիգորիին, վախմիստրը աչք էր ածում նրանց կողմը, մռմռում էր՝ չռելով բարկությունից խելագարված, գիշատիչ աչքերը։

— Այդ ի՞նչ ես ասում ինձ, հը՞։ Ո՞նց ես խոսում պետի հետ։

— Դու, Սեմյոն Եգորով, վրա մի՛ տա, հա՛-ա։

— Սպառնո՞ւմ ես... Սպասիր, կաշիդ այնպե՛ս քերթեմ որ...

—Ա՛յ թե ինչ,— Գրիգորին ջրհորի բերանից դեն տարավ գլուխը,— եթե դու երբևէ ինձ խփես, միևնույն է, կսպանեմ քեզ։ Հասկացա՞ր։

Վախմիստրը ապշած բաց արեց ձկնային քառակուսի բերանը, պատասխան չգտավ։ Դատաստան տեսնելու մոմենտը բաց էր թողնված։ Գրիգորի մոայլված, կրագույն դեմքը ոչ մի լավ բան չէր խոստանում, ու վախմիստրը շփոթվեց։ Նա հեռացավ ջրհորից, սայթաքելով ցեխի մեջ, ճոռի մոտ, որով ջուրը հոսեցնում ու լցնում էին փորած տաշտերը, և արդեն հեռվից շուռ գալով, ծանր մուրճի պես թափահարելով բռունցքը ասաց.

— Կհայտնեմ հարյուրյակի հրամանատարին, ա՛յ, կզեկուցեմ նրան։

Բայց հայտնի չէ ինչու ոչինչ էլ չասաց հարյուրյակի հրամանատարին, իսկ Գրիգորիին մի երկու շաբաթ նեղում էր. կպչում ամեն մի դատարկ բանի համար, հերթից դուրս պահակության էր ուղարկում և խուսափում էր նրա աչքերին նայելուց։

Օրվա տաղտկալի միապաղաղ կարգը մեռցնում էր ամեն մի աշխուժություն։ Մինչև երեկո, քանի դեռ փողհարը չէր շեփորում ցայգանվագը, պարապում էին հետևակ և հեծյալ շարքերով, ձիակապարաններում, խնամում, մաքրում ու կերակրում էին ձիերը, սերտում էին բանավոր պարապմունքի անհեթեթությունները, և միայն ժամի տասին, ստուգումից ու պահակների նշանակումից հետո, աղոթքի էին կանգնում, ու վախմիստրը կլոր, անագե աչքերը չռելով շարքի վրա, մշտապես խոպոտ իր ձայնով սկսում էր «Հայր մեր»-ը։

Առավոտից սկսվում էր նույն գլխացավանքը ու այսպես ընթանում էին տարբեր և միևնույն ժամանակ երկվորյակների պես միմյանց նման օրերը։

Ամբողջ կալվածքում, բացի կառավարչի պառավ կնոջից, կար մի կին, որին աչք էր դնում ամբողջ հարյուրյակը, նաև սպաները,— կառավարիչի ջահել, սիրունատես աղախինը, լեհուհի Ֆրանյային։ Նա հաճախ տանից վազ էր տալի խոհանոց, որտեղ իշխում էր ծեր, անհոնք խոհարարը։

Հարյուրյակը, որ բաժանված էր առանձին գասակների, ախ ու վախով, աչք ածելով հետևում էր Ֆրանյայի մոխրագույն յուրկայի շրշյունին։ Իր վրա շարունակ զգալով կազակների ու սպաների հայացքները, Ֆրանյան ասես հալչում էր երեք հարյուր աչքերի ճառագայթած տոփանքի հեղեղներում, ու գրգռիչ կերպով դողացնելով կոնքը, վազվզում էր տնից խոհանոց, խոհանոցից տուն, հերթով ծպտում դասակներին ու առանձնապես պարոնայք սպաներին։ Թոլորն էլ նվաճում էին նրա ուշադրությունը, բայց, լուրերի համաձայն, հաջողություն էր ունենում միայն հարյուրապետը, որ գանգրահեր էր ու ոտից-գլուխ խիտ մազերով պատած։

Արդեն մոտ էր գարունը, երբ տեղի ունեցավ հետևյալը։

Մի օր Գրիգորին օրապահ էր ախոռում։ Նա ավելի հաճախ լինում էր ախոռի մյուս ծայրում, ուր միմյանց հետ գժտվում էին սպանների նժույգները՝ կապված լինելով մի մատակ ձիու կողքին։ Ճաշի ընդմիջում էր։ Գրիգորին հենց նոր էր մտրակով դաղել յասավուլի սպիտակաոտ նժույգին ու հեռանալով, դիտում էր իր թուխլիկ ձին։ Սա մուշ-մուշ ծամում էր խոտը, վարդագույն աչքը ծռում դեպի իր տերը՝ բարձրացնելով թրամարտում վնասված ոտը։ Ուղղելով նրա պախուցը, Գրիգորին ախոռի մութ անկյունից լսեց ոտնաձայներ ու խեղդվող մի ճիչ։ Նա քայլեց ձիատեղերի կողքից՝ արտասովոր աղմուկից մի փոքր զարմացած։ Նրա աչքերը ծեփեց թանձր մթությունը՝ անսպասելիորեն լցվելով անցքը։ Ախոռի դուռը շրխկալով փակվեց, ու մեկը զուսպ ձայնով շշնջաց.

— Շո՛ւտ արեք, տղերք։

Գրիգորին արագացրեց քայլերը։

— Ո՞վ է, հը՞։

Ուրյադնիկ Պոպովը, որ խարխափելով գնում էր դեպի դուռը, դիպավ նրան։

— Դո՞ւ ես, Գրիգորի,— շշնջաց նա՝ բռնելով Գրիգորիի ուսերից։

— Կա՛ց։ Այստեղ ի՞նչ է կատարվում...

Ուրյադնիկը մեղավորի նման քիմծիծաղ տվեց, բռնեց Գրիգորիի թևքը։

— Այստեղ... Սպասիր, ո՞ւր ես գնում։

Գրիգորին ձեռքը ետ քաշեց, բացեց դուռը։ Բակում, ուր ոչ ոք չկար, քայլում էր խայտաբղետ, պոչը կտրած մի հավ, ու չգիտենալով, որ խոհարարը մտադիր է վաղը նրանից սուպ պատրաստել պան կառավարչի համար, աղբի մեջ քչուք էր անում, կչկչում ու մտածում, թե որտեղ ձու ածի։

Լույսը խփելով Գրիգորիի աչքերին, մի վայրկյան կուրացրեց նրան, Գրիգորին բռով ծածկեց աչքերը ու շուռ եկավ՝ լսելով ախոռի մութ անկյունում ուժեղացող աղմուկը։ Ձեռքը պատին դնելով, գնաց այնտեղ. պատի և մսուրի վրա դուռն դիմաց խաղում էր արևի ճառագայթը։ Գրիգորին քայլում էր աչքերը լույսից կկոցելով, որը խաղտում էր նրա բիբերը։ Նրան հանդիպեց մասխարա Ժարկովը։ Սա քայլելիս կոճկում էր շալվարը, պտտում գլուխը։

— Այդ ի՞նչ է... Այստեղ ի՞նչ եք անում...

— Շո՛ւտ գնա,— շշնջաց Ժարկովը՝ Գրիգորիի երեսին փչելով կեղտոտ բերանի հոտը,— այնտեղ... այնտեղ տես, թե ինչ է կատարվում... Տղերքը բերել են Ֆրանչային... Պառկեցրել են...— Ժարկովը քոքռաց ու կտրեց ծիծաղը՝ մեջքը խփելով ախոռի գերանաշեն պատին,— Գրիգորին հրել էր նրան։ Գրիգորին վազեց դեպի այնտեղ, որտեղից գալիս էր իրարանցման աղմուկը, նրա լայնացած, մթության ընտելացած աչքերում սպիտակին էր տալի երկյուղը։ Անկյունում, այնտեղ, ուր ընկած էին ձիերի սթարները, խիտ ամբոխվել էին կազակները,— ամբողջ առաջին դասակը։ Գրիգորին կազակներին դես ու դեն հրելով, լուռ անցավ առաջ։ Հատակի վրա, մթության մեջ սպիտակին տվող ոտները անպատկառ ու ապշեցուցիչ կերպով տարածած, առանց շարժվելու պառկել էր Ֆրանչան, գլուխը սթարներով փաթաթված, պատառոտված յուրկան կրծքից վերև քաշած։ Նրա վրայից հենց նոր էր վեր կացել մի կազակ, որը շալվարը բռնած, առանց ընկերներին նայելու, ծուռ ժպտալով, քաշվեց դեպի պատը՝ տեղը զիջելով հետևյալին։ Գրիգորին ետ դարձավ ու վազեց դեպի դուռը։

— Վախ-մի-ի՜ստր...

Հենց դռան մոտ հասան նրան, ետ քաշեցին, ձեռքով փակեցին բերանը։ Գրիգորին մեկի բլուզը պատռեց օձիքից մինչև փեշը, կարողացավ ոտով խփել մի ուրիշի փորին, բայց նրան ոտնատակ արին, գլուխը փաթաթեցին սթարով, ինչպես Ֆարանչային, ձեռները կապոտեցին և լուռ,— որպեսզի նա ոչ ոքի չճանաչեր ձայներից,— տարան գցեցին դատարկ մսուրի մեջ։ Խեղդվելով սթարի բրդի գարշ հոտից, Գրիգորին փորձում էր ճչալ, ոտները խփում էր միջնորմին։ Նա լսում էր անկյունից եկող փսփսոցները, դռան ճռնչոցը, որտեղից մտնում ու դուրս էին գնում կազակները։ Մի քսան րոպեից հետո նրա կապերն արձակեցին։ Դռան դրսի կողմում կանգնած էին վախմիստրը և ուրիշ դասակի երկու կազակ։

— Դու սո՛ւս արա, է՛յ,— ասաց վախմիստրը՝ արագարագ թարթելով աչքերը ու ծուռ ուղղություն տալով նայվածքին։

— Սարսաղություն չանես, թե չէ... ականջներդ կկտրեմ,— ժպտաց ուրիշ դասակի կազակ Դուբոկը։

Գրիգորին տեսավ, թե ինչպես երկու հոգի բարձրացրին մի գորշ փաթեթ — Ֆրանսյային (նրա ոտները անշարժ կախ էին ընկած յուրկայի տակից) ու ելնելով մսուրի վրա, դուրս գցեցին պատի ճեղքից, որը թույլ ծածկված էր թիթեղով։ Պատի ետևում այգին էր։ Յուրաքանչյուր ձիատեղի վերևում կար փոքրիկ, կեղտոտ պատուհան։ Կազակները թխկթխկոց բարձրացնելով ելան միջնորմների վրա, որ տեսնեն, թե ինչ է անելու պատի ճեղքից ներքև ընկած Ֆրանսյան. ոմանք շտապելով, ախորից դուրս էին գնում։ Գազանային հետաքրքրությունը համակեց նաև Գրիգորիին։ Կառչելով շեղագերանից, նա ճիգ արավ ու բարձրացավ դեպի պատուհանը ու ոտների հենարան գտնելով, նայեց ներքև։ Մրակալած պատուհաններից տասնյակ աչքեր նայում էին պատի տակ ընկած կնոջը։ Սա պառկել էր մեջքի վրա, մկրատի պես բաց ու խուփ էր անում ոտները, մատներով քերքրում էր պատի տակի հալչող ձյունը։ Գրիգորին նրա դեմքը չէր տեսնում, բայց լսում էր պատուհանների մոտ ցցված կազակների գաղտագողի ֆսֆսոցը ու խոտի դուրեկան, մեղմ խշշոցը։

Ֆրանսյան երկար պառկեց, հետո ելավ, չորեքթաթ եղավ։ Նրա թևերը դողում, ծալվում էին։ Գրիգորին պարզ տեսնում էր այդ։ Ֆրանսյան ցնցվելով, օրորվելով, ոտքի ելավ, ու գզգզված մազերով, օտարոտի ու անծանոթ տեսք ստացած, երկա՜ր, երկա՜ր նայեց պատուհաններին։

Ու դնաց՝ մի ձեռքը դնելով ցախկեռասի թփիկներին, մյուսը հենվելով պատին ու ընկրկելով...

Գրիգորին միջնորմից ներքև թռավ, ձեռքով շփեց կոկորդը. նա շնչասպառ էր լինում։

Դռան մոտ մեկը,— նա մինչև իսկ չէր հիշում թե ով,— լրջորեն ու պարզ ասավ նրան.

— Որ մեկնումեկի մոտ ծպտուն հանես, Քրիստոս վկա կսպանենք։ Իմացա՞ր։

Պարապմունքների ժամանակ դասակապետ սպան, տեսնելով, որ Գրիգորիի շինելի մի կոճակը կտրված է, հարցրեց.

— Ո՞վ է քեզ քաշքշել։ Այդ ի՞նչ մոդա է։

Գրիգորին նայեց կտրված կոճակի հետքին,— մահուդի վրա կոճակի սեղմվելուց առաջացած կլորակին. վերհիշելով այդ ամենը, երկար ժամանակամիջոցում առաջին անգամ քիչ մնաց լաց լիներ։

III

Տափաստանի վրա շոքել է դեղին արևատապը։ Ցորենի չհնձած, հասուն արտերը մշուշվում են դեղին փոշիով։ Հնձիչի մասերին ձեռք տաս, ձեռքդ կվառի։ Գլուխդ բարձրացնես՝ կդաղվի դեմքդ։ Երկնքի կապույտ-դեղնավուն երեսը շիկացած է շոգից։ Այնտեղ, ուր վերջանում է ցորենը, իշավույտի շաֆրանե շերտեր են ձգվում։

Խուտորը քոչել էր տափաստան։ Հնձում էին հացը։ Ձիերը քաշում էին հնձիչները, հևում տոթից, բարկ փոշուց, խոխոցացնում շոգից... Քամին հազվադեպ սուրալով Դոնի կողմից, բարձրացնում էր փոշու փեշերը. մուժով, ասես շաղրայով, ծածկում էր ծակող արևը։

Պետրոն, որ հնձիչից թափում էր օրանը, առավոտից խմել էր երկու դույլանոց ջրամանի ջրի կեսը։ Խմում էր տաք, գարշելի ջուրը, ու մի բոպե անց չորանում էր բերանը, թրջվում էր շապիկ-վարտիքը, քրտինքը հեղվում էր երեսից, ականջներում հնչում էր գեղգեղուն ղժժոցը, խոսքը բողկի պես դեմ էր առնում կոկորդին։ Դարյան երեսը լաչակով ծածկած, շապկի դոշը արձակած, դիզում էր օրանը։ Թխացած ծծերի արանքից հոսում էր գորշ, կաթիլ-կաթիլ քրտինքը։ Նատալյան քշում էր հնձիչին լծած ձիերը։ Տակի պես կարմրին էին տալիս նրա այրվող թշերը, արցունքվում էին աչքերը։ Պանտելեյ Պրակոֆևիչը քայլում էր լասերի կողքից, ասես նոր լողացած։ Թաց, քրտնակալած շապիկը կսկծեցնում էր նրա մարմինը։ Թվում էր, թե նրա դեմքից ոչ թե մորուքը, այլ անիվի սև, հալված քսուկ է իջնում կրծքի վրա։

— Քրտնե՞լ ես, Պրակոֆիչ,— բղավեց այնտեղից սայլով անցնող Խրիստոնյան։

— Թրջվել եմ, հա,— Պրակոֆևիչը թափ տվեց ձեռքը ու

կաղ-կաղ քայլեց, շապկի փեշով սրբեց փոշ-ն վրա հավաքված քրտինքը։

— Պետրո՛,— գոչեց Դարյան,— օ՛ֆ, վերջացրու, է՛։

— Սպասիր, մի անգամ էլ անցնենք-դառնանք։

— Շոգից կտրաքվե՛նք։ Հերիք եղավ։

Նատալյան ձիերը կանգնեցրեց հևալով, կարծես ոչ թե ձիերն էին քաշում հնձիչը, այլ ինքն էր քաշում։ Դարյան մոտեցավ նրանց՝ խոզանի վրա դանդաղ դնելով սև քոշերից հանած ոտները։

— Պետյուշկա, այստեղ մոտիկ տեղում լիճ կա։

— Ա՛մա թե մոտիկ է, երեք վերստ կլինի։

— Լողանա՛յինք, էլի։

— Մինչև այնտեղ հասնես...— հոգոց հանեց Նատալյան։

— Ինչի՞ ոտով գնանք։ Ձիերը կարձակենք, կնստենք ու հա՛յդա։

Պետրոն երկյուղած նայեց օրանը դիզող հորը, ձեռքը թափ տվեց։

Արձակեցե՛ք, կնանիք։

Դարյան անջատեց քաշանները ու թեթև թռավ զամբիկի վրա։ Նատալյան ժպտալուց կծկելով ճաքճքած պռոշները, ձին տարավ հնձիչի մոտ ու փորձեց նստել հնձիչի նստելատեղից։

— Տո՛ւր ոտդ,— Պետրոն օգնեց նրան ու նստեցրեց ձիուն։

Գնացին։ Դարյան մերկացած ծնկներով ու ծոծրակին ընկած լաչակով առաջ անցավ։ Նա ձին նստել էր տղամարդկազակի նման,— ոտները երկու կողմից կախած,— և Պետրոն չկարողացավ չբղավել նրա ետևից։

— Է՛յ, տես, չհարե՛ս։

— Գնա՛, է՛,— ձեռքը թափ տվեց Դարյան։

Անցնելով ամառային ճանապարհից, Պետրոն նայեց ձախ կողմը։ Ճանապարհի գորշ ժապավենի վրայով հեռո՛ւ-հեռվից, խուտորից արագ գալիս էր փոփոխվող ուրվագծերով, փոշու մեջ կորած ինչ-որ գնդիկ։

— Ձիավոր է գալի,— Պետրոն կկոցեց աչքերը։

— Թռչում է։ Մտիկ տուր, թե ոնց է փոշի բարձրացնում,— զարմացավ Նատալյան։

— Այդ ի՞նչ կարող է լինել։ Դա՛շկա,— ձայն տվեց Պետրոն առջևից ձին արագ քշող կնոջը,— սպասիր տեսնենք ձիավորին։

Գնդիկը ընկավ ձորակը, դուրս թռավ այնտեղից, հասնելով մրջյունի մեծության։

Փոշու միջից նշմարվեց ձիավորի կերպարանքը։ Հինգ րոպեից հետո ավելի պարզ էր երևում։ Պետրոն դիտում էր՝ կեղտոտ ձեռքը ծղոտե լայնեզր գլխարկի ծայրին դրած, որ ծածկում էր աշխատանքի ժամանակ։

— Այդպես կարելի է շատ շուտ հալից գցել ձին, յորղա է գալի։

Հոնքերը կիտելով, նա գլխարկի ծայրից իջեցրեց ձեռքը, ինչ-որ շփոթություն առաջացավ նրա դեմքին ու մնաց տարակուսանքից բարձրացած հոնքերի արանքում։

Ձիավորը հիմա արդեն պարզ էր երևում։ Նա գալիս էր արագ քառատրոփով, ձախ ձեռքով պահել էր գլխարկը, աջ ձեռքում թույլ փողփողում էր մի փոքրիկ, փոշոտված կարմիր դրոշիկ։

Նա ճամփից մի կողմ անցած Պետրոյի կողքից սլանալիս այնքան մոտեցավ նրան, որ լսվում էր շիկացած օդը, ներշնչող ձիու ուժգին հևքը, ու բաց անելով քառակուսի, գորշ, քարացած բերանը, բղավեց.

— Տուրուդմբո՞ց է։

Նրա ձիու պայտի թողած հետքի վրա փրփուրի մի դեղնավուն պղպջակ ընկավ։ Պետրոն աչքերով ուղեկցեց ձիավորին։ Նրա հիշողության մեջ միայն մի բան մնաց,— կիսով չափ ուժասպառ ձիու ծանր հևքը, ու երբ նայեց նրա ետևից, տեսավ, որ գավակը թաց էր, քրտնքից փայլում էր պողպատե շեղբի նման։

Դեռևս վերջնականապես չգիտակցելով վրա հասած դրժբախտությունը, Պետրոն բութ հայացքով դիտում էր փոշու մեջ թափված փրփուրը, տափաստանը, որ ալեձև թեքությամբ իջնում էր դեպի խուտորը։ Դեղին, հնձած արտերով բոլոր կողմերից դեպի խուտոր էին սլանում հեծյալ կազակները։ Տափաստանովը մեկ, մինչև դեղնին տվող, թանձր մշուշված բլրակը, փոշու ամպիկներ էին բարձրացնում ձիա-

վորները, իսկ այնտեղ, ուր նրանք դուրս էին գալի ճանապարհը ու սլանում խմբով, դեպի խուտոր էր ձգվում փոշու գորշավուն, ահագին տուտը։ Զինվորական ծառայության մեջ հաշվվող կազակները թողնում էին աշխատանքը, հընձիչներից արձակում ձիերը, սլանում դեպի խուտոր։ Պետրոն տեսավ, թե ինչպես Խրիստոնյան սայլից արձակեց իր գվարդիական նժույգը ու սլացավ քառատրոփով՝ տարածելով երկար ոտները, նայելով Պետրոյին։

— Այս ի՞նչ բան է,— հոգոց հանեց Նատալյան՝ վախեցած նայելով Պետրոյին ու նրա հայացքը,— հրացանով նշանի առնված նապաստակի հայացքը,— ցնցեց Պետրոյին։

Պետրոն սլացավ դեպի դաշտակայանը. առանց կանգ առնելու ցած թռչելով ձիուց, հագավ եռուն աշխատանքի ժամանակ հանած շալվարը, ու հորը ձեռքով անելով, նույնպես չքացավ փոշու ամպի մեջ, ինչպես և նրանք, որոնք գորշ, հոսուն պեպենների նման պատել էին տոթից տոչորվող տափաստանը։

IV

Հրապարակում—խիստ, գորշ բազմություն։ Ձիեր, կազակական հանդերձանք, համազգեստներ՝ ուսադիրների տարբեր համարներով։ Բանակային կազակներից մի ամբողջ գլխով բարձր, ոնց որ հոլանդական սագերը ընտանի մանր թռչունների մեջ, շրջում էին կապույտ գլխարկներ դրած ատամանցիները։

Օդեստունը փակված է։ Զինվորական պրիստավը մռայլ է ու մտահոգված։ Փողոցներում, ցանկապատերի մոտ — տոնական հագուստով կանայք։ Խայտաբղետ բազմության մեջ բերնեբերան է անցնում մի բառ,— «մոբիլիզացիա»։ Հարբած, բորբոքված դեմքեր։ Տագնապը անցնում է ձիերին,— մռնչոց ու ծեծկռտոց, ցասկոտ վրնջյուն։ Հրապարակի վրա՝ փոշու մուժ, հրապարակում՝ պետական օդեստան դատարկ շշեր, էժան կանֆետների թղթեր։

Պետրոն, սանձը բռնած, տանում էր ձին։ Եկեղեցու պարսպի մոտ ածդահա, թխադեմ մի ատամանցի, կոճկելով ահագին լայնությամբ շալվարը, ժպտում է բերանը բանալով ու ցույց տալով սպիտակ ատամները, նրա կողքին գորշ լորի նման ճթվթում է ցածրահասակ մի կազակուհի,— չգիտես կի՞նն է թե սիրուհին։

— Այդ պոռնիկի համար ես քո աչքերը կհանեմ,— խոստանում է կազակուհին։

Նա հարբած է, գդդզված մազերի մեջ արևածաղկի կճեպներ են նստել, կիսաշալի ծայրերը արձակված են։ Ատամանյան գնդի կազակը դոտին կապելով, պպզում է, ժպտումլայն, ծալծլված շալվարի միջից մի տարեկան հորթը կանցնի առանց դրան կպչելու։

— Էլ ի՞նչ ես վրա տալի, Մաշկա։

— Անիծված շո՛ւն։ Կնկա գերի՛։

— Դեհ լավ, ի՞նչ կա որ։

— Անամոթի մե՛կը։

Քիչ դեն շիկակարմիր մորուքով մի վախմիստր վիճում է մի հրետանավորի հետ։

— Ոչինչ է՛լ չի լինի։ Կսպասենք մի օր, ու հա՛յդա դեպի տուն։

— Բա որ պատերազմ լինի՞։

— Փի՛ա, ա՛յ աչքի լույս։ Այդ ո՞ր տերությունը կկանգնի մեր դեմ։

Մի քիչ էլ դեն մարդկանց մի փոքր խմբում աշխույժ խոսակցությունն է. տարեց, գեղեցիկ մի կազակ տաքանում է.

— Մենք նրանց հետ գործ չունենք։ Նրանք թող կռվեն, իսկ մեր հացը հնձած չի։

— Սա փորձանք է, հա՛-ա։ Մտի՛կ, է՛, խալխին քշելբերել են այստեղ, իսկ հիմի մի օրվա աշխատանքը մի տարվա ապրուստ է։

— Օրանը կուտեցնեն անասուններին։

— Մեզ մոտ սկսվել է գարու հունձը։

— Ավստրական թագավորին, ուրեմս, թրխկացրել են, հա՞։

— Չէ, թագավորի տղին։

— Հրամանքդ ո՞ր գնդիցն ես։

— Է՛յ, սանահեր, հարստացե՞լ ես, ինչ է, մարդ չես ճանաչում։

— Օ-օ՞, Ստյոշկա, այդ ո՞րտեղից։

— Ատամանն ասում էր՝ միթամ հենց այնպես են հավաքել. բան չկա։

— Դեհ, կազակություն, պի՛նդ կաց։

— Մի տարի էլ որ սպասեին, ես կպրծնեի երրորդ հերթից։

— Դո՞ւ ինչի ես եկել, պապի։ Բա չե՞ս պրծել ծառայությունդ։

— Հենց որ սկսեն խալխին բրթել, պապերին էլ կկանչեն։

— Արաղի դուքանը փակե՛լ են։

— Ա՛յ դու քամի բռնո՛ղ։ Մարֆուտկայի մոտ լիքն է, թեկուզ բոչկով առ։

Հանձնաժողովը սկսեց զննությունը։ Երեք կազակ մի հարբած, արյունոտված կազակի տարան վարչություն։ Գբլուխն ու իրանը ետ գցելով, նա քաշքշում էր վրայի շապիկը, խաղացնում կալմիկական աչքերը ու բղավում.

— Ես արին կհանեմ նրանցից, այն մուժիկներից։ Թող լա՛վ ճանաչեն Դոնի կազակին։

Շուրջը գտնվողները նրա առաջ ճամփա բանալով, հավանություն տալով, համակրանքի քրքիջներ էին արձակում։

— Կոթի՛ր նրանց։

— Ինչի՞ համար են սրան բռնել։

— Շրմփացրել է մի մուժիկի։

— Տե՛ղն է նրանց։

— Մենք նրանց հլա դեռ կկոխացնենք։

— Ես, աղբորս ասեմ, հազար ինն հարյուր հինգ թվականին մասնակցել եմ խաղաղացնելուն։ Օ-օ՞, ծիծաղ էր էլի՛։

— Կռիվ որ եղավ մեզ էլի կտանեն խաղաղացնելու։

— Հերի՛ք է, է՛։ Թող ազատ մարդիկ վարձեն։ Թող պոլիցան գնա, իսկ մեզ համար դա ամոթանք է։

Մոխովի խանութում, վաճառասեղանի մոտ հրմշտոց ու իրարանցում էր։ Քեֆը չաղ Իվան Տամիլինը կպել էր խանութատերին։ Ձեռները տարածելով, նրան հորդորում-խրատում էր ինքը՝ Սերգեյ Պլատոնովիչը. նրա կոմպանյոն Եմելյան Կոստանտինովիչ Ցացան ետ-ետ էր մանում դեպի դուռը։

— Լավ, սա ի՞նչ բան է, է՛... Ազնի՛վ խոսք, սա խառնակցություն է։ Ա՛յ տղա, է՛յ, վազ տուր ատամանի մոտ։

Տամիլինը, քրտնած ձեռները քսելով շալվարին, կրծքով վրա էր տալի մոայլված Սերգեյ Պլատոնովիչին։

— Մուրհակը կոխացրիր, իժ, իսկ հիմի վախո՞ւմ ես, հը՞։ Այդպե՛ս է։ Քիթ-մռութդ կչարդեմ, գնա ու ինձնից հաշիվ ուզի։ Ոտքի տակ տվիր մեր կազակական իրավունքը։ Ախ, դու, շան ծնունդ։ Օ՛ձ։

Խուտորի ատամանը ուրախալի խոսքերի մեղր էր կաթեցնում իր շուրջը խմբված կազակների բերանը։

— Պատերազ՞մ։ Չէ, չի՛ լինի։ Նորին բարեծնություն զինվորական պրիստավը ասացին, որ սա ցույց տալու համար է։ Կարող եք հանգիստ լինել։

— Ի՛նչ լավ է, է՛։ Տուն դարձա թե չէ, վազ կտամ արտերը։

— Բա ո՞նց։ Գործը մնացել է, չէ՞։

— Ասա՛ խնդրեմ, բա մեծամեծները ի՞նչ են մտածում։ Ախր ես հարյուր դեսյատինից ավելի ցանք ունեմ։

— Տիմո՛շկա, մերոնց ասա, որ էգուց ետ կգանք։

— Ոնց որ թե աֆիշա են կարդում։ Հա՛յդա, գնանք այնտեղ։

Հրապարակը աղմկում էր մինչև ուշ երեկո։

. . . . . .

Չորս օրից հետո գնացքները կազակների գնդերն ու մարտկոցները կարմիր վագոններով տանում էին դեպի ռուս-ավստրիական սահմանը։

Պատերազմ...

Ձիերի վանդակներում, մսուրների առաջ՝ ձիերի փրնշոց ու գոմաղբի սուր հոտ։ Վագոններում՝ միևնույն խոսակցությունները, երգերը, ամենից հաճախ՝

Հուզվեց Դոնը, ալեկոծվեց,
Խաղաղ Դոնը պրավոսլավ,
Միապետի կոչը լսեց
Ու, հնազանդ, ոտքի ելավ։

Կայարաններում՝ հետաքրքրվող-երկյուղած հայացքներ, որ զննում էին կազակական շալվարների լամպասը. դեմ-

քեր, որոնց վրայից դեռ չէր անցել աշխատանքային թունդ արևայրուքը։

Պատերա՜զմ...

Հարա-հրոցից խեղդվող լրագրեր...

Կայարաններում կանայք թաշկինակները թափահարելով ողջունում էին կազակական էշելոններին, ժպտում, պապիրոս ու քաղցրեղեն էին գցում նրանց։ Վորոնեժի մոտ մի հարբած ծերուկ-երկաթուղային մտավ այն վագոնը, ուր մյուս երեսուն կազակների հետ շոգից նեղվում էր Պետրո Մելեխովը, ու բարալիկ քիթը ծռմռելով, հարցրեց.

— Գնո՞ւմ եք։

— Նստիր մեզ հետ, պապի,— բոլորի փոխարեն պատասխանեց մեկը։

— Սիրելիդ իմ... մսացու։— Ու երկար, կշտամբանքով օրորում էր գլուխը։

V

Հունիսի վերջերին գունդը դուրս եկավ մանևրների։ Դիվիզիայի շտաբի կարգադրությամբ գունդը երթակարգով անցավ մինչև Ռուֆնո քաղաքը։ Քաղաքի շրջակայքում տեղավորվել էին երկու հետևակ դիվիզիա և հեծյալ դիվիզիայի զորամասերը։ Չորրորդ հարյուրյակը կանգ առավ ու տեղավորվեց Վլադիսլավկա գյուղում։

Երկու շաբաթից հետո, երբ հարյուրյակը, երկարատև մանևրներից հոգնած ու տանջված, տեղավորվեց Զաբորոն ավանում, գնդի շտաբից ձիով եկավ հարյուրյակի հրամանատար փոխ-յասավուլ Պոլկովնիկովը։ Գրիգորին իր դասակի կազակների հետ պառկած էր վրանում։ Նա տեսավ, թե ինչպես փողոցի նեղ հունով քրտնաթոր ձիով սլացավ ու անցավ փոխ-յասավուլը։

Բակում կազակներն իրար անցան։

— Երևի դարձյալ մանևրի ենք դուրս գալու.— ենթադրաբար ասաց Պրոխոր Ռիկովը ու լարեց լսողությունը։

Դասակապետ ուրյադնիկը ասեղը խրեց գլխարկի աստառի մեջ (նա կարում էր շալվարի ճղված տեղը)։

— Ուրիշ բան չի կարող լինել, պետք է դուրս գանք։

— Գրողի՜ տարածներ, չեն թողնում, որ հանգստանանք։

— Վախմիստրն ասում էր, թե բրիգադի հրամանատարն է գալու։

«Տա-տա-տա-տա-տա-տա-տա-տա...» — տագնապ ազդարարեց փողհարը։

Կազակները տեղներից վեր թռան։

— Ո՞րտեղ ես դրել թութունիս պարկը,— դես-դեն ընկավ Պրոխորը։

— Թամբե՛լ-ել ձիերը։

— Ջհաննամը քո թութունի պարկը,— վազ տալով բղավեց Գրիգորին։

Վախմիստրը վազեվազ մտավ բակ։ Թուրը ձեռքով պահած՝ աճապարեց դեպի ձիակապարանները։ Ձիերը թամքեչին կանոնագրքով պահանջվող ժամկետում։ Գրիգորին հանեց վրանի ցցերը. ուրյադնիկը շշնջաց նրա ականջին.

— Պատերազմ է, տղա։

— Սուտ չե՞ս ասում։

— Աստված վկա, վախմիստրը հաղորդեց։

Պոկեցին վրանները։ Հարյուրյակը շարվեց փողոցում։

Հարյուրյակի հրամանատարը տաքացած ձիով պտույտ էր գալիս շարքի առաջ։

— Դասակային շարասյուններո՜վ...— շարքերի վրա թընդաց նրա բամբ ձայնը։

Թքթքացին ձիերի սմբակները։ Հարյուրյակը վարգելով՝ ավանից դուրս եկավ ճանապարհը։ Առաջին և հինգերորդ հարյուրյակները Կուստեն գյուղից փոփոխակի քայլքով գնում էին դեպի կիսակայարանը։

Մեկ օրից հետո գունդը գնացքից իջավ Վերբի կայարանում, սահմանից 35 վերստ հեռու։ Կայարանի կաղամախիների ետևում բացվում էր արշալույսը։ Առավոտյան լավ եղանակ էր լինում։ Երկաթգծերի վրա շաչում էր մի շոգեքարշ։ Փայլում էին ցողի լաքած ռելսերը։ Ձիերը, փնչալով, լաստակների վրայով իջնում էին վագոններից։ Ջրմուղից դենը՝ ձայների փոխկանչ, բամբ հրաման։

Չորրորդ հարյուրյակի կազակները ձիերի սանձերից բռնած, նրանց դուրս էին տանում բարյերից։ Յասամանագույն, նոսր մթության մեջ սահում էին լպրծուն ձայները։ Մուգ-

կապույտին էին տալիս դեմքերը, ձիերի ուրվագծերը հազիվ էին նշմարվում մթության մեջ։

— Ո՞ր հարյուրյակն է։

— Իսկ դու ո՞րտեղից եկար-կպար։

— Ես քեզ ցույց կտամ, սրիկա՛։ Ինչպե՛ս ես խոսում էպա-այի հե՛տ։

— Ներողություն, ձերդ բարեծննդություն... Շփոթեցի։

— Անցի՛ր, անցի՛ր։

— Քառացե՞լ ես, ինչ է։ Հրե՛ն, պարավոզ է գալի, ա՛նց կաց։

— Վախմիստր, ո՞րտեղ է քո երրորդ դասակը։

— Հարյու-ու-ր-յա՛-ակ, հավաքվի՛ր։

Իսկ շարասյունը կամացուկ շշուկով՝

— Հավաքվի՛ր հա հավաքվիր, ես ձեր այսինչը, երկու գիշեր չենք քնել։

— Սյոմկա, տուր քաշեմ, իրիկվանից չեմ ծխել։

— Չի՛դ քաշիր...

— Անտերը կրծել ու կերել է սանձը։

— Իսկ իմի առջևի նալերը ընկել են։

Չորրորդ հարյուրյակի ճանապարհը կտրեց մի ուրիշ հարյուրյակ, որ մի կողմ էր շեղվել։

Երկնքի կապտավուն սպիտակության վրա, ասես տուշով ներկված, երևում էին ձիավորների ուրվապատկերները։ Գնում էին շորսը մի շարք կազմած։ Ճոճվում էին տեգերը, որոնք նման էին արևածաղկի մերկացած ցողուններին։ Երբեմնակի լսվում էր ասպանդակի ծնգոց կամ ճոճռում էր մի թամբ։

— Էյ, աղբերացուներ, այդ ո՞ւր եք գնում։

— Քավորի մոտ, կնունքի։

— Հա՛-հա՛-հա-հա։

— Լռե՛լ։ Այդ ի՞նչ խոսակցություններ են։

Պրոխոր Զիկովը թամքի երկաթապատ ղաշից բռնած, նայեց Գրիգորիի դեմքին, շշնջալով ասաց.

— Դու չե՞ս վախենում, Մելեխով։

— Ինչի՞ց պիտի վախենամ։

— Բա ո՞նց, կարելի է այսօր կռիվ գնանք։

— Ի՞նչ կա որ։

— Իսկ ես վախում եմ,— խոստովանեց Պրոխորը ու մատներով ջղայնորեն տնտղեց ցողից սկսունացած սանձը,— վագոնում ամբողջ գիշեր չեմ քնել։ Քուն չկա, թեկուզ սպանես։

Հարյուրյակի առջևի մասը ճոճվեց ու սողաց դեպի առաջ, շարժումը հաղորդվեց երրորդ դասակին, ձիերն ընթացան համաչափ, օրորվեցին ու սահեցին փոկերով կապված տեգերը։

Գրիգորին սանձը թողած՝ ննջում էր։ Նրան թվում էր, որ ոչ թե ձին է առջևի ոտները պիրկ դնում գետնին, թամքի վրա ճոճելով իրեն, այլ ինքն է քայլում տաք, սև ճանապարհով, ու քայլերը արտասովոր կերպով թեթև է, հուզելու չափ ուրախալի։

Պրոխորն ինչ-որ բան էր ասում նրա ականջին, նրա ձայնը խառնվում էր թամքի ճոճոցին, սմբակների դոփյունին՝ չխախտելով պարուրող, անխոհ նինջը։

Գնում էին գյուղական ճանապարհով։ Ականջներում ճրնկում էր օրորող անդորրությունը։ Ճանապարհի եկայնքով մշուշվում էր ցողապատ վարսակը։ Ձիերը գլուխներն իջեցնում էին դեպի ցածրիկ հասկերը՝ կազակների ձեռներից պոկելով սանձերը։ Փաղաքուշ լույսը մտնում էր Գրիգորիի կոպերի տակ, որ ուռել էին անքնությունից. Գրիգորին բարձրացնում էր գլուխը ու լսում Պրոխորի ձայնը, որ միապաղաղ էր ինչպես սայլի ճռնչոցը։

Նրան սթափեցրեց մի ուժգին, որոտալից թնդյուն, որը եկավ վարսակի հեռավոր դաշտից։

— Կրակո՛ւմ են,— համարյա բղավեց Պրոխորը։

Ահը պղտորեց նրա հորթի աչքերը։ Գրիգորին բարձրացրեց գլուխը. նրա առաջ ձիու մեջքի հետ համաչափ շարժվում էր դասակապետ ուրյադնիկի գորշ շինելը, կողքից փռվել էր դաշտը՝ չհնձած հացի արտերով, արտույտը ճախրում էր հեռագրասյան բարձրությամբ։ Հարյուրյակն աշխուժացավ, թնդանոթի հուժկու հառաչանքը էլեկտրական հոսանքի պես անցավ նրա վրայով։ Փոխ-յասավուլ Պոլկովնիկովը, հրաձգությունից սթափված, հարյուրյակը տարավ արագ ընթացքով։ Մի լքված պանդոկի մոտ խաչաձևող գյուղական ճանապարհների հանգույցից դենը փախստական-

ների սայլեր հանդիպեցին։ Հարյուրյակի կողքից սլացավ շքեղատես դրագունների մի հեծելավաշտ։ Ռոտմիստրը, որ բաց-շիկագույն այտամորուքով էր ու շիկակարմիր, ազնվացեղ ձիով, հեգնաբար նայեց կազակներին ու խթանեց ձին։ Ճահճային ու խրուտ մի ձորահովտում խրվել-մնացել էր հաուբիցային մի մարտկոց։ Զինվորները մտրակում էին ձիերին, հրանոթների մոտ դես-դեն էր ընկնում անձնակազմը։ Բարձրահասակ, չեչոտ մի մարտկոցավոր պանդոկից բերում էր մի խտիտ տախտակներ, որ հավանորեն ցանկապատից էր պոկել։

Հարյուրյակը հասավ մի հետևակ գնդի։ Զինվորները կոլոլած շինելներով քայլում էին արագ, արևը անդրադառնում էր նրանց մաքրված կաթսայիկների ու սվինների սայրերի վրա։ Վերջին վաշտի մի փոքրամարմին, բայց հանդուգն եֆրեյտոր Գրիգորիի վրա մի կտոր ցեխ շպրտեց։

— Բռնիր, սրանով կխփես ավստրիացիներին։

— Մի՛ գժվիր, հայվան։— Գրիգորին մտրակով ետ գցեց Ոչող ցեխի կտորը։

— Կազակներ, մեզանից բարևներ տարեք նրանց։

— Ինքներդ կտեսնվեք։

Առաջին շարասյունում երգում էին անպարկեշտ մի երգ, հաստակոնք, կնկա նմանվող մի զինվոր ետ-ետ քայլելով գնում էր շարասյան կողքից, ձեռները շրմփացնում սապոգների կարճ ճիտքերին։ Սպաները քմծիծաղ էին տալիս։ Մոտալուտ վտանգի սուր հոտը նրանց մոտեցնում էր զինվորներին, ավելի ներողամիտ էր դարձնում։

Պանդոկից մինչև Դորովիշչուկ գյուղը թրթուրների նման սողում էին հետևակ զորամասերը, գումակները, մարտկոցները, լազարեթները։ Զգացվում էր մոտալուտ մարտերի մահացու շունչը։

Գնդի հրամանատար Կալեդինը Բերեստեչկո գյուղի մոտ հասավ չորրորդ հարյուրյակին։ Նրա կողքից գնում էր զորական ավագը։ Գրիգորին դիտելով գնդապետի վայելչակազմ կերպարանքը, լսեց, թե ինչպես զորական ավագը հուզվելով ասաց գնդապետին.

— Երեք վերստանոց քարտեզի վրա, Վասիլի Մաքսիմո-

վիչ, այս գյուղը չի նշված։ Մենք կարող ենք անհարմար դրության մեջ ընկնել։

Գրիգորին չլսեց գնդապետի պատասխանը։ Ադյուտանտը հասավ նրանց ու առաջ սլացավ։ Նրա ձին ետին ձախ ոտի վրա էր ընկնում։ Գրիգորին մեքենայաբար որոշեց ադյուտանտի ձիու որակը։

Հեռվում, դաշտի թեք լանջի տակ երևացին մի փոքրիկ գյուղի խրճիթները։ Գունդը գնում էր փոփոխակի արագությամբ, ձիերը զգալիորեն քրտնել էին։ Գրիգորին ձեռքով շոշափում էր իր թխլիկի սև վիզը, այս ու այն կողմ էր նայում։ Գյուղից դենը երևում էին անտառի կատարները, որոնք կանաչ սայրերով խրվել էին երկնքի կապույտ գմբեթի մեջ։ Անտառից դենը որոտում էին հրանոթները. հիմա այդ որոտն արդեն ցնցում էր ձիավորների լսողությունը, ձիերին ստիպում էր լարել ականջները, մեջեմեջ ճայթում էին հրացանային համազարկերը։ Անտառի ետևում, հեռո՜ւ-հեռվում ցնդում էր շրապնելի պայթյունների ծուխը, հրացանային համազարկերը անցնում էին անտառի աջ կողմը, հանդարտում էին և ուժեղանում։

Գրիգորին սուր կերպով էր զգում յուրաքանչյուր ձայնը, խոցող զգացմունքներից պիրկ լարվում էին նրա ջղերը։ Պրոխոր Զիկովը թամքի վրա դես-դեն էր ընկնում, անլռելի շաղակրատում։

— Գրիգորի, կրակում են, ոնց որ թե տղերքը դագանակով խփում են ցցապատին։ Այնպես չէ՞։

— Սո՛ւս, է՛, զավզա՛կ։

Հարյուրյակը ձգվեց դեպի գյուղը։ Բակերում վխտում են զինվորները. խրճիթներում իրարանցում է. գյուղացիները պատրաստվում են մեկնելու։ Ամենուրեք բնակիչների դեմքերին դրոշմված էին հուզմունքն ու շփոթությունը։ Գրիգորին անցնելիս մի բակում տեսավ, որ զինվորները կրակ էին վառել մարագի կտուրի տակ, իսկ խրճիթատերը՝ բարձրահասակ, ալեհեր մի բելոռուս,— հանկարծակի դժբախտությունից ճզմված, անցնում էր նրանց կողքից և ուշադրություն չէր դարձնում։ Գրիգորին տեսավ, թե ինչպես նրա ընտանիքը սայլի վրա էր գցում կարմիր երեսներով բարձերը, այլևայլ իրեր, իսկ խրճիթատերը հոգատարությամբ տանում էր ա-

նիվի ջարդված մի շրջանակ, որը ոչ ոքի էլ հարկավոր չէր, գուցեն տասնյակ տարիներ ընկած էր եղել մառանում։

Գրիգորին զարմանում էր կանանց տխմարության վրա, նրանք դեպի սայլերն էին տանում ծաղկամանները, սրբապատկերները ու խրճիթներում թողնում անհրաժեշտ ու արժեքավոր իրերը։ Փողոցով մեկ ձյան բուքի նման սահում էր դոշակի միջից ինչ-որ մեկի թափած բմբուլը։ Խանձված մրուրի և մառանների նեխահոտ էր տարածված։ Գյուղից դուրս գնալիս հանդիպեց դեմուդեմ վազող մի հրեա։ Նրա բերանի բարակ, ասես թրով բացած ճեղքից դուրս թռավ ճիչը։

— Պարո՛ն կոզակ, պարո՛ն կոզակ, ա՛խ աստ-վա-ա՜-ած իմ։

Փոքրամարմին, կլորագլուխ մի կազակ ձին արագ քշում էր՝ թափահարելով մտրակը, ուշադրություն չդարձնելով ճչոցի վրա։

— Կա՛նգ առ,— կազակի վրա գոռաց երկրորդ հարյուրյակի փոխ-յասավուլը։

Կազակը կռացավ թամքի դաշի վրա ու շուռ եկավ դեպի նրբանցքը։

— Կա՛նգ առ, սրիկա։ Ո՞ր գնդից ես։

Կազակի կլոր գլուխն ընկավ ձիու վզին։ Նա, ինչպես ձիարշավի ժամանակ, ձին քշեց կատաղի քառատրոփով, բարձր ցանկապատի մոտ ծառս արավ նրան ու ճարպկությամբ թռավ ցանկապատի մյուս կողմը։

— Այստեղ իններորդ գունդն է, ձերդ բարեծննդություն։ Անպատճառ այդ գնդից կլինի,— զեկուցեց վախմիստրը փոխ-յասավուլին։

— Չհաննա՛մը։— Փոխ-յասավուլը կնճռոտեց ճակատը ու դիմեց հրեային, որ ընկել էր նրա ձիու ասպանդակին,— Նա ի՞նչ տարավ քեզանից։

— Պարոն սպա... ժամացույցս, պարոն սպա...— Հրեան գեղեցիկ շիկակարմրավուն դեմքը դարձնելով դեպի մոտեցող սպաները, արագ-արագ թարթում էր աչքերը։

Փոխ-յասավուլը ոտով դեն տարավ ասպանդակը, առաջ շարժվեց։

— Գերմանացիք կգան, միևնույն է, կվերցնեն,— հեռանալով ու բեղի տակին ժպտալով ասաց նա։

Հրեան շփոթված կանգնել էր փողոցի մեջտեղում։ Նրա երեսը դողում էր։

— Ճամփա տո՛ւր, պարոն ջհուդ,— խստորեն բղավեց հարյուրյակի հրամանատարը ու բարձրացրեց մտրակը։

Չորրորդ հարյուրյակը սմբակների թքթքոցով, թամքերի ճռոցներով անցավ նրա կողքից։ Կազակները հեգնանքով, շեղակի նայում էին իրեն կորցրած հրեային, խոսքեր էին փոխանակում։

— Մերոնք չեն կարող ապրել առանց մի բան թոցնելու։

— Կազակին ամեն բան սազում է։

— Թող լավ պահեր ժամացույցը։

— Բա այն ճարպիկը...

— Ցանկապատից ո՞նց թռավ բարակ շան պես։

Վախմիստր Կարգինը մի քիչ ետ մնաց հարյուրյակից ու կազակների շարքերով մեկ հնչող ծիծաղի տակ իջեցրեց տեզը։

— Փախիր, ջհուդ, թե չէ կմորթեմ...

Հրեան վախից հորանջեց ու փախավ։ Վախմիստրը հասավ նրան, ետևից դաղեց մտրակով։ Գրիգորին տեսավ, թե ինչպես հրեան սայթաքեց ու ձեռներով դեմքը ծածկելով, շուռ եկավ դեպի վախմիստրը։ Նրա բարակ մատների միջից առատորեն բխեց արյունը։

— Ինչի՞ համար, հը՞... — հեկեկող ձայնով բղավեց նա։

Վախմիստրը ժպտաց պետական կոճակների նման կլոր, ուրուրի իր աչքերով, հեռանալիս պատասխանեց.

— Բոբիկ մի՛ման գա, հիմա՛ր։

Գյուղից դենը, ձորահովտում, որ ծածկված էր դեղին ջրաշուշաններով ու բոշխով, սակրավորները ավարտում էին ընդարձակ կամրջի կառուցումը։ Այնտեղից ոչ հեռու, շաչելով ու ցնցվելով, կանգնած էր մի ավտոմոբիլ։ Դրա մոտ դես-դեն էր ընկնում վարորդը։ Նստելատեղում, գլուխը ետ գցած, կիսապառկել էր հաստ, ալեհեր մի գեներալ՝ այծամորուքով ու տոպրակի պես կախ ընկած թշերով։ Նրա կողքին, ձեռները քունքերին դրած, կանգնել էին 12-րդ գնդի հրամանատար գնդապետ Կալեդինը և սակրային զումար-

տակի հրամանատարը։ Գեներալը տնտղելով դաշտային պայուսակի փոկը, բարկացած բղավում էր՝ դիմելով սակրավոր սպային։

— Ձեզ հրամայված էր դեռ երեկ վերջացնել աշխատանքը։ Լռե՛լ։ Շինանյութը բերելու մասին դուք առաջուց պետք է հոգայիք։ Լռե՛լ,— որոտում էր գեներալը, չնայելով, որ սպան բերանը փակած, միայն շրթունքներն էր դողացնում։ — Իսկ այժմ ես ինչպե՞ս պիտի անցնեմ ձորի մյուս կողմը, հը՞... Ես ձեզ հարցնում եմ, կապիտան, ի-ի-ի՞նչպես պիտի անցնեմ...

Գեներալի ձախ կողմում նստած երիտասարդը, սև բեղերով մի այլ գեներալ վառեց լուցկին՝ կպցնելով սիգարը, ու ժպտալով։ Սակրավոր կապիտանը ծռվելով. ինչ-որ բան էր ցույց տալիս կամրջի կողմը։ Հարյուրյակն անցավ նրանց կողքից, կամրջի մոտ իջավ ձորահովիտը։ Մուգ-սև ցեխը ձիերի ծնկներից վեր էր հասնում, վերևից, կամրջից սոճու տաշեղների սպիտակ չոփեր էին թափվում կազակների վրա։

Կեսօրին անցան սահմանը։ Ձիերը ցատկում էին սահմանագծի տապալված, շերտավոր սյան վրայով։ Աջ կողմից հրանոթային որոտմունք էր լսվում։ Հեռվում կարմրին էին տալի մի կալվածատան կղմինդրե կտուրները։ Արևը ուղղահայաց ընկնող ճառագայթներով շամփրում էր հողը։ Նստում էր դառն, թանձր փոշին։ Գնդի հրամանատարը հրաման տվեց գլխային դետք ուղարկել։ Չորրորդ հարյուրյակից գնաց երրորդ դասակը դասակապետ սպայի՝ հարյուրապետ Սեմյոնովի հետ։ Ետևում, փոշու գորշ մուժում մնաց հարյուրյակների բաժանված գունդը։ Ավելի քան քսան կազակներից բաղկացած ջոկատը, անցնելով կալվածատնից, սլացավ ճանապարհով, որ ակոսված էր չորացած անվահետքերով։

Հարյուրապետը հեծյալ դետքը տարավ երեք վերստ ու կանգ առավ՝ քարտեզի վրա ստուգելով իր ընթացքը։ Կազակները հավաքվեցին ծխելու։ Գրիգորին իջավ ձիու փորքաշը թուլացնելու, բայց վախմիստրը փայլող աչքերը չռեց նրա վրա։

— Ես քեզ գրողի ծոցը կուղարկեմ։ Հեծի՛ր ձիդ։

Հարյուրապետը վառեց ծխախոտը, երկար սրբեց պատ-

յանից հանած հեռադիտակը։ Նրանց առջև տարածված էր կեսօրվա տապից տոչորվող հարթավայրը։ Աջ կողմում փռված էր անտառի փեշը, դրա մեջ էր խրվում ճանապարհն՝ այն կողմի իր սիրված ծայրով։ Նրանցից մեկուկես վերստ հեռավորությամբ երևում էր մի փոքրիկ գյուղ, դրա կողքին՝ գետակի առափնյա կավագույն, կտրատված ու բոլորաձև մի զառիթափ, ու ասես, զգացվում էր ջրի ապակե զովությունը։ Հարյուրապետը երկար դիտում էր հեռադիտակով, զննում դատարկ, մեռած փողոցները, բայց այնտեղ ամայություն էր ինչպես գերեզմանոցում։ Դեպի իրեն էր կանչում հրապուրիչ կերպով կապույտին տվող ջրաշերտը։

— Երևի դա Կորոլյովկա՞ն է։— Հարյուրապետը աչքերով ցույց տվեց գյուղը։

Վախմիստրը լուռ մոտեցավ նրան։ Նրա դեմքի արտահայտությունն առանց բառերի ասում էր՝ «Դուք ավելի լավ կգիտենաք։ Դա մեր ի՞նչ խելքի բանն է»։

— Անցնենք այնտեղ,— տատանվելով ասաց հարյուրապետը՝ հեռադիտակը դնելով պատյանի մեջ ու կնճռոտելով դեմքը, ինչպես այդ անում են ատամի ցավից։

— Նրանց ճանկը չե՞նք ընկնի, ձերդ բարեծննդություն։

— Զգույշ կգնանք։ Դեհ, հա՛յդա։

Պրոխոր Զիկովը Գրիգորիից պակ չէր գալի։ Նրանց ձիերն իրար կողքի էին գնում։ Զգուշությամբ մտան ամայացած փողոցը։ Յուրաքանչյուր պատուհան գնդակով էր սպառնում, մարագների յուրաքանչյուր բացված դռանը նայելիս՝ այդ դուռը մենակության զգացում և մեջքի ողնաշարի գարշ դող էր առաջացնում։ Ցանկապատերն ու փոսերը մագնիսի նման դեպի իրենց էին քաշում հայացքները։ Գյուղ մտան գիշատիչների նման,— այդպես ձմեռային կապույտ գիշերով բնակարանների մոտ երևում են գայլերը,— բայց փողոցները դատարկ էին։ Շշմեցնող լռություն էր տիրում։ Մի տան բաց պատուհանից լսվեց պատի ժամացույցի միամիտ զարկը, նրա ձայնը տրաքեց կրակոցների պես, ու Գրիգորին նկատեց, թե ինչպես հարյուրապետը, որ առջևից էր գնում, ցնցվեց, ձեռքը ջղաձգաբար տարավ ատրճանակի պատյանին։

Գյուղում ոչ մի մարդ չկար։ Դետքը անցավ գետակի

ծանծաղ տեղից, ջուրը մինչև ձիերի փորն էր հասնում, դրանք հաճույքով մտնում էին ջուրը և ընթացքի ժամանակ խմում էին այն, ձիավորները խթանում, քշում էին նրանց։ Գրիգորին ագահությամբ նայում էր պղտորված ջրին. մոտիկ ու անմատչելի այդ ջուրը անհաղթահարելիորեն դեպի իրեն էր քաշում։ Եթե կարելի լիներ, նա թամքից ցած կթռներ, առանց հանվելու կպառկեր մեղմիվ ծփող կոհակների տակ, այնպես, որ մեջքի և քրտինքով թրջված կրծքի վրա պաղություն ու սարսուռ զգար։

Գյուղից դենը, բլուրից երևում էր մի քաղաք՝ թաղերի քառակուսիները, աղյուսե, շենքերը, այգիների ծառախմբերը, կոստյոլների գմբեթները։

Հարյուրապետը հասավ բլուրի փոս ընկած գագաթը, հեռադիտակը դրեց աչքերին։

— Հրե՛ն նրանք,— գոչեց նա՝ դողացնելով ձախ ձեռքի մատները։ Վախմիստրը ու նրա ետևից կազակները մեկ-մեկ բարձրանում էին արևավառ գագաթը, դիտում էին։ Փողոցներում, որ այստեղից խիստ փոքր էին երևում, վխտում էին մարդիկ, շարժվում էին գումակները, սլանում հեծյալները։ Գրիգորին աչքերը կկոցած, նայում էր ձեռքի տակից, նա նշմարում էր նույնիսկ համազգեստների գորշ, օտար գույնը։ Քաղաքի մոտ սևին էին տալի խրամատների խանդակները, դրանց վրա վխտում էին մարդիկ։

— Ինչքան շա՛տ են... — զարմացած ասավ Պրոխորը։

Մնացածները մի զգացման բռունցքի մեջ սեղմված՝ լռում էին։ Գրիգորին ականջ էր դնում սրտի արագ զարկին (կարծես մի ինչ-որ խոքրիկ, բայց ծանր մարդ տեղում վալք էր կատարում այնտեղ, կրծքի ձախ կողմում) ու գիտակցում էր, որ այն օտար մարդկանց նայելիս իրեն բոլորովին այլ զգացում է տիրում, քան այն զգացումը, որ նա ապրում էր մանևրների ժամանակ՝ տեսնելով «հակառակորդին»։

Հարյուրապետը մատիտով ինչ-որ նշումներ էր անում դաշտային տետրում։ Վախմիստրը կազակներին բլուրից ներքև տարավ իջեցրեց ձիերից, բարձրացավ ու մոտեցավ հարյուրապետին։ Սա մատով կանչեց Գրիգորիին։

— Սելե՛խով։

— Այստե՛ղ եմ։

Գրիգորին բարձրացավ բլուրը՝ ձգելով ընդարմացած ոտները։ Հարյուրապետը չորս տակ ծալած մի թուղթ տվեց նրան։

— Քո ձին մյուս ձիերից ավելի լավն է։ Քառատրոփով սա տար գնդի հրամանատարին։

Գրիգորին թուղթը դրեց կրծքի գրպանը, իջավ դեպի ձին՝ գլխարկի փոկը անցկացնելով կզակի տակ։

Հարյուրապետը նայեց նրա ետևից, սպասեց, մինչև որ Գրիգորին նստեց ձիուն, ու նայեց ձեռքի ցանցապատ ժամացույցին։

Գունդը դեպի Կորոլյովկա էր շարժվում, երբ Գրիգորին տեղ հասցրեց զեկուցագիրը։

Գնդապետ Կալեդինը կարգադրություն արեց ադյուտանտին, և սա ձիով, փոշի բարձրացնելով, սլացավ դեպի առաջին հարյուրյակը։

Չորրորդ հարյուրյակը անցավ Կորոլյովկայով ու դրա շրջակայքում ծավալվեց արագությամբ, ինչպես վարժությունների ժամանակ։ Հարյուրապետ Սեմյոնովը երրորդ դասակի կազակների հետ վերադարձավ բլուրից։

Հարյուրյակը հավասարացնում էր իր պայտաձև շարքը։ Ձիերը թափահարում էին գլուխները,— պիծակը կծում էր նրանց. սանձերը չխկչխկում էին։ Կեսօրվա անդորրության մեջ խուլ դոփում էր առաջին հարյուրյակը, որն անցնում էր գյուղի վերջին տներից։

Փոխ-յասավուլ Պոլկովնիկովը ցատկոտող, բարեկազմ ձիով դուրս եկավ շարքի առաջ. պինդ քաշելով սանձը, ձեռքը տարավ թրակոթին։ Գրիգորին շունչը պահած, հրամանի էր սպասում։ Ձախ թևում մեղմ դոփում էր առաջին հարյուրյակը, ծավալվում էր, պատրաստվում։

Փոխ-յասավուլը պատյանից դուրս քաշեց թուրը, շեղբը դժգույն դողաց կապույտ փայլով։

— Հա-ա՛-ր-յու-ու-ր-յա՛-ակ։— Թուրը ծռվեց դեպի աջ, ձախ ու ընկավ առաջ, օդում մնալով ձիու շիտակ բարձրացած ականջներից վերև։ «Ցրիվ շարքով առա՛ջ», — Գրիգորին մտքում կրկնեց համր հրամանը։ — Տեգերը՝ մարտի՛, թրերը հանե՛լ, նետվել գրոհի, մա՛րշ-մա՛րշ, — հրաման տվեց յասավուլը և բաց թողեց ձիու գլուխը։

Նուլ տնքաց բազմաթիվ սմբակների տակ խաչված երկիրը։ Գրիգորին հազիվ կարողացավ իջեցնել տեգը (նա ընկել էր առաջին շարքը), երբ ձին մյուս ձիերի հորդուն հեղեղով տարված, սլացավ ամբողջ արագությամբ։ Առջևում, դաշտի գորշ գույնի ֆոնի վրա թրթռում էր փոխ-յասավուլ Պոլովնիկովը։ Անզսպելիորեն դեմուդեմ էր թռչում դաշտի սև հերկը։ Առաջին հարյուրյակը «ուռա» աղաղակեց որոտընդոստ, ծոր տվող ձայնով, չորրորդ հարյուրյակը արձագանքեց աղաղակին։ Ձիերը սլանում էին ոտները կծկելով ու բանալով, ետ շպրտելով սաժենները։ Գրիգորին ականջների սուր ղժժոցի միջից լսեց դեռևս հեռավոր կրակոցների ճայթյունները։ Առաջին գնդակը սուլելով անցավ բարձրից, գնդակների ծոր տվող սվսվոցը ակոսում էր երկնքի ապակի մուժը։ Գրիգորին տեգի տաք կոթը ցավ զգալու չափ սեղմում էր կողքին, ձեռքի ափը քրտնում էր, ասես դրան լորձնոտ հեղուկ էր քսված։ Գլխավերևից թռչող գնդակների սվսվոցը նրան ստիպում էր գլուխը թեքել ձիու թաց վզին, ձիու քրտնքի սուր հոտը խփում էր նրա քթածակերին։ Ասես հեռադիտակի քրտնակալած ապակիների միջով նա տեսնում էր խրամատների թուխ շարքը, մոխրագույն հագուստով մարդկանց, որոնք փախչում էին դեպի քաղաք։ Գնդացիրը կազակների գլխավերևում անդադար շաղ էր տալիս սվսվացող գնդակները. դրանք ձիերի առջևում ու ոտների տակ փոշի էին բարձրացնում, — ասես գետնից բամբակե փաթիլներ էին պոկում։

Այնտեղ, Գրիգորիի կրծքավանդակի մեջտեղում կարծես փայտացել էր այն, ինչ որ մինչև գրոհը անհանգիստ մղում էր արյունը, նա ոչինչ չէր զգում, բացի ականջների դղժոցից ու ձախ ոտի մատների ցավից։

Երկյուղից ամլացած միտքը ծանր, քարացող մի կծիկ էր առաջացնում գլխի մեջ։

Առաջինը ձիուց ընկավ խորունժի Լյախովսկին։ Պրոխորը սլացավ նրա վրա։

Ետ նայելով, Գրիգորիի հիշողության մեջ տպավորվեց իր տեսածի մի բեկորը. Պրոխորի ձին ցատկելով գետնին փռված խորունժիի վրայից, բացեց ատամները, վիզը թեքեց ու ընկավ։ Ցնցումը թամքից գետին շպրտեց Պրոխորին։ Ինչպես ալմաստն է ապակին կտրում, այնպես էլ Գրիգորիի հիշողությունը տեղի ունեցող իրադարձությունից կտրեց ու իր մեջ երկար ժամանակով պահեց Պրոխորի ձիու վարդագույն լինդերը ու ատամների բացված սալերը, երեսի վրա ընկած Պրոխորին, որին սմբակներով տրորեց ետևից սլացող կազակի ձին։ Գրիգորին չլսեց ճիչը, բայց Պրոխորի դեմքից, որը ծռմռված բերանով և ակնակապիճներից դուրս ընկած՝ հորթի աչքերով սեղմվել էր գետնին, հասկացավ, որ նա անմարդկային-վայրենի ճիչ էր արձակել։ Էլի՛ ու էլի ընկնում էին։ Ընկնում էին կազակները ու ձիերը։ Քամու ուղղված արցունքների փառի միջից Գրիգորին նայում էր դեպի առաջ, խրամատներից փախչող ավստրիացիների գորշ խմբերին։

Հարյուրյակը, որ գյուղից դեպի առաջ էր նետվել ներդաշնակ շարքերով, ցրիվ էր գալի, մաս-մաս էր լինում։ Առջևի կազակները նրանց թվում նաև Գրիգորին, մոտենում էին խրամատներին, մնացածները դոփդոփում էին հեռվից, ետևում։

Բարձրահասակ, սպիտակ հոնքերով մի ավստրիացի, կեպին աչքերին քաշած, համարյա դեմուդեմ, ծնկած կրակեց Գրիգորիի վրա։ Արճճի կրակը դաղեց վերջինիս այտը։ Գրիգորին շարժեց տեգը, ամբողջ ուժով ետ քաշելով սանձը։ Հարվածն այնքան ուժեղ էր, որ տեգը, խոցելով վեր թռած ավստրիացուն, մինչև կոթի կեսը խրվեց նրա մեջ։ Գրիգորին հարվածը հասցնելուց հետո չկարողացավ տեգը դուրս քաշել և իջնող մարմնի ծանրության տակ այն ցած գցեց, զգալով նրա վրա ավստրիացու դողն ու ջղաձգությունները, տեսնելով թե ինչպես ավստրիացին ամբողջովին դեպի ետ ընկած (երևում էր միայն սուր չսափրված կզակը), կեռված մատներով տնտղում, շանգռում է տեգի կոթը։ Գրիգորին մատները բաց անելով, փայտացած ձեռքը տարավ թրի երախակալին։

Ավստրիացիները փախչում էին քաղաքի արվարձանի փողոցները։ Կազակների ձիերը ծառս էին լինում նրանց համազգեստների գորշ զանգվածների վրա։

Տեգը վար գցելուց հետո առաջին րոպեին Գրիգորին,

ինքն էլ չգիտենալով ինչի համար, շուռ տվեց ձին։ Նրա աչքովն ընկավ իր կողքից սլացող, բերանը բացած վախ-միստրը։ Գրիգորին թրի տափակ կողմով խփեց իր ձիուն։ Ձին վիզը թեքելով, նրան տարավ մի փողոցի երկարությամբ։

Այգու երկաթե ցանկապատի կողքից, ճոճվելով, ինքն իրեն կորցրած, առանց հրացանի փախչում էր մի ավստրիացի, կեպին բռունցքով սեղմած։ Գրիգորին տեսավ ավստրիացու ծոծրակը, որ ետևից կախ էր ընկել, տեսավ քրտինքից թրջված նրա օձիքը։ Գրիգորին հասավ նրան։ Շուրջը տեղի ունեցող խելահեղությունից կրակված, բարձրացրեց թուրը։ Ավստրիացին փախչում էր ցանկապատի երկարությամբ, Գրիգորիի համար անհարմար էր նրան թրատել ձախ ձեռքից, բայց նա, թամքից կախ ընկնելով, թուրը թեք բռնած, նրանով խփեց ավստրիացու քունքին։ Վերջինս առանց ճչալու ձեռները սեղմեց վերքին ու միանգամից մեջքը դարձրեց դեպի ցանկապատը։ Չկարողանալով զսպել ձիուն, Գրիգորին անցավ նրա կողքից. շուռ գալով, ձին ավելի դանդաղ քշեց։ Ավստրիացու քառակուսի, ասես վախից երկարած դեմքը շուգունի պես սևին էր տալիս։ Նա ձեռները կախել էր շալվարի վրա, արագ շարժում էր մոխրագույն շրթունքները։ Շեղակի վրա բերած թուրը նրա քունքից կտրել էր մաշկը. մաշկը կարմիր լաթի նման կախվել էր թշի վրա։ Արյունը ծուռումուռ առվի նման հոսելով, ողողում էր համազգեստը։

Գրիգորիի հայացքը հանդիպեց ավստրիացու հայացքին։ Վերջինիս աչքերը, մահվան սարսափով լեցուն, մեռած հայացքով նրան էին նայում։ Ավստրիացին դանդաղ ծռում էր ծնկները, նրա կոկորդից խուլ խռխռոց էր լսվում։ Գրիգորին աչքերը կկոցելով, վրա բերեց թուրը։ Ուժեղ թափ առնելուց հետո տրված զարկը երկու կես արեց ավստրիացու գանգը։ Ավստրիացին ընկավ թևերը տարածելով, ասես սայթաքել էր։ Գանգի տուփի երկու մասերը խուլ թխկոցով խփվեցին սալահատակի քարերին։ Ձին ցատկեց, փնչաց, Գրիգորիին տարավ փողոցի մեջտեղը։

Փողոցներում ճայթում ու հետզհետե դադարում էին կրակոցները։ Փրփրակալած մի ձի Գրիգորիի կողքից տա-

նում էր մի կազակի դիակը։ Կազակի ոտը մնացել էր ասպանդակի մեջ, ու ձին նրա ջարդված, մերկացած դիակը քարշ էր տալիս քարերի վրայով։

Գրիգորին տեսնում էր միայն լամպասի կարմիր շերտը ու պատառոտված, կանաչ բլուզը, որ գլխից վերև գունդ ու կծիկ էր եղել։

Գրիգորիի գլուխն ասես արճիճով էր լցվում։ Նա իջավ ձիուց ու թափահարեց այն։ Նրա կողքից ձիերով անցնում էին վրա հասած երրորդ հարյուրյակի կազակները։ Շինելի վրա պառկեցրած մի վիրավոր էին տանում, արագ քշում էին գերի ավստրիացիների ամբոխը։ Սրանք վազում էին իրար գլխի հավաքված, գորշ նախրի պես, և անուրախ-օտարոտի էր հնչում նրանց պայտած կոշիկների դոփյունը։ Նրանց դեմքերը Գրիգորիի աչքում միախառնվում էին իբրև դոնդողանման, կավագույն մի բիծ։ Նա թողեց սանձը, ու ինքն էլ չիմանալով ինչու համար, մոտեցավ իր սպանած ավստրիական զինվորին։ Սա ընկած էր նույն տեղում, վանդակավոր, երկաթե ցանկապատի մոտ, կեղտոտ, կինամոնագույն ձեռքը պարզած,— ասես ողորմություն խնդրելու համար։ Գրիգորին նայեց նրա դեմքին։ Այդ դեմքը նրան թվաց փոքրիկ, համարյա մանկական՝ չնայելով կախ ընկած բեղերին ու չգիտես տանջանքից թե նախկին անուրախ կյանքից տառապանք արտահայտող, ծռմռված, կոշտ բերանին։

— Է՛յ, գո՛ւ,— բղավեց փողոցի մեջտեղից անցնող կազակական մի անծանոթ սպա։

Գրիգորին նայեց նրա սպիտակ, փոշոտված գդականիշին ու սայթաքելով քայլեց դեպի իր ձին։ Մոլոր ու ծանր էր քայլում նա, ասես ուսերին ուժից վեր մի բեռ էր դրված, նողկանքն ու տարակուսանքը տրորում էին նրա հոգին։ Նա ձեռքն առավ կորաձև ասպանդակը ու երկար ժամանակ չէր կարողանում բարձրացնել ծանրացած ոտը։

VI

Տատարսկի խուտորի ու շրջակա խուտորների ծառայության երկրորդ հերթի կազակները տներից մեկնելու երկրորդ օրը գիշերեցին Եյա խուտորում։ Տատարսկի խուտորի

ներքին մասի կազակները առանձնացած էին վերին մասի կազակներից։ Այս պատճառով էլ Պետրո Մելեխովը, Անիկուշկան, Խրիստոնյան, Ստեփան Աստախովը, Իվան Տամիլինը և մնացածները կանգ էին առել մեկ բնակարանում։ Տանտերը,— բարձրահասակ, զառամյալ, թուրքական պատերազմին մասնակցած մի ծերունի, նրանց հետ խոսակցություն սկսեց։ Կազակները խոհանոցում և օթախում կարպետները փռած, արդեն պառկել էին, վերջին անգամ ծխում էին քնելուց առաջ։

— Ջա՛ն, տղերք, ուրեմս կռիվ եք գնում, էլի՞։

— Կռիվ ենք գնում, պապի։

— Հարկ է որ այս կռիվը նման չի լինի թուրքի կռվին, չէ՞։ Հիմի ի՞նչ տեսակ զենքեր կան, հա՞-ա։

— Դե՛հ, մեկ է էլի՞։ Ոնց որ թուրքի կռվին էին տանում խալխին, այնպես էլ հիմի կլինի,— հայտնի չէ ում վրա չարացած, ասավ Տամիլինը։

— Է՞, որդի, անխելք բան ես ասում։ Ուրի՛շ տեսակ կռիվ կլինի։

— Դեհ, իհարկե,— ծուլորեն, հորանջելով այդ հաստատեց Խրիստոնյան՝ եղունգի վրա հանգցնելով ծխախոտը։

— Կռվե՛նք, էլի՞,— հորանջեց Պետրո Մելեխովը, ու բերանի վրա խաչակնքելով, շինելը քաշեց վրան։

— Ես ձեզ ա՛յ թե ինչ եմ խնդրում, զավակներս։ Շատ եմ խնդրում, և դուք խոսքս միտներդ պահեք,— ասաց պապին։

Պետրոն շուռ տվեց շինելի փեշը, ականջ դրեց։

— Հիշեցեք մի բան. եթե ուզում ես կենդանի մնալ, մահացու կռվից անվնաս դուրս գալ, պետք է մարդկային արդարությո՛ւնը պաշտպանես։

— Ի՞նչ արդարություն,— հարցրեց Ստեփան Աստախովը, որ պառկել էր ծայրից։ Նա ժպտում էր անվստահորեն։ Նա սկսել էր ժպտալ այն րոպեից, երբ լսեց պատերազմի մասին։ Պատերազմը հրապուրում էր նրան, ու ընդհանուր հուզմունքը, ուրիշի ցավը մեղմում էին իր սեփական ցավը։

— Ա՛յ թե ինչ. պատերազմում ուրիշի իրերը մի՛ վերցնի,— այս մեկ։ Աստված չանի կանանց ձեռք տաս, ու մեկ էլ պետք է գիտենաս հարկավոր աղոթքները։

Կազակները շուռ եկան, բոլորն էլ իսկույն սկսեցին խոսել։

— Մեր ունեցածը շա՞տ պահեցինք, մնաց ուրիշից իրեր վերցնելը։

— Իսկ ինչի՞ չի կարելի կանանց ձեռք տալ։ Զոռով չի կարելի, ես այդ հասկանում եմ, բա որ բարի կամքով լինի՞։

— Լա՛վ, ո՞նց համբերես։

— Հենց այդ է, է՞։

— Բա աղո՞թքը. ի՞նչ տեսակ է դա։

Պապը աչքերին խիստ արտահայտություն տվեց, բոլորին միանգամից պատասխանեց.

— Կանանց ամենևին չի կարելի ձեռք տալ։ Ամենևի՞ն։ Որ չհամբերես, գլուխդ կկորցնես կամ վերք կստանաս, հետո խելքի կգաս, ամա ուշ կլինի։ Աղոթքը կասեմ։ Թուրքի ամբողջ կռվում եղա, մահը խուրջինի պես կախված էր վզիցս, ու այդ աղոթքի միջոցով կենդանի մնացի։

Ծերունին գնաց օթախը, քրքրեց սրբապատկերների դարակը ու բերեց ճխլտված, հնությունից սևացած մի թերթ թուղթ։

— Ահա։ Վե՛ր կացեք, արտագրեցեք։ Վաղը երևի մինչև աքլորների կանչը կգնաք։

Պապին սեղանի վրա ձեռքի ափով հարթեց ճխլտված թուղթը ու ետ քաշվեց։ Առաջինը վեր կացավ Անիկուշկան։ Նրա մերկ, կանացի դեմքի վրա երերվում էին լամպից ընկած ստվերները. պատուհանի ճեղքից թափանցող քամին օրորում էր լամպի լույսը։ Նստեցին ու արտագրեցին բոլորը, բացի Ստեփանից։ Անիկուշկան, որ մնացածներից շուտ էր արտագրել, կոլոլեց տետրակից պոկած թուղթը, կապեց կրծքի խաչի քուղին, խաչից վերև։ Ստեփանը ոտը ճոճելով ծաղրում էր նրան։

— Ուչիլների օթևան սարքեցիր, էլի։ Ղայթանի վրա նրանք չեն կարող ապրել, և դու նրանց համար թղթե խրճիթ շինեցիր, տո՛ւնդ չքանդվի, հա՞։

— Է՛յ, ջահե՛լ, որ չես հավատում, սուս կաց,— խստորեն ընդհատեց պապին,— դու ուրիշին արգելք մի՛ լինի ու հավատի վրա մի՛ ծիծաղի։ Ամոթալի բան է դա ու մեղք է։

Ստեփանը ժպտալով լռեց. անհարմար դրությունը հարթելու համար Անիկուշկան հարցրեց ծերունուն.

— Այստեղ, աղոթքի մեջ խոսք կա մզրախի ու նետի մասին։ Այդ ինչի՞ համար է։

— Հարձակման աղոթքը մեր ժամանակներում չի հորինված։ Իմ լուսահոգի պապին նրա պապից է մնացել։ Կարելի է դրանից առաջ է՞լ էր եղել այդ աղոթքը։ Հնումը մզրախներով ու նետերով էին կռվի գնում։

Աղոթքները արտագրվեցին ընտրությամբ, — ամեն մեկն արտագրեց այն, ինչ որ իրեն դուր էր գալիս։

ՀՐԱՑԱՆԻ ԱՂՈԹՔԸ

Օրհնյա՛, տեր։ Սարի վրա ընկած է մի քար, ոնց որ ձի։ Քարի մեջ չուր չի մտնում, այնպես էլ իմ, աստծո ծառայիս մեջ և իմ ընկերների, իմ նժույգի մեջ թող չմտնեն նետն ու գնդակը։ Ոնց որ մուրճն է գնդանից ետ թռչում, այնպես էլ ինձանից թող ետ թռչի գնդակը. ոնց որ չաղացաքարերն են պտտվում, այնպես էլ թող պտտվի նետը ու չհասնի ինձ։ Արևն ու լուսինը պայծառ են, ես էլ, աստծու ծառան, ուժ եմ առնում նրանցից։ Սարի ետևում կա մի ամրոց, կփակեմ այն ամրոցը, բանալին կգցեմ ծովը, Ալտոր ճերմակ քարի տակ, որը տեսանելի չէ ոչ կախարդին, ոչ կախարդուհուն, ոչ սևագլխին[1], ոչ միանձնուհուն։ Ծվկիան-ծովից չուրը չի վազում, ու դեղին ավազին հաշիվ չկա, այդպես էլ ինձ, աստծո ծառայիս, ոչինչ չի հաղթի։ Հանուն հոր և որդո և հոգույն սրբո։ Ամեն։

ՄԱՐՏԻ ԱՂՈԹՔԸ

Կա մի ծով-օվկիանոս, այն ծով-օվկիանոսում կա Ալտոր սպիտակ քարը, այն Ալտոր քարի վրա կա քարե մի մարդ հին-հին տոհմից։ Աստծու ծառայիս և իմ ընկերներին քարե հագուստ հագցրու արևելքից մինչև արևմուտք, երկրից մինչև երկինք. պաշտպանյա սուր սուսերից ու սրից, պողպատ նիզակից ու մզրախից, չրդեղած ու չչրդեղած տեգից, դանակից, կացնից ու թնդանոթի զարկից. արճճե գնդակներից ու դիպուկ զենքերից. բոլոր նետերից՝ արծվի, կարապի, սագի, կռունկի, լորի, ագռավի փետուրով փետրած. թուրքի կոիվներից, Ղրիմի ու ավստրիական, թաթարական ու լիտվական, գերմանական, կալմիկական և ուրիշ ամեն մի ոսոխից։ Սուրբ հայրեր ու երկնային ուժեր, պաշտպանեցեք ինձ, աստծո ծառայիս։ Ամեն։

[1] Սևագլուխ — միանձն, վարդապետ։

ՀԱՐՁԱԿՄԱՆ ԱՂՈԹՔԸ

Ամենաանարատ տիրամայր սուրբ աստվածածին և տերն մեր Հիսուս Քրիստո՛ս։ Տեր, օրհնյա աստծու ծառայիս, որ հարձակման է գնում, և ինձ հետ գնացող ընկերներիս, ծածկիր ամպով, պաշտպանիր քո երկնային քարե սուրբ կարկուտով։ Ո՛վ սուրբ Դմիտրի Սոլունցկի, պաշտպանիր ինձ, աստծու ծառայիս, ու ընկերներիս բոլոր չորս կողմերում. քաջ մարդիկ թող մեզ ոչ գնդակով խփեն, ոչ մզրախով խոցեն, ոչ տապարով[1] զարկեն ու խոցեն, ոչ դրա կոթով հարվածեն, ոչ կացնով կտրեն, ոչ սրերով խողխողեն ու խոցեն, ոչ դանակով խոցեն ու կտրեն. չվնասեն ոչ ծերը, ոչ փոքրը, ոչ թուխ և ոչ սև մարդը, ոչ հերետիկոսը, ոչ կախարդը և ոչ էլ ամեն վհուկ։ Ամեն բան հիմի իմ, աստծո ծառայիս, որբացյալիս ու դատյալիս առաջ է։ Ծովի-օվկիանոսի վրա, Բույան կղզու վրա կանգնած է երկաթե մի սյուն։ Այն սյան վրա երկաթե մի մարդ, երկաթե ցուպին հենված, կռում է երկաթ, պողպատ ու կապույտ անագ, արճիճ ու ամեն մի զենք։ «Գնա՛ դու, երկաթ, քո մայր հողը ու մի կպչիր աստծու ծառայիս ու իմ ընկերներին, իմ նժույգին։ Փայտե նետ, կպիր անտառին, փետուր՝ քո մայր թռչունին, իսկ շրեշը՝ ձկանը»։ Ինձ, աստծու ծառայիս, ոսկե վահանով պաշտպանիր կռվից ու գնդակից, թնդանոթի զարկից ու արկից, մզրախից ու դանակից։ Թող իմ մարմինը զրահից էլ ամուր լինի։ Ամեն։

Կազակներն արտագրած աղոթքները տարան շապիկների տակ պահած։ Դրանք ամրացրին խաչերի ղայթաններին, մայրական օրհնություններին, մի պտղունց հայրենի հողի կապուկներին, բայց մահը կպչում էր նաև նրանց, ովքեր իրենց հետ աղոթքներ էին տանում։

Դիակնանում ու փտում էին Գալիցիայի և Արևելյան Պրուսիայի դաշտերում, Կարպատներում ու Ռումինիայում,— ամենուրեք, ուր փայլատակում էին պատերազմի հրացոլքերը ու մնում կայսրական նժույգների սմբակների հետքերը։

VII

Դոնեցի օկրուգի վերին ստանիցաներից,— Ելանսկայայից, Վեշենսկայայից, Միգուլինսկայայից ու Կազանսկայայից կազակներին սովորաբար վերցնում էին 11—12 բանա-

[1] Տապարը՝ այստեղ — հնամյա զենք է, լայն կացին, երկար նիզակով, երկար կոթով։

կային կազակական գնդերը և լեյբ-գվարդիայի Ատամանյան գունդը։

1914 թվականին Վեշենսկայա ստանիցայից իսկական գինվորական ծառայության կանչված կազակների մի մասը հայտնի չէ ինչու ուղարկեցին Դոնի՝ Երմակ Տիմոֆեևիչի անվան, 3-րդ կազակական գունդը, որ ամբողջովին կազմված էր Ուստ-Մեդվեդիցկու օկրուգի կազակներից։ Մյուսների թվում 3-րդ գունդ ընկավ նաև Միտկա Կորշունովը։

Հեծելազորային 3-րդ դիվիզիայի որոշ զորամասերի հետ գունդը գտնվում էր Վիլնոյում։ Հունիսին հարյուրյակները քաղաքից դուրս ելան ձիերը կերակրելու՝ արածացնելու համար։

Ամառային տաք, ամպամած օր էր։ Հոսուն ամպերը կուտակվում էին երկնքում, ծածկում էին արևը։ Գունդը երթակարգով էր գնում։ Թնդում էր օրկեստրը։ Պարոնայք սպաները պաշտպանական գույնի ամառային գլխարկներով ու թեթև կիտելներով գնում էին միասին։ Նրանց գլխավերևում կապույտին էր տալիս պապիրոսի ծուխը։

Միջգյուղյա ճանապարհի երկու կողմերում մուժիկները և խայտաբղետ հագնված կանայք խոտ էին հնձում, ճակատներին դրած ձեռների տակից նայում էին կազակների շարասյուներին։

Ձիերը զգալիորեն քրտնում էին։ Նրանց բերանների դեղնավուն փրփուրը թափվում էր ոտների արանքը, ու հարավարևելքից փչող թեթև քամին չէր չորացնում քրտինքը, այլ է՛լ ավելի էր սաստկացնում գոլորշիախառն տոթը։

Կես ճանապարհին, մի ինչ-որ գյուղի մերձակայքում բաշը խուզած մի քուռակ խառնվեց հինգերորդ հարյուրյակին։ Նա դուրս թռավ գյուղի շրջակայքից, տեսավ ձիերի խիտ զանգվածը և կոթկոթալով վազ տվեց նրանց միանալու։ Նրա պոչը, որ դեռ չէր կորցրել մատղաշության խավոտությունը, թեքվում էր մի կողմի վրա, սմբակների սրածայր կոնքերի տակից գորշ քուլաներով փոշի էր բարձրանում ու նստում ճմռթված կանաչի վրա։ Նա վազեվազ մոտեցավ առջևի դասակին, դունչը միամտաբար դրեց վախմիստրի ձիու

ոտքերին։ Ձին վեր գցեց գավակը, բայց չուզեց խփել երևի խղճաց։

— Կորի՛, հիմար,— վախմիստրը բարձրացրեց մտրակը։

Կազակները ծիծաղեցին՝ ուրախանալով քուռակի տնային հաճելի տեսքից։ Այստեղ տեղի ունեցավ չնախատեսված մի բան. քուռակը համարձակորեն խցկվեց դասակային շարքերի արանքը, ու դասակը ճեղքվեց, կորցրեց ներդաշնակ, մինչ այդ միաձույլ տեսքը։ Ձիերը, որոնց խթանում էին կազակները, տատանվելով էին քայլում։ Նրանց միջև սեղմված քուռակը գնում էր կողքի ու փորձում էր կծել իրեն մոտիկ ձիուն։

Վրա հասավ հարյուրյակի հրամանատարը։

— Այս ի՞նչ բան է, հը՞։

Այնտեղ, ուր խցկվել էր անկարգ, բաշը կտրած քուռակը, ձիերը կողքի էին թեքվում ու փնչում, կազակները ժպտալով մտրակում էին նրան, խոնվում էր շարքը խախտված դասակը, իսկ ետևից վրա էին տալիս մյուս դասակները, ճանապարհի կողքից, հարյուրյակի պոչից գնում էր զայրացած դասակապետ սպան։

— Սա ի՞նչ բան է,— գոռաց հարյուրյակի հրամանատարը՝ ձին քշելով դասակի մեջտեղը։

— Հրե՛ն, քուռակը...

— Խցկվել է մեր մեջ...

— Չենք կարենում դուրս քշել այդ սատանի ճուտին...

— Դու է՛լ դաղիր մտրակով։ Խղճո՞ւմ ես, ինչ է։

Կազակները մեղավորի պես ժպտում էին, ձգում սանձերը՝ զսպելով տաքացած ձիերին։

— Վախմի՛ստր, պարոն հարյուրապետ, սա ի՞նչ սատանի բան է։ Կարգի բերեք ձեր դասակը, ա՛յս էր պակաս, էլի՛...

Հարյուրյակի հրամանատարը դեն քշեց իր ձին։ Սա ոտը սխալ դրեց ու ետին ոտները գցեց ճանապարհին կից խանդակի մեջ։ Հրամանատարը խթանեց նրան ու թռավ խանդակի մյուս կողմը, թմբի վրա, որ ծածկված էր թայլով ու դեղնավուն լվածաղկով։ Հեռվում կանգ էին առել մի խումբ սպաներ։ Զորական ավագը գլուխը ետ գցած, ջրասրվակը

քաշել էր դնչին, ու նրա ձեռքը հայրական փաղաքշանքով դրված էր շքեղ թամքի երկաթած դաշին։

Վախմիստրը մասերի բաժանեց դասակը, քուռակին հայհոյանքով վռնդեց ճանապարհից դենը։ Դասակը սեղմվեց։ Հարյուր հիսուն զույգ աչքեր նայում էին, թե ինչպես վախմիստրը ասպանդակների վրա կիսականգնած, սլանում էր քուռակի ետևից, իսկ սա մերթ կանգ էր առնում, թրիքով կեղտոտված կողքը հենում վախմիստրի փոքրիկ ձիուն, մերթ նորից ծլկում պոչը ծռած, ու վախմիստրը ոչ մի կերպ չէր կարողանում մտրակի հարվածը հասցնել նրա մեջքին, այլ միշտ զարկում էր պոչի մազափնջին։ Մտրակի հարվածից պոչը կախվում էր ներքև ու մի վայրկյան անց դարձյալ քամուց կողքի էր ընկնում։

Ծիծաղում էր ամբողջ հարյուրյակը։ Ծիծաղում էին սպաները։ Նույնիսկ յասավուլի մռայլ դեմքի վրա ծուռ ժպիտի պես մի բան երևաց։

Առջևի դասակի երրորդ շարքում գնում էր Միտկա Կորշունովը Միխայիլ Իվանկովի՝ Վեշենսկայա ստանիցայի Կարգին խուտորի կազակի և ուստ-խոպերցի Կոզմա Կրյուչկովի հետ։ Հաստամռութ, լայնաթիկունք Իվանկովը լուռ էր, Կրյուչկովը «ուղտ» մականունով, մի քիչ չեչոտ, կուզիկ մի կազակ, կպչում էր Միտկային։ Կրյուչկովը «հին» կազակ էր, այսինքն իսկական ծառայության վերջին տարին էր անցկացնում և գնդի չգրված օրենքների համաձայն, ինչպես և ամեն մի «հին» կազակ, իրավունք ուներ հետամտել, մարզել երիտասարդներին, ամեն մի դատարկ բանի համար պատժել գոտու այվզուկի հարվածներով։ Սահմանված էր հետևյալը՝ 1913 թվականին զորակոչված կազակին զանցառության համար տալ այվզուկի երեսուն հարված, 1914 թվականին՝ տասնչորս հարված։ Վախմիստրներն ու սպաները խրախուսում էին այդ կարգը, գտնելով, որ այդ կերպ կազակի մեջ հասկացողություն է արմատացվում ոչ միայն աստիճանով, այլև հասակով ավելի մեծերին հարգելու մասին։

Կրյուչկովը, որ վերջերում պրիկազնիի[1] թև էր ստացել, կորացած նստել էր թամքին, թռչունի պես կծկելով կախ ընկած ուսերը։ Նա կկոցած աչքերով նայում էր գորշ, խիտ մի ամպի, հարցեր էր տալիս Միտկային՝ ձայնը նմանեցնելով հարյուրյակի թլվատ հրամանատար յասավուլ Պոպովի ձայնին,— «ա» տառի փոխարեն «ե» արտասանելով.

— Է՛... ասա ինձ, Կորշունով, ո՞նց է մեր հարյուրյակի հրամանատարի անունը։

Միտկան, որ իր կամակորության ու անհնազանդ բնավորության համար հաճախ այվզուկի հարվածներ էր կերել, դեմքին հարգանքի արտահայտություն տվեց։

— Յասավուլ Պոպով, պարոն հին կազակ։

— Ո՞նց։

— Յասավուլ Պոպով, պարոն հին կազակ։

— Ես այդ չեմ հարցնում։ Դու ինձ ասա, ո՞նց են նրան անվանում մեր, կազակների մեջ։

Իվանկովը երկչոտությամբ աչքով արեց Միտկային, ժպտալիս բացեց կախշրթունք բերանը։ Միտկան նայեց շուրջը ու տեսավ ետևից մոտեցող յասավուլ Պոպովին։

— Դե՞հ, պատասխանիր,— Կրյուչկովը կկոցում էր աչքերը։

— Նրանց կանչում են յասավուլ Պոպով, պարոն հին կազակ։

— Տասնչորս այվզո՛ւկ։ Ասա՛, է՛, շան որդի։

— Չգիտեմ, պարոն հին կազակ։

— Սպասիր, տեղ կհասնենք,— ասաց Կրյուչկովը իր իսկական ձայնով,— ես քեզ, ցո՛ւյց կտամ։ Պատասխանիր, երբ հարցնում են։

— Չգիտեմ։

— Ո՞նց թե, խուժան, դու չգիտե՞ս, թե նրան ինչ անուն են կպցրել։

Միտկան ետևից լսեց յասավուլի ձիու զգույշ, գողավարի քայլը, լռեց։

— Դե՞հ,— Կրյուչկովը չարացած չռեց աչքերը։

[1] Պրիկազնի կազակական զորքերում կրտսեր հրամանատարական կոչում, որը համապատասխանում էր եֆրեյտորի կոչման։ (Ս. Թ.)։

Ետևի շարքում դուսպ քրքջում էին։ Չհասկանալով, թե ինչի վրա են ծիծաղում, այդ ծիծաղն իր վրա առնելով, Կրյուչկովը տաքացավ.

— Կոլչունով, տե՛ս, հա՛-ա... Տեղ կհասնենք, կդաղեմ հիսուն այվզուկով։

Միտկան թոթվեց ուսերը, սիրտ արավ։

— Սևապոչ։

— Դեհ՛, պրծավ գնաց, էլի՛։

— Կրյու-ու-չկո-ո՛վ, ձայն տվին ետևից։

Պարոն հին կազակը ցնցվեց թամքի վրա ու ձգվեց։

— Դու այստեղ ի՞նչ բաներ ես գլխիցդ հանում, սրիկա,— վրա պրծավ յասավուլ Պոպովը՝ իր ձին հավասարեցնելով Կրյուչկովի ձիուն։— Դու այդ ինչե՞ր ես սովորեցնում երիտասարդ կազակին, հը՞։

Կրյուչկովը թարթում էր կկոցած աչքերը։ Նրա թշերը բռնկեցին բորդո գույնի կարմրությամբ։ Ետևում քրքջում էին։

— Ես ո՞ւմ էի սովորեցնում անցյալ տարի։ Ո՞ւմ մռութի վրա եմ ջարդել այս եղունգը, հը՞...— Յասավուլը ճկույթի երկար, սրածայր եղունգը դեմ արեց Կրյուչկովի քթին ու ողողացրեց բեղերը։

— Էլ չլսե՛մ այդ բանը, հա՛-ա։ Հասկանո՞ւմ ես, աղբերացու։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծննդություն, հասկանում եմ։

Յասավուլը մի փոքր հապաղելով, անցավ մի կողմ, ձին կանկնեցրեց, մինչև որ կանցներ հարյուրյակը։ Չորրորդ և հինգերորդ հարյուրյակները վարգելով էին գալիս։

— Հարյուրյակ, վարգե՛լ...

Կրյուչկովը, ուղղելով հրացանի փոկը, դարձավ, նայեց ետ մնացած յասավուլին, ու շտկելով տեգը, անմիտ կերպով պտտեց գլուխը։

— Այդ Սևապոչը խաթա է, էլի՛։ Ո՞րտեղից բուսավ։

Ծիծաղից ամբողջովին քրտնելով, Իվանկովը պատմում էր։

— Նա վաղուց էր գալիս մեր ետևից։ Նա ամեն բան լսեց։ Երևի հասկանում էր, թե ինչի մասին է խոսքը։

— Դու գոնե աչքով անեիր, դմբո՛։

— Շա՛տ պետքս էր։

— Պետքդ չէ՞ր։ Ըհը՛մ, տասնչորս այվզուկ տկլոր քամակիդ։

Հարյուրյակները բաժանվեցին շրջակա կալվածատիրական տների վրա։ Ցերեկը կալվածատերերի համար երեքնուկ ու մարգագետինների խոտ էին հնձում, գիշերը նշանակված հողամասերում արածացնում էին ոտները կապած ձիերը, խարույկների լույսով թուղթ էին խաղում, հեքիաթներ էին պատմում, կատակում։

Վեցերորդ հարյուրյակը բատրակություն էր անում լեհացի խոշոր կալվածատեր Շենյդերի մոտ։ Սպաներն ապրում էին կողաշենքում, թուղթ էին խաղում, հարբեցողություն անում, բոլորն էլ խմբով հետամտում կալվածքի կառավարչի աղջկան։ Կազակները վրան էին զարկել կալվածատնից երեք վերստ հեռավորությամբ։ Առավոտները արագընթաց կառքով նրանց մոտ էր գալիս պան կառավարիչը։ Հաստ, հարգևոր շլյախտիչը իջնում էր կառքից, ձգում թմրած, պարարտ ոտները և «կոզակներին» անպայման ողջունում էր լաքած հովար ունեցող սպիտակ կարտուզի թափահարումով։

— Արի մեզ հետ հունձ արա, պան։

— Արի մի քիչ թափ տուր չաղ ջանդ։

— Վերցրու գերանդին, թե չէ կաթված կստանաս...— շարքերից բղավում էին սպիտակ շապիկներ հագած կազակները։

Պանը ժպտում էր շատ սառնասիրտ, եզրազարդ թաշկինակով սրբում վերջալույսի պես կարմրատակած, քաչալ գլուխը ու վախմիստրի հետ գնում էր հնձվելիք խոտի նոր հողամասեր նշելու։

Կեսօրին գալիս էր շրջիկ խոհանոցը։ Կազակները լվացվում էին, գնում ուտելու։

Ուտում էին լուռ, իսկ հետո, կես ժամ հանգստանալիս չէին դադարում խոսակցությունները։

— Այստեղի խոտը մուտտատ է։ Մեր տափաստանի խոտին չի հասնի։

— Սիզախոտ համարյա չկա։

— Մերոնք Դոնում հիմի արդեն վերջրացրած կլինեն հունձը։

— Շուտով մենք էլ կվերջացնենք։ Երեկ լուսնյակը նորել է, անձրև է գալու։

— Ա՛մա ժլատ է այդ լեհացին, հա՛-ա։ Աշխատանքի համար գոնե ամեն մի տղին մի շիշ արաղ ցնծար։

— Օ՜-հո՜-հո՜։ Նա մի շշի համար հոգին կտա...

— Հա՛, տղերք, ախր դա ի՞նչ բան է. մարդը որքան հարուստ, այնքան ժլատ է լինում։

— Դա թագավորին հարցրու։

— Կայվածատիրոջ աղջկան ո՞վ է տեսել։

— Ի՞նչ է որ։

— Մսո-ո՜տ աղջիկ է, հա՛-ա։

— Ոչխարի մի՞ս է։

— Ըհը՜մ...

— Պանրո՛վ կխպշտեի նրան...

— Ճի՞շտ է թե ոչ, ասում են, թե թագավորական տնից ուզել են նրան։

— Բա այդ տեսակ համով պատառը հասարակ մարդու ձեռը կընկնի՞։

— Տղերք, անցած օրը լսել եմ, թե բարձրադույնը պիտի գա մեզ տեսնելու։

— Որձ կատուն պարապությունից ինչ ասես կանի...

— Դեհ, դեհ, ձեռ քաշի, Տարաս։

— Տո՛ւր քաշեմ, հը՞։

— Ուրիշից թուքուն մուրալու մեջ մի հատ ես, էլի՛։ Գնա՛, ժամի մոտ կանգնի, երկարացրու ձեռքդ։

— Մտի՛կ, է՛, տղերք, Ֆեդոտկայի թուրը կտրուկ է, ամա կտրելու բան չկա։

— Մենակ մոխիրն է մնացել։

— Է՛յ, աչքերդ բաց արա, նրա մեջ շա՛տ կրակ կա, ոնց որ լավ կնկա մեջ։

Պառկել էին փորերի վրա։ Ծխում էին։ Տկլոր մեջքները կարմրելու չափ դաղվում էին արևի տակ։ Քիչ հեռու մի հինգ հոգի հին կազակներ հարցուփորձ էին անում երիտասարդներից մեկին։

— Դու ո՞ր ստանիցայից ես։

— Ելանսկայայից։

— Ուրեմս էծերից ես, հը՞։

— Ճիշտ այդպես։

— Բա այնտեղ, ձեզ մոտ աղն ինչո՞վ են տանում։

Մոտիկ տեղում ձիու սթարի վրա պառկել էր Կոզմա Կրյուչկովը, ձանձրանում էր, ցանցառ բուսած բեղերը փաթաթում մատին։

— Ձիերով։

— Էլ ինչո՞վ։

— Եզներով։

— Ըհը՜մ, բա ձո՞ւկն ինչով են բերում Ղրիմից։ Գիտե՞ս, մի տեսակ եզներ կան, մեջքներին քոթուկներ, փուշ ու մուշ են զխտվում. դրանց ի՞նչ են ասում։

— Ուղտեր։

— Օ՜խո-հա-հա-հա-հա...

Կրյուչկովը ծույլ-ծույլ վեր էր կենում, քայլում էր դեպի տույժ ստացած կազակը, ուղտի նման կուզիկանում էր, երկարացնում դուրս ցցված ադամախնձորով ու շաֆրանե-թուխ վիզը, քայլելիս հանում էր գոտին։

— Պառկի՛ր։

Իսկ երեկոները, հունիսյան շոգ մթնշաղին դաշտում, խարույկների մոտ հնչում էր երգը.

Գնա՛ց կազակը հեռու մի երկիր,
Գնաց իր ձիով սևուկ, գեղանի,
Իրեն երկիրը նա թողեց ընդմիշտ...

Ճիգ է թափում արծաթահնչուն տենորը, իսկ բասերը թավիշե թանձր տխրություն են սփռում.

Էլ նա չի դառնա տունը հայրենի։

Տենորը աստիճանական բարձրություն է վերցնում, ընում է մարդու հենց սրտից.

Ու կազակուհին ջահել-գեղեցիկ,
Զուր է օրնիբուն նայում դեպ հյուսիս,
Զուր է սպասում, թե հեռու երկրից
Իր հոգի-կազակն արդյոք չի՞ գալիս։

Ու շատերը եռանդով ձայնակցում են երգին։ Դրա համար էլ երգը թավ է ու ոգելից, ինչպես Պոլեսյեի բրագա խմիչքը։

Այնտեղ, ուր բուքը պտույտ է գալիս,
Ուր ձմռան դաժան ցուրտն է ճքճքում,
Ուր գոռ ցցված են սոճին, եղևնին,
Ձյան տակ կազակի ոսկորն է փտում։

Պատմում են ձայները կազակական կյանքի անպաճույճ պատմությունը, ու ձայնակցող տենորը արտույտի նման գեղգեղում է ապրիլյան հալչող հողի վրա.

Մեռնելիս կազակն աղաչեց-խնդրեց՝
Մի մեծ հողաթումբ կիտել իր վրա։

Նրա հետ միասին թախծոտ երգում են բասերը.

Թող փոնչենին հայրենի, սիրված,
Բուանի, վառ ծաղկի այդ թմբի վրա։

Մի այլ խարույկի մոտ ավելի քիչ մարդ կա և ուրիշ երգ են երգում.

Ախ, այն Ազովյան կատաղի ծովից
Նավերը դեպի Դոն են սլանում։
Ատամանը երիտասարդ
Տուն է գնում ուրախ-զվարթ։

Ավելի հեռու, երրորդ խարույկի մոտ հարյուրյակի զվարճախոս մի կազակ, ծխից հազալով սրամտությամբ հեքիաթ է պատմում։ Լսում են լարված ուշադրությամբ, միայն երբեմն, երբ պատմվածքի հերոսը մի առանձին ճարպկությամբ է դուրս գալի իր դեմ մոսակալների ու սատանայի լարած թակարդներից, կրակի լույսի տակ երևում է մեկնումեկի սպիտակ ձեռքը, շրմփացնում է կոշկի ճիտքին, ու ծխից խոպված ձայնը հիացմունքով բացականչում է.

— Ա՛խ, գրո՛ղը տանի, ի՛նչ լավ է, է՛։

Ու կրկին հնչում է պատմողի սահուն, անընդմեջ ձայնը։

Այն օրից, երբ գունդը եկել էր ձիերի արածեցման համար անցել էր մի շաբաթ, երբ յասավուլ Պոպովը կանչեց հարյուրյակի պայտարին ու վախմիստրին։

— Ձիերը ո՞նց են,— դիմեց նա վախմիստրին։

— Ոչի՛նչ, ձերդ բարեծննդություն, մինչև իսկ շատ հաճելի տեսք ունեն։ Մեջքերի փոսերը լցվել են։ Ջաղանում են։ Յասավուլը սլաքի նման սրեց սև բեղը (այստեղից էլ՝ Սևապոչ մականունը), ասաց.

— Գնդի հրամանատարից հրաման կա, կլայեկել ասպանդակներն ու սանձերի բերանոցները։ Թագավոր-կայսրը պիտի գա գունդը ստուգատեսի։ Ամեն ինչ պետք է փայլուն լինի՝ և՛ թամքերը, և՛ մնացած բոլորը։ Կազակները պետք է մաքուր, փայլուն, հիանալի տեսք ունենան։ Ե՞րբ պատրաստ կլինի դա, աղբե՛ր։

Վախմիստրը նայեց պայտարին։ Պայտարը նայեց վախմիստրին։ Երկուսն էլ նայեցին յասավուլին։

Վախմիստրն ասաց.

— Այնպե՛ս, էլի, մինչև կիրակի, ձերդ բարեծննդություն։— Ու պատկառանքով մատը տարավ ծխախոտի ծխից բորբոսնած բեղին։

— Տե՛ս, հա՛-ա,— ահեղ նախազգուշացրեց յասավուլը։

Վախմիստրը ու պայտարը գնացին։

Այդ օրվանից սկսվեցին բարձրագույն ստուգատեսի պատրաստությունները։ Միխայիլ Իվանկովը, Կարգինի պայտարի տղան, ինքն էլ հմուտ պայտար օգնում էր կլայեկելու ասպանդակները ու սանձերի բերանոցները, մնացածները նորմայից դուրս քերքրում էին ձիերին, մաքրում սանձերը, ջարդած աղյուսներով սրբում բերանոցներն ու ձիու հանդերձանքի մետաղե մասերը։

Մի շաբաթից հետո գունդը փայլում էր նոր կտրած քսան կոպեկանոցի նման։ Պսպղում էր ամեն ինչ՝ ձիերի սմբակներից սկսած մինչև կազակների դեմքերը։ Շաբաթ օրը գնդի հրամանատար գնդապետ Գրեկովը զննեց գունդը և պարոնայք սպաներին ու կազակներին շնորհակալություն հայտնեց եռանդուն պատրաստության ու նրանց քաջարի տեսքի համար։

Սկսվում էին հուլիսյան շողշողուն օրերը։ Հյուսիսեղ արոտից կազդուրվում էին կազակական ձիերը, միայն կազակ-

ներն էին անհանգստանում, մաշվում ենթադրությունից. բարձրագույն ստուգատեսի մասին ոչ մի լուր, ոչ մի ձայն չկար... Շաբաթն անցել էր այլևայլ խոսակցություններով, ջանք ու ճիգով, նախապատրաստությամբ։ Եվ ահա, ինչ որ գնրանով խփես մարդու գլխին, հանկարծակի մի հրաման՝ ճանապարհվել դեպի Վիլնո։

Իրիկնադեմին այնտեղ էին։ Հարյուրյակները հրաման ստացան՝ կազակական բարիքով լեցուն սնդուկները հանձնել պահեստ ու պատրաստվել հնարավոր արշավանքին։

— Ձերդ բարեծննդություն, այդ ինչի՞ համար է,— տարակուսում էին կազակները՝ աշխատելով դասակապետ սպաներից իմանալ ճշմարտությունը։

Սպաները թոթվում էին ուսերը։ Իրենք էլ մի շահի կտային ճշմարտությունը իմանալու համար։

— Չգիտեմ։

— Մանրնե՞ր պիտի լինեն թագավորի ներկայությամբ։

— Առայժմ հայտնի չէ։

Ահա սպաների պատասխանները, որ պետք է անուշ անեին կազակները։ Հուլիսի 19-ին գնդի հրամանատարի բանբերը իրիկնադեմին իր ընկերոջ, վեցերորդ հարյուրյակի կազակ Մրիխինին, որը օրապահ է ախոռում, փսփսալով ասաց.

— Պատերազմ է, տղա՛։

— Փչո՛ւմ ես, հա՛-ա...

— Խաչը վկա, իսկ դու սուս կանես, իմացա՞ր։

Առավոտյան գունդը շարք կանգնեցրին դիվիզիոնային կարգով։ Աղոտ փայլում էին զորանոցների պատուհանների փոշոտված ապակիները։ Գունդը, ձիերին նստած, սպասում էր հրամանատարին։

Վեցերորդ հարյուրյակի առաջ, ընտիր մի ձի նստած, կանգ է առել յասավուլ Պոպովը։ Սպիտակ ձեռնոց հագած ձախ ձեռքով ձգում է սանձը։ Ձին իջեցնում է գլուխը, ծռում կլորիկ պարանոցը, քորում մռութը՝ քսելով կրծքի մկանունքներին։

Գնդապետը դուրս եկավ զորանոցի շենքի անկյունից, ձին կողքի կանգնեցրեց շարքի առաջ։ Ադյուտանտը հանեց թաշկինակը, նրբորեն ծռելով փափլիկ ճկույթը, բայց խնչելու

ժամանակ չունեցավ։ Անձայն դնգդնգող լռության մեջ գնդապետը սկսեց.

— Կազակնե՛ր...— ու տիրաբար դեպի իրեն քաշեց ընդհանուր ուշադրությունը։

«Ահա թե ինչ»,— մտածեց ամեն մեկը։ Լարվում էր անհամբեր հուզմունքը։ Միտկա Կորշունովը կրունկով բարկացած հրեց իր ձիուն, որը կոթնում էր մերթ մեկ ու մերթ մյուս ոտին։ Նրա կողքին, շարքում, ձիու վրա հաստատուն նստածքով արձանացել էր Իվանկովը, լսում էր կախշրթունք բերանը լայն բացած, ցույց տալով սևավուն, անհամաչափ ատամները։ Նրա ետևում կզվել, աչքերն էր կկոցել Կրյուչկովը, ավելի հեռու՝ ձիու նման ականջակոնքերն էր տնկել Լապինը, նրա ետևից երևում էր Շչեգոյլկովի սափրված, տեղտեղ ածելիով կտրված կզակը։

— ... Գերմանիան մեզ պատերազմ է հայտարարել։

Հավասարած շարքերում՝ շրշյուն, ասես հասունացած, սևացողուն գարու արտում, զբոսնելով անցավ քամու ալիքը։ Ձիու խրխնջոցը ճիչի նման ծակեց մարդկանց ականջը։ Կլորացած աչքերը ու բացած բերանների քառակուսաձև սևությունը դարձան առաջին հարյուրյակի կողմը. այնտեղ, ձախ թևում, խրխնջացել էր մի ձի։

Գնդապետը դեռ խոսում էր։ Անհրաժեշտ կարգով բառերը դասավորելով, նա փորձում էր ազգային հպարտության զգացմունք վառել, բայց հազարավոր կազակների աչքերի առաջ ոչ թե ուրիշի մետաքսե դրոշակներն էին շրշալով թեքվում դեպի նրանց ոտները, այլ գերազանցորեն հարազատ իրենց առօրյան էր բազկատարած ձայն տալիս, կանչում,— կանայք, երեխաները, սիրելիները, չհնձած արտերը, որբացած խուտորները, ստանիցաները...

«Երկու ժամից հետո պետք է նստել զորագնացքները»։ Ահա միակ միտքը, որ ներխուժեց յուրաքանչյուրի գլուխը։

Սպաների կանայք, որոնք խմբվել էին մոտիկ տեղում, թաշկինակները աչքերին տանելով լաց էին լինում, կազակները խումբ-խումբ գնում էին զորանոցները։ Հարյուրապետ Խոպրովը համարյա գրկած տարավ իր շիկահեր, հղի լեհուհի կնոջը։

Գունդը երգելով էր գնում կայարան։ Երգը խլացնում էր

նվագախումբը, և սա կես ճանապարհին իրեն անհարմար զգալով, լռեց։ Սպաների կանայք կառքերով էին գնում, մայթերի վրա խոնվում էր գույնզգույն ամբոխը, խճոտ փոշի էին շաղ տալիս ձիերի սմբակները, ու ծանակելով իր և ուրիշի փիշտը, ձախ ուսը ցնցելով այնպես, որ տենդորեն կծկվում էր կապույտ ուսադիրը,— երգը սկսողը նետում էր կազակական մի անպատկառ երգի լկտի խոսքերը.

Ես, սիրուն աղջիկ, մի ձուկ բռնեցի...

Հարյուրյակը դիտմամբ աղավաղելով բառերը,— որով անպարկեշտ արտահայտություն էր ստացվում,— ձիերի նոր պայտած սմբակների նվագակցությամբ դեպի կայարան, դեպի վագոնային կարմիր տնակներն էր տանում իր հույզերը՝ երգը.

Ես մի ձուկ, ես մի ձուկ, ես մի ձուկ բռնեցի։
Ես, սիրուն աղջիկ, ձկնապուր եփեցի,
Ձկնապուր, ձկնապուր, ձկնապուր եփեցի։

Հարյուրյակը պոչից, ամբողջովին կարմրելով ծիծաղեց ու շփոթմունքից, դեպի երգիչներն էր սլանում գնդի ադյուտանտը։ Երգը սկսողը սանձը վերև էր գցում ու թողնում, անամոթաբար աչքով անում մայթերի վրա հոծ բազմությամբ հավաքված կանանց, որոնք ուղեկցում էին կազակներին, ու նրա այտերի թրծած բրոնզի և սև բեղերի վրայով օշինդրի դառն բուսացուր էր հոսում, և ոչ թե քրտինք։

Ես, սիրուն աղջիկ, ձկնապուր եփեցի...
Խնամուա, խնամուա առաջը դրեցի...

Երկաթգծի վրա նախազգուշացուցիչ զգաստությամբ մռնչում, մեկնելու էր պատրաստվում շոգեքարշը։

. . . . . .
. . . . . .
. . . . . .

Էշելոններ... էշելոններ... էշելոններ... Անթիվ ու անհամար էշելոննե՛ր։

Երկրի զարկերակներով, երկաթուղիներով դեպի արևմուտ-

յան սահմանն է քշում խռովահույզ Ռուսաստանը գորշ շինել հագած իր արյունը։

VIII

Տորժոկ ավանում գունդը հարյուրյակների բաժանեցին։ Դիվիզիայի շտաբի հրամանով վեցերորդ հարյուրյակը ուղարկվեց բանակային երրորդ հետևակ կորպուսի տնօրինության, ու երթակարգով մինչև Պելիկալիե ավանը գնալով, պոստեր կարգեց։

Մեր սահմանապահ զորամասերը դեռ պահպանում էին սահմանը։ Մոտենում էին հետևակ զորամասերն ու հրետանին։ Հուլիսի 24-ի երեկոյան 108-րդ Գլեբովյան գնդի մի գումարտակ և մի մարտկոց ժամանեցին ավան։ Մերձակա Ալեքսանդրովսկի կալվածատանը գտնվում էր ինը կազակներից բաղկացած մի պոստ՝ դասակապետ ուրյադնիկի գլխավորությամբ։

Հուլիսի լույս 27-ի գիշերը յասավուլ Պոպովն իր մոտ կանչեց վախմիստրին ու կազակ Աստախովին։

Աստախովը դասակ վերադարձավ արդեն մթանը։ Միտկա Կորշունովը հենց նոր էր ձին բերել ջրելու տեղից։

— Այդ դո՞ւ ես, Աստախով,— ձայն տվեց նա։

— Ես եմ։ Բա Կրյուչկովն ու տղերքը ո՞րտեղ են։

— Այնտեղ են, խրճիթում։

Աստախովը, բարձրահասակ, հաղթանդամ ու թխագեմ մի կազակ, աչքերը կույրի պես կկոցելով, մտավ խրճիթ։ Սեղանի մոտ, մրոտ լամպի լույսի տակ Շչեգոյլկովը մոմած թելով կպցնում էր ճղված սանձափոկը։ Կրյուչկովը, ձեռները մեջքին դրած, կանգնել էր վառարանի մոտ, Իվանկովին աչքերով ցույց էր տալիս ջրգողությունից ուռած լեհ տանտիրոջը, որը պառկել էր մահճակալի վրա։ Նրանք հենց նոր էին փիծաղել, ու Իվանկովի կարմիր թշերը դեռ ցնցվում էին ծիծաղից։

— Տղերք, էգուց լույսը բացվեց թե չէ, պետք է գնալ պոստի։

— Ո՞ւր,— հարցրեց Շչեգոյլկովը ու երկար նայելով մյուսներին, վայր գցեց մոմաթելի մեջ չանցկացրած խոզի մազը։

— Լյուբով ավանը։

— Ովքե՞ր են գնալու,— հարցրեց Միտկա Կորշունովը՝ ներս մտնելով ու ձեռքի դույլը դնելով շեմքի մոտ։

— Ինձ հետ կգնան Շչեգոյլկովը, Կրյուչկովը, Ռվաչևը, Պոպովը և դու, Իվանկով։

— Բա ե՛ս, Պավլիչ։

— Դու կմնաս, Միտրի։

— Է՛հ, ջհաննամը թե կմնամ։

Կրյուչկովը հեռացավ վառարանից. ձգելով ու ոսկորները ճքճքացնելով, հարցրեց տանտիրոջը։

— Մինչև այդ Լյուբովը քանի՞ վերստ կլինի։

— Չորս մղոն։

— Մոտիկ է, ասաց Աստախովը ու նստելով նստարանին, հանեց սապոգը։— Ո՞րտեղ կարելի է ոտներիս փաթաթանները չորացնել։

Առավոտ ծեգին մեկնեցին։ Ճամփին, գյուղի մեջ բոկոտն մի աղջիկ ջրհորից դույլով ջուր էր վերցնում։ Կրյուչկովը կանգնեցրեց ձին։

— Բե՛ր մի խմենք, սիրունիկս...

Աղջիկը ձեռքով քաթանե յուբկան բռնած, վարդագույն ոտներով մոտ եկավ թափթփված ջրի վրայով. տվեց դույլով ջուրը, ժպտաց խիտ արտևանունքներով ստվերված գորշ աչքերով։ Կրյուչկովը խմում էր, ջրով լի դույլը բռնած նրա ձեռքը դողում էր լարվածությունից. ջուրը թափվում, կաթիլ-կաթիլ հոսում էր նրա շալվարի կարմիր լամպասի վրա։

— Քրիստոս փրկե, սիրունիկ աղջիկ։

— Հիսուս աստված։

Աղջիկը վերցրեց դույլը, ետ նայելով ու ժպտալով հեռացավ։

— Ի՞նչ ես ատամներդ բաց անում, արի գնանք ինձ հետ։

Կրյուչկովը շարժվեց թամքի վրա, ասես տեղ էր զիջում։

— Դե՛հ, հա՛յդա,— առաջ անցնելով, գոչեց Աստախովը։

Ռվաչևը հեգնաբար աչքերը ծռեց Կրյուչկովի վրա.

— Դուրդ եկա՞վ, հը՞։

— Դրա ոտքերը կարմիր են ոնց որ բադի տոտիկները,— ծիծաղեց Կրյուչկովը, ու բոլորն էլ, ասես հրամանով, նայեցին աղջկան։ Վերջինս կռացել էր ջրհորի վրա, շոռել երկատված, յուբկայով պրկված երկթումբ հետույքը, բացել կարմրասրունք, լիքը ոտքերը։

— Կպսակվե՛ի, հա՛-ա...— հոգոց հանեց Պոպովը։

— Արի ես քեզ պսակեմ մտրակով մի անգամ,— առաջարկեց Աստախովը։

— Մտրակո՛վ, այդ ի՞նչ է որ...

— Ա՛յ քեզ, որձ ձի։

— Դրան կոտել է պետք։

— Մենք դրան կկապենք թոկերով, ոնց որ բուղային։

Կազակները սլացան քրքջալով։ Մոտակա բլուրից երևաց ձորահովտում ու լանջի վրա փռված Լյուբով ավանը։ Թիկունքից, բլուրի ետևից շողում էր արևը։ Մի կողմում, հեռագրասյան բաժակի վրա եռանդով գեղգեղում էր արտույտը։

Աստախովը որպես վարժական խմբի ուսուցումը նոր ավարտած, նշանակվել էր պոստի պետ։ Տեղավորվելու համար նա ընտրեց վերջին խրճիթը, որ գտնվում էր գյուղից քիչ դենը, սահմանի կողմում։ Խրճիթատերը,— սափրված ծուռոտանի, թաղիքե սպիտակ, լայնեզր գլխարկով մի լեհացի,— կազակներին տարավ մարագ, ցույց տվեց, թե որտեղ պետք է տեղավորել ձիերը։ Մարագից, ցախե նոսր ցանկապատից դենը կանաչին էր տալիս երեքնուկի հողամասը։ Բլրաշարքը ծուռումուռ ձգվել էր մինչև մոտակա անտառը, ավելի հեռու սպիտակին էին տալիս ճանապարհով հատված արտերը, ու էլի երեքնուկի կանաչ, փայլուն հողամասեր։ Մարագի ետևում, առվի մոտ հերթով հսկողություն էին կատարում հեռադիտակը վերցրած։ Մնացածները պառկում էին զով մարագում։ Այնտեղ զգացվում էր երկար մնացած հացի, փոշոտ մղեղի, մկան ծեռտի հոտը, նաև հողաժանգի քաղցրավուն, բորբոսային հոտը։

Իվանկովը մթին մի անկյունում, գութանի մոտ պառկելով, քնեց մինչև երեկո։ Նրան արթնացրին արևը մայր մտնելու ժամանակ։ Կրյուչկովը պտղունցով բռնեց նրա վզի մաշկը, քաշեց ու ասավ.

— Ո՞նց է պետական հացը կերել, հաստացրել վիզը, ի՞-ի՞։ Վե՛ր կաց, ա՛յ քեռի, գնա՛ գերմանացիներին հսկելու։

— Սարսաղություն մի՛ անի, Կոզմա։

— Վե՛ր կաց։

— Դե՛հ, թող։ Սարսաղ հո չե՞ս... ես հիմի վեր կկենամ։ Նա ոտքի ելավ ուռած՝ կարմրած դեմքով։ Պտտեց կաթսայաձև, կարճավիզ գլուխը, որ հուսալի կերպով դրված էր լայն ուսերին, քիթը մի քանի անգամ վեր քաշեց (մրսել էր, պառկած լինելով խոնավ գետնի վրա), կապեց փամփշտակալը ու իր ետևից հրացանը գետնի վրայով քարշ տվեց դեպի դուռը։ Փոխեց Շչեգոյլկովին, ու հարմարացնելով հեռադիտակը, երկար նայում էր հյուսիս-արևմուտք, դեպի անտառը։

Այնտեղ քամուց ծածանվում էին շերտ-շերտ փոված, սպիտակավուն արտերը, մայր մտնող արևի կարմրափայլ հեղեղը թափվում էր լաստենիների անտառի կանաչ հրվանդանի վրա։ Ավանի կողքին, փոքրիկ գետակում (որը ձգվել էր կապույտ, դեղատեսիլ աղեղի ձևով) ճղճղում էին լողացող տղաները։ Կանացի ցածր մի ձայն կանչում էր՝ «Ստա՛սյու, Ստա-ա՛-սյու, եկ ինձ մոտ»։ Շչեգոյլկովը թութուն փաթթեց, հեռանալիս ասաց.

— Մայրամուտը ո՞նց է վառվել հա՛-ա։ Քամի է լինելու։

— Քամի է լինելու,— համաձայնվեց Իվանկովը։

Գիշերվա պահին ձիերի թամբերը հանված էին։ Ավանում մարում էին լույսերն ու ձայները։ Հետևյալ օրվա առավոտյան Կրյուչկովը Իվանկովին կանչեց մառանից։

— Գնանք ավան։

— Ինչի՞։

— Մի բան ուտենք, խմենք։

— Ոչինչ դուրս չի գա,— կասկածեց Իվանկովը։

— Ես քեզ բան եմ ասում։ Հարցրել եմ այս տանտիրոջը։ Հրե՛ն, այն խրճիթում, տեսնում ես այն կղմինդրե մարաղը,— Կրյուչկովը ցույց տվեց սև, երկարեղունգ մատով,— այնտեղ ջհուդի մոտ գարեջուր կա, գնա՞նք։

Գնացին։ Նրանց ձայն տվեց Աստախովը՝ մարագի դռնից դուրս նայելով։

— Ո՞ւր եք գնում։

Կրյուչկովը, որ աստիճանով բարձր էր Աստախովից, ձեռքը թափ տվեց։

— Հիմի կգանք։

— Ե՛տ դարձեք, տղերք։

— Մի՛ հայհոյ։

Ներունի, քունքերը կոտնձ, մի կոպը շրջված մի հրեա, գլուխ տալով, դիմավորեց կազակներին։

— Գարեջուր կա՞։

Արդեն չկա, պարոն կոզակ։

— Փողով ենք ուզում, հա՛-ա։

— Իսո՛ւս Մարիամ, մի՞թե ես... ախ, պարոն կոզակ, հավատացեք ազնիվ հրեային, գարեջուր չկա՛։

— Սուտ ես ասում, ջհո՛ւդ։

— Չէ՛, պան կոզակ։ Ես ճիշտ եմ ասում։

— Ա՛յ թե ինչ, դու... — Կրյուչկովը բարկությամբ ընդհատեց նրան ու ձեռքը տարավ շալվարի գրպանը՝ մաշված քսակը հանելու։

— Գարեջուր բեր, թե չէ կսկսեմ հայհոյել։

Հրեան դրամը ճկույթով սեղմեց բռին, իջեցրեց խողովակաձև շրջված կոպը ու գնաց հաշտ։

Մի րոպեից հետո բերեց մի շիշ օղի. խոնավ շշին գարու թեփ էր կպել։

— Բա ասում էիր՝ չկա՞։ Ա՜խ դու բիձուկ։

— Ես ասում էի գարեջուր չկա։

— Ուտելու բան-ման տուր։

Կրյուչկովը շշի տակին շրմփացնելով՝ հանեց խցանը, լիքը լցրեց ծայրերը քերքրված թասը։

Կիսահարբած դուրս ելան։ Կրյուչկովը պար էր գալի ու բռունցքով սպառնում սև երախները բացած պատուհաններին։

Աստախովը ձանձրույթից հորանջում էր մարագում։ Պատի ետևում ձիերը խշխշալի ուտում էին խոտը։

Երեկոյան Պոպովը զեկուցագիր տարավ։ Ցերեկն անգործությամբ էին անցկացրել։

Երեկո։ Գիշեր։ Ավանի վերևում, բարձունքում նորալուսնի դեղին աղեղը՝ սրով կտրած վերքի նման։

Այգում, տան ետևում, խնձորենուց երբեմնակի ընկնում է հասունացած պտուղը։ Լսվում է թաց ճլմփոցը։ Մոտ կեսգիշերին Իվանկովը ավանի փողոցից ձիերի դոփյուն լսեց։ Առվից դուրս ելավ, դիտեց, բայց ամպը բինտի նման պա-

տեղ էր լուսինը. ոչինչ չէր երևում խավարի գորշ ծածկոցի ետևում։

Նա հրմշտեց մարագի դռան մոտ քնած Կրյուչկովին։

— Կոզմա, ձիավորներ են անցնում, վեր կաց։

— Ո՞րտեղից։

— Ավանից։

Դուրս ելան։ Փողոցից, մի հիսուն սաժեն հեռավորությունից սմբակների խուլ դոփյուն էր գալիս։

— Վազ տանք այգի։ Այնտեղից ավելի պարզ կլսենք։

Տան կողքից թռան դեպի այգին։ Պառկեցին ցանկապատի տակ։ Խուլ խոսակցություն։ Ասպանդակների չխկոց։ Թամքերի ճռռոց։ Ավելի ու ավելի մոտիկից։ Երևում են ձիավորների աղոտ ուրվագծերը։

Գնում են յուրաքանչյուր շարքում չորս հոգի։

— Ովքե՞ր եք, հե՛յ։

— Իսկ դու ո՞ւմ ես ուզում,— առջևի շարքերից արձագանքեց բարակ մի ձայն։

— Ովքե՞ր եք, կկրակեմ։— Կրյուչկովը շրխկացրեց փակաղակը։

— Թփռռո՜ւ,— մեկը կանգնեցրեց ձին և ապա մոտեցավ ցանկապատին։— Սա սահմանապահ ջոկա՞տ է։ Պո՞ստ է, թե ինչ։

— Պոստ է։

— Ո՞ր գնդից եք։

— Երրորդ կազակական գնդից։

— Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Տրիշին,— հարցրին մթության միջից։

Մոտ եկած մարդը պատասխանեց.

— Սա կազակական պոստ է, ձերդ բարեծննդություն։

Մեկն էլ մոտեցավ ցանկապատին։

— Բարև՛, կազակներ։

— Բարև՛ ձեզ,— մի փոքր ուշ արձագանքեց Իվանկովը։

— Վաղո՞ւց եք այստեղ։

— Երեկվանից։

Նա, որ երկրորդն էր մոտեցել, վառեց լուցկին, ծխեց, ու Կրյուչկովը տեսավ սահմանապահի տարազով մի սպա։

— Մեր սահմանապահ գունդը տեղափոխեցին սահմանից,— ասաց սպան, ծխելով պապիրոսը։— Նկատի ունեցեք, որ դուք հիմա հենց առջևի ճակատայիններ եք։ Հակառակորդը երևի վաղը կհասնի այստեղ։

— Իսկ դուք ո՞ւր եք գնում, ձերդ բարեծննդություն,— հարցրեց Կրյուչկովը՝ մատը պահելով հրահանի վրա։

— Մենք պետք է այստեղից երկու վերստ հեռավորությամբ միանանք մեր հեծելավաշտին։ Դեհ, տղե՛րք, հա՛յդա։ Բարո՛վ մնաք, կազակներ։

— Հաջողությո՛ւն։

Քամին լուսնից անգթաբար պոկեց ամպի բամբակե բինտը, ու ավանի վրա, այգիների ծառախմբերի, մարագի կոնավոր կտուրի, ջոկատի վրա,— որ բարձրանում էր բլրակը,— դեղին, թարախոտ արյունաջրի նման ընկավ մեռած լույսը։

Առավոտյան Ռվաշևը զեկուցագրով գնաց հարյուրյակ։ Աստախովը խոսեց տանտիրոջ հետ, և սա փոքրիկ վճարով թույլ տվեց երեքնուկ հնձել ձիերի համար։ Ձիերը գիշերվանից թամքած էին։ Կազակներին վախեցնում էր այն, որ իրենք մնացել էին դեմառդեմ հակառակորդի հետ։ Առաջ, երբ գիտեին, որ առջևում սահմանապահ զորախումբ կա, չէին ապրում կտրվածության ու մենակության այդ զգացումը. դա է՛լ ավելի ուժեղ արտահայտվեց, երբ իմացան, որ սահմանը մերկացված է։

Տանտիրոջ հողամասերը մարագից հեռու չէր։ Աստախովը Իվանկովին ու Շչեգոյլկովին նշանակեց հունձ անելու։ Տանտերը թաղիքե սպիտակ գլխարկը դրած, նրանց տարավ իր հողամասը։ Շչեգոյլկովը հնձում էր, Իվանկովն էլ հավաքում էր խոնավ, ծանր խոտը ու պարաններով խուրձ էր կապում։ Այդ ժամանակ Աստախովը, որ հեռադիտակով դիտում էր դեպի սահմանը տանող ճանապարհը, տեսավ հարավարևմտյան կողմից դաշտի միջով վազող մի տղա։ Սա թուխ, շմազաթափված նապաստակի պես սլանում էր բլրակից ու դեռ հեռվից ինչ-որ բղավում էր, թափահարելով փոքրիկ սերթուկի թևքերը։ Վազեվազ մոտեցավ, և օդ՝կուլ տալով, թարթելով կլորացած աչքերը, գոչեց.

— Կոզակ, կոզակ, գերմանը գալիս է, գերմանը հրե՞ն գալիս է։

Նա մեկնեց երկար թնքի կնճիթը, ու Աստախովը հեռադիտակը դնելով աչքերին, ապակիների կլորակների մեջ տեսավ ձիավորների հեռավոր, մեծ մի խումբ։ Հեռադիտակը աչքերի վրա պահած, թավ ձայնով կանչեց.

— Կրյուչկո՞վ։

Վերջինս դուրս թռավ մարագի ծուռ դռնից, նայեց շուրջը։

— Վազ տուր, կանչիր տղերանց։ Գերմանացինե՛ր են գալիս։ Գերմանական հեծյալ պարե՛կ։

Նա լսեց վազող Կրյուչկովի ոտնաձայնը և հիմա արդեն հեռադիտակով պարզ տեսնում էր խոտի գորշ շերտից դեպի առաջ շարժվող ձիավորների խումբը։

Նա նշմարում էր մինչև իսկ նրանց ձիերի թուխ-շիկավուն և համազգեստների մուգ-կապույտ գույնը։ Նրանք քսան մարդուց ավելի կլինեին։ Գալիս էին իրար գլխի հավաքված, խոնված. գալիս էին հարավ-արևմտյան կողմից, մինչդեռ դիտողը նրանց հյուսիս-արևմուտքից էր սպասում։ Նրանք կտրեցին անցան ճանապարհը ու շեղակի ընթացան բլրակի վրայով, հովտի վերևից, որտեղ փռված էր Լյուբով ավանը։ Կնճռոտված շրթունքներից, ատամների միջից լեզուն հանած, լարվածությունից հևալով, Իվանկովը պարանով պրկում էր խոտի խուրձը։ Նրա կողքին, ծխամորճը բերանին կանգնել էր ծուռոտանի լեհ տանտերը։ Նա ձեռքերը խոթել էր գոտու տակ, գլխարկի լայն եզրի տակից նոթոտ նայում էր հնձող Շչեգոյլկովին։

— Բա սա գերանդի՞ է,— ջղայնանում էր Շչեգոյլկովը՝ բարկացած թափահարելով փոքրիկ, խաղալիքանման գերանդին,— սրանո՞վ ես հնձում։

— Հնձում եմ,— պատասխանեց լեհացին՝ կրծոտված մուշտակի տակից դողացնելով լեզուն, ու մի մատը հանեց գոտու տակից։

— Քո այս գերանդիով կարելի է միայն կնկա ամոթատեղը հնձել։

— Ըհը՛մ,— համաձայնեց լեհացին։

Իվանկովը փոթկաց։ Նա ուզում էր մի բան ասել, բայց, շուրջը նայելով, տեսավ դեպի իրեն վազող Կրյուչկովին։ Սա վազում էր թուրը ձեռքին քիչ բարձրացրած, խորդուբորդ գետնի վրա ոտները վեր-վեր գցելով։

— Թողե՛ք աշխատանքը։

— Ինչո՞ւ,— հարցրեց Շչեգոյլկովը՝ գերանդու սուր ծայրը խրելով գետնի մեջ։

— Գերմանացինե՛ր են գալիս։

Իվանկովը վար գցեց պարանը։ Տանտերը կռացավ, ձեռները համարյա հասցրեց գետնին, ասես նրա գլխավերևից գնդակներ էին թռչում, ու վազեց դեպի տուն։

Հենց որ հասան մարագ ու հևիհև թռան ձիերի վրա, տեսան ռուսական զինվորների մի վաշտ, որը Պելիկալիխի կողմից մտնում էր ավան։ Կազակները սլացան դիմավորելու։ Աստախովը վաշտի հրամանատարին զեկուցեց, որ բլրակի վրայով, ավանը շրջանցելով, գալիս է գերմանական հեծյալ մի պարեկ։ Կապիտանը խստորեն նայեց իր կոշիկների քթերին, որոնց վրա փոշու եղյամ էր նստել, ու հարցրեց.

— Որքա՞ն են։

— Քսան մարդուց ավելի։

— Գնացեք նրանց ճանապարհը կտրելու, իսկ մենք այստեղից նրանց կգնդակոծենք։— Նա շուռ եկավ դեպի վաշտը, շարվելու հրաման տվեց ու արագ քայլքով տարավ զինվորներին։

Երբ կազակները թռան բլրակի վրա, գերմանացիներն արդեն նրանց կանխելով գալիս էին արագությամբ, կտրում դեպի Պելիկալիխ տանող ճանապարհը։ Առջևից գալիս էր սպան՝ բաց-շիկավուն, կարճապոչ մի ձի նստած։

— Վրա՛ տալ։ Մենք դրանց կքշենք դեպի երկրորդ պոստը,— հրաման տվեց Աստախովը։

Ավանում նրանց միացած մի հեծյալ սահմանապահ նրանցից ետ մնաց։

— Հը՞, ե՞տ ես մնում, աղբերացու,— շուռ եկավ ու բղավեց Աստախովը։

Սահմանապահը թափահարեց ձեռքը, սկսեց քայլքով իջնել ավան։ Կազակներն արագ վարգով էին ընթանում։ Նույնիսկ առանց հեռադիտակի էլ պարզ երևում էր գերմանական դրագունների կապույտ տարազը։ Նրանք գնում էին թեթև վարգով, դեպի երկրորդ պոստը, որ գտնվում էր կալվածատանը, ավանից երեք վերստ հեռու, և նայում էին կազակներին։ Նրանց բաժանող տարածությունը զգալիորեն կրճատվում էր։

— Գնդակոծե՛նք,— խոպոտ ասաց Աստախովը ու թամքից ցած թռավ։

Կանգնած, սանձերը ձեռներին փաթաթված, համազարկ տվին։ Իվանկովի ձին ծառս եղավ, վայր գցեց տիրոջը։ Վերջինս ընկնելով, տեսավ, թե ինչպես գերմանացիներից մեկը ընկավ ձիուց. սկզբում դանդաղ թեքվեց կողքի ու հանկարծ, ձեռները ցած գցելով, ընկավ։ Գերմանացիներն առանց կանգ առնելու, առանց կարաբինները պատյաններից հանելու, անցան քառատրոփի ու սլացան։ Ավելի նոսր շարք կազմեցին։ Քամին պտտում էր նրանց տեգերի գործվածքե հողմնացույցները։ Աստախովն առաջինը թռավ ձիու վրա։ Զոռ տվին մտրակներին։ Գերմանական պարեկը կտրուկ շուռ եկավ դեպի ձախ, ու կազակները հետապնդելով նրանց, շեշտակի անցան ընկած գերմանացուց քառասուն սաժեն հեռավորությամբ։ Այնուհետև սկսվում էր բլրաշատ մի վայր, որը կտրտված էր ո՛չ խորունկ ձորահովիտներով, կնճռոտված էր ատամնաձև զառիթափերով։ Հենց որ գերմանացիները ձորահովտից բարձրանում էին մյուս կողմը, կազակներն իջնում էին ձիերից ու ամեն մեկը մի պահունակ գնդակ էր արձակում։ Երկրորդ պոստի դիմաց էլի՛ մի գերմանացի գլորեցին։

— Ընկա՛վ,— գոչեց Կրյուչկովը՝ ոտը դնելով ասպանդակին։

— Մերոնք հիմի վրա կտան կալվածատնից... այնտեղ երկրորդ պոստն է...— մռմռաց Աստախովը՝ ծխախոտից դեղնած մատով փամփուշտների մի նոր պահունակ մղելով պահեստատուփի մեջ։ Գերմանացիներն անցան համաչափ վարգի։ Նրանք նայում էին կալվածատանը։ Բայց բակը դատարկ էր, արևը անկուշտ լիզում էր շենքերի կղմինդրե կտուրները։ Աստախովը կրակեց ձիու վրայից։ Ետևից ընթացող ու մի քիչ ետ մնացած գերմանացին թափահարեց գլուխը ու խթանեց իր ձին։

Հետո՛ արդեն պարզվեց, որ կազակները երկրորդ պոստից հեռացել էին այդ գիշեր, իմանալով, որ կալվածատնից կես վերստ հեռավորությամբ հեռագրաթելերը կտրված են։

— Քշե՛նք դեպի առաջին պոստը,— գոչեց Աստախովը՝ շուռ գալով դեպի մյուսները։

Եվ միայն այստեղ Իվանկովը նկատեց, որ Աստախովի քիթը թեփոտում է, քթածակի վրա մաշկի մի բարակ կտոր է կախվել։

— Նրանք ինչո՞ւ չեն պաշտպանվում,— թախծոտ հարցրեց Իվանկովը, մեջքի վրա շտկելով հրացանը։

— Դեռ սպասիր... — վրա բերեց Շչեգոյլկովը՝ շնչելով ինչպես խլնախտով հիվանդ ձի։

Գերմանացիները առանց ետ նայելու իջան առաջին ձորահովիտը։ Ձորահովտի մյուս կողմում սևին էր տալի հերկած հողը, այս կողմը ծածկված էր քոլախոտերով ու նոսր թփուտով։ Աստախովը կանգնեցրեց ձին, ետ տարավ գլխարկը, ձեռքի արտաքին կողմով սրբեց կաթիլ-կաթիլ քրտինքը։ Նայեց մյուսներին. բերանից դեն գցելով չորացած թուքը, ասաց.

— Իվանկով, թռի դեպի այն ձորակը, տես, թե որտեղ են նրանք։

Իվանկովը որի դեմքը աղյուսի կարմրություն էր ստացել ու մեջքը թրջվել քրտնքից, ագահությամբ լպստեց կոշտացած շրթունքները ու գնաց։

— Ծխե՛ինք, էլի,— շշնջալով ասաց Կրյուչկովը. նա մտրակով քշում էր բոռերը։

Իվանկովը քայլքով էր գնում, կիսականգնում էր ասպանդակի վրա, դիտում ձորակի հատակը։ Սկզբում նա տեսավ տեգերի ճոճվող ծայրերը, հետո հանկարծակի երևացին գերմանացիները, որոնք ետ էին դարձրել ձիերը, ձորակի լանջի տակից գրոհի էին գալիս։ Առջևից, սուրը սպառնալի բարձրացրած, սրարշավում էր սպան։ Իվանկովը, այն պահին, երբ դարձնում էր ձին, հիշողության մեջ տպավորվեց սպայի անբեղ, մռայլված դեմքը, նրա վայելչագեղ նստվածքը։ Գերմանական ձիերի դոփյունը ասես սրտի վրա թափվող կարկուտ լիներ։ Իվանկովը մեջքով ցավի չափ զգաց մահվան ծակող սարսուռը։ Նա շուռ տվեց ձին ու լուռ սլացավ դեպի ետ։

Աստախովը ժամանակ չունեցավ թութունի տոպրակը ծալելու, տոպրակը գցեց գրպանի կողքից։

Իվանկովի թիկունքում տեսնելով գերմանացիներին, Կրյուչկովը առաջինը սլացավ։ Աջ թևի գերմանացիները դա-

լիս էին Իվանովի ճանապարհը կտրելու։ Արտառոց արագությամբ արդեն հասնում էին նրան։ Նա մտրակով ձաղկում էր ձիուն, նայում շուրջը։ Նրա սփրթնած դեմքը ցնցվում էր ջղաձգությունից, աչքերը դուրս էին ընկնում ակնակապիճներից։ Առջևում, թամքի դաշին ընկած, սլանում էր Աստախովը։ Կրյուչկովը ու Շչեգոյլկովի ետևից թուխ փոշի էր բարձրանում։

«Ահա, ահա. կհասնի»,— պաղում էր միտքը, ու Իվանկովը չէր մտածում պաշտպանության մասին, իր մեծ, գեր մարմինը գունդ ու կծիկ անելով, գլուխը հասցնում էր ձիու վզին։

Նրա ետևից հասավ բարձրահասակ, շիկավուն մի գերմանացի։ Տեգով խփեց նրա մեջքին։ Ծակելով կաշվե գոտին, տեգի սայրը կես վերշոկ, շեղակի խրվեց մարմնի մեջ։

— Եղբայրնե՛ր, վրա՛ հասեք,— խելագարված բղավեց Իվանկովը և պատյանից դուրս քաշեց թուրը։ Նա ետ մղեց իր կողքին ուղղված երկրորդ հարվածը ու կիսականգնելով ասպանդակների վրա, թրով խփեց ձախ կողմից սլացող գերմանացու մեջքին։ Նրան շրջապատեցին։ Գերմանական բարձրամարմին մի ձի կուրծքը խփեց նրա ձիու կողքին, քիչ մնաց վայր գցեր, ու Իվանկովը մոտիկից, դեմառդեմ տեսավ օտար դեմքի սարսափելի պղտորությունը։

Առաջինը վրա հասավ Աստախովը նրան մի կողմ քշեցին։ Նա պաշտպանվում էր թրով, պատուտակի նման գալարվում էր թամքի վրա, բերանը բացած, մեռելի պես դունատված։ Իվանկովի վզին խփեցին թրի ծայրով։ Ձախ կողմից նրա վրա նետվեց մի դրագուն, ու նրա աչքերին աղոտ երևաց վեր բարձրացրած, հարվածող սուրը։ Իվանկովը դեմ արեց թուրը. պողպատը շառաչելով խփվեց պողպատին։ Ետևից տեգը խոթեցին նրա ուսափոկի տակ, համառորեն զոռ տվին, այն պոկելով ուսից։ Ձիու բարձրացած գլխի ետևից երևում էր պեպենոտ, տարեց մի գերմանացու քրտնաթոր, բորբոքված դեմքը։ Դեղացնելով կախ ընկած ծնոտը, գերմանացին ապարդյուն թափահարում էր սուրը՝ աշխատելով խփել Իվանկովի կրծքին։ Սուրը չէր հասնում, ու գերմանացին, ցցելով այն, թամքին կպցրած դեղին պատյանից դուրս էր քաշում կարաբինը՝ Իվանկովից չկտրելով արագ-արագ թարթող,

սարսափահար, կինամոնագույն աչքերը։ Նա դեռ չէր հանել կարաբինը, երբ Կրյուչկովը ձիու վրայից տեգով խփեց նրան, ու գերմանացին կրծքի վրա պատառոտելով մուգ-կապույտ համազգեստը, դեպի ետ ընկնելով, սարսափահար, զարմացած հառաչեց.

— Մայն գո՞տ[1]։

Մի կողմում ութ դրագուններ շրջապատեցին Կրյուչկովին։ Ուզում էին նրան կենդանի բռնել, բայց նա, ձին ծառս անելով, ցնցելով ամբողջ մարմինը, թրով պաշտպանվեց այնքան ժամանակ, մինչև որ հարվածներով այն գցեցին նրա ձեռքից։ Խլելով ամենամոտ գերմանացու տեգը, նա այն ուղղեց դեպի առաջ, ինչպես վարժությունների ժամանակ։

Ետ քաշված գերմանացիները թրերով ճղում էին տեգը։ Կավախառն, փոքրիկ մի հերկի մոտ իրար վրա էին նետվում, կատաղում, ճոճվում գոտեմարտի մեջ, ինչպես քամու տակ։ Սարսափից գազանանալով, կազակներն ու գերմանացիները խոցում ու թրատում էին ինչ որ պատահեր,— մեջքերը, թևերը, ձիերը և զենքերը... Մահվան սարսափից խելագարված ձիերը վրա էին տալի ու անհեթեթ կերպով զարնվում միմյանց։ Ուշքն ու միտքը հավաքելով, Իվանկովը մի քանի անգամ փորձեց հարվածել իրեն վրա հարձակվող երկարադեմ, բաց շիկավուն մի դրագունի գլխին, բայց թուրը ընկնում էր վերջինի սաղավարտի պողպատե կողերին ու սլկում էր։

Աստախովը ճեղքեց օղակը ու արյունաշաղախ դուրս թռավ։ Գերմանական սպան ընկավ նրա ետևից։ Հրացանն ուսից քաշելով, Աստախովը կրակեց համարյա դեմառդեմ ու սպանեց նրան։ Հենց այդ էլ բեկման պահ եղավ գոտեմարտում։ Գերմանացիները, որոնք բոլորն էլ վիրավորվել էին անհեթեթ հարվածներից, կորցնելով սպային, ցրիվ եկան, ետ քաշվեցին։ Նրանց չհետապնդեցին։ Նրանց ետևից չկրակեցին։ Կազակները ուղղակի սլացան դեպի Պելիկալին ավանը՝ հարյուրյակին միանալու. գերմանացիները, բարձրացնելով թամքից ընկած իրենց վիրավոր ընկերոջը, հեռացան դեպի սահմանը։

---

[1] Մայն գոտ — աստվա՞ծ իմ (Գերմ.)։

Մոտ կես վերստ անցնելով, Իվանկովը սկսեց հոհվել։

— Ես շարունակ... Ես ընկնում եմ։ — Նա կանգնեցրեց ձին, բայց Աստախովը քաշեց սանձը։

— Գնա՛լ։

Կրյուչկովը արյունը քսում էր երեսին, շոշափում էր ականջը։ Բլուզի վրա արյան կարմիր բծեր էին երևում։

Կալվածատնից դենը, ուր գտնվում էր երկրորդ պոստը, երկու մասի բաժանվեցին։

— Գնա՛լ դեպի աջ,— ասաց Աստախովը՝ ցույց տալով լաստենուտի ճահիճը, որ հեքիաթային գեղեցկությամբ կանչին էր տալիս բակի մյուս կողմում։

— Ո՛չ, դեպի ձախ,— համառեց Կրյուչկովը։

Բաժանվեցին։ Աստախովն ու Իվանկովը ավելի ուշ ժամանեցին ավան։ Ավանի եզրին նրանց սպասում էին իրենց հարյուրյակի կազակները։

Իվանկովը գցեց սանձը, թռավ թամքից ու օրորվելով ընկավ։ Թուրը դժվարությամբ հանեցին նրա քարացած ձեռքի միջից։

Մի ժամից հետո համարյա ամբողջ հարյուրյակը մեկնեց այն վայրը, ուր սպանվել էր գերմանական սպան։ Կազակները նրա վրայից հանեցին ոտնամանները, հագուստն ու զենքերը, խմբվեցին՝ դիտելով սպանվածի երիտասարդական, մռայլված, արդեն դեղնած դեմքը։ Ուստ-խոպերցի Տարասովը կարողացել էր սպանվածի վրայից հանել արծաթե ցանցով պատած ժամացույցը ու տեղնուտեղը դա ծախեց դասակապետ ուրյադնիկին։ Քսակի մեջ գտան մի բիչ փող, մի նամակ, ծրարի մեջ դրված բաց շիկավուն մազերի մի խոպոպ ու աղջկա մի լուսանկար՝ գոռոզաբար ժպտացող բերանով։

IX

Հետո դրանից սխրագործություն դուրս բերին։ Կրյուչկովը, հարյուրյակի հրամանատարի սիրելին, նրա զեկուցագրի հիման վրա գեորգևյան խաչ ստացավ։ Նրա ընկերները աննկատելի մնացին։ Հերոսին ուղարկեցին դիվիզիայի շտաբ, ուր նա թրև էր գալիս մինչև պատերազմի վերջը, ըստանալով, մնացած երեք խաչը այն բանի համար, որ Պետերբուրգից ու Մոսկվայից ազդեցիկ տիկիններ ու պարոնայք սպաներ էին գալիս նրան նայելու։ Տիկինները սքանչանում էին, տիկինները Դոնի կազակին հյուրասիրում էին թանկագին պապիրոսներով ու քաղցր բաներով, իսկ նա սկզբում հազար ու մի հայհոյանք էր թափում նրանց հասցեին, հետո էլ սպայական ուսադիրներ կրող շտաբային շողոքորթների բարերար ազդեցության տակ դա եկամտավոր պրոֆեսիա դարձրեց. պատմում էր «սխրագործության» մասին՝ գույները խտացնելով մինչև հնարավորն ու անհնարինը, ստում էր առանց խղճի խայթ զգալու, և կանայք սքանչանում էին, հիացմունքով նայում կազակ-հերոսի չեչոտ, ավազակային դեմքին։ Բոլորի համար էլ այդ ամենը լավ էր ու հաճելի։

Ցարը ժամանեց զորակայան, ու Կրյուչկովին տարան նրան ցույց տալու։ Շիկավուն, քնած կայսրը զննեց Կրյուչկովին ինչպես ձիուն. թարթեց նոթոտ, պարկանման կոպերը, թփթփացրեց նրա ուսին։

— Ապրե՛ս, կազակ,— ու դառնալով շքախմբին, ասաց,— ինձ զելտերյան ջուր տվեք։

Կրյուչկովի քյաքուլավոր գլուխը հա՛ երևում էր լրագրերում ու ժուռնալներում։ Կային պապիրոսներ Կրյուչկովի դիմանկարով։ Նիժնի-Նովգորոդի վաճառականությունը նրան ոսկեզենք մատուցեց։

Այն համազգեստը, որ հանվել էր Աստախովի սպանած գերմանական սպայից, կպցրին ֆաներե մի լայն տախտակի, ու գեներալ Ֆոն Ռեննենկամպֆը, ավտոմոբիլի մեջ դնելով այդ տախտակը վերցրած Իվանկովին ու ադյուտանտին, անցնում էր առաջավոր դիրքերը գնացող զորքերի շարքի առջևից, բորբոքիչ-կազյոննի ճառեր էր արտասանում։

Մինչդեռ բանն այսպես եղավ, մահվան դաշտում բախվեցին այն մարդիկ, որոնք ձեռները դեռ չէին աղտեղել իրենց նմանների ոչնչացմամբ, ու կենդանական սարսափով բռնված, իրար վրա էին տալիս, զարկվում, կույր հարվածներ հասցնում, այլանդակում իրենց և ձիերին, ու թողին փախան մարդուն սպանած կրակոցից վախեցած, իրարից հեռացան բարոյապես խեղված։

Սա սխրագործություն անվանեցին։

X

Ռազմաճակատը դեռ չէր ձգվել բազմավերստ, անդիջում իժի նման։ Սահմանի վրա հեծելազորային ընդհարումներ ու մարտեր էին բռնկվում։ Պատերազմը հայտարարվելուց հետո առաջին օրերին գերմանական հրամանատարությունը բաց թողեց իր շոշափուկները,— հեծելազորային ուժեղ պարեկները, որոնք անհանգստացնում էին մեր զորամասերին՝ անցնելով պոստերի կողքից տեղեկություններ հավաքելով զորամասերի դասավորության ու քանակի մասին։ Բրուսիլովի 8-րդ բանակի ճակատի առջևից գնում էր 12-րդ հեծելազորային դիվիզիան՝ գեներալ Կալեդինի հրամանատարությամբ։ Զախ կողմից, անցնելով ավստրիական սահմանը, շարժվում էր 11-րդ հեծելազորային դիվիզիան։ Նրա զորամասերը կովով վերցնելով Լեշնյովը և Բրոդին, կանգ առան ու մնացին միևնույն տեղում, ավստրիացիները օժանդակ ուժեր ստացան, ու հունգարական հեծելազորը հարձակումներ էր գործում մեր հեծելազորի վրա՝ անհանգստացնելով նրան ու նեղելով դեպի Բրոդի։

Գրիգորի Մելեխովը Լեշնյով քաղաքի մոտ տեղի ունեցած մարտից հետո իր մեջ հազթահարում էր ներքին տաղտրկալի մի ցավ։ Նա զգալիորեն նիհարել էր, քաշը պակասել էր, արշավանքների ու հանգստի ժամանակ, քնի ու երազի մեջ հաճախ նրան պատկերանում էր այն ավստրիացին, որին թրատել էր ցանկապատի մոտ։ Երազի մեջ նա խիստ հաճախ էր վերապրում այն առաջին գոտեմարտը, ու հուշերով լեցուն, նույնիսկ երազումն է՛լ ցգում էր իր աջ ձեռքի ջղաձգությունը, որով սեղմել էր նիզակի կոթը. արթնանալով ու աչքերը բանալով, իրենից վանում էր երազը, ձեռքով ծածկում ցավեցնելու չափ կկոցած աչքերը։

Հեծելազորը ոտնատակ էր անում հասունացած արտերը, դաշտերում հետքեր էին թողնում սուր սեպերով պայտերը, ասես կարկուտ էր տեղում ամբողջ Գալիցիայում։ Ձիավորների ծանր սապոգները տափանում էին ճանապարհները, խճում խճուղիները, տրորում օգոստոսյան ցեխը։

Այնտեղ, ուր մարտեր էին տեղի ունենում, արկերը ծաղիկ հիվանդության պես այլանդակում էին երկրի մոտալ դեմքը. գետնի մեջ, կարոտելով մարդու արյան, ժանդոտվում էին չուգունի ու պողպատի բեկորները։ Դիշերները հորիզոնի ետևում դեպի երկինք էին ձգվում երկարավուն, ալ-կարմիր հրացոլքերը, փայլակների պես փայլատակում էին գյուղերը, ավանները, քաղաքները։ Օգոստոսին, երբ հասունանում է պտուղը և հնձելու համար պատրաստ են լինում արտերը, քամու լվացած երկինքը անժպիտ, գորշ գույն էր առնում, մաշում էր թեժ շոգը այն հազվադեպ օրերին, երբ լավ եղանակ էր լինում։

Օգոստոսը վերջանալու մոտ էր։ Այգիներում թունդ դեղնին էր տալի տերևը, կոթից լցվում էր մոտալուտ մահվան բոսոր գույնով, ու հեռվից այնպես էր թվում, թե ծառերը ծվատ վերքերով են պատած ու նրանցից կարմրավուն արյուն է հոսում։

Գրիգորին հետաքրքրությամբ դիտում էր այն փոփոխությունները, որ կատարվում էին նույն հարյուրյակի իր ընկերների հետ։ Պրոխոր Զիկովը, որ հենց նոր էր վերադարձել լազարեթից և որի մի այտի վրա մնացել էր ձիու պայտած սմբակի հետքը, շրթունքների անկյուններում դեռ պահում էր ցավն ու տարակուսանքը, ավելի արագ էր թարթում հորթի փաղաքուշ իր աչքերը. Եգորկա Ժարկովը ամեն մի առիթով ծանր, անպատկառ հայհոյանքներ էր թափում, առաջվանից ավելի շատ էր մասխարություն անում և աշխարհում ամեն ինչ անիծում. Գրիգորիի հայրենակից Եմելյան Գրոշևը, լուրջ ու գործունյա մի կազակ, ամբողջովին մի տեսակ ածխացել էր, սևացել, անհեթեթ քրքիջներ էր արձակում, նրա ծիծաղը անբնական ու մռայլ էր։ Փոփոխություններ էին կատարվում յուրաքանչյուր դեմքի վրա, յուրաքանչյուրը յուրովի էր իր մեջ կրում և սնուցում պատերազմի ցանած երկաթե սերմերը, ու բոլորը միասին, երիտասարդ կազակները, որոնց հենց նոր էին քշել-բերել ստանիցաներից ու խուտորներից, շուրջը փռված մահվան սարսափի պայմաններում հիշեցնում էին հնձած, թոշնող և իրենց ուրվագծերը փոխող խոտաբույսերի ցողունները։

Գունդը, որ դուրս էր բերվել մարտերի գծից, երեք օրով հանգստանում էր, համալրվում Դոնից ժամանած օժանդակ ուժով։ Հարյուրյակը հենց նոր էր պատրաստվում գնալ

լողանալու կալվածատիրոջ լճակում, երբ երեք վերստ հեռու գտնվող կայանից դուրս եկավ հեծելազորի մի խոշոր ջոկատ։

Մինչդեռ չորրորդ հարյուրյակի կազակները հասան ամբարտակին, կայարանից դուրս եկած ջոկատը իջավ բլուրի տակ, ու հիմա պարզ երևում էր, որ հեծելազորը կազակներից է կազմված։ Պրոխոր Զիկովը կռանալով ամբարտակի վրա հանում էր բլուզը. գլուխը բարձրացրեց ու նայեց այն կողմը։

— Մերոնք են, Դոնի կազակները։

Գրիգորին աչքերը կկոցած նայում էր զորասյանը, որը գալիս էր դեպի կալվածքը։

— Երթայիններ[1] են դրանք։

— Երևի մեզ համալրում է եկել։

— Կարելի է երկրորդ հերթն են վերցնում։

— Մտի՛կ արեք, տղերք։ Հրե՛ն Ստեփան Աստախովը։ Ա՛յ, երրորդ շարքումն է,— բացականչեց Գրոշևը ու կարճ, ճոճռալի քրքջաց։

— Ուրեմս նրա նմաններին է՛լ են վերցնում։

— Հրե՛ն Անիկուշկան։

— Գրի՛շկա, Մե՛լեխով, տես, հրե՛ն աղբերդ։ Ճանաչեցի՞ր։

— Ճանաչեցի։

— Քեզանից մաղարիչ, դմբո, ես առաջինը ճանաչեցի։

Գրիգորին դեմքը կնճռոտելով խորազնին նայեց ու ճանաչեց Պետրոյի տակի ձին։ «Նորն են գնել»,— մտածեց ու հայացքը դարձրեց եղբոր դեմքի վրա, որ տարօրինակ կերպով փոխվել էր իրենց անջատման ժամանակամիջոցում, արևից թխացել էր, ցորնագույն բեղերի ծայրերը կտրված էին, արծաթավուն հոնքերը խանձվել էին արևից։ Գրիգորին գնաց նրան ընդառաջ՝ հանելով գլխարկը, թափահարելով թևը՝ ինչպես վարժությունների ժամանակ։ Հետևելով նրան, ամբարտակից գնացին կիսամերկ կազակները, կոխոտելով

[1] Երթային զորամասերն այն զորամասերն են, որոնք պահեստի զորքերից ուղարկվում են գործող բանակը համալրելու։

դատարկարուն խմիի փխրուն տունկերը ու թառամած կոատուկները։

Երթական հարյուրյակը շրջանցելով այգին գալիս էր դեպի կալվածքը, որտեղ տեղավորված էր գունդը։ Նրան առաջնորդում էր մի յասավուլ՝ տարեց ու ամրակազմ, նոր սափրված գլխով, շուրջը սափրված ուղիղ բերանի փայտանման պինդ ծալերով։

«Խոպոտ ձայն ունի, երևի նաև բարկացկոտ է»,— մտածեց Գրիգորին՝ ժպտալով եղբորը ու հարևանցի դիտելով յասավուլի պինդ քպացած կերպարանքը. նրա տակի կզաքիթ ձին, որ ըստ երևույթին կալմիկական ձիերի ցեղից էր։

— Հարյուրյա՛կ,— գոչեց յասավուլը մաքուր, հնչեղ ձայնով,— դասակային շարասյուներով, ձախ ուսն առաջ, մա՛րշ։

— Բարև, աղբերս,— գոչեց Գրիգորին, ժպտալով Պետրոյին, հուզվելով բերկրանքից։

— Փառք աստծու։ Ձեզ մոտ բերին։ Է՛, ո՞նց ես։

— Ոչի՛նչ։

— Սա՞ղ ես։

— Հլա սաղ եմ։

— Մերոնցից բարև։

— Ո՞նց են նրանք։

— Ողջ-առողջ են։

Պետրոն ձեռքը ամրակազմ, բաց-շիկավուն ձիու գավակին հենած, ամբողջ մարմնով շուռ էր գալիս դեպի ետ, ժպտալից աչքերով նայում Գրիգորիին ու հեռանում. նրան ծածկում էին մյուսների,— ծանոթների ու անծանոթների փոշոտված մեջքերը։

— Բարև՛, Մելեխով։ Խուտորից բարև ենք բերել։

— Դու է՞լ մեզ մոտ,— Գրիգորին ժպտաց՝ ճանաչելով Միշկա Կաշևոյին նրա ոսկեփունջ քյաքուլից։

— Ձեզ մոտ։ Մենք ոնց որ կորեկի վրա թափվող հավեր լինենք։

— Կկշտանաս կուտը կտցելով։ Ավելի շուտ քե՛զ կկըտցեն։

— Հա՛, է՛լ։

Ամբարտակից միմիայն շապիկով, մի ոտի վրա ոստոս-

տալով մոտենում էր Եգորկա Ժարկովը։ Նա կռանում էր, բաց անում շալվարը՝ աշխատելով ոտը տանել դրա մեջ։

— Բարև՛, հայրենակիցներ։

— Օ-հո՜։ Ախր դա Եգորկա Ժարկովն է։

— Է՛յ, յորդա՛ ձի, ոտներդ հո չե՞ն կապել։

— Է՛, մերս ո՞նց է, հը՞։

— Ողջ-առողջ է։

— Բարև է անում, իսկ նվերը չվերցրինք, առանց այդ էլ բեռներս ծանր է։

Եգորկան արտասովոր լուրջ դեմքով լսեց պատասխանը ու տկլոր հետույքով նստեց գետնի խոտի վրա՝ թաքցնելով հուզված դեմքը ու չկարողանալով դողդոջուն ոտքն անցկացնել շալվարի մեջ։

Կապույտ ներկված ցանկապատի ետևում կանգնած էին կիսամերկ կազակները. մյուս կողմից, շագանակի տունկերով եզերված ճանապարհով կալվածքի բակն էր լցվում հարյուրյակը՝ Դոնից եկած համալրումը։

— Ստանի՛ցա, բարև։

— Այդ դո՞ւ ես, հա՞, խնամի Ալեքսանդր։

— Հենց ես եմ, որ կամ։

— Անդրեյան, Անդրեյա՛ն, կախակա՛նչ սատանա, չե՞ս ճանաչում։

— Կնկանիցդ բարև, է՛յ, զինվոր տղա։

— Շնորհակալ եմ։

— Բա ո՞րտեղ է Բորիս Բելովը։

— Ո՞ր հարյուրյակում էր։

— Կարծեմ չորրորդում։

— Իսկ նա ո՞րտեղացի է։

— Վեշենսկայա ստանիցայի Զատոն խուտորից։

— Նա քո ինչի՞ն է պետք,— թուլիկ խոսակցությանը միջամտում է երրորդը։

— Պետք է, էլի՛։ Նամակ եմ բերել։

— Նա, աղբորս ասեմ, անցած օրը Ռայբրոդի մոտ ըսպանվեց։

— Ո՞նց թե՞...

— Աստված վկա։ Հենց աչքիս առաջ։ Գնդակը խփեց ձախ ծծի տակին։

— Այստեղ ո՞վ կա Զյորնայա ռեչկայից։

— Ձկա՛, ա՛նցկաց։

Հարյուրյակը ամբողջովին տեղ հասավ ու բակի մեջտեղում շարք կանգնեց։ Ամբարտակը լցվեց լողանալու համար վերադարձած կազակներով։

Մի քիչ հետո մոտեցան երթական հարյուրյակի հետ եկածները։ Գրիգորին նստեց եղբոր կողքին։ Ամբարտակի նամացած, փուխր կավից լեշի, խոնավության ծանր հոտ էր գալիս։ Թանձր ջրի եզրերը կանաչ խոտով էին ծածկված։ Գրիգորին ջարդում էր շապկի ծալերի ու կարերի մեջ եղած արյունազուրկ, թույլ ոջիլները ու պատմում էր։

— Հոգիս բեզարել է, Պետրո։ Հիմի ոնց որ թե զարկված լինեմ, թեև սաղ եմ... Ոնց որ թե ընկած լինեմ ջաղացքարերի տակ, դրանք սխկել են ինձ ու դեն գցել։— Նրա ձայնը տխուր էր, կերկերուն, ճակատի վրա առաջացել էր մոայլ շեղադիր, Պետրոյին անծանոթ, ինչ-որ փոփոխությամբ և օտարոտությամբ նրան վախեցնող մի կնճիռ (Պետրոն ներքին վախի զգացումով հենց նոր նկատեց այն)։

— Այդ ո՞նց է որ,— հարցրեց Պետրոն՝ հանելով շապիկը, մերկացնելով սպիտակ մարմինը. արևից թխացած պարանոցը ուղիղ գծով բաժանվում էր մարմնի սպիտակությունից։

— Ա՛յ թե ոնց,— վրա բերեց Գրիգորին, ու նրա ձայնը ուժեղացավ բարկությունից,— մարդկանց չարացրել են, ու պետք է սուս կենաս։ Խալիբ հիմի գելերից էլ վատ է։ Զորս բոլորդ չարություն է։ Ես հիմի մտածում եմ, որ եթե մի մարդու կծեմ, նա կատաղություն կստանա։

— Դու... մարդ սպանե՞լ ես։

— Սպանե՛լ եմ...— համարյա բղավեց Գրիգորին, շապիկը կոլոլեց ու գցեց ոտների տակ։ Հետո մատներով երկար ճմլեց կոկորդը՝ ասես այնտեղ վոված բառը դուրս բերելու համար, ու նայեց մի կողմ։

— Ասա՛,— հրամայեց Պետրոն՝ խուսափելով ու վախենալով եղբոր աչքերին նայելուց։

— Խիղճս սպանում է ինձ։ Լեշնյուկ քաղաքի մոտ մրզրախով խոցեցի մի մարդու։ Կատաղությունից էր դա... Ուրիշ կերպ չէր կարելի... իսկ ինչո՞, ես թրատեցի նրան։

— Է՞։

— Է ու ջան, զուր տեղը թրատեցի մարդուն, ու այդ իժի պատճառով հոգիս հիվանդ է։ Գիշերները երազիս մեջ երևվում է սրիկան։ Բա ես մեղավո՞ր եմ։

— Դու դեռ չես սխկվել։ Կաց, այդ բանն է՛լ կգա։

— Ձեր հարյուրյակը երթայի՞ն է,— հարցրեց Գրիգորին։

— Ինչի՞։ Չէ ,մենք քսանյոթերորդ գնդումն ենք։

— Իսկ ես կարծում էի, թե մեզ օգնելու եք եկել։

— Մեր հարյուրյակը ինչ-որ հետևակ դիվիզիայի են միացնում։ Մենք գնում ենք, որ հասնենք նրան, իսկ մեզ հետ մի երթային հարյուրյակ էր գալի, ցահելներ էին, ձեզ մոտ էին ուղարկվել։

— Այդպես։ Դեհ, եկ լողանանք։

Գրիգորին հապճեպ հանեց շալվարը, անցավ ամբարտակի կատարը. նա դարչնագույն էր, կորացած ու երկարամարմին, Պետրոյի աչքում տարիքավոր էր դարձել անջատման ժամանակամիջոցում։ Ձեռները պարզելով, նա գլխիվայր նետվեց ջուրը. ծանր, կանաչավուն ալիքները նրա վրա իրար եկան ու նետվեցին մի կողմ։ Նա լողում էր լճակի մեջտեղում աղմկող կազակների կողմը, ձեռները հաճույքով շրմփացնում ջրին՝ ծուլորեն շարժելով ուսերը։

Պետրոն երկար ժամանակ հանում էր կրծքին կախած խաչը ու մայրական օրհնության մեջ կարված աղոթքը։ Ղայթանը դրեց շապկի տակ, վախենալով ու զզվելով մտավ ջուրը, թրջեց կուրծքը, ուսերը, սկեց ու լող տվեց Գրիգորիի ետևից, հասավ նրան. անջատվելով, նրանք միաժամանակ լող տվին դեպի մյուս ափը, որ ավազոտ էր, թփուտով պատած։

Շարժումը թարմացնում էր, հանգստացնում, ու Գրիգորին թափահարելով թևերը, խոսում էր զուսպ կերպով, առանց քիչ առաջ եղած կրքոտության.

— Ոջիլը կերավ ինձ։ Դարդ եմ անում։ Երանի հիմի տանը լինեի. թևեր ունենայի, կթռչեի տուն։ Թեկուզ մի աչքով տեսնեի։ Ո՞նց են տանը։

— Նատալյան մեզ մոտ է։

— Հը՞։

— Ողջ-առողջ է։

— Հերը ու մերը ո՞նց են։

— Ոչի՛նչ։ Իսկ Նատալյան միշտ էլ քեզ է սպասում։ Նա հույս ունի, որ դու կվերադառնաս իր մոտ։

Գրիգորին փոփոխացնում էր ու դուրս թափում բերանը լցվող ջուրը։ Պետրոն գլուխը շուռ տալով, աշխատում էր նայել նրա աչքերին։

— Դու գոնե նամակներիդ մեջ բարև գրկի նրան։ Խեղճ կնիկը հենց քեզնով է ապրում։

— Նա... ուզում է կապե՞լ կտրված բանը, թե ինչ։

— Դե՛հ, ո՛նց ասեմ... Մարդը իր հույսով է ապրում։ Հիանալի կնիկ է։ Խիստ է։ Իրեն շատ լավ է պահում։ Ասես, թե աչքը դես ու դե՞ն գցի, իրեն վա՞տ պահի. չէ, այդպիսի բան չկա։

— Թող մա՛րդ առներ, էլի՛։

— Տարօրինակ բան ես ասում։

— Իսկի է՛լ տարօրինակ չէ։ Այդպես էլ պետք է լինի։

— Ձեր գործն է։ Ես դրան չեմ խառնվում։

— Բա Դունյաշկա՞ն ոնց է։

— Արդեն հարսնացու է, աղբեր ջան։ Այս տարի այնպե՛ս է մեծացել, լցվել, որ տեսնես, չես ճանաչի։

— Հա՛-ա՞,— ուրախացավ, դարմացավ Գրիգորին։

— Աստված վկա։ Մարդի կտան, իսկ մենք չենք է՛լ կարողանա բեղերս թրջել արաղով։ Ո՛վ գիտի, կսպանեն սրիկաները։

— Զարմանալու ի՞նչ կա։

Նրանք ջրից ելան, պառկեցին ավազի վրա, իրար կողքի, արմունկներին հենվելով, տաքանալով թեժացող արևի տակ։ Նրանց կողքից, կիսով չափ ջրից դուրս գալով, լողում էր Միշկա Կաշևոյը։

— Մտիր ջուրը, Գրիշկա։

— Մի քիչ կսպառկեմ, սպասիր։

Սորուն ավազի մեջ մի փոքրիկ բզեզ թաղելով, Գրիգորին հարցրեց.

— Ակսինյայի մասին ի՞նչ լուր կա։

— Մի օր, պատերազմ հայտարարելուց առաջ, նրան տեսա խուտորում։

— Ինչո՞ւ էր եկել այնտեղ։

— Եկել էր իրեն իրերը մարդուց տանելու։

Գրիգորին հաղաց ու բաղեր թաղեց, կողքի պահած բռով ավազը կիտեց վրան։

— Չխոսեցի՞ր նրա հետ։

— Միայն բարև տվի։ Նա տեսքով լավ էր, ուրախ։ Երևվում է, որ լավ է ապրում պանի տված հացով։

— Բա Ստեփանն ի՞նչ ասեց։

— Տվեց նրա իրերը։ Բանը լավ վերջացավ։ Բայց դու Ստեփանից զգուշացիր։ Աչքդ բաց պահիր։ Կազակներն ինձ ասում էին, թե Ստեփանը հարբած ժամանակ գլխից դուրս է տվել, որ հենց առաջին կռվում քեզ գնդակ կուտեցնի։

— Հը՛մ։

— Նա քեզ չի ների։

— Գիտեմ։

— Ինձ համար ձի առա,— Պետրոն փոխեց խոսակցության նյութը։

— Եզները ծախեցի՞ք։

— Ջալդիկ եզները։ Հարյուր ութսունով։ Գնեցի հարյուր հիսունով։ Ա՛մա ձի է, հա՛-ա։ Ցուցկանում առանք։

— Արտերը ո՞նց էին։

— Լավ էին։ Միայն թե չկարացի հնձել։ Բռնեցին և ուղարկեցին ֆրոնտ։

Խոսակցությունը հիմա տնտեսության մասին էր, կորցրել էր իր լարվածությունը։ Գրիգորին ագահությամբ էր լսում տնային նորությունները։ Դրանցով էր ապրում այդ բոպեին, ասես էլի առաջվա աշխույժ ու պարզ տղան էր։

— Դեհ, եկ զովանանք ու հանվենք,— առաջարկեց Պետրոն՝ փորի վրայից թափելով ավազը ու մի փոքր ցընցվելով։ Նրա մեջքի ու թևերի մաշկը բշտոտել էր։

Լճակից վերադառնում էին խմբով։ Ցանկապատի մոտ, որ այգին բաժանում էր կալվածքի բակից, Ստեփան Աստախովը հասավ նրանց։ Քայլելիս նա կախ ընկած քյաքուլը սանրում էր ոսկրե սանրով, անցկացնում գլխարկի հովարի տակ. հասավ Գրիգորիին։

— Հը՛, բարև, բարեկամ։

— Բարև,— Գրիգորին մի փոքր ետ մնաց։ Նրան դիմավորեց քիչ շփոթված, մեղավոր հայացքով։

— Հո չե՞ս մոռացել ինձ։

— Համարյա թե մոռացել եմ։

— Իսկ ես հիշում եմ քեզ,— հեգնաբար ժպտաց Ստեփանը ու առանց կանգ առնելու անցավ, ուսից գրկեց առջևից քայլող մի կազակի, որ ուրյադնիկի ուսադիրներով էր։

Մութն էր, երբ դիվիզիայի շտաբից հեռախոսագիր ստացան, որով հրաման էր տրվում դուրս գալ դիրքերը։ Գունդը հավաքվեց ընդամենը մի քառորդ ժամում. մարդկանցով համալրված, երգեր երգելով գնաց ծածկելու ճեղքվածքը, որ առաջացրել էր հունգարական հեծելազորը։

Հրաժեշտ տալու ժամանակ Պետրոն չորս տակ ծալած մի թուղթ դրեց եղբոր ձեռքի մեջ։

— Սա ի՞նչ է,— հարցրեց Գրիգորին։

— Աղոթք է, քեզ համար եմ արտագրել։ Վերցրու...

— Օգնո՞ւմ է։

— Մի՛ ծիծաղիր, Գրիգորի։

— Ես չեմ ծիծաղում։

— Դեհ, գնաս բարով, աղբերս։ Ողջ-առողջ լինես։ Դու ուրիշներից առաջ մի վազիր, թե չէ, գիտես, մահը տաքարյուն մարդկանց է բռնում։ Այնտեղ զգույշ եղիր,— բղավում էր Պետրոն։

— Բա աղո՞թքը։

Պետրոն թափ տվեց ձեռքը։

Մինչև տասնմեկը գնում էին առանց որևէ նախազգուշություն պահպանելու։ Հետո վաստակաստանները հարյուրյակներին հրաման տարան՝ գնալ որքան հնարավոր է լուռ, ծխելը դադարեցնել։

Հեռավոր մի անտառի վրա դեպի վեր էին թռչում կապտավուն մուժով գունավորված հրթիռները։

XI

Կինամոնագույն, սեկհ կազմով մի փոքրիկ հուշատետր։ Անկյունները մաշված ու ծալված են. տերը երկար ժամանակ պահել էր գրպանում։ Թերթիկները գրված են կլորավուն, շեղակի ձեռագրով։

«...Որոշ ժամանակից հետո առաջացավ թղթի հետ առնչվելու այս պահանջը։ Ուզում եմ ինստիտուտի «օրագրի»

պես մի բան պահել։ Ամենից առաջ այն աղջկա մասին. փետրվարին, չեմ հիշում որ օրը, նրա հետ ինձ ծանոթացրեց իր հայրենակիցը, ուսանող Բոյարիշկինը։ Ես նրանց հանդիպեցի կինեմատոգրաֆի մուտքի մոտ։ Բոյարիշկինը, մեզ ծանոթացնելով, ասաց. «Սա ստանիցայից է, Վեշենսկայայից։ Դու, Տիմաֆեյ, սիրիր ու հարգիր սրան։ Լիզան հիանալի աղջիկ է»։ Հիշում եմ, ես ինչ-որ անորոշ բան ասացի ու ձեռքիս մեջ պահեցի Լիզայի փափուկ, քրտնած ձեռքը։ Այսպես սկսվեց իմ ծանոթությունը Ելիզավետա Մոխովայի հետ։ Որ նա փչացած աղջիկ է, ես այդ հասկացա առաջին հայացքից. այդպիսի կանանց աչքերն ավելի շատ բան են ասում, քան պետք է։ Խոստովանում եմ, որ նա ինձ վրա բարենպաստ տպավորություն չթողեց. ամենից առաջ այդ տաք, քրտնած ձեռքը։ Ես երբեք չեմ տեսել, որ մարդկանց ձեռները այդպես քրտնեն. հետո՝ աչքերը, էապես շատ գեղեցիկ աչքեր են, մի տեսակ ընկույզի երանգավորումով, բայց միևնույն ժամանակ անհաճելի են։

Վա՜յա, ընկե՛րս, ես գիտակցաբար սահուն ոճով եմ գրում, նույնիսկ պատկերավորության եմ դիմում, որպեսզի իր ժամանակին, երբ այս «օրագիրը» հասնի քեզ, Սեմիպալատինսկ (այսպիսի միտք ունեմ. սիրային ինտրիգը վերջանալուց հետո, որ ես սկսել եմ Ելիզավետա Մոխովայի հետ, օրագիրս ուղարկելու եմ քեզ։ Անշուշտ այս փաստաթղթի ընթերցումը քիչ հաճույք չի պատճառի քեզ), դու ճշգրիտ պատկերացում ունենաս տեղի ունեցածի մասին։ Նկարագրելու եմ ժամանակագրական կարգով։ Ուրեմն, ես ծանոթացա նրա հետ, ու մենք երեքով գնացինք դիտելու մի ինչ-որ ամենասենտիմենտալ, անհեթեթ կինոնկար։ Բոյարիշկինը լուռ էր (նրա «անկյունային» ատամը ցավում էր, ինչպես արտահայտվեց ինքը), իսկ ես խիստ քիչ էի աշխուժացնում խոսակցությունը։ Պարզվեց, որ մենք հայրենակիցներ ենք, այսինքն իրար հարևան ստանիցաներից ենք, ու պատմելով ընդհանուր հիշողություններ տափաստանային տեսարանների գեղեցկության մասին և այլն, և այլն—լռեցինք։ Ես, եթե կարելի է այսպես արտահայտվել, անբռնազբոսիկ կերպով էի լռում, աղջիկը ոչ մի անհարմարություն չէր զգում, որ մենք սպառել էինք խոսակցությունը։ Ես նրանից իմացա, որ նա բժշկականի երկրորդ կուրսի ուսանողուհի է, ծագումով վաճառականի աղջիկ, ու շատ է սիրում թունդ թեյ և Ասմոլովի ծխախոտ։ Ինչպես տեսնում ես, սրանք շատ խըզճուկ տեղեկություններ էին ընկուզագույն աչքերով աղջկան ճանաչելու համար։ Հրաժեշտ տալու ժամանակ (մենք նրան ուղեկցեցինք մինչև տրամվայի կանգառը) նա խնդրեց հաճախել իր մոտ։ Ես գրեցի հասցեն։ Մտածում եմ գնալ ապրիլի 28-ին։

Ապրիլի 29

Այսօր եղա նրա մոտ, հյուրասիրեց թեյով ու հալվայով։ Էապես ասած՝ հետաքրքիր աղջիկ է։ Սուր լեզու ունի, չափավոր խելքի տեր է, միայն թե նրանից արցիբաշևյան հոտ է գալիս, այդ զգալի է նույնիսկ հեռվից։ Նրա մոտից ուշ վերադարձա։ Պապիրոս էի լցնում ու մտածում այնպիսի բաների մասին, որոնք բացարձակապես ոչ մի առնչություն չունեն նրա հետ,— մասնավորապես փողի մասին։ Կոստյումը սարսափելի մաշված է, իսկ «կապիտալ» չկա։ Առհասարակ հիմար վիճակ է։

Մայիսի 1

Սույն օրը նշանավորված է հետևյալ իրադարձությամբ։ Սոկոլնիկիում, շատ խաղաղ ժամանցի պահին տեղի ունեցավ հետևյալը. ոստիկանությունը և քսան հոգուց բաղկացած կազակական մի ջոկատ ցրում էին բանվորական մայիսմեկյան հավաքույթը։ Մի հարբած մարդ գավազանով խփեց մի կազակի ձիուն, իսկ սա գործի դրեց մտրակը։ (Չգիտես ինչու ընդունված է մտրակը նագայկա անվանել, բայց չէ՞ որ դա ունի իր հիանալի սեփական անունը, պրծավ գնաց...)։ Ես մոտեցա ու միջամտեցի։ Ինձ համակել էին ամենաազնիվ զգացումները, անկեղծ եմ ասում։ Միջամտեցի ու կազակին ասացի, որ նա լկտի մարդ է, ու էլի ինչ-որ բաներ։ Նա ետ տարավ մտրակը և ուզեց ինձ վրա բերել, բայց ես բավականաչափ պաղարյունությամբ ասացի, որ ինքս Կամենսկայա ստանիցայի կազակ եմ և կարող եմ նորան այնպիսի մի բան անել, որ սատանաներն էլ կսարսա-

գեն։ Կազակը բարեհոգի, ջահել մարդ էր. երևում էր, որ ծառայությունը դեռ նրան չէր դարձրել քիթ ու մռութ ջարդող։ Պատասխանեց, որ ինքը Ուստ-Խոպերսկայա ստանիցայից է ու մուշտակովի մեջ մարզված։ Մենք հեշտությամբ բաժանվեցինք։ Եթե նա իմ նկատմամբ որևէ բան ձեռնարկեր, կլիներ տուրուդմբոց և իմ անձնավորության համար է՛լ ավելի վատ մի բան։ Իմ միջամտությունը բացատրվում է նրանով, որ մեր խմբումն էր Ելիզավետան, իսկ ես նրա ներկայությամբ «սխրագործության» ինչ-որ տղայական ցանկություն եմ ունենում։ Ի՛մ իսկ աչքերի առաջ ես աքլոր եմ դառնում և զգում եմ, թե ինչպես արյունս խփում է գլխիս... Ա՛յ թե բանը որտեղ եմ հասցրել։

Մայիսի 3

Թունդ հարբելու տրամադրություն ունեմ։ Մի կողմ թողած այլ փորձանքները, փող չունեմ։ Շալվարիս ձագը, հենց ետևի ստորին մասը անհուսալի կերպով ճզվել է, պատռվել ոնց որ Դոնի գերհասունացած ձմերուկը։ Այն հույսը, թե կարը կպահի՝ ցնորական է։ Նույնպիսի հաջողությամբ կարելի է ձմերուկն էլ կարել։ Եկավ Վոլոդկա Ստրեժնևը։ Վաղը գնում եմ դասախոսության։

Մայիսի 7

Հորիցս փող ստացա։ Նամակում նախատում է ինձ, իսկ ես իսկի է՛լ չեմ ամաչում։ Հերիս եթե միայն գիտենար, որ իր տղան բարոյապես ետ է՛ մնում... Կոստյում գնեցի։ Փողկապիս վրա նույնիսկ կառապաններն է՛լ են ուշադրություն դարձնում։ Սափրվեցի Տվերսկայա փողոցի մի սափրիչի մոտ։ Այնտեղից դուրս եկա ոնց որ գալանտերեայի խանութի կոկլիկ գործակատար։ Սադովո-Տրիումֆայնայա փողոցի անկյունում ինձ ժպտաց քաղաքապահ ոստիկանը։ Ա՛մա սրիկան է, հա՛-ա։ Այսպիսի տեսքով հո մի ընդհանուր բան կա՞ իմ և նրա մեջ։ Բա երեք ամիս առա՞ջ։ Ամենայն շարժե խառնիտել պատմության լվացքաշորերը... Տրրամվայի վագոնի պատուհանից պատահմամբ տեսա Ելիզավետային։ Թափահարեց ձեռնոցը ու ժպտաց։ Այսպես եմ ես։

Մայիսի 8

«Բոլոր հասակները հնազանդ են սիրուն»։ Այնպես էլ ինձ պատկերանում է Տատյանայի ամուսնու բերանը՝ թնդանոթի երախի պես բացված։ Ես անհաղթահարելիորեն կուզենայի վերնասրահից թքել նրա բերանի մեջ։ Իսկ երբ միտքս է գալիս այդ ֆրազը, մանավանդ «հը-նա-զանդ» բառը, ծնոտներս ջղաձգորեն կծկվում են հորանջոցից, որ ամենայն հավանականությամբ ներվային է։

Բայց բանն այն է, որ ես իմ հասակում սիրահարված եմ։ Գրում եմ այս տողերը, ու մազերս բիզ-բիզ են լինում... Եղա Ելիզավետայի մոտ։ Սկսեցի շատ բարձրից ու հեռվից։ Նա այնպես էր ցույց տալիս, թե չի հասկանում, ու փորձում էր խոսակցությունը փոխադրել ուրիշ ռելսերի վրա։ Շուտ չէ արդյոք։ Է-է՛, գրողը տանի, այս կոստյումը խառնեց գործը... Նայում եմ հայելուն,— հիանալի եմ. մտածում եմ՝ ե՛կ արտահայտվեմ, էլի՛։ Իմ մեջ առողջ դատողությունը մի տեսակ գերազանցում է մնացած ամեն ինչից։ Եթե այժմ չբացատրվեմ, ապա երկու ամսից հետո արդեն ուշ կլինի. շալվարս կմաշվի ու կփտի այնպիսի տեղից, որ էլ ոչ մի բացատրություն հնարավոր չի լինի։ Գրում եմ ու ինքս ինձանով հիանում եմ. իմ մեջ որքա՞ն պայծառորեն են ներդաշնակվել մեր դարաշրջանի լավագույն մարդկանց բոլոր լավագույն զգացմունքները։ Ահա քեզ և՛ քնքուշ-բոցավառ սեր, և՛ «հաստատուն ձայն բանականության»։ Առաքինությունների մի վինեգրետ, չհաշված մյուս արժանիքներս։

Ես այնպես էլ չվերջացրի նրա հետ բացատրվելու նախապատրաստությունը։ Խանգարեց բնակարանի տիրուհին, որը նրան կանչեց միջանցք, ու ինչպես ես լսեցի, փոխարինաբար փող խնդրեց նրանից։ Ելիզավետան մերժեց, չնայելով, որ փող ուներ։ Ես այդ հաստատ գիտեի, ու պատկերացրի նրա դեմքը, երբ նա ճշմարտացի ձայնով մերժեց, պատկե-

բացրի նրա ընկուզագույն ու միանդամայն անկեղծ աչքերը։ Սիրո մասին խոսելու իմ ցանկությունը չքացավ։

Մայիսի 13

Ես բոլորովին սիրահարված եմ։ Դա ոչ մի կասկածի ենթակա չէ։ Բոլոր նշաններն առկա են։ Վաղը կրացատրվեմ։ Իմ դերը ես առայժմ այնպես էլ չեմ պարզել ինձ համար։

Մայիսի 14

Գործը ամենաանսպասելի կերպարանք ստացավ։ Տաք, հաճելի անձրև էր գալիս։ Մենք քայլում էինք Մոխովայա փողոցով։ Շեղակի քամին խփում էր մայթի սալերին։ Ես խոսում էի, իսկ նա քայլում էր լուռ, գլուխը կախած, ասես մտածմունքի մեջ ընկած։ Անձրևի կաթիլները նրա գլխարկից ընկնում էին այտի վրա, ու նա գեղեցիկ էր։ Բերում եմ մեր խոսակցությունը.

— Ելիզավետա Սերգեևնա, ես շարադրեցի այն, ինչ-որ զգում եմ։ Խոսքը ձերն է։

— Ես կասկածում եմ ձեր զգացմունքների անկեղծության վրա։

Ես ամենահիմար ձևով թոթվեցի ուսերս և ասացի, որ պատրաստ եմ երդվելու, կամ դրա պես մի բան։ Նա ասաց.

— Լսեք, դուք խոսեցիք Տուրգենևի հերոսների լեզվով։ Ավելի պարզ ասեիք։

— Սրանից էլ պա՞րզ։ Ես ձեզ սիրում եմ։

— Հետո ի՞նչ։

— Խոսքը ձերն է։

— Դուք պատասխան-խոստովանությո՞ւն եք ուզում։

— Ես պատասխան եմ ուզում։

— Գիտե՞ք ինչ, Տիմաֆեյ Իվանովիչ... Ես ի՞նչ կարող եմ ասել ձեզ։ Դուք ինձ մի քիչ դուր եք գալիս... Շատ բարձրահասակ եք։

— Դեռ կմեծանամ,— խոստացա ես։

— Բայց մենք այնքան քիչ ենք ծանոթ իրար հետ, ընդհանրապես...

— Եկեք միասին մի փութ աղ ուտենք ու ավելի հաստատ կճանաչենք միմյանց։

Ելիզավետան ձեռքի վարդագեղ ափով սրբեց թաց այտերը և ասաց.

— Ի՞նչ կա որ, եկեք միանանք։ Կապրենք-կտեսնենք։ Միայն թե ինձ ժամանակ տվեք, որ ես վերջ տամ իմ ունեցած նախկին կապին։

— Ո՞վ է նա,— հետաքրքրվեցի ես։

— Դուք նրան չեք ճանաչում։ Մի բժիշկ է, վեներոլոգ։

— Դուք ե՞րբ կազատվեք։

— Հույս ունեմ մինչև ուրբաթ։

— Մենք միասի՞ն ենք ապրելու։ Այսինքն մի բնակարանո՞ւմ։

— Այո, անշուշտ դա ավելի հարմար կլինի։ Դուք կտեղափոխվեք ինձ մոտ։

— Ինչո՞ւ։

— Ես շատ հարմար սենյակ ունեմ։ Մաքուր է, տանտիրուհին էլ համակրելի կին է։

Ես չառարկեցի։ Տվերսկայայի անկյունում մենք բաժանվեցինք։ Համբուրվեցինք՝ մեծ զարմանք պատճառելով մի ինչ-որ տիկնոջ։

Գալիք օրն ի՞նչ է բերելու ինձ։

Մայիսի 22

Մեղրալի օրեր եմ ապրում։ Այսօր «մեղրալի» տրամադրությունս մոայլվեց նրանով, որ Լիզան ինձ ասաց, որ ես փոխեմ սպիտակեղենս։ Իսկապես, սպիտակեղենս մաշված է, կոշմար է։ Բայց ախր փո՛ղ, փո՛ղ... Մախսում ենք իմ փողը, որ այնքան էլ շատ չի։ Մնում է աշխատանք փնտրել։

Մայիսի 24

Այսօր որոշեցի ինձ համար սպիտակեղեն գնել, բայց Լիզան ինձ չնախատեսված ծախսի տակ գցեց։ Նա սարսափելի ուզեց ճաշել մի լավ ռեստորանում և իրեն համար մի-

տաքսն գուլպաներ գնել։ Ճաշեցինք ու գնեցինք, բայց ես հուսահատված եմ. կորա՛վ իմ սպիտակեղենը։

Մայիսի 27

Նա ինձ ուժասպառ է անում։ Ես քայքայված եմ ֆիզիկապես ու հիշեցնում եմ արևածաղկի մերկ ցողունը։ Սա ոչ թե կին է, այլ կրակ ու ծուխ։

Հունիսի 2

Այսօր մենք արթնացանք իննին։ Ոտներիս մատները շարժելու անիծված սովորությունը հասցրեց հետևյալ հետևանքներին, Լիզան բացեց վերմակը ու երկար դիտեց գարշապարս։ Նա իր դիտողություններն այսպես եզրափակեց։

— Քո ոտը ոչ թե ոտ է, այլ ձիու սմբակ։ Դրանից էլ վատ է։ Եվ հետո մատներիդ այդ մազե՛րը, յա՛խկ։— Նա տենդային կերպով, զզվանքով ցնցեց ուսերը ու վերմակը քաշելով գլխին, շուռ եկավ դեպի պատը։

Ես շփոթվեցի։ Ոտներս ինձ քաշեցի ու շոշափեցի նրա ուսը։

— Լիզա։

— Թողե՛ք ինձ։

— Լիզա, դա ոչ մի բանի նման չի։ Ես հո չե՛մ կարող փոխել իմ ոտի ձևը, նա հո պատվերով չի պատրաստված, իսկ ինչ վերաբերում է բուսականության, ապա մազը հիմար բան է, որտեղ ասես բուսնում է։ Դու որպես բժշկականի ուսանողուհի, պետք է իմանաս բնական զարգացման օրենքները։

Նա երեսը շուռ տվեց դեպի ինձ։ Ընկուզագույն աչքերը բարկացկոտ, շոկոլադային երանգ ստացան։

— Հենց այսօր հաճեցեք քրտնքի դեմ փոշի գնել. ձեր ոտներից նեխած լեշի հոտ է գալիս։

Ես խելացի կերպով դիտողություն արեցի, որ նրա բոները շարունակ թաց են լինում։ Նա լռեց, իսկ իմ հոգուս վրա

բարձր ոճով ասած, ամպի ստվեր ընկավ... Այստեղ բանը ոչ ոտներն են, ոչ էլ մազը։

Հունիսի 4

Այսօր մենք մակույկով զբոսնեցինք Մոսկվա-գետի վրա։ Վերհիշեցինք Դոնը։ Ելիզավետան իրեն անվայել է պահում. շարունակ չարախոսում է իմ մասին, այն էլ երբեմն շատ կոպիտ կերպով։ Նրան նույն կերպ պատասխանել նշանակում է՝բանը անջատման հասցնել, իսկ այդ ես չեմ ուզում։ Ես, չնայելով այլևայլ հանգամանքներին, ավելի ու ավելի եմ կապվում նրա հետ։ Նա ուղղակի երես տված կին է։ Վախենում եմ, որ իմ ազդեցությունը բավական չլինի նրա բընավորությունն արմատապես վերափոխելու համար։ Հաճելի, անխոհեմ աղջիկ է։ Այն էլ այնպիսի բաներ արած աղջիկ, որոնց մասին ես միայն լսել էի։ Վերադառնալիս նա ինձ տարավ դեղարանային խանութ, ժպտալով գնեց տալկ ու էլի ինչ-որ մի բան։

— Սա քո ոտների քրտինքի դեմ է։

Ես խիստ վայելուչ գլուխ տվի ու շնորհակալություն հայտնեցի։

Միծաղելի է, բայց այդպես է։

Հունիսի 7

Շատ խղճուկ է նրա մտավոր պաշարը։ Մնացած դեպքերում նա ում ասես դաս կտա։

Ամեն օր քնելուց առաջ ոտներս լվանում եմ տաք ջրով, ողողում օդեկոլոնով ու ինչ-որ ախմախ բան եմ շաղ տալիս

Հունիսի 16

Օրեցօր նա անտանելի է դառնում։ Երեկ ջղային նոպա ունեցավ։ Դժվար է ապրել այդպիսի մեկի հետ։

Հունիսի 18

Ո՛չ մի ընդհանուր բան։ Մենք տարբեր լեզուներով ենք

խոսում։ Շաղկապող հիմունքը մահճակալն է։ Ամորձատված կյանք է, էլի՛։

Այսօր առավոտյան, նախքան հացի գնալը, նա գրպանիցս փող վերցրեց ու գտավ այս տետրը։ Հանեց։

— Սա ի՞նչ է, հը՞։

Ինձ վրա տաքություն եկավ։ Բա ի՞նչ կլինի, եթե մի-երկու էջ բաց անի։ Ես պատասխանեցի ու ինքս էլ զարմացա ձայնիս բնականության վրա.

— Թվաբանական հաշիվների տետր է։

Նա տետրը անտարբերությամբ դրեց գրպանս ու գնաց։ Պետք է զգույշ լինել։ Դեմառդեմ սրախոսությունները ա՛յն ժամանակ են լավ, երբ ուրիշը դրանք չի կարդում։

Վասյայի՝ ընկերոջս համար սա զվարճության աղբյուր է։

Հունիսի 21

Ես զարմանում եմ Ելիզավետայի վրա։ Նա 21 տարեկան է։ Ե՞րբ է այդպես բարոյալքվել։ Ի՞նչ ընտանիքից է նա, ինչպե՞ս է դաստիարակվել, ո՞վ է ձեռնամուխ եղել նրա զարգացմանը։ Ահա հարցեր, որոնք չափազանց հետաքրքրում են ինձ։ Նա շատ գեղեցիկ է։ Նա հպարտանում է իր մարմնի ձևերի կատարելությամբ։ Ինքնահարգման պաշտամունք, մնացածը՝ գոյություն չունի։ Մի քանի անգամ փորձեցի լրջորեն խոսել իր հետ... Ավելի հեշտ է հնադավանին համոզել, թե աստված չկա, քան վերադաստիարակել Լիզային։

Միասին ապրելը անհնարին ու հիմար բան է դառնում։ Սակայն ես չեմ շտապում բաժանվել։ Խոստովանում եմ, որ չնայելով այդ ամենին, նա ինձ դուր է գալիս։ Ներաճել է իմ մեջ։

Հունիսի 24

Գաղտնիքը հեշտությամբ էր բացվում։ Այսօր մենք մոտերմաբար խոսեցինք, և նա ասաց, որ ես ֆիզիկապես չեմ բավարարում իրեն։ Բաժանվելը դեռ չի ձևակերպված, երևի մոտ օրերս այդ կլինի։

Հունիսի 26

Նրան մի կատաղած բուղա՛ է հարկավոր։ Բուղա՛։

Հունիսի 28

Ինձ համար ծանր է նրանից բաժանվել։ Նա ինձ գցել է թակարդի, ոնց որ տիղմի մեջ։ Այսօր գնացինք Վորոբյովի լեռները։ Նա նստել էր համարում, պատուհանի մոտ, ու արևը կառնիզի քանդակի վրայից ընկել էր նրա մազերի խոպոպի վրա։ Մազերը զուտ ոսկու գույն ունեն։ Ահա քեզ և մանրուքների պոեզիան։

Հուլիսի 4

Ես թողել եմ աշխատանքը։ Ելիզավետան թողել է ինձ։ Այսօր Ստրեժնևի հետ գարեջուր խմեցինք։ Երեկ օղի խմեցինք։ Ելիզավետայից բաժանվեցի կոռեկտ կերպով, ինչպես այդ վայել է կուլտուրական մարդկանց։ Առանց դեմ ու դենի ու առանց այլևայլության։ Այսօր ես նրան տեսա Դիմիտրովկայում, ժոկեյի սապոգներով մի երիտասարդի հետ։ Իմ բարևին նա սառը պատասխան տվեց։ Ժամանակն է սրանով վերջացնել հուշերս,— ցամաքել է աղբյուրը։

Հուլիսի 30

Ստիպված եմ բոլորովին անսպասելի կերպով վերցնել գրիչս։ Պատերազմ է։ Անասնական էնտուզիազմի պայթյուն։ Յուրաքանչյուր կատելուկից, ոնց որ որդնած շնից, մի վերստի վրա պատրիոտիզմի հոտ է գալիս։ Տղերքը վրդովված են, իսկ ես ուրախացել եմ։ Ինձ մաշում է... «Կորուսյալ դրախտի» կարոտը։ Երեկ երազումս շատ հաճելի կերպով տեսա Ելիզավետային։ Նա թախծալի հետք է թողել։ Պետք է մոռանալ։

Օգոստոսի 1

Անմիտ աղմուկը ձանձրացրել է։ Վերադարձել է վաղուցվա թախիծը։ Ծծում եմ այն, ինչպես երեխան՝ ծծակը։

Օգոստոսի 3

Ե՛լք։ Գնում եմ պատերազմ։ Հիմա՞ր բան է։ Շա՞տ Ամոթալի՞ է։

Բավական է, էլի՛, բա ես ի՞նչ պիտի անեմ, ո՞ւր գնամ։ Գեթ մի կաթիլ այլ զգացումներ։ Բայց ախր երկու տարի առաջ չկար այս ձանձրույթը։ Սերանո՞ւմ եմ, թե ինչ։

Օգոստոսի 7

Գրում եմ վագոնում։ Հենց այժմ մեկնեցինք Վորոնեժից։ Վաղն իջնելու ենք Կամենսկայայում։ Հաստատ որոշել եմ՝ գնում եմ հանուն «հավատի, ցարի ու հայրենիքի»։

Օգոստոսի 12

Ինձ համար հրաժեշտի հանդիսավոր խնջույք կազմակերպեցին։ Ատամանը հարբեց և բորբոքիչ ճառ ասաց։ Հետո ես նրան շշնջալով ասացի՝ «Հիմար եք դուք, Անդրեյ Կարպովիչ»։ Նա ապշեց ու վիրավորվեց այնքան, որ թշերը գունատվեցին։ Ներողամտությամբ ֆշշաց. «Դուք էլ կրթված եք, հո այն մարդկանցից չե՞ք, որոնց մենք հազար ինն հարյուր հինգ թվականին ձաղկում էինք մտրակներով»։ Ես պատասխանեցի, որ ցավոք սրտի «այն մարդկանցից չեմ», ու նրան խորհուրդ տվի հարել էսդեկներին[1]։ Հայրս լաց եղավ ու մոտեցավ համբուրելու, իսկ քիթը խլնքոտ էր։ Եե՛ղճ, սիրելի հայր։ Դու իմ տեղը լիներիր, էլի՛։ Ես նրան կատակով առաջարկեցի գնալ ինձ հետ, ու նա վախեցած բացականչեց՝ «Ի՞նչ ես ասում, բա տնտեսությո՞ւնը»։ Վաղը մեկնում եմ կայարան։

Օգոստոսի 13

Տեղ-տեղ չհնձած արտեր։ Հողաթմբերի վրա պարարտ արջամկներ։ Զարմանալի նման են էժան լիտոգրաֆիայով հանված այն գերմանացիներին, որոնց Կոզմա Կրյուչկովը շարում է նիզակի վրա։ Ապրում էի ողջ-առողջ, ուսումնասիրում մաթեմատիկական և այլ ճշգրիտ գիտությունները, ու երբեք չէի կարծում, որ այսպիսի «շովինիստ» կդառնամ։ Գնդում արդեն ես ասուլիս կանեմ կազակների հետ։

Օգոստոսի 22

Մի ինչ-որ կայարանում տեսա գերիների առաջին խումբը։ Ավստրիական վայելչակազմ մի սպա, որ սպորտսմենի կեցվածք ուներ, հսկողության տակ գնում էր կայարան։ Կառամատույցում զրոսնող երկու օրիորդ ժպտացին նրան։ Քայլելիս նա խիստ ճարպիկ կերպով գլուխ տվեց ու նրանց օդային համբույր ուղարկեց։

Նույնիսկ գերության մեջ էլ մաքուր սափրված է, նրբատեսք, փայլում են դեղին ոտնամանները։ Ես հայացքով ուղեկցեցի նրան. գեղեցիկ երիտասարդ մարդ է, հաճելի, ընկերական դեմք ունի։ Հանդիպիր այդպիսի մեկին, ու ձեռքդ չի բարձրացնի թուրը։

Օգոստոսի 24

Փախստականնե՛ր, փախստականներ, փախստականներ... Բոլոր երկաթգծերը զբաղեցրած են փախստականներ ու զինվորներ փոխադրող գնացքներով։

Անցավ առաջին սանիտարական գնացքը։ Երբ դա կանգ առավ, վագոնից դուրս թռավ մի ջահել զինվոր։ Դեմքի վրա՝ վիրակապ։ Խոսակցեցինք։ Կարտեչով էր վիրավորվել։ Սարսափելի գոհ է, որ հաղիվ թե այլևս ծառայի, աչքը վնասված է։ Սիծաղում է։

Օգոստոսի 27

Ես իմ գնդումն եմ։ Գնդի հրամանատարը շատ հիանալի մի ծերուկ է։ Ցածի կազակներից է։ Այստեղ արդեն արյան հոտ է գալիս։ Լուրերի համաձայն, վաղը չէ մյուս օրը գնում ենք դիրքերը։ Երրորդ հարյուրյակի իմ 3-րդ դասակը բաղկացած է Կոնստանտինովսկայա ստանիցայի կազակներից։ Խամ տղերք են։ Միայն մեկը զվարճախոս ու երգիչ է։

[1] Էսդեկներ — Ռուսաստանում այսպես էին անվանում սոցիալ-դեմոկրատներին։

Օգոստոսի 28

Գնում ենք դիրքերը։ Այսօր առանձնապես ուժեղ որոտ-մունք է գալիս այնտեղից։ Այնպիսի տպավորություն ես ստանում, որ կարծես աղմկում է փոթորիկը ու ճայթում հեռավոր որոտը։ Ես նույնիսկ հոտ քաշեցի՝ հո անձրև չի՞ գալիս։ Բայց երկինքը սատինի գույն ունի, ջինջ է։

Իմ ձին երեկվանից կաղում է, ոտը խփել էր շրջիկ խոհանոցի անիվին։ Ամեն ինչ նոր է, արտասովոր, ու չգիտեմ թե ինչ անեմ, ինչի մասին գրեմ։

Օգոստոսի 30

Երեկ գրելու ժամանակ չկար։ Այժմ գրում եմ թամքի վրա, ձի նստած։ Ճոճվում եմ, ու մատիտիս տակից անճոռնի ու հրեշավոր տառեր են դուրս գալիս։ Երեք հոգով, պարաններ վերցրած, գնում ենք խոտի։

Այժմ տղերքը կապում են խոտը, իսկ ես պառկել եմ փորիս վրա և ուշացումով «արձանագրում եմ» երեկվա դեպքերը։ Երեկ վախիմիստր Տոլոկոննիկովը մեզ, վեց հոգու ուղարկեց հետախուզության (նա ինձ արհամարհանքով «ուսանող» է հորջորջում. «էյ, դու, ուսանող, ձիուդ նալը պոկվում է, իսկ դու չես է՞լ տեսնում»)։ Անցանք կիսով չափ այրված մի ինչ-որ ավանից։ Շոգ է։ Ձիերն է՛լ, մենք է՛լ քրտնած ենք։ Վատ է, որ կապակները ստիպված են ամառն է՛լ մահուդե շալվարներ հագնել։ Ավանից դենը, առվի մեջ տեսա առաջին սպանվածին։ Գերմանացի է։ Ոտները մինչև ծնկները առվի մեջ են, ինքը ընկած է մեջքի վրա։ Մի ձեռքը մնացել է մեջքի տակ, մյուսով սեղմել է հրացանի փամփուշտների պահունակը։ Կողքին հրացան չկա։ Տպավորությունը զարհուրելի է։ Հիշողությանս մեջ վերականգնում եմ տեսածս, ու սարսուռ է անցնում ուսերիս միջով... Նա մարմնի այնպիսի դիրք էր ընդունել, որ կարծես նստած էր եղել ոտներն առվի մեջ կախած, հետո էլ պառկել էր հանգստանալու։ Մոխրագույն համազգեստ, սաղավարտ։ Երևում էր ենթամաշկի պատռվածքը ծաղկաթերթերի ձևով, ինչպես պապիրոսների մեջ դալվում է թուղթը, որպեսզի ծխախոտը չթափվի։ Ես այնպես շշմեցի այդ առաջին տպավորությունից, որ չեմ հիշում նրա դեմքը։ Տեսա միայն դեղին, խոշոր

մրջյուններ, որոնք սողում էին դեղին ճակատի ու ապակիացած, կկոցված աչքերի վրա։ Կազակներն անցնելիս խաչակնքում էին։ Ես նայեցի համազգեստի աջ կողմի վրա եղած արյան բծին։ Գնդակը խփել էր նրա աջ կողքին ու դուրս թռել։ Անցնելիս նկատեցի, որ ձախ կողմից, այնտեղ, ուր դուրս էր թռել գնդակը, արյան բիծն ավելի մեծ է, և այն ավելի շատ է թափվել գետնի վրա, համազգեստն էլ ծվատված է։

Ես ցնցվելով անցա նրա կողքից։ Ուրեմն ահա՛ թե ի՞նչ...

Ավագ ուրյադնիկը, որի մականունը Տրունդալեյ էր, փորձում էր բարձրացնել մեր ընկած տրամադրությունը, անպատկառ մի անեկդոտ էր պատմում, իսկ իր շուրթերը դողում էին...

Ավանից կես վերստ հեռավորությամբ տեսանք մի ինչ-որ հրկիզված գործարանի պատերը, աղյուսե պատերը՝ մրբակալած, սև վերնածայրերով։ Մենք սիրտ չարեցինք ճանապարհով գնալ, որովհետև այն անցնում էր այդ ավերակի կողքից. որոշեցինք շրջանցել ավերակը։ Գնացինք մի կողմ, ու այդ ժամանակ այնտեղից սկսեցին կրակել մեզ վրա։ Որքան էլ սա ամոթալի է, առաջին կրակոցի ձայնը քիչ մնաց ինձ վայր գցեր թամքից։ Ես կպա թամքի դաշին և ներցիայով կռացա, քաշեցի սանձը։ Մենք սլացանք դեպի ավանը, անցնելով այն առվի կողքից, ուր գտնվում էր ըսպանված գերմանացին, ուշքի եկանք միայն այն ժամանակ, երբ ավանը մնացել էր մեր ետևում։ Հետո վերադարձանք իջանք ձիերից։ Ձին թողինք երկու ձիապահների մոտ, իսկ մենք չորս հոգով գնացինք ավանի ծայրի ուղղությամբ դեպի այն առուն։ Մենք կուզեկուզ քայլում էինք այդ առվի միջով։ Ես դեռ հեռվից տեսա սպանված գերմանացու ոտները՝ կարճ, դեղնավուն սապոգներով. ծնկները սուր ծալված էին։ Ես նրա կողքից անցա շունչս պահած, ինչպես քնած մարդու կողքից, ասես վախենում էի արթնացնել նրան։ Նրա տակին կանաչին էր տալիս խոնավ ճմլված խոտը...

Մենք պառկեցինք առվում, ու մի քանի րոպեից հետո այրված գործարանի ավերակներից իրար ետևից դուրս եկան ինն հոգի գերմանական ձիավոր ուլաններ... Ես նրանց ճանաչեցի իրենց տարազից։ Սպան անջատվեց ու ինչ-որ բղա-

վեց կտրուկ, կոկորդային ձայնով, ու նրանց փոքրիկ ջոկատը սլացավ դեպի մեզ։ Տղերքը կանչում են, որ ես իրենց գնեմ խոտը կապելու։ Գնում եմ։

Օգոստոսի 30

Ես ուզում եմ տվելացնել, թե ինչպես առաջին անգամ կրակեցի մարդու վրա։ Երբ գերմանական ուլանները սլացան մեր վրա (հենց հիմա կարծես աչքերիս առաջ են նրանց գորշ-կանաչավուն, մոդեսի գույնի համազգեստները, կիվերների պսպղուն բերանները, ծայրերին դրոշիկներ կրպցրած, ճոճվող տեգերը), ես տեսա, որ ուլանները մուգ-շագանակագույն ձիեր էին նստել։ Չգիտեմ ինչու հայացքս դարձրի առվի թմբին ու տեսա մի փոքրիկ, զմրուխտե բզեզ։ Իմ աչքում նա աճեց ու հրեշավոր մեծության հասավ։ Ճոճելով խոտերի ցողունները, նա հսկայի նման սողաց դեպի իմ արմունկը, որ հենված էր թմբի չորացած, մանր կավին, մագլցեց պաշտպանական գույնի իմ բլուզի թևքի վրայով ու արագությամբ իջավ հրացանի վրա, հրացանից՝ փոկի վրա։

Ես հետամուտ եղա նրա ճանապարհորդության ու լսեցի ուրյադնիկ Տրունդալեյի կերկերուն ձայնը՝ «Կրակեցե՛ք, է, ի՞նչ բանի եք»։

Ես ավելի պինդ տեղավորեցի արմունկս, կկոցեցի ձախ աչքս, զգացի, որ սիրտս ուռչում է, մեծանում այնպես, ինչպես այն զմրուխտե բզեզը։ Նշանոցի շրջանակի դիտոցում, մոխրագույն-կանաչավուն համազգեստի ֆոնի վրա դողում էր հրացանի հատիկը։ Տրունդալեյը կրակեց իմ կողքից։ Ես սեղմեցի հրահանը ու լսեցի իմ գնդակի սուլող թռիչքը։ Ամենայն հավանականությամբ ես իջեցրել էի նշանոցը, գնդակը շեղակի խփեց գուղձերին ու փոշի բարձրացրեց։ Առաջի՞ն կրակոցը մարդու վրա։ Ես մի պահունակ փամփուշտ արձակեցի առանց նշան բռնելու, առանց որևէ բան տեսնելու իմ առջևում։ Վերջին անգամ շարժեցի փակաղակը, չխկացրի, մոռանալով ,որ նրա մեջ փամփուշտներ չկան, ու միայն այդ ժամանակ նայեցի գերմանացիներին։ Նրանք էլի նույն շարքով դեպի ետ էին սլանում։ Սպան բոլորից ետ էր։ Նրանք ինն հոգի էին, ու ես տեսա սպայի ձիու մուգ-շագանակագույն գավակը և ուլանական գլխարկի բոլորքի մետաղե թիթեղը։

Սեպտեմբերի 2

Տոլստոյի «Պատերազմ և խաղաղության» մեջ կա մի տեղ, ուր նա խոսում է երկու թշնամի զորքերի միջև եղած գծի՝ անհայտության գծի մասին, որը ասես կենդանի մարդկանց բաժանում է մեռածներից։ Այն հեծելավաշտը, որտեղ ծառայում էր Նիկոլայ Ռոստովը, գնում էր գրոհի, ու Ռոստովը մտքում որոշում է այդ գիծը։ Այսօր ես առանձնապես պարզ վերհիշեցի վեպի այդ տեղը, որովհետև այսօր արշալույսին մենք գրոհ տվինք գերմանական հուսարների վրա... Առավոտից նրանց զորամասերը, որոնց հիանալի օժանդակում էր հրետանին, նեղում էին մեր հետևազորին։ Ես տեսա, թե ինչպես մեր զինվորները,— կարծեմ 241-րդ և 273-րդ հետևակ գնդերը,— խուճապահար փախչում էին։ Նրանք բոլորովին բարոյալքվել էին անհաջող հարձակման հետևանքով, երբ երկու գունդ առանց հրետանային օժանդակության հարձակման անցան ու ետ մղվեցին հակառակորդի կրակով, ոչնչացվեց ամբողջ կազմի համարյա երրորդ մասը։ Գերմանական հուսարները հետապնդեցին մեր հետևազորին։ Հենց այստեղ էլ կռվի ուղարկվեց մեր գունդը, որ գտնվում էր անտառի բացատում, ռեզերվում։ Ահա թե ես ինչպես եմ վերհիշում այդ կռիվը։ Առավոտյան ժամը 3-ին մենք դուրս եկանք Տիշվիշի գյուղից։ Թանձրանում էր լուսաբացին նախորդող խավարը։ Տարածվել էր սոճիների սաղարթի ու վարսակի արտերի սուր բույրը։ Գունդը գնում էր հարյուրյակների բաժանված։ Գյուղական ճամփից շուռ եկանք դեպի ձախ ու գնացինք արտերի միջով։ Ձիերը ընթանում էին փնչալով, սմբակներով թափում վարսակի վրա նստած հյութալի ցողը։

Նույնիսկ շինելներով էլ ցուրտ էր։ Գունդը երկար քարշ տվին դաշտով, ու արդեն մի ժամից հետո գնդի շտաբից եկավ մի սպա, կարգադրություն արեց հրամանատարին։ Մեր ծերուկը դժգոհ ձայնով հաղորդեց հրամանը, ու գունդը ուղիղ շուռ եկավ դեպի անտառը։ Մենք դասակային շարասյուններում իրար սեղմվելով, գնում էինք նեղ բացատով։

Մեզնից ձախ մի տեղ մարտ էր տեղի ունենում։ Գործում էին գերմանական մարտկոցներ, որոնք, դատելով նրանց արկերի պայթյուններից, մեծ քանակ էին կազմում։ Կրակոցների ձայները տատանվում էին, թվում էր, թե մեզանից վերև վառվում է սոճիների այդ հոտավետ սաղարթը։ Մենք ականջ դրինք մինչև արևածագը։ Հետո հնչեց «ուռան», որ թույլ էր, խղճուկ, անհյութ, ու՝ լռություն, որը խախտվեց գնդացիրների հստակ աշխատանքով։ Այդ րոպեին անհեթեթ կերպով խռնվում էին մտքերս, միակ բանը, որ այդ րոպեին ես պատկերացնում էի ծակող ցավի չափ պարզ ու որոշակի, դա շղթաներով հարձակման գնացող մեր հետևազորի կերպարանքն էր իր բազմաթիվ դեմքերով։

Ես տեսնում էի անճոռնի, գորշ կերպարանքներ պաշտպանական գույնի ճխլտված գլխարկներով, կոպիտ, ծնկներից ցած զինվորական սապոգներով, որոնք դոփում էին աշնանային հողը, ու լսում էի պարզ, խռպոտ քմծիծաղը գերմանական գնդացիրների, որոնք դիակնացնում էին այդ կենդանի, քրտնաթոր մարդկանց։ Երկու գունդն էլ ջախջախվեցին ու փախան, թողնելով զենքերը։ Նրանց կրնկակոխ հետապնդում էր գերմանական հուսարների գունդը։ Մենք նրանց վրա հարձակվելու էինք թևից, 300 սաժեն կամ ավելի քիչ հեռավորությունից։ Հրաման։ Վայրկենապես շարվում ենք։ Լսում եմ միակ, պաղարյուն, սանձի նման զսպող «մա՛րշ-մա՛րշ»-ը, ու թռչում ենք։ Ձիուս ականջներն այնպես պինդ են սեղմվել գլխին, որ թվում է, թե ձեռքով էլ չես պոկի։ Շուռ եմ գալի՝ ետևից սլանում են գնդի հրամատարը և երկու սպա։ Ահա այն գիծը, որ բաժանում է կենդանի մարդկանց ու մեռածներին։ Ահա նա՝ մեծ խելացնորությունը։

Հուսարները ճմրթում են իրենց ծռմռված շարքերը ու ետ են դառնում։ Հարյուրապետ Ջերնեցովը իմ աչքերի առաջ թրատեց գերմանական մի հուսարի։ Տեսա, թե ինչպես վեցերորդ հարյուրյակի մի կազակ, հասնելով մի գերմանացու, խելագարված վիճակում թրատեց նրա ձիու գավակը։ Բարձրացող թրից ծվեն-ծվեն ընկնում էր կաշին... Ո՛չ, դա անհրաժեշտ էր։ Դա անուն չունի։ Երբ վերադարձանք, տեսա Ջերնեցովի դեմքը,— կենտրոնացած, չափավոր ուրախ,—

նստել է պրեֆերանսի և ոչ թե թամքին, մարդ սպանելուց հետո։ Հարյուրապետ Ջերնեցովը շատ հեռու կգնա։ Ընդունակ մարդ է։

Սեպտեմբերի 4

Մենք հանգստանում ենք։ Ռազմաճակատին է մոտենում 2-րդ կորպուսի 4-րդ դիվիզիան։ Գտնվում ենք Կորիլինո ավանում։ Այսօր առավոտյան ավանի միջով արագ անցան 11-րդ հեծելազորային դիվիզիայի զորամասերը և Ուրալի կազակները։ Արևմուտքում մարտեր են տեղի ունենում։ Անընդհատ որոտմունք։ Ճաշից հետո գնացի դեպի լազարեթ։ Իմ աչքի առաջ ժամանեց վիրավորվածների տրանսպորտը։ Սանիտարները բեռնաթափելով քառանվի մի սայլ, ծիծաղում են։ Մոտենում եմ։ Ձեչոտ, բարձրահասակ մի զինվոր, տնքալով ու ժպտալով, իջնում է սանիտարի օգնությամբ։ «Ահա, ա՛յ կազակ,— ասում է նա՝ դիմելով ինձ,— սիսեռ են շաղ տվել հետույքիս։ Ջորս կարտեչով են խփել»։ Սանիտարը հարցնում է՝ «Արկը ետևո՞ւմդ է պայթել, հը՞»։— «Ի՞նչ ետևում, ի՞նչ բան, ես ինքս հետույքով էի հարձակվում»։ Երեքից դուրս եկավ գթության քույրը։ Ես նայեցի նրան, ու դողը ստիպեց հենվել սայլին։ Արտասովոր նմանություն Ելիզավետային։ Նույն աչքերը, դեմքի ձևը, քիթը, մազերը։ Նույնիսկ ձայնն է՛լ է նման։ Թե՞ ինձ այդպես է թվում։ Հիմա ես, անշուշտ, ամեն մի կնոջ նրան եմ նմանեցնելու։

Սեպտեմբերի 5

Մի օր ձիերը կերակրեցինք ձիակապարաններում, իսկ այժմ էլի այնտեղ ենք գնում։ Ես ֆիզիկապես ջարդված եմ։ Փողհարը ձի նստելու նշան է տալիս։ Ահա թե ես ում վրա հաճույքով կկրակեի տվյալ պահին...»

. . . . . .

Հարյուրյակի հրամանատարը Գրիգորի Մելեխովին ուղարկեց գնդի շտաբի հետ կապ պահպանելու։ Անցնելով նոր տեղի ունեցած մարտերի վայրից, Գրիգորին հենց խճուղու մոտ տեսավ մի սպանված կազակ։ Սա պառկած էր, շիկահեր գլուխը դրել էր ձիերի սմբակներով քերքրված խիտ

ճին։ Գրիգորին իջավ ձիուց ու քիթը բռնելով (մեռելից դիակնային սուր-քաղցրավուն հոտ էր փչում) խուզարկեց նրան։ Շալվարի գրպանում գտավ այս տետրը, մի կտոր քիմիական մատիտ և քսակը։ Հանեց փամփշտակալը ու հարևանցի դիտեց դժգույն, խոնավ դեմքը, որ արդեն սկսել էր նեխվել։ Քունքերն ու քթարմատը թաց էին, թավիշի նման փափուկ ու սևին էին տալիս. ճակատի վրա, կենտրոնացված, մեռյալ մտածմունքի շեղադիր կնճիռի մեջ գորշ փոշի էր նստել։

Գրիգորին սպանվածի դեմքը ծածկեց նրա գրպանում գտած բատիստե թաշկինակով ու գնաց շտաբ՝ երբեմնակի ետ նայելով։ Շտաբում տետրը հանձնեց գրագիրներին, և սրանք միասին կարդալով այն, ծիծաղեցին ուրիշի կարճ կյանքի ու նրա երկրային մոլություններ վրա։

XII

11-րդ հեծելազորային դիվիզիան Լեշնյուվը գրավելուց հետո կռվելով անցավ Ստանիսլավչիկը, Ռաձիվիլովը, Բրոդին ու օգոստոսի 15-ին դիրքեր գրավեց Կամենկա-Ստրումիլովո քաղաքի մոտ։ Ետևից գալիս էր բանակը. ստրատեգիական կարևոր վայրերում կենտրոնանում էին հետևակ զորամասերը, ճանապարհների հանգույցներում տեղավորվում էին շտաբներն ու գումակները։ Բալթիկայից մահացու կեմի նման ձգվել էր ռազմաճակատը։ Շտաբներում լայն հարձակման պլաններ էին մշակվում, քարտեզների վրա կռանում էին գեներալները, մարտական հրամաններ տանելով սլանում էին սուրհանդակները, հարյուր հազարավոր զինվորներ դեպի մահ էին գնում...

Հետախույզները հաղորդում էին, որ հակառակորդի հեծելազորային խոշոր ուժեր են մոտենում քաղաքին։ Ճանապարհների մոտ, փոքրիկ անտառներում ընդհարումներ էին լինում, կազակական պարեկները հանդիպում էին թշնամու հետախուզական խմբերին։

Գրիգոր Մելեխովը արշավանքի բոլոր օրերին, եղբորից բաժանվելուց հետո, փորձում էր ու չէր կարողանում հոգու մեջ հենարան գտնել, որպեսզի վերջ տար հիվանդոտ մտորումներին ու վերադարձներ առաջվա հանգիստ տրամադրությունը։ Վերջին երթական հարյուրյակի հետ գունդ բերվեցին երրորդ հերթի կազակները։ Սրանցից մեկը, Կազանսկայա ստանիցայի կազակ Ալեքսեյ Ուրյուպինը ընկավ այն դասակը, ուր գտնվում էր Գրիգորին։ Ուրյուպինը բարձրահասակ էր, մի փոքր կուզիկ, դուրս ընկած ստորին ծնոտով ու բեղերի կալմիկական ծամերով. չնայելով հասակին, միշտ ծիծաղում էին նրա ուրախ, աներկյուղ աչքերը, գլուխը ճաղատ էր, մերկ, կոնավոր-ուռուցիկ գանգի միայն կողքերն էին նոսր, շեկ մազերով ծածկված։ Առաջին իսկ օրվանից կազակները նրան տվին «Զուբատի»[1] մականունը։ Բրոդիի մոտ, կռվից հետո, գունդը հանգստանում էր մի օրով։ Գրիգորին Զուբատիի հետ տեղավորվել էր մի խրճիթում։ Նրանք խոսակցություն սկսեցին։

— Մելեխով, դու ոնց որ թե թառամած ես։

— Ո՞նց թե թառամած։— Գրիգորին մռայլվեց։

— Թթված ես, էլի՛ մի տեսակ հիվանդ ես,— բացատրեց Զուբատին։ Նրանք ձիակապարանում կեր էին տալիս ձիերին, ծխում էին մամռակալած, խարխուլ ցանկապատին հենվելով։ Փողոցով, չորս-չորս շարքերով գնում էին հուսարները, ցանկապատերի տակ դիակներ էին թափված (ավստրիացիներին դուրս մղելով, կռվել էին արվարձանի փողոցներում), հրդեհված սինագոգի ավերակներից ծուխ էր բարձրանում։ Քաղաքը մեծ ավերածության ու նողկալի ամայության մի պատկեր էր իրիկնադեմին այդ ճոխ գունազարդված ժամին։

— Ես առողջ եմ,— Գրիգորին թքեց, առանց նայելու Զուբատիին։

— Սուտ ես ասում։ Հո տեսնում եմ։

— Ի՞նչ ես տեսնում։

— Վախո՞ւմ ես, տղա։ Սարսափո՞ւմ ես մահից։

— Սարսաղ ես դու,— արհամարհանքով ասաց Գրիգորին ու աչքերը կկոցելով՝ զննեց եղունգները։

— Ասա, դու մարդ սպանե՞լ ես,— զննողաբար նայելով Գրիգորիի դեմքին, հարցրեց Զուբատին։

---

1 Զուբատի — քյաքուլավոր (Ս. Թ.)։

— Սպանել եմ, է՞հ։

— Հոգիդ ցավո՞ւմ է։

— Ցավում է՞,— քմծիծաղ տվեց Գրիգորին։

Զուբատին պատյանից դուրս քաշեց թուրը։

— Ուզում ես՝ գլուխդ կտրեմ։

— Հետո՞։

— Կսպա՛նեմ ու «ախ» է՛լ չեմ քաշի, խիղճ ասածդ բանը չկա իմ մեջ։— Զուբատիի աչքերը ժպտում էին, բայց Գրիգորին նրա ձայնից, նրա ռունգների գիշատչական դողից հասկացավ, որ նա լուրջ է ասում։

— Վայրենի ու մազալու ես դու,— ասաց Գրիգորին՝ ուշադրությամբ զննելով նրա դեմքը։

— Քո սիրտը ջրիկ է։ Իսկ դու գիտե՞ս ինչ բան է բակլանովյան հարվածը։ Մտի՛կ արա։

Զուբատին ընտրեց պարտեզի մի շատ հին կեչի ծառ, կռանալով ու աչքերը պլշած, գնաց դեպի ծառը։ Նրա երկար, ջլուտ, խիստ լայնադաստակ ձեռները անշարժ կախվել էին։

— Մտի՛կ արա։

Նա դանդաղ ետ տարավ թուրը, ու պպզելով, հանկարծ սարսափելի ուժով շեղակի հարված տվեց։ Կեչին արմատից երկու արշին վերև կտրվելով, ընկավ, ճյուղերով կպավ պատուհանների դատարկ շրջանակներին, չանգռոտեց տան պատը։

— Տեսա՞ր։ Սովորիր։ Եղել է մի ատաման Բակլանով, լսե՞լ ես։ Նա մի թուր ուներ փողրակի մեջ սնդիկ լցրած, դժվար էր բարձրացնել, ամա որ ձիուն խփեր, մեջտեղից կես կաներ։ Բա-ա՜ս։

Գրիգորին երկար ժամանակ չէր կարողանում յուրացնել հարվածի բարդ տեխնիկան։

— Ուժեղ ես դու, ամա թրատելու մեջ հիմար։ Ա՜յ թե ոնց պետք է անել,— սովորեցնում էր Զուբատին, ու նրա թուրը հրեշավոր ուժով, շեղակի զարկով խոցում էր նպատակը։

— Մարդուն թրատիր համարձակ կերպով։ Նա, մարդը, կակուղ է ոնց որ խմորը,— խրատում էր Զուբատին, ծիծաղում աչքերով։— Դու մի՛ մտածիր դեսից-դենից։ Դու կա-

զակ ես, քո գործն է թրատել առանց հարցուփորձի։ Կովում թշնամուն սպանելը սուրբ գործ է։ Ամեն մի սպանվածի համար աստված թողություն կտա քո մի մեղքին, ոնց որ օձին սպանելու համար։ Կենդանուն, ասենք թե հորթին, առանց կարիքի չի կարելի սպանել, իսկ մարդուն ոչնչացրու։ Մուտառ է նա, մարդը... Կեղտոտ է, գեշ հոտ է տարածում երկրի վրա, թունավոր սնկի պես է ապրում։

Լսելով Գրիգորիի առարկությունները, նա կնճռոտեց դեմքը ու կամակորությամբ լռեց։

Գրիգորին զարմանքով նկատում էր, որ բոլոր ձիերն էլ առանց պատճառի վախենում են Զուբատիից։ Երբ վերջինս մոտենում էր ձիակապարանին, ձիերը բարձրացնում էին ականջները, հավաքվում իրար գլխի, կարծես ոչ թե մարդ, այլ գազան էր մոտենում նրանց։ Ստանիսլավչիկի մոտ հարյուրյակը հարձակվելով անտառոտ ու ճահճային վայրում, ստիպված էր իջնել ձիերից։ Ձիապահները վերցնում էին ձիերը ու գնում ձորահովիտ, թաքստոցը։ Զուբատիին հրամայված էր ձիեր տանել, բայց նա կտրականապես հրաժարվեց։

— Ուրյուպին, շան ծիծ կերած, ի՞նչ օյին ես խաղում, հը՞։ Ինչո՞ւ չես տանում ձիերը,— հարձակվեց նրա վրա դասակապետ ուրյադնիկը։

— Նրանք ինձանից վախենում են, աստված վկա,— հավատացնում էր Զուբատին՝ թաքցնելով աչքերի մշտական ծիծաղը։

Նա երբեք ձիապահ չէր եղել, իր նժույգի հետ փաղաքշանքով էր վարվում, գուրգուրում և խնամում էր նրան, բայց Գրիգորին միշտ նկատում էր հետևյալը. հենց որ Զուբատին մոտենում էր իր ձիուն, ըստ սովորության չշարժելով ազդրերին սեղմած ձեռները, ձիու մեջքով դող էր անցնում. ձին անհանգստանում էր։

— Ա՜յ տղա, ասա, ձիերն ինչո՞ւ են քեզանից խլշկոտում, հը՞,— մի անգամ հարցրեց Գրիգորին։

— Ես ի՞նչ իմանամ,— Զուբատին թոթվեց ուսերը,— ես նրանց խղճում եմ։

— Հարբածներին հոտից են ճանաչում, վախենում նրանցից, իսկ դու հարբած չես։

— Իմ սիրտը կոշտ է, նրանք զգում են։

— Գիլի սիրտ ունես դու, կարելի է իսկի չունես է՞լ, քո մեջ սրտի տեղ քարի մի կտոր է դրված։

— Կարող է պատահել,— սիրով համաձայնում էր Զուբատին։

Կամենկա-Ստրումիլովո քաղաքի մոտ 3-րդ դասակն ամբողջովին, դասակապետ սպայի գլխավորությամբ մեկնեց հետախուզության. նախընթաց օրը թշնամու կողմից փոխած մի չեխ հրամանատարությանը հաղորդել էր ավստրիական զորամասերի դասավորության և Գորոշի-Ստավինցկի գծով ենթադրվելիք հակահարձակման մասին. պահանջվում էր շարունակ հսկել այն ճանապարհը, որով, ինչպես ենթադրվում էր շարժվելու էին հակառակորդի զորամասերը. այդ նպատակով դասակապետ սպան անտառի եզրում թողեց դասակապետ ուրյադնիկին ու չորս կազակ, իսկ մնացածների հետ գնաց մի ինչ-որ բնակավայրի կողմինդրե կտուրների ուղղությամբ, որոնք երևում էին բլուրի ետևից։

Անտառի եզրին, մի հին, սրածայր մատուռի մոտ, որի վրայի խաչելությունը ժանգոտված էր, մնացին Գրիգորի Մելեխովը. ուրյադնիկը. երիտասարդ կազակներից Սիլանտևը, Զուբատին և Միշկա Կաշևոյը։

— Իշնե՛լ ձիերից, տղերք,— հրամայեց ուրյադնիկը։— Կաշևոյ, ձիերը տար հրե՛ն այն սոճիների ետևը,— հա, էլի՛, այն սոճիների, որ ավելի խիտ են։

Կազակները պառկած էին մի ջարդված, չորացած սոճու տակ, ծխում էին ուրյադնիկն աչքը չէր կտրում հեռադիտակից։ Նրանցից տասը քայլ հեռավորությամբ ծածանվում էր չհնձած, հատիկները թափված արտը։ Քամուց դատարկված հասկերը ծռվում էին ու տխուր շրշում։ Կազակները կես ժամ պառկեցին, ծուլորեն ֆրազներ փոխանակեցին։ Հեռո՛ւ-հեռվում, քաղաքից դեպի աջ անլռելի որոտում էին հրանոթները։ Գրիգորին սողեսող մոտեցավ արտին ու լիքը հասկեր ջոկելով, սկսեց ճմլել դրանք, ծամել կոշտ, չորացած հատիկները։

— Ոնց որ թե ավստրիացիներ են,— կամացուկ բացականչեց ուրյադնիկը։

— Ո՞րտեղ,— ցնցվեց Սիլանտևը։

— Հրե՛ն, անտառից են դուրս գալիս։ Աջ կողմը մտիկ տուր։

Հեռավոր, փոքրիկ անտառից դուրս եկան մի խումբ ձիավորներ։ Կանգ առնելով, նրանք դիտեցին դաշտը ու անտառի հեռատարած հրվանդանները, հետո շարժվեցին դեպի կազակները։

— Մե՛լեխով,— կանչեց ուրյադնիկը։

Գրիգորին սողեսող հասավ սոճուն։

— Սպասենք մինչև մոտենան ու համազարկ տանք։ Տը-ղե՛րք, պատրաստե՛լ հրացանները,— տենդորեն շշնջաց ուրյադնիկը։

Ձիավորները աջ կողմից գալիս էին քայլքով։ Զորսը սոճու տակ պառկել էին լուռ, շունչները պահած։

...ա՛ուխտ, կապրա՛լ,— քամին բերեց երիտասարդական հնչեղ մի ձայն։

Գրիգորին մի քիչ բարձրացրեց գլուխը. հունգարական վեց հուսար, քուլերով զարդարուն ու գեղեցիկ կուրտկաներ հագած, գալիս էին խմբովին։ Առջևի հուսարը, սևաթույր ու խոշոր մի ձի նստած, ձեռքին բռնել էր կարաբինը ու կամացուկ, թավ ձայնով ծիծաղում էր։

— Զա՛րկ,— շշնջաց ուրյադնիկը։

«Տրա՛-տրա՛խկ»,— ճայթեց համազարկը։

«Ակա-ա-ա՛խ-տրա՛խ»,— ետևից լսվեց տրձագանգը։

— Ի՞նչ է, էյ,— սոճիների ետևից վախեցած բղավեց Կաշևոյը ու վրա պրծավ դեպի ձիերը.»— Թփռռու-ռ՛ւ, անիծված, կատաղեցիր, էլի։ Թյո՛ւ, սատանա,— նրա ձայնը ըզգաստացուցիչ կերպով ու բարձր հնչեց։

Հուսարները շղթա կազմած, սլանում էին արտերի միջով։ Նրանցից մեկը, նա, որ գալիս էր առջևից, պարարտ ու սևաթույր ձիով, կրակում էր օդի մեջ։ Վերջինը, ետ մնացածը, ընկնելով ձիու վզին, ետ էր նայում, ձախ ձեռքով բռնել էր կեպին։

Զուբատին առաջինը վեր թռավ ու վազեց՝ ոտները խճճելով արտի մեջ. հրացանը դեպի առաջ ուղղած։ Հարյուր քայլ հեռավորությամբ փնչում ու ոտներն էր թափահարում ընկած մի ձի, նրա կողքին առանց գլխարկի կանգնել էր հունգարական մի հուսար, որը տրորում էր ընկնելուց վնասված

ծունկը։ Դեռ հեռվից նա ինչ-որ բղավեց ու ձեռները վեր բարձրացրեց՝ նայելով հեռվում փախչող ընկերներին։

Այս բոլորն այնքան արագ կատարվեց, որ Գրիգորին ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ Զուբատին գերուն տարավ սոճու մոտ։

— Հանի՛ր, ռազմիկ,— գոռաց նա՝ կոպտաբար դեպի իրեն քաշելով գերու սուրը։

Գերին շփոթվելով ժպտաց, դես-դեն արավ։ Նա պատրաստակամությամբ սկսեց հանել փոկը, բայց նրա ձեռները սաստիկ դողում էին, նրան ոչ մի կերպ չէր հաջողվում այվղուկը արձակել։ Գրիգորին զգուշությամբ օգնեց նրան, և հուսարը,— բարձրահասակ, ուռուցիկ թշերով, սափրված վերին շրթունքի անկյան փոքրիկ կոծիծով, երիտասարդ մի մարդ,— շնորհակալությամբ ժպտալով նրան, գլխով էր անում։ Նա կարծես ուրախացավ, որ իրեն ազատեցին զենքից, կազակներին նայելով՝ խառնխտեց գրպանները, հանեց ծխախոտի կաշվե պարկը ու ինչ-որ մոմոաց, շարժումներով առաջարկեց ծխել։

— Հյուրասիրում է,— ժպտաց ուրյադնիկը, իսկ ինքը արդեն գրպանում թուղթ էր փնտրում։

— Ծխե՛նք ուրիշի թութունը,— քրքջաց Սիլանտևը։

Կազակները թութուն փաթաթեցին, ծխեցին։ Ծխամորճի սև թութունը թունդ խփեց գլխներին։

— Բա ո՞ւր է դրա հրացանը,— ագահությամբ ներս քաշելով ծուխը, հարցրեց ուրյադնիկը։

— Հրե՛ս, այստեղ է,— Զուբատին մեջքի վրա ցույց տրվեց թակալած, դեղին փոկը։

— Հարկավոր է սրան տանել հարյուրյակ։ Երևի շտաբում լեզվի կարիք են զգում։ Ո՞վ կտանի, տղերք,— հարցրեց ուրյադնիկը՝ ժպտուն աչքերը թարթելով և ուղղելով կազակներին։

— Ես կուղեկցեմ,— հանձն առավ Զուբատին։

— Դեհ, տար։

Գերին ըստ երևույթին հասկացավ, ժպտաց ծուռ, ողորմելի ժպիտով. նա ձեռները տարավ գրպանները, շուռ տվեց դրանք, ճմլված, թաց շոկոլադ հանեց ու տվեց կազակներին։

— Ռուսին[1] իխ... ռուսին... նայն ավստրիից[2]։— Նա աղավաղում էր բառերը, ծիծաղելի շարժումներ էր անում ու էլի հոտավետ, ճմլված շոկոլադ էր տալիս կազակներին։

— Էլ ուրիշ զենք ունե՞ս,— հարցրեց նրան ուրյադնիկը,— հերի՛ք բլբլաս, է՛, մեկ է, չենք հասկանա։ Ատրճանակ կա՞։ Շրխկ-թրրխկ կա՞ (ուրյադնիկը ցույց տվեց հրահանը սեղմելը։

Գերին ցասկոտ թափահարեց գլուխը։

— Կա՛ ոչ, կա՛ ոչ։

Նա սիրով թույլ տվեց խուզարկել իրեն, նրա ուռուցիկ թշերը դողում էին։

Ծունկը պատռված շալվարի տակից արյուն էր հոսում, վարդագույն մարմնի վրա քերծվածք էր երևում։ Նա թաշկինակը դնում էր քերծվածքին, կնճռոտում էր դեմքը, ճպճըպացնում շրթունքները, անդադար խոսում էր... Նրա կեպին մնացել էր սպանված ձիու մոտ, նա թույլտվություն խնդրեց գնալ, վերցնել վիրմակը, կեպին և ծոցատետրը, դրա մեջ գտնվում է իր հարազատների լուսանկարը։ Ուրյադնիկը իզուր ջանք էր թափում նրան հասկանալու և անհուսալիորեն թափ տվեց ձեռքը.

— Քշի, տար։

Զուբատին Կաշևոյից վերցրեց իր ձին, նստեց, շտկեց հրացանի փոկը, ձեռքով նշան արավ.

— Գնա՛, զինվոր, դու էլ իբր թե ռազմիկ ես, ես քո...

Նրա ժպիտից քաջալերված գերին ժպտաց, ու քայլելով ձիու կողքից, քծնանքով ու մտերմավարի նույնիսկ ձեռքը թփթփացրեց Զուբատիի վտիտ սրունքին։ Վերջինս բարկությամբ դեն հրեց նրա ձեռքը, քաշեց սանձը ու առաջ արավ նրան։

— Գնա՛, սատանա։ Հանա՞ք ես անում, հա՞։

Գերին մեղավոր տեսքով առաջ անցավ, քայլեց արդեն լրջադեմ՝ հաճախակի նայելով մնացած կազակներին։ Նրա բաց-շիկավուն մազափնջերը բիզ-բիզ կանգնել էին կարկաջին։ Նա այդպես էլ մնաց Գրիգորիի հիշողության մեջ,—վը-

---

1 Ռուսիներ — այսպես էին կոչվում այն ուկրաինացիները, որոնք բնակվում էին Արևելյան Գալիցիայում։

2 Ես ռուսին եմ... ռուսին... ավստրիացի չե՛մ։

բան գցած քուղազարդ հուսարական բաճկոն, բաց-շիկավուն, բիզ-բիզ կանգնած մազափնջեր ու վստահ, աշխույժ քայլվածք։

— Մելեխով, գնա արձակիր նրա ձիու թամքը,— հրամայեց ուրյադնիկը ու ափսոսանքով թքեց արդեն մատները վառող թութունի մնացորդի վրա։

Գրիգորին հանեց սպանված ձիու թամքը, հայտնի չէ ինչի համար բարձրացրեց մոտիկում ընկած գլխարկը։ Նա հոտոտեց աստառը զգաց էժան սապոնի ու քրտինքի բարկ հոտը։ Բերեց թամքը՝ հուսարական կեպին խնամքով ձեռքին պահած։ Կազակները սոճու մոտ պպզած, խառնխտեցին տոպրակները, գննեցին չտեսնված ձևի թամքը։

— Նրա թութունը լավն է, հարկավոր էր էլի խնդրել ու փաթթել,— ափսոսեց Սիլանտևը։

— Այո, ինչ որ ճիշտ է, ճիշտ է, լավ թութուն է։

— Ոնց որ թե քաղցր լինի, յուղի պես է գնում բուկդ...— Ուրյադնիկը հոգոց հանեց թութունը հիշելիս և կուլ տվեց թուքը։

Մի քանի բոպեից հետո մի սոճու ետևից ձիու գլուխ երևաց։ Զուբատին ետ էր գալիս։

— Է՞հ...— վախեցած վեր թռավ ուրյադնիկը,— ձեռքից բա՞ց թողիր։

Թափահարելով մտրակը, Զուբատին մոտեցավ, իջավ ձիուց, ձգվեց, ճմլկոտեց ուսերը։

— Ի՞նչ արիր ավստրիացուն,— մոտենալով, հարցրեց ուրյադնիկը։

— Ի՞նչ ես վրա քշում,— ասաց Զուբատին,— նա վազ տվեց... ուզում էր փախչել....

— Ձեռքից բա՞ց թողիր։

— Դուրս եկանք բացատը, ու նա փորձեց ճղել... ես թրատեցի նրան։

— Սո՛ւտ ես ասում,— բղավեց Գրիգորին,— զուր տեղն ես սպանել։

— Դո՞ւ ինչի ես դալմաղալ անում։ Քո ի՞նչ գործն է։

Զուբատին սառցե աչքերը հառեց Գրիգորիին։

— Ինչպե՞ս,— Գրիգորին դանդաղ բարձրացավ տեղից, ցնցվող ձեռներով ինչ-որ բան փնտրեց իր շուրջը։

— Քիթդ մի՛ խոթի, ուր որ պետք չի։ Հասկացա՞ր։ Հը՞։ Քիթդ մի՛ խոթի,— բարկացկոտ կրկնեց Զուբատին։

Հրացանը փոկից քաշելով, Գրիգորին այն շեշտակի դեմ արեց ուսին։

Նրա մատը ցնցվում էր՝ չհասնելով հրահանին, տարօրինակ կերպով ծռմռվում էր մռայլված դեմքը։

— Դե՛հ, դե՛հ,— սպառնալի ճչաց ուրյադնիկը՝ վազելով մոտենալով Գրիգորիին։

Ցնցումը կանխեց կրակոցը, ու գնդակը վզզալով թռավ, թափեց սոճիների փշատերևները։

— Սա ի՞նչ բան է,— հառաչեց Կաշևոյը։

Սիլանտևը, ինչպես որ նստել էր բաց բերանով, այնպես էլ մնաց։

Ուրյադնիկը հրելով Գրիգորիի կուրծքը, խլեց նրա հրացանը, միայն Զուբատին չփոխեց իր դիրքը. նա շարունակում էր կանգնած մնալ, մի ոտը ետ դրած. ձախ ձեռքը հենել էր գոտուն։

— Էլի՛ կրակիր։

— Կսպանե՛մ...— Գրիգորին նրա վրա էր քշում։

— Ի՞նչ եք անում, է՛... Ո՞նց թե։ Ուզում եք դատի՞ տրվել, գնդակահարվե՞լ, հա՞։ Վա՛ր դնել զենքերը...— գոռաց ուրյադնիկը ու Գրիգորիին դեն հրելով, կանգնեց երկուսի միջև՝ խաչելության պես տարածելով ձեռները։

— Սուտ ես ասում, չե՛ս սպանի,— զուսպ ծիծաղում էր Զուբատին՝ ցնցելով ետ դրած ոտը։

Վերադառնալիս, երբ արդեն իջել էր մթնշաղը, Գրիգորին բացատում առաջինը նկատեց թրատված գերու դիակը։ Մյուսներից առաջ անցնելով, զսպեց փնչող ձիուն, նա մոտեցավ, դիտեց. սպանվածը ընկել էր խիտ մամռակալած գետնին, շուռ եկած ձեռքը հեռու տարածած, երեսի վրա. երեսը մամուռի մեջ թաղած։ Ձեռքը դեղնին էր տալիս աշնան դալուկ տերևի նման։ Զարհուրելի հարվածը, որ ամենայն հավանականությամբ ետևից էր տրվել, ավստրիացուն ուսից մինչև գոտին երկու կես էր արել։

— Ձևել է գրան...— անցնելիս խուլ ձայնով ասաց ուրյադնիկը, վախեցած նայելով սպանվածի սպիտակավուն հեբափնջերին, որ բիզ-բիզ կանգնել էին ծռմռված գլխի վրա։

Կազակները լուռ գնում էին մինչև այնտեղ, ուր գտնվում էր հարյուրյակը։ Մթնշաղը թանձրանում էր։ Քամին արևմուտքից քշում էր սև, փետրավոր մի ամպ։ Հեռո՜ւ-հեռվից, ճահճից գալիս էր ճահճաբույսերի, ժանգային խոնավության, փտածության քաղցրավուն հոտը. ձայնում էր ջրցուլը։ Խոր լռությունը ընդհատվում էր ձիասարքի ծնգոցով, ասպանդակին պատահմամբ դիպչող թրի շրխկոցով, ձիերի սմբակների տակ թափված սաղարթի շրշյունով։ Բացատի երկու կողմերում, սոճիների բների վրա մարում էին մայր մտած արևի մուգ-կարմրավուն հետքերը։ Զուբատին հաճախակի ծխում էր։ Մարմրող կայծը լուսավորում էր կորնթարդ, սև եղունգներ ունեցող նրա հաստ մատները, որոնք ամուր բռնել էին փաթթած թութունը։

Ամպը սահում էր անտառի վերևում, մթնեցնելով, թանձրացնելով գետնին ընկած իրիկնային դալուկ, աննկարագրելիորեն տխուր գույները։

XIII

Քաղաքի գրավման գործողությունը սկսվեց վաղ առավոտյան։ Հետևակ զորամասերը, թևերում ու ռեզերվում հեծելազոր ունենալով, պետք է լուսաբացին անտառից հարձակման անցնեին։ Մի տեղ խառնաշփոթություն առաջացավ. երկու հետևակ գունդ ժամանակին տեղ չհասան. 211-րդ հրաձիգ գունդը կարգադրություն ստացավ տեղափոխվել ձախ թևը. շրջանցիկ շարժման ժամանակ, որ ձեռնարկել էր մի ուրիշ գունդ, նրան հրակոծեց մե՛ր իսկ մարտկոցը. տեղի ունեցավ անհեթեթ մի բան, կործանարար խառնաշփոթությունը խառնեց պլանները, ու հարձակումը սպառնում էր եթե ոչ հարձակվողների ջախջախմամբ, ապա, համենայն դեպս, անհաջողությամբ։ Մինչդեռ հետևակորը վերադասավորվում էր և հրետանավորները փրկում էին լծասարքերն ու հրանոթները,— որոնք հայտնի չէ ում կարգադրությամբ գիշերն ուղարկվել էին ճահիճը,— 11-րդ դիվիզիան հարձակման անցավ։ Անտառոտ ու ճահճոտ տեղանքը թույլ չէր տալիս հակառակորդի վրա գրոհել լայն ճակատով, մի քանի տեղամասերում մեր հեծելազորի վաշտերը ստիպված

էին գրոհել առանձին-առանձին դասակներով։ 12-րդ գնդի չորրորդ և հինգերորդ հարյուրյակները ռեզերվ նշանակվեցին, մնացածներն արդեն միացան հարձակման ալիքին, ու ռեզերվում գտնվողները քառորդ ժամից հետո լսում էին դղրդոցն ու որոտընդոստ խլացուցիչ ոռնոցը.

«Ռռա՜-ա-ա-ա-ռ-ա-ա-ռրր-ա-ա-ա...»

— Մերոնք վրա տվին։

— Հարձակվեցին։

— Գնդացիրը ո՞նց է տկտկում։

— Երևի հնձում է մերոնց...

— Սուս արին, հը՞։

— Ուրեմս վրա են հասնում։

— Հիմի մենք է՛լ թրմփոցը կսկսենք,— կցկտուր խոսում էին կազակները։

Հարյուրյակները կանգնած էին անտառի բացատում։ Բարձրակատար սոճիները փակում էին նրանց աչքերը։ Նրանց կողքից համարյա վազելով անցավ զինվորների մի վաշտ։ Կտրիճաբար քպցած ֆելդֆեբելը մի փոքր ետ մնաց. անցկացնելով վերջին շարքերը, խոպոտ ձայնով բղավեց.

— Ջխառնե՛լ շարքերը։

Վաշտը դոփդոփելով, զնգզնգացնելով ջրամանները, չքացավ լաստենու մացառուտի ետևում։

Բոլորովին հեռվից, անտառոտ բլուրի ետևից, հետզհետե հեռանալով, կրկին լսվեց թուլացած, կցկտուր աղաղակը՝ «Ռ-ա-ա՜-ա-ա-ուոռ-ռռռ-ա-ա՜-ա... Ա՜-ա-ա»,— ու մի անգամից, ասես հատվելով, դադարեց։ Թանձր, տաղտուկ լռություն իջավ։

— Ա՛յ, նոր վրա հասան։

— Ջարդում են իրար... Խոցում են։

Բոլորն էլ լարված ունկնդրում էին, բայց անթափանց լռություն էր տիրում։ Աջ թևում հարձակվողներին հրակոծում էր ավստրիական հրետանին, ու գնդացիրները խիտ թակալով թակալում էին մարդկանց լսողությունը։

Գրիգորի Մելեխովը դիտում էր դասակը։ Կազակները ջղայնանում էին, ձիերը անհանգստանում, ասես բոռը կծում էր նրանց։ Զուբատին գլխարկը թամքի դաշից կախած, սրբում էր գորշավուն, ճաղատ, քրտնակալած գլուխը։ Գրիգո-

րիի կողքին Միշկա Կաշևոյը ագահությամբ ծծում էր մախորկայի ծուխը։ Շուրջը բոլոր առարկաները պարզորոշ էին ու չափազանց ռեալ,— այդպես է լինում, երբ ամբողջ գիշերը չես քնում։

Հարյուրյակները երեք ժամ կանգնել էին ռեզերվում։ Հրաձգությունը հանդարտվում էր ու նոր թափով սաստկանում։ Հայանի չէ ում սավառնակը, հոնդալով, մի քանի պտույտ արավ նրանց վերևում։ Ճախրեց անհասանելի բարձրությամբ ու է՛լ ավելի բարձրանալով, թռավ դեպի արևելք. նրա տակին, կապույտ կամարում շրապնելի պայթյունների կաթնագույն ամպիկներ երևացին. կրակում էին զենիթային հրանոթից։

Կեսօրին ռեզերվը կովի տարան։ Մախորկայի ամբողջ պաշարն արդեն սպառվել էր, ու մարդիկ նեղվում էին սպառողական վիճակում, երբ ժամանեց հանձնատար մի հուսար։ 4-րդ հարյուրյակի հրամանատարը հարյուրյակն իսկույն հավաքեց բացատում ու ինչ-որ մի կողմ տարավ։ (Գրիգորիին թվում էր, թե իրենք ետ են գնում)։ Քսան րոպեի չափ գնում էին խիտ անտառով, շարքերն իրար խառնած։ Կովի ձայները ավելի ու ավելի էին մոտենում նրանց. ինչ-որ մոտիկ տեղում, ետևից կրակում էր մի մարտկոց. արկերը հաղթահարելով օդի դիմադրությունը, ֆշշալով ու կրճտալով թռչում էին նրանց վերևից։ Հարյուրյակը, որ անտառով ընթանալիս ցրիվ էր եկել, խառնիճաղանջ վիճակում դուրս եկավ բաց տեղ։ Նրանից կես վերստ հեռավորությամբ, անտառի եզրում հունգարական հուսարները թրատում էին ռուսական մարտկոցի անձնակազմը։

— Հարյուրյակ, շարվի՛ր։

Դեռ չէին շարքեր կազմել, երբ՝

— Հարյուրյակ, թրերը հանել, դեպի գրոհ, մա՛րշ-մա՛րշ։

Մերկ սրերի կապույտ տարափ։ Հարյուրյակը արագացնելով վազքը, անցավ քառատրոփի։

Նայրի հրանոթի լծասարքի մոտ դես-դեն էին ընկնում հունգարական վեց հոգի հուսարներ։ Նրանցից մեկը քաշում էր խլշկոտած ձիերի սանձերը. երկրորդը նրանց խփում էր թրադաշույնով, մնացածները ձիերից իջած, փորձում էին տեղից շարժել հրանոթը, գոռ էին տալիս, հրելով անիվների

ճաղերից։ Մի կողմում, կարճապոչ, շոկոլադագույն զամբիկի վրա շախով նստել էր մի սպա։ Նա հրամաններ էր տալիս։ Հունգարացիները տեսան կազակներին, ու թողնելով զենքերը, փախան։

«Ա՛յ, այդպես, ա՛յ, այդպես, ա՛յ, այդպես»,— Գրիգորին մտքում չափում էր ձիու վազքը։ Նրա ոտքը մի բոպե կորցրեց ասպանդակը, ու զգալով, որ անհաստատ է նստել թամքի վրա, նա ներքին վախով փնտրում էր ասպանդակը. կախվեց, գտավ, ոտնաթաթն անցկացրեց ասպանդակի մեջ, ու աչքերը բարձրացնելով, տեսավ վեց ձիու հրանոթային լծասարքը, առջևում՝ ձիու պարանոցը ձեռներով գրկած, թրատված մի հրետանավոր, որի ուղեղը թափվել էր արյունաշաղախ շապիկի վրա։ Ձին սմբակը դրեց մի սպանված հրետանավորի մարմնին, որը կրճկրճաց սմբակի տակ։ Շուտ եկած լցարկղի կողքին ընկել էին էլի երկուսը, երրորդը մեջքի վրա փռվել էր լաֆետին։ Գրիգորիից անցավ, առաջ լսացավ Սիլանտևը։ Կարճապոչ զամբիկին նստած հունգարական սպան համարյա դեմառդեմ գնդակահարեց նրան։ Թամքի վրա ցատկոտելով, Սիլանտևը ընկնում էր, ուզում էր ինչ-որ բան բռնել, ձեռներով գրկում էր կապուտակ հեռուն... Գրիգորին քաշեց սանձը՝ աշխատելով հարձակվել աջ, հարմար կողմից, որպեսզի կարողանար լավ թրատել. նկատելով նրա մանները, սպան կրակեց ձեռքի տակից։ Նա ատրճանակի մի պահունակ փամփուշտ արձակեց Գրիգորիի վրա ու քաշեց թուրը։ Ըստ երևույթին լինելով ճարտար սրամարտիկ, նա հեշտությամբ ետ մղեց երեք ուժգնաթափ հարված։ Գրիգորին բերանը ծամռելով, չորրորդ անգամ հասավ սպային՝ ասպանդակների վրա կիսով չափ կանգնած (նրանց ձիերը սլանում էին համարյա իրար կողքի, ու Գրիգորին տեսնում էր հունգարացու մոխրագույն-գորշ, պիրկ, սափրված թուշը և համազգեստի օձիքի վրա կարած համարը), նա կեղծ թափ առնելու միջոցով խարեց հունգարացու զգաստությունը, ու փոխելով հարվածի ուղղությունը, թրի ծայրով խփեց թիակների արանքին. երկրորդ հարվածը հասցրեց պարանոցին, ուր վերջանում է ոզնաշարը։ Հունգարացին կախ գցեց թրադաշույնը բռնած ձեռքը և թողեց սանձը, շտկվեց, կուրծքը

դուրս ցցեց ասես խայթումից, ընկավ թամքի դաշին։ Անչափ թեթևություն զգալով, Գրիգորին թրով խփեց հունգարացու գլխին։ Նա տեսավ, թե ինչպես թուրը մինչև փողրակը խրվեց ոսկորի մեջ, ականջից վերև։

Ետևից տրված սարսափելի հարվածը խլեց Գրիգորիի գիտակցությունը։ Բերանի մեջ նա տաք, աղի արյուն զգաց ու հասկացավ, որ ընկնում է. որտեղից-որտեղ, կողքից պտույտ գալով, խոզանածածկ հողը շեշտակի սլանում էր նրա վրա։

Ընկնելուց առաջացած դաժան ցնցումը մի վայրկյան վերադարձրեց գիտակցությունը։ Նա բացեց աչքերը. դրանք ողողվում էին արյունով։ Ականջի տակ՝ դոփյուն և ձիու ծանր շնչառություն՝ «համփ, համփ, համփ»։ Վերջին անգամ նա բացեց աչքերը, տեսավ ձիու ուռած, կարմրավուն ռունգները, մեկի կոշիկը, որ մտավ ասպանդակի մեջ։ «Վերջ»,— օձի նման սահեց թեթևացուցիչ միտքը։ Դղրդյուն ու սև դատարկություն։

XIV

Օգոստոսի սկզբին հարյուրապետ Եվգենի Լիստնիցկին որոշեց լեյբ-գվարդիայի Ատամանյան գնդից փոխադրվել մի որևէ կազակական բանակային գունդ։ Նա զեկույց ներկայացրեց ու երեք շաբաթից հետո հաջողեցրեց նշանակվել մի գունդ, որ գտնվում էր գործող բանակում։ Նշանակումը ձևակերպելով, նա Պետերբուրգից մեկնելուց առաջ իր որոշման մասին հորը հաղորդեց հետևյալ կարճ նամակով.

Հայրիկ, ես խնդրել էի, որ ինձ Ատամանյան գնդից տեղափոխեն բանակ։ Այսօր ես նշանակում ստացա ու մեկնում եմ 2-րդ կորպուսի հրամանատարի տնօրինության տակ։ Ամենայն հավանականությամբ ձեզ կզարմացնի իմ ընդունած որոշումը, բայց ես դա հետևյալ կերպ եմ բացատրում. ինձ համար ծանր էին այն պայմանները, որոնց մեջ գտնվում էի... Զորահանդեսներ, հանդիպումներ, պահակախմբեր,— պալատական այդ ամբողջ ծառայությունը ձանձրացրել էր ինձ։ Այդ ամենը սիրտ խառնելու չափ ինձ զզվեցրել է, ուզում եմ կենդանի գործ և... եթե կուզեք՝ սխրագործություն։ Պետք է ենթադրել, որ իմ մեջ իր արտահայտությունն է գտնում Լիստնիցկիների պանծալի արյունը, այն մարդկանց, որոնք, Հայրենական պատերազմից սկսած, դափնիներ հյուսեցին ռուսական զենքի պսակի վրա։ Գնում եմ ֆրոնտ։ Խնդրում եմ ձեր օրհնությունը։ Անցած շաբաթ ես տեսա կայսրին, երբ նա մեկնելու էր Զորականաց։ Ես աստվածացնում եմ այդ մարդուն։ Ես ներքին պահակ էի կանգնել պալատում։ Նա գնում էր Ռոձյանկոյի հետ և իմ կողքից անցնելիս ժպտաց, աչքերով ցույց տվեց ինձ ու անգլերեն ասաց. «Ահա իմ պանծալի գվարդիան։ Ժամանակին ես նրանով կխփեմ Վիլհելմի կարտը»։ Ես նրան պաշտում եմ ինստիտուտի սանուհու պես։ Ես չեմ ամաչում այդ խոստովանելուց, նույնիսկ չնայելով, որ տարիքս 28-ից անցել է։ Ինձ խորապես հուզում են պալատական այն բամբասանքները, որոնք սարդոստայնի պես պատում են միապետի պայծառ անունը։ Ես դրանց չեմ հավատում ու չեմ կարող հավատալ։ Մոտ օրերս քիչ մնաց գնդակահարեի յասավուլ Գրոմովին այն պատճառով, որ նա համարձակվեց իմ ներկայությամբ անհարգալից կերպով արտահայտվել նորին կայսերական մեծության կայսրուհու մասին։ Սա նողկալի է, ու ես յասավուլին ասացի, որ միայն այն մարդիկ, որոնց երակներում ճորտական արյուն է հոսում, կարող են ստորանալ մինչև կեղտոտ բամբասանքը։ Այս դեպքը տեղի ունեցավ մի քանի սպաների ներկայությամբ։ Ես բռնվեցի կատաղության մոլուցքով, հանեցի ատրճանակս և ուզեցի մի գնդակ ծախսել այդ գյադային գլորելու համար, բայց ընկերներս զինաթափեցին ինձ։ Օրեցօր ինձ համար ավելի ու ավելի ծանր էր լինում գտնվել այդ հոտած ճահիճում։ Գվարդիական գնդերում, մասնավորապես սպայության մեջ չկա իսկական հայրենասիրություն, և,— սարսափելի է ասել,— չկա նույնիսկ սեր դեպի դինաստիան։ Դա ոչ թե ազնվականություն է, այլ խաժամուժ։ Էապես սրանով է բացատրվում գնդի հետ իմ կապը կտրելը։ Ես չեմ կարող շփվել այն մարդկանց հետ, որոնց չեմ հարգում։ Էհ, կարծեմ վերջացրի։ Ներեցեք, որ ավելի սահուն չեմ գրել, շտապում եմ, պետք է կապել ճամպ-

ռուկս ու գնալ պարետի մոտ։ Առողջություն ձեզ, հայրիկ։ Բանակից մանրամասն նամակ կուղարկեմ։

Ձեր Եվգենի։

Գնացքը դեպի Վարշավա էր մեկնում երեկոյան ժամը 8-ին։ Լիստնիցկին կառքով գնաց կայարան։ Ծանում Պետերբուրգը մնաց կապտավուն-առկայծող լույսի մեջ։ Կայարանում նեղվածք է ու աղմուկ։ Գերակշռում են զինվորականները։ Բեռնակիրը տեղավորեց Լիստնիցկու ճամպրուկը, ու մանր դրամ ստանալով, նորին բարեծննդությանը բարի ճանապարհ մաղթեց։ Լիստնիցկին հանեց թուրը և շինելը, արձակեց փոկերը, ծաղկավուն-մետաքսե կովկասյան վերմակը փռեց, վերևի պառկելատեղի վրա։ Ներքևում, պատուհանի մոտ, փոքրիկ սեղանի վրա տնային ուտելեղեններ դրած, ուտում էր մի նիհար, ճգնավորի դեմքով քահանա։ Թել-թել մորուքից թափ տալով հացի փշրունքները, նա ուտելիքներ էր առաջարկում իր դիմաց նստած թխադեմ, լղարիկ, գիմնազիստուհու տարազով մի աղջկա։

— Փորձեցեք, հը՞։

— Շնորհակալություն։

— Դեհ, լավ, մի՛ ամաչեք, դուք, ունենալով այդպիսի կազմվածք, պետք է շատ ուտեք։

— Շնորհակալ եմ։

— Լավ, փորձեցեք այս կարկանդակները։ Պարոն սպա, գուցե դո՛ւք կճաշակեք։

Լիստնիցկին կախեց գլուխը։

— Դուք ի՞նձ եք ասում։

— Այո, այո։— Քահանան նրա վրա հառեց մռայլ, բնածին քարի գույնի աչքերը ու ժպտաց միայն բարակ շրթունքներով, թել-թել, նոսր ու մի տեսակ թոշնած բեղերի տակին։

— Շնորհակալություն։ Չեմ ուզում։

— Իզո՛ւր։ Բերանը մտած բանը չի ապականում։ Դուք հո բանակ չե՞ք գնում։

— Այո՛։

— Աստված օգնե ձեզ։

Լիստնիցկին քնաթաթախ վիճակում, ասես հեռվից, զգում էր, թե ինչպես իր ականջին է հասնում քահանայի բամբ ձայնը, ու թվում էր, թե խոսողը ոչ թե քահանան է իր խղճալի ձայնով, այլ յասավուլ Գրոմովը։

— ...Ընտանիք ունեմ, գիտե՞ք, իմ ծուխն էլ աղքատ է։ Դրա համար էլ գնում եմ գնդում քահանայություն անելու։ Ռուս ժողովուրդը չի կարող առանց հավատի մնալ։ Եվ գիտե՞ք, տարեցտարի հավատը ամրանում է։ Իհարկե կան այնպիսիները, որոնք հեռանում են հավատից, բայց դրանք ինտելիգենցիայից են, իսկ մուժիկը թունդ կառչում է աստծուց։ Այո... Այդպիսի բաներ...— հոգոց հանեց բամբ ձայնը ու էլի հորդեցին խոսքերը, որ արդեն չէին թափանցում գիտակցության մեջ։

Լիստնիցկին քնում էր։ Վերջին բանը, որ նա արթմնի զգաց, դա մանրատախտակ առաստաղի թարմ ներկի հոտն էր ու դրսից լսված բղավոցը.

— Բագաժը ընդունվել է, էլ ես ի՞նչ գործ ունեմ։

«Ի՞նչ բագաժ է ընդունվել»,— մտմտաց գիտակցությունը, ու թելն աննկատելիորեն կտրվեց։ Երկու անքուն գիշերից հետո թարմացուցիչ քուն իջավ։ Լիստնիցկին արթնացավ, երբ գնացքը Պետերբուրգից արդեն քառասուն վերստ տարածություն էր անցել։ Համաչափ թխկթխկում էին անիվները, վագոնը ճոճվում էր, ցնցվում շոգեքարշի արագ շարժումներից, հարևան կուպեում կամացուկ երգում էին, լապտերը կապտավուն, շեղակի ստվերներ էր գցում։

Այն գունդը, որ նշանակվել էր հարյուրապետ Լիստնիցկին, վերջին մարտերում խոշոր կորուստ էր ունեցել, դուրս էր բերվել մարտերի շրջանից ու շտապ նորոգվում էր, համալրվում ձիերով ու մարդկանցով։

Գնդի շտաբը գտնվում էր Բերեզնյագի կոչված առևտրական մեծ գյուղում։ Լիստնիցկին վագոնից դուրս եկավ մի ինչ-որ անանուն կիսակայարանում։ Նույն տեղում բեռնաթափվեց մի շրջիկ լազարեթ։ Բժշկից հարցնելով, թե ուր է գնում լազարեթը, Լիստնիցկին իմացավ, որ դա հարավ-արևմտյան ռազմաճակատից փոխադրվում է այս ճակատամասը և անմիջապես ճանապարհվելու է Բերեզնյագի — Իվա-

Նովկա—Կրիշովինսկոյե մարշրուտով։ Հաղթանդամ, կարմրադեմ բժիշկը խիստ անսիրալիր կերպով էր արտահայտվում իր անմիջական իշխանության մասին, դատափետում էր դիվիզիայի շտաբայիններին, ու տնտղելով մորուքը, ոսկե ակնոցի տակից փայլեցնելով բարկացկոտ, փոքրիկ աչքերը, իր մաղձոտ ցասումն էր թափում պատահական մարդու առաջ։

— Դուք կարո՞ղ եք ինձ տանել մինչև Բերեզնյագի։— նրա խոսքը ընդհատեց Լիստնիցկին։

— Նստեցեք, սայլակ, հարյուրապետ։ Գնացեք,— համաձայնեց բժիշկը, ու մտերմավարի տնտղելով հարյուրապետի շինելի մի կոճակը, համակրանք որոնելով, դմդմբալի, զուսպ ասում էր.

— Հապա՛, մտածեցեք, հարյուրապետ, երկու հարյուր վերստ չափչփեցինք գարշելի վագոններով, որ այստեղ անգործ թրև գանք, մինչդեռ այն ճակատամասում, որտեղից փոխադրեցին իմ լազարեթը, երկու օր ամենաարյունահեղ կռիվներ էին տեղի ունենում, մնացին ահագին թվով վիրավորներ, որոնց շտապ հարկավոր էր մեր օգնությունը (բժիշկը չարամիտ հաճույքով կրկնեց՝ «ամենաարյունահեղ կռիվներ», զոռ տալով «ր» տառին ու սաստկացնելով ձայնը)։

— Ինչո՞վ բացատրել այդ անկանոնությունը,— քաղաքավարության համար հետաքրքրվեց հարյուրապետը։

— Ինչո՞վ,— բժիշկը հեգնաբար ակնոցից վեր քաշեց հոնքերը, մռնչաց.— հրամանատարական կազմի փնթիությամբ, անմտությամբ, հիմարությամբ, ահա թե ինչով։ Նստել են այնտեղ սրիկաները ու խառնաշփոթություն են առաջացնում։ Չկա տնօրինություն, ուղղակի չկա առողջ դատողություն։ Հիշո՞ւմ եք Վերեսաևի «Բժշկի հիշատակարանը։ Բա՜-աս։ Կրկնում ենք՝ քառակուսի չափով, ա՛յո։

Լիստնիցկին «ցտեսություն» ասաց, քայլեց դեպի տրանսպորտը, նրա ետևից կոկռում էր բարկացկոտ բժիշկը։

— Տանո՛ւլ կտանք պատերազմը, հարյուրապետ։ Ճապոնացիներին տանուլ տվինք ու չխելոքացանք։ Փափախներովս ենք կռվում, էլ ի՞նչ ասել կուզի...— ու ջղայնացած օրորելով գլուխը, գնաց երկաթգծերով, անցնելով ջրափոսերից, որոնք նավթային ծիածանաշող ցոլքեր էին արձակում։

Իջնում էր մթնշաղը, երբ լազարեթը մոտեցավ Բերեզնյագիին։ Քամին արագ օրորում էր արտերի դեղին, կոշտ խոզանը։ Արևմուտքում թանձրանում, կուտակվում էին ամպերը։ Վերևում մանուշակագույն-սև էին, մի քիչ ներքև կորցնում էին իրենց հրեշավոր երանգը, ու փոխելով գույները, նուրբ-ցասամանագույն, մշուշոտ ցոլքեր էին նետում երկնքի դալուկ պաստառի վրա. մեջտեղում այդ ամբողջ տձև, վիթխարի զանգվածը, որ կուտակվել էր ինչպես սառցագնդերը հալչող գետի վրա, բացվում էր, ու ճեղքվածքի միջից պայծառ շողշողում էր վերջալույսի ճառագայթների նարնջագույն հեղեղը։ Սա տարածվում էր հովհարաձև ճառագայթելով, բեկբեկվում ու մշուշվում, իջնում ուղղաձիգ, իսկ ճեղքվածքից ներքև աննկարագրելիորեն միախառնվում, գույների շռայլ լուսապատկեր էր կազմում։

Ճանապարհի կողքի առվում ընկել էր գնդակահարված, շիկամազ մի ձի։ Օտարոտի ձևով վեր ցցված նրա ետին ոտի սմբակի վրա փայլում էր կիսամաշ պայտը։ Լիստնիցկին սայլակի ցնցումներից օրորվելով դիտում էր ձիու դիակը։ Նրա հետ գնացող սանիտարը, թքելով ձիու ուռած փորի վրա, բացատրեց հետևյալը.

— Շատ հացահատիկ է զխտվել... կերել,— ուղղեց նա ինքն իրեն նայելով հարյուրապետին. ուզում էր մի անգամ էլ թքել, բայց քաղաքավարության համար թուքը կուլ տվեց, բլուզի թևքով սրբեց շրթունքները։— Սատկել է, իսկ վերցնող չկա, ա՛յ թե ինչպիսին է ռուս ժողովուրդը։ Գերմանացիների մոտ այդպես չէ, մեզ պես չեն վարվում։

— Իսկ դու այդ ո՞րտեղից գիտես,— անառիթ բարկությամբ հարցրեց Լիստնիցկին, ու այդ վայրկյանին նույնպես անառիթ և սաստիկ ատեց սանիտարի անտարբեր, զոռոզություն ու քամահրանք արտահայտող դեմքը։ Այդ դեմքը գորշավուն էր, ձանձրալի, ինչպես խոզանով ծածկված սեպտեմբերյան դաշտը. ոչնչով չէր տարբերվում մուժիկական-զինվորական ուրիշ հազարավոր դեմքերից, որոնց հանդիպում ու տեսնում էր հարյուրապետը Պետերբուրգից ռազմաճակատ տանող ճանապարհին։ Նրանք բոլորն էլ թվում էին մի տեսակ սփրթնած, ունեին բութ արտահայտություն, գորշ, կապույտ, կանաչավուն և այլ աչքեր, ու խիստ հիշեցնում էին երկար

ժամանակ շրջանառության մեջ եղած, վաղուց կտրված պղնձադրամները։

— Պատերազմից առաջ ես երեք տարի ապրել եմ Գերմանիայում,— դանդաղ պատասխանեց սանիտարը։ Նրա ձայնի ելևէջներն արտահայտում էին նույն զոռոզությունն ու քամահրանքը, ինչ որ հարյուրապետը նկատել էր նրա նալվածքում։

— Ես աշխատում էի Քյոնիգսբերգում, սիգարի գործարանում,— ձանձրույթի տոնով ավելացրեց սանիտարը՝ կաշվե երասանի հանգույցը խփելով ցածրիկ ձիուկին։

— Լռի՛ր, բավական է,— խիստ տոնով ասաց Լիստնիցկին ու շուռ եկավ, դիտելով սատկած ձիու գլուխը, նրա աչքերին ընկած մազափնջերը ու բացված, արևի տակ հողմահարված ատամների շարքը։

Այդ ձիու ցցված ոտի ծունկը ծալվել էր, սմբակը մի փոքր ճաքճքվել էր պայտի մեխերից, բայց աչքի էր ընկնում մուգ-կապտավուն փայլով, ու հարյուրապետը նրա ոտքից, նրբագեղ կոճիկից որոշեց, որ ձին ջահել է եղել ու լավ ցեղից էր։

Երկանիվ սայլակը գյուղական խորդուբորդ ճամփի վրա ցատկոտելով, շարունակում էր ընթացքը։ Երկնքի արևմըտյան ծայրում մարում էին գույները, քամին ցրում էր ամպերը։ Ետևում անգմբեթ մատուռի նման սևին էր տալիս սատկած ձիու ոտը։ Լիստնիցկին դեռ նայում էր նրան, ու հանկարծ ձիու վրա շողշողալով ընկավ ճառագայթների մի խուրձ և իրար պինդ կպած շիկակարմիր մազերով իրանը յուրահատուկ փայլ արձակեց որպես նարնջի գույնով պճնված մի անհայտ, հրաշալի, անսաղարթ ճյուղ։

Արդեն Բերեզնյագի մտնելիս լազարեթը հանդիպեց վիրավորների տրանսպորտին։

Սափրված, տարեց մի բելոռուս,— առաջին սայլի տերը,— քայլում էր ձիու կողքից, պարանե երասանները ձեռքին փաթաթած։ Սայլի վրա, արմունկին հենված, պառկել էր մի կազակ առանց գլխարկի, գլուխը բինտերով փաթաթած։ Աչքերը հոգնածորեն գոցած, նա հաց էր ծամում ու բերանից թափում սև, ծամծմված պատառները։ Նրա կողքին, երեսի վրա պառկել էր մի զինվոր։ Վերջինիս հետույքի վրա տնկված էր այլանդակ կերպով պատառոտված, արյունոտ ու ճխլտված շալվարը։ Զինվորը թունդ հայհոյանք էր թափում առանց գլուխը բարձրացնելու։ Ականջ դնելով նրա ձայնի ինտոնացիային, Լիստնիցկին սարսափեց. այդպես աղոթում են մոլեռանդ հավատացյալները։ Երկրորդ սայլի վրա կողքկողքի պառկած էին վեց զինվոր։ Նրանցից մեկը, կկոցելով բորբոքված, կարմրած աչքերը, ուրախ տրամադրությամբ պատմում էր.

— ...Միթամ թե դեսպան էր եկել նրանց կայսրի կողմից ու առաջարկել էր հաշտություն կնքել։ Գլխավորը՝ դուզ մարդ է. հուսով եմ ես, որ նա չի փչի։

— Դժվա՛ր թե,— կասկածեց երկրորդը, օրորելով կլոր գլուխը, որի վրա վաղուցվա գեղձախտի հետքեր կային։

— Կաց, Ֆիլիպ, գուցեև դրուստ է, եկել է,— վոլգյան մեղմ առոգանությամբ արձագանքեց երրորդը, որ նստել էր մեջքով դեպի մյուս զինվորները։

Հինգերորդ սայլի վրա կարմրին էին տալիս կազակական գլխարկների բոլորքները։ Երեք կազակ հարմար տեղավորվել էին լայն սայլի վրա, լուռ նայում էին Լիստնիցկուն, ու նրանց փոշոտ, կոշտ դեմքերի վրա բոլորովին չէր արտահայտվում այն հարգանքը, որը տեսնում ես շարքում։

— Բարև՛, կազակներ,— ողջունեց նրանց հարյուրապետը։

— Բարև ձեզ,— ալարկոտ պատասխանեց սայլապանին մոտիկ նստած գեղեցիկ, արծաթաբեղ ու խիտ հոնքերով մի կազակ։

— Ո՞ր գնդից ես,— հարցրեց Լիստնիցկին՝ փորձելով տեսնել կազակի կապույտ ուսադրի համարը։

— Տասներկուերորդ։

— Ո՞րտեղ է հիմա ձեր գունդը։

— Չենք կարող գիտենալ։

— Լավ, ո՞րտեղ եք վիրավորվել։

— Այստեղ մի գյուղի մոտ... հեռու չէ։

Կազակներն ինչ-որ փսփսացին իրար մեջ, ու նրանցից մեկը, առողջ ձեռքով վիրավոր ձեռքը պահած, որ կապված էր քաթանե լաթով, իջավ սայլից։

— Ձերդ բարեձննդություն, մի քիչ սպասեք։— Նա խնամքով պահել էր գնդակով խոցված, արդեն բորբոքված

ձևոքը, նա գնում էր ճանապարհով, ժպտում Լիստնիցկուն ու դանդաղորեն փոխում բոբիկ ոտները։

— Դուք Վեշենսկայա ստանիցայից չե՞ք։ Լիստնիցկին չե՞ք։

— Այո, այո։

— Ախր մենք ճանաչեցինք, է՛։ Ձերդ բարեծննդություն, թութուն չե՞ք ունենա։ Հյուրասիրեցեք, ի սեր Քրիստոսի, մեռնում ենք առանց թութունի։

Նա կառչել էր սայլակի ներկված կողին, քայլում էր կողքից։ Լիսնիցկին հանեց պորտսիգարը։

— Կարո՞ղ էիք մի տասը հատ տալ։ Մենք երեք հոգի ենք,— ժպտալով խնդրեց կազակը։

Լիստնիցկին պապիրոսների ամբողջ պաշարը դատարկեց նրա դարշնագույն, մեծածավալ բռի մեջ, հարցրեց.

— Գնդում շա՞տ վիրավորներ կան։

— Մի երկու տասնյակ։

— Կորուստները մե՞ծ են։

— Շատերը կոտորվել են։ Վառեցեք կրակը, ձերդ բարեծննդություն։ Շնորհակալ ենք։— Կազակը վառելով պապիրոսը, ետ մնաց, ետևից բղավեց.— Տատարսկի խուտորից, որ ձեր կալվածքի մոտ է, այսօր երեք հոգի սպանվեցին։ Սխկեցին կազակներին։

Նա ձեռքը թափ տվեց ու գնաց իր սայլին հասնելու։ Քամին փոփոխվում էր նրա պաշտպանական գույնի բլուզը,— նա գոտի չէր կապել։

Ա՛յն գնդի հրամանատարը, ուր նշանակված էր հարյուրապետ Լիստնիցկին, իջևանել էր Բերեզնյագիի քահանայի տանը։ Հարյուրապետը հրապարակում հրաժեշտ տվեց բժշկին, որ հյուրընկալաբար նրան տեղ էր տվել սանիտարական սայլի վրա, ու գնաց, քայլելիս թափ տալով համազգեստի փոշին, հանդիպողներին հարցնելով, թե որտեղ է գտնվում գնդի շտաբը։ Վառ շիկակարմիր, երկար մորուքով մի ֆելդֆեբել մի զինվոր էր տանում պահակ կանգնելու։ Նա պատիվ տվեց հարյուրապետին, պատասխանեց նրա հարցին ու ցույց տվեց մի տուն՝ չխախտելով համաքայլ ընթացքը։ Շտաբի շենքում լություն էր տիրում, ինչպես և ամեն մի շտաբում, որը առաջավոր դիրքերից հեռու էր գտնվում։ Գրագիրները

կոնթել էին մի մեծ սեղանի, զառամյալ մի յասավուլ դաշտային հեռախոսի փողակը բռնած, ծիծաղելով խոսում էր անտեսանելի խոսակցի հետ։ Ընդարձակ խրճիթի պատուհանների վրա վխտում էին ճանճերը, ու մոծակների նման բզզում էին հեռավոր հեռախոսային զանգերը։ Բանբերը հարյուրապետին տարավ գնդի հրամանատարի բնակարանը։ Նախասենյակում նրան անբարյացակամորեն դիմավորեց բարձրահասակ, ինչ-որ պատճառով ջղայնացած գնդապետը, որի կզակի վրա եռանկյունաձև սպի էր նկատվում։

— Ե՛ս եմ գնդի հրամանատարը,— պատասխանեց նա իրեն տված հարցին, ու լսելով զեկույցը, թե հարյուրապետը պատիվ ունի ներկայանալու նրա տնօրինության, լուռ, ձեռքի շարժմամբ նրան հրավիրեց սենյակ։ Արդեն իր ետևից ծածկելով դուռը, նա անսահման հոգնածության ժեստով շոկեց մազերը, մեղմ, միապաղաղ ձայնով ասաց.

— Երեկ այդ մասին ինձ հաղորդեցին բրիգադի շտաբից։ Խնդրում եմ նստել։

Նա Լիստնիցկուն հարցուփորձ արավ վերջինիս առաջվա ծառայության, մայրաքաղաքի նորությունների, ճանապարհի մասին ու կարճ խոսակցության ամբողջ ժամանակվա ընթացքում ինչ-որ մեծ հոգնածությամբ ծանրացած աչքերը ոչ մի անգամ չբարձրացրեց խոսակցի վրա։

«Պետք է կարծել, որ սրան խիստ նեղել են ֆրոնտում։ Սա սարսափելի հոգնած տեսք ունի»,— կարեկցաբար մտածեց հարյուրապետը՝ դիտելով գնդապետի բարձր, խոհուն ճակատը։ Բայց վերջինս, կարծես նրան հիասթափեցնելու համար, թրի կոթով քորեց քթարմատը, ասաց.

— Գնացեք, հարյուրապետ, ծանոթացեք սպաների հետ, ե՛ս, գիտե՞ք, երեք գիշեր չեմ քնել։ Այս խուլ անկյունում մենք, բացի թղթախաղից ու հարբեցողությունից, ուրիշ անելիք չունենք։

Լիստնիցկին պատիվ տվեց, ժպտալով քողարկեց թունդ արհամարհանքը։ Նա հեռացավ, անբարյացակամորեն վերհիշելով հանդիպումը, հեգնելով այն հարգանքը, որ ակամայից իրեն ներշնչել էին գնդապետի հոգնած տեսքը ու նրա լայն կզակի սպին։

XV

Դիվիզիան ստացել էր մի առաջադրանք՝ անցնել Ստիր գետը և Լովիշչիի մոտ դուրս գալ հակառակորդի թիկունքը։

Լիստնիցկին մի քանի օրվա ընթացքում ընտելացավ գնդի սպայակազմին. նրան արագորեն ներգրավեց մարտական իրադրությունը՝ վանելով հարմարավետության ու խաղաղ կյանքի ընտելությունները։

Դիվիզիան փայլուն կերպով կատարեց գետն անցնելու գործողությունը։ Նա հարվածեց հակառակորդի խոշորաթիվ զորախմբի ձախ թևին ու անցավ նրա թիկունքը։ Լովիշչիի մոտ ավստրիացիները մաջարական հեծելազորի օժանդակությամբ փորձեցին հակահարձակման անցնել, բայց կազակական մարտկոցները շրապնելով ջախջախեցին նրանց, ցրիվ եկած մաջարական հեծելավաշտերը նահանջեցին խառնիճաղանջ վիճակում՝ ոչնչանալով թևային գնդացրային կրակից, հետապնդվելով կազակների կողմից։

Լիստնիցկին գնդի հետ հակագրոհի էր գնում, նրանց դիվիզիոնը նեղում էր նահանջող թշնամուն։ 3-րդ գասակը, որի հրամանատարը Լիստնիցկին էր, կորցրեց մի սպանված ու չորս վիրավոր կազակ։ Հարյուրապետը առերևույթ հանգստությամբ անցավ Լոշչենովի կողքից, աշխատեց լսել նրա խուսոտ, ցածր ձայները։ Լոշչենովը,— Կրասնոկուտսկայա ստանիցայի երիտասարդ, սապատաքիթ մի կազակ,— պառկած էր՝ ճզմվելով իր վրա ընկած, սպանված ձիու տակ։ Նա վիրավորվել էր բազուկից, պառկել էր թեթևակի ժպտալով, խնդրում էր կողքից անցնող հեծյալ կազակներին.

— Եղբայրնե՛ր, մի՛ թողնեք ինձ։ Ազատեցեք, եղբայրներ...

Տանջանքից կերկերող, ցածր ձայնը թույլ էր հնչում, բայց անցնող կազակների խռովահույզ սրտերում չկար կարեկցություն, իսկ եթե կար, ապա կամքը թույլ չէր տալիս այն արտահայտել, անդադրում ճզմում էր ու խեղդում այդ կարեկցությունը։ Դասակը հինգ բոպե քայլքով էր գնում, որ շունչ առնեին վազքից հնացող ձիերը։ Նրանցից կես վերստ հեռավորությամբ նահանջում էին մաջարների ցրիվ հեծելավաշտերը։ Գեղեցիկ բոլորքով նրանց բաճկոնների միջև նշմարվում էին հետևակների գորշ-կապտավուն համազգեստները։ Բլրակի կատարից ներքև էր սողում ավստրիական գումակը, նրա վրա, ասես հրաժեշտ տալով, վեր էին թռչում շրապնելների կաթնագույն ամպիկները։ Որտեղից-որտեղ, ձախ կողմից մի մարտկոց շեշտակի կրակ էր թափում գումակի վրա։ Դղրդալի ճայթյունները փռվում էին դաշտի վրա, բազմաձայն արձագանքներ գտնում մոտակա անտառում։

Զորական ավագ Սաֆրոնովը, որ առաջնորդում էր դիվիզիոնը, հրաման տվեց «վարգե՛լ», ու երեք հարյուրյակ, ցրվելով, հավասարվելով, անցան ծանր, մանրաքայլ վարգի։ Հեծյալների տակ ձիերը ճոճվում էին, դեղնավարդագույն ծաղիկների նման փրփուր էր թափվում նրանցից։

Այդ գիշեր մնացին մի փոքրիկ գյուղում։

Գնդի տասներկու սպաներ տեղավորվեցին մի խրճիթում։ Հոգնածությունից թուլացած, քաղցած, պառկեցին քնելու։ Մոտ կեսգիշերին տեղ հասավ դաշտային խոհանոցը։ Խորունժի Զուբովը դրեց մի կաթսա շչի, դրա հաճելի բուրմունքը արթնացրեց սպաներին, ու քառորդ ժամից հետո, դեմքերը քնից ուռած, սպաներն ուտում էին ագահությամբ, առանց խոսելու, վերադարձնում երկօրյա մարտերում կորցրած ուժերը։ Ուշ ճաշից հետո քունը չքացավ։ Սպաները ուտելուց ծանրացած, պառկել էին յափնջիների վրա, ծխում էին։

Փոխ-յասավուլ Կալմիկովը, կարճահասակ, կլորավուն մի սպա, որը ոչ միայն անվան մեջ, այլև դեմքի վրա կրում էր մոնղոլական ցեղի նշանները, ձեռների կտրուկ շարժումներ անելով՝ ասում էր.

— Այս պատերազմն ինձ համար չէ։ Ես մի չորս հարյուրամյակով ուշ եմ ծնվել։ Գիտե՞ս, Պյոտր,— ասում էր նա՝ դիմելով հարյուրապետ Տերսինցևին, «Պետր» բառն արտասանելիս շեշտելով «ե» տառը «յո»-ի փոխարեն։— Ես չեմ ապրի մինչև այս պատերազմի վերջը։

— Թո՛ղ գուշակությունը,— յափնջու տակից, թավ, խրոպոտ ձայնով ասաց Տերսինցևը։

— Ո՛չ մի գուշակություն։ Դա կանխորոշված վախճան է։ Ես ատավիզմ ունեմ, և, ասված վկա, այստեղ ավելորդ

եմ։ Այսօր, երբ մենք գնում էինք կրակի տակ ընկած, ես դողում էի կատաղությունից։ Չեմ կարող տանել, երբ չեմ տեսնում հակառակորդին։ Այս գարշելի զգացումը երկյուղի է հավասար։ Քեզ խփում են մի քանի վերստ հեռավորությունից, իսկ դու գնում ես ձիով, ինչպես որսորդի նշան բռնած արոսը տափաստանում։

— Ես Կուպալկայում տեսա ավստրիական մի թնդանոթ,— հաուբից։ Ձեզանից ո՞վ է տեսել, պարոններ,— հարցրեց յասավուլ Ատամանչուկովը՝ շեկլիկ, անգլիավարի ծայրատած բեղերից լպստելով մսի պահածոյի փշրանքները։

— Հիանալի էր։ Նշանոցի խցիկը, ամբողջ մեխանիզմը կատարելության գագաթնակետ էին,— հիացմունքով ասաց խորունժի Ջուբովը, որ արդեն երկու ման շշի էր կերել։

— Ես տեսել եմ, բայց իմ տպավորությունների մասին լռում եմ։ Հրետանուց անտեղյակ եմ։ Իմ կարծիքով սովորական, լայն ռեխով թնդանոթ էր, էլի՛։

— Նախանձում եմ նրանց, ովքեր իր ժամանակին կռվում էին նախնադարյան եղանակով,— շարունակեց Կալմիկովը՝ հիմա արդեն դիմելով Լիստնիցկուն։— Ազնիվ մարտում նետվում է հակառակորդի վրա ու թրով երկու կես է անում մարդուն,— ա՛յ ես դա հասկանում եմ, թե չէ սատանա՛ն գիտե թե ինչ։

— Ապագա պատերազմներում հեծելազորի դերը զրոյի կհավասարվի։

— Ավելի ճիշտ՝ նա գոյություն չի ունենա։

— Օ-օ՛, այդ ո՛վ ասաց։

— Դա ամեն մի կասկածից դուրս է։

— Լսիր, Տերսինցև, հո չի՞ կարելի մարդուն փոխարինել մեքենայով։ Դա ծայրահեղություն է։

— Ես խոսում եմ ոչ թե մարդու, այլ ձիու մասին։ Մոտոցիկլը կամ ավտոմոբիլը կփոխարինեն ձիուն։

— Երևակայո՛ւմ եմ, ավտոմոբիլային էսկադրո՞ն։

— Ի՞նչ հիմարություն,— տաքացավ Կալմիկովը,— ձին դեռ կծառայի բանակներին։ Անհեթեթ ֆանտազիա է դա։ Թե ինչ կլինի երկու-երեք հարյուր տարուց հետո, մենք չգիտենք, իսկ այժմ, համենայն դեպս, հեծելազորը...

— Դու ի՞նչ պիտի անես, Դմիտրի Դոնսկոյ, երբ խրամատները գոտևորեն ֆրոնտը։ Հը՞։ Ապա՛ պատասխանիր։

— Ճեղքվածք, գրոհ, անցո՛ւմ հակառակորդի խոր թիկունքը,— ահա հեծելազորի աշխատանքը։

— Դատարկ բան է։

— Էհ, կտեսնենք, էլի, պարոններ։

— Եկեք քնենք։

— Լսե՛ք, թողեք վեճերը, անհարմար է վերջապես, ախր մյուսները քնել են ուզում։

Բռնկված վեճը հանգչում էր։ Մեկը յափնջու տակից խոմփացնում էր ու ֆսֆսում։ Լիստնիցկին, որ չէր մասնակցել խոսակցությանը, պառկած էր մեջքի վրա, շնչում էր անկողնի մեջ լցրած տարեկանի ծղնոտի բարկ հոտը։ Կալմիկովը խաչակնքեց ու պառկեց նրա կողքին։

— Դուք, հարյուրապետ, խոսեցեք կամավոր զինվոր Բունչուկի հետ։ Նա ձեր դասակումն է։ Հետաքրքիր տղա է։

— Ինչո՞վ է հետաքրքիր,— հարցրեց Լիսնիցկին՝ մեջքը դարձնելով դեպի Կալմիկովը։

— Ռուսացած կազակ է։ Ապրել է Մոսկվայում։ Հասարակ բանվոր է, բայց լավ գլուխ է հանում զանազան հարցերից։ Ճարտար մարդ է ու հիանալի գնդացրորդ։

— Եկեք քնենք,— առաջարկեց Լիստնիցկին։

— Ժամանակն է,— ինչ-որ իր մտքով տարված, համաձայնեց Կալմիկովը, ու շարժելով ոտների մատները, մեղավորի պես կնճռոտեց դեմքը։— Դուք ներեցեք, հարյուրապետ, իմ ոտներից հոտ է գալիս... Գիտե՞ք, երրորդ շաբաթն է, որ ոտներս չեմ հանել, գուլպաներս փտել են քրտնքից... Գարշելի բան է, գիտե՞ք։ Հարկավոր է կազակներից փաթաթաներ ճարել։

— Խնդրե՛մ,— քուն մտնելով, ասաց Լիստնիցկին։

Նա մոռացավ Կալմիկովի հետ ունեցած խոսակցությունը, բայց մյուս օրը առիթ եղավ հանդիպելու կամավոր Բունչուկի հետ։ Լուսաբացին հարյուրյակի հրամանատարը նրան հրամայեց գնալ հետախուզության, ու եթե հնարավոր լինի, կապվել հետևակ գնդի հետ, որը ձախ թևում շարունակում է հարձակումը։ Լիստնիցկին լուսաբացի կիսախավարում քնած կազակներով լեցուն բակում դես-դեն ընկնելով, գտավ դասակապետ ուրյադնիկին։

— Նշանակիր հինգ կազակ՝ ինձ հետ գալու։ Ասա, որ պատրաստեն իմ ձին։ Շո՛ւտ։

Հինգ րոպեից հետո կարճահասակ մի կազակ մոտեցավ խրճիթի շեմքին։

— Ձերդ բարեծննդություն,— դիմեց նա հարյուրապետին, որը պապիրոսներ էր դնում ծխախոտատուփի մեջ,— ուրյադնիկն ինձ չի նշանակում հետախուզության, որովհետև իմ հերթը չէ։ Դուք թույլ կտա՞ք, որ գամ։

— Հանցա՞նք ես քավում, հա։ Ի՞նչ տուժեր ես ստացել,— հարցրեց հարյուրապետը, ջանալով գորշ մթության մեջ լավ տեսնել կազակի դեմքը։

— Ես ոչ մի տույժ էլ չեմ ստացել։

— Էհ, կարող ես գալ...— որոշեց Լիստնիցկին ու վեր կացավ։

— Է՛յ, լսիր,— ասաց նա հեռացող կազակի ետևից,— ե՛տ դարձ։

Կազակը մոտեցավ։

— Ասա ուրյադնիկին...

— Իմ ազգանունը Բունչուկ է,— ընդհատեց նրան կազակը։

— Կամավո՞ր, հա՞։

— Ճիշտ այդպես։

— Ասացեք ուրյադնիկին,— բոպեական շփոթությունից հետո գլխի ընկավ և ինքն իրեն ուղղեց Լիստնիցկին,— որ նա... ասենք, լավ, գնացեք, ես ինքս կասեմ։

Խավարը նոսրացավ։ Պարեկը դուրս եկավ գյուղից ու անցնելով պոստերի և պահպանական զորախմբերի կողքից, գնաց քարտեզի վրա նշված մի գյուղի ուղղությամբ։

Կես վերստ հեռանալով, հարյուրապետը դադարեցրեց ձիու վազքը, սկսեց քայլքով գնալ։

— Կամավոր Բունչո՛ւկ։

— Ե՛ս եմ։

— Նեղություն քաշեցեք մոտենալու։

Բունչուկն իր աննախանձելի ձին հավասարեց հարյուրապետի նժույգին, որ Դոնի զտարյուն ձի էր։

— Դուք ո՞ր ստանիցայից եք,— հարցրեց Լիստնիցկին՝ զննելով կամավորի պրոֆիլը։

— Նովոչերկասկից եմ։

— Կարելի՞ է իմանալ պատճառը, որով դուք կամավոր եք դարձել։

— Խնդրե՛մ,— ձայնը երկարացնելով ու մի քիչ հեգնոտ պատասխանեց Բունչուկը և կոշտ, կանաչավուն աչքերով նայեց հարյուրապետին։ Այդ աչքերի չթարթող նայվածքը հաստատուն էր, աներեր։— Ինձ հետաքրքրում է ռազմական արվեստը։ Ուզում եմ գիտենալ այն։

— Դրա համար ռազմական դպրոցներ կան։

— Այո, կան։

— Ապա էլ ինչո՞ւ։

— Ուզում եմ նախ պրակտիկա ձեռք բերել։ Թեորիան այնուհետև հեշտ կլինի։

— Մինչև պատերազմը ի՞նչ էր ձեր պրոֆեսիան։

— Բանվոր էի։

— Ո՞րտեղ էիք աշխատում։

— Պետերբուրգում, Դոնի Ռոստովում, Տուլայի զինագործարանում... Ես ուզում եմ խնդրել, որ ինձ տեղափոխեն գնդացրային խումբ։

— Դուք ծանո՞թ եք գնդացրին։

— Գետեմ Շոշի, Բերտեի, Մարդսենի, Մաքսիմի, Գոչկիսի, Բերտմանի, Վիկկերսի, Լյուիսի, Շվարցլոզեի սիստեմի գնդացիրները։

— Օհո՞։ Ես կխոսեմ գնդի հրամանատարի հետ։

— Խնդրում եմ։

Հարյուրապետը մի անգամ էլ դիտեց Բունչուկի ցածրահասակ, ամրակազմ կերպարանքը։ Բունչուկը հիշեցնում էր Դոնի առափնյա կնձի ծառը. նրա մեջ չկար առանձնապես աչքի ընկնող ոչ մի բան, չկար որևէ առանձնահատուկ դիմագիծ. ամեն ինչ սովորական էր, գորշ, առօրյա, մնացած դեմքերի բազմության մեջ յուրահատուկ էին միայն նրա հաստատուն, կորացած ծնոտը ու աչքերը, որոնք խոցում էին հանդիպակաց հայացքը։

Նա ժպտում էր հազվադեպ, շրթունքների անկյուններով, աչքերը ժպիտից չէին մեղմանում, անմատչելիորեն պահպանում էին իրենց աղոտ փայլը։ Ու նա ամբողջովին ժլատ էր գույն տալու, գույն առնելու մեջ, զուսպ էր ու պաղարյուն,

նման էր կնձնիին, պինդ, երկաթի ամրություն ունեցող այդ ծառին, որ աճում է Դոնի առափնյա գորշ, անբարեհամբույր, ավազախառն հողում։

Միառժամանակ նրանք լուռ էին գնում։ Բունչուկը իր խոշոր ձեռները դնում էր թամքի քրքրված, կանաչ ղաշին։ Լիստնիցկին ծխախոտը հանեց ու վառելով Բունչուկի մատուցած լուցկուց, նրա ձեռքից զգաց ձիու քրտինքի քաղցրավուն, կպրային հոտը։ Բունչուկի ձեռքերն արտաքին կողմից պատած էին մազերով, որոնք խիտ էին ինչպես ձիու մազերը։ Լիստնիցկին ակամա ուզում էր շոյել դրանք։ Կուլ տալով բարկ ծուխը, նա ասաց.

— Դուք և էլի մի կազակ այս անտառից կգնաք գյուղական ճամփով դեպի ձախ։ Տեսնո՞ւմ եք։

— Այո՞։

— Եթե կես վերստ հեռավորությամբ չհանդիպեք մեր հետևազորին, կվերադառնաք։

— Լսում եմ։

Նրանք վարգելով գնացին։ Փոքրիկ մի անտառից քիչ հեռու խմբովին կանգնած էին մտերմուհի-կեչիները։ Նրանցից դենը աչք էր հոգնեցնում անշուք, դեղնած, ցածրիկ սոճուտը, ձգվում էր նոսր թփուտը, որ ճխլտել էին այնտեղից անցած ավստրիական գումակները։ Աջ կողմից, հեռվից հրետանային որոտմունքը սասանեցնում էր գետինը, իսկ այստեղ, կեչիների մոտ մեղմ անդորրություն էր տիրում։ Հողը ծծում էր առատ ցողը, վարդագունում էին խոտաբույսերը, հետզհետե դառնալով ավելի վառ-գունագեղ, նախաաշնանային պերճանքում ճչալով մոտալուտ մահվան մասին։ Լիստնիցկին կանգ առավ կեչիների մոտ, սկսեց հեռադիտակով զննել անտառից դենը ձգված կուզիկ բլրակները։ Նրա թրի պղնձե գլխիկին նստեց մի մեղու, բաց անելով թևիկները։

— Հիմա՛ր,— ափսոսանքով ու կամացուկ ասաց Բունչուկը՝ դատապարտելով մեղվի վրիպումը։

— Ի՞նչ,— Լիստնիցկին կտրվեց հեռադիտակից։

Բունչուկը աչքերով նրան ցույց տվեց մեղուն, ու Լիստնիցկին ժպտաց.

— Դրա մեղրը դառն կլինի. ի՞նչ եք կարծում։

Նրան պատասխանողը Բունչուկը չէր։ Որտեղից որտեղ, սոճիների հեռավոր մի խմբից գնդացիրը ծվատեց լռությունը, գնդակները շաչելով, կաչաղակային կչկչոցով, սվսվալով թռչում էին կեչիների միջից, գնդակի կտրած մի ոստ պտույտ եկավ, տատանվեց ու ընկավ հարյուրապետի ձիու բաշին։

Ձիերի վրա բղավելով, նրանց մտրակելով, նրանք սլացան դեպի գյուղ։ Ավստրիական գնդացիրը առանց մի վայրկյան դադար առնելու կրակեց նրանց ետևից ու սպառեց ժապավենը։

Հետո Լիստնիցկին հաճախ առիթ էր ունենում հանդիպելու կամավոր Բունչուկին, ու նա միշտ զարմանում էր այն անհողդողդ կամքի վրա, որը արտահայտվում էր Բունչուկի կոշտ աչքերում, զարմանում էր ու չէր կարողանում ըմբռնել, թե ինչ էր թաքնված այն գաղտնի ծածկամտության տակ, որ ամպի ստվերի նման կախված էր հասարակ ու խղճուկ տեսք ունեցող այդ մարդու դեմքին։ Բունչուկը մի անգամ, շրթունքների պինդ անկյունում ժպիտը զսպելով, անորոշ ասաց, թե ինքը գնում է ծուռ, ոլոր-մոլոր շավղով, մի կողմ թողած լոկ իրեն հայտնի ճշմարտությունը։ Նրան տեղափոխեցին գնդացրային խումբ։ Մեկուկես շաբաթից հետո (գունդը կանգ էր առել մի օրով հանգստանալու) Լիստնիցկին հարյուրյակի հրամանատարի մոտ գնալիս հանդիպեց Բունչուկին։ Սա քայլում էր մի հրկիզված մարագի կողքից՝ աշխույժ թափահարելով ձախ ձեռքի դաստակը։

— Ա՜-ա, կամավո՛ր։

Բունչուկը շուռ տվեց գլուխը ու պատիվ տալով, ճամփից մի կողմ քաշվեց։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց Լիստնիցկին։

— Խմբի հրամանատարի մոտ։

— Կարծեմ մեր ճանապարհը մեկ է, հը՞։

— Կարծե՛ս թե, այո։

Նրանք միառժամանակ լուռ քայլում էին ավերված գյուղի փողոցով։ Բակերում, հատուկենտ, չքանդված մարագների մոտ դես ու դեն էին ընկնում մարդիկ, ձիավորներ էին անցնում, փողոցի հենց մեջտեղում ծուխ էր արձակում դաշտային խոհանոցը, և դրա մոտ սպասում էին կազակները՝ երկար հերթ բռնած. վերևից նեխած խոնավություն էր կաթում։

— Հը՛, ո՞նց է, ուսումնասիրո՞ւմ եք պատերազմը,— հարցրեց Լիստնիցկին՝ շեղակի նայելով քիչ ետևից քայլող Բունչուկին։

— Այո... անշուշտ, ուսումնասիրում եմ։

— Պատերազմից հետո ի՞նչ եք անելու,— հայտնի չէ ինչու հարցրեց Լիստնիցկին՝ նայելով կամավորի ձեռներին, որ պատած էին ձիու թուխ մազերով։

— Ոմանք կհնձեն ցանածը, իսկ ես... կդիտեմ։— Բունչուկը կկոցեց աչքերը։

— Ի՞նչպես հասկանալ ձեզ։

— Դիտե՞ք, հարյուրապետ (Բունչուկն է՛լ ավելի թունդ կկոցեց աչքերը), թե ինչ է ասում առածը. «Քամի ցանողը փոթորիկ կհնձի»։

— Լավ կլիներ՝ խոսեիք առանց այլաբանությունների, ավելի պարզ։

— Առանց այն էլ պարզ է։ Մնաք բարով, հարյուրապետ, ես այս կողմն եմ գնում։

Բունչուկը մազոտ մատները տարավ կազակական գլխարկի հովարին, գնաց ձախ կողմը։

Թոթվելով ուսերը, Լիստնիցկին երկար նայեց նրա ետևից։

«Այդ ի՞նչ է, նա տարօրինա՞կ է ձևանում, թե՞ մի քիչ սարսաղ է»,— ջղայնացած մտածում էր նա՝ մոտենալով հարյուրյակի հրամանատարի հարմարավետ գետնատանը։

XVI

Ծառայության երկրորդ հերթի հետ գնաց նաև երրորդը։ Դոնի ստանիցաները, խուտորները դատարկվեցին, ասես այդ ամբողջ շրջանը հնձի, եռուն աշխատանքի էր դուրս եկել։

Դառնաղետ տառապա՛նքն էր այն տարի ծավալվել սահմանների վրա. մահը լափում էր աշխատողներին, ու քանի՞-քանի կազակուհիներ, ամեն ինչից ձեռք քաշելով հոգնատանջ, նվազկոտ հեծկլտում էին՝ «Ա՛խ, ազիզ ջան, ի՛մ ազի՞զ... Ո՞ւմ հույսով թողիր դու ինձ...»։

Ազիզները բոլոր կողմերում վար էին գնում գլուխները, թափում կազակական կարմիր արյունը, ու աչքերը մարած,

այլևս չա՛ր թնանալով, հրետանային հոգեհանգստի ներքո փտում էին Ավստրիայում, Լեհաստանում, Պրուսիայում... Երևում էր, որ արևելյան քամին նրանց չէր հասցնում կանանց ու մայրերի լացը։

Կազակ երիտասարդությունը թողել էր տուն ու տեղը և այնտեղ կոտորվում էր մահվան, ոջիլների, սարսափի ճիրաններում։

Սեպտեմբերյան պայծառ մի օր Տատարսկի խուտորի վրա թռչում էր կաթնա-ծիածանագույն մի սարդոստայն, այնպե՛ս նրբահյուս, բամբականման։ Որբևայրու պես քմծիծաղ էր տալիս արյունաքամ արևը, երկնքի ջինջ, կուսական կապտությունը վանողաբար մաքուր էր ու հպարտ։ Դոնի մյուս կողմում, արդեն դեղնելով, հեծեծում էր անտառը, դալկանում կաղամախին, կաղնին թափում էր նախշուն, թոշնած տերևները, միայն լաստենին էր գոռոզաբար կանաչին տալիս, իր կենսունակությամբ ուրախացնում կաչաղակի սուր աչքը։

Այդ օրը Պանտելեյ Պրակոֆևիչ Մելեխովը գործող բանակից նամակ ստացավ։ Դունյաշկան նամակը բերեց փոստից։ Փոստապետը նամակը հանձնելով նրան, գլուխ տվեց, թափահարեց քաչալ գլուխը, նվաստորեն տարածեց ձեռները.

— Դուք, ի սեր աստծո, ներեցեք ինձ, ես բացել եմ նամակը։ Այդպես էլ ասացեք հայրիկիդ, որ Ֆիրս Սիդորովիչը այսպես ու այսպես, բաց է արել նամակը։ Ասացեք, որ նրա համար շատ հետաքրքիր էր իմանալ, թե պատերազմից ի՛նչ կա, ինչ չկա... Ներեցեք ինձ, ու այդպես էլ զեկուցեք հայրիկիդ, Պանտելեյ Պրակոֆևիչին։

Իր սովորության հակառակ նա շփոթվել էր, ու դուրս եկավ Դունյաշկային ճանապարհելու, չնկատելով, որ իր քիթը թանաքոտվել է։

— Դուք, այնպես, էլի... չնեղանաք, ի սեր աստծո... Ես իրոք ծանոթ մարդ...— կցկտուր մոթմոթում էր նա Դունյաշկայի ետևից, գլուխ էր տալիս, Դունյաշկան դրա մեջ ինչոր մի նախազգուշացուցիչ, ցնցող բան զգաց։

Տուն վերադարձավ հուզված, երկար ժամանակ չէր կարողանում նամակը հանել ծոցից։

— Դեհ, շո՛ւտ, է՛...— բղավեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ շփելով դողդոջուն մորուքը։

Հանելով ծրարը, Դունյաշկան արագ-արագ վրա էր տալի.

— Փոստապետն ասավ, որ հետաքրքրվել, կարդացել է նամակը, որ դուք, ապի ջան, նրանից չնեղանաք։

— Ջհաննա՛մը։ Գրիշկայի՞ց է, հը՞,— լարված հարցրեց ծերունին՝ ֆասալի շնչելով Դունյաշկայի դեմքի վրա։— Երևի Գրիգորիի՞ց է, թե՞ Պետրոյից։

— Ապի ջան, չէ՛... նամակը ուրիշ ձեռքով է գրված։

— Դեհ կարդա, էլի, հոգի հանեցիր,— բղավեց Իլյինիչնան՝ ծանր մոտենալով նստարանին (նրա ոտներն ուռել էին, քայլելիս նա դանդաղ էր փոխում դրանք, ասես ոտների տակից հավկիթներ էին դրված)։

Դրսից հեալով ներս ընկավ Նատալյան, կանգնեց վառարանի մոտ, արմունկները սեղմեց կրծքին, ծռեց սպիով այլանդակված վիզը։ Նրա շրթունքների վրա պատին ընկած արևաշողքի նման դողում էր ժպիտը, նա Գրիշայից սպասում էր բարև ու գոնե կարճ, գոնե հարևանցի հիշատակություն իր մասին, որպես տրիտուր իր շնային կապվածության, հավատարմության համար։

— Դարյան ո՞րտեղ է,— շշնջաց պառավը։

— Սկվեցեք,— մռմռաց Պանտելեյ Պրակոֆևիչը, կատաղությունը կլորացրեց նրա աչքերը ու դիմեց Դունյաշկային.— Կարդա՛։

— «Հաղորդում եմ ձեզ...»— սկսեց Դունյաշկան, ու նրստարանից ցած սողալով, դողդողալով, խնլագար ճիչ արձակեց.

— Ապի՛, ապի՛ ջան... Օ՛յ, մա-այրի՛-իկ։ Մեր Գրիշան... Ա՛խ, ա՛խ... Գրիշային... սպանե-ե՛լ են։

Վտիտ խորդենու տերևների մեջ խճճված, զոլավոր մի պիծակ թպրտում էր պատուհանի վրա, բզզում էր։ Բակում հանգիստ կչկչում էր մի հավ, բաց դռնից մանկական, բոժոժի ձայնը հիշեցնող, հեռավոր ծիծաղ էր լսվում։

Նատալյայի դեմքը ցնցվում էր ջղաձգությունից, իսկ շրթունքների անկյուններում դեռ չէր անհայտացել քիչ առաջվա դողդոջուն ժպիտը։

Ոտքի ելնելով, կաթվածահարի պես ցնցելով գլուխը,

Պանտելեյ Պրակոֆևիչը կատաղի տարակուսանքով նայում էր ջղաձգությունից գալարվող Դունյաշկային։

Հաղորդում եմ Ձեզ, որ Ձեր որդին, Դոնի կազակական 12-րդ գնդի կազակ Գրիգորի Պանտելեևիչ Մելեխովը ս. թ. օգոստոսի լույս 16-ի գիշերը սպանվեց Կամենկա-Ստրումիլովո քաղաքի մոտ տեղի ունեցած մարտում։ Ձեր որդին ընկավ բաջերի մահով, թող սա Ձեզ համար սփոփանք լինի անվերադարձնելի կորուստի հանդեպ։ Մնացած գույքը կհանձնվի նրա հարազատ եղբայր Պյոտր Մելեխովին։ Ձին մնացել է գնդում։

Զորրորդ հարյուրյակի հրամանատար՝
փոխ-յասավուլ Պոլկովնիկով։
Գործող բանակ, 1914 թ. օգոստոսի 18։

Գրիգորիի մահվան մասին լուր ստանալուց հետո Պանտելեյ Պրակոֆևիչը միանդամից, բոլորովին ընկճվեց։ Նա օրեցօր ծերանում էր մերձավորների աչքի առաջ։ Ծանր վախճանը մոտենում էր անխուսափելիորեն. թուլանում էր հիշողությունը ու պղտորվում բանականությունը։ Տանը նա քայլում էր կորացած, չուգունե-սևացած դեմքով. աչքերի բորբոք, յուղային փայլը մատնում էր նրա հոգեկան խառնաշփոթությունը։

Նա ինքը հարյուրյակի հրամանատարից ստացված նամակը դրել էր սրբապատկերի դարակը և օրական մի քանի անգամ դուրս էր գալիս հաշտը, մատով կանչում էր Դունյաշկային.

— Եկ ինձ մոտ։

Դունյաշկան դուրս էր գալիս։

— Բե՛ր Գրիգորիի մասին գրված նամակը։ Կարդա՛,— հրամայում էր նա, վախվխելով նայում օթախի դռան, որի ետևում անամոթ վշտից տանջվում էր Իլյինիչնան։— Դու կամաց կարդա, ոնց որ թե քեզ ու քեզ,— նա խորամանկաբար աչքով էր անում, ամբողջովին կծկվում, աչքերով ցույց էր տալիս դուռը,— կամաց կարդա, թե չէ մերդ... փորձանք կլինի...

Դունյաշկան, արցունքները կուլ տալով, կարդում էր առաջին նախադասությունը, ու Պանտելեյ Պրակոֆևիչը, որ սովորաբար պպզած էր լինում, վեր էր ցցում ձիու սմբակի պես լայն ձեռքը։

— Կա՛ց։ Մնացածը գիտեմ... Տար դիր սրբապատկերի դարակը... Կամա՛ց, հա՛, թե չէ մեր մերը...— Նա դարձյալ տարօրինակ կերպով աչքով էր անում ու ամբողջովին ծռմռվում ինչպես վառվող ծառի կեղևը։

Ճերմակում էին նրա մազերը, կուրացուցիչ սպիտակությունը արագությամբ պատեց նրա գլուխը, թել-թել խցկվեց մորուքի մեջ։ Նա դարձավ որկրամոլ, ուտում էր շատ և անփույթ։

Հոգեհանգստից հետո իններորդ օրը հրավիրեցին տեր-Վիսսարիոնին ու հարազատներին, սպանված ռազմիկ Գրիգորիի հոգեհացին ներկա գտնվելու համար։

Պանտելեյ Պրակոֆևիչը արագությամբ և ագահությամբ էր ուտում, էրիշտան օղակ-օղակ նստում էր նրա մորուքին։ Իլյինիչնան, որ այդ վերջին օրերին վախենալով հետամուտ էր լինում նրան, լաց եղավ։

— Հա՛յր, ի՞նչ եղավ քեզ...

— Ի՞նչ է որ,— դես-դեն նայեց ծերունին՝ պղտոր աչքերը բարձրացնելով չնարակած քրեղանից։

Իլյինիչնան ձեռքը թափ տվեց ու երեսը մի կողմ դարձրեց՝ աչքի մոտ ճմլելով ասեղնագործած թաշկինակը։

— Դուք այնպես եք ուտում, հայրիկ, որ կարծես երեք օր ոչինչ չեք կերել,— չարացած ասավ Դարյան ու նրա աչքերը կայծկլտեցին։

— Ուտո՞ւմ եմ։ Լավ, այդպես... այդպես... այդպես... էլ չեմ անի...— շփոթվեց Պանտելեյ Պրակոֆևիչը։ Նա շվարած նայեց սեղանի շուրջը նստածներին, ու լպստելով շրթունքները, լռեց, նոթերը կիտեց, չպատասխանեց հարցերին։

— Արիացիր, Պրակոֆիչ։ Ի՞նչ ես այդպես ընկճվել,— հոգեհացից հետո նրան սիրտ էր տալիս տեր-Վիսսարիոնը։— Նրա մահը սուրբ է, մի՛ բարկացնի աստծուն, ծերունի։ Որդիդ թագավորի ու հայրենիքի համար փշե պսակ ընդունեց, իսկ դու... Մեղք է, Պանտելեյ Պրակոֆիչ, մեղք է քեզ համար... Աստված չի ների։

— Ես էլ հենց, տեր-հայր... Ես էլ հենց արիանում եմ։ «Քաջի մահով է սպանված», այդպես է գրում հրամանատարը։

Համբուրելով քահանայի ձեռքը, ծերունին հենվեց դռան դրանդիին և որդու մահվան լուրը ստանալուց հետո ամբողջ ժամանակվա ընթացքում առաջին անգամ լաց եղավ սաստիկ ցնցվելով։

Այդ օրվանից փոխվեց դեպի լավը և հոգեպես շտկվեց։

Ցուրաքանչյուրը յուրովի էր ամոքում վերքը։

Նատալյան Դունյաշկայից լսելով Գրիգորիի մահվան մասին, դուրս վազեց բակ։ «Կսպանե՛մ ինձ։ Էլ անելիք չունեմ։ Շուտ»,— ծեծկում նրան, կրակով դաղում էր միտքը։ Նատալյան թպրտում էր Դարյայի ձեռների մեջ և ցնծագին թեթևությամբ ընդունում ուշագնացությունը, միայն թե հնարաներ այն պահը, երբ կվերադառնա գիտակցությունը և տիրաբար կհիշեցնի պատահածը։ Մի շաբաթ նա անցկացրեց հիվանդագին մոռացության մեջ և ռեալ աշխարհ վերադարձավ բոլորովին փոխված, սսկված, սև տկարությունից հալումաշ եղած... Անտեսանելի մեռելը տեղ գտավ Մելեխովների տանը, և կենդանի մարդիկ շնչում էին նրա տեբեփուկային, դիակային հոտը։

XVII

Գրիգորիի մահվան լուրը ստանալուց տասներկու օր անց Մելեխովները Պետրոյից միաժամանակ երկու նամակ ստացան։ Դունյաշկան դեռ փոստում կարդաց դրանք և դեպի տուն սլացավ քամու փախցրած ցողունի նման, երբեմնակի օրորվելով ու հենվելով ցանկապատներին։ Խուտորում նա ահագին իրարանցում առաջացրեց և աննկարագրելի հուզմունքով լցրեց տունը։

— Սա՛ղ է Գրիշան... Սա՛ղ է մեր ազիզը...— հեծկլտող ձայնով աղաղակում էր նա դեռ հեռվից։— Պետրոն է գրում... Գրիշան վիրավորված է և ոչ թե սպանված... Սա՛ղ է, սաղ է...

«Բարև ձեզ, թանկագին ծնողներ,— գրել էր Պետրոն օգոստոսի 20-ի թվակիր նամակում։— Հաղորդում եմ ձեզ, որ մեր Գրիշկան քիչ էր մնացել հոգին տար աստծուն, իսկ հիմի, փառք աստծո, ողջ և առողջ է, որ և ցանկանում ենք ձեզ

ողորմած աստծուց, առողջություն և հաջողություն։ Կամենկա-Ստրումիլովո քաղաքի մոտ նրանց գունդը կռվի մեջ էր, ու գրոհի ժամանակ նրա դասակի կազակները տեսան, որ հունգարական մի հուսար թրով զարկեց նրան, ու Գրիգորին ընկավ ձիուց, և հետո մեզ ոչինչ հայտնի չէր, ու որքան էլ ես նրանց հարցուփորձ էի անում, նրանք էլ ոչինչ չկարողացան պատմել։ Հետո արդեն ես Միշկա Կաշևոյից իմացա,— Միշկան եկել էր մեր գունդը՝ կապ պահելու համար,— որ Գրիգորին պառկած մնաց մինչև գիշեր, իսկ գիշերով ուշքի եկավ ու սկսեց սող տալ։ Սող տվեց աստղերից ճանապարհը որոշելով ու հանդիպեց մեր մի վիրավոր սպային։ Այդ սպան վիրավորված էր, դրագունական գնդի փոխ-գնդապետ էր ու արկով վիրավորվել էր փորից ու ոտներից։ Գրիգորին նրան վերցրեց ու վեց վերստ տարավ շալակած։ Իսկ դրա համար նրան պարգև դուրս եկավ՝ գեորգևյան խաչ, ու կրտսեր ուրյադնիկի կոչում տվին Գրիշկային։ Ա՛յ թե ոնց եղավ բանը։ Գրիշկայի վերքը դատարկ բան է, թշնամին թրով խփել էր նրա գլխին, պոկել կաշին. ամա որ ձիուց ընկավ, ուշաթափ եղավ։ Հիմա նա շարքումն է,— ասում էր Միշկան։ Դուք ներող եղեք, որ այսպես է գրված։ Գրում եմ ձի նստած, թամքի վրա, որը խիստ ճոճվում է»։

Հետևյալ նամակում Պետրոն խնդրում էր «իրենց Դոնի հայրենի այգիներից» չորացրած բալ ուղարկել իրեն, ու խնդրում էր շմոռանալ, շուտ-շուտ նամակ գրել. նույն նամակում հայհոյում էր Գրիգորիին, որ սա, կազակների ասելով, լավ չի նայում ձիուն, իսկ դա իրեն՝ Պետրոյի համար վիրավորական է, որովհետև թուխլիկ ձին իրենն է, Պետրոյի սեփական, ազնվացեղ ձին է. հորը խնդրում էր իր կողմից գրել Գրիգորիին։

Ես կազակների միջոցով նրան հայտնեցի, որ եթե նա ձին չպահի ինչպես իրեն բարիքը, ուրեմս երբ որ հանդիպենք, ես նրա մռութը կջարդեմ, արյունլվիկ կանեմ, թեկուզև հիմա նա գեորգևյան խաչ ունի,— գրում էր Պետրոն, և ապա հետևում էին անթիվ, շատ կարոտով բարևները, ու ճխլտված, անձրևից թրջված նամակի տողերում դառն տրխ-

ությունն էր զգացվում։ Երևում էր, որ Պետրոյի համար էլ մի ծանր բեռ էր ծառայությունը։

Ցավալի էր նայել Պանտելեյ Պրակոֆևիչին, որը շշմել էր ուրախությունից։ Նա երկու նամակներն էլ ծոցը դրած ման էր գալի խուտորում, բռնում էր գրագետներին ու ստիպում էր կարդալ,— ոչ թե նրա համար, որ ինքը լսի, այլ նրա համար, որ պարծենա ամբողջ խուտորի առաջ։

— Ըհը՛մ։ Տեսնո՞ւմ ես՝ ինչ տղա է իմ Գրիշկան։ Հը՞։— Նա վեր էր ցցում սմբականման ձեռքը, երբ կարդացողը մի կերպ գիրկապ անելով հասնում էր այն տեղը, ուր Պետրոն նկարագրում էր, թե ինչ սխրագործություն է կատարել Գրիգորին՝ վեց վերստ շալակած տանելով փոխ-գնդապետին։

— Ամբողջ խուտորում առաջինն է, որ խաչ ունի,— հպարտանում էր ծերունին, որ խանդոտությամբ վերցնելով նամակները, թաքցնում էր ճխլտված գլխարկի աստառի տակ, շարունակում էր քայլել ու մի ուրիշ գրագետ մարդ փնտրել։

Սերգեյ Պլատոնովիչն ինքը, խանութի պատուհանից տեսնելով նրան, դուրս ելավ, հանեց կարտուզը։

— Նե՛րս արի, Պրակոֆևիչ։

Նա իր մսոտ, սպիտակ ձեռքով սեղմեց ծերունու ձեռքը, ասաց.

— Է՛հ, շնորհավորո՛ւմ եմ, շնորհավորում եմ... ը՛ըմ... Այդպիսի զավակով պետք է հպարտանալ, իսկ դուք նրա հոգեհանգիստն էիք կատարում։ Լրագրերում կարդացի նրա քաջագործության մասին։

— Լրագրերում է՞լ է գրված,— զարմանքից քարացավ Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Հաղորդագրություն կա, կարդացե՛լ եմ, կարդացել եմ։

Սերգեյ Պլատոնովիչն ինքը դարակից վար բերեց երեք տուփ քառորդ ֆնտանոց թուրքական լավագույն ծխախոտ, թղթե տոպրակի մեջ թանկագին կոնֆետներ լցրեց, առանց կշռելու. այդ բոլորը տալով Պանտելեյ Պրակոֆևիչին, ասաց.

— Երբ որ ծանրոց ուղարկես Գրիգորի Պանտելեևիչին, սա էլ ուղարկիր և ինձանից բարև հաղորդիր։

— Տե-ե՛ր աստվա-ա՛-ած։ Ի՞նչ մեծ պատիվ է Գրիշկային, հա՛-ա... Ամբողջ խուտորը նրա մասին է խոսում...

Ի՞նչ լավ օրի հասա ես...— շշնջում էր ծերունին՝ իշնելով Մոխովի խանութի սանդուղքից։ Նա քիթը սրբեց, շեքմենի թեքով ճզմեց թուշը խտղտող արցունքը, մտածեց՝ «Ծերանում եմ, էլի՛։ Արցունքս է՛լ չեմ կարենում զսպել... է՛հ, Պանտելե՛յ, Պանտելե՛յ, ա՛յ թե ուր հասցրեց կյանքը։ Առաջ քարվ պես պինդ էի, նավի վրայից ութ փթանոց պարկեր էի իջեցնում, իսկ հիմի՞։ Գրիշկան թևերս թուլացրեց, էլի...»

Նա կաղալով քայլում էր փողոցում, կոնֆետների տոպրակը սեղմելով կրծքին, ու էլի՝ իր միտքը, ոնց որ կիվիվը ճահճի վերևում, սավառնում էր Գրիգորիի շուրջը, հիշեցնում Պետրոյի նամակի խոսքերը։ Հենց այստեղ էլ նրան հանդիպեց խնամի Կորշունովը։ Նա առաջինը ձայնեց Պանտելեյ Պրակոֆևիչին։

— Է՛յ, խնամի, կաց, է՛։

Պատերազմը հայտարարվելու օրվանից նրանք չէին տեսնվել։ Երբ Գրիգորին տանից հեռացավ, նրանց միջև ոչ թե թշնամական, այլ սառն, լարված հարաբերություններ ստեղծվեցին։ Միրոն Գրիգորևիչը բարկանում էր Նատալյայի վրա, որ սա ստորանում է Գրիգորիի առաջ, նրանից աղորմություն է սպասում։ Ու իրեն էլ՝ Միրոն Գրիգորևիչին ատիպում էր նույնպես ստորացում ապրել։

— Անառա՛կ քած,— ընտանեկան շրջանում հայհոյում էր նա Նատալյային,— տանը, հոր մոտ կապրեր, էլի՛, չէ՛։ Վեր կացավ ու գնաց կեսրանց մոտ, այնտեղ հացը ավելի համո՞վ է նրա համար։ Նրա, այդ հիմարի պատճառով հերն է՛լ խայտառակվեց, մարդկանց առաջ ամոթով եղավ։

Միրոն Գրիգորևիչը քիպ մոտեցավ խնամուն, մեկնեց մակույկի պես ծռված, չեչոտ ձեռքը։

— Բարով տեսանք, ո՞նց ես, խնամի։

— Փա՛ռք աստո, խնամի ջան։

— Դու ոնց որ թե բան-ման ես առել, հը՞։

Պանտելեյ Պրակոֆևիչը պարզելով աջ, ազատ ձեռքը, գլխով բացասական նշան արեց։

— Ուրանք, խնամի ջան, նվերներ են մեր հերոսին։ Սերգեյ Պլատոնովիչը՝ այդ բարեգործ մարդը թերթերում կարդացել է նրա հերոսության մասին, կոնֆետներ ու թութուն է նվիրում նրան։ «Քո հերոսին,— ասում է,— իմ կողմից

ղրկի բարև ու այս նվերները, թող նա գալիք ժամանակներում էլ այդպես աչքի ընկնի»։ Աչքիցը հենց արցունք կաթեց, հասկանո՞ւմ ես, խնամի,— անզուսպ կերպով պարծենում էր Պանտելեյ Պրակոֆևիչը ու խորազնին նայում խնամու դեմքին՝ աշխատելով կռահել նրա ստացած տպավորությունը։

Խնամու սպիտակավուն կոպերի տակ լուսաստվերներ էին կուտակվում, հենց դրանք էլ հեգնական երանգ էին տալիս ցած նայող նրա աչքերի ժպիտին։

— Այդպե-ե-ես,— մմռաց Կորշունովը ու փողոցի միջով քայլեց դեպի ցանկապատը։

Պանտելեյ Պրակոֆևիչը աճապարեց նրա ետևից, ցասկոտ դողացող մատներով բացեց թղթի տոպրակը։

— Վերցրու, կոնֆետ կեր, մեղրով է,— նենգաբար հրամցրեց նա խնամուն,— կեր, խնդրեմ, փեսիդ կողմից եմ հյուրասիրում... Քո կյանքը քաղցր չէ, գիտեմ, իսկ տղաս, չգիտեմ, արժանի կլինի այդպիսի պատվին թե ոչ...

— Դու իմ կյանքի հետ գործ չունես։ Ես ինքս գիտեմ իմ կյանքը։

— Փորձիր, էլի՛, պատիվ արա,— չափից անց սրտաբացությամբ խնդրում էր Պանտելեյ Պրակոֆևիչը ու կտրում խնամու առաջը։ Նրա կեռված մատները բաց էին անում կոնֆետը, պոկում արծաթավուն, բարակ փաթեթը։

— Մենք քաղցր բանի սովոր չենք,— ու Միրոն Գրիգորևիչը ետ տարավ խնամու ձեռքը։— Սովոր չենք, մեր ատամները կփչանան ուրիշի նվերներից։ Իսկ քեզ, խնամի, վայել չէ ման գալ ու ողորմություն հավաքել տղայիդ համար։ Կարիք ունեիր, թող ինձ մոտ գայիր։ Փեսայի համար հո ես կտայի... Նատաշկան հո ձեր հացն է ուտում։ Կարելի էր մի բան տալ քո աղքատության պատճառով։

— Մեր ազգի մեջ հլա դեռ ոչ ոք ողորմություն չի հավաքել, մի՛ դուրս տա այդ կոշտ լեզվովդ, խնամի։ Շատ ես պարծենում, խնամի... Խիստ շա՛տ... Կարելի է աղջիկդ հենց նրա համար եկավ մեզ մոտ, որ հարուստ ես ապրում։

— Կա՛ց,— կտրուկ վրա բերեց Միրոն Գրիգորևիչը։— Արի չհայհոյենք իրար։ Ես հայհոյելու չեմ եկել, հանդարտվիր, խնամի։ Գնանք, խոսենք, գործ կա։

— Մենք խոսելու բան չունենք։

— Որ ասում եմ, ուրեմս, ունենք։ Դեհ գնանք։

Միրոն Գրիգորևիչը վերցրեց խնամու չեքմենի թևքը ու շուռ եկավ դեպի նրբանցքը։ Անցնելով տների կողքից, նրանք դուրս եկան տափաստան։

— Ի՞նչ էիր ասում,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ զգաստանալով իր մեջ կուտակված բարկությունից։

Նա ծուռ նայեց Կորշունովի սպիտակավուն, պեպենոտ դեմքին։ Վերջինս հավաքելով սերթուկի երկար փեշերը, նստեց առվի հողաթմբին, հանեց թութունի հին, ծայրերը ծոպազարդ տոպրակը։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, Պրակոֆիչ, դու, չգիտեմ ինչու ինձ վրա պրծար ոնց որ կովարար աքլոր, իսկ դա լավ բան չի։ Կարծեմ՝ լավ բան չի, հը՞։ Ես ուզում եմ իմանալ,— սկսեց նա արդեն ուրիշ, կտրուկ, կոշտ տոնով,— քո տղան երկա՞ր պիտի ծաղրատեղ դարձնի Նատալյային։ Հը՞, ասա ինձ։

— Այդ մասին նրան հարցրու։

— Ես նրան հարցնելու բան չունեմ, դու քո տան գլուխն ես, քեզ հետ էլ խոսակցություն ունեմ։

Պանտելեյ Պրակոֆևիչը բռի մեջ ճզմում էր մաքրած կոնֆետը։ Շոկոլադային կպչուն խուսը ծորում էր նրա մատների արանքը։ Նա բուռը քսեց թմբի դարշնագույն, փուխր կավին, լուռ պատրաստվեց ծխելու։ Թուղթը ոլորեց, քառորդանոց տուփից մի պտղունց թուրքական ծխախոտ լցրեց ու տուփը մեկնեց խնամուն։ Միրոն Գրիգորևիչը վերցրեց առանց տատանվելու, նույնպես թութուն փաթաթեց Մոխովի առատ նվերի հաշվին։ Ծխեցին։ Նրանց վերևում սպիտակափրփուր, փարթամ կրծքով կախվել էր մի ամպ, ու գետնից դեպի այդ ամպը, դեպի անհաս բարձրությունն էր թռչում սարդոստայնի մի թել՝ օրորվելով քամուց։

Օրը վերջանալու վրա էր։ Խաղաղ, աննկարագրելիորեն քաղցր նանիկ էր անում սեպտեմբերյան անդորրությունը։ Երկինքը, որ արդեն կորցրել էր իր ամառային լիառատ փայլը, դալուկ կապույտին էր տալիս։ Խնձորենու տերևները, աստված գիտե որտեղից գալով, շքեղաշուք ծիրանի էին սփռում առվաթմբի վրա։ Ալեձև լեռնալանջի ետևում չքանում էր ճյուղավորված ճանապարհը. իզուր էր նա մարդկանց կանչում քայլելու դեպի այնտեղ, հորիզոնի զմրուխտե, երազի

պես անպարզ գծից դենը, անհայտ տարածությունները. մարդիկ, որ գամված էին բնակարաններին, իրենց առօրյային, հալումաշ էին լինում աշխատանքից, կալսման վրա վատնում ուժերը, ու ճանապարհը, ամայի, թախծող հետքը, քերելով հորիզոնը, հոսում էր դեպի անտեսանելին։ Նրա վրա թրևում էր քամին, փոշի էր բարձրանում։

— Թույլ թութուն է, ոնց որ խոտ լինի,— ծխի թանձր ամպ բաց թողնելով, ասաց Միրոն Գրիգորևիչը։

— Թույլ է մի քիչ, ամա... դուրեկան է,— համաձայնեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Պատասխանիր ինձ, խնամի,— թուլացած ձայնով խնդրեց Կորշունովը և հանգցրեց ծխախոտը։

— Գրիգորին դրա մասին ոչինչ չի գրում։ Նա հիմի վիրավորված է։

— Լսել եմ...

— Հետո ինչ կլինի, չգիտեմ։ Կարելի է թե իսկապես սպանեն։ Ի՞նչ իմանաս։

— Ոնց կլինի, խնամի...— Շփոթված ու ողորմելի տեսքով աչքերը թարթեց Միրոն Գրիգորևիչը։— Ախր Նատաշկան հիմի ոչ աղջիկ է, ոչ կնիկ, ոչ պատվով որբևայրի, բա այդ խայտառակություն չի՞։ Որ գիտենայի՝ բանն այսպես կլիներ, ձեզ՝ այդ հարսնախոսներիդ, շեմքից էլ ներս չէի թողնի, թե չէ ո՞նց կլինի այսպես... Է՛հ, խնամի, խնամի... Ամեն մարդ խղճում է իր զավակին... Ջիգյար է, հո հանաք բան չի՞...

— Ես ի՞նչ կարող եմ անել,— Պանտելեյ Պրակոֆևիչը զուսպ կատաղությամբ սկսեց հարձակումը։— Դու ինձ խելքի մոտիկ բան ասա։ Բա ես ուրա՞խ էի, որ տղես տնից հեռացավ։ Ես դրանից օգո՞ւտ ունեցա, հա՞։ Ի՞նչ տեսակ մարդիկ կան, է՛։

— Դու նրան գրիր,— խուլ ձայնով թելադրեց Միրոն Գրիգորևիչը, ու նրա խոսքերի հետ միաժամանակ խշշաց կավը՝ ձեռքի տակից դարշնագույն, փոքրիկ առվակներով հոսելով ու լցնելով առուն,— թող նա ասի վերջնական խոսքը։

— Նա երեխա ունի այն կնկանից...

— Սրանից է՛լ երեխա կլինի,— տաքացած գոչեց Կորշունովը։— Բա այդպես կվարվե՞ն կենդանի մարդու հետ,

հը՞... Մի անգամ փորձ արավ մեռնելու և հիմի հաշմանդամ է... գերեզմա՞ն դնել նրան, հը՞... Բա քո տղեն մարդու սիրտ ունի՞, թե՞ գայլի սիրտ,— ֆշշաց Միրոն Գրիգորևիչը. մի ձեռքով նա չանդռոտում էր կուրծքը, մյուսով քաշքշում խնամու փեշը։

Պանտելեյ Պրակոֆևիչը ֆսսում էր, շուռ էր տալի երեսը։

— ...Խեղճ կնիկը հալումաշ եզավ նրա համար, նրանից ջոկ ոչ ոքի չի ուզում։ Հո նոքարի պես ապրո՞ւմ է քո տանը։ Հը՞։

— Նա մեզ համար հալալ աղջկանից է՛լ լավ է, սո՛ւս արա,— բղավեց Պանտելեյ Պրակոֆևիչը ու վեր կացավ։

Նրանք առանց հրաժեշտ տալու գնացին տարբեր ուղղությամբ։

XVIII

Ելնելով հունից, կյանքի գետը շատ և շատ ճյուղերի է բաժանվում։ Դժվար է կանխորոշել, թե նա որ ճյուղով կուղղի իր ուխտադրուժ ու նենգավոր ընթացքը։ Այնտեղ, ուր այսօր կյանքը ծանծաղանում է որպես գետակը ավազակույտի վրա, ծանծաղանում է այնքան, որ երևում է նրա գարշ հատակը,— վաղը նա վարար, առատահոս է դառնում...

Մի անգամ Նատալյան հանկարծակի որոշեց գնալ Յագոդնոյե, Ակսինյայի մոտ, խնդրել, աղաչել նրան, որ վերադարձնի Գրիգորիին։ Չգիտես ինչու նրան թվում էր, թե ամեն ինչ Ակսինյայից է կախված, բավական է նրան խնդրել, ու կվերադառնա Գրիգորին և եբեմնի երջանկությունը։ Նատալյան չէր մտածում, թե արդյոք իրագործելի՞ է այդ, և Ակսինյան ի՞նչպես կընդունի իր տարօրինակ խնդրանքը։ Ենթագիտակցական զգացմունքից դրդված, նա ձգտում էր շուտով կենսագործել իր որոշումը։ Ամսվա վերջում Մելեխովները Գրիգորիից նամակ ստացան։ Հորն ու մորը բարևելուց հետո նա բարև ու ամենախոնարհ հարգանք էր հղում Նատալյա Միրոնովնային։ Ինչպիսի անհայտ պատճառ էլ որ նրան մղեր դեպի այդ, Նատալյայի համար դա դրդիչ հանգամանք հանգիստացավ. առաջին իսկ կիրակի օրը նա պատրաստվեց Յագոդնոյե գնալու։

— Ո՞ւր, Նատաշա,— հարցրեց Դունյաշկան, նայելով, թե ինչպես Նատալյան մի կտոր հայելու առաջ ուշադրությամբ և մանրազնին դիտում է իր դեմքը։

— Գնում եմ մերոնց տեսնելու,— ասաց Նատալյան ու կարմրեց, առաջին անգամ հասկանալով, որ դիմում է մեծ ստորացման, բարոյական ծանր խոշտանգման։

— Դու, Նատալյա, կյանքումդ գոնե մի անգամ ինձ հետ երգ ու պարի գայիր,— պաճուճվելով՝ խնդրեց Դարյան։— Իրիկունը կգա՞ս, հա՞։

— Չգիտեմ, դժվար թե։

— Ա՛խ դու, սեավոր[1], ախր քեֆ քաշել է պետք, քանի դեռ մեր մարդիկը չկան,— աչքերը խաղացնում, կատակում էր Դարյան ու կոտրատում ճկուն մարմինը, հայելու առաջ դիտում նոր, բաց կապույտ յուրկայի նախշուն փեշը։

Պետրոյի մեկնելուց հետո Դարյան խիստ փոխվել էր. ամուսնու բացակայությունը զգալի չափով անդրադառնում էր նրա վրա։ Ինչ-որ անհանգստություն էր նկատվում նրա աչքերում, շարժումներում, քայլվածքում։ Կիրակի օրերը նա է՛լ ավելի էր ղուզվում, երգ ու պարից վերադառնում էր ուշ, ջղայնացած, մռայլ աչքերով, ու դանդաղվում էր Նատալյային.

— Փորձանք է, ասված վկա... Ջահել կազակներին տարան, խուտորում մնացին միայն երեխաներն ու ծերերը։

— Քե՛զ ինչ։

— Ո՛նց թե ինձ ինչ,— զարմանում էր Դարյան,— երգ ու պարի տեղում մարդ չկա, որ հետը շուլուխ անեմ։ Գոնե այնպես լիներ, որ մենակ գնայի աղաց, թե չէ կեսարիս աչքից ազատվել չկա...

Դարյան շնական բացարտությամբ հարցուփորձ էր անում Նատալյային.

— Դու ո՞նց ես առանց տղամարդու այդքան երկար համբերում, ջանիկ։

— Հերի՛ք է, անամոթ։— Նատալյայի դեմքը թունդ կարմրում էր։

— Ու չես էլ ուզում, հա՞։

[1] Այստեղ սեավոր նշանակում է միանձնուհի։

— Իսկ դու ուզո՞ւմ ես, ինչ է։

— Ուզում եմ, Նուշիկս,— քրքջում էր Դարյան, կարմրում ու դողացնում կամար հոնքերը։— Էլ ի՞նչ թաքցնեմ մեղքս... Ես հիմի մի որևէ ծերունու է՛լ թափ կտայի, աստվա՛ծ վկա։ Հապա մտածիր, է՛, երկու ամիս է, որ Պետրոն չկա։

— Դարյա, դու փորձանքի մեջ կընկնես, հա՛-ա...

— Դեհ լա՛վ, հերիք է, հարգևո՛ր պառավ։ Գիտե՛նք քեզ պես սուսիկ-փուսիկներին։ Դու երևի թաքցնում ես քո արած բաները։

— Ես թաքցնելու ոչինչ չունեմ։

Դարյան ծիծաղկոտ աչքերով ծուռ նայում էր Նատալյային, մանր, խիտ ատամներով կրծում շրթունքները, պատմում էր.

— Անցած օրը երգ ու պարի ժամանակ կողքիս նստեց Տիմոշկա Մանիցկովը՝ ատամանի տղան։ Նստե՞լ է քրտինքի մեջ կորած։ Տեսնում եմ, որ վախենում է սկսել... Հետո ձեռքը կամացուկ տարավ թևիս տակ, իսկ ձեռքը դողում է։ Ես համբերեցի, սուս եմ անում, ամա հերսս գալիս է, գոնե կարգին տղա լիներ, թե չէ այնպես, էլի, խլնքոտի մեկն է։ Տասնվեց տարեկան է, ավելի չի լինի,— տես, թե ում է ձեռք գցում... Նստել եմ սուսուփուս, նա չանչեց, չանչեց ու փրսփրսաց՝ «գնանք մեր կալը...»։ Մի տեսնե՛իր, թե ո՞նց կոթեցի նրան...

Դարյան ուրախ քրքջում էր, նրա հոնքերը դողում էին, կկոցած աչքերը ճառագայթում էին զրնգուն ծիծաղից։— Ո՞նց նախատեցի ես նրա՞ն։ Վեր թռա ու ասում եմ՝ «Կորի գնա՛, քոսոտ, լակոտի մեկը։ Դու ինձ այդ տեսակ բաներ ասե՞ս։ Երեկ-մեկել օրը չէ՞ր, որ գիշերը տակդ թրջում էիր, էլ՞»։ Շան լափը գլխին լցրի։

Դարյայի ու Նատալյայի միջև պարզ ու բարեկամական հարաբերություններ էին հաստատվել։ Այն թշնամանքը, որ Դարյան սկզբում տածում էր դեպի կրտսեր հարսը, չնչվել էր, ու տարբեր բնավորություն ունեցող, ամեն ինչում իրար չնմանվող հարսները մտերմացել էին, սիրով էին ապրում։

Նատալյան հագնվեց ու դուրս եկավ օթախից։

Հաշտում Դարյան հասավ նրան։

— Այսօր երբ ես տուն գամ, դուռը բաց կանե՞ս։

— Ես գուցե տանը, մերոնց մոտ քնեմ։

Դարյան մտածեց, սանրով քորեց քթարմատը, գլխով արեց։

— Լա՛վ, գնա։ Չէի ուզում Դունյաշկային խնդրել, ամա ուրիշ ճար չկա։

Նատալյան Իլյինիչնային ասաց, որ գնում է հերանց տուն, ու դուրս ելավ տանից։ Շուկայից, հրապարակից սայլեր էին գնում, մարդիկ վերադառնում էին եկեղեցուց։ Նատալյան անցավ երկու նրբանցք ու դարձավ դեպի ձախ։ Շտապելով բարձրացավ բլուրը։ Բլուրի կատարից ետ նայեց. ներքևում փռված էր արևային հեղեղով ողողված խուտորը, սպիտակին էին տալիս տնակները, աղացի թեք կտուրի վրա անդրադառնալով, կայծկլտում էին արևի ճառագայթները, հալված հանքաքարի նման փայլում էր թիթեղը։

XIX

Պատերազմը Յագոդնոյից էլ մարդիկ տարավ։ Գնացին Վենյամինն ու Տիխոնը, նրանցից հետո Յագոդնոյեն դարձավ էլ ավելի խուլ, անդորր ու ձանձրալի։ Վենյամինի փոխարեն ծերունի գեներալին սպասարկում էր Ակսինյան. հաստակոնք, չնիհարող Լուկերյան իր վրա վերցրեց սևագործ խոհարարուհու և թռչնապահի աշխատանքը։ Սաշկա սպային միաժամանակ և՛ ձիապանի պարտականություններ էր կատարում, և՛ պահպանում այգին, իսկ կառապանը նոր մարդ էր,— ծանրաբարո, զառամյալ կազակ Նիկիտիչը։

Այդ տարի պանը պակասեցրեց ցանքը, մոտ քսան ձի տվեց զորամասերին. մնացին միայն վարգուն ձիերը ու Դոնի երեք ձի, որոնք սպասարկում էին տնտեսության կարիքներին։ Պանը իր ժամանակը որս անելով էր անցկացնում, նա և Նիկիտիչը գնում էին արոսներ որսալու, և որսկան շներով կատարվող որսը երբեմն անհանգստություն էր պատճառում օկրուգին։

Ակսինյան Գրիգորիից ուշ-ուշ էր նամակներ ստանում, դրանք շատ կարճ էին լինում։ Գրիգորին գրում էր, որ ողջառողջ է ու կատարում է իր ծառայությունը։ Արդյո՞ք նա զսպում էր իրեն, թե՞ չէր ուզում նամակների մեջ արտահայ-

տել իր թուլությունը, բայց ոչ մի անգամ ոչ մի խոսք չգրեց այն մասին, որ ինքը ճնշվում, ձանձրանում է։ Նամակները սառն էին, կարծես նա դրանք ստիպմամբ էր գրում, միայն վերջին նամակում կար այսպիսի մի ֆրազ. «...ամբողջ ժամանակ, շարքերում եմ և արդեն կարծես թե ձանձրացել եմ կռիվներից, մահվան սպառնալիքի տակ գտնվելուց»։ Յուրաքանչյուր նամակում նա տեղեկություններ էր հարցնում դրստեր մասին, խնդրում էր նրա վերաբերմամբ լուրեր հաղորդել. «...գրիր, թե ոնց է մեծանում իմ Տանյուշան ու ինչպիսի տեսք ունի։ Օրեր առաջ երազումս նրան տեսա մեծացած, հագին էլ կարմիր շոր»։

Ակսինյան արտաքուստ տոկունությամբ դիմանում էր անջատման։ Գրիգորիի նկատմամբ նրա ամբողջ սերը կենտրոնացել էր դստեր վրա, մանավանդ երբ Ակսինյան համոզվեց, որ իրոք Գրիշկայից է բերել երեխան. կյանքը անհերքելի ապացույցներ էր տալիս. աղջկա մուգ-շիկավուն մազերը թափվում էին, նոր և գանգուր մազեր էին բսնում. փոխվում էր նաև աչքերի գույնը. դրանք սևանում էին, խոշորանում։ Աղջիկն օրեցօր ավելի ու ավելի էր նմանվում հորը, մինչև իսկ ժպիտն ինչ-որ մելեխովյան, գազանաբարբ, Գրիշկային հատուկ երանգավորում ուներ։ Հիմա Ակսինյան էլ չէր կասկածում, թե ով է երեխայի հայրը, ու այդ պատճառով էլ հրաբորբոք սիրով էր սիրում երեխային. գրությունն այլևս այնպես չէր, ինչպես առաջ, երբ նա մոտենում էր օրորոցին ու ընկրկում՝ աղջկա քնեած դեմքի վրա տեսնելով որևէ հեռավոր, անշան նմանություն Սաֆիսանի ատելի դիմագծերին։

Օրերն անցնում էին, ու Ակսինյայի հոգու մեջ հետզհետե բարկ դառնություն էր կուտակվում։ Սիրածի կյանքի նկատմամբ անհանգստությունը սուր գայլիկոնի պես խոցում էր նրա ուղեղը, չէր չքանում ցերեկները, գալիս էր և գիշերով, ու այդ ժամանակ այն, ինչ որ կուտակվել էր նրա հոգու մեջ և ինչ որ առժամապես սանձահարված էր նրա կամքով,— քանդում էր ամբարտակները. Ակսինյան գիշերը մինչև լույս թպրտում էր անձայն ճիչից, արցունքներից, կծում էր ձեռքերը, որ չճչա ու չզարթնեցնի երեխային, որ գեթ մեղմացնի ճիչը ու ֆիզիկական ցավով մեռցնի բարոյական ցավը։

Արցունքների ավելցուկը թափում էր մանկան շորերի վրա, երեխայական պարզամտությամբ մտածելով՝ «Գրիշկայի զավակն է, նա պետք է սրտում զգա, թե ինչպես եմ կարոտում իրեն»։

Այդպիսի գիշերներից հետո նա վեր էր կենում ծեծկված վիճակում։ Ամբողջ մարմինը ծակծկվում էր, քունքերում արծաթե մուրճիկների զարկեր էր զգում, բերանի խամրած, մի ժամանակ պատանեկորեն փափլիկ անկյուններում մոայլվում էր հասուն թախիծը։ Բորբոք գիշերները պառավացնում էին Ակսինյային...

Մի կիրակի օր նա պանին նախաճաշ մատուցեց ու տնից դուրս ելավ, այդ ժամանակ մի կին մոտեցավ դարբասին։ Ծպիտակ լաչակի տակից սարսափելի ծանոթ աչքեր էին երևում... Կինը բացեց դարբասը ու մտավ բակ։ Ճանաչելով Նատալյային, Ակսինյան գունատվեց, դանդաղ քայլեց ընդառաջ։ Նրանք հանդիպեցին բակի մեջտեղում։ Նատալյայի քոշերի վրա ճանապարհի փոշու խիտ շերտ էր նստել։ Նա կանգ առավ, անճարակ կերպով կախեց աշխատանքից կոշտացած մեծ ձեռները. ֆստոցով շնչելով, փորձում էր ու չէր կարողանում շտկել այլանդակված վիզը. դրանից էլ թվում էր, թե նա ինչ-որ մի կողմ է նայում։

— Ես քեզ մոտ եմ եկել, Ակսինյա...— ասաց նա՝ շորացած լեզուն քսելով հողմահար շուրթերին։

Ակսինյան շեշտակի նայեց տան պատուհաններին ու լուռ քայլեց դեպի ծառայանոց, իր սենյակը։ Նատալյան հետևեց նրան։ Ակսինյայի շրջազգեստի շրշյունը հիվանդագին խոցում էր նրա լսողությունը։

«Երևի շոգից է, որ ականջներիս մեջ ցավ եմ զգում»,— մտքերի կուտակից դուրս պրծավ այդ մի միտքը։

Նատալյային ներս թողնելով, Ակսինյան ծածկեց դուռը։ Ապա կանգնեց սենյակի մեջտեղում, ձեռները տարավ սպիտակ գոգնոցի տակ։ Նա՛ էր տոն տալիս խաղին։

— Ինչո՞ւ ես եկել,— կեղծավորաբար, համարյա շշընջալով հարցրեց նա։

— Կարելի՞ է մի քիչ ջուր...— խնդրեց Նատալյան ու ծանր, ակնապիշ հայացքով դիտեց սենյակը։

Ակսինյան սպասում էր, Նատալյան ասաց՝ դժվարությամբ բարձրացնելով ձայնը.

— Դու խլեցիր մարդուս... Ետ տուր ինձ Գրիգորիին... Դու... խորտակեցիր կյանքս... Տեսնո՞ւմ ես՝ ինչ օրի եմ...

— Մարդուդ ետ տա՞մ։— Ակսինյան սեղմեց ատամները, ու ժլատորեն տեղացին բառերը ինչպես անձրևի կաթիլները քարի վրա։— Մարդուդ ե՞տ տամ։ Այդ ումի՞ց ես խնդրում։ Ինչո՞ւ ես եկել... Ուշացել ես, սիրելիս... Ուշացե՛լ ես։

Օրորելով ամբողջ մարմինը, Ակսինյան հուպ մոտեցավ, Նենգաբար ծիծաղեց։

Նա ծաղրում էր թշնամուն՝ ակնապիշ նայելով նրա դեմքին։ Ահա նա, օրինական, թողած կինը ստորացած, վշտահար կանգնել է իր առաջ. ահա այն կինը. որի պատճառով Ակսինյան, այն ժամանակ բաժանվելով Գրիգորիից, արտասուք էր թափում, սրտի մեջ կրում արյունոտ ցավը ինչպես կոշտ, ծանր քար, ու այն ժամանակ, երբ նա, Ակսինյան, հալումաշ էր լինում մահացու վշտից, ահա այս կինը փայփայում էր Գրիգորիին և հավանորեն ծիծաղում էր իր վրա, ձախորդ, մոռացված սիրուհու վրա։

— Եվ դու եկել ես խնդրելու, որ ես թողնե՞մ նրան, հը՞,— հևում էր Ակսինյան,— ա՛խ դու, գարշելի օձ... Դու առաջինը ինձնից խլեցիր Գրիշկային։ Դո՛ւ, ոչ թե ես... Դու գիտեիր, որ նա ապրում էր ինձ հետ, ինչո՞ւ առար նրան, հը՞։ Ես ետ բերի իմը, նա իմն է։ Ես նրանից երեխա ունեմ, իսկ դու...

Նա բուռն ատելությամբ նայում էր Նատալյայի աչքերին ու ձեռներն անկարգ թափահարելով, խոսքերի բորբոք տարափ էր թափում։

— Իմն է Գրիշկան, ու ոչ ոքի չեմ տա... Ի՛մն է, ի՛մն է, լսո՞ւմ ես դու, ի՛մն է... Գնա՛, գնա՛, անամոթ, դու նրա կինը չես։ Դու ուզում ես երեխից խլե՞լ հորը։ Օ-հո՛։ Բա առաջ ինչո՞ւ չէիր գալի։ Հը՞, ինչո՞ւ չէիր գալի։

Նատալյան կողքի քայլելով մոտեցավ նստարանին ու նստեց, գլուխը դրեց ձեռներին, դրանցով ծածկեց դեմքը։

— Դու թողիր քո մարդուն... Այդպես մի՛ բռնա...

— Բացի Գրիշկայից, ես ուրիշ մարդ չունեմ։ Ոչ ոք չունեմ արար-աշխարհքում...

Զգալով, թե ինչպես է իր մեջ եռում ելք չգտնող կատաղությունը, Ակսինյան նայում էր Նատալյայի ուղիղ, սև ծամերին, որ լաչակի տակից ընկել էր նրա ձեռքին։

— Դու նրա ինչի՞ն ես պետք, հը՞։ Մի ծուռ վզիդ մտիկ է։ Եվ դու կարծում ես, թե նա կընդունի՞ քեզ։ Առողջ էիր, թողեց, հաշմանդամին կվերցնի, հա՞։ Չե՛ս տեսնի դու Գրիշկային։ Ահա իմ խոսքը։ Գնա՛, հա՛յդա։

Պաշտպանելով իր բույնը, Ակսինյան մոլեգնում էր, խրփում առաջվա բոլոր վիրավորանքների համար։ Նա տեսնում էր, որ Նատալյան, չնայած իր մի փոքր ծուռ վզին, գեղեցիկ է ինչպես առաջ,— այտերն ու բերանը թարմ են, ժամանակը չի խամրել դրանք,— իսկ ինքը, Ակսինյան, թերևս հենց այդ Նատալյայի մեղքով, թառամել է անժամանակ, աչքերի տակ կնճիռների ոստայն է գոյացել։

— Դու կարծում ես, թե հո՞ւյս ունեի, որ կհամաձայնես։— Նատալյան բարձրացրեց պղտոր, վշտահար աչքերը։

— Էլ ինչո՞ւ էիր գալիս,— հևալով հարցրեց Ակսինյան։

— Դա՛րդը բերեց ինձ։

Ակսինյայի աղջիկը մահճակալի վրա ձայներից արթնանալով, բարձրացրեց գլխիկն ու լաց եղավ։ Մայրը գրկեց երեխային, դարձավ դեպի լուսամուտն ու նստեց։ Նատալյան էլի դողդողալով, նայում էր երեխային։ Նրա կոկորդը բռնվեց ջղակծկումից։ Գրիգորիի աչքերը երեխայի դեմքից խոհուն հետաքրքրությամբ նայում էին նրան։

Հեկեկալով ու օրորվելով, նա դուրս գնաց։ Ակսինյան ճանապարհ չդրեց նրան։ Մի րոպեից հետո ներս մտավ Սաշկա պապին։

— Այդ ի՞նչ կնիկ էր,— ըստ երևույթին գլխի ընկնելով, հարցրեց նա։

— Այնպե՛ս, էլի՛, խուտորից էր եկել։

Նատալյան երեք վերստ հեռացավ կալվածքից, պառկեց վայրի սալորենու թփի տակ։ Նա մնաց պառկած, առանց որևէ բանի մասին մտածելու, անհուն վշտից ընկճված... Նրա աչքերի առաջ, երեխայի դեմքի վրա անդադրում ճառագում էին Գրիգորիի մռայլ, սև աչքերը։

XX

Գրիգորին հետո պարզ, կուրացուցիչ ցավի չափ պարզ հիշում էր այն գիշերը։ Նա աչքերը բացեց լուսաբացից քիչ առաջ, շարժեց ձեռները, դիպցնելով ծակող խոզանին, ու սկսեց տնքալ գլխից ստացած հարվածի ցավից։ Ծիգ անելով, մի փոքր բարձրացրեց ձեռքը, տարավ ճակատին՝ շոշափելով մակարդված արյամբ շաղախված կոշտ քյաքուլը։ Մատը տարավ փափուկ վերքին, ասես շիկացած ածուխ հպեց դրան։ Երկար կրճտացրեց ատամները, պառկեց մեջքի վրա։ Գլխավերևում, ծառի վրա թախծոտ շրշում էին ցրտահար տերևները, ասես ապակի էր փշրվում։ Ճյուղերի սև կոնտուրները պարզ ուրվագծվում էին երկնքի մուգ-կապույտ ֆոնի վրա, նրանց միջից առկայծում էին աստղերը։ Գրիգորին անթարթ նայում էր լայն բացված աչքերով. նրան թվում էր, թե դրանք ոչ թե աստղեր են, այլ տերևների կոթերից կախված լիքը, կապտավուն-դեղին, անհայտ պտուղներ։

Գիտակցելով իր հետ պատահածը, զգալով անխուսափելիորեն վրա հասնող սարսափը, նա սողաց չորեքթաթ, կրճտացնելով բացված ատամները։ Ցավը առնչում էր նրան, տափում գետնին... Նրան թվում էր, որ անչափ երկար է սողում. ինքն իր վրա ուժ գործադրելով, նա ետ նայեց. հիսուն քայլ հեռավորությամբ սևին էր տալիս ծառը, որի տակ ինքն ընկած էր եղել ուշաթափ վիճակում։ Մի անգամ նա անցավ դիակի վրայից՝ արմունկները հենելով դրա ներս ընկած, կոշտ փորին։ Արյան կոստից սիրտը խառնում էր, ու նա լալիս էր երեխայի պես, կրծոտում էր ցողաշաղախ խոտը, որ չկորցնի գիտակցությունը։ Շուռ եկած մի ոմբարկղի մոտ ոտքի ելավ, երկար կանգնեց օրորվելով, հետո քայլեց։ Նա ուժ առավ, քայլում էր ավելի հաստատ և արդեն ի վիճակի էր որոշելու արևելքի կողմը. ուղեցույցը Մեծ Արջի համաստեղությունն էր։

Անտառի եզրի մոտ մի խուլ նախազգուշացում կանգնեցրեց նրան.

— Մի՛ մոտենա, կգնդակահարեմ։

Շրխկաց ատրճանակի թմբուկը։ Գրիգորին նայեց ձայնի ուղղությամբ. սոճի ծառի տակ կիսապառկած էր մի մարդ։

— Ո՞վ ես,— հարցրեց Գրիգորին՝ ուկնդրելով իր՝ ասես ուրիշի ձայնին։

— Ո՞ւս ես։ Աստվա՛ծ իմ... Ե՛կ։— Սոճու մոտի մարդը սողաց գետնի վրա։

Գրիգորին մոտեցավ։

— Կռացի՛ր։

— Չեմ կարող։

— Ինչո՞ւ։

— Կընկնեմ ու վեր չեմ կենա, գլուխս վիրավորված է...

— Դու ո՞ր զորամասից ես։

— Դոնի տասներկուերորդ գնդից։

— Օգնի՛ր ինձ, կազակ...

— Վա՛յ կընկնեմ, ձերդ բարեձննդություն։ (Գրիգորին նկատեց շինելի սպայական ուսադիրները)։

— Գոնե ձեռքդ տուր։

Գրիգորին սպային օգնեց ոտքի ելնելու։ Նրանք քայլեցին։ Բայց յուրաքանչյուր քայլափոխում վիրավորված ապան ավելի ծանր էր կախվում Գրիգորիի ձեռքից։ Զորահավաքից բարձրանալիս նա ամուր կառչեց Գրիգորիի բլուզի թևքից, ատամները դանդաղորեն կրճատցնելով՝ ասաց.

— Թո՛ղ ինձ, կազակ... Ես... փորիցս... միջանցիկ... վերք ունեմ։

Նրա ակնոցի տակ աղոտում էին աչքերը, ու բացված, շուրջը վաղուց չսափրված բերանը խոխոջալով ծծում էր օդը։ Սպան կորցրեց գիտակցությունը։ Գրիգորին նրան տարավ շալակած, վայր ընկնելով, վեր կենալով ու դրկին վայր ընկնելով։ Երկու անգամ թողեց իր բեռը ու երկու անգամն էլ ետ դարձավ, բարձրացրեց ու քարշ տալով տարավ ինչպես արքմանի երազում։

Առավոտյան ժամը տասնմեկին կապի խումբը վերցրեց նրանց ու տարավ վիրակապման կայան։

Մեկ օրից հետո Գրիգորին ծածուկ հեռացավ վիրակապման կայանից։ Ճանապարհին գլխից պակեց վիրակապը, թեթևացած քայլեց՝ թափահարելով թավշյա-կարմիր բծերով ծածկված բինտը։

— Ո՞րտեղից եկավ,— անասելի զարմացավ հարյուրյակի հրամանատարը։

— Վերադարձա շարք, ձերդ բարեձննդություն։

Դուրս դալով հարյուրյակի հրամանատարի մոտից, Գրիգորին տեսավ դասակապետ ուրյադնիկին։

— Որտե՞ղ է իմ ձին, թուխիկը։

— Ջիդ սաղ է, աղբերս։ Մենք նրան բռնեցինք հենց այնտեղ, ավստրիացիներին քշելուց հետո։ Բա դու ո՞նց պրծար։ Մենք կարծում էինք, թե հոգոցն հանգուցելոց ես եղել։

— Շտապել եք,— քմծիծաղ տվեց Գրիգորին։

ՔԱՂՎԱԾՔ ՀՐԱՄԱՆԻՑ

Գրագունական 9-րդ գնդի հրամանատար փոխ-գնդապետ Գուստավ Գրոզբերգի կյանքը փրկելու համար Դոնի 12-րդ կազակական գնդի կազակ Մելեխով Գրիգորին ստանում է պրիկազնիի[1] կոչում և ներկայացվում է 4-րդ աստիճանի գեորգևյան խաչով պարգևատրվելու։

Հարյուրյակը երկու օր մնաց Կամենկա-Ստրումիլովո քաղաքում, գիշերը պատրաստվում էր արշավանքի։ Գրիգորին գտավ իր դասակի կազակների բնակարանը, գնաց իր ձին տեսնելու։ Մախաղում պակասում էր մի զույգ սպիտակեղեն, երեսսրբիչը։

— Աչքիս առաջ գողացան, Գրիգորի,— մեղավորաբար խոստովանեց Կաշևոյ Միշկան, որի խնամքի տակ էր գտնվում ձին։— Անթիվ-անհամար հետևազոր եկավ այս տունը, հետևազորը գողացավ։

— Չհաննամը, թող օգտվեն։ Ես ուզում եմ գլխիս կապը փոխել, բինտը թրջվել է։

— Վերցրու իմ սրբիչը։

Զուբատին մտավ այն մարագը, որտեղ տեղի էր ունենում այդ խոսակցությունը։ Նա ձեռքը մեկնեց Գրիգորիին, ասես նրանց միջև ոչինչ էլ չէր պատահել։

— Օ՜, Մելեխով։ Սա՛ղ ես, էլի՛, բարեկամ։

— Կիսով չափ։

— Ճակատդ արյունոտ է, սրբիր։

— Կսրբեմ, էլի՛։

[1] Պրիկազնի — ցարական բանակի կազակական գորքերում կրտսեր հրամանատարական կոչում (ուրյադնիկի ընկեր, եֆրեյտոր)։

— Բեր, տեսնեմ, թե ոնց են քեզ շրմփացրել։

Զուբատին զոռով թեքեց Գրիգորիի գլուխը, իրեն քիթը վեր քաշեց։

— Ինչի՞ էր պետք մազերդ խուզել։ Տես, թե ո՛նց են այլանդակել... Բժիշկները հոգիդ կհանեն, բեր ես սաղացնեմ վերքդ։

Առանց համաձայնություն առնելու նա փամփուշտակալից մի փամփուշտ հանեց, դնդակը պտտելով դուրս բերեց նրա միջից ու սև վառոդը լցրեց սև բռի մեջ։

— Միխայլո, սարդի ոստայն ճարի։

Կաշևոյը թրի ծայրով վերցրեց տան գերանի վրա եղած բամբականման սարդոստայնը, տվեց Զուբատիին։ Վերջինս այդ նույն թրի ծայրով մի կտոր հող քանդեց և դա խառնելով սարդոստայնին ու վառոդին, երկար ծամեց։ Թանձր, չպրծուն զանգվածը նա քսեց Գրիգորիի գլխի արյունոտ վերքին, ժպտաց։

— Երեք օրից հետո բոլորովին կսաղանա։ Տեսնո՞ւմ ես՝ ես քեզ օգնում եմ, իսկ դու... քիչ մնաց՝ ինձ գնդակահարեիր։

— Օգնելուդ համար շնորհակալ եմ, իսկ եթե քեզ սպանեի, մեղքերիս մեկը քաված կլինեի։

— Ի՜նչ դուզ տղա ես, հա՜-ա։

— Այսպես եմ, էլի՛։ Գլխիս վրա ի՞նչ կա։

— Մի քիչ կտրված է։ Դա քեզ համար հիշատակ կմնա...

— Չեմ մոռանա։

— Կուզենայիր մոռանալ, բայց չես կարող. ավստրիացիք թրերը չեն սրում, բութ թրով են զարկել քեզ, հիմի ամբողջ կյանքումդ ուռած սպի կմնա։

— Բախտավոր ես, Գրիգորի, որ թուրը երեսանց է դիպել, թե չէ քեզ կթաղեին օտար հողում,— ժպտաց Կաշևոյը։

— Բա գլխարկս ի՞նչ անեմ։

Գրիգորին շփոթվելով, ձեռքում տնտղում էր կտրված, արյունոտված բոլորքով գլխարկը։

— Դեն գցիր, շները կտանեն։

— Տղերք, ճաշը բերին, վրա՛ տվեք,— բղավեցին տան դռնից։

Կազակները մարագից դուրս ելան։ Գրիգորիի ետևից, ծռելով դուրս ընկած աչքը, խրխնջաց թուխ ձին։

— Նա քեզ կարոտում էր, Գրիգորի,— Կաշևոյը գլխով արավ դեպի ձին,— ես զարմանում էի, կեր չէր ուտում ու այնպե՞ս էր կամացուկ նվնվում։

— Երբ ես դուրս եկա այնտեղից, դրան երկար կանչեցի,— ետ նայելով, խուլ ձայնով ասաց Գրիգորին,— կարծում էի, թե ինձանից չի հեռանա, իսկ դրան բռնելը դժվար է, ուրիշների ձեռքը չի ընկնի։

— Դրուստ է, մենք դրան զոռով ձեռք գցեցինք։ Օղաթոկով բռնեցինք։

— Լավ ձի է, աղբորս՝ Պետրոյի ձին է։— Գրիգորին երեսը շուռ տվեց, թաքցրեց արցունքված աչքերը։

Նրանք մտան մի տուն։ Նախասենյակում, մահճակալից վերցրած ու հատակին փռված զսպանակավոր ներքնակի վրա խոմփացնում էր Եգոր Ժարկովը։ Աննկարագրելի խառնափընթորությունը ցույց էր տալիս, որ տանտերերը հապճեպորեն թողել են տունը ու փախել։ Ջարդված ամանեղենի կտորտանքներ, պատռված թղթեր, գրքեր, որոնց վրա մեղր էր թափված, մահուդե գործվածքի կտորներ, մանկական խաղալիքներ, հին ոտնամաններ, թափթփված ալյուր՝ այդ ամենը սարսափելի անկարգությամբ թափված էր հատակին, խոսում էր ավերածության մասին։

Մի տեղ մաքրելով, հենց այստեղ էլ ճաշում էին Եմելյան Գրոշևը և Պրոխոր Զիկովը։ Երբ Զիկովը տեսավ Գրիգորիին, նրա փաղաքուշ, հորթի աչքերը դուրս ընկան։

— Գրի-ի-շկա՜-ա։ Ո՞րտեղից բուսար։

— Այն աշխարհքից։

— Վազ տուր, շշի բեր սրա համար։ Ի՞նչ ես աչքերդ պլշել,— բղավեց Զուբատին։

— Այս բոպեիս։ Խոհանոցն այստեղ մոտիկ է։

Պրոխորը ծամելով բերանի պատառը, դուրս վազեց։

Գրիգորին հոգնածորեն նստեց նրա տեղը։

— Իսկի միտս է՛լ չի, թե երբ եմ բան կերել,— ժպտաց նա մեղավորի նման։

Քաղաքի միջով գնում էին 3-րդ կորպուսի զորամասերը։ Նեղ փողոցները ծայրեծայր լցվում էին հետևազորով,

անհամար գումակներով, հեծելազորի զորամասերով, փողոցների անկյուններում խռնվածք էր առաջանում, փակ դռան միջից լսվում էր շարժման աղմուկը։ Շուտով վերադարձավ Պրոխորը՝ բերելով մի կաթսայիկ շշի ու մի տոպրակ հնդկացորենի կաշա։

— Կաշան ո՞րտեղ դատարկեմ։

— Հրես, այս ունկավոր կաթսայի մեջ։— Գրոշևը պատուհանի տակից մոտ քաշեց գիշերային միզամանը, չգիտենալով, թե դա ինչի համար է գործածվում։

— Սրանից փիս հոտ է գալի, քո այս կաթսայից։— Պրոխորը կնճռոտեց դեմքը։

— Ոչի՛նչ։ Դատարկիր տոպրակը, հետո կտեսնենք, էլի՛։

Պրոխորը միզամանի վրա շուռ տվեց տոպրակը, թանձր, լավորակ կաշան գունդ-գունդ լցվեց միզամանի մեջ, կողքերից դուրս տվեց սաթի պես դեղին յուղը։ Ուտում էին ու խոսում։ Թուքը քսելով իր գունաթափ լամպասի վրա առաջացած ճարպաբծին, Պրոխորը պատմում էր.

— Այստեղ, մեր բակի կողքին, գտնվում է հեծյալ-լեռնային դիվիզիոնի մի մարտկոց, կերակրում են ձիերին։ Նրանց ֆերվերկերը[1] թերթում կարդացել է, որ գերմանացիների դաշնակիցները ջարդուփուրդ են եղել, հա՜-ա։

— Դու ուշացար, Մելեխով, առավոտը մենք շնորհակալություն ստացանք,— մռմռաց Զուբատին՝ կաշայով լիք լցված բերանը շարժելով։

— Ո՞ւմից։

— Դիվիզիայի պետը՝ գեներալ-լեյտենանտ ֆոն Դիվիդը մեզ ստուգատես արավ և շնորհակալություն հայտնեց, որ քշել էինք հունգարական հուսարներին ու փրկել մեր մարտկոցը։ Ախր նրանք քիչ մնաց զավթեին մարտկոցը։ «Կեցցե՛ք, կազակներ,— ասում է,— ցարը և հայրենիքը ձեզ չեն մոռանա»։

— Ա՜յ թե ի-ի՜նչ։

Փողոցում չոր ճայթեց մի-երկու կրակոց, գնդացրի որոտալից տկտկոց լսվեց։

---

[1] Ֆեյերվերկեր — ցարական բանակում, հրետանիում եղած կոչումներից մեկը, որ համապատասխանում էր հետևազորի ենթասպային։

— Դո՛ւրս եկե՛ք,— բղավեցին դարբասի մոտ։

Գդալները վար դնելով, կազակները դուրս թռան։ Նրանց վերևում ցածր ու սահուն ճախրում էր մի սավառնակ։ Նա հուժկու ու սպառնալից հոնդյուն էր հանում։

— Ընկեք ցանկապատերի տակ, հիմի ռումբ է գցելու, կողքներիս հո մարտկո՛ցն է,— բղավեց Զուբատին։

— Ծգորկային զարթնեցրեք։ Կսպանվի փափուկ դոշակի վրա։

— Տղերք, կրակեցե՛ք։

Զուբատին մանրակրկիտորեն նշան բռնելով, կրակում էր հենց տան մուտքի սանդուղքից։

Փողոցում, չգիտես ինչու կռանալով, զինվորներ էին վազվզում։ Հարևան բակից ձիու փնչոց և կտրուկ հրաման լսվեց։ Մի պահունակ փամփուշտ կրակելով, Գրիգորին նայեց ցանկապատի վրայից. այնտեղ իրար էին անցել հրետանավորները՝ հրանոթները քշելով մարագի ծածկի տակ։ Երկընքի կուրացուցիչ կապտությունից աչքերը կկոցելով, Գրիգորին նայեց հոնդացող, ցածրացող թռչունին. դրանից այդ ակնթարթում շեշտակի պոկվեց ինչ-որ մի բան ու պայծառ շողաց արևի տակ։ Ահարկու դղրդոցը ցնցեց տունը և արտաքին սանդուղքին ընկած կազակներին. հարևան բակում մի ձի հոգեվարքային խեղդվող վրնջոց արձակեց։ Ցանկապատի մյուս կողմից սուր, ծծմբային խանձահոտ տարածվեց։

— Թաքնվե՛լ,— գոռաց Զուբատին՝ վազ տալով սանդուղքից։

Գրիգորին ցատկեց նրա ետևից, ընկավ ցանկապատի տակ։ Շողաց սավառնակի թևի ինչ-որ ալյումինե մասը. սավառնակը շուռ էր գալի՝ սահուն պտտելով պոչը։ Փողոցից կրակում էին անընդհատ, համազարկեր էին տալիս, կրակոցների անկանոն, շեշտակի տարափ էին տեղում։ Գրիգորին փամփուշտների պահունակը հենց նոր էր խցկել փակագակի մեջ, երբ է՛լ ավելի ցնցող մի պայթյուն ցանկապատից դեն շպրտեց նրան մի սաժեն տարածությամբ։ Հողի մի զանգված թափվեց նրա գլխին, լցրեց աչքերը, ճզմեց իր ծանրությամբ...

Զուբատին նրան ոտքի հանեց։ Ձախ աչքի սուր ցավը Գրիգորիին հնարավորություն չէր տալիս նայելու. դժվարությամբ բանալով աջ աչքը, նա տեսավ, որ տան կեսը քանդված էր, կուտակվել էր աղյուսների կարմիր, այլանդակ զանգվածը, դրա վրա վարդագույն փոշի էր բարձրանում։ Ջարդոտված արտաքին սանդուղքի տակից ձիոների վրա սողում էր Ծգոր Ժարկովը։ Նրա ամբողջ դեմքը ճչում էր անընդմեջ, դուրս ընկած աչքերից արյունոտ արցունքներ էին հոսում այտերի վրա։ Նա սողում էր գլուխն ուսերի մեջ առած, ճչում էր ասես առանց բանալու դիակի պես սևացած շրթունքները.

— Ա-ի-ի-ի՛, ա-ի-ի՛-ի, ա-ի-ի՛-ի...

Նրա ետևից մաշկի մի բարալիկ կտորով, շալվարի հրթկիզված թևքով լայնակի քարշ էր տալիս ազդրի մոտ կտրված ոտը, երկրորդ ոտը չկար։ Նա սողում էր թևերը դանդաղ շարժելով, բերանից նվաղկոտ, գրեթե մանկական, աղիողորմ ճիչ էր դուրս թռչում։ Նա ընդհատեց ճիչը ու ընկավ կողքի վրա՝ դեմքը հուպ սեղմելով կոշտ, թաց, ձիու թրիքով ու աղյուսի կտորներով աղտեղված գետնին։ Նրան ոչ ոք չէր մոտենում։

— Վերցրե՛ք դրան, է՛,— բղավեց Գրիգորին՝ ձեռքը ձախ աչքի վրա պահած։

Հետևակ զինվորները լցվեցին բակը. դարբասի մոտ կանգ առավ հեռախոսավարի երկանիվ սայլակը։

— Դեհ, հա՛յդա, ինչո՞ւ կանգ առաք,— նրանց վրա բղավեց այնտեղից ձիով գնացող մի սպա։— Հե՛յ, անասուններ, բռի գյաղանե՛ր...

Որտեղից-որտեղ մոտ եկան սև, երկար սերթուկով մի ծերունի ու երկու կին։ Ամբոխը շրջապատեց Ժարկովին։ Ճեղքելով բազմությունը ու մոտենալով, Գրիգորին տեսավ, որ Ժարկովը դեռ շնչում էր, հեծկլտում ու սաստիկ դողում։ Մահու դեղնությամբ պատած նրա ճակատին դուրս էր տվել հորդ, կաթիլ-կաթիլ քրտինքը։

— Վերցրե՛ք, է՛։ Ի՞նչ է... մարդի՞կ եք դուք, թե սատանաներ։

— Հերի՛ք հաչես, է՛,— գոռաց բարձրահասակ մի հետևակ զինվոր։— Վերցրե՛ք հա՛ վերցրեք, իսկ ո՞ւր տանել։ Տեսնո՞ւմ ես, մեռնում է։

— Երկու ոտն էլ կտրվել են։

— Օ-օ՜յ, այդքան արյո՞ւն...

— Սանիտարները ո՞րտեղ են։

— Այստեղ էլ ի՞նչ սանիտարներ...

— Նրա ուշքը դեռ վրան է։

Զուբատին ետևից բռթեց Գրիգորիի ուսը, վերջինս ետ նայեց։

— Մի՛ նայիր դրան,— շշնջալով ասաց Զուբատին,— անցիր այս կողմը, տե՛ս։

Նա անցավ մյուս կողմը, դես ու դեն հրելով մոտիկ կանգնածներին, բաց չթողնելով Գրիգորիի բլուզի թևքը։ Գրիգորին նայեց և կորանալով, քայլեց դեպի դարբասը։ Ժարկովի փորի տակից դուրս էին թափվել նուրբ-վարդագույն և կապույտ գույնով երանգավորված աղիքները։ Այդ քանդված կծիկի ծայրը ընկել էր ավազի ու թրիքի վրա, շարժվում էր, ծավալով մեծանում։ Մեռնողի ձեռքը ընկել էր կողքի, ասես ինչ-որ բան էր հավաքում...

— Ծածկեցեք երեսը,— առաջարկեց մեկը։

Հանկարծ Ժարկովը հենվեց ձեռներին, ու գլուխը ետ տալով, այնպես, որ ծոծրակը ցնցվում էր ոլորված թիակների միջև, բղավեց խռպոտ, անմարդկային ձայնով.

— Եղբայրներ, մեռցրե՛ք ինձ, եղբայրներ... Եղբայրնե՛ր... էլ ի՞նչ եք մը-ըտիկ տա-ա-լի՛... Ա-ա-ա-խ-ա-ա՜-ա... Եղբայրնե՛ր, մեռցրեք ինձ...

XXI

Վագոնը մեղմ ճոճվում է, անիվների թխկթխկոցը քնեցած օրոր է ասում, լապտերից մինչև պառկելատեղի կեսը լույսի դեղին շողք է ընկել։ Ի՜նչ լավ է մեկնվել ամբողջ հասակով մեկ ու պառկել ոտնամանները հանած, ազատություն տալով ոտներին, որոնք երկու շաբաթ խաշվել են սապոգների մեջ, զգալ, որ քեզ վրա ոչ մի պարտականություն չկա, գիտենալ, որ կյանքիդ վտանգ չի սպառնում, և այնքա՜ն հեռու է մահը։ Առանձնապես հաճելի է ունկնդրել անիվների միալար զրույցին. չէ՞ որ նրանց յուրաքանչյուր պտույտը, շոգեքարշի յուրաքանչյուր թափը ավելի ու ավելի են հեռացնում ռազմաճակատը։ Ու Գրիգորին պառկել էր, ունկնդրում

էր, շարժում բորիկ ոտների մատները, ամբողջ մարմնով զգում հենց այդ օրը հագած, թարմ սպիտակեղենի դուրեկան հպումը։ Նա իրեն այնպես էր զգում, որ կարծես թե իր վրայից դեն էր գցել կեղտոտ մի պատյան ու անբիծ մաքրությամբ մի այլ կյանք էր մտնում։

Մեղմ, անդորր բերկրանքը խախտվում էր ձախ աչքի սուր ցավից։ Ցավը երբեմնակի մեղմանում էր ու հանկարծակի սաստկանում, կրակով վառում աչքը, ակամա արցունքներ քամում վիրակապի տակից։ Հոսպիտալում, Կամենկա-Ստրումիլովոյում մի երիտասարդ հրեա բժիշկ զննեց Գրիգորիի աչքը, ինչ-որ բան գրեց մի կտոր թղթի վրա։

— Ձեզ պետք է ուղարկել թիկունք։ Աչքիդ հետ լուրջ անախորժություն է պատահել։

— Միաչքանի՞ պիտի լինեմ։

— Է՛, ի՞նչ եք ասում,— սիրալիր ժպտաց բժիշկը՝ տեսնելով ակնհայտ երկյուղ այդ հարցի մեջ,— անհրաժեշտ է բուժել, գուցեև օպերացիայի կարիք լինի։ Մենք ձեզ կուղարկենք խոր թիկունք, օրինակ Պետերբուրգ կամ Մոսկվա։

— Շնորհակալություն։

— Դուք մի՛ վախենաք, աչքդ ողջ կմնա։— Բժիշկը թրփթրփացրեց Գրիգորիի ուսին ու թղթի կտորը տալով նրան, թեթևակի հրեց դեպի միջանցքը։ Քշտեց թևերը՝ պատրաստվելով օպերացիայի։

Երկար ժամանակ դես-դեն ընկնելուց հետո Գրիգորին նստեց մի սանիտարական գնացք։ Մի ամբողջ օր պառկեց, հանգստություն վայելեց։ Հին, փոքրիկ շոգեքարշը լարելով վերջին ուժերը, քաշում էր բազմավագոն գնացքը։ Մոտենում էր Մոսկվան։

Գիշեր էր, երբ տեղ հասան։ Ծանր վիրավորվածներին պատգարակներով էին տանում. ովքեր կարող էին քայլել առանց կողմնակի օգնության, գրանցվելուց հետո դուրս եկան կառամատույց։ Գնացքը ուղեկցող բժիշկը ցուցակով կանչեց Գրիգորիին ու նրան ցույց տալով գթության քրոջը, ասաց.

— Բժիշկ Սենգիրևի ակնաբուժարանը։ Կալպաչնի փողոց։

— Ձեր իրերը ձեզ հե՞տ են,— հարցրեց քույրը։

— Կազակին ո՛րտեղից իրեր։ Հրե՛ս, մախաղս ու շինելս։

— Գնանք։

Քույրը առաջ անցավ՝ գլխաշորի տակ շտկելով սանրվածքը, խշշացնելով շրջազգեստը։ Գրիգորին անվստահ քայլերով հետևեց նրան։ Նրանք կառք նստեցին։ Քուն մտնող մեծ քաղաքի աղմուկը, տրամվայի վագոնների զանգերը, էլեկտրականության բաց-կապույտ, շողշողուն փայլը ճնշող ազդեցություն թողին Գրիգորիի վրա։ Նա նստել էր կառքի մնչքին թիկնած, ագահությամբ դիտելով փողոցները, որոնք բազմամարդ էին, թեպետև գիշեր էր, ու նրա համար այնքա՛ն տարօրինակ էր իր կողքին զգալ կնոջ մարմնի հուզող ջերմությունը։ Մոսկվայում բավական զգալի էր աշունը, բուլվարների ծառերի վրա, լապտերների լույսի տակ նշմարվում էին դալուկ, դեղնած տերևները, գիշերը զով էր, մի քիչ ցուրտ, պսպղուն էին թաց մայթերի սալերը, ու ջինջ երկնակամարում պայծառ աստղերը աշնանային ցուրտ փայլ էին արձակում։ Կենտրոնից դուրս եկան անմարդ մի փողոց։ Քարերի վրա թկթկում էին ձիու սմբակները, բարձր նստատեղի վրա օրորվում էր կառապանը, որ տերտերի փարաջային նմանվող կապույտ վերնազգեստ էր հագել, նա երասանների ծայրերը թափահարում էր ականջները կախած յաբուի վրա։ Հեռո՛ւ ծայրամասերում շաչում էին շոգեքարշերը։ «Կարելի է հիմի մի որևէ գնացք Դոնի կողմե՞րը գնա»,— մտածեց Գրիգորին ու տխրության այրող ծակոցներից կախեց գլուխը։

— Դուք հո չե՞ք քնում,— հարցրեց քույրը։

— Ոչ։

— Շուտով կհասնենք։

— Ի՞նչ եք կամենում,— կառապանը շուռ եկավ։

— Արա՛գ քշիր։

Երկաթե ցանկապատերի մեջ յուղի փայլ արձակեց ինչ-որ լճակի ջուրը, երևաց բազրիքով մի լաստակ՝ իրեն կապված մակույկով։ Խոնավություն զգացվեց։

«Ջուրն է՛լ են գերի դարձրել, երկաթով ցանկապատել, իսկ Դո՛նը...»— տարտամորեն մտածում էր Գրիգորին։ Կառքի ռետինե անվադողերի տակ խշխշացին տերևները։

Կառքը կանգ առավ երեքհարկանի մի տան մոտ։ Շտկելով շինելը, Գրիգորին ցած թռավ։

— Տվեք ձեր ձեռքը,— կռանալով ասաց քույրը։

Գրիգորին բռնեց նրա փափուկ, փոքրիկ ձեռքը, օգնեց իջնելու։

— Զինվորի քրտինքի հոտ է գալիս ձեզնից,— կամացուկ ծիծաղեց պճնված քույրը ու մոտենալով շենքի դռան, զանգահարեց։

— Թե որ դուք էլ այնտեղ լինեիք, քույրիկ, կարելի է ձեզանից էլի մի ուրիշ հոտ է՛լ փչեր,— մեղմ սրտնեղությամբ ասաց Գրիգորին։

Դռնապահը բացեց դուռը։ Շքեղ սանդուղքով, որի բազրիքը ոսկեզօծված էր թվում, բարձրացան երկրորդ հարկ. քույրը մի անգամ էլ զանգահարեց։ Նրանց ներս թողեց սպիտակ խալաթ հագած մի կին։ Գրիգորին նստեց մի փոքրիկ, կլոր սեղանի մոտ, քույրը կամացուկ ձայնով ինչ-որ բան էր ասում սպիտակ խալաթով կնոջը, վերջինս գրում էր։

Երկար, նեղ միջանցքի երկու կողմում գտնվող սենյակների դռներից գլուխները դուրս էին հանում գույնզգույն ակոցներ դրած մարդիկ։

— Հանեցեք շինելդ,— առաջարկեց խալաթը հագած կինը։

Հիվանդանոցի մի սպասավոր, որ նույնպես սպիտակ խալաթով էր, Գրիգորիի ձեռքից ընդունեց շինելը, նրան տարավ վաննայի սենյակը։

— Հանեցեք, ինչ որ կա ձեզ վրա։

— Ինչո՞ւ։

— Հարկավոր է լողանալ։

Մինչդեռ Գրիգորին հանվում էր ու զարմացած դիտում շենքը և պատուհանների փայլատ ապակիները, սպասավորը վաննան լցրեց ջրով, չափեց ջրի ջերմաստիճանը, առաջարկեց նստել վաննայի մեջ։

— Տաշտը իմ չափով չի...— Գրիգորին շփոթվեց, մեկնեց թուխ, մազոտ ոտը։

Սպասարկողը նրան օգնեց խնամքով լողանալու, տվեց սավան, սպիտակեղեն, գիշերային կոշիկներ և գորշ, գոտիով խալաթ։

— Բա իմ շորե՞րը։— զարմացավ Գրիգորին։

— Դրանով եք մնալու։ Ձեր շորերը ձեզ կվերադարձնեն այն ժամանակ, երբ հիվանդանոցից դուրս կգրվեք։

Նախասենյակում, անցնելով պատի մեծ հայելու կողքից, Գրիգորին չճանաչեց ինքն իրեն. լինելով բարձրահասակ, թխադեմ, սուր այտոսկրներով, կաս-կարմիր թշերով, խալաթով, վիրակապով, որ թաղվել էր սև մազերի խուրձերի մեջ, նա լոկ հեռավոր նմանություն ուներ առաջվա այն Գրիգորիի հետ։ Նրա բեղերն աճել էին, խուճուճացել էր խիտ մորուքը։

«Ջահելացել եմ այս ժամանակվա ընթացքում»,— ծուռ ժպտաց Գրիգորին։

— Վեցերորդ սենյակ, աջ կողմից երրորդ դուռը,— ցույց տվեց սպասավորը։

Երբ Գրիգորին մտավ մեծ, սպիտակ սենյակը, խալաթով ու կապույտ ակնոցով մի քահանա մի քիչ բարձրացավ տեղից։

— Նոր հարևա՞ն։ Շատ հաճելի է, այնքան էլ ձանձրալի չի լինի։ Ես Զարայսկից եմ,— սրտաբացությամբ հայտարարեց նա՝ աթոռը մոտեցնելով Գրիգորիին։

Մի քանի րոպեից հետո ներս մտավ չաղ, մեծ ու տգեղ գեմքով բուժակուհին։

— Մելեխով, դնանք, տեսնենք ձեր աչքը,— ցածր, կրծքային ձայնով ասաց նա ու մի կողմ քաշվեց՝ ճանապարհ տալով Գրիգորիին դեպի միջանցք։

XXII

Բանակի հրամանատարությունը որոշել էր հարավ-արևմտյան ռազմաճակատում, Շեելի շրջանում հեծելազորային վիթխարի գրոհով ճեղքել հակառակորդի ճակատը ու դեպի նրա թիկունքը նետել հեծալազորային մի մեծ ջոկատ, որը պետք է արշավեր ռազմաճակատի երկայնքով, ճանապարհին քարուքանդ աներ կոմունիկացիոն գծերը, հանկարծակի հարձակումներով կազմալուծեր հակառակորդի զորամասերը։ Հրամանատարությունը մեծ հույսեր էր դնում այդ պլանի հաջող իրագործման վրա. չտեսնված քանակությամբ հեծելազորային մյուս գնդերի թվում այդ ճակատամասն ուղարկվեց նաև կազակական այն գունդը, որտեղ ծառայում էր հարյուրապետ Լիստնիցկին։ Գրոհը պետք է տեղի ունենար

օգոստոսի 28-ին, բայց անձրևի պատճառով այն հետաձգեցին մինչև 29-ը։

Առավոտից հսկայական զինադաշտում շարվեց դիվիզիան՝ պատրաստվելով գրոհի։

Ութ վերստ հեռավորությամբ, աջ թևում հետևազորը դեմոնստրատիվ հարձակում էր գործում, իր վրա գրավելով հակառակորդի կրակը. մի հեծելազորային դիվիզիայի զորամասերը շարժվում էին կեղծ ուղղությամբ։

Առջևում, որքան որ աչքդ կտրեր, չէր երևում թշնամին։ Լիստնիցկին իր հարյուրյակից մի վերստ հեռավորությամբ տեսնում էր լքած խրամատների սև գիծը, դրանցից դենը ձգվում էին արտերը ու կապույտին էր տալիս մինչև ուսաբացի հողմավար մշուշը։

Այնպես պատահեց, որ թշնամու հրամանատարությունը կամ իմացավ պատրաստվող գրոհի մասին, կամ կանխատեսեց այն, բայց լույս 29-ի գիշերը թշնամու զորքերը թողին խրամատները և վեց վերստ ետ քաշվեցին, թողնելով դարանակալած, գնդացիրներով զինված զորամասեր, որոնք և ամբողջ ճակատամասում անհանգստացնում էին իրենց դեմ կանգնած մեր հետևազորին։

Հեռո՛ւ երկնակամարում, կուտակված ամպերի ետևում լույս էր սփռել ծագող արևը, իսկ ամբողջ հովիտը սքողված էր դեղին-գորշավուն մառախուղով։ Տրվեց գրոհի հրամանը, գնդերը սլացան։ Ձիերի բազմահազար սմբակները խուզդզդյուն էին փռում, որ հիշեցնում էր ստորերկրյա դղրդյունը։ Լիստնիցկին զսպելով իր ցեղային նժույգին, չէր թողնում, որ նա քառատրոփով սլանա։ Արդեն մեկուկես վերստ տարածություն էին անցել։ Արտերի շերտը մոտենում էր գրոհողների հավասար շարքին։ Բարձր, գոտուց վերև հասնող, կպչուն մոլախոտերով լեցուն արտերը չափազանց դժվարացնում էին ձիերի վազքը։ Առջևում էլի՛ու էլի ծածանվում էր արտերի շիկավուն բաշը, ետևում արտերը պառկել, ճմռթվել էին սմբակներով։ Չորրորդ վերստն անցնելիս ձիերը սկսեցին սայթաքել, զգալիորեն քրտնել. հակառակորդը դեռ չկար։ Լիստնիցկին նայեց հարյուրյակի հրամանատարին. յասավուլի դեմքը խուլ հուսալքում էր արտահայտում...

Վեց վեստ տարածությամբ անհրաժեշտ դժվար վագքը խլեց ձիերի ուժերը, մի քանի ձիեր արդեն գետնին էին ընկնում, ամենադիմացկուններն էլ դողդողում էին, լարում վերջին ուժերը։ Հենց այստեղ էլ խփեցին ավստրիական գրնդացիրները, համաչափ ճայթեցին հաղարկերը... սպանիլ կրակը հնձեց առջևի շարքերը։ Առաջինը ընկրկեցին ու ետ դարձան ուլանները, ջախջախվեց կազակական մի գունդ, նրանց, որ խուճապային փախուստի դիմեցին, խփում էին գնդացրային կարկուտով, կարծես դա պուլվերիզատորներով էին շաղ տալիս ու հրակոծում էին հրանոթներից։ Իր ծավալով չտեսնված գրոհը, բարձրագույն հրամանատարության հանցավոր անփութության շնորհիվ, վերջացավ լիակատար ջախջախումով։ Մի քանի գնդեր կորցրին մարդկանց ու ձիերի կեսը. Լիստնիցկու գնդից սպանվեցին ու վիրավորվեցին մոտ չորս հարյուր շարքային զինվոր ու տասնվեց սպա։

Լիստնիցկու ձին սպանվեց, ինքը ստացավ երկու վերք,— գլխից ու ոտից։ Վախմիստր Չերոտարյովը ձիուց ցած թռչելով, վերցրեց Լիստնիցկուն, դրեց թամքին, սլացավ։

Դիվիզիայի շտաբի պետը՝ գլխավոր շտաբի գնդապետ Գոլովաչևը գրոհի մի քանի բոպեական նկարահանում կատարեց ու հետո դրանք ցույց տվեց սպաներին։ Վիրավորված հարյուրապետ Չերվյակովը առաջինը բռունցքով խփեց նրա երեսին ու սկսեց հեկեկալ։ Վրա հասած կազակները հոշոտեցին Գոլովաչևին, երկար անարգեցին նրա դիակը ու գցեցին ճանապարհին կից խանդակը, անմաքրությունների մեջ։ Այսպես վերջացավ անփառունակությամբ փայլող այդ գրոհը։

Լիստնիցկին Վարշավայի մի հոսպիտալից հաղորդեց հորը, որ բուժվելուց հետո կգա նրա մոտ, Յագոդնոյե, արձակուրդն օգտագործելու։ Ստանալով նամակը, ծերունին փակվեց իր կաբինետում, հետևյալ օրը ծանր ու մեծ դուրս եկավ այնտեղից։ Նա Նիկիտիչին հրամայեց յորդա մի ձի լծել դրոժկային, նախաճաշեց ու սլացավ դեպի Վեշենսկայա։ Որդուն հեռագրով փոխադրեց չորս հարյուր ռուբլի փող, ուղարկեց հետևյալ կարճ նամակը։

«Ինձ մնում է ուրախանալ, որ դու, սիրելի զավակս, մարտական մկրտություն ստացար։ Աղնիվ գործ է լինել այնտեղ և ոչ թե պալատում։ Դու այնքան ազնիվ ու խելոք էիր, որ չէիր կարող հանգիստ խղճով սողալ ոմանց առաջ։ Մեր տոհմից ոչ ոք չի ունեցել այդ գիծը։ Դրա համար դեռ քո պապը շնորհազուրկ արվեց ու ապրեց Յագոդնոյում, հույս չդնելով ու չսպասելով, որ թագակիրը ողորմածություն ցույց կտա։ Առողջություն քեզ, ժենյա, ապաքինվիր։ Դու իմ միակ զավակն ես այս աշխարհում, հիշիր այդ։ Հորաքույրդ բարեվում է քեզ, նա ողջ-առողջ է, իսկ իմ մասին ես գրելու բան չունեմ, դու գիտես, թե ինչպես եմ ապրում։ Այդ ի՞նչ է կատարվում այնտեղ, ֆրոնտում։ Մի՞թե չկան բանականության տեր մարդիկ։ Չեմ հավատում լրագրական ինֆորմացիային. ամբողջովին կեղծ է դա, գիտեմ անցյալ տարիների օրինակից։ Մի՞թե, Եվգենի, տանուլ պիտի տանք պատերազմը։

Մեծ անհամբերությամբ սպասում եմ քեզ»։

Հիրավի, ծերուկ Լիստնիցկին ոչինչ չուներ գրելու իր կյանքի մասին, որ քարշ էր տալիս միապաղաղ, առանց որևէ փոփոխության, միայն բանվորական ձեռքերն էին թանկացել և ոգելից խմիչքների պակասություն էր զգացվում։ Պանը ավելի հաճախ էր խմում, դարձել էր ավելի ջղային, ավելի բծախնդիր։ Մի անգամ, անպատեհ ժամին կանչեց Ակսինյային, ասաց.

— Դու կարգին չես կատարում ծառայությունդ։ Ինչո՞ւ երեկ նախաճաշը սառն էր։ Ինչո՞ւ սուրճի բաժակը մաքուր լվացված չէր։ Եթե դա կրկնվի, ապա ես քեզ,— լսո՞ւմ ես,— ապա ես քեզ կարձակեմ։ Փնթիներին տանե՛լ չեմ կարող,— պանը կտրուկ թափահարեց ձեռքը,— լսո՞ւմ ես, տանե՛լ չեմ կարող։

Ակսինյան պինդ սեղմում էր շրթունքները ու հանկարծ լաց եղավ։

— Նիկոլա՛յ Ալեքսեևիչ, աղջիկս հիվանդ է։ Դուք առայժմ աղատեցեք ինձ... Նրանից հեռանալ չի կարելի։

— Ինչո՞վ է հիվանդ։

— Բկացավը խեղդում է նրան...

— Քութե՞շ է։ Ինչո՞ւ չես ասել, հիմար։ Է-է, սատանան

տանի քեզ պես դմբոյին։ Վազ տուր ասա Նիկիտիչին, որ ձի լծի, գնա ստանիցայից բուժակ կանչելու։ Շո՛ւտ։

Ակսինյան դուրս վազեց, նրա ետևից ծերուկը որոտալի, բաս ձայնով գոռում էր.

— Հիմա՛ր կնիկ, հիմա՛ր կնիկ, հիմա՛ր։

Նիկիտիչը առավոտյան բերեց բուժակին։ Սա նայեց ուշքը կորցրած, տաքությամբ բռնված փոքրիկ աղջկան, ու չպատասխանելով Ակսինյայի հարցերին, գնաց պանի մոտ։ Վերջինս նրան ընդունեց նախասենյակում կանգնած, առանց ձեռք տալու։

— Ի՞նչ է պատահել աղջկան,— հարցրեց նա՝ բարևին պատասխանելով գլխի անփույթ շարժումով։

— Քութեշ է, ձերդ գերազանցություն։

— Կառողջանա՞, կարելի՞ է հուսալ։

— Հազիվ թե։ Կմեռնի աղջիկը... Նկատի ունեցեք հասակը։

— Հիմա՛ր։— Պանը ցասկոտեց։— Բա քեզ ի՞նչ են սովորեցրել։ Բուժի՛ր։

Վախեցած բուժակի քթի առաջ շրխկացնելով դուռը, նա սկսեց քայլել դահլիճում։

Դուռը ծեծելով, ներս մտավ Ակսինյան։

— Բուժակը խնդրում է ձի տալ մինչև ստանիցա գնալու համար։

Ծերուկը աշխույժ շուռ եկավ կրունկների վրա։

— Ասա նրան, որ ապուշի մեկն է։ Ասա նրան, որ այստեղից չի գնա, մինչև չբուժի աղջկաղ։ Կողքի շենքում նրան սենյակ տրամադրիր, կերակրիր նրան,— բղավեց ծերուկը՝ թափահարելով ոսկրոտ բռունցքը։— Ուտելիք ու խմելիք տուր նրան, ինչպես մսացու կենդանուն, իսկ գնա՛լ... չի՛ գնա։— Ինքն իր խոսքը կտրելով, մոտեցավ պատուհանին, մատներով թփթփացրեց այն ու մոտենալով ծծմոր ձեռների վրա նկարված որդու մեծացրած լուսանկարին, երկու քայլ ետ գնաց ու երկար նայում էր աչքերը կկոցած, ասես՝ չէր ճանաչում։

Հենց առաջին օրը, երբ հիվանդությունը բռնեց աղջկան, Ակսինյան հիշեց Նատալյայի գառն խոսքը՝ «Իմ արցունքները գլխիդ փորձանք կբերեն...», և նա հավատաց, թե աստված

իրեն պատժում է այն ժամանակ Նատալյային ծանակելու համար։

Երեխայի կյանքի համար սարսափահար լինելով, նա կորցնում էր բանականությունը, անմիտ կերպով դես ու դեն էր ընկնում, չէր կարողանում աշխատել։

«Մի՞թե պիտի մեռնի»,— անդադար թպրտում էր բորբոք միտքը, ու չհավատալով դրան, ամբողջ ուժովը մեկ չցանկանալով հավատալ, Ակսինյան մոլեգնաբար աղոթում էր, աստծուց խնդրում վերջին գթությունը՝ պահպանել երեխայի կյանքը։

«Տե՛ր, ներիր... Մի՛ տանի։ Խղճա, տեր, ողորմած եղիր»։

Հիվանդությունը խեղդում էր փոքրիկի կյանքը։ Աղջիկը պառկել էր մեջքի վրա, ուռած կոկորդից դժվարին, ընդմիջվող խզզոց էր դուրս գալիս։ Ստանիցայի բուժակը, տեղավորվելով կողքի շենքում, գալիս էր օրական չորս անգամ, երեկոները երկար կանգնում էր սպասավորների շենքի արտաքին սանդուղքին, ծխում էր, դիտում աշնանային ցուրտ աստղերը։

Ակսինյան գիշերները մինչև լույս ծունկ էր չոքում մահճակալի մոտ։ Թույլ խզզոցը կտրատում էր նրա սիրտը։

— Մա-ա-մա...— մրմնջում էին փոքրիկ, իրար եկած շրթնիկները։

— Ջանի՛ս կտոր, աղջի՛կս,— խուլ հեծկլտում էր մայրը,— ծաղիկս, մի՛ գնա, Տանյուշկա։ Մտիկ արա, սիրունիկս, բա՛ց աչիկներդ։ Ուշքի՛ եկ։ Ախ, սևաչիկ բալիկս, ինչի այսպես եղավ, տե՛ր աստված...

Աղջիկը երբեմն բարձրացնում էր կոպերը, բորբոքված, արյունակալած աչքերը նայում էին տարտամ, հազիվ նշմարելի հայացքով։ Թվում էր, որ ինքն իր մեջ է անհետանում թախծող, մարած այդ հայացքը։

Նա մեռավ մոր ձեռների վրա։ Վերջին անգամ, հեծկլտալով, բացեց կապտած, փոքրիկ բերանը, ու մարմինը ձգվեց ջղաձգությունից ետ ընկնելով, Ակսինյայի ձեռքից գլորվեց քրտնած գլխարկը, կկոցված, բիբը մարած մելեխովյան մռայլ աչքը նայում էր անթարթ։

Լճակի մոտ, հին, լայնատերև կաղամախի ծառի տակ Սաշկա պապին մի փոքրիկ գերեզման փորեց, փոքրիկ դա-

գաղը թևի տակ առած, տարավ այնտեղ, իր համար արտասովոր շտապողականությամբ թաղեց, ու երկար, համբերությամբ սպասեց, մինչև որ Ակսինյան վեր կենար կավախառն թմբից։ Ակսինյան վեր չկացավ, Սաշկա պապին թունդ խընչեց,— ասես դա մտրակի շրմփոց լիներ,— ու գնաց ախոռ։ Խոտանոցից հանեց մի սրվակ օդեկոլոն, մի սրվակ էլ բենզինափոխված սպիրտ, շշի մեջ դրանք իրար խառնեց, ու թափահարելով, խառնուրդի գույնից հրճվելով, ասաց.

— Փոքրիկի հիշատակին։ Երկնային արքայություն նրան։ Հրեշտակների գիրկը գնաց։

Նա խմեց, շշմելով թափահարեց գլուխը, կնրավ ճմլված մի պոմիդոր և հուզված նայելով շշին, ասավ.

— Մի՛ մոռանա ինձ, սիրելիս, ես էլ քե՛զ չեմ մոռանա։— Ու լացեց։

Երեք շաբաթից հետո Եվգենի Լիստնիցկին հեռագիր ուղարկեց, հաղորդելով, որ արձակուրդ է ստացել ու մեկնում է տուն։ Նրա համար երեք ձի լծած կառք ուղարկեցին կայարան, բոլոր սպասավորները ոտքի ելան. հնդուհավեր, սագեր էին մորթում, Սաշկա պապին շնորհավորում էր աղային, այնպիսի պատրաստություն էին տեսնում, որ կարծես՝ մեծ թվով հյուրեր էին գալու։

Նախորդ օրը իշևանակառք էր ուղարկվել Կամենկա ավանը։ Երիտասարդ պարոնը ժամանեց գիշերը։ Մանր անձրև էր գալիս, լապտերները ջրափոսերի վրա աղոտ լուսաշերտեր էին նետում։ Բոժոժները զրնգացնելով, ձիերը կանգ առան տան մուտքի սանդուղքի առաջ։ Հուզված, ժպտացող Եվգենին դուրս եկավ ծածկված կառքից։ Տաք պլաշշը գցելով Սաշկա պապի թևերին, նա կաղ-կաղ բարձրացավ սանդուղքով։ Դիպչելով աթոռներին ու դրանք վայր գցելով, ոտները քստքստացնելով, պանը հապճեպ դուրս եկավ դահլիճից։

Ակսինյան ընթրիքը տարավ սեղանատուն ու գնաց պարոններին կանչելու։ Բանալու ծակից նայելով, տեսավ հետևյալը. ծերուկը որդուն գրկած, համբուրում է նրա ուսը. նրա թորշոմած, ծալ-ծալ վիզը, մի փոքր դողում է։ Մի քանի բոպե սպասելով, Ակսինյան դարձյալ նայեց։ Եվգենին կոճակները արձակված, պաշտոնական գույնի համազգեստով ծնկաչոք էր եղել հատակին փռված մի մեծ քարտեզի առաջ։

Ծերուկ պանը ծխամորճից քուլա-քուլա ծխի օղակներ բաց թողնելով, ոսկրոտ մատներով թփթփացնում էր բազկաթոռի կողին, զայրացած դմբդմբում.

— Ալեքսե՞ևը։ Չի՛ կարող պատահել։ Ես չեմ հավատա։

Եվգենին կամացուկ, երկար ինչ-որ բան էր ասում, համոզում, մատը տանում քարտեզի վրայով, պատասխանելով նրան, ծերունին զուսպ տոնով, բամբ ձայնով ասում էր.

— Գերագույն հրամանատարը տվյալ դեպքում իրավացի չէ։ Նե՛ղ սահմանափակվածությո՛ւն։ Ախր լսի՛ր, է՛, Եվգենի, ահա քեզ այդպիսի մի օրինակ ռուս-ճապոնական պատերազմից... Թո՛ւյլ տուր, է՛... Ներողություն... ներողությո՛ւն։

Ակսինյան ծեծեց դուռը։

— Հը՛, արդեն ընթրիքը մատուցվա՞ծ է։ Հիմա՛։

Ծերունին դուրս եկավ աշխուժացած, ուրա՛խ, բոլորովին երիտասարդորեն էին փայլում նրա աչքերը։ Ինքն ու որդին երկուսով խմեցին մի շիշ գինի, որ միայն երեկ էր հանվել հողի տակից։ Կանաչած, խավակալած պիտակի վրա դեռ պահպանվել էր խունացած թիվը՝ 1879 թվականը։

Սպասարկելով ու նայելով ուրախ դեմքերին, Ակսինյան սաստիկ զգում էր իր մենակությունը։ Նրան հոշոտում էր արցունքներով չցողված վիշտը։ Աղջկա մահից հետո առաջին օրերին նա ուզում էր լաց լինել, բայց չէր կարողանում։ Ճիչը խեղդում էր կոկորդը. բայց արցունքներ չկային, և այս պատճառով էլ քարե դառնությունը կրկնակի էր ճնշում։ Նա շատ էր քնում (հանգիստ էր փնտրում քնեած մոռացման մեջ), բայց քնի մեջ էլ մանկան երևակայական կանչը հասնում էր նրան։ Նրան մերթ թվում էր, թե իր աղջիկը քնած է իրեն կողքին, ու նա դեն էր քաշվում, տեղ էր բաց անում, ձեռքով շոշափում անկողինը,— մերթ լսվում էր անորոշ շշուկ՝ «Մայրիկ, ջու-ո՛ւրց»։

— Ազի՛զ բալիկ ջան...— սառչող շուրթերով շշնջում էր Ակսինյան։

Նույնիսկ արթուն, մաշող վիճակում երբեմն նրան թվում էր, թե ահա երեխան սեղմվում է իր ծնկներին, և նա գիտակցում էր, որ իզուր է ձեռքը մեկնում մանկան խուճուճիկ գլխիկը շոյելու։

Իր ժամանելու երրորդ օրը Եվգենին մինչև ուշ երեկո նստեց Սաշկա պապի մոտ, լսելով նրա անպաճույճ պատմությունները Դոնի շրջանի նախկին ազատ կյանքի մասին, հին ժամանակների մասին։ Նա այնտեղից դուրս եկավ ժամի իններին. դրսում սուրում էր քամին, ոտների տակ ճլմփում էր ջրիկ ցեխը։ Ամպերի միջև հածում էր դեղնափայլ նորալուսինը։ Նրա լույսի տակ Եվգենին նայեց ժամացույցին, քայլեց դեպի ծառայանոցը։ Մուտքի սանդուղքի մոտ վառեց ծխախոտը, մի բոպե մտախոհ կանգ առավ, ու թափահարելով ուսերը, վճռականորեն ոտ դրեց սանդուղքին։ Զգուշությամբ սեղմեց մղլակը, դուռը ճռնչալով բացվեց։ Նա մտավ Ակսինյայի մոտ, վառեց լուցկին։

— Ո՞վ է,— հարցրեց Ակսինյան՝ վերմակը քաշելով վերան։

— Ես եմ։

— Հիմի ես կհագնվեմ։

— Ոչինչ։ Ես մի բոպեով եկա։

Եվգենին շինելը հանելով, նստեց մահճակալի ծայրին։

— Աղջիկդ մեռավ, էլի՛...

— Մեռա՛վ,— արձագանքեց Ակսինյան։

— Դու շատ ես փոխվել։ Դեհ, իհարկե, ես հասկանում եմ, թե ինչ է նշանակում կորցնել երեխային։ Բայց ես կարծում եմ, որ դու իզուր ես քեզ տանջում, նրա կյանքը չես վերադարձնի, իսկ դու դեռ բավականաչափ ջահել ես, կարող ես երեխաներ ունենալ։ Չպետք է այդպես անել։ Դու քեզ հավաքիր, հաշտվիր... Վերջ ի վերջո հո ամեն ինչ չի կորել երեխայի մահից հետո, հապա մտածիր, դեռ ինչքա՛ն կյանք կա քո առաջ։

Եվգենին սեղմում էր Ակսինյայի ձեռքը, բուռն փաղաքշանքով շոյում այն, խոսում էր, խաղ անում ձայնի ցածր հնչյուններով։ Նա անցավ շշնջալով խոսելուն, ու զգալով, թե ինչպես Ակսինյան ամբողջովին ցնցվում էր խեղդվող լացից և լացը հեկեկանքի է փոխվում, սկսեց համբուրել նրա արցունքոտ այտերը, աչքերը...

Կնոջ սիրտը կարեկցություն, փայփայանք է տենչում։ Հուսալքումից ընկճված Ակսինյան, մոռանալով ամեն ինչ, բուռն, վաղուց մոռացված ամբողջ կրքոտությամբ հանձնվեց

Եվգենիին։ Իսկ երբ անցավ անամոթ վայելքի ավերիչ, կուրացնող ալիքը, նա ուշքի եկավ, սաստիկ ճչաց, ու կորցնելով բանականությունը և ամոթը, կիսամերկ, միմիայն շապկով դուրս վազեց։ Դուռը բաց թողնելով, նրա ետևից հապճեպ դուրս ելավ Եվգենին։ Նա քայլելիս հագավ շինելը, արագ-արագ գնաց, ու երբ հասնելով բարձրացավ տան պատշգամբը, խնդագին, ինքնագոհ ծիծաղեց։ Նա համակվել էր բուռն ցնծությամբ։ Արդեն անկողնում պառկած, շփելով ուռուցիկ, փափուկ կուրծքը, մտածեց՝ «Ազնիվ մարդու տեսակետից սա ստորություն է, անբարոյություն։ Գրիգորին... Ես կողոպտեցի մերձավորին, բայց չէ՞ որ այնտեղ, ֆրոնտում կյանքս վտանգի էի ենթարկել։ Հո կարո՞ղ էր այնպես պատահել, որ գնդակը ավելի աջ գնար ու ծակեր գլուխս։ Հիմա ես կփտեի, որդերը կլափեին մարմինս... Պետք է ագահորեն ապրել յուրաքանչյուր ակնթարթ։ Ինձ ամեն ինչ կարելի՛ է»։ Նա մի բոպե սարսափեց իր մտքերից, բայց երեվակայությունը նորից վերականգնեց գրոհի և ա՛յն պահի սոսկալի պատկերը, երբ նա վեր կացավ սպանված ձիու վերայից և ընկավ գնդակներով խոցված։ Արդեն քուն մտնելով, հանգստացած մտածեց՝ «Այդ մասին վաղը, իսկ այժմ քնե՛լ, քնե՛լ...»։

Հետևյալ օրվա առավոտյան սեղանատանը մնալով միայն Ակսինյայի հետ, մեղավորի նման ժպտալով, մոտեցավ նրան, բայց Ակսինյան սեղմվեց պատին, ձեռները պարզեց պաշտպանվելու համար ու զայրագին շշնջոցով ասաց.

— Ցմոտենա՛ս, անիծվա՛ծ...

Կյանքն իր չգրված օրենքներն է թելադրում մարդկանց։ Երեք օրից հետո Եվգենին գիշերով նորից գնաց Ակսինյայի սենյակը, և Ակսինյան նրան չվանեց...

XXIII

Բժիշկ Սնեգիրևի ակնաբուժարանի կողքին կար մի փոքրիկ այգի։

Այդպիսի անհանգստավետ, խուզված այգիներ շատ կան Մոսկվայի ծայրամասային փողոցների վրա, նրանց մեջ աչքդ

չի հանդստանում քաղաքի ծանր, քարե ձանձրույթից, ու նայելով դրանց, է՛լ ավելի սուր կերպով ու ցավելով ես հիշում վայրի, ազատ-արձակ անտառը։ Հիվանդանոցի այգում իշխում էր աշունը, տերևների նարնջագույն բրոնզով ծածկում էր շավիղները, առավոտյան ցրտերով ճզմում ծաղիկները և թառամեցնում էր գազոնների խոտերը։ Պայծառ օրերին ծառուղիներում զբոսնում էին հիվանդները՝ ունկնդրելով բարեպաշտ Մոսկվայի եկեղեցական զանգերի զողանջներին։ Վատ եղանակին (այն տարի դա գերակշռում էր) թրևում էին սենյակից սենյակ, պառկում մահճակալների վրա, լռում, ամեն մեկը ձանձրացրել էր թե ինքն իրեն և թե ուրիշներին։

Հիվանդանոցում գերակշռում էին քաղաքացիական հիվանդները, վիրավորները տեղավորված էին մի սենյակում. նրանք հինգ հոգի էին՝ Յան Վարեյկիսը, բարձրահասակ, խարտյաշ մի լատիշ՝ լայն, ծայրատ մորուքով և լուրթ աչքերով, Իվան Վրուբլևսկին, քսանութ տարեկան, սիրունատես մի դրագուն, Վլադիմիրի նահանգի բնիկ, սիբիրցի հրաձիգ Կոսիխը, արագաշարժ, դեղնադեմ զինվոր Բուրդինը ու Մելեխով Գրիգորին։ Սեպտեմբերի վերջին մեկին է՛լ բերին։ Երեկոյան թեյի ժամանակ երկար զրնգաց զանգակը։ Գրիգորին դուրս ելավ միջանցք։ Նախասենյակ մտան երեք մարդ. գթության քույրը ու շերքեզկա հագած մի մարդ, երրորդին նրանք թևանցուկ էին արել։ Վերջինը հավանորեն հենց նոր էր ժամանել կայարանից. այդ էր վկայում նրա զինվորական կեղտոտ բլուզը, որի կրծքի վրա արյան սև հետքեր էին նշմարվում։ Նրան հենց երեկոյան օպերացիա արեցին։ Կարճատև պատրաստություններից հետո (աղմուկը հասնում էր հիվանդների սենյակները,— եռացնում էին գործիքները) նոր եկածին տարան օպերացիայի սենյակը։ Մի քանի րոպեից հետո այնտեղից խուլ երգ լսվեց. մինչդեռ կտրում էին վիրավորի աչքի մնացորդը,— իսկ աչքը դուրս էր թռել ռմբաբեկորի հարվածից,— նա քլորոֆորմից անզգայացած, երգում էր ու անհասկանալի հայհոյում։ Օպերացիայից հետո նրան բերին, վիրավորների սենյակը։ Մեկ օրից հետո քլորոֆորմի պատճառած ծանր շշմածությունը դուրս եկավ ուղեղից, և նա պատմեց, որ վիրավորվել էր Վերբերգի մոտ, գերմանական ֆրոնտում, նրա ազգանունը Գարանժա է, եղել է

գնդացրորդ, Զեռնիգովի նահանգից է։ Մի քանի օրվա ընթացքում նա առանձնապես մոտիկացավ Գրիգորիի հետ. նրանց մահճակալներն իրար կողքի էին և նրանք բժշկի երեկոյան այցելությունից հետո երկար խոսում էին շշնջալով։

— Հը՛, կազակ, ո՞նց են գործերդ։

— Շատ լավ են։

— Աչքդ հանելո՞ւ են, հը՞։

— Գնում եմ սրսկվելու։

— Քանի՞ հատ են զարկել։

— Տասնութ։

— Ցավը ծա՞նր է, հը՞։

— Չէ, քա՛ղցր է։

— Դու էլ խնդրի՛ր, որ կտրեն, ռադ անեն։

— Բոլորն էլ հո միաչքանի չպիտի՞ լինեն։

— Դրուստ է, հա՛։

Գրիգորիի մաղձոտ, կծու լեզվանի հարևանը դժգոհ էր ամեն ինչից. փնովում էր իշխանությանը, պատերազմը, իր վիճակը, հիվանդանոցի սնունդը, խոհարարին, բժիշկներին, ամեն բան, ինչ որ ընկնում էր նրա սուր լեզվին։

— Ա՛յ տղա, ես ու դու ինչի՞ համար ենք կռվել, հը՞։

— Ինչի համար որ կռվել են ամենքը, նրա համար էլ մենք ենք կռվել։

— Չէ՛, դու ինձ պա՛րզ ասա, է, պա՛րզ։

— Ձեռ քաշիր, էլի՛։

— Վա՛հ, ա՛յ սարսա՛ղ։ Այս բանը հասկանա՛լ է պետք։ Բուրժույների համար ենք կռվել. գիտե՞ս՝ ի՞նչ բան է բուրժույը։ Եղ ու մեղրի մեջ լողացողն է նա։

Նա Գրիգորիին բացատրում էր անհասկանալի բառերը, իր խոսքը համեմում կծու, հայհոյական արտահայտություններով։

— Մի՛ վռվռա, է՛։ Չե՛մ հասկանում քո այդ խախոլի լեզուն,— ընդհատում էր նրան Գրիգորին։

— Գնա՛, է՛։ Ի՞նչը չես հասկանում, ա՛յ մոսկալ։

— Դանդա՛ղ խոսիր։

— Ես, աղբերացու ջան, առանց այդ էլ արագ չեմ խոսում։ Դու ասում ես՝ թագավորի համար ենք կռվում, ինչ

ի՞նչ է հիմի թագավորը։ Թագավորը սրիկա է, թագուհին՝ ա-նառակի մեկը, պատերազմը պաների փողին փող է ավելացնում, իսկ մեր վզին... օղ։ Հասկանո՞ւմ ես, հը՞։ Բա-ա՜ս։ Գործարանի տերը գինի է կոնծում, զինվորը՝ ոջիլ ջարդում, այդպես է նրանց վիճակը... Գործարանի տերը խեր է տեսնում, իսկ բանվորը տկլոր է մնում, ա՛յ թե ինչ տեսակ կարգեր են... Ծառայիր, կազակ, ծառայիր։ Էլի՛ մի խաչ կվաստակես,— մի լավ, փայտե խաչ...— ասում էր Գարանժան ուկրաիներեն, բայց այն հազվադեպ բոպեներին, երբ հուզվում էր, անցնում էր ռուսերեն լեզվին, հայհոյանքներով հագեցնում խոսքը, պարզ բացատրում իր մտքերը։

Օր օրին նա Գրիգորիի մտքի մեջ արմատացնում էր վերջինիս մինչև այդ անհայտ ճշմարտություններ, մերկացնում էր պատերազմի ծագման իսկական պատճառները, կծու ծաղրում էր ինքնակալական իշխանությունը։ Գրիգորին փորձում էր առարկել, բայց Գարանժան պարզ, սպանիչ կերպով պարզ հարցերով նրան փակուղու առաջ էր կանգնեցնում, և Գրիգորին ստիպված էր լինում համաձայնել։

Ամենասարսափելին այն էր, որ նա ինքը ներքուստ զգում էր Գարանժայի իրավացիությունը և անզոր էր նրա դեմ առարկություններ անելու, դրանք չկային և չէր կարելի գտնել։ Գրիգորին սարսափով գիտակցում էր, որ խելոք ու ցասկոտ ուկրաինացին աստիճանաբար, անշեղորեն խորտակում է նրա նախկին բոլոր հասկացողությունները ցարի, հայրենիքի, իր կազակական զինվորական պարտականության մասին։

Գարանժայի գալուց հետո մի ամսվա ընթացքում փոշիացան, հողմացրիվ եղան այն բոլոր հիմքերը, որոնց վրա հենվում էր գիտակցությունը։ Փտել էին այդ հիմքերը, պատերազմի հրեշավոր անհեթեթությունը ժանգահարել էր այդ հիմքերը, ու միայն մի զարկ էր հարկավոր դրանք խորտակելու համար։ Զարկը տրվեց, միտքը արթնացավ, նա մաշում, ճզմում էր Գրիգորիի պարզ, անպաճույճ բանականությունը։ Գրիգորին մտատանջվում էր, իր բանականության ուժից վեր այդ խնդրի լուծումն ու ելքն էր որոնում և գոհունակությամբ դրանք գտնում էր Գարանժայի պատասխանների մեջ։

Մի անգամ ուշ գիշերով Գրիգորին վեր կացավ անկող-

նից և արթնացրեց Գարանժային։ Նստեց նրա մահճակալին։ Պատուհանի քիչ իջեցրած վարագույրի տակից ներս էր ընկել սեպտեմբերյան լուսնի կանաչավուն լույսը։ Արթնացած Գարանժայի թշերի գորշավուն փոսերը մթին էին տալիս, խոնավ փայլուն էին ակնակապիճների սև խոռոչները։ Նա հորանջում էր, մրսում, ոտները փաթաթում վերմակով։

— Ինչո՞ւ չես քնում։

— Քուն չկա։ Քունն ինձնից փախչում է։ Դու ինձ բացատրիր այ թե ինչ. պատերազմը ոմանց օգուտ է տալիս, ոմանց էլ բնավեր է անում...

— Չէ՞։ Ախխ-ա-ա՜-ա...— հորանջեց Գարանժան։

— Կա՛ց, է՛,— փսփսաց Գրիգորին բարկությունից տաքացած,— դու ասում ես, որ հարուստների օգուտի համար մեզ քշում են դեպի մահ, բա ժողովո՞ւրդը։ Թե՞ նա չի հասկանում այդ բանը։ Մի՞թե չկան այնպիսիները, որ կարողանան բացատրել։ Դուրս կգար ու կասեր՝ «Եղբայրներ, այ թե ինչի համար եք արյուն թափում, մեռնում»։

— Ո՞նց թե դուրս կգա։ Այդ ի՞նչ ես ասում։ Հապա մի կտեսնեի ես, թե դու ոնց ես դուրս գալի ու այդպիսի բան ասում։ Ես ու դու այստեղ փսփսում ենք՝ ոնց որ սագերը եղեգների մեջ, իսկ եթե բարձրաձայն ասենք, գնդակահար կանեն։ Ժողովուրդը խոր քնի մեջ է։ Պատերազմը կզարթեցնի նրան։ Հետո մեգ-մշուշից որոտ ու տարափ կթափվի...

— Բա ի՞նչ պիտի անել, ասա, իժ։ Դու սիրտս տակնուվրա արեցիր։

— Իսկ քո սիրտն ի՞նչ է ասում։

— Չեմ հասկանում,— խոստովանեց Գրիգորին։

— Ով ինձ անդունդ է գցում, ես էլ նրան կգցեմ։ Պետք է առանց վախենալու շուռ տալ հրացանները։ Պետք է գնդակահար անել նրանց, ովքեր մարդկանց կրակի դեմ են ուղարկում։ Դու իմացիր,— Գարանժան վրա նստեց ու կրճտացնելով ատամները, պարզեց ձեռները,— կբարձրանա մեծ ալիքը, ամեն բան քարուքանդ կանի։

— Քո ասելով, ուրեմս... պետք է ամեն բան գլխիվա՞յր շուռ տալ։

— Հա, պետք է իշխանությունը փոխել ոնց որ կեղտոտ

փոխանը։ Պետք է քերթել պանների կաշին, պետք է ջարդել նրանց մռութը, որ էլ ժողովրդին չհալածեն։

— Բա որ նոր իշխանություն լինի, պատերազմը ո՞ւր կմնա։ Էլ մարդիկ այսպես կկոտորվեն,— եթե ոչ մենք, ապա մեր երեխաները։ Պատերազմին ինչո՞վ պիտի դեմ կանգնես։ Ո՞նց ոչնչացնես նրան, եթե միշտ էլ կռվել են ու կռվում են։

— Դրուստ է, պատերազմը եղել է հնուց մինչև այսօր, ու այնքան ժամանակ վերջ չի ունենա, քանի դեռ աշխարհքում կա ձրիակերների իշխանությունը։ Բա-ա՜ս։ Իսկ եթե ամեն մի պետության մեջ բանվորի իշխանություն լիներ, այն ժամանակ չէին պատերազմի։ Հենց այդպես էլ պիտի անել։ Իսկ այդ բանը կլինի, ձրիակերները գերեզմա՜ն կմտնեն... Կլինի՛, հա՜-ա։ Գերմանացիների մոտ էլ, ֆրանսիացիների մոտ է՛լ, բոլորի մոտ էլ բանվորի ու գյուղացու իշխանություն կլինի։ Այն ժամանակ մենք էլ ինչի՞ պիտի կռվենք։ Սահման չի՛ լինի, թշնամություն չի՛ լինի, ամբողջ աշխարհում խաղաղ կյանք կհաստատվի։ Ա՛խ,— Գարանժան հոգոց հանեց, ու կրծոտելով բեղերի ծայրերը, փայլեցնելով միակ աչքը, երազկոտ ժպտաց,— ես Գրիցկո, կաթիլ-կաթիլ կտայի կարմիր արյունս, որ հասնեի այդ օրվան... Ներսս դողվում է կրակ ու բոցից...

Նրանք խոսեցին մինչև լուսաբաց։ Գորշ աղջամուղջում Գրիգորին քնեց անհանգիստ քնով։

Առավոտյան նա արթնացավ ձայներից ու լացից։ Իվան Վրուբլևսկին մահճակալի վրա պառկած ու երեսը հատակին կախած, հեկեկում էր, սրբում քիթը, նրա շուրջը կանգնած էին բուժակուհին, Յան Վարեյկիսը և Կոսիխը։

— Ինչո՞ւ է նա տզզում,— գլուխը վերմակի տակից հանելով, հարցրեց Բուրդինը։

— Աչքը ջարդեց։ Սկսեց բաժակից հանել այն ու գցեց հատակին, ջարդ ու փշուր արավ,— ավելի շուտ չարախնդությամբ, քան ցավակցությամբ պատասխանեց Կոսիխը։

Մի ինչ-որ ռուսացած գերմանացի, արհեստական աչքեր վաճառող, հայրենասիրական զգացումներից դրդված, իր ապրանքը անվճար տալիս էր զինվորներին։ Նախորդ օրը Վրուբլևսկու համար ընտրել ու վերցրել էին ամենանուրբ

ձևով կիրտված, ապակի մի աչք, որ նույնպես լուրթ ու գեղեցիկ էր, ինչպես և իսկական աչքը։ Այնքան գեղարվեստորեն էր այն պատրաստված, որ նույնիսկ ուշադիր ուսումնասիրության դեպքում էլ անկարելի էր իսկական աչքը զանազանել արհեստականից։ Վրուբլևսկին երեխայի պես ուրախանում էր ու ծիծաղում։

— Կգնամ տուն,— ասում էր նա վլադիմիրցիների նման «ա»-ի տեղ «օ» արտասանելով,— ուզածս աղջկան կխաբեմ։ Կամուսնանամ, հետո կխոստովանեմ, որ մի աչքս ապակուց է։

— Կխաբի՛ անիծվածը,— քրքջում էր Բուրդինը, շարունակ երգելով մի երգ Դունյայի ու բլոճի մասին, որը կրծել ու ծակել էր Դունյայի սարաֆանը...

Եվ ահա դժբախտ պատահականություն,— ու սիրունատես երիտասարդը հայրենի գյուղն է վերադառնալու մի աչքով։

— Նո՛ր կտան, մի՛ նվնվա,— սփոփում էր Գրիգորին։

Վրուբլևսկին բարձրացրեց արտասվելուց ուռած դեմքը, որի վրա մի աչքի փոխարեն միայն կարմիր, թաց խոռոչ էր երևում։

— Չե՛ն տա։ Այդ աչքը երեք հարյուր ռուբլի արժե։ Չե՛ն տա։

— Ամա ի՞նչ աչք էր, հա՜-ա։ Նրա վրա ամեն մի ջիղը հիանալի նկարած էր,— հրճվեց Կոսիխը։

Առավոտյան թեյից հետո Վրուբլևսկին բուժակուհու հետ գնաց գերմանացու խանութը և գերմանացին նորից տվեց համապատասխան մի աչք։

— Գերմանացիները, հը՛մ, նրանք ռուսներից լավ են,— մոլեգնաբար հրճվում էր Վրուբլևսկին։— Ռուս վաճառականից մի չոփ էլ չես ստանա, իսկ սա իսկի մի խոսք էլ չասաց։

Սեպտեմբերն անցավ։ Ժամանակը դանդաղորեն կլանում էր օրերը։ Դրանք տաղտկալի ու երկար էին, մեռցնող ձանձրույթով լեցուն։ Առավոտները ինքնին հիվանդները թեյ էին խմում։ Յուրաքանչյուր հիվանդի ափսեով մատուցում էին ֆրանսիական բուլկու երկու վտիտ, բարակ պատառ ու ճկույթի մեծությամբ մի կտոր կարագ, ճաշից հետո հիվանդները

քաղցած էին ցրվում։ Երեկոյան թեյ էին խմում, բազմազանության համար թեյի վրայից նաև պաղ ջուր էին խմում։ Հիվանդների կազմը փոխվում էր «Զինվորական սենյակից» (հիվանդներն այդպես էին անվանում այն սենյակը, որտեղ պառկած էին վիրավոր զինվորները) առաջինը դուրս գրվեց սիբիրցի Կոսիխը, նրանից հետո՝ լատիշ Վարեյկիսը։ Հոկտեմբերի վերջին Գրիգորին էլ դուրս գրվեց։

Հիվանդանոցի գեղեցիկ տերը, կողքերից սափրված մորուքով բժիշկ Սնեգիրևը հիվանդներին ստուգելիս Գրիգորիի տեսողությունը բավարար համարեց։ Մի խավար սենյակում որոշ հեռավորությամբ Գրիգորիին ցույց տվեց լուսավորված մեծ տառեր և թվանշաններ։ Նրան դուրս գրեցին և ուղարկեցին Տվերսկայա փողոցում գտնվող մի հոսպիտալ, որովհետև գլխի դեռ չբուժված վերքը անսպասելիորեն բացվել էր ու թեթև թարախակալում առաջացել։ Գարանժային հրաժեշտ տալով, Գրիգորին հարցրեց.

— Էլի կտեսնվե՞նք։

— Սարը սարին չի հանդիպում...

— Է՛հ, խախոլ, շնորհակալ եմ, որ աչքերս բաց արեցիր։ Հիմի ես տեսնում եմ և... հերսոտ եմ։

— Երբ գնաս գունդ, այդ մասին ասուլիս արա կազակների հետ։

— Լա՛վ։

— Թե որ ոտքդ ընկնի Ջերնիգովի նահանգը, Գորոխովկա գյուղը, հարցրու նալբանդ Անդրի Գարանժային, ուրախությամբ կտեսնեմ քեզ։ Գնաս բարո՛վ, աղբերս։

Նրանք գրկվեցին։ Գրիգորիի հիշողության մեջ երկար ժամանակ մնաց ուկրաինացու կերպարը՝ մռայլ, միակ աչքով ու բերանի փաղաքուշ գծերով, որ հասնում էին ուռուցիկ այտերին։

Գրիգորին մեկուկես շաբաթ պառկեց հոսպիտալում։ Նա հոգու մեջ կրում էր չձևավորված որոշումներ, նրա մեջ խըմորվում էր Գարանժայի ուսմունքի մաղձը։ Նույն սենյակում գտնվող իր հարևանների հետ քիչ էր խոսում, ինչ-որ խոովահույզ դրություն էր նշմարվում նրա յուրաքանչյուր շարժման մեջ։ «Անհանգիստ»՝ ընդունելության ժամանակ նրան

այսպես ընորոշեց հոսպիտալի վարիչը հարևանցիորեն դիտելով Գրիգորիի ո՛չ ռուսական դեմքը։

Առաջին օրերում Գրիգորին դողացնում էր, պառկում էր մահճակալի վրա՝ ունկնդրելով ականջների անընդհատ ղըժ-ժոցին։

Հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ մի այսպիսի միջադեպ։

Կայսերական գերդաստանի մի անձնավորություն Վորոնեժից գնալիս ի բարձրագույնս բարեհաճեց այցելել հոսպիտալ։ Բժշկական կազմին պատկանող անձինք, առավոտից լուր ստանալով այդ մասին, սկսեցին դես ու դեն ընկնել՝ ինչպես մկները վառվող ամբարում։ Վիրավորներին լավ հագցրին անհանգստացնելով նրանց, հերթից դուրս փոխեցին անկողինների սպիտակեղենը, կրտսեր բժիշկը նույնիսկ փորձում էր սովորեցնել, թե ինչպես պետք է պատասխանել անձնավորությանը և ինչպես պիտի իրենց պահեն նրա հետ խոսելիս։ Անհանգստություն տիրեց նաև վիրավորներին. ոմանք վաղօրոք սկսեցին շշնջալով խոսել։ Կեսօրին շքադռան առաջ շաչեց ավտոմոբիլի փողակը, ու անձնավորությունը պատշաճ քանակով շքախմբի ուղեկցությամբ ներս մտավ հոսպիտալի լայն բացված դռնից։ (Վիրավորներից մեկը, մասխարա ու զվարճախոս, հետո ընկերներին հավատացնում էր, թե անվանի այցելուների մոտենալու մոմենտին հոսպիտալի կարմրախաչ դրոշակը հանկարծ սկսեց կատաղի փողփողալ, չնայելով, որ եղանակը հազվադեպ պայծառ էր ու քամի չկար, իսկ դիմացի կողմում, սափրատան ցուցանակի վրա նկարված, գեղեցիկ սանրված տղամարդը ծնկաչոք շարժման կամ ուսերանսի նմանվող ինչ-որ բան արեց)։ Եկվորները սկսեցին անցնել սենյակից սենյակ։ Անձնավորությունը իր դիրքին և իրադրությանը վայել անհեթեթ հարցեր էր տալիս. վիրավորները կրտսեր բժշկի խորհրդով աչքերը չռելով ավելի շատ, քան նրանց սովորեցրել էին շարքում, պատասխանում էին՝ «Ճիշտ այդպես, ձերդ կայսերական բարձրություն» և «Ամենևին ոչ», — ավելացնելով այդ նույն տիտղոսը։ Պատասխանների վերաբերյալ կոմենտարներ էր տալիս հոսպիտալի վարիչը, ընդ որում ֆոռում էր նա այնպես, որ կարծես եղանով ծակծկում էին նրան, ու

նույնիսկ հեռվից նայելիս էլ կարելի էր խղճալ այդ մարդուն։ Կայսերական գերդաստանին պատկանող անձնավորությունը, մահճակալից մահճակալ անցնելով, փոքրիկ սրբապատկերներ էր բաժանում։ Փայլուն համազգեստների բազմությունը և թանկագին օծանելիքի թանձր ալիքը մոտենում էին Գրիգորիին։ Նա կանգնել էր իր մահճակալի կողքին, շապիկով, նիհար, աչքերը բորբոքված. սուր, դարշնագույն այտերի թեթև դողը մատնում էր նրա հուզմունքը։

«Ահա նրանք, որոնց ուրախության համար մեզ քշեցին հայրենի խրճիթներից ու դեպի մահ շպրտեցին։ Ա՛խ, օձեր, անիծվածներ, ձրիակերնե՛ր։ Ահա՛ նրանք, մեր կոնակն ուտող ոջիլները... Բա այս... համար չէ՞ր, որ մենք ձիերով տրորում էինք օտար արտերը և սպանում օտար մարդկանց։ Բա որ ես սողում էի խոզանի վրա ու բղավո՞ւմ։ Բա վա՞խը։ Կտրեցին ընտանիքից, հալումաշ արեցին զորանոցում...»,— գալարվում էր նրա գլխում մտքերի հրաբորբոք կծիկը։ Նրա շրթունքները դողում էին, փրփրում կատաղությունից։ «Ի՞նչ կուշտ են բոլորն էլ, է՛, ո՞նց են փայլում։ Այնտե՛ղ պետք էր քշել ձեզ՝ երիցս անիծվածներիդ։ Ձիե՛ր պետք էր նստեցնել, հրացանի տա՛կ առնել, ոջիլնե՛ր շաղ տալ ձեր վրա, մգլած հացով, որդնած մսո՛վ կերակրել...»

Գրիգորին աչքերով չափչփում էր շքախմբի փափկասուն սպաներին ու մռայլ հայացքը հառում կայսերական ընտանիքի անդամի տոպրականման թշերին։

— Դոնի կազակ է, գեորգևյան շքանշանակիր,— թեքվելով, նրան մատնացույց արեց վարիչը, և դա այնպիսի տոնով ասվեց, որ կարծես թե նա ինքն էր արժանացել այդ խաչին։

— Ո՞ր ստանիցայից ես,— հարցրեց բարձրաստիճան անձնավորությունը՝ պատրաստ պահելով փոքրիկ սրբապատկերը։

— Վեշենսկայայից, ձերդ կայսերական բարձրություն։

— Ինչի՞ համար ես խաչ ստացել։

Անձնավորության սպիտակավուն, դատարկ աչքերում մարմրում էր ձանձրույթը, հագեցածությունը։ Ձախ, շիկավուն հոնքը վարժ կերպով բարձրանում էր,— դա ավելի արտահայտիչ էր դարձնում անձնավորության դեմքը։ Գրիգորին մի ակնթարթում սարսուռ և կրծքի ծակոց զգաց. այդպիսի զգացում էր նա ապրում գրոհի առաջին պահին։ Նրա շուրթերն անզսպելիորեն ծռմռվում էին, դողում։

— Ես... կուզեի դուրս գնալ... զուգարան, ձերդ կայսերական... թեթև կարիքիս համար...— Գրիգորին օրորվեց, ասես ջարդոտված լիներ, ձեռքը պարզելով, ցույց տվեց մահճակալի տակը։

Բարձրաստիճան անձնավորության ձախ հոնքը ծառս եղավ, սրբապատկերը բռնած ձեռքը քարացավ կես ճանապարհին։ Անձնավորությունը տարակուսանքով կախ տալով երերվող շրթունքը, անգլերեն ֆրազով դիմեց իրեն ուղեկցող ալեհեր գեներալին։ Հազիվ նկատելի շփոթություն տիրեց պարոններին՝ շքախմբին. ակսելբանտով, բարձրահասակ մի սպա ձյան պես սպիտակ ձեռնոց հագած ձեռքը տարավ աչքերին. երկրորդ սպան կախեց գլուխը, երրորդը հարցական հայացքով նայեց չորրորդի դեմքին... Ալեհեր գեներալը հարգանք ժպտալով, անգլերեն ինչ-որ բան զեկուցեց նորին կայսերական բարձրությանը, ու անձնավորությունը բարեհաճեց ողորմածաբար Գրիգորիի ձեռքը խոթել սրբապատկերը և նույնիսկ բարձրագույն ողորմածություն շնորհել նրան,— ձեռքը հպել նրա ուսին։

Բարձր հյուրերի մեկնելուց հետո Գրիգորին ընկավ մահճակալին։ Գլուխը բարձի մեջ թաղած, ուսերը ցնցելով, պառկեց մի քանի րոպե. չէր կարելի հասկանալ, լալի՞ս է նա, թե՞ ծիծաղում, միայն թե վեր կացավ չոր, պայծառացած աչքերով։ Հոսպիտալի վարիչը նրան իսկույն կանչեց իր առանձնասենյակը։

— Դու, լի՛րբ...— սկսեց նա՝ մատների մեջ ճմլելով նապաստակի խունացած մորթու գույնի մորուքը։

— Ես լիրբ չեմ, ի՛ժ,— չզսպելով ստորին, կախ ծնոտի շարժումը, քայլելով դեպի բժիշկը, ասաց Գրիգորին։— Ֆրոնտում դուք չկա՛ք,— ու հաղթահարելով իրեն, արդեն ավելի զուսպ կերպով ավելացրեց.— ինձ ուղարկեցեք տուն։

Բժիշկը նրանից ետ-ետ գնալով, անցավ գրասեղանի մյուս կողմը, ավելի մեղմ ասաց.

— Կուղարկենք։ Գնա՛ գրողի ծոցը։

Գրիգորին դուրս եկավ դողդոջուն ժպիտը դեմքին, կա-

տաղած աչքերով։ Բարձր անձնավորության ներկայությամբ նրա ցուցաբերած հրեշավոր անհերելի վարմունքի համար հոսպիտալի վարչությունը նրան երեք օրով զրկեց սննդից։ Նրան կերակրում էին նույն սենյակում տեղավորված ընկերները և գրիժայից տառապող, դթասիրտ խոհարարը։

XXIV

Նոյեմբերի լույս 4-ի գիշերը Գրիգորի Մելեխովը հասավ Նիժնի Յաբլոնովսկի, Վեշենսկայայի հողի առաջին խուտորը կայարանի կողմից։ Մինչև Յագոդնոյե կալվածքը մի քանի տասնյակ վերստ էր մնում։ Գրիգորին շների հաչոցի տակ քայլում էր իրարից հեռու գտնվող տների կողքից։ Գետափնյա ուռիներից դենը մանկական բարակ ձայները երգում էին հետևյալ երգը՝

Անտառի մոտ առաջներն են շողշողում,
Կազակների հարյուրյակն է արշավում,
Զահել սպան սլանում է առջևից,
Կազակներին տանում իրեն ետևից։

Ուժեղ, բարակ ու մաքուր մի ձայն սկսում էր հետևյալ տունը՝

Առա՛ջ, տղերք, Ջինի՛ Քե վախենաք։

Ներդաշնակ, վարժված ձայները եռանդով շարունակում էին՝

Վռազ-վռազ դեպի անցկալ սլանանք,
Ով առաջինն անցկալներին մոտենա,
Նաչ կստանա, փառք ու պատիվ կունենա։

Գրիգորիի սրտում անսահմանորեն հարազատ, ջերմորեն էին արձագանքվում կազակական վաղուցվա և հաճախ իր երգած երգի ծանոթ խոսքերը։ Սուր ցուրտը ծակծկում էր նրա աչքերը, ճնշում կուրծքը։ Ագահությամբ ներշնչելով տարթի դառն ծուխը, որ ելնում էր խրճիթների ծխնելույզներից, Գրիգորին անցնում էր խուտորը, նրա ետևից լսվում էր երգը.

Անցկալներում մենք կանգնեցինք սարի պես,
Դնդակները թռչում էին մեղվի պես։
Ա՜յ թե Դոնի կազակներ են անկոտրում,
Ա՜յ թե ոնց են թուր ու սվին բանեցնում։

«Վաղուց էի երգում, երբ փոքր տղա էի, իսկ հիմի կարվել է ձենս ու կյանքը լռեցրել է երգերը։ Հրե՛ս, գնում եմ ուրիշ կնկա մոտ արձակուրդս անցկացնելու, մի անկյուն չունեմ, տուն չունեմ, ոնց որ ձորի գելը...»— մտածում էր Գրիգորին, քայլում ամբողջ մարմնով հոգնած, դառն ծիծաղելով տարորեն դասավորված իր կյանքի վրա։ Խուտորից բարձրացավ մի թեք բլրակի վրա, ետ նայեց. վերջին խրճիթի պատուհանի ճեղքից դեղնին էր տալիս կախ լամպի լույսը, պատուհանի մոտ տարեց մի կազակուհի ջահրայով թել էր մանում։

Ճանապարհից շեղվելով, Գրիգորին անցավ թաց, փքխրուն, ցրտահար խոտով ծածկված դաշտը։ Նա որոշեց գիշերել Ջիրի ափին գտնվող առաջին իսկ խուտորում, որպեսզի հետևյալ օրը դեռ չմթնած՝ հասնի Յագոդնոյե։ Կեսգիշերից անց էր, երբ հասավ Գրաչև խուտորը, գիշերեց ծայրի խրճիթում ու, հենց որ վրա հասավ առավոտյան կապտավուն աղջամուղջը, նա ճանապարհ ընկավ։

Գիշերը նա Յագոդնոյում էր։ Անլսելի ցատկեց ցանկապատից, քայլեց ախոռի կողքից. այնտեղից լսվում էր Սաշկա պապի ուժգին հազը։ Գրիգորին կանգ առավ, ձայն տվեց.

— Սաշկա պապի, քնե՞լ ես։

— Կա՛ց, այդ ո՞վ է։ Ձենդ ճանաչում եմ... Ո՞վ ես։

Սաշկա պապին խալաթը գցեց վրան, դուրս եկավ։

— Տե՛ր աստված։ Գրի՛շկա։ Այդ ո՞ր քամին բերեց քեզ։ Ա՜յ քեզ հյո՛ւր։

Նրանք գրկվեցին։ Սաշկա պապին ներքևից նայելով Գրիգորիի աչքերին, ասաց.

— Արի ինձ մոտ, ծխենք։

— Չէ, էգուց։ Հիմի գնամ։

— Ասում եմ՝ ե՛կ ինձ մոտ։

Գրիգորին դժկամ հնազանդվեց։ Նա նստեց տախտակե մահճակալին, սպասեց, մինչև որ Սաշկա պապի հազը կտրվի։

— Էհ, պապի, ապրում ես, հա՞։ Գնո՞ւմն ես մաշում։

— Մաշում եմ քիչ-քիչ։ Իսկ ինձ մաշվել չկա, ես ոնց որ կայծքարի հրացան լինեմ։

— Ակսինյան ո՞նց է։

— Ակսինյան, հը՛մ... դեհ, փառք աստծո, լավ է։

Պապին գոռով հազաց։ Գրիգորին գլխի ընկավ, որ նրա հազը կեղծ է, թաքցնում է շփոթմունքը։

— Տանյուշկային ո՞րտեղ թաղեցիք։

— Այգում։ Բարդու տակ։

— Այդպե՛ս, պատմի՛ր։

— Հազը հոգիս հանեց, Գրիշկա...

— Է՞հ։

— Բոլորն էլ ողջ-առողջ են։ Պանը խմում է... Խմում է սարսաղը առանց մտածելու։

— Ակսինյան ինչ է անում։

— Ակսինյա՞ն։ Նա հիմա աղախին է։

— Գիտեմ։

— Թութուն փաթաթիր։ Հը՞։ Սխիր, իմ թութունը առաջին տեսակի է։

— Չե՛մ ուզում, դեհ ասա՛, է՛, թե չէ կգնամ։ Տեսնում եմ,— Գրիգորին ծանր շուռ եկավ, նրա տակին ճռճռաց տախտակե մահճակալը,— տեսնում եմ, որ բան ես թաքցնում, ոնց որ թե ծոցումդ քար ես պահում։ Ասի՛ր, էլի։

— Կխփեմ, հա՛-ա։

— Ասի՛ր։

— Կխփեմ։ Սուս անելու ուժ չունեմ, և սուս անելն էլ ինձ ցավ է տալի, Գրիշա։

— Դեհ, պատմիր, էլի՛,— խնդրեց Գրիգորին՝ քարի պես ծանր ձեռքը փաղաքշորեն դնելով պապի ուսին։ Կուչ գալով սպասում էր։

— Դու օձ ես տաքացրել ծոցումդ,— հանկարծ կտրուկ կերկերուն ձայնով բղավեց Սաշկա պապին, անհեթեթ կերպով տնկեց ձեռքը։— Ի՛ժ ես կերակրել։ Նա Եվգենիի հետ է ընկել։ Այդ ո՞նց կլինի, հը՞։

Կպչուն լորձունքի ուլունքը կարմրավուն սպիի ակոսով սողաց պապի կզակի վրա։ Պապին ձեռքով սրբեց այն, ձեռքը քսեց քաթանե կոշտ վարտիքին։

— Դրե՞ստ ես ասում։

— Ինքս եմ տեսել։ Եվգենին ամեն գիշեր գնում է նրա մոտ։ Գնա, երևի նա հիմի էլ այնտեղ է։

— Դեհ, ի՞նչ արած... — Գրիգորին ճթճթացրեց մատների հոդերը ու երկար նստեց կորաքամակ, շփելով թշի մկանը, որ կծկվել էր ջղաձգությունից։ Ականջները ճնկճնկում էին ճանապարհների վրա հնչող բոժոժների նման։

— Կնիկը կատու է. ով շոյեց, նրան էլ կկպչի։ Իսկ դու մի՛ հավատա, հավատ մի՛ ընծայիր,— ասաց Սաշկա պապին։

Նա Գրիգորիի համար ծխախոտ փաթաթեց, վառեց ու տվեց նրան։

— Սխիր։

Գրիգորին երկու անգամ ծուխը ներս քաշեց և մատներով հանգցրեց ծխախոտը։ Լուռ դուրս ելավ։ Ծառայանոցի մի պատուհանի առաջ կանգ առավ խոր և արագ շնչելով, ձեռքը մի քանի անգամ տարավ թակելու, բայց ձեռքը ընկնում էր, ասես ջարդված լիներ։ Առաջին անգամ պատուհանը ծեծեց ծռած մատներով, կամացուկ, հետո, ինքն իրեն կորցնելով, հենվեց պատին ու բռունցքներով բարկացկոտ, երկար զարկեց շրջանակին։ Շրջանակը ապակու շառաչող զրնգոց արձակեց, ցնցվեց, ներսից պլպլում էր գիշերային կապույտ լույսը։

Երևաց Ակսինյայի դեմքը վախից երկարած։ Նա բացեց դուռը ու ճչաց։ Գրիգորին հենց այստեղ հաշտում գրկեց նրան։ Նայեց աչքերին։

— Ո՞նց էիր թխկացնում, իսկ ես քնել էի... Չէի սպասում... Սիրելիս։

— Մրսել եմ...

Ակսինյան զգում էր, թե ինչպես դողում, ցնցվում է Գրիգորիի ամբողջ, ահագին մարմինը, իսկ ձեռները կրակի պես տաք են։ Ակսինյան չափազանց անհանգիստ դես-դեն ընկավ, վառեց լամպը, բրդե շալը գցելով կոկիկ, փայլատ ուսերին, վազվզեց սենյակում, վառարանում կրակ վառեց։

— Չէի սպասում... Դու վաղուց նամակ չէիր գրում... Կարծում էի՝ չես գա... Դու ստացա՞ր իմ վերջին նամակը։ Ուզում էի քեզ նվերներ ղրկել, հետո էլ մտածեցի՝ սպասեմ, կարելի է քեզնից նամակ ստանամ...

Նա երբեմն նայում էր Գրիգորիին։ Նրա կարմիր շուրթերի վրա չէր հալչում սառած ժպիտը։

Գրիգորին առանց շինելը հանելու նստել էր նստարանին։ Նրա չսափրած այտերը վառվում էին, բաշլուղի տակից մթին ստվեր էր ընկել ներքև նայող աչքերին։ Նա ուզեց հանել բաշլուղը, բայց հանկարծ դես-դեն արավ, հանեց թութունի տոպրակը, գրպանում թուղթ փնտրեց։ Անհուն թախիծով, հարևանցիորեն զննեց Ակսինյայի դեմքը։

Իր բացակայության ժամանակ Ակսինյան խիստ սիրունացել էր։

Ինչ-որ մի նոր, գերող բան էր երևան եկել գեղեցիկ գլխի նստվածքում, նույնն էին մնացել միայն մազերի փարթամ, խոշոր խոպոպները և աչքերը... Նրա խոցող, հրեղեն գեղեցկությունը չէր պատկանում Գրիգորիին։ Հարկա՜վ, չէ՞ որ նա պանի տղայի սիրուհին է։

— Դու... ոչ թե աղախնի, այլ ավելի շուտ տնտեսուհու ես նման։

Ակսինյան երկչոտ մի հայացք նետեց, ծիծաղեց բռնաբռոսիկ կերպով։

Իր հետ քարշ տալով մախաղը, Գրիգորին քայլեց դեպի դուռը։

— Ո՞ւր ես գնում։

— Դրսում ծխելու։

— Ձվածեղը պատրաստ է, կա՛ց։

— Հիմի կգամ։

Մուտքի սանդուղքի վրա Գրիգորին զինվորական մախաղից հանեց մաքուր, դրոշմված շապիկով փաթաթած մի նախշուն գլխաշոր։ Նա այդ գլխաշորը երկու ռուբլով գնել էր Ժիտոմիրում, մի առևտրական հրեայից, ու պահում էր աչքի լույսի պես, երբեմն հանում էր ու սքանչանում դրա շողշողուն, ծիածանային գույներով, պատկերացնում էր այն հրճվանքը, որ համակում էր Ակսինյային, երբ ինքը, տուն վերադառնալով, նրա առաջ պիտի բաց աներ գեղանախշ գործվածքը։ Խղճո՜ւկ նվեր։ Մի՞թե Գրիգորին կարող էր նվերներով մրցել Դոնի վերին հոսանքի ամենահարուստ կալվածատիրոջ տղայի հետ։ Հաղթահարելով վերահաս չոր հեկեկանքը, Գրիգորին պատառոտեց, կտոր-կտոր արեց գլխաշորը, խոթեց սանդուղքի տակ։ Մախաղը գցեց նստարանին, մտավ սենյակ։

— Նստիր, Գրիշա, ես կհանեմ սապոգներդ։

Ակսինյան իր սպիտակ ձեռներով, որոնք երկար ժամանակ ծանր աշխատանք չէին կատարել, հանեց Գրիգորիի զինվորական ծանր սապոգները, ու ընկնելով նրա ծնկներին, երկա՜ր, անձայն հեկեկաց։ Գրիգորին սպասեց, մինչև որ նա կտրեր լացը ու հարցրեց.

— Էլ ինչո՞ւ ես լաց լինում։ Ուրախ չե՞ս, որ եկել եմ։

Շուտով նա քնեց։

Ակսինյան առանց հագնվելու դուրս ելավ ու մուտքի սանդուղքի վրա, թաց սյունը գրկած, ցուրտ քամու տխուր ոռնոցի տակ անշարժ կանգնեց մինչև լուսաբաց։

Առավոտը Գրիգորին հագավ շինելը, գնաց պանի տունը։ Ներունի պանը կանգնել էր մուտքի սանդուղքի մոտ, մորթե կուրտկան հագին ու կարակուլե խունացած փափախը գլխին։

— Օ-հո՜, գեորգևյան շքանշանակիր։ Դու կարգին տղամարդ ես դառել, բարեկամ։

Նա զինվորական ձևով բարևեց Գրիգորիին ու մեկնեց ձեռքը։

— Ո՞րքան ժամանակով ես եկել։

— Երկու շաբաթով, ձերդ գերազանցություն։

— Աղչկադ թաղեցին։ Ափսոս, ափսոս...

Գրիգորին լուռ էր։ Եվգենին, ձեռնոցները հագնելով, դուրս եկավ տանից։

— Գրիգորի՞։ Այդ ո՞րտեղից։

Գրիգորիի աչքերը մթնեցին, բայց նա ժպտում էր։

— Մոսկվայից, արձակուրդ եմ եկել...

— Ահա՛ թե ինչ։ Աչքդ վիրավորվա՞ծ է։

— Ճիշտ այդպես։

— Լսել եմ։ Ի՜նչ կտրիճն է դառել, է՛, հայրիկ։

Հարյուրապետը գլխով ցույց տվեց Գրիգորիին, երեսը դարձրեց դեպի ախոռը։

— Նիկի՛տիչ, ձի՛ լծիր։

Ծանրաբարո Նիկիտիչը վերջացրեց լծելը ու անբարյացակամ նայելով Գրիգորիին, տարիքավոր, մոխրագույն ձին

քշեց դեպի սանդուղքը։ Թեթև կառքի անիվների տակ ճմլվելով, խշշում էր գետինը պատած բարակ սառույցը։

— Ձերդ բարեծննդություն, թույլ տվեք ձեզ մեր ածել անցած օրերը հիշելու համար, հը՞— դիմեց Գրիգորին Եվգենիին ու շողոքորթությամբ ժպտաց։

«Խեղճը գլխի չի ընկնում»,— զոհունակությամբ մտածեց Եվգենին ու ակնոցի տակից փայլեցին նրա աչքերը։

— Ինչ կա որ, խնդրեմ, գնանք։

— Այդ ի՞նչ է, հենց նոր ես եկել ու թողնում ես ջահել կնոջդ։ Մի՞թե չես կարոտել։— Ծերուկ պանը ողորմածաբար ժպտաց։

Գրիգորին ծիծաղեց։

— Կինը արջ չէ, չի փախչի անտառ։

Նա նստեց կառապանի տեղը, մտրակը դրեց նստելատեղի տակ, վերցրեց երասանները։

— Է՛հ, ա՛յ թե ոնց մեր կածեմ ձեզ, Եվգենի Նիկոլաևիչ։

— Մա՛ն ածա, թեյի փող կստանաս։

— Շատ գոհ ենք ձեզանից։ Առանց այդ էլ շնորհակալություն, որ իմ Ակսինյային... կերակրում եք... մի կտոր... հաց եք տալիս։

Գրիգորիի ձայնը դողում էր, և հարյուրապետի մեջ մութ կասկած առաջացավ։ «Մի՞թե իմանում է։ Է-է՛, ի՛նչ հիմարություն։ Ո՞րտեղից պիտի իմանա։ Անկարելի է»։ Նա ընկավ նստելատեղի մեջքին, վառեց պապիրոսը։

— Շո՛ւտ վերադարձեք,— նրանց ետևից գոչեց ծերուկ պանը։

Անիվների տակից սառած ձյան ասեղանման փոշի էր թռչում։

Գրիգորին երասաններով քաշքշեց ձիու շրթունքները ու նրա վազքը մեծագույն արագության հասցրեց։ Քառորդ ժամում նրանք անցան բլուրի մյուս կողմը։ Հենց առաջին ձորահովիտում Գրիգորին թռավ գետին ու նստելատեղի տակից հանեց մտրակը։

— Ի՞նչ ես անում,— հարյուրապետը մռայլվեց։

— Այ թե... ի՞նչ։

Գրիգորին արագ ետ տարավ մտրակը, սարսափելի ուժով խփեց հարյուրապետի դեմքին։ Բռնելով մտրակի ծայրից,

նա դրա կոթով խփում էր հարյուրապետի դեմքին, ձեռներին, չթողնելով, որ նա ուշքի գա։ Ջարդված ակնոցի մի բեկորը խրվեց հարյուրապետի հոնքի վերևը։ Աչքերի վրա արյան կաթիլներ էին ընկնում։ Հարյուրապետը սկզբում դեմքը ծածկում էր ձեռներով, բայց հարվածները արագացնում էին։ Նա վեր թռավ զարկերից ու կատաղությունից այլանդակված դեմքով, փորձեց պաշտպանվել, բայց Գրիգորին ետ գնալով, խփեց նրա աջ ձեռքի դաստակին և թուլացրեց այն։

— Ա՛ռ քեզ Ակսինյայի համա՛ր, ինձ համա՛ր, Ակսինյայի համար։— Առ քեզ էլի Ակսինյայի համար, ինձ համա՛ր։

Մտրակը սվսվում էր։ Մեղմ շմփշմփում էին հարվածները։ Հետո Գրիգորին հարյուրապետին բռունցքներով վար գցեց կոշտ, խորդուբորդ ճանապարհի վրա, գլորեց, սկսեց գազանաբար հարվածել զինվորական սապոգների երկաթած կրունկներով։ Ուժասպառ լինելով, նստեց կառքին, սկսեց քառատրոփով, սարսափելի արագությամբ քշել ձին, ուժասպառ անել։ Կառքը թողեց դարբասի մոտ, ծալեց մտրակը, ու խճճվելով կոճակներն արձակած շինելի փեշերի մեջ, վազեց ծառայանոց։

Ակսինյան դռան ահարկու շրխկոցից բարձրացրեց գլուխը։

— Գարշելի ի՛ժ... քածի մեկը...

Մտրակը սվսվալով շրմփաց նրա երեսին։

Գրիգորին հևալով դուրս վազեց. չպատասխանելով Սաշկա պապի հարցերին, հեռացավ կալվածքից։ Անցել էր մեկուկես վերստ, երբ Ակսինյան հասավ ետևից։

Ակսինյան շնչահեղձ լինելու չափ հևում էր ու քայլում կողք-կողքի, ձեռքը երբեմն հպելով Գրիգորիին։

Ճամփաբաժնի վրա, տափաստանային, թուխ գույնի մի մատուռի մոտ օտարոտի, հեռավոր ձայնով ասաց.

— Գրիշա, ներիր։

Գրիգորին դառն ժպտաց, կռանալով բարձրացրեց շինելի օձիքը։

Ակսինյան մնաց հեռվում, մատուռի մոտ։ Գրիգորին ոչ մի անգամ ետ չնայեց, չտեսավ Ակսինյայի ձեռները, որ պարզված էին իր կողմը։

Երբ սարից իջավ ու մտավ Տատարսկի խուտոր, իր ձեռքում զարմանքով տեսավ մտրակը, դեն գցեց այն, լայնլայն քայլեց փողոցով։ Պատուհաններին դեմքեր էին կպչում, զարմանալով նրա հայտնվելուց, հարգանքով բարևում էին հանդիպող, նրան ճանաչող կանայք։

Իրենց բակի դարպասի մոտ նիհար, սևաչյա մի գեղեցկուհի-աղջիկ ճչալով մոտ վազեց ու ընկավ նրա վզով, հեկեկաց նրա կրծքի վրա։ Գրիգորին նրա թշերը ձեռների մեջ առնելով, բարձրացրեց նրա գլուխը ու ճանաչեց Դունյաշկային։

Մուտքի սանդուղքից կաղալով իջավ Պանտելեյ Պրակոֆևիչը, խրճիթում բարձրաձայն լացեց մայրը։ Գրիգորին ձախ ձեռքով գրկեց հորը, աջ ձեռքը համբուրում էր Դունյաշկան։

Սանդուղքի աստիճանների ճռնչոց, որ ցավ պատճառելու չափ ծանոթ էր,— ու Գրիգորին արդեն դռան առաջն էր։ Պառաված մայրը մոտ վազեց փոքրիկ աղջկա աշխուժությամբ, արցունքներով թրջեց շինելի մերակները ու, որդուն պինդ գրկելով, թոթովեց ինչ-որ յուրովի, անկապ բան, որ անկարելի է խոսքերով արտահայտել, իսկ հաշտում, կառչելով դռանը, որպեսզի վայր չընկնի, կանգնել էր գունաթափ Նատալյան, ու տանջալից ժպտալով, երերում էր՝ Գրիգորիի շփոթված, հարևանցի նայվածքով խոցված...

Գիշերը Պանտելեյ Պրակոֆևիչը բոթելով Իլյինիչնայի կողքը, շշնջաց.

— Կամացուկ մտիկ արա, միասի՞ն են պառկել, թե չէ։

— Ես նրանց համար տեղ եմ գցել մահճակալի վրա։

— Բայց դու մտի՛կ արա, մտի՛կ արա։

Իլյինիչնան նայեց օթախի դռան ճեղքից, ետ եկավ։

— Միասին են։

— Էհ, փա՛ռք աստծու, փա՛ռք աստծու,— խաչակնքեց ծերունին, մի քիչ բարձրացավ, հենվեց արմունկին, հեծկլտաց։

ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ ՎԵՐՋԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս 7
Երկրորդ մաս 139
Երրորդ մաս 278

Միխայիլ Շոլոխով Խաղաղ Դոնը, գիրք առաջին Шолохов Михаил Александрович. Тихий Дон. Книга первая (на армянском языке), издательство „Советакан грох", Теряна, 91. Ереван, 1977. *Խմբագիր՝ Է. Բ. Թառուճյան, նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ա.Ն. Վ. Գասպարյան, տեխ. խմբագիր՝ Կ. Դ. Սարգսյան, վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Մինասյան։ Հանձնված է շարվածքի 6/X 1976 թ., ստորագրված է տպագրության՝ 17/III 1977 թ.։ Թուղթ № 1, 84 × 108 1/32, տպագր. 13,0 մամ. =23,2 պայմ. մամ., հրատ. 21,8 մամ.։ Գատվեր 1854։ Տպաքանակ 50000։ Գինը 2 ռ.12 կ.։ «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։*

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեգապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван—9, ул. Теряна, 91.